24
5-

3945

24
Մ-29

1026-ԱԿ

# ՄԱՇՏՈՑ

Հատընտիր հաւաքմամբ հանեալ 'ի մեծ Մաշտոցէն յունաց որ կոչի Եւփխոլոգիոն․

Նորոգ թարգմանեալ և արտագրեալ աշխատասիրութեամբ Ընտանեաց [illegible] Մ․ [illegible] յունաց, և պատուելի Գէորգ Դպրի [illegible]․

Ծախիւ և արդեամբ բարեպաշտօն և մեծատէր սառաֆ Ընտանեան ազգային, որ 'ի Սբ. Գէորգայ վանից գիւղէն՝ Ակնայ քաղաքին․

Հրամանաւ Տեառն Ագաթանգեղոսի սրբազան Արքեպսի և տիեզերական Պատրիարգի յունաց:

Եւ 'ի Պատրիարգութեան հայոց Տեառն Կարապետի ամենապատիւ և վեհափառ Արքեպսի:

1831 ՏՊԱԳՐԵԱԼ ռմձ․

ՅՕՐԹԱԳԻՒՂ

'Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՀԵՆՑՒՈՅ

1910

ՊԵՏ.-ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. С. Библиотека
ՀԱՍԽՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
11

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ճշմարիտ հարստութիւն ոչ երկրաւորս այս դիւրեղծական գանձ և մեծութիւնք համարելի, որ յապականացու արկեղս զետեղի, այլ որ յերկինս ամբարեալ պահի ա͞ծահաճոյ բարեպաշտութիւն. զորս և տէրն իւր պատուիրեաց ասելով. գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ուտիճ ապականէ.

Այս հոգևոր և անապական գանձուց փափագօղ եղեալ ազնուամեծար և քաջասէր Անաստաս աղային՝ որ 'ի Վանք գեղջէն Ակնայ քաղաքէ, զանցաւոր զգանձս իւր զերկրաւորս մեծահաստատ փոխադրէ յերկինս՝ ժառանգել զն͞ա 'ի մշտնջենաւորս։

Ո͞չ և 'ի մե͞ր բաշխապատիկ գործոց բարութե͞՝ զորս արար և առնէ անպակաս, շարժեալ այժմ յա͞ծային իմն ազդեցութե՛ յաւել և զայս բարեպաշտութի͞ն. զի զառաջինեաց Մաշտոցս զայս, որ 'ի ժամանակաց ինչ հետէ թերի սխալ և աղաւաղ թարգմանու͞ե յածէր 'ի ձեռս, եւ նորոգապէս թարգմանել հանդերձ այլոց կարգաւորու͞ե և աղօթիւք և այլովք կարևորօք, և ողջմտու͞ե և խնամով սրբագրել, և ընտիր և վայելուչ տպագրու͞ե 'ի լոյս ընծայել՝ 'ի փառս ա͞յ, և յանձնահ յիշատակ իւր և ծնողացն ազգատոհմին։

Մեծաւ հաստատուն քաջայոյս եղեալ յառատ ողորմութե͞ն ա͞յ, զի յա͞մ աղօթից և մաղթանաց՝ որք առնել մատուցանեն առ ա͞ծ 'ի պաշտօնէից ա͞ր եկեղեցւոյ՝ մինչև 'ի կրկնակի գալուստ փրկչին մերոյ 'ի կատարածի աշխարհի, շնորհեսցի սմա բարի ինքեան, և բարեյիշատակ նախնեաց իւրոց յառաջագոյն ննջեցելոց։

Շնորհօք և մարդասիրու͞ե ա͞ն մերոյ յ͞սի ք͞սի և ա͞յ. որում ընդ հօր և ընդ հոգւոյն ս͞րբոյ՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Յայտարարութ͞ն Տ͞Ն Աղաթանգեղոսի Սրբազան Արքեպիսկոպոսի և տիեզերական Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ.

# ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍ-ՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ ՆՈՐ ՀՌՈՄԱՅ ԵՒ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԳ.

Որ ինչ կայ 'ի գիրս յայս՝ առաւ 'ի մեծ Մաշտոցէ մերմէ որ կոչի Եւքխոլոգիոն, և թարգմանեցաւ 'ի յունաց լեզուէ 'ի հայ բարբառ։

Սա պարունակեալ ունի զկարգաւորութիւնս սրբարար խորհրդոց, և զաղօթս սրբոց, և զարարողութիւնս սոցին. որք և նշանակին 'ի ցանկն։

Գիրքս այս զգուշութեամբ քննեալ յիմաստուն և ա͞ծապաշտ և ուղղափառ քրիստոնէից՝ քաջահմուտ եղելոց հայկական լեզուի, բերաւ յեկեղեցին զի կնքեալ տպագրեսցի։

Եւ որովհետև վկայեալ ցուցաւ 'ի նոցանէ, թէ կարգաւորութիւնք և աղօթք բովանդակեալք 'ի սմա, ուղիղ և ողջմիտ և անթերի թարգմանեալ են 'ի Մաշտոցէ մերմէ, յաղագս որոյ կնքեցաւ Պատրիարգական կնքով, և վաւերական ստորագրութեամբ մերով։

Որպէս զի ա͞ծազդեցիկ փութով և պատուասէր ջանիւք գերամեծար սառաֆ բարեպաշտօն Անաստաս աղային 'ի տիպ արձանասցի՝ 'ի գործածութիւն և յօգուտ պաշտօնէից եկեղեցւոյ։

Յամի փրկութեան 1830 յԱպրիլի։



Սուրբ եկեղեցին խումբ ուղղափառ աց ․
Եօթնեակ իւր խորհուրդք՝ պարգեւիչ շնորհաց ։
Զսա նոր տապան՝ շինեաց բանն ա̄ծ ․
յոր ապաստանեալք՝ փրկին անկաս կած ․

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ
# ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԵԱՆ

*Յորում նկարագրի, թէ զի՞րդ սպասաւորէ սարկաւագն ընդ քահանային 'ի մեծի ժամերգութեան երեկոյեան և առաւօտեան, և 'ի պաշտօն պատարագին.*

*Շարադրեալ 'ի Տէր Փիլոթէոսէ, 'ի մէջն և 'ի տիեզերական Պատրիարգէ։*

*Գիտել արժան է, զի սարկաւագն ոչ զգեստաւորի յերեկոյեան և յառաւօտեան ժամերգութե՛ յայլ ժամանակս, այլ միայն յերեկոյեան ժամերգութե՛ շաբաթուց, և յառաւօտեան ժամերգութե՛ կիւրակէից բոլոր տարւոյն. Նոյնպէս յերեկոյեան և յառաւօտեան ժամերգութիս տէրունի տօնից և ա͞ծածնի.*

*Այնք զգեստաւորի և յերեկոյեան ժամերգութիս, և 'ի նախասրբեցելոյն ա͞ըյ և մեծի քառասնորդացն, և 'ի տօնի աւետեացն, և 'ի հսկման ա͞ըյ չարչարանաց. 'ի մի բան ասացից, յա͞մ երեկոյեան ժամերգութիս, որք ունին 1 զՍ՛ուա. Նմանապէս յառաւօտեան ժամերգութիս՝ յորս սաղմոսի 2 Փառաբանութի՛ն, և յա͞մ պատարագս բոլոր տարւոյն, եթէ կամիցի սպասաւորել պատարագին.*

1 Սուա. յունարէն Ի՛սոտոս.
2 Փառաբանութի. այսինքն Փառք 'ի բարձունս.

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՀՍԿՄԱՆ·

Յորժամ գայ ժամանակ մեծի ժամերգութեն երեկոյեան, ելանէ քահանայն հանդերձ սարկաւագաւն, և առնեն երիցս ծնրադրութի պատկերին քի ան մերոյ՝ մինչդեռ նստեալ են ամ եղբարք. նմանապէս առնեն երիցս ծնրադրութի պատկերին ածածնի, մի՝ 'ի մէջն, և մի մի առ երկաքանչիւր դասսն:

Ապա մտանեն 'ի սրբարանն, և առեալ սարկաւագն զշապիկն իւր և զուրարն, և երիցս երկրպագեալ ընդ արևելս, մատչի առ քահանայն և ասէ, **Օրհնեա Տէր զշապիկս հանդերձ ուրարաւս**. և քահանայն օրհնէ զնոսա ասելով, **Օրհնեալ է Տր Ած մր յմ ժմ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից**. յետոյ զգենու իւրաքանչիւր զպատմուճան իւր:

Այս այժմ ոչ լինի այսպէս. այլ միայն քահանայն առնէ երկրպագութի, և միայն զգենու փորուրար և նափորտ, և սկսանի խնկարկել. 1 Ընթերցողն, կամ 2 Դպրեկարգօղն զմոմեղէնսն կալեալ ունելով, և հրամայեցէք ձայնելով, և յառաջնոյ նր երթալով մոմեղինաւն, քահանայն խնկարկէ զտաճարն բովանդակ ոպ սովոր է, 'ի դրանցն արտաքս ելեալ: Եւ յորժամ Դպրեկարգօղն առաջի Տր դրանցն ձայնէ **Հրամայեցէք**, ամենեքին 'ի վեր կանգնին:

Իսկ քահանայն յետ խնկարկելոյ զտաճարն բովանդակ, ելանէ արտաքս և 'ի գաւիթն. և խնկարկեալ անդանօր՝ մտանէ ընդ գեղեցիկ դուռնսն, և ձայնէ եղանակաւ, **Օրհնեա Տէր**. և խնկարկելով դարձեալ զՏր պատկերսն, մտանէ ընդ Տր դուռնսն. և խնկարկեալ զՏր սեղանն՝ ձայնէ, **Փառք Սբ և համագոյ և կենդանարար և անբաժանելի Երրորդութեն յմ ժմ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն**:

1 Ընթերցող. յունարէն Անագնոս:
2 Դպրեկարգող. յունարէն Իպոդիակոնոս:

Յայնժամ 1 Աւագագոյնն, կամ կարգեալ 2 Միայնակեացն սաղմոսէ 3 զՆախերգականն · իսկ քահանայն փակեալ զդուռն դրունն՝ կայ 'ի ներքս 'ի դուռ բեմին ։ Եւ յորժամ սկսանին սաղմոսել, Ռանոս պչէոն քո, ելանէ 4 ընդ Փոխասացին, և առնեն ծնրադրութի մի 'ի մէջն · և այսպէս երթայ քահանայն 'ի տեղի իւր · իսկ փոխասացն ասէ զսաղմոսն 'ի Թիւ՝ կացեալ 'ի մէջն տաճարին ։

Եւ յորժամ սաղմոսեն, Ո ած էնչ էնաարուէ աղաչէր, գայ քահանայն՝ և ասէ 5 զԵրեկոյեան աղօթսն, կացեալ գլխիբաց առաջի դուռ դրանցն · և զկնի լռմանն ասէ 6 զՄեծ քարոզն ։ Իսկ սարկաւագն զգեստաւորի յերրորդում փոխաձայնի սաղմոսարանին, և ասէ 7 զՓոքր քարոզն ։ Իսկ եթէ ոչ իցէ 8 Նախականոն, զգեստաւորի մինչ ասի նախերգականն, և ասէ զՄեծ քարոզն ։ Ասորքին այսպէս 'ի լինել հսկման ։

Իսկ եթէ ոչ իցէ հսկումն, ոչ երբէք լինի այսպիսի ինչ · ոչ ծնրադրութի առնեն, և ոչ նախ խնկարկէ քահանայն, և ոչ դուռ դրունքն բացեալ լինին · այլ կացեալ առաջի դրանցն գլխիբաց, զգեցեալ փորուրար՝ ձայնէ, Օրհնեալ է ած մեր յամ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Եւ աւագագոյնն կամ կարգեալ միայնակեացն ասէ զնախերգական սաղմոսն 'ի Թիւ, և քահանայն ասէ զերեկոյեան աղօթսն · և զկնի լռմանն՝ քահանայն կամ սարկաւագն կացեալ 'ի սովորական տեղւոջ՝ ասէ զՄեծ քարոզն, Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք, և զմնացեալսն ։

1 Աւագագոյն · յունարէն Բռոյիսդոս ։
2 Միայնակեաց · յունարէն Մոնախոս ։
3 Նախերգական ասի սաղմոս · ճգ · Օրհնեա անձն իմ զտէր ։
4 Փոխասաց · յունարէն Կանոնարքոս ։
5 Երեկոյեան աղօթք · յունարէն Լիխնիկոն ։
6 Մեծ քարոզ · յունարէն Սինապդի ։
7 Փոքր քարոզ · յունարէն փոքր Սինապդի ։
8 Նախականոն ասացան ութն սաղմոսք առաջին կանոնին՝ սկսեալ յԵրանեալէն շարունակաբար · որ 'ի կիրակամուտ ութն են ասի, և յաւուրս տօնից երեք միայն · որք և կոչին յունարէն Ստեգոլոգիա ։

Գիտելի է, զի ս՟բ դրունքն ոչ երբէք բացեալ լինին, բայց միայն ՚ի սկիզբն երեկոյեան մեծ ժամերգութեն, յորժամ միայն քահանայն խնկարկէ յա՟մ մուտսն. այսինքն ՚ի մուտսն երեկոյեան ժամերգութեցն, պատարագին, և ա՟յ աւետարանին. Այնպէս բացեալ լինի ՚ի ժամանակէն՝ երբ ասի՝ Խորհուրդ խորին, մինչև ՚ի լրումն ա՟ծայլին պատարագին.

Գիտելի է ևս, զի եթէ ոչ զգեստաւորի սարկաւագն ՚ի սկիզբն երեկոյեան ժամերգութեն, զգեստաւորի ՚ի սաղմոսին երրորդ փոխաձայնի սաղմոսարանին, եթէ իցէ սաղմոսն նախականոն. Իսկ եթէ ոչ իցէ, ՚ի սաղմոսին նախերգականին զգեստաւորի, ո՟պ ասացաւ. և զգեստաւորի այսպէս.

Ընդ ծնրադրութեն աւագագունին. և ընդ դուռն որ ՚ի կողմանէ՝ երթայ ՚ի ներքս ՚ի ս՟բ բեմն. անդանօր գտանէ զքահանայն կացեալ, զի քահանայն յառաջագոյն երթայ ՚ի ներքս. Եւ սարկաւագն առեալ զշապիկն իւր, մատչի առ քահանայն և ասէ, Օրհնեա՛ տր զշապիկս հանդերձ ուրարաւ. և քահանայն օրհնէ զնոյն ասելով, Օրհնեալ է ա՟ծ մ՟ր յա՟մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Եւ սարկաւագն այսու կերպիւ զգեցեալ զն՟ա, և ՚ի լրանալն նախականոն սաղմոսաց, գայ արտաքս, և կանգնի ՚ի սովորական տեղւոջ, և ասէ զփոքր քարոզն, Եւ ևս խաղաղութ՟ն զՏ՟ր աղաչեսցուք, և զմնացեալսն. և ձայնէ քահանայն, Զի քո է կարողութի՟ն, և քո է արքայութ՟ն և զօրութ՟ն, և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Եւ ասեն սաղմոս, Տ՟ր թագաւորեաց. և ՚ի սաղմոսին, սարկաւագն առեալ զբուրվառն՝ և խունկ արկեալ՝ մատչի առ քահանայն որ կայ ՚ի ներքս ՚ի բեմին, և ասէ, Օրհնեա՛ տէր զխունկս. և քահանայն օրհնէ զնոյն ասելով, Օրհնեալ է ա՟ծ մ՟ր յա՟մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. և սարկաւագն խնկարկէ զբեմն և զտաճարն բովանդակ. և յետ դարձեալ՝ դնէ զբուրվառն, և սպասէ անդանօր.

Եւ յորժամ երգեն , Փառք և այժմ , քահանայն մտանէ 'ի ներքս , և զգենու փորուրար և նափորտ , և լինի մուտ . սարկաւագն առեալ զբուրվառն , և խունկ արկեալ , և հայցեալ օրհնութի ոմ̃ աստացաք , գայ արտաքս 'ի միասին ընդ քահանային 'ի կողմանէ հիւսիսոյ :

Եւ բացեալ ՚ըբ դրանցն , և երկու ընթերցողք յառաջ երթեալ հանդերձ զամէարօք , յետ նդ̃ սարկաւագն հանդերձ բուրվառաւ . յետուստ նորին արտաքս ելանէ և քահանայն 'ի վայր թողլով զնափորտն , երթան 'ի սովորական տեղին , ուր ընթերցողք դնեն զաշտանակս 'ի մէջն տաճարին առ երկաքանչիւր կողմանսն :

Իսկ քահանայն կանգնի հանդէպ ՚ըբ դրանցն . կանգնի և սարկաւագն յաջմէ քահանային փոքր ինչ 'ի կողմանէ . և կորացեալ փոքր մի , կալեալ և զուրարն իւր երիւք մատամբք աջոյ ձեռին , ասէ Օ̃ տ̃ր աղաչեմ այսու . բայց ցածուն ձայնիւ՝ միայն թէ լսիցէ քահանայն .

Իսկ քահանայն ասէ խորհրդաբար զաղօթս զայս , Զերեկոյի և յառաւօտու և 'ի միջօրէի , և զմնացեալսն . և զկնի աղօթիցն ուղղեն 'ի վեր զգլուխս իւրեանց , և սարկաւագն նշանացի ցուցանելով զկողմն արևելից ուրարաւն , կալեալ զնոյն երիւք մատամբք աջոյ ձեռին , ասէ առ քահանայն , Օրհնեա տ̃ր զ̃մե հայր . և քահանայն օրհնէ դէպ յարևելս՝ ասելով , Օրհնեալէ հօրն որբոյ հոյ տէր :

Ապա սարկաւագն երթայ և խնկարկէ զ՚ըբ պատկերն՝ որ է 'ի կայանի աւագագունին , և զնոյն ինքն զաւագագոյնն , և դարձեալ կանգնի 'ի տեղւոջն ուր էր յառաջագոյն , սպասելով լրման երգոյն . և 'ի լրանալն սարկաւագն գայ 'ի մէջն , և բուրվառաւն խաչանիշ արարեալ՝ ձայնէ , [1] Սօփիա , Օրթի :

Եւ խսկոյն աւագագոյնն կամ կարգեալ միայնակեացն երգէ՝ Լոյս զուարթ , ԽՔ : Իսկ ընթերցողքն բառնալով դարձեալ զմոմեղէնս՝ յառաջ երթան մինչև

1 Սօփիա , Օրթի . որ թարգմանի իմաստութի , Յոտն կացէք :

՚ի սբ դրունսն . և սարկաւագն մտեալ ՚ի ներքս ՚ի սբ բեմն , խնկարկէ զսբ սեղանն . Իսկ քահանայն երկրպագեալ առաջի սբ դրանցն , և ողջունեալ զնա ՚ի ներքս մտանէ , և փակին սբ դրունքն . Եւ իբրև աւարտի Լոյս զուարթն , ասէ սարկաւագն , Պռօսխումէն . և քահանայն , Խաղաղութ ամենեցուն . և դարձեալ սարկաւագն , Սօփիա պռօսխումէն . և երգի Աւուր պատշաճին . որ կոչի Տռօպարիոն .

Եւ զկնի լռանալոյն՝ սարկաւագն արտաքս ելեալ , և կացեալ ՚ի սովորական տեղւոջ՝ ասէ , Ասասցուք ամենեքեան ՚ի բոլոր անձնէ , և ՚ի բոլոր մտաց մերոց ասասցուք , և զմնացեալն . Եւ զկնի վերաձայնութեանն ասէ քահանայն , Խաղաղութ ամենեցուն . սարկաւագն , Զգլուխս մեր տն խոնարհեցուսցուք . և ասէ զաղօթս , Տէր ած մեր որ խոնարհեցուցեր զերկինս , ևն . և վերաձայնէ , Եղիցի զօրութ թագաւորութեն քո օրհնեալ , ևն .

Եւ զկնի վերաձայնութեն երգեն զտաղսն պաղատանաց , որ կոչին Լիտի . Եւ մինչ երգեն սոքա , մտեալ սարկաւագն , և առեալ զբուրվառն , և խունկ արկեալ ՚ի նմա , և հայցեալ օրհնութ ՚ի քահանայէն , սովորաբար գայ արտաքս ՚ի միասին ընդ քահանային ՚ի հիւսիսայ կողմանէ , մինչդեռ փակեալ են սբ դրունքն . և մտեալք ՚ի սենեակն յառաջոյ երթալով , և անցանելով ընդ գեղեցիկ դրունսն , և յետ նշ ամ եղբարքն , կանգնին ՚ի գաւիթն . և յերգել եղբարցն՝ սարկաւագն սովորաբար խնկարկէ զամենեսին .

Եւ ՚ի լռանալ երգոցն՝ կացեալ ՚ի սովորական տեղւոջն՝ ասէ , Կեցո ած զժողովուրդ քո , և օրհնեա զժառանգութ քո , մինչև ՚ի վերջն . և երգի Տէր ողորմեա , երիցս անգամ . և դարձեալ ասէ , Եւս և աղաչեսցուք զտր թողութ մեղաց ծառայիս այ (այս անուն) ոգւոյն ննջեցելոյ , և ամ որ ՚ի քս եղբայրութե մերոյ . և զմնացեալ երկուս հայցուածսն , որք են սոքա . Ա պահելոյ զմզ օրհնութեան ղայս . և Բ ամ անձանց աղաղակաց խրխաղնէից . այսպէս ասէ քահանայն , Խաղաղութեան ամենեցուն .

սարկաւագն , Զգլուխս մեր Տեառն խոնարհեցուսցուք ։

Եւ քահանայն դառնալով յարեւմուտս , սարկաւագն կալով ընդ աջմէ նր , եւ կալնլով զուրարն երիւք մատամբք աջոյ ձեռին իւրոյ , ասէ զաղօթս զայս մեծաձայն , Տէր բազումողորմ՝ որ յս քս ած մեր , եւն ։

Եւ յորժամ եղանակի [1] Նուագերգութի , յառաջ երթալով մոմեղինաց՝ ամենեքին մտանեն 'ի տաճարն . եւ զաշտանակն դնեն առ երկաքանչիւր կողմանսն նախապատրաստեալ չորեքոտանւոյն . յորոյ վերայ եդեալ է խան , (այսինքն փոքր սնի) , համդերձ ցորենով եւ հինգ հացիւ , զորս սովոր եմք մատուցանել յեկեղեցւոջ . եւ յերկուս կողմանս խանին երկու ամանք լի՝ մինն գինեաւ եւ միւսն ձիթով . եւ գինին դնի ընդ ահեկէ , եւ ձէթն ընդ աջմէ . եւ քահանայն 'ի միասին ընդ սարկաւագին կանգնի 'ի ներքս գեղեցիկ դրանցն . եւ 'ի լրանալ նուագերգութեցն՝ ասացեալ լինի , Արդ արձակեա . [2] Երեքսրբեան . եւ Հայր մեր . յետոյ ձայնէ քահանայն , Զի քո է արքայութի , եւն . եւ երգի արձակման տաղ ըստ պատշաճի աւուրն ։

Եւ եթէ լցէ կիրակի , ասի՝ Ածածէն լոյս , եւն երիցս ։ Իսկ եթէ մեծ տօն սբյ ուրուք լցէ . [3] Ժամամուտն սբյն երիցս ասի , եւ ածածին կցյան միանգամ ։ Իսկ եթէ տէրունական կամ ածածնի տօն լցէ , ժամամուտն այնր տօնի եւս երիցս ասի ։

Նոյնպէս մինչդեռ վերջին արձակումն երգի մեծաձայն եւ ծանր , սարկաւագն նախ հայցեալ 'ի քահանայէն օրհնութի խնկոյն՝ եւ առեալ , խաչանիշ խնկարկէ շուրջանակի զհացսն . ապա զվանահայրն , եւ դարձեալ զհացսն յառաջ կուսէ միայն ։

Իսկ մինչ մերձենայ քահանայն առ հացսն , սարկաւագն կանգնի յաջմէ կողմանէ նր , կալեալ ահեակ ձե

1 Նուագերգութի . յունարէն կոչի Դասափօստիքու ստիհիրամ ։
2 Երեքսրբեան . այսինքն Սբ ած , սբ եւ հզօր , եւն ։
3 Ժամամուտ . յունարէն Դուօքարիոն ։

ւամբն զբուրվառն, իսկ երիւք մատամբն աջոյ զուրարն։ և 'ի լրանալ ժամամուտին՝ ցուցանելով ուրարաւն ըզ-հինգ հացսն՝ ասէ, Զտէր աղաչեսցուք. և քահանայն զաղօթս, Տր ած մր՝ որ օրհնեցեր զհինգ հացսն, եւն։

Եւ յորժամ ասեն եղբարքն, [1] Օրհնեցից զՏր յամ ժամ, եւն. 'ի ներքս մտանէ քահանայն 'ի միասին ընդ սարկաւագին 'ի սբ բեմն. և եղբարքն ասեն զսաղմոսն, մինչև Մի պակասեսցի ամ բարութի։

Իսկ քահանայն 'ի ներքուստ 'ի սբ բեմէն ձայնէ, Օրհնութի Տն 'ի վերայ մեր շնորհիւ նր և մարդասիրութեամբն յամ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ այսպէս մերկանան զպաշտօնէական պատմուճանսն և գան արտաքս։ Եւ յորժամ դնի Ճաւգիրքն, և ասէ զհամառօտ աղօթքն՝ որ է այս, Ողորմեա տր հարցն մերոց, եւն։

Իսկ եթէ ոչ իցէ հսկումն, զկնի լրանալոյ նուագերգութեանցն, քահանայն մտանէ 'ի ներքս 'ի սբ բեմն. և զկնի երեքսրբենին՝ ձայնէ, Զի քո է արքայութի և զօրութի և փառք, եւն. և ասի երգն արձակման։

Իսկ սարկաւագն արտաքոյ կացեալ, մինչ ժամամուտն լրանայ՝ ձայնէ, Օրհնեա՛. և քահանայն 'ի ներքուստ, Որ էն օրհնեալ քո ած մր յամ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ երգեն, Հաստատեցէ ած զխաղաղութի, եւն. և քահանայն ասէ մեղմ ձայնիւ, Բարեխօսութբ ածածնին պահեա զմեզ։ Եղբարքն, Զվերագոյնն քերովբէից, եւն։ Եւ դարձեալ քահանայն մեղմաբար, Փառք քեզ ած յոյս մեր, փառք քեզ։ Եւ ասեն եղբարքն, Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ, և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամն. Տէր ողորմեա՛։

Իսկ քահանայն բացեալ զսբ դրունսն, և 'ի վայր արկեալ զնափորտն, սարկաւագն կացեալ արտաքուստ ընդ աջմէ, և զուրարն կալեալ սովորաբար, ասէ զԱրձակումն զայս, Քս ճշմարիտ ածն մր՝ բարեխօսութե ամենասուրբ մօր իւրոյ, և սբց փառաւոր և ամենահրաշալի առաքե-

[1] Օրհնեցից զՏր, եւն. սաղմոս, ԼԳ.

ըզոյն և զմ սէր , որդւոյն և հոգւոյն ընդ՝ որպէս բարե_ րար և մարդասէր ։

Իսկ եթէ տէրունական տօն լինի , ասէ զԱրձակումն ա՛ յարմարութ տօնին ։ Իսկ եթէ յիշատակ մեծի ուրուք իցէ , ձայնէ յարձակմանն և զանուն իւրն ։ Իսկ եթէ լինի Պողատանք , որ կոչի Արք , զկնի արձակմանն առեալ սարկաւագն զբուրվառն , գայ առաջս ՚ի միա_ սին ընդ քահանային , և մոմեղէնքն յառաջոյ երթան ․ և լինի այնպէս , որպէս նախապէս գրեալ եղև ՚ի մեծի ժամերգութեան երեկոյեան ։

Յաւուրսն եթէ լինի հսկումն , մինչ աւարտի Ճառագիրքն , խնկոյն աւագագոյնն կամ կարգեալ միայ նակեացն ասէ 1 զՄեղայսղմոսն ։ Իսկ եթէ կիրակի իցէ , և ոչ լինի հսկումն ․ երգի 2 Կանոնն երրորդութ ․ և ՚ի վախճանի երգի , Արժան է ճշմարտապէս օրհնել զծնօղդ տոյան երրորդութեանն , եւն ։

Գիտելի է , զի ՚ի ժամերգութ կէս գիշերոյ առաջոյ մեծ դրանցն ասի մեծ քարոզ , Ամ պահպանութ խաղաղու այսմ , և զմ խաղաղաց և աստանաց , եւն ․ և երգի Տր ողոր_ մեա , խ ․ և լինի արձակումն , և դնի Ճառագիրքն ։

Իսկ քահանայն մտեալ ՚ի սբ բեմն , և արկեալ փորու րար , և բացեալ միայն զբեմադուռն՝ ձայնէ , Օրհնեալ է Տր ած հր մրց ժամ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Եւ երգի երեքսրբեանն , և սովորական սաղմոսքն , և դարձեալ երեքսրբեանն ։

Իսկ մինչ երգին սոքա , քահանայն խնկարկէ զսրբա րանն և զտաճարն բոլանդակ ․ և եկեալ առաջս ՚ի հիւսիսային կողմանէ՝ խնկարկէ և զեղբարսն և զգա_ ւիթն ․ և յերկուս երեքսրբեանսն զկնի Հայրմերին՝ ձայնէ , Օհ քո է արքայու և զօրու , եւն ։

1 Վերջ սաղմոսքն են սոքին ․ Տէր զի բազում ․ ( սաղմոս ․ գ ) ։ Տր մի՛ սրտմտութ ․ ( սաղմոս ․ լէ ) ։ Աճ ած իմ ես դու ․ ( սաղմոս ․ կբ ) ։ Տր ած փրկութ ․ ( սաղմոս ․ ձէ ) ։ Օրհնեա՛ անձն իմ ․ ( սաղմոս ․ ճբ ) ։ Տէր լուր աղօթից ․ ( սաղմոս ․ ճխբ ) ։
2 Կանոն երրորդութեան ․ յունարէն Դրիատիքա՛ ։

Բայց պարտին ունել փոյթ երգօղքն և խնկարկօղն, զի յորժամ ասիցէ զԱ երաձայնութին, գտանիցին առաջի պատկերին քն: Նոյն զկնի խնկարկելոյ զբովանդակ տաճարն, և լռանալոյ սովորաբար երգելի ժամամուտից, ՚ի ներքուստ ՚ի սբ բեմէն ձայնէ քահանայն, Փառք սբ և համագոյ և կենդանարար և անբաժանելի Երրորդութեն, եւն: Նոյն խկոյն աւագագոյնն կամ կարգեալ միայնակեացն ասէ զվեցսաղմոսն:

Իսկ յորժամ սկսանի, Տէր ած փրկութե իմոյ, եւն. գայ քահանայն, և կանգնի առաջի սբ դրանցն գլխիբաց, և ասէ ՚ի ծածուկ զառաւօտեան աղօթսն: Նոյն զկնի լռման սաղմոսին՝ ասէ զմեծ քարոզն. և այսպէս երգի, Ած Տէր և երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ յանուն տն. և մնացեալ կարգաւորութին երգի ըստ սովորութե. բայց ՚ի լռման իւրաքանչիւր Կաթիզմայի, այսինքն Հանգստեան, քահանայն ասէ զփոքր քարոզն. և ձայնէ յառաջին կաթիզմային, Զի քո է կարողութիւն, և քո է արքայութիւն և զօրութիւն, եւն:

Իսկ յերկրորդին, Զի բարերար և մարդասէր ես ած գոլով, եւն: Նոյն ասի 1 Բազումողորմն, կամ 2 Ամբիծն. և ապա ձայնէ, Զի օրհնեալ և փառաւորեալ է ամենապատիւ և մեծավայելուչ անուն քո, եւն:

Նոյն յորժամ եղանակի 3 Երգ աստիճանացն, մտանէ քահանայն ՚ի միասին ընդ սարկաւագին ՚ի ներքս ՚ի սբ բեմն. և յօրհնելն քահանային զշապիկն՝ սարկաւագն զգենու զայն ըստ սովորութե. նմանապէս և քահանայն զգենու փորուրար և նափորտ:

Նոյն մինչ լռանայ երգ աստիճանացն, երգի 4 Մեսեդի տօնին կամ կիւրակէին. և յետոյ ասէ սարկաւագն, Զտր աղաչեսցուք. և քհնյն ձայնէ, Զի սբ ես ած մեր, և ՚ի սբս հանգուցեալ, և քեզ փառս վերառաքեմք, եւն:

1 Բազումողորմ ասի սաղմոսն. Օրհնեցէք զանուն տն, եւն. ճլդ:
2 Ամբիծ ասի սաղմոսն. Երանեալ են ամբիծք ՚ի ճանապարհի. ճժը:
3 Երգ աստիճանաց. կոչի յունարէն Անտիֆօնա, այսինքն փոխաձայնի:
4 Մեսեդի. կոչի յունարէն Բռօքիմենոն, այսինքն նախադրութե:

Յաւ երգի , Ըստ ձայնին հոգւոյ օրհնութեան զանէր , եւն . և սարկաւագն , Սոփիա , Օրթի . Լուիցուք սրբոյ աւետա_րանին ։ Քահանայն , Խաղաղութի ամենեցուն . և խնկյն վերաբերէ , Ընթերցուածս սրբոյ աւետարանին (այս անուն) ։ Յաւ ժողովուրդն , փառք քեզ Տր , փառք քեզ . Սարկա_ւագն , Պռօսխումէն . և ընթեռնու քահանայն Ս Աւետարանն ։ Յաւ 'ի լռանալն՝ երգեն եղբարքն , Զյարութիւնն Քի տեսեալ երկրպագեսցուք Տն սբյ Յի միայն անմեղին , եւն ։

Բայց եթէ լինի կիրակի , երգեն եղանակօք և [1] զՊէնտեկոստէանն . իսկ քահանայն 'ի վայր արկեալ զնա_փորտն , և առաջի կրծոցն կալեալ զՍբ աւետարանն՝ գայ առաջս , և կանգնի 'ի մէջն տաճարին . և ընթեր_ցօղն կամ բարեկարգօղն կանգնի ընդ աջմէ նր , ըմբռ_նելով զաշտանակն հանդերձ վառեալ մոմեղինաւ . և եղբարքն համբուրեն զՍբ աւետրնն ։ Իսկ յայլում աւուր ոչ լինի համբոյր՝ բայց միայն 'ի կիւրակէի . և իբրև լռանայ Ողորմեայն , երգեն զաւորական ժամամուտն ։

Յաւ սարկաւագն եկեալ առաջս՝ կանգնի 'ի սովորա_կան տեղւոջն՝ և ասէ մեծաձայն , Կեցո՛ Տր զժողովուրդ քո , և օրհնեա զժառանգութիւն քո , այց արա աշխարհի քում ողորմութբ և գթութբ , բարձրացո՛ զեղջերս ուղղափառ քրիստոնէից , և առաքեա 'ի վր մեր զառատ ողորմութիւնս քո , բարեխօսութբ առաւել անարատ փրկահայր մօրդ Ածածնին և մկրտչին Յովհաննու , զօրութբ պատուական և կենդանարար խաչին , վերակացութբ երկնային պատուական զօրութեանց անմարմնոց ։

Յաւ երգի Տր ողորմեա , ժբ . և քհնյն ձայնէ այսպ . Ողորմութբ և գթութբ և մարդասիրութբ Աստուծոյ մերոյ . ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար հոգւովդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Յաւ յորժամ երգի [2] Կանոն օրհնութեցն , քահանայն

1 Պէնտէկոստէան կոչի . յիսուն Տէր ողորմեայն ։
2 Կանոն օրհնութե կոչին ինն շարականք , որք յօրինեալ են 'ի վր ինն օրհնութեց . որք են ա և բ Մովսէսի . գ Աննայի . դ Ամբակումայ . ե Եսայեայ . զ Յովնանու . է և ը Երից մանկանց . թ Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի , և Ածածնի ։

գայ արտաքս , և կանգնի յաջակողմեան դասն 'ի սովորա-կան տեղին : Իսկ սարկաւագն առեալ 'ի քահանայէն օրհնու՟թի խնկոյն , խնկարկէ նախ զսրբարանն բովան-դակ . ապա գայ արտաքս 'ի հիւսիսոյ կողմանէ , և խա-չանիշ առնէ առաջի ս՟բ դրանցն . և խնկարկէ նախ զպատկերսն ա՟մ` որք կան յաջմէ կողմանէ , և երթայ առ ս՟բն պաշտպան օթեւանին . և խաչանիշ արարեալ` դառնայ յարեւմուտս :

Եւ կացեալ 'ի մէջն տաճարին` խաչանիշ առնէ . և երթայ խնկարկէ նախ զպատկերն` որ կայ 'ի վ՟ր աթոռոյ աւագագունին , ապա զաւագագոյնն , և հետ զհետէ զեղբարս աջակողման դասուն :

Եւ զկնի խնկարկելոյ զա՟մ դասաւորու՟թին` կանգնի 'ի մէջն դասուն , և հայելով ընդ հարաւ` առնէ խաչա-նիշ . և 'ի խնկարկելն ն՟ր` խոնարհեցուցանեն զգլուխս իւրեանց խնկարկեալքն 'ի նմանէ . և փոխադարձ այսմ` փոքր մի և ինքն խոնարհեցուցանէ զգլուխն :

Իսկ զկնի խաչանիշ առնելոյ` երթայ յաջակողմեան դասն , և խնկարկելով անդ զս՟բ պատկերսն` խնկարկէ և զեղբարսն , սկսեալ 'ի վերուստ 'ի պատկերացն , և երթալով մինչև 'ի գեղեցիկ դրունսն . որք նմանապէս խոնարհեցուցանեն ինքեան զգլուխս իւրեանց . և փո-խադարձ այնմ` և ինքն խոնարհեցուցանէ զգլուխն :

Եւ լրացուցեալ զնոյն դասաւորու՟թի` դարձեալ կանգնի 'ի մէջն . հայելով ընդ հիւսիս և առնելով խա-չանիշ` ելանէ 'ի գաւիթն . և խնկարկեալ անդանօր զամենեսեան` մտանէ 'ի ներքս ընդ գեղեցիկ դրունսն . և խաչանիշ արարեալ զկողմն արեւելից` խնկարկէ զաւա-գագոյնն , և անդրէն 'ի մէջն խաչանիշ առնէ . և խըն-կարկեալ զս՟բ պատկերսն` մտանէ 'ի ներքս , և 'ի բաց դնէ զբուրվառն . և եկեալ արտաքս` փոքր մի խոնար-հեցուցանէ աւագագունին զգլուխ իւր 'ի հեռուստ , և կանգնի 'ի սովորական տեղին :

Եւ յետ աւարտման Երրորդ օրհնու՟թեն , ասէ սարկաւագն . Եւ եւս խաղաղու՟թե զ՟տր աղաչեսցուք . ընկալ ,

ձեցս, ողորմեա, Եւ։ Օրհնեալ ամենօրհնութեամբ առաւօտուն, լուսաւորեալ օրհնեալ, Եւ. և ձայնէ քահանայն. Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Եւ զկնի Վեցերորդ օրհնութեանն, քահանայն առնէ զփոքր քարոզն. և կացեալ առաջի սբ. դրանցն գլխիբաց՝ ձայնէ. Օրհնեալ ես Տէր բարեխօս խաղաղութեան, և քեզ փառս վերառաքեմք, Եւ։

Իսկ յԵւթերորդ օրհնութեանն՝ քահանայն ՚ի միասին ընդ սարկաւագին առնէ ծնրադրութիւն առ աւագագոյնն, և մտանեն ՚ի ներքս ՚ի բեմն, և զգեստաւորի ըստ սովորութեան։

Իսկ ՚ի լրանալ ութերորդ օրհնութեանն՝ երգէ սարկաւագն մեծաձայն. Զաստուածածին զմայրն լուսոյ մեծացուսցուք երգով. և երգի, Պայծառագոյն քերովբէից, Եւ։ Իսկ եթէ ոչ լիցի այս, երգի առաջին շարականն իններորդ օրհնութեանն այնմ աւուր. և այսպէս քահանայն ելեալ արտաքս, կանգնի ՚ի սովորական տեղւոջն. և սարկաւագն խնկարկէ զամենեսին սովորաբար, և դարձ արարեալ կանգնի ՚ի սովորական տեղւոջն։

Իսկ զկնի Իններորդ օրհնութեանն, առնէ սարկաւագն զփոքր քարոզն. և ձայնէ քահանայն. Օրհնեալ է դէմք փառաց ամ զօրութեամբ երկնից, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Իսկ մինչ սկսանի Փառաբանութիւն, քահանայն մտանէ ՚ի ներքս ՚ի սբ. բեմն. և ՚ի լրանալն սորին՝ առնէ սարկաւագն, Կատարեսցուք զառաւօտեան աղօթս մեր, և զմնացեալն. և իսկոյն առնէ քահանայն, Խաղաղութիւն ամենեցուն. և սարկաւագն, Զգլուխս մեր Տեառն խոնարհեցուսցուք։ Եւ քահանայն առնէ զաղօթս ՚ի ծածուկ. Տէր մեր՝ որ ՚ի բարձունս բնակես, Եւ. և ձայնէ, Օրհնեալ է փառք զօրութեան և յաւիտեանս յաւիտենից, Եւ։ Սարկաւագն, Աղօթեա. քահանայն, Որ էին օրհնեալ ես Տէր յամ ժամ, Եւ. և երգի, Հաստատեա զմեզ խաղաղութեամբ, Եւ։ Քահանայն, Օրհնեալ ամենօրհնութեամբ ձեցս չեզ. և երգի, Պայծառագոյն քերովբէից, Եւ։ Յետոյ դարձեալ առնէ քհնյն,

փառք քեզ տր̄ ած̄ յոյս մեր, փառք քեզ. և լինի արձակումն:

Եւ եթէ լիցէ կիրակի աւր, զՅարուցե̄լն 'ի մեռելոց բարեխօսու-թբ̄ անարատ մօր իւրոյ, սբ̄ փառաւոր և գերահռչակ աստուածածնին և ամ̄ սբ̄ց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ, որ̄պ բարերար և մարդասէր:

Իսկ եթէ լիցէ տէրունական տօն, կամ յիշատակ մեծ սրբոյ, տուեալ լինի և սբ̄ խունկ այսպ̄: Ժողովեալ ամ̄ենցուն մերձ 'ի պատկեր ուխտի այնր աւուր, և յերգելն զաւուր պատշաճի երգսն՝ սարկաւագն խնկարկէ շուրջանակի՝ յառաջագունէն սկսեալ, նախ խնկարկեալ զպատկեր սրբյն:

Իսկ քահանայն կացեալ 'ի միում կողման պատկերին՝ ըմբռնելով զպատրոյգ իւղեալ 'ի կանթեղէ սրբյն, օծանէ նովաւ զճակատ մերձեցելոց, և օրհնէ: Եւ յորժամ օծանին ամ̄քեան՝ ձայնէ. Տէր մեր ած̄ փրկիչ մեր, յոյս ամ̄ ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի. և քաւեա զմեղս մեր՝ քաւեա և ողորմեա մեզ: Եւ ձայնէ. Զի ողորմած և մարդասէր ես ած̄ գթած, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Խաղաղութ̄ ամենեցուն. սարկաւագն, Զգլուխս մեր տն̄ խոնարհեցուսցուք:

Եւ սարկաւագն կալեալ զուրարն սովորաբար, և քահանայն 'ի վայր արկեալ զնափորտն՝ տայ զաղօթս զայս. Տէր մեր՝ տր̄ յս̄ քս̄ ած̄ մեր՝ բարեխօսութբ̄ ամենօրհնեալ փառաւոր աստուածածնին, և միշտ կուսին մարիամու, եւն: Խնդրեա զայսուիկ 'ի Լիդին

Իսկ 'ի տօնի Մուետեացն, Ծաղկազարդին, և հրաշափառ կիրակէի Զատկին՝ լինի արտաքոյ տաճարին. և լինի 'ի նմ̄ ոչ̄ զԼիդին, որ յառաջագոյն գրեալ եղև. Լինին ջրօրհնէք ածայայտնութե̄ն և յերեկոյի և յառաւօտու, և յետ այնորիկ յառաջին աւուրն օգոստոսի. Ընդ սարկաւագն բարձեալ զխաչն՝ գայ արտաքս, և քահանայն զկնի նր̄ գայ. սարկաւագն խնկարկէ, և տայ միայն 'ի յաղօթսն՝ Զտր աղաչեսցուք. և քահանայն տանէ զմ̄ ոչ̄ սովորութի է, և 'ի տօնացոյցս գրեալ են:

ՎԱԽՃԱՆ

## Կարգադրութե̄ն սարկաւագութե̄:

Աղօթք վ՟ ողջայծին կնոջ.
Յառաջնում աւուր ծննդեան մանկան խուրց:

## Զտէր աղաչեսցուք.

Տէրբօղա տ՟ր ամենակալ՝ որ բժշկես զա՟մ ցաւս և զա՟մ ախտաժետութ՟ի, ինքնին և զառաջնիկայ աղախին քո (այս անուն) որ այսօր ծնաւ, բժշկեա՛ և յարո՛ զսա 'ի մահճէ սաստի յոր անկեալ դնի. զի ըստ բանի մարգարէին դաւթի, անօրէնութ՟ե յղացեալ եղաք, և աղտեղութ՟ե ենք ամենեքեան առաջի քո:

Պահեա՛ զսա, և զառաջնիկայ մանուկս զոր ծնաւ. ծածկեա՛ զսա ընդ հովանեաւ թևոց քոց՝ յօրէ յայսմանէ մինչև ցվախճան կատարածի սորա, բարեխօսութ՟ե սրբուհւոյ ա՟ծածնին և ա՟մ ս՟րբց. զի բարեբանեալ ես յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Զտէր աղաչեսցուք.

Տէրբօղա տ՟ր ա՟ծ մեր՝ որ ծնար յանարատ սրբուհւոյն մերմէ ա՟ծածնէ՝ և 'ի միջի կուսէն մարմնոյ, և ոչ մանուկ 'ի մաւր եգար, և ոչ տղայ երևեալ ցուցար. ինքնին և առաջնիկայ աղախնոյ քում այսմիկ՝ որ ծնաւ զառաջնիկայ մանուկս՝ ողորմեա՛, և թո՛ղ զյանցանս սորա զկամայ և զակամայ. և պահեա՛ յա՟մ բռնութ՟ե բանսարկուին: Եւ զտղայս որ ծնաւ 'ի սմանէ՝ պահպանեա՛ յա՟մ կախարդական պատահարաց, յա՟մ վշտաց, յա՟մ խռովութ՟ց հակառակորդին, յա՟մ այսոց չարաց որ 'ի տունջեան և 'ի գիշերի:

Եւ պահպանեա՛ զսա 'ի ներքոյ հզօր ձեռին քո. և տուր սմա վաղվաղակի յառնել. և մաքրեա՛ յաղտեղութ՟ե. և բժշկեա՛ 'ի ցաւոցն. և պարգևեա՛ զօրութ՟ի և առողջութ՟ի հոգւոյ և մարմնոյ. և 'ի ձեռն հրեշտակաց զուարթնոց

և լուսեղինաց ամրացն · և պարսպեալ պահեա՛ յամ յարձակմանց աներևոյթ դիւաց։

Այո՛ Տր՝ պահեա՛ ի հիւանդութենէ և յախտից, ի նախանձու և ի մախանաց և ի չարակնութենէ · և ողորմեա՛ սմա, և մանկանս այսմիկ ըստ մեծի ողորմութեան քում։ Եւ մաքրեա՛ զսա ի մարմնական աղտեղութենէ, և ի պէս պէս ամբոխմանէ փորոտեաց առ սա եկելոց · և յանձն զսա անարգ մարմնովս ի ձեռն արագահաս ողորմութեան քո · և զծնեալ մանուկս ի սմանէ արժանաւորեա՛ երկիր պագանել երկրաւոր տաճարին, զոր պատրաստեցեր ի փառաւորութիւն անուան քո սբյ։ Զի քեզ վայելէ ամ փառք՝ պատիւ՝ և երկրպագութիւն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր Ած մեր՝ որ վս փրկութեան մեր մեղաւորաց հաճեցար իջանել յերկնից, և ծնանիլ ի սրբուհւոյ Ածածնէն՝ և ի միշտ կուսէն Մարիամայ · որ գիտես զտկարութիւն մարդկայինս բնութեան՝ ներեա՛ աղախնոյ քում (այս անուն) որ ծնաւ այսօր, ըստ բազում գթութեան քում։ Քանզի դու ասացեր Տր՝ աճեցէք և բազմացարո՛ւք և լցէք զերկիր, և տիրեցէք դմա · վսյ և մեք ծառայքս քո աղաչեմք, և ապաւինեալ յանոխակալ մարդասիրութիւն քո՝ երկիւղիւ գոչեմք առ սբ անուն Թագաւորութեան քո։

Հայեաց յերկնից և տես զտկարութիւն մեր պարտաւորաց, և ներեա՛ (այս անուն) աղախնոյ քո, և ամ տանս յորում ծնաւ մանուկս · և շօշափողաց աղախնոյս, և ամենեցուն որք գտանին ի սմա՝ ներեա՛ որպէս բարերար և մարդասէր Ած, բարեխօսութեամբ սրբուհւոյ Ածածնին և ամ սրբոց քոց · զի դու միայն ունիս իշխանութիւն թողուլ զմեղս։

Աղօթք 'ի կնքել մանկանն ·

Որով ընդունի զանուն յութերորդ աւուր ծննդեան իւրոյ ·

Եւ գիտելի է, զի յետ ութերորդի աւուր ծննդեանն՝ ածի մանուկն 'ի մանկաբարձէն 'ի տաճարն, և կայ առաջի դրանց տաճարին. Եւ քահանայն ասէ, 1 Օրհնութ՟ի · Երեք սրբեան · 2 Ամենասուրբ երրորդութ՟ի · Հայր մեր, զի քո է արքայութ՟ի և զօրութ՟ի և փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Յետ այնորիկ ասէ, 3 զԱրձակումն աւուրն, կամ ս՟բյն այնր օրհնելոյն. Եւ քահանայն կնքէ զճակատ նորա և զբերանն և զկուրծն, և ասէ զաղօթս.

Զտէր աղաչեսցուք ·

Տէր ա՟ծ մեր՝ զքեզ աղաչեմք և զքեզ աղերսեմք, նշանեսցի լոյս երեսաց քոց 'ի վ՟ր ծառայիս քո (այս անուն) և նշանեսցի խաչն միածնի որդւոյ քո 'ի սիրտ և 'ի խորհուրդս սորա՝ առ 'ի փախչել յունայնութ՟ե աշխարհիս, և յա՟մ չար ներգործութ՟ե թշնամւոյն, և հետևել հրամանաց քոց. Եւ տուր տէր հաստատուն մնալ անուան քում ս՟բյ 'ի վ՟ր սորա, յօդեալ 'ի դէպ ժամանակի յեկեղեցի քո ս՟բ, և կատարիլ 'ի ձեռն սոսկալի խորհրդոց ք՟սի քո. Զի ըստ պատուիրանաց քոց քաղաքավարեալ, և պահեալ զկնիքն աննշմարելի, արժանասցի երանութ՟ե ընտրելոցն յարքայութ՟ե քում, շնորհօք և մարդասիրութ՟բ միածնի որդւոյ քո · ընդ որում օրհնեալ ես համդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար հոգւովդ քով, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

1 Օրհնութ՟ի · յունարէն, Էվլօյիդօն · և է այս · Օրհնեալ է ա՟ծ մեր յա՟մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.
2 Ամենասուրբ երրորդութ՟ի · յունարէն, Բանայիա դրիաս · և է մաղթանքս այս · Ամենասուրբ երրորդութի՝ ողորմեա մեզ · տ՟ր քաւեա զմեղս մեր, տիրօղդ՝ ներեա մեզ զանօրէնութիւնս մեր, ս՟ր՝ այց արա և բժշկեա զտկարութիւնս մեր · վասն անուան քո, տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա.
3 Արձակումն · յունարէն, Աբօլիդիգիոն.



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԽՍՄՏՊԵՄ
ՄԱՍՆԱՎՈՐ

Յետ այսորիկ 'ի ձեռս առեալ զմանուկն՝ կանգնի առաջի դրանց տաճարին , կամ պատկերի սրբուհւոյ Ա͞ծածնին , և խաչակնքէ ասելով. *Ուրախ լեր բերկրեալ Ա͞ծածին կոյս. քանզի 'ի քէն ծագեցաւ արեգակն արդարութե͞ Ք͞ս Ա͞ծ մեր , լուսաւորելով զն͞ս որք էին 'ի խաւարի. Ուրախ լեր և դու արդար մարգարէ , որ ընկալար զփրկիչն հոգւոց մերոց զպարգևիչն յարութե։* Եւ լինի արձակումն։

Պարտ է գիտել , զի եթէ ծնեալ տղայն տկար գոլով ոչ իցէ , այլ մերձ 'ի մահ գտանիցի , չէ պարտ սպասել վեցերորդի կամ ութերորդի աւուրն , և այնպէս մկրտել , ո͞չ ոմանց մոլորաբար ասեն . այլ 'ի ժամուն յորում ծնաւ՝ խաչոյն լուանալ , և առ ժամայն մկրտել , զի մի մեռանիցի առանց լուսաւորութե։ Քանզի հնգամսեայ յղեան եթէ յարձակէ իմիք վիժեցեն զտղայն՝ պարտաւոր արեան համարին ըստ օրինաց և ըստ կանոնաց . որչափ ևս առաւել արժան է ծնողաց զգուշանալ 'ի մեղաց , զի մի ծնեալ առանց լուսաւորութե մեռանիցին։

*Աղօթք կ͞ն տղայածին կնոջ , յետ քառասուն աւուրց։*

Եւ յաւուրն քառասներորդի դարձեալ ածի տղայն 'ի տաճարն , զի սպասեսցէ այնուհետև համարձակ մտանել յեկեղեցին։ Եւ ածի մանուկն 'ի մօրէն՝ որ նորոգ մաքրեալ է և լուացեալ , առաջիկայ գտանելով և այնմ՝ որ ընկալեալ է մանկաբարձ [illegible] ութեան նորա։

Եւ քահանայն ասէ , Օրհնութի . *Երեքսրբեան . Ամենասուրբ Երրորդութի . Հայր մեր , զի քո է արքայութի , եւս.*

Յետ այնորիկ ասէ զարձակումն աւուրն , կամ օրհնեալ Տէրն .

*Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ , եւս. Բարեխօսութե ա͞մ ս͞րց և Ա͞ծածնի՝ տուր մեզ զխաղաղութի քո և ողորմեա մեզ՝ որ միայնդ ես գթած ,*

Եւ 'ի խնամարհեցուցանելն տղայածին կնոջ զգլուխն 'ի դուռն ընդ տղայէն , կնքէ քահանայն 'ի վերայ նորա , և եդեալ զձեռն 'ի գլուխ մանկանն , ասէ զաղօթս։

## Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա՟ծ ամենակալ՝ հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ զմ՟ բնութ՟ի բանականաց և անբանից բանիւ քով արարչագործեցեր, որ զմ՟ ինչ յոչինչ 'ի գոյ ածեր ։ զքեզ աղաչեմք և զքեզ աղերսեմք, զաղախին քո (այս անուն)՝ որ յանուն քո կենդանի պահեցեր կամօք քո, մաքրեա յա՟մ մեղաց և յա՟մ աղտեղուէ, որ մատչի յեկեղեցի քո ս՟բ ։ զի անդատապարտ արժանաւորեսցի կցորդիլ սրբոց խորհրդոց քոց ։

Եւ 'ի սմանէ ծնեալ մանուկս օրհնեա, աճեցո, սրբեա, զգօնացո, զգաստացո, բարեմիտ արա ։ զի դու ստեղծեր զսա, և ցուցեր սմա զլոյս զգալի ։ զի և իմանալի լուսոյն արժանաւորեսցի՝ 'ի ժամանակի յորում սահմանեցեր, և զուգաթուեսցի 'ի ս՟բ հօտն քո 'ի ձեռն միածնի որդւոյ քո ։ ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենաս՟բ և բարի և կենդանարար քո հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Գիտելի է, զի եթէ տղայն չիցէ կենդանի, աղօթքս այս ընթերցեալ լինի այսպէս ։

## Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա՟ծ ամենակալ՝ հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ զմ՟ բնութ՟ի բանականաց և անբանից բանիւ քով արարչագործեցեր, որ զմ՟ ինչ յոչինչ 'ի գոյ ածեր ։ զքեզ աղաչեմք և զքեզ աղերսեմք, զաղախին քո (այս անուն)՝ որ յանուն քո կենդանի պահեցեր կամօք քո, մաքրեա յա՟մ մեղաց և յա՟մ աղտեղուէ, որ մատչի յեկեղեցի քո ս՟բ ։ զի անդատապարտ արժանաւորեսցի կցորդիլ սրբոց խորհրդոց քոց ։

'Ի ձայն ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Քահանայն · Խաղաղութիւն ամենեցուն ։

Զգլուխս ձեր Ա՟ծ խոնարհեցուցէք ·

Աղօթք վասն մօր մանկանն ։

Տ՟ր Ա՟ծ մեր՝ որ եկիր ՚ի փրկութի՟ ազգի մարդկան, մ՟յց այս և աղախնոյ քո (այս անուն), և արժանաւորեա զսա ՚ի ձեռն աղօթից պատուական ուխտի քահանայութեան մտանել ՚ի տաճար փառաց քոց, ապաւինել ՚ի ս՟բ կաթողիկէ եկեղեցի քո, և հաղորդիլ պատուական մարմնոյ և արեան քո ։

՚Ի բա՟ց լուա զաղտեղութի՟ մարմնոյ սորա և զբիծ հոգւոյն ՚ի լման քառասուն աւուրցս · ո՟ղ զի արժանի եղիցի մտանել ՚ի տաճար քո ս՟բ, փառաւորել զամենաս՟բ անուն քո ընդ հօր և ընդ հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Այլ աղօթք վասն մանկան · զոր քահանայն կնքելով ասէ ։

Տէր աղաչեսցուք ։

Տ՟ր Ա՟ծ մեր՝ որ ՚ի քառասներորդի աւուրն տղայ ածար ՚ի Մարիամայ յանհարսնացեալ և ՚ի սրբուհի մօրէ քումմէ, և ՚ի գիրկս արդարոյն սիմէոնի բարձեալ եղեր · ինքնին տէր ամենազօր՝ և զտղայս զայս որ ածեալ կալ յանդիման քումդ ամ՟ցուն արարչի, օրհնեա՝ և յա՟մ բարի և քեզ հաճոյական գործս աճեցո, մերժելով ՚ի սմանէ զա՟մ զօրութի՟ հակառակորդին՝ նշանաւ խաչի քո, քանզի դու ես որ պահես զտղայս ա՟ր · զի արժանի լինելով ս՟բյ մկրտութե՟ն, հանդերձեսցի մասին ընտրելոցն արքայութե՟ քո, պահպանեալ ընդ մեզ շնորհիւ ս՟բ և համագոյ և անբաժանելի երրորդութեանն ։

Քանզի քեզ վայելէ ա՟մ փառք և գոհութի՟ և երկրպագութի՟ ընդ անսկզբան քո հօր, և ամենաս՟բ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Խաղաղութի՟ ամենեցուն ։

### Գլուխս մեր Տ՟ն խոնարհեցուցէք ։

Տ՟Ծ՝ հայր՝ ամենակալ, որ ՚ի ձեռն մեծաձայն մարգարէին եսայեայ յառաջագոյն ծանուցեր մեզ ըզ մարմնանալն ՚ի կուսէն միածնի որդւոյ քո և ա՟յ մերոյ ։ Որ ՚ի վախճան աւուրց բարեհաճութ՟ քով և գործակցութ՟ հոգւոյն ս՟բյ, վ՟ս փրկութ՟ մեր մարդկան անսահման բարեգթութեամբ ՚ի նմանէ տղայանալ յանձն էառ ։ Նոյն ըստ սովորութ՟ ս՟բ օրինաց քոց յետ կատարման աւուրցն սրբութ՟ ՚ի տաճարն ածիլ հանդուրժեաց ճշմարիտ օրէնսդիր գոլով, և ՚ի գիրկս արդարոյն սիմէոնի բառնիլ հաճեցաւ ։

Զօրինակ խորհրդոյս այսորիկ յառաջագոյն նշանակեալ ծանուցեր մեզ ՚ի նախայիշեալ մարգարէն՝ ՚ի ձեռն ունելեացն կայծական ։ զորոյ զնմանութ՟ն և մեք հաւատացեալքս ունիմք շնորհիւ ։

Տէր՝ որ պահես զողջոյս, ինքնին և այժմ օրհնեա զմանուկս զայս ընդ ծնողաց և ը՟ մանկաբարձի սորա ։ և արժանացո զսա ՚ի դէպ ժամանակի վերստին ծննդեան ՚ի ձեռն ջրոյ և հոգւոյ ։ զուգաթուեա զսա ՚ի ս՟բ հօտն բանաւոր ոչխարաց քոց՝ կոչեցելոց անուամբ ք՟սի քո ։

Զի դու ես որ ՚ի բարձունս բնակիս և զխոնարհս տեսանես ։ և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Գիտելի է, զի այս երկու աղօթք ընթերցեալ լինին, եթէ մինչև ցաւուրս քառասուն առանց մկրտութ՟ մնացեալ իցէ մանուկն ։

Յետ այնորիկ քահանայն առեալ զմանուկն խաչանիշ առնէ նովաւ առաջի դրանց տաճարին՝ ասելով ։ Միաւորի ընդ եկեղեցւոյ ծառայս ա՟յ (այս անուն), յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Յետոյ համբուրէ զնա ՚ի սպասաւորն՝ ասելով. Մտից ՚ի տուն քո, երկիրպագից ՚ի տաճար սբ. քո:

Յետոյ գայ ՚ի դուռն տաճարին՝ ասելով. Միաւորի ընդ եկեղեցւոյ ծառայս այ: Ապա ասէ. ՚Ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ:

Յետ այնորիկ ածէ առաջի դրանց սեղանոյն՝ ասելով. Միաւորի ընդ եկեղեցւոյ ծառայս այ:

Եւ համբուրեցուցանէ զնա ՚ի սբ սեղանն՝ եթէ իցէ արու. եւ եթէ էգ՝ դնէ ՚ի գեղեցիկ դրանն, ասելով. Այժմ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում ՚ի խաղաղութի. զի տեսին աչք իմ զփրկութի քո, զոր պատրաստեցեր առաջի ժողովրդեան. լոյս ՚ի յայտնութի հեթանոսաց, եւ փառք ժողովրդեան քում իսրայէլի:

Եւ յետ այսորիկ դնէ զնա առաջի դրանց սեղանոյն, եւ համբուրեցուցանէ երկրպագեալ առնու զնա եւ ելանէ:

Եւ քահանայն ասէ զարձակումն ըստ աւուրբն:

---

Աղօթք վասն կնոջ յորժամ վիժեսցէ:

Քահանայն ասէ, Օրհնութի. Երեքսրբեան. Ապա Ամենասուրբ երրորդութի. Հայր մեր, զի քո է ար''. Սուրբ պատշաճին. Ժամամուան ածածնի. յետ այնորիկ:

## Զտէր աղաչեսցուք:

Տէսբօդա տէր ած մեր՝ որ ծնար ՚ի սրբուհւոյ ածածնէն եւ ՚ի միշտ կուսէն մարիամայ, եւ որպէս տղայ ՚ի մսուր եդար. ինքնին եւ առաջիկայ աղախնոյ քո (այս անուն); որ անկաւ մեղօք ՚ի սպանութի կամաւ կամ ակամայ, եւ վիժեաց զյղացեալն յինքեան, ողորմեա սմա ըստ մեծի ողորմութե քում. եւ ներեա կամայ եւ ակամայ յանցանաց սորա. եւ պահեա յամ նենգութէ բանսարկուին. եւ մաքրեա զաղտեղութի սորա. բժշկեա զցաւսն. զզօրութի եւ զառողջութի մարմնոյ եւ հոգւոյ սր

պարգևեալ մարդասէր · և 'ի ձեռն հրեշտակի լուսոյ շուրջանակի պատսպարեա՛ յա̅մ յարձակմանց աներևոյթ դիւաց ։

Այո՛ տ̅ր՝ պաշտեա՛ 'ի հիւանդութենէ և 'ի տկարութենէ, և սրբեա՛ զսա 'ի մարմնական աղտեղութենէ, և 'ի պէսպէս ամբոխմանէ փորձութեանց 'ի վ̅ր սորա եկելոց, և մինչդեռ է յանարգ մարմնի աստ առողջացո՛ զսա ըստ մեծի ողորմութե̃ քում, և յարո՛ զսա 'ի մահճէ աստի յոր անկեալ դնի · զի մեղօք և անօրէնութե̅ք յղացեալ եղաք, և ա̅մքին աղտեղի եմք առաջի քո տ̅ր · և երկիւղիւ գոչեմք և ասեմք ։

Հայեա՛ց յերկնից և տե՛ս զտկարութի̃ մեր պար_տաւորացս, և ներեա՛ (այս անուն) աղախնոյ քում · որ վասն մեղաց իւրոց անկաւ 'ի սպանութի̃ կամայ կամ ակամայ, և վիժեաց զյղացեալն յինքեան · և ա̅մ եղելոց 'ի սմա և մերձեցելոց 'ի սա՝ ող̅ջ բարերար և մարդասէր ա̅ծ ողորմեա՛ և ներեա՛ ըստ մեծի ողորմութե̃ քում, բա_րեխօսութե̃ մօր քո անարատ և ա̅մ ս̅ր̅ց ։ Զի դու միայն ունիս իշխանութի̃ թողուլ զմեղս և զանօրէնութի̃ս · և քեզ վայելէ ա̅մ փառք, պատիւ, և երկրպագութի̃ հօր և որդւոյ և հոգւոյն ս̅ր̅յ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։ Եւ լինի արձակումն ։

---

Աղօթք վասն երեխայ առնելոյ ։

Քահանայն լուծանէ զգօտի այնորիկ՝ որ հանդերձեալ է լուսաւորել, և բոկացուցանէ · և կանգնէ զնա դէպ արևելից միահանդերձ՝ գօտէլոյծ՝ բոկոտն՝ և անծածկ, ունելով զձեռս 'ի վերայ · և փչէ յերեսս նորա երիցս անգամ · և կնքէ զճակատ նորա և զկուրծս երիցս ։ Եւ դնէ զաջ ձեռն 'ի վերայ գլխոյ նորա՝ ասելով ։

Յանուն քո տէր ա̅ծ ճշմարտութե̃, և միածնի որդւոյ քո, և ս̅ր̅յ քո հոգւոյդ, դնեմ զձեռն իմ 'ի վ̅ր ծա_ռայիս քո (այս անուն), որ արժանաւորեցաւ ապաւինել

'ի ս՟բ անուն քո , և ընդ հովանեաւ թևոց քոց պահպանիլ , 'ի բաց արա 'ի սմանէ զհին մոլորութ՟ին , և լցո զսա հաւատովն որ 'ի քեզ , և յուսով և սիրով . զի ծանիցէ եթէ դու միայն ես ճշմարիտ ա՟ծ , և միածին որդիդ քո տ՟ր մեր յ՟ս ք՟ս , և ս՟բ հոգիդ .

Տուր սմա ընդ ա՟մ պատուիրանս քո գնալ , և զհաճոյս քո պահել , զոր թէ արասցէ մարդ՝ կեցցէ ոքօք . Գրեա զսա 'ի դպրութ՟ե կենաց , և միաւորեա զսա ընդ հօտի ժառանգութ՟ե քո . և փառաւորեսցի 'ի սա անուն քո ս՟բ , և սիրելի որդւոյ քո և ա՟ն մերոյ յ՟սի ք՟սի , և կենդանարար քո հոգւոյդ . աչք քո հայեսցին 'ի սա ողորմութ՟բ հանապազ , և ականջք քո լուիցեն ձայնի աղօթից սորա .

Ուրախացո զսա 'ի գործս ձեռաց իւրոց , և յա՟մ ծնունդս իւր . զի խոստովանեսցի զքեզ , երկրպագելով և փառաւորելով զմեծ և զբարձրացեալ անուն քո , և օրհնեսցէ զքեզ հանապազ զա՟մ աւուրս կենաց իւրոց . Զի զքեզ օրհնեն ա՟մ զօրութ՟իք երկնից , և քո են փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն .

## ԱՂՕԹՔ . ա՟ .

### Զտէր աղաչեսցուք .

Սաստէ քեզ տ՟ր ով բանսարկու սատանայ , որ եկն յաշխարհս և շրջեցաւ ընդ մարդկան , զի զքոյդ խափանեսցէ զբնութ՟ի և զմարդիկ ապրեցուսցէ . Որ 'ի վ՟ր փայտին զընդդիմակաց զօրութ՟ին խորտակեաց , 'ի խաւարիլ արեգական , 'ի սասանիլ երկրի , 'ի բանիլ գերեզմանաց , և 'ի յառնել մարմնոցն ս՟բց . Որ եղծ մահուամբն զմահ , և խափանեաց որ զիշխանութ՟ի մահուն ունէր , այսինքն է զքեզ սատանայ .

Երդմնեցուցանեմ զքեզ յա՟ծ կենդանի , որ եցոյց զփայտն կենաց , և կարգեաց զքերովբէսն և զբոցեղէն

սուրբն շրջանակաւ պահել զնա ։ Սաստեսցիս, զի երդմնեցուցանեմ զքեզ յայն, որ գնաց 'ի վ՟ր ծովուն որպէս ընդ ցամաք, և սաստեաց մրրկին հողմոց ․ որոյ հայեցուածն ցամաքեցուցանէ զանդունդս, և սպառնալիքն հալեն զլերինս ։

Նոյն ինքն և այժմ հրամայէ քեզ 'ի ձեռն մեր, երկի՛ր, ե՛լ և գնա՛ 'ի ստեղծուածոյ աստի ․ և մի՛ դառնայցես, և մի՛ թագիցես 'ի սմա, և մի՛ հանդիպեսցիս սմա կամ ազդիցես, մի՛ 'ի գիշերի, մի՛ 'ի տունջեան, մի՛ 'ի ժամու կամ 'ի տարաժամու ․ այլ ե՛րթ 'ի տարտարոսն քո մինչև 'ի դատաստան հանդերձեալ աւուրն մեծի ։

Երկի՛ր յա՟յ, որ նստի 'ի վ՟ր քերովբէից և հայի յանդունդս ․ յորմէ դողան հրեշտակք, հրեշտակապետք, աթոռք, տէրութիւնք, պետութիւնք, իշխանութիւնք, զօրութիւնք, բազմաչեայ քերովբէք և վեցթեւեան սերովբէք ․ յորմէ դողան երկինք և երկիր ծով և ա՟մ որ 'ի նո՟ ․ ե՛լ և՛ 'ի բաց գնա 'ի կնքեցելոյ աստի՝ 'ի նորոգ ընտրեալ զօրականէ ք՟ի ա՟յ մերոյ ։

Քանզի զքեզ երդմնեցուցանեմ յայն, որ շրջէր 'ի վերայ թևոց հողմոց, որ առնէ զհրեշտակս իւր 'ի հուր կիզելոյ, ե՛լ և՛ 'ի բաց գնա 'ի ստեղծուածոյ աստի հանդերձ ա՟մ զօրութ՟բ և հրեշտակօք քո ․ Զի փառաւորեալ է անուն հօր և որդւոյ և ս՟բյ հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Աղօթք ․ Է ․

### Զտ՟ր աղաչեսցուք ․

Տ՟ր ա՟ծ, ահաւոր և փառաւորեալ, որ յա՟մ 'ի գործս և 'ի զօրութ՟ն իւրում անհասանելի և անքննելի գոլով ․ Նոյն ինքն յառաջագոյն սահմանեաց քեզ ո՛վ բանսարկու՝ յաւիտենական տանջանացն զպատիժ ․ այժմ 'ի ձեռն մեր անպիտան ծառայից իւրոց հրամայէ քեզ՝ և ա՟մ գործակից զօրութ՟ն քո՝ 'ի բաց կալ 'ի նորոգ կնքե-

լոյս անուանս Տն մերոյ Յի Քի Ճշմարիտ Այն մերոյ։

Արդ՝ երդմնեցուցանեմ զքեզ՝ ով ամենաչար և անմաքուր և զազիր և պիղծ և օտար հոգի, 'ի զօրութիւն Յի Քի՝ որ զամ իշխանութի ունի յերկինս և յերկրի. որ ասաց խուլ և համր դիւին՝ ել 'ի մարդոյդ, և այլ մի՛ ևս մտաներ 'ի դմա. 'ի բաց գնա, ծանիր զքո ունայն զօրութիւն, որ և խոզիցն իշխանութի ոչ ունէիր։

Յիշեա՛ որ սաստեացն քեզ, և քոյով խնդրուածով յերամակ խոզիցն հրամայեաց քեզ մտանել։ Երկի՛ր յԱյ որոյ հրամանաւ երկիր հաստատեցաւ 'ի վր ջրոց. որ արար զերկինս, և կացոյց զլերինս կշռով, և զբլուրս կշռորդաւ, և եդ զաւազ սահման ծովու, և 'ի ջուրս սաստիկս զշաւիղս աներկեան։ Որ մերձի 'ի լերինս և ծխին. որ արկանէ զլոյս ոպ զօթոց. որ ձգեաց զերկինս ոպ խորան. որ յարկաւ 'ի վր ջուրց զվերնայարկս նր։ Որ հիմնեաց զերկիր 'ի վր հաստատութե իւրոյ, զի մի սասանեսցի յաւիտեան։ Որ կոչէ զջուրս ծովու, և հեղու զնա 'ի վր ամ երեսաց երկրի, ել և 'ի բաց գնա 'ի սմանէ՝ որ առ սբ լուսաւորութին պատրաստեալ է։

Երդմնեցուցանեմ զքեզ 'ի փրկական չարչարանսն Տն մերոյ Յի Քի, և 'ի պատուական մարմին և արիւն նր, և 'ի գալստեան նր ահաւոր։ Քանզի եկեսցէ և ոչ յամեսցէ 'ի դատել զամ երկիր, և զքեզ և զգործակից զօրութիւն քո տանջեսցէ 'ի գեհեան հրոյն՝ մատնեալ 'ի խաւարն արտաքին, ուր որդն անքուն է և հուրն անշէջանելի։ Զի կարողութին Քի Այ մերոյ՝ ընդ Հօր և Սբյ Հոգւոյն օրհնեալ է, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## ԵՐԴՈՒՄՆ. Դ.

### Զտէր աղաչեսցուք։

Տէր սաբաւովթ՝ Ած իսրայէլի, որ զամ հիւանդութիս և զախտս բժշկես, նայեա՛ց 'ի ծառայս քո, խընդրեա՛, քննեա՛, և 'ի բաց մերժեա 'ի սմանէ զամ ներգոր

ծութ՟իս բանսարկուին։ Սաստեա՛ այսոց պղծոց և հալածեա՛ զն՟ս, և սրբեա՛ զգործս ձեռաց քոց. և ազդուներգործութ՟բ խորտակեա՛ զսատանայ վաղվաղակի ընդ ոտիւք սորա. և տո՛ւր սմա յաղթութ՟ի ընդդէմ ն՟ր հակառակութ՟են և այսոց նորա պղծոց։

Ա՟պ զի առ 'ի քէն ողորմութ՟են հանդիպելով՝ արժանաւորեսցի անմահ և երկնաւոր քոց խորհրդոց, և քեզ փառս վերառաքեսցէ Հօր և Որդւոյ և Ս՟բյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

## Զտէր աղաչեսցուք։

Ար եսդ տէր մ՟ր, որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և ըստ նմանութ՟ե, և ետուր նմա իշխանութ՟ի մշտնջենաւոր կենաց. ապա յանկանելն մեղօք՝ ոչ անտես արարեր, այլ տնօրինեցեր մարդանալովդ ք՟սի քո զփրկութ՟ի ն՟ի։

Ինքնին և զստեղծուածս քո զայս՝ զոր փրկեցեր 'ի ծառայութ՟ե թշնամւոյն, ընկա՛լ յերկնային արքայութ՟ին քո։ Բա՛ց զաչս մտաց սորա, առ 'ի ճառագայթելոյ 'ի սմա լուսաւորութ՟ի աւետարանի քո։ Զուգակցեա՛ կենաց սորա հրեշտակ լուսոյ, 'ի զերծուցանել զսա յա՟մ նենգութ՟ե հակառակորդին, 'ի չար պատահարէ, 'ի դիւէ միջօրէի, 'ի ցնորից չարաց։

Աստ քահանայն փչէ 'ի բերան նորա, 'ի ճակատն, և 'ի կուրծսն՝ ասելով. Հալածեա՛ 'ի սմանէ զա՟մ պիղծ և զչար հոգի, որ թագուցեալ և որջացեալ է 'ի սրտի սորա։ Աստ ասէ զայս երիցս անգամ. և յարակցէ նմին.

Զհոգի մոլորութ՟ե, զհոգի չարութ՟ե, զհոգի կռապաշտութ՟ե և զա՟մ ագահութ՟ե, զհոգի ստութ՟ե և զա՟մ անմաքրութ՟ե որ ներգործէ ըստ յօժարութ՟ե բանսարկուին. և արա զսա ոչխար բանաւոր Ս՟բյ հօտի ք՟ի քո. անդամ պատուական եկեղեցւոյ քո. որդի լուսոյ և ժառանգ արքայութեան քո։

Զի ըստ պատուիրանաց քոց քաղաքավարեալ, և պահեալ զկնիքն անեղծ, և զպատմուճանն անարատ, արժանաւորեսցի երանութ՟ե ս՟բցն յարքայութ՟ե քում։

'Ի ձայն .

Շնորհօք և գթութեամբ և մարդասիրութեամբ միածնի որդւոյ քո . ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար հոգւովդ քո , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ յետոյ մերձենայ և բռնանայ զերեխայն , և քահանայն դարձուցանէ զնա յարեւմուտս դէմսն 'ի վեր ունելով , և ասէ երիցս . Հրաժարիս 'ի սատանայէ , և յամ գործոց նորա , և յամ հրեշտակաց նորա , և յամ պաշտամանէ նորա , և յամ զօրութենէ նորա .

Եւ ասէ երիցս , և պատասխանի տայ առ իւրաքանչիւր հարցումն երեխայն , կամ մանկաբարձն եթէ իցէ մեծացեալ բարբարոս՝ այսինքն անգէտ լեզուի , կամ մանուկ տղայ . Իսկ եթէ տղայ է մանկաբարձն , մի ոմն 'ի քահանայից կամ 'ի սարկաւագաց առ ընթեր կացեալ՝ պատասխանի տայ և ասէ . Հրաժարիմ ։

Եւ յորժամ ասէ երիցս . դարձեալ հարցանէ քահանայն երեխային . Հրաժարեցար 'ի սատանայէ ։

Եւ պատասխանէ երեխայն կամ մանկաբարձն . Հրաժարեցայ ։

Եւ յորժամ ասէ երիցս , ասէ քահանայն . Եւ փչեա և թուք 'ի նա ։

Եւ յետ այսորիկ քահանայն դարձուցանէ զնա յարեւելս , 'ի վայր դէմսն ունելով , և ասէ զնա երիցս . Միաւորիս ընդ քսի ։

Պատասխանէ երեխայն կամ մանկաբարձն , ասելով . Միաւորիմ , երեք անգամ ։

Յետոյ դարձեալ ասէ զնա քահանայն . Միաւորեցար ընդ քսի ։ Եւ պատասխանէ . Միաւորեցայ ։

Եւ դարձեալ ասէ . Եւ հաւատաս 'ի նա ։ Եւ ասէ . Հաւատամ 'ի նա որպէս Թագաւորի և այ ։

Եւ ասէ զհանգանակն . Հաւատամ 'ի մի ած հայր ամենակալ , եւն ։

Եւ յորժամ լրացուցանէ զսբ հանգանակն , դարձեալ ասէ զնա քահանայն , երիցս անգամ . Միաւորեցար ընդ քսի , եւն ։

Եւ պատասխանի տայ իւրաքանչիւր հարցմանն երեխային կամ մանկաբարձն , ոչ տայցա .

Եւ յետ երիցս հարցանելոյ , եւ երիցս ասելոյ զնէ հանգանակն , հարցանէ ցնա երիցս . Միաւորեցա՞ր ընդ Քնի :
Եւ պատասխանէ . Միաւորեցայ .

Եւ քահանայն ասէ . Երկրպագեա՛ նմա . Եւ նա երկիր պագանէ ասելով . Երկրպագեմ Հօր որդւոյ , եւ Հոգւոյն սբյ , համագոյական եւ անբաժանելի երրորդութեն .

Ապա ասէ քահանայն . Օրհնեալ է Ած , որ զամ մարդիկ կամի զի կեցցեն , եւ ՚ի գիտութի ճշմարտութե եկեսցեն , այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն .

Ապա ասէ զաղօթս զայս :

Զտէր աղաչեսցուք .

Տէ՛րբօղա Տր Ած մեր , կոչեա զծառայս քո ( զայս անուն ) ՚ի սբ լուսաւորութիւն քո , եւ արժանի արա մեծի այսմ շնորհի սբյ մկրտութե քո . մերկեա զհնութի սորա , եւ նորոգեա ՚ի յաւիտենական կեանսն , եւ լից զսա զօրութբ սբյ Հոգւոյդ ՚ի միութի Քնի քո , զի մի՛ եւս լիցի որդի մարմնոյ՝ այլ որդի արքայութե քո , բարեհաճութբ եւ շնորհիւ միածնի որդւոյ քո . Ընդ որում օրհնեալ ես համդերձ ամենասբ եւ բարի եւ կենդանարար հոգւովդ , այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն :

---

## Կարգաւորութիւն սբյ մկրտութեն :

Մտանէ քահանայն ՚ի գաւթէ անտի ՚ի տաճարն , եւ զգենու զքահանայական պատմուճանն ոսկեայ եւ զբազպանն . եւ լուցանելով զամ մոմեղէնսն , առեալ բուրվառ երիցս յաւալն , եւ խնկարկէ շուրջանակի . եւ տուեալ զբուրվառն՝ երկրպագէ .

Ապա ասէ սարկաւագն . Օրհնեա տէր .

Քահանայն , ՚ի ձայն . Օրհնեալ Թագաւորութիւն Հօր

և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն. Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Դպիրն. Տէր ողորմեա։

Սարկաւագն. Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս խաղաղութե՟ ա՟մ աշխարհի, հաստատութե՟ ս՟րց եկեղեցեացն ա՟յ, և ա՟մ՟ցուն միութե՟, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս ս՟բյ տաճարիս այսորիկ, և որք հաւատով՝ պատկառանօք և երկիւղիւն ա՟յ մտանեն ընդ սա, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս Ա․րհիեպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութե՟, պաշտօնէից ք՟սի, ա՟մ ժառանգաւորաց և ժողովրդեան, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս սրբելոյ ջրոյս այսորիկ զօրութ՟բ և ներգործութ՟բ և եկաւորութեամբ հոգւոյն ս՟բյ, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս գալոյ ՚ի սա շնորհի աղաւութե՟՝ և օրհնութե՟ն յորդանանու, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս իջանելոյ ՚ի ջուրս յայս սրբարար ներգործութե՟ գերագոյ երրորդութեանն, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս լուսաւորութե՟ մերոյ լուսով գիտութե՟ և բարեպաշտութե՟ եկաւորութ՟բ ս՟բյ հոգւոյն, զ՟տր աղաչեսցուք։

Վասն հերքելոյ սորա զա՟մ նենգութիւն երևելի և աներևոյթ թշնամեաց, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս արժանի լինելոյ անապական թագաւորութե՟ն մկրտելոյս ՚ի սմա, զ՟տր աղաչեսցուք։

Վասն այժմու եկելոյս ՚ի ս՟բ լուսաւորութիւնն, և փրկութեան սորա, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս լինելոյ սորա որդի լուսոյ, և ժառանգ յաւիտենական բարեաց, զ՟տր աղաչեսցուք։

Վասն լինելոյ սորա տնկակից և հաղորդ մահու և յարութեանն ք՟սի ա՟յ մերոյ, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս պահելոյ սմա զպատմուճան մկրտութե՟ և զահաւատչեայ հոգւոյն՝ ամբիծ և անարատ յահագին աւուրն ք՟սի ա՟յ մերոյ, զ՟տր աղաչեսցուք։

Վ՟ս լինելոյ սմա ջրոյս այսմիկ լուացարան վերստին

ծննդեան 'ի թողութիւն մեղաց, և զգեստ անապակա-
նութեան, զՏ՟ր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ տեառն Ա՟յ ձայնի աղաչանաց
մերոց, զՏ՟ր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զսա և զմեզ յամենայն վշտաց, 'ի
բարկութէ, և 'ի տառապանաց, զՏ՟ր աղաչեսցուք։
Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛։

Զամենասրբուհի անարատ զամենօրհնեալ և զփա-
ռաւորեալ տիրուհին մեր Ա՟ծածին՝ զմիշտ կոյսն Մա-
րիամ, հանդերձ ա՟մ սրբովք յիշելով, զմեզ և զմի-
մեանս և զա՟մ կեանս մեր ք՟նի Ա՟յ յանձն արասցուք։

Պատ. Քեզ տեառնդ։

Եւ յասելն սարկաւագին զայսոսիկ, քահանայն ասէ առան-
ձինն զաղօթս զայս 'ի ծածուկ։

Տէր բազմագութ և ողորմած, քննօղ սրտից և երի-
կամանց, և միայն գիտօղ գաղտնեաց մարդկան. քանզի
չիք ինչ աներևոյթ առաջի քո, այլ ա՟մ ինչ մերկ և
յայտնի է քեզ։ Որ գիտես զա՟մ որ յիս, մի՛ գարշիր
և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. այլ անտե՛ս արա
զյանցանս իմ 'ի ժամուս յայսմիկ, որ անտես առնես
զմեղօք մարդկան զի ապաշխարեսցեն։ 'Ի բա՛ց լուա
զաղտեղութի մարմնոյ և զբիծ հոգւոյ իմոյ, և բոլորովին
սրբեա՛ զիս կատարելապէս՝ աներևոյթ զօրութբ և հո-
գևորական աջով քով. զի մի՛ ազատութի այլոց խոստա-
ցեալ, և զայն շնորհեալ հաւատով՝ որ պարգևեալ է 'ի
քո անճառելի մարդասիրութէն, ես ինքն անպիտան
եղէց որպէս ծառայ մեղաց։

Այո՛ Տ՟ր, միա՛յն բարի և մարդասէր, մի՛ խոնարհեալ
'ի բաց մերժեցայց յերեսաց քոց, այլ առաքեա՛ առ իս
զօրութի 'ի բարձանց, և զօրացո՛ զիս 'ի սպասաւորութի
առաջիկայ մեծ և երկնաւոր խորհրդոյ քո. և կերպացո՛
զկերպարանս ք՟նի քո 'ի սմա, որ հանդերձեալ է վերս-
տին ծնանիլ 'ի ձեռն իմոյ տառապելոյս։ Շինեա՛ զսա
'ի վ՟ր հիման առաքելոց և մարգարէից քոց, և մի՛ ապա-

կամեր։ Տնկեա՛ զսա տունկ ճշմարտութե՛ 'ի սբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի քո, և մի' խլեր։

Որպէս զի յառաջանալով սորա 'ի բարեպաշտութե՛, փառաւորեսցի և սովաւ ամենասուրբ անուն Հօրդ և որդւոյ և Հոգւոյն սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Եպս ասէ զաղօթս զայս մեծաձայն։

Մեծ ես տէր և սքանչելի են գործք քո. և ոչ ինչ բան բաւական է օրհնել զսքանչելիս քո (երիցս)։ Քանզի դու կամօք քո յոչէից 'ի գոյ ածեալ զամենեան, քոյով կարողութ̃դ բովանդակեալ ունիս զարարածս, և տեսչութեամբդ քով կառավարես զաշխարհս։

Դու 'ի չորից տարերաց զարարածս յօրինեցեր, և չորիւք եղանակօք զշրջան տարւոյն պսակեցեր։ 'Ի քէն դողան ամ̃ իմանալի զօրութիւնք. զքեզ օրհնէ արեգակն. զքեզ փառաւորէ լուսին. զքեզ բարեբանեն աստեղք. քեզ հնազանդի լոյս. 'ի քէն սարսին խորք. քեզ ծառայեն աղբիւրք։

Դու ձգեցեր զերկինս որ̃պս զխորան. դու պատրաստեցեր զերկիր 'ի վր̃ ջուրց. դու պարսպեցեր զծով աւազով. դու առ 'ի շունչ զօդն սփռեցեր։ Հրեշտակական զօրութի̃քն քեզ սպասաւորեն. հրեշտակապետացն դասք քեզ երկրպագանեն. բազմաչեայ քերոբէքն և վեցթեւեան սերոբէքն պարունակեալք, և շրջանակի թռուցեալք, յահէ անմատոյց փառաց քոց ծածկին։

Վասն զի դու ա̃ծ գոլով անպարագրելի անսկիզբն և անճառ՝ եկիր յերկիր, զկերպարանս ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդոյ եղեալ։ Քանզի ոչ համդուրժէիր տէր՝ վասն գթոյ ողորմութեան քո, տեսանել զազգ մարդկան անկեալ ընդ բռնութեամբ սատանայի. այլ եկիր և փրկեցեր զմեզ։

Խոստովանիմք զշնորհն. քարոզեմք զողորմութի̃ն. ոչ թագուցանեմք զբարերարութի̃ն։ Զծնունդս բնութեան մերոյ ազատեցեր. զկուսական արգանդն սրբե_

ցեր ծննդեամբ քով . ա՟մ արարածք օրհնեցին զքեզ ՚ի յայտնիլն քո :

Քանզի դու ա՟ծ մեր ՚ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար . դու և զհոսանսն յորդանանու սրբեցեր , առաքելով ՚ի յերկնից զհոգի քո ս՟բ . և փշրեցեր զգլուխս վիշապացն , որք անդանօր որջացեալ կային :

Արդ ինքնին մարդասէր Թագաւոր՝ եկ և այժմ եկաւորութ՟բ ս՟բ հոգւոյդ , և սրբեա՛ զջուրս զայս . (զայս բանն ասէ երիցս) : Եւ տո՛ւր սմա զշնորհս ազատութեան , և զօրհնութիւնն յորդանանու :

Արա՛ զսա անապականութեան աղբիւր , սրբութ՟ե պարգև , մեղաց լուծումն , հիւանդութ՟եց բժշկութ՟ի , դիւաց խորտակումն , հակառակ զօրութեանցն անմերձենալի , հրեշտակական զօրութեամբ լցեալ :

Փախիցեն ՚ի սմանէ դաւաճանք ստեղծուածոյ քում . զի զանունն քո տէ՛ր կարդացի զսքանչելին և զփառաւորն և զահաւորն հակառակորդաց :

Ապա կնքէ խաչիւն զջուրն երիցս անգամ . և ասէ զաղօթս :

Խորտակեսցին նշանաւ պատուական խաչի քո ա՟մ ընդդիմակաց զօրութ՟ք . (երիցս) : Հալածեսցին ՚ի մէնջ ա՟մ օդային և աներևոյթ ցնորք . մի՛ թագիցէ ՚ի ջուրս յայս դև խաւարային . և մի՛ իջցէ ընդ մկրտելոյս՝ ոգի չար՝ խաւարեցուցիչ խորհրդոց՝ և խռովեցուցիչ մտաց :

Աղաչեմք զքեզ տէ՛ր ամենայնի , արա՛ զջուրս զայս ջուր փրկութ՟ե , ջուր սրբութ՟ե , մաքրութ՟ի մարմնոյ և հոգւոյ , լուծումն կապանաց , թողութ՟ի յանցանաց , լուսաւորութ՟ի հոգւոց , լուացումն վերստին ծննդեան , նորոգութ՟ի հոգւոյ , որդեգրութ՟ե շնորհ , զգեստ անապականութ՟ե , աղբիւր կենաց : Քանզի դու ասացեր տէ՛ր՝ լուացարո՛ւք , սրբեցարո՛ւք , ՚ի բա՛ց ընկեցէք զչարիս յանձանց ձերոց :

Դու շնորհեցեր մեզ վերստին ծնունդ ՚ի ձեռն ջրոյ և հոգւոյ . երևեա՛ց տէ՛ր ՚ի ջուրս յայս , և տո՛ւր ՚ի սմա մկրտելոյս ՚ի բաց դնել զհին մարդն՝ զապականեալն ցան-

և

կութ՟բ խաբէութ՟ե , և զգենուլ զնորն 'ի նորոգումն ըստ պատկերի քում արարչութեան ։

Որպէս զի տնկակից եղեալ նմանութ՟ե մահու քո 'ի ձեռն մկրտութեան , հաղորդ և յարութեանն լինիցի ։ Եւ պահեալ զպարգևն ս՟բյ քո հոգւոյն , և աճեցու-ցեալ զաւանդն շնորհաց , ընկալցի զբրաբիոն վերին կոչմանն , և զուգաթուեսցի ընդ անդրանկացն գրելոց յերկինս , 'ի քեզ յա՟ծ և 'ի տ՟ր մեր յ՟ս ք՟ս ։

Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ և երկրպագութիւն՝ ընդ անսկզբան քո հօր , հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Զգլուխս ձեր տեառն խոնարհեցուցէք ։

Եւ ձգէ յանօթ ջրոյն երիցս , որ բարձեալ է 'ի սարկա-ւագէն և ցնցէ զայն . երիցս անգամ ։

Եւ սարկաւագն ասէ . Զտէր աղաչեսցուք ։

Քահանայն ասէ զաղօթս զայս ։

Դէսպօտա տ՟ր ա՟ծ հարցն մերոց , որ զաղաւնին առաքեցեր որոց էին 'ի տապանն Նոյի , ունելով զշիւղ ձիթենւոյ 'ի բերանի իւրում , 'ի նշանակ հաշտութ՟ե և փրկութ՟ե 'ի ջրհեղեղէն . և զխորհուրդ շնորհաց 'ի ձեռն այնորիկ յառաջագոյն կերպարանեցեր . և զպտուղ ձիթենւոյ 'ի կատարումն ս՟բց խորհրդոց քոց պարգևեցեր ։ Որ 'ի ձեռն ն՟ր՝ զորս ընդ օրինօքն էին հոգւով սրբով լցուցեր . և զորս են ընդ շնորհօք՝ կատարես ։

Ինքնին օրհնեա զիւղս զայս զօրութ՟բ և ներգործութ՟բ և եկաւորութ՟բ հոգւոյդ քո ս՟բյ ։ Որպէս զի եղիցի օծելոցն 'ի սմանէ հաւատով , կամ հաղորդելոցն սմա , օծումն անապականութ՟ե , զէն արդարութ՟ե , նորոգումն հոգւոյ և մարմնոյ , ըդ՟մ սատանայական ազդեցութ՟ե

մերժումն , ազատութի՟ յա՟մ չարեաց , և պատճառ կե՟նացն յաւիտենից , 'ի փառս քո , և միածնի որդւոյ քո , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Դպան . Ամէն ։

Սարկաւագն . Պռօսխումէն ։

Քահանայն . Ալէլուիա , երիցս անգամ 'ի միասին ընդ ժողովրդեան . և առնէ զձև խաչի ձիթովն 'ի ջուրն , երիցս անգամ ։

Ապա 'ի ձայն ։

Օրհնեալ է ա՟ծ , որ լուսաւոր առնէ և սրբէ զա՟մ մարդ որ գալոց է յաշխարհ , այժմ և միշտ և յաւի՟տեանս յաւիտենից ։

Դպան . Ամէն ։

Եւ յառաջ բերեն զմիւռոնն . և քահանայն առնու 'ի սուրբ ձիթոյն , և օծանէ խաչաձև զճակատն , զկուրծսն , և զթիկնամէջսն ։

Եւ յօծանելն զճակատն՝ ասէ . Օծանի ծառայս ա՟յ (այս անուն) իւղով ուրախութ՟ , յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սր՟բ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւի՟տենից , ամէն ։

Եւ կնքէ զկուրծսն և զթիկնամէջսն . 'ի կնքելն զկուրծսն՝ ասէ . 'Ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ ։

'Ի կնքելն զականջսն . 'Ի լսողութիւն հաւատոյ ։

'Ի կնքելն զոտսն . 'Ի գնալ 'ի շաւիղս քո ։

'Ի կնքելն զձեռսն . Ձեռք քո արարին և ստեղծին զիս ։

Եւ յորժամ օծանէ բոլոր մարմինն , քահանայն կացուցանէ զնա ուղիղ 'ի վերայ ոտից , դարձուցանելով զնա յարևելս , և դնէ զնա՝ ասելով .

Մկրտի ծառայս ա՟յ (այս անուն) յանուն Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն սր՟բ , այժմ և միշտ և յաւի՟տեանս յաւիտենից , ամէն ։

Երեքկնչէր անանձնացայսեն ընկղմէ զնա 'ի ջուրն և վերածէ . և զկնի վերաբերեն լուանայ քահանայն զձեռս իւր՝ սաղմոսելով ընդ ժողովրդեան ։

Երանի ում թողութի՛ եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։ Երանի առն որում ոչ համարի տր զմեղս նորա։

Զայս ասէ երիցս, և ապա մնացեալ առջինն։ Եւ ըստ զգեցուցանելով նմա զհանդերձն՝ ասէ։

Զգենու ծառայս քո (այս անուն) զզգեստ արդարութեան, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ երգէ ժամամուտ, 'ի ձայն Է. այսինքն 'ի վերջ ձայն։

Շնորհեա ինձ զգեստ լուսաւոր, որ արկանես զլոյս որպէս զօթոց, բազումողորմ քս ած մեր։

Եւ յետ զգեցուցանելոյ, ասէ Քահանայն զաղօթս զայս 'ի վերայ նորա։

## Զտէր աղաչեսցուք։

Օրհնեալ ես տէր ած ամենակալ, աղբիւր բարեաց, արեգակն արդարութեան, որ ծագեցեր զլոյս փրկութեան նստելոցն 'ի խաւարի՝ 'ի ձեռն յայտնութեան միածնի որդւոյ քո և տն մերոյ. և շնորհեցեր մեզ անարժանիցս զերանական մաքրութիւն 'ի սբ ջուրս, և զածային սրբութիւնն 'ի կենդանարար օծումնս։

Արդ այժմ հաճեցար վերստին ծնանել 'ի ձեռն ջրոյ և հոգւոյ զնորոգ լուսաւորեալ ծառայս քո, և թողեր սմա զմեղսն զկամայն և զակամայն։

Ինքնին թագաւոր ամենեցուն բարեգութ տր՝ շնորհեա սմա և զկնիքն պարգևաց սբ և ամենազօր և երկրպագելի քո հոգւոյն, և զհաղորդութի սբ մարմնոյ և պատուական արեան քսի քո։

Պահեա զսա 'ի սրբութեան քում. հաստատեա յուղղափառ հաւատս. փրկեա 'ի չարէն և յամ դաւաճանութեց նորա. և փրկական երկիւղիւ քով պահպանեա զհոգի սորա 'ի մաքրութեան և յարդարութեան. զի յամ գործս և 'ի բանս քեզ հաճոյանալով, եղիցի որդի և ժառանգ երկնային արքայութեան քո։

'Ի ճաշն։

Զի դու ես Աստուած մեր՝ Աստուած ողորմութեան և փրկութեան, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ զկնի աղօթիցն օծանէ զննջեցեալն սուրբ իւղովն, առնելով զնշան խաչին 'ի վերայ ճակատուն, և աչացն, և ընչացն, և բերանոյն, և երկուց ականջացն, և կրծոյն, և ձեռացն, և ոտիցն, ասելով. Կնիք պարգևաց Հոգւոյդ Սրբոյ, ամէն։

Ապա քահանայն առնու զբուրվառն, և մանկաբարձն ըղ տղայն, և խաչալին շրջին զաւազանաւն, և երգէ։

Որք 'ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔրիստոս զգեցեալ էք, ալէլուիա, երկիցս անգամ։

Ապա Դաւիթ, որ երբեմն ասի եղանակաւ 'ի ճաշն Է։

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեայց, Տէր պաշտպան կենաց իմոց ես յումմէ դողացայց։

Պօղոսի առաքելոյն 'ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուած։

Եղբարք, որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի մահ նորա մկրտեցաք։ Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութեան կենաց շրջեսցուք։ Զի եթէ անկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլ և յարութեան նորա լինիցիմք։ Զայս գիտասջիք՝ զի հին մարդն մեր խաչակից եղև նորա, զի խափանեսցի մարմին մեղացն, մի ևս ծառայել մեզ մեղացն։ Զի որ մեռանին՝ արդարացեալ է 'ի մեղաց անտի։ Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք՝ թէ և կեցցուք ընդ նմա։ Գիտեմք՝ եթէ Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց, այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ։ Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ։ Այնպէս և դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։

## Աւետարան որ ըստ Մատթէոսի:

Ի ժամանակին յայնմիկ, մետասան աշակերտքն գնացին 'ի Գալիլեա 'ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նց յս: Իբրեւ տեսին զնա, երկիրպագին նմա. և ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ յս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ: Տուաւ ինձ ամ իշխանութի յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ հեթանոս. մկրտեցէք զնս յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սբյ: Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի:

Ապա քարոզ. այսինքն Ի վերնէ, և արձակումն:

---

Եւ յետ եօթն աւուր դարձեալ բերեն զմկրտեալն յեկեղեցի 'ի լուանալ. և լուծանէ քահանայն զՍավանն, այսինքն զխանձարուրն, և զգօտին, ասելով զաղօթս զայս:

### Զտէր աղաչեսցուք:

Որ զերծուցեր 'ի մեղաց 'ի ձեռն սբ մկրտութե պարգևեցեր ծառայի քո, և կենաց վերստին ծննդեան սմա շնորհեցեր. ինքնին տէր՝ հաճեաց ճառագայթել զլոյս երեսաց քոց 'ի սրտի սորա հանապազ: Զվահան հաւատոյ սորա անվնասելի 'ի թշնամեաց, և զանապականութե զգեստն զոր զգեցաւ՝ անբիծ և անարատ պահեա. և զհոգևորական կնիքն շնորհի քո ամբողջ պահեա 'ի սմա. և քաւիչ լեր սորա և մեզ ըստ բազում գթութե քում: Զի օրհնեալ և փառաւորեալ է ամենապատիւ և մեծավայելուչ անուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Զտէր աղաչեսցուք։

Նե́սբօղդ տր՟ ած՟ մեր՝ որ ՚ի ձեռն աւազանին զերկնային լուսաւորութիւնն պարգեւեցեր մկրտելոց։ Որ վերստին ծնար ՚ի ձեռն ջրոյ եւ հոգւոյ զնորոգ լուսաւորեալ ծառայ քո, եւ թողեր սմա զմեղսն զկամայ եւ զակամայ։ Դիր զկարող ձեռն քո ՚ի վերայ սորա, եւ պահեա զսա զօրութբ՟ բարերարութեն՟ քո։

Անկողոպտելի պահպանեա զառհաւատչեայն, եւ արա զսա հաճոյանալ քեզ, եւ արժանի լինել կենացն յաւիտենից։ Զի դու ես սրբութի՟, եւ քեզ փառս վերառաքեմք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սբյ՟, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութի՟ ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր տն՟ խոնարհեցուցէք։

Որ զգեցաւ զքեզ զքս՟ եւ զածդ՟ մեր, քեզ խոնարհեցոյց մեզ հանդերձ զգլուխ իւր, պահեա զսա մնալ անպարտելի ախոյեան ընդդէմ նց՟, որք ՚ի նանիր ատնեն թշնամութի՟ նմա եւ մեզ. եւ քոյով անապական պսակաւ յաղթօղս արա զամենեսին մինչեւ ՚ի վախճան։

Զի քո է ողորմել եւ փրկել զմեզ. եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկիզբն քո հօր, եւ ամենասուրբ եւ բարի եւ կենդանարար քո հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա յետ եօթն աւուր լուասցէ զմանուկն, եւ ջուրն յաւազանէն եւ ՚ի սբ՟ տեղի հեղցէ. եւ զհանդերձն զոր զգեցուցանէ եօթն աւուրս՝ լուանայցէն լուասցէ, եւ ջուրն ՚ի սուրբ տեղի հեղցէ։

### Աղօթք 'ի հարթել զհերս մանկանն ։

Տեսբօղա տէր ած մեր, որ պատուեցեր զմարդն արարեալ 'ի պատկեր քո . 'ի բանական հոգւոյ և 'ի բարեձև մարմնոյ յօրինեցեր զնա . ոպ զի մարմինն սպասաւորեսցէ բանական հոգւոյն ։ Իսկ զգլուխն վերամբարձ արարեալ, 'ի նմա զբազումս 'ի զգայութեանց հաստատեցեր, ոչ լինելով արգելք միմեանց . զոր և հերովք պարածածկեցեր, անվնասելի մնալ 'ի յեղափոխութէ օդոյ . և զամ անդամս օգտակարութբ տնկեցեր 'ի նմա . զի այսու ամենայնիւ գոհացօղ լիցի զքեն զամենարուեստ ճարտարապետդ ։

Ինքնին տեսբօղա` որ 'ի ձեռն անօթոյն ընտրութե քո առաքելոյն պօղոսի պատուիրեցեր մեզ` զամ ինչ 'ի փառս քո առնել, օրհնեա զմատուցեալ ծառայս քո (այս անուն) ընդ մանկաբարձին իւրոյ, որ զհարթումն հերաց նուիրէ քեզ նախընծայ երեխայրի . և տուր սոցա խորհիլ յօրէնս քո հանապազ, և զհաճոյսն քո առնել ։

Զի ողորմած և մարդասէր ես ած գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

### Խաղաղութիւն ամենեցուն ։

Զգլուխս ձեր տեառն խոնարհեցուցէք .

Տէր ած մեր` որ զհաւատացեալսն 'ի քեզ` 'ի ձեռն քոյդ բարերարութեդ ծննդեամբ աւազանին սրբեցեր, օրհնեա զառաջիկայ տղայս, և օրհնութիւնն քո իջցէ 'ի վերայ գլխոյ սորա ։

Եւ որպէս օրհնեցեր 'ի ձեռն մարգարէին սամուէլի զդաւիթ տղայ, օրհնեա և զգլուխն ծառայիս քո (այս անուն) 'ի ձեռն իմ մեղաւորիս, եկաւորելով առատ հոգւովդ քով սբվ ։ Որպ զի յառաջանալով 'ի հասակ և յալիս ծերութե, քեզ փառս վերառաքեսցէ, և տեսցէ զբարութս երուսաղէմի զամ աւուրս կենաց իւրոյ ։

Զի քեզ վայելէ ա͞մ փառք պատիւ և երկրպագութիւն հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ համբուրէ զձեռն խաչանիշ՝ ասելով . Հարթին հերք ծառայիս ա͞յ ( այս անուն ) , յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Ապա քահանայն ջրշաղէ զմահճաբարձն , և ասէ .

Ողորմեա՛ մեզ ա͞ծ ըստ մեծի ողորմութեան քում , աղաչեմք զքեզ՝ լուր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմուե̃ , կենաց , խաղաղութե̃ , առողջուե̃ , փրկուե̃ , այցելուե̃ , քաւուե̃ և թողութե̃ մեղաց ծառայիս ա͞յ (այս անուն) ։

Զի ողորմած և մարդասէր ես ա͞ծ գոլով , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ լինի արձակումն ըստ սովորութեան ։

Կարգաւորութիւն խոստովանողաց ։

Քահանայն ասէ . Օրհնեալ է ա͞ծ մեր յա͞մ ժամ , այժմ և միշտ և յաւիտեանս , ամէն ։

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց , զտէր աղաչեսցուք ։ Տ͞ր ողորմեա՛ ։

Վասն թողուե̃ մեղաց և քաւուե̃ յանցանաց ծառայիս ա͞յ (այս անուն) , և զ͞ի թողցի սմա զա͞մ յանցանս գիտամից և զակամից , զտ͞ր աղաչեսցուք ։ Տ͞ր ողորմեա՛ ։

Ո͞պ զի տ͞ր ա͞ծ պարգևեսցէ սմա զթողուի̃ մեղաց և ժամանակ ապաշխարուե̃ , զտ͞ր աղաչեսցուք ։ Տ͞ր ողոր՛ ։

Վասն փրկելոյ զմեզ յա͞մ նեղութենէ , 'ի բարկութենէ , 'ի վտանգէ , և 'ի վշտաց , զտ͞ր աղաչեսցուք ։

Ընկա՛լ , կեցո՛ , ողորմեա՛ ։

Զամենասրբուհի անարատ, զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա̃ծածին՝ զմիշտ կոյս Մարիամ հանդերձ ա̃մ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա̃մ կեանս մեր ք̃նի ա̃յ յանձն արասցուք:

Դասն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք:

'Ի ձայն:

Զի քեզ վայելէ ա̃մ փառք պատիւ և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա քահանայն ասէ զաղօթս զայս:

Տէ՛ր յ̃ս ք̃ս՝ որդի ա̃յ կենդանւոյ՝ հովիւ և գառն, բարձօղ մեղաց աշխարհի. որ զպարտսն շնորհեցեր երկուց պարտապանաց, և մեղաւոր կնոջն ետուր զթողութիւն մեղաց:

Ինքնին տէ՛սբօդա՝ ներեա՛, քաւեա՛, թո՛ղ զմեղսն՝ զանօրէնութիւնսն՝ զյանցանսն՝ զկամայն և զակամայն, զգիտուե̃ և զանգիտուե̃, զորս պատուիրանազանցութ̃ և անհնազանդութ̃ արարին ծառայքս քո այսոքիկ:

Այլ եթէ որպէս մարդիկ մարմնաւորք և յաշխարհի բնակեալք իրօք իւիք մոլորեցան 'ի բանսարկուէն, կամ բանիւ, կամ գործով, եթէ գիտութ̃ և եթէ անգիտութ̃, կամ զխրատ քահանայի անգոսնելով, կամ ընդ անիծիւք քահանայի անկանելով, կամ անձամբ անձին անէծս կարդալով, կամ երդմնակուռ լինելով:

Ինքնին որպէս բարերար և անյիշաչար ա̃ր՝ հաճեա՛ց արձակել բանիւ զծառայքս զայսոսիկ, ներելով նոցա և զանէծս իւրեանց և զերդմունսն՝ ըստ մեծի ողորմութեան քում:

Այո՛ տէ՛սբօդա՝ մարդասէր ա̃ր, լո՛ւր մեզ որք վասն ծառայից քոց այսոցիկ աղաչեմք զքո բարութիւնդ, և անտես արա որպէս բազումողորմ զա̃մ յանցանս նոցա. զերծո՛ զսոսա 'ի յաւիտենական տանջանաց. քանզի դու ասացեր տէ՛ր, զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի

կապեալ յերկինս · և զոր միանգամ արձակիցէք յերկ-րի, եղիցի արձակեալ յերկինս։

Օ՜ն դու միայն ես առանց մեղաց, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա ասէ · Տէրքորբեան · ¹ Երկայք երկիրպագ-ցուք · Եւ- ձեռներորդ աղօթոն՝ Ողորմեա · և Խամամութարս պարբիկ · Զ, ձայն · ձայնիւն ԺԲ կոչ։

Ողորմեա մեզ տէր՝ ողորմեա մեզ։ Օ՜ն մեք մեղա-ւորքս յամենայնի անպատասխանի գտեալ՝ զաղաչանս զայս քեզ մատուցանեմք ոպ տեառն։ Ողորմեա մեզ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Տէր ողորմեա մեզ։

Օ՜ն 'ի քեզ ապաւինեցաք, մի՛ իսպառ բարկանար մեզ, և մի՛ յիշեր զանօրէնութիս մեր · այլ հայեաց 'ի մեզ այժմ ըստ բարեգթութե քում, և փրկեա զմեզ 'ի թշնամեաց մերոց · զի դու ես Աձ մեր · և մեք ժողո-վուրդք քո, և գործք ձեռաց քոց ամենեքին · և կար-դամք զանուն քո։ Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բա՛ց մեզ զդուռն բարեգթութե օրհնեալ Աձածին · առ քեզ ապաւինեցաք, որպէս զի միջնորդութբ քով ազատեսցուք 'ի փորձանաց · մի՛ յամօթ առներ զմեզ · զի դու ես փրկութիւն ազգին քրիստոնէից։

Տէր ողորմեա · Խ։

Իսկ խոստովանողն ասէ · Մեղայ տէր՝ ներեա ինձ · Աձ քաւեա զիս զմեղաւորս։

¹ Երկայք երկիրպագցուք · է մաղթանքս այս։
Երկայք երկիրպագցուք Թագաւորին մերոյ Քի։
Երկայք երկիրպագցուք և անկցուք առաջի Քնի Թգւորին մերոյ Քի։
Երկայք երկիրպագցուք Քնի Թագաւորին և Քի մերոյ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս:

## Զտէր աղաչեսցուք.

Քս փրկիչ մեր, որ ՚ի ձեռն մարգարէին Նաթանայ թողութի պարգևեցեր ապաշխարողին դաւթի՝ որ զղջանայր ՚ի վերայ յանցանաց իւրոց. և զաղօթսն ապաշխարութեան Մանասէի ընկալար.

Ինքնին և զծառայս քո (զայս անուն), որ ապաշխարէ ՚ի վերայ յանցանաց զորս գործեաց, ընկալ սովորական մարդասիրութ քով, անտես առնելով զամ գործս սորա, որ ներես անիրաւութե, և զանց առնես զանօրէնութ.

Վասնզի դու ասացեր տէր, ոչ կամիմ զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա և զկեալ. և եօթանասնեկին եօթն թողուլ զմեղսն հրամայեցեր. զի որպէս մեծութիւն քո անսահման, և ողորմութի քո անչափ. քանզի եթէ զանօրէնութիս քննես, ով կարէ կալ:

Զի դու ես ած ապաշխարողաց, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա ՚ի ծունր կրկնեալ, և յետոյ ՚ի վեր կացեալ՝ ասէ.

Հայր տէր երկնի և երկրի՝ խոստովանիմ քեզ զամ գաղտնիս և զյայտնիս սրտի և խորհրդոց իմոց, զորս գործեցի մինչև ցայսօր. Վասն որոյ հայցեմ առ ՚ի քէն յարդար և ՚ի բարեգութ դատաւորէդ զթողութի, և զշնորհս մի՛ այլ ևս մեղանչելոյ.

Յայնժամ խոստովանահայրն բարձր ձայնիւ ասէ:

Եղբայր՝ մի՛ ամաչեսցես վասն որոյ եկիր առ ած և առ իս. քանզի ոչ խոստովան լինիս ինձ՝ այլ այ, որոյ առաջի կաս:

Եւ հարցանէ ըստ զամ մեղսն, և ապա ասէ:

Որդեա՛կ իմ հոգևոր՝ որ խոստովանիս նուաստութես իմում, ես նուաստ և մեղապարտս ոչ զօրեմ թողուլ

զմեղս 'ի վերայ երկրի՝ եթէ ոչ Տծ : Բայց վն Տծախօս բանին՝ որ եղև առ առաքեալսն զկնի յարութե Տն մերոյ յհի քի՝ և ասաց . եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նց . և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի . 'ի նոյն և մեք վստահացեալ ասեմք , զոր ինչ խոստովանեցար 'ի սրտէ իմում նուաստութե , և զոր ինչ ոչ կարացեր խոստովանիլ անգիտութե կամ մոռացութե՝ զիմրդ և իցէ , Տծ ներեսցէ քեզ յայսմ յաւիտենի և 'ի հանդերձեալն :

Եւ կարդէ նմին զաղօթս զայս :

Տր որ թողութի շնորհեաց դաւթի 'ի ձեռն նաթանայ մարգարէի , որ խոստովան եղև զմեղս իւր . և պետրոսի որ ելաց դառնապէս զուրացութին իւր . և պոռնկին որ արտասուեաց առ ոտս նորա , և մաքսաւորին և աւազակին :

Նոյն ինքն Տծ 'ի ձեռն մեղաւորիս թողցէ քեզ զամ և յայժմու յաւիտենիս և 'ի հանդերձելումն . և զքեզ անդատապարտ կացուսցէ յահաւոր ատենի իւրում . և վասն յանցանաց քոց զորս խոստովանեցար՝ ոչ մի ինչ ունելով զհոգ , երթ 'ի խաղաղութիւն :

Աղօթք վասն նոցա որք անիծիւք և երդմամբ կապեն զինքեանս :

Տէ՛սբօդա տր Տծ մեր՝ միածին որդի և բան հօր , որ զամ կապանս մեղաց մերոց քոյով չարչարանօք խզեցեր . և յերեսս առաքելոցն փչեցեր և ասացեր ; Առէք հոգի սբ . եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա . և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի :

Դու տր՝ 'ի ձեռն սբց առաքելոցն ըստ իւրաքանչիւր ժամանակի քահանայագործ պաշտօնէից յեկեղեցւ քո սբ՝ շնորհեցեր թողուլ զմեղս 'ի վերայ երկրի , և կապել և արձակել զամ կապանս անիրաւութեան :

Արդ՝ աղաչեմք և այժմ վ՜ն եղբօր մերոյ (այս անուն)՝ որ կայ առաջի քո • պարգևեա սմա զողորմութիւնդ քո , խզելով զկապանս մեղաց սորա զոր ինչ անգիտութ͞ե կամ անզգուշութ͞ե խօսեցաւ , կամ սրտնեղութ͞ե արար • Նե-գիտելով զմարդկային տկարութիւն , ո՛վ բարերար և մարդասէր տ՜ր՝ Թո՛ղ սմա զա՜մ զմեղսն զկամայ և զակամայ •

Զի դու ես որ արձակես զկապեալսն , և յարուցանես զկործանեալսն • որ յոյս ես անյուսից , և հանգիստ անկելոց , և զծառայս քո զայս ազատեա յա՜մ կապանաց մեղաց • Զի փառաւորեալ է քո ամենապ՜ատ անունդ հօր և որդւոյ և հոգւոյն ս՜րբ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն •

Աղօթք ՚ի վերայ արձակելոյ յանիծից և յերդմանց •

Քաղցրագութ տէր՝ բարերար և մարդասէր , որ վ՜ն բազում գթութ͞ե քո առաքեցեր զմիածին որդին քո յաշխարհ , զի պատառեսցէ զձեռագիր յանցանաց հակառակութե͞ մերոյ , և լուծցէ զկապանս կապելոցն ՚ի մեղաց , և քարոզեսցէ գերեաց զթողութի͞ •

Դո՛ւ տէր՝ և զծառայս քո (այս անուն) քոյով բարութ͞եդ ազատեա ՚ի կապանաց իւրոց , և պարգևեա սմա յա՜մ ժամանակի և յա՜մ ուրեք առանց մեղաց մնաչել առ մեծութի͞ քո , և համարձակութ͞ե և մաքուր խղճմտաց հայցել առ ՚ի քէն զառատ ողորմութի͞դ •

Զի ողորմած և մարդասէր ես ա՜ծ գոլով , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն •

Աղօթք ՚ի վերայ ապաշխարողաց •

Ա՜ծ փրկիչ մեր՝ որ ՚ի ձեռն մարգարէին քո Նաթանայ պարգևեցեր ապաշխարողին դաւթի զթողութիւն

յանցանաց իւրոց. և զաղօթս ապաշխարութեան Մանասէի ընկալար։ Ինքնին և զծառայս քո (զայս անուն) որ ապաշխարէ ՚ի վերայ յանցանաց զորս գործեաց, ընկալ սովորական մարդասիրութեամբ քով՝ անտես առնելով զա̃մ գործս սորա, որ թողուս զանիրաւութիւն, և զանց առնես զանօրէնութեամբ։

Քանզի դու ասացեր տէր, ոչ կամիմ զմահ մեղաւորին, ոպ̃ զդառնալ նորա և զկեալ. և եօթանասնեկի եօթն թողուլ զմեղսն հրամայեցեր. զի ոպ̃ մեծութի̃ քո անսահման, և ողորմութի̃ քո անչափ. քանզի եթէ զանօրէնութիւնս քննես, ո՛վ կարէ կալ։

Զի դու ես ա̃ծ ապաշխարողաց, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այլ աղօթք։

Տէր յս̃ ք̃ս՝ որդի ա̃յ կենդանւոյ՝ հովիւ և գառն, բարձօղ մեղաց աշխարհի. որ զպարտսն շնորհեցեր երկուց պարտապանաց, և մեղաւոր կնոջ ետուր թողութիւն մեղաց։

Ինքնին տէ́րբօղա՝ ներեա́ քաւեա́ թո́ղ զմեղսն, զանօրէնութի́ւն, զյանցանսն՝ զկամայ և զակամայ, զգիտուն և զանգիտուն, զորս պատուիրանազանցութբ և անհնազանդութբ արարին ծառայքս քո։

Եւ եթէ որպէս մարդիկ մարմնաւորք և յաշխարհի բնակեալք՝ մոլորեցան ինչ ՚ի բանսարկուէն բանիւ կամ գործով, գիտութբ կամ անգիտութբ, կամ զբան քահանայի անգոսնելով, կամ ընդ անիծիւք քահանայի անկանելով, կամ անձամբ անձին անէծս կարդալով, կամ երդմնակուռ լինելով. ինքնին որպէս բարերար և անյիշաչար տէր՝ հաճեաց արձակել բանիւ զծառայքս զայսոսիկ, ներելով նոցա և զանէծս իւրեանց և զերդմունսն՝ ըստ մեծի ողորմութեան քում։

Այժմ տէ́րբօղա՝ մարդասէր ա̃ր՝ լո́ւր մեզ որք վասն ծառայից քոց այսոցիկ աղաչեմք զքո բարութիւն, և

անտես արա որպէս բազումողորմ զամ յանցանս սոցա. զերծո զսոսա ՚ի յաւիտենական տանջանաց. Քանզի դու ասացեր տէր, զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր միանգամ արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս.

Զի դու ես միայն առանց մեղաց, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Աղօթք ներողութեան զկնի մահուան:

Տէր Յս Քս Ածն մեր, որ զԱծային հրամանս ետ սրբոց աշակերտացն և առաքելոց քոց՝ կապել և արձակել զանկեալսն ՚ի մեղս, նոքօք և մեզ ետ հրաման զնոյն առնել.

Դու որդեակ հոգևոր՝ զոր ինչ գործեցեր յայժմու յաւիտենիս կամայ և ակամայ, նոյն ինքն ներեսցէ քեզ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Աղօթք ՚ի վերայ յանդգնաբար երդուողաց:

Տէր և հայր Ան մերոյ Յսի Քսի, որ գիտես զմարդկային բնութեան դիւրասահութի և զտկարութի, և յայտնի ճանաչես զխորհուրդս մտաց մերոց, անտես արա՝ ո՛վ անյիշաչար զյանդուգն խորհուրդս մեր, և կապելոցն երդմամբ ներեա՛, գիտելով զգաղտնիս սրտից մերոց.

Արդ՝ աղաչեմք զքեզ, շնորհեա՛ զթողութի նոցա և մեզ վասն անճառելի բարութեն քո. Զի օրհնեալ է անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք 'ի վերայ պղծակերաց:

Տէ՛ր՝ տէր ա̃ծ մեր, որ 'ի բարձունս բնակիս, և զխոնարհս տեսանես. որ 'ի ս̃բս հանգուցեալ ես գովեալդ յիսրայէլի, խոնարհեցո՛ զունկն քո և լո՛ւր մեզ, որք աղաչեմք զքեզ. և շնորհեա՛ զթողութի ծառայի քո (այս անուն) որ եկեր զգազանոտիս, կամ զայնպիսի միս և պիղծ կերակուր, զոր 'ի ս̃բ օրէնսն քո պատուիրեցեր չուտել, և կամ ակամայ հաղորդ եղև նոցին:

Ներեա՛ սմա, և արժանաւորեա՛ առանց դատապարտութեան հաղորդել սոսկալի խորհրդոյ պատուական մարմնոյ և արեան ք̃սի քո:

Այլ զի փրկեալ այսուհետև յայլ ա̃մ անմաքուր հաղորդութենէ և 'ի գործոյ, փափկասցի յա̃ծային քո խորհուրդս. և արժանի եղիցի ս̃բ և խորհրդական սեղանոյ քո և անմահական խորհրդոյդ. և պահպանեսցի ընդ մեզ յեկեղեցի քո սուրբ, օրհնելով և փառաւորելով զբարեբանեալ անուն քո զա̃մ աւուրս կենաց իւրոց:

Զի քո՛ է արքայութի և զօրութի և փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք վասն պիղծ խորհրդոց:

Տէ՛րբօղա՝ տէր ա̃ծ իմ, որ 'ի ձեռս քո են ժառանգութիւնք իմ, ընկա՛լ զիս ըստ ողորմութեն քում, և մի՛ թողցես զիս կորնչել ըստ անօրէնութեն իմում, և հեռանիլ մարմնոյս կամաց, որ ցանկայ հակառակ հոգւոյ:

Յանձնուած քո՛ եմ՝ մի՛ անտես առներ զգործս ձեռաց քոց. մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. գթա՛ մի՛ անարգեր և մի՛ մերժեր զիս:

Տէ՛ր՝ զի հիւանդ եմ, զի առ քեզ ապաւինեցայ առ պաշտպանդ իմ ա̃ծ, բժշկեա՛ զանձն իմ զի մեղայ քեզ: Կեցո՛ զիս ըստ ողորմութեն քում, զի 'ի քեզ անկայ 'ի մանկութենէ իմմէ: Ամաչեսցեն որք խնդրեն զիս մերժել

է

'ի քէն 'ի ձեռն անհամեստ գործոց , անարժան խոր-
հրդոց , անպիտան դիտաւորութեանց ։

'Ի բաց մերժեա յինէն զա̃մ ատելութի̃ և զյաւել-
ուածս չարեաց ․ զի դու միայն ես Ա̃Ծ , միայն հզօր ,
միայն անմահ , որ անչափ ունիս իշխանութի̃ յա̃մի ․ և
տաս ամենեցուն զօրութիւն ընդդէմ բանսարկուին և
զօրաց նորա ։

Եւ քեզ վայելէ ա̃մ փառք պատիւ և երկրպագութի̃՝
հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից , ամէն ։

---

Աղօթք վասն պոռնկական պատերազմի ։

Ա̃Ծ զօրութե̃ց՝ որ բժշկես զա̃մ ցաւս և զա̃մ ախ-
տաժետութի̃ 'ի ժողովրդեան քում , քաւեա՛ զծառայս
քո ․ և մի՛ տացես մարդոյ և դիւի հաղորդակցութիւն ։
Սաստեա՛ անմաքուր ոգւոցն ․ խորտակեա՛ զսատանայ
ընդ ոտիւք ծառայից քոց ։

Նորոգեա՛ զսա հոգւովդ քով սրբով , և միացո՛ ընդ
եկեղեցւոյ Ա̃յ քո ։ Եւ ազատեալ յա̃մ ներգործութէ̃
հակառակորդին , մերձեցո՛ զսա սեղանոյ քո , և արժա-
նաւորեա՛ երկնային և կենարար խորհրդոց քոց ։

Զի դու ես Ա̃Ծ մեր՝ Ա̃Ծ ապաշխարողաց , և քեզ
փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Այլ աղօթք ։

Տէ՛ր Ա̃Ծ արդարութե̃ , զօրութի̃ իմ և օգնութի̃ իմ
և ապաւէն իմ յաւուր չարի ․ դո՛ւ պահես 'ի ժամանա
կի նեղութեան ։

Կեցո՛ զիս զի հասին Ջուրք յանձն իմ ․ ընկղմայ ես 'ի
խորս անդնդոց՝ ուր ոչ գոյ ինձ հանգիստ յերեսաց
բռնաւոր Թշնամւոյն , զի հալածեաց զանձն իմ , և

կոխեաց յերկիր զկեանս իմ • զգիշերն ողջոյն պատերազմաւ տառապեցոյց զիս։

Կամեա՛ց տէ՛ր փրկել զիս ՚ի ձեռաց անօրինի և անիրաւի, որպէս զի մի՛ մեռայց քեզ։ Երկիւղ մահու անկաւ ՚ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար • մինչև յերբ աղաղակեցից տէ՛ր, և ոչ լուիցես • գոչեցից առ քեզ ՚ի ձեռաց անիրաւի, և ոչ կեցուսցես։

Հայեա՛ց տէ՛ր յերկնից ՚ի բնակութենէ քումմէ սրբոյ և ՚ի փառաց քոց • ո՞ւր է բազում գթութիւն քո ըստ ողորմութեան քում՝ որով համբերեցեր մեզ։

Դատեա՛ զնոսա տէ՛ր՝ որք անիրաւին յիս • մի՛ լինիր ո՜չ զմարդ որ ննջիցէ, և ո՜չ զայր որ ոչ կարիցէ փրկել։

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք վասն երազափորձի • զոր պա՛րտ է ասել նախքան զմտանելն ՚ի քուն։

Բարեբանեա՛լ տէր՝ անմահ, սուրբ, որ միայնդ ես առանց մեղաց, մաքրեա՛ զիս զծառայս քո յա̃մ պղծութե̃ մարմնոյ և հոգւոյ • արա՛ անարատ ՚ի ձեռն շնորհաց քո̃ի քո, և սրբեա՛ զիս եկաւորութբ̃ հոգւոյդ քո սրբոյ։

Զի զգաստացեալ ՚ի խաւարային անմաքուր ցնորից բանսարկուին և յա̃մ փորձութե̃, արժանի եղէց ՚ի դէպ ժամանակի մտանել և ճաշակել ՚ի սոսկալի և ահաւոր խորհրդոց քոց։

Զի դու ես որ օրհնես և սրբես զամենեսին, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբ̃յ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Աղօթք վասն ամենայն հիւանդութեանց։

Տէր ամենակալ՝ բժիշկ հոգւոց և մարմնոց, որ խոնարհեցուցանես և բարձրացուցանես, խրատես և դարձեալ բժշկես, այց արա եղբօրս մերում (այս անուն) որ հիւանդացեալ դնի։ Տարածեա՛ զբազուկն քո, որ լի է բժշկութեամբ և դարմանով, և բժշկեա՛ զսա 'ի հիւանդութենէ իւրմէ, և յարո՛ 'ի մահճաց։

Սաստեա՛ ոգւոյն հիւանդութեան, և 'ի բաց արա 'ի սմանէ զամենայն վէր, զամենայն ցաւ, զամենայն լլկանս, զամենայն տենդ կամ զսարսուռ։ Եւ եթէ իցէ 'ի սմա յանցանք կամ անօրէնութիւն, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ վասն մարդասիրութեան քո։

Այո՛ տէ՛ր՝ խնայեա՛ յարարածս յիսուսիւ քրիստոսիւ տերամբ մերով. ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# Կանոն աղաչանաց յամենասրբուհի ածածինն 'ի խոստովանութիւն մեղաւորի։

## Արարեալ Նութիմոսի միայնակեցի սենեկեղոսի ․

### Երգ ․ ա ։ Ձայն ․ է կող ․ Ըստ եղանակին որ երգի , Որպէս 'ի ցամաքի ճեմեալ ․

Զիա՞րդ ողբացից զկեանս իմ աղտեղի , և զբազմութիւն անթիւ չարեաց մեղապարտիս , և զի՞նչ պատմեցից քեզ ով սրբուհի , տարակուսիմ և երկնչիմ ․ այլ դու օգնեա ինձ ։

Վարայ 'ի հոգի 'ի չարաչար և 'ի դժնդակ յանցանաց իմոց , վա՜յ ինձ թշուառականիս , զի՞նչ լինիցիմ արդեօք ․ այլ տիրուհի և յիս նախքան զվախճանն իմ գթա՛ ։

Յամ ճանապարհս մեղաց ուղևորեալ , շաւիղ փրկութե ոչ գտի ․ այլ առ քեզ դիմեմ արտասուօք ով բարի , մի՛ անտես առնիցես զիս զղջացօղս 'ի սրտէ ։

Զժամն մահուան իմոյ , և զատեանն սոսկալի յարաժամ իմանամ , բայց սովորութբ չարեաց բոլորովին կարթիմ չարաչար ․ այլ դու օգնեա ինձ ։

Ապականիչն բարեաց զիս այժմ տեսանելով , մերկ և անտերունչ յածային բարի պարգևաց և յառաքինութեանց , կլանել զիս յարձակի ․ ով տիրուհի փութա ժամանել ։

### Երգ ․ բ ․ Աշ գդ մբ որպէս զքեզ ․

Զանձն իմ աղտեղեցի անչափ յանցանօք ես թշուառականս , և անկայ 'ի գուբ անելանելի ․ տիրուհի ածածին մատո ինձ ձեռն այցելութեան ։

Օ կերպարանն ա̃յ արդ արատեցի , ամբարտաւան մտօք ես թշուառականս , վա՜յ ինձ . և ո՞ւր արդեօք երթայց . այլ փութա՛ ով սրբուհի կոյս օգնել ինձ ։

Չիք 'ի մանկանցու կեանս յայս որ գործեաց եղեռնաւոր որպէս զիս , զչարաչար զեղխութիւնս , վա՜յ ինձ . քանզի զա̃ծային մկրտութիւն աղտեղացուցի ։

'Ի ծայրն հասի չարեաց յամառեալ մտօք , այլ դու օգնեա՛ վաղվաղակի ամենասրբուհի կոյս . քանզի երկինք և երկիր գոչեն , կարի անպատեհ լինել իմոցս գործոց ։

## Նւէ · Դ · Ո՞ւր է իմ զօրութիւն ։

Դասք և զինուորութիւնք հրեշտակաց , զօրութիւնք երկնից , սարսին 'ի կարողութենէ որդւոյ քո սրբուհի . իսկ այժմ ես վհատեալս յանդգնութե̃ պարուրիմ ։

Հիացաւ ա̃մ երկիր և դողաց , տեսանելով զիս որ ոչ դադարիմ չարաչար գործել զանպատեհս , և զբազում գթութիւնս որդւոյ քո դառնացուցանեմ ։

Օ տաճար մարմնոյս աղտեղեցի չարաչար , և զտաճար տեառն , յոր մանկանցուք երկիւղիւ մտանեն . իսկ վա՜յ ինձ անառակիս , զի ընդ այն մտանեմ անպատկառ ։

Մի՛ ցուցցես տիրուհի՝ մի՛ ցուցցես զիս օտար , և բոլորովին անարժան 'ի խնամոց որդւոյ քո . այլ լուա՛ և զիս յաղտեղութենէ յանցուածոց իմոց ։

## Նւէ · Ե · Ա̃ծային ճառագայթիւ քո ով բարի ։

Ադամ էանց զմիով պատուիրանաւ որդւոյ քո ով կոյս , և իրաւամբ տարագիր եղև . իսկ զի՞արդ ողբացից զանթուելի յանցուածս իմ , ես ապստամբս և յանցաւորս աստուծոյ ։

Ապականիչ և եղբայրասպան լինելով կայէն 'ի դարս առաջին անիծաւ յա̃յ , իսկ զինչ և ես արարից թշուառականս , զի զհոգիս սպանեալ՝ այժմ ոչ ամաչեմ ։

'Նախանձեցայ ընդ դժնեայ եսաւ , որկորստութե̃

և փափկութիւն , զհոգի և զմարմին աղտեղացուցի , արբեցութիւն և պագշոտութիւն զազրացուցեալ զկեանս իմ · և ով արդեօք ոչ լացցէ զիս եղկելիս ։

Մեծային ճառագայթիւ քո , բժշկեա զախտ հոգւոյ իմոյ , զորս ապականիչն սերմանեաց յիս · փրկեա զիս 'ի դառն գերութենէ սատի · քանզի ծաղր առնէ զիս տեսանելով այժմ անտերունչ ։

## Աղօթ · Զ · Ակնցաղոյս զծոցն ։

Ակնցաղ իմ անաւակ , հոգի իմ աղտեղի , և կեանքս կարի եղկելի · իսկ մարմին իմ բոլոր 'ի չարիս չարաչար արատաւորեալ · վ͞յ փութացիր ով կոյս , և օգնեա ինձ ։

Որհաս վախճանիս եհաս , և ոչ հանդուրժեմ ով բարի , խիղճ մտացն յանդիմանէ զիս · քանզի առաջի կացուցանէ ինձ զչար գործս , և զկենցաղոյս անհաստատութիւն , և յատենէ որդւոյ քո ով սրբուհի զարհուրիմ ։

Գետ հրոյն ահաւոր և անշիջանելի սուգագալես սպասէ մարմնոյս , որ ցանկութիւն հրդեհի , և որդն անքուն , ով ամենամաքուր · այլ փրկեա զիս 'ի սոցունց քոյին բարեխօսութեամբ ։

Պատեալ պարուրիմ երկիւղիւ , զարհուրիմ ով բարի 'ի նենգութեանց չարին · քանզի նախքան զվախճանս կրճտէ ինձ ապականիչն զատամունս , ունելով զիս ո͞պ գերի թափուր և մերկ յառաքինութեանց ։

## Աղօթ · Է · Յօղաբուղխ զձնոյն ։

Յօթնպատիկ զբոցն ինձ բորբոքեաց զախտից նենգաւորն , և շնութիւն սրտիս բոլորովին մահացուցանէ · այլ դու շիջո հոսանօք իմոց արտասուաց մայր ա͞յ , և մի՛ մերժեր զիս ։

Հեղձեալ 'ի լուալիս յանցանաց իմոց , մի՛ թողուր զիս տիրուհի · և քանզի տեսանելով զիս վհատեալ , ով բարի , ծաղր առնէ ամենաչար թշնամին · այլ դու ինքն քո կարող ձեռամբն 'ի վեր յարո ։

Ահաւոր է ատեանն ո՛վ Թշուառական հոգի իմ և անզգայ , և տանջանքն անվախճան և սարսափելի · այլ սակայն այժմ անկի՛ր առաջի մօրն՝ դատաւորին քո և աստուծոյ , և ընդ է՞ր անյոյս առնես դու զքեզ ։

Ի քեզ զա՟մ յոյս իմ տիրուհի , եդի անառակս , մի՛ դարձուցաներ յինէն այժմ զերեսս քո , մի՛ զգութ մարդասիրութեանդ քո արգելցես յինէն մա՛յր ա՟յ · այլ օգնեա՛ ինձ ։

Խաւարեցայ Թշուառականս ո՛վ ամենամաքուր 'ի բազմութէ՟ անհամար չարեաց , այլայլեալ եմ զտեսանելիս հոգւոյս և զմիտս · վասն որոյ զիս լուսոյ քո նշուլիւք առ անապական քաղցրութի՟ արագապէս ներածեա՛ ։

## ՆՈՒԷ · Է՟ · 'Ի բոցդ՝ որբոցն ։

Որ ծնար զա՟ծ զմին յերրորդութենէն և 'ի գիրկս բարձեր մա՛յր և կոյս · չիջո՛ զախտից զհրաբորբոք հնոցն , և արտասուացս հոսանօք՝ լուա՛ զհոգի իմ ։

Ի գալստենէ մահուան սարսիմ ո՛վ ամենամաքուր , և 'ի դատաստանէ անտի բոլորովին ես ոչ զարհուրիմ , իսկ 'ի գործելոյ զչարիս ոչ բնաւ 'ի բաց կամ · գթա՛ և կեցո՛ , բարեխօսութե՟ քո նախքան զվախճան ։

Հառաչանս անլռելիս պարգևեա՛ տիրուհի , և արտասուաց աղբիւր ինձ , զի լուացից զյանցանս իմ բազում , և զանբուժելի վէրս , որպէս զի հանդիպեցայց կենացն յաւիտենից ։

Զչարեացն իմոց բազմութի՟ս քեզ հրապարակեցի , քանզի ոչ այլ ոք իբրև զիս՝ բարկացոյց զա՟ծ և զտէր զորդին քո տիրուհի , զիս ընդ նմա արագապէս հաշտեցո՛ աղօթիւք քո ։

Մի՛ զիս կացուցես տէ՛ր 'ի ժամու դատաստանի , ընդ դատապարտելոցն բա՛րեգութ բնութե՟ · այլ մօր քո բարեխօսութե՟ ողորմեա՛ , և դասակցեա՛ աջակողմեան ոչխարաց ։

## Նոյ. Թ. Օ՛ ա̃ծ մարդկան տեսանել անկարելի.

Ահաւասիկ մատչիմ առ քեզ ով ամենամաքուր երկիւղիւ բազմաւ և փափագմամբ՝ զզօրութի̃ն գիտացեալ ազդու բարեխօսութե̃դ ես ծառայ քո. քանզի մեծապէս զօրէ ով ամենօրհնեալ աղաչանք մօր առ որդին, որում գթով զիջանի.

Ա՛ռ ընդ քեզ զպարս հրեշտակապետաց, և զբազմութի̃ն վերին զօրաց, և զկարապետն, զառաքելոց ժողովն, և զմարգարէս, և զմարտիրոսս, և զճգնաւորս, և զսրբազան վկայս, և բարեխօսեա սրբուհի վասն իմ առ ա̃ծ.

Եւ այժմ և յայնժամ զքո օգնութի̃դ գտից, ով սրբուհի բարեխօսեա 'ի նուաղիլ հոգւոյ իմոյ, 'ի դիւացն արագ ազատեալ զիս, ազատեա 'ի բռնութենէ նոցին ով ամենամաքուր, և մի՛ զիս թողուր ով բարի՝ մատնիլ նոցա.

Ապաւեն որդւոյ քո գթած և մարդասէր դատաւորին ով սրբուհի, մի՛ անտեսեր զիս, այլ զնա արա ինձ քաւիչ. յայնժամ կացուցանել զիս ընդ աջմէ ով ամենօրհնեալ անվրէպ ատենի նր̃, քանզի 'ի քեզ յուսացայ.

Պետութի̃ք, հրեշտակապետք, տէրութի̃ք, և սերովբէք, զօրութի̃ք, իշխանութի̃ք, և հրեշտակք, աթոռք և բազմաչեայ քերովբէք, այժմ զփառաւորեալ որդի քո պաշտեն՝ ը̃ որս զքեզ կոյս և մայր յարգանօք միշտ փառաւորեմք.

### Ապա ասէ.

Արժան է ճշմարտապէս երանել զքեզ ա̃ծածին, զմիշտ օրհնեալ և առաւել անարատ մայրդ ա̃յ մերոյ՝ զգերագոյնդ քերովբէից, և անհամեմատ մեծարեալդ քան զսերովբէս, զծնօղդ բանին ա̃յ անապականաբար. զքեզ ճշմարիտ ա̃ծածին մեծացուցանեմք.

Եւ յորէ նմն. Եւ վասն արժանի լինելոյ մեր լսել զաւուրբ աւետարանն, զտէր ա̃ծ մեր աղաչեսցուք.

Սօֆիա, Օրթի. Լուիցուք սրբոյ աւետարանին.

Ը

## Խաղաղութիւն ամենեցուն ։

### Աւետարանն որ ըստ Մարկոսի ։

Տէրն մեր ասէ . պատասխանի ետ Յս՟ եւ ասէ ցնս՟ . եթէ ունիցիք զհաւատն այ՟ , ամէն ասեմ ձեզ . որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր եւ անկիր ՚ի ծով , եւ ոչ երկմտիցէ ՚ի սրտի իւրում , այլ հաւատայցէ՝ թէ զոր ասէն լինի , եղիցի նմա զոր ինչ եւ ասիցէ ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ . զա՟մ ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք , եւ հաւատայցէք թէ առնուցուք , եղիցի ձեզ ։ Եւ յորժամ յաղօթս կայցէք , թողուցուք , եթէ ունիցիք ինչ զումեքէ . զի եւ Հայրն ձեր՝ որ յերկինս է , թողցէ ձեզ զյանցանս ձեր ։ Ապա եթէ դուք ոչ թողուցուք , եւ ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր ։

Ողորմեա մեզ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում . աղաչեմք զքեզ լուր եւ ողորմեա ։

Եւս եւ աղաչեսցուք վասն ողորմութե՟ , կենաց , խաղաղութե՟ , առողջութե՟ , փրկութե՟ , այցելութե՟ , քաւութե՟ եւ թողութե՟ մեղաց , ծառայիս այ՟ (այս անուն) ։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ եւ զակամայ , զտէր աղաչեսցուք ։

Զի ողորմած եւ մարդասէր ես ա՟ծ գոլով , եւ քեզ փառս վերառաքեմք՝ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ , այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

### Եւ աղօթք սրբոյ հօրն մերոյ Յովհաննու Դամասկացւոյն ։

Տէ՛սբօդա տէր Յս՟ Քս՟ ա՟ծ մեր , որ միայն ունիս իշխանութի՟ թողուլ զմեղս . դու որպէս բարերար եւ մարդասէր՝ անտես արա զա՟մ յանցանս սորա զգիտութե՟ եւ զանգիտութե՟ , զկամայ եւ զակամայ , զորս գործով , եւ բանիւ , եւ մտածութեամբ յանցեաւ ։

Եւ առանց դատապարտութե՟ արժանաւորեա զծառայս քո հաղորդել ա՟ծային՝ ա՟բ՝ անարատ՝ եւ անմահական խորհրդոց քոց . մի՛ ՚ի պատիժ եւ ՚ի տանջանս եւ ՚ի

*յաւելուածս մեղաց , այլ 'ի սրբութի , 'ի լուսաւորութի , 'ի մաքրութի , 'ի հաստատութի , յառհաւատչեայ յաւիտենական կենաց և երկնային արքայութե , 'ի պահպանութի , և յօգնականութի , և 'ի հերքումն ամ հակառակորդաց , 'ի ջնջումն յանցանաց խ(ր)ոց , և 'ի փառս կարողութե քո , բարեխօսութբ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ ածածնի , պատուական երկնային անխութ անմարմին իմանալի զօրութեց , և ամ սրբոց որք 'ի յաւիտենից քեզ հաճոյացան , ամէն։*

---

Կարգաւորութիւն վասն նշան տալոյ։

Զկնի ածային պատարագին քահանայն կայ 'ի սրբարանն , և առաջի սբ դրանցն կանգնին , որք հանդերձեալ են ըմբռ-նել , այրն ընդ աջմէ և կինն ընդ ահեկէ ։

Եւ դնեն յաջակողմն սբոյ սեղանոյն մատանիք նոցա երկու` ոսկի և արծաթի · արծաթին դէպ 'ի յաջակողմն , և ոսկին 'ի ձախակողմն մերձ իրերաց։

Եւ քահանայն զգեցեալ նորոգ պսակելոց կնքէ երեսս , և տայ նոցա վառեալ մոմեղէնս , և ածեալ զնոսա 'ի դրան տաճարին` խնկարկէ խաչանիշ։

Եւ ասէ սարկաւագն · *Օրհնեա տէր։*

Եւ քահանայն 'ի ձայն։

*Օրհնեալ է ած մեր յամ ժամ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։*

Դպրն · *Ամէն։*

Սարկաւագն։ *Խաղաղութբ զտէր աղաչեսցուք։*

*Վասն 'ի վերուստ խաղաղութե և փրկութե անձանց մերոց զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։*

*Վասն խաղաղութե ամ աշխարհի , հաստատութե սբց եկեղեցեացն այ , և ամցուն միութե , զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։*

Վասն սբ̃յ տանս այսորիկ, և որք հաւատով՝ յար-գութեամբ՝ և երկիւղիւ մտանեն ընդ սա, զտէր աղա-չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն Ա.րհի եպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութեան, պաշտօնէից քն̃ի, ամենայն ժառանգաւորաց, և ժողովրդեան, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն ծառայիս ա̃յ (այս անուն), և աղախնոյս ա̃յ (այս անուն), այժմ նշանելոց ընդ իրեարս, և փրկու-թեան նոցա, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն շնորհելոյ սոցա զորդիս 'ի սերունդ ազգի, և զամենայն խնդրուածս 'ի փրկութիւն, զտէր աղա-չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն առաքելոյ 'ի սոսա զկատարեալ սէր, խաղա-ղութիւն և օգնականութիւն, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն պահելոյ զսոսա 'ի միաբանութե̃, և 'ի հաստա-տուն հաւատս, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն պահպանելոյ զսոսա անբիծ կենօք և քաղաքա-վարութեամբ, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վ̃ զի տէր ա̃ծ մեր շնորհեսցէ սոցա պատուական զամուսնութիւնն, և սուրբ զանկողինն, զտէր աղա-չեսցուք: Տէր ողորմեա:

Վասն փրկելոյ զմեզ յա̃մ նեղուէ̃, 'ի բարկուէ̃, 'ի վտանգէ, և 'ի բռնութենէ, զտէր աղաչեսցուք:

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ ա̃ծ-քոյին շնորհիւ:

Զամենասրբուհի անարատն, զաւուել օրհ":

Դպ. Քեզ տեառնդ յանձն եղիցուք:

Եւ քահանայն 'ի ձայն:

Զի քեզ վայելէ փառք պատիւ և երկրպագութի̃ հօր և որդւոյ և հոգւոյն սբ̃յ, այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից, ամէն:

Ապա ասէ զաղօթս Թծաջային.

Տէր յաւիտենական, որ զբաժանեալսն ժողովեցեր ՚ի միութիւն, և եդեր ՚ի նոսա զկապ բարեկարգութեան անլուծելի։ Որ օրհնեցեր զԻսահակ և զՌեբեկա, և ժառանգորդս արարեր զնոսա խոստմանն քո. ինքնին օրհնեա և զծառայս և զաղախինս քո զայսոսիկ, առաջնորդելով սոցա յամ գործս բարիս։

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դպրն. Ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն.

Սարկաւագն. Զգլուխս ձեր ա̃ն խոնարհեցուցէք.

Քահանայն. Տէր ա̃ծ մեր, որ ՚ի հեթանոսաց խօսեցար քեզ զեկեղեցի կոյս ամբիծ, օրհնեա զնշանս և զնշանեալսդ, և միաւորեա և պահեա զծառայսդ զայսոսիկ խաղաղութեամբ և միաբանութեամբ։

Զի քեզ վայելէ ա̃մ փառք պատիւ և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս̃բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դպրն. Ամէն։

Ապա քահանայն առնու զնշանսն որք կան ՚ի վերայ գրակալին, և նախ ՚ի վեր կալեալ զառնն նշանեն, ասէ զայսն։

Նշանեալ լինի ծառայս ա̃յ (այս անուն), ընդ աղախնոյս ա̃յ (այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. Երիցս ասէ։

Եւ առնէ նշանեալն զնշան խաչի ՚ի վերայ գլխոյ նորա։

Եւ ապա առեալ զկնոջն նշանեն, ասէ զայսն։

Նշանեալ լինի աղախինս ա̃յ (այս անուն), ընդ ծառայիս ա̃յ (այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. Երիցս ասէ։

Եւ յորժամ առէ առ խաչանշանն երիցս , առնէ մատանեաւն զնշան խաչի ՚ի վերայ գլխոյ նոցա . և դնէ զմատն ՚ի յաջ մատունս նոցա . ապա կնքահայրն փոփոխէ զմատանեան հարսին և փեսային։ Իսկ քահանայն առնէ զաղօթն։

Օ տէր աղաչեսցուք ։

Տէ՛ր ա̃ծ մեր , որ ուղեկից եղեր սպասաւորին աբրահամու նահապետին ՚ի միջագետս , յորժամ առաքեցաւ ածել կին տեառն իւրում իսահակայ , և ՚ի ձեռն հանելոյ զջուր ՚ի ջրհորոյն՝ յայտնեցեր նշանել զռեբեկա ։

Ինքնին օրհնեա՛ զնշան ծառայից քոց ( այս անուն ) և (այս անուն) , և հաստատեա՛ զբանն որ խօսեցաւ է ՚ի մէջ նոցա ։

Ամրացո՛ զսոսա ՚ի ս̃բ միաւորութին որ ՚ի քէն . քանզի դու ՚ի սկզբանէ արարեր արու և էգ . և առ ՚ի քէն կին պատշաճի առն յօգնականութիւն և ՚ի սերունդ ազգի մարդկան ։

Տէ՛ր ա̃ծ մեր , որ առաքեցեր զճշմարտութի առ ժառանգութի քո , և զաւետիս քո առ ծառայս քո առ հարս մեր , զորս ընտրեցեր ազգէ յազգ , ինքնին հայեա՛ց ՚ի ծառայս քո (այս անուն) , և յաղախին քո (այս անուն) , և հաստատեա՛ զնշանեալս զայսոսիկ ՚ի հաւատս , ՚ի միաբանութի , ՚ի ճշմարտութի , և ՚ի սէր ։

Քանզի դու տէ՛ր՝ սահմանեցեր տալ զնշան ՚ի հաստատել զա̃մ . զի ՚ի ձեռն մատանւոյ տուեալ եղև իշխանութիւն յովսէփու յեգիպտոս ։ ՚Ի ձեռն մատանւոյ փառաւորեցաւ դանիէլ ՚ի բաբելոն ։ ՚Ի ձեռն մատանւոյ յայտնեցաւ ճշմարտութին թամարայ ։ ՚Ի ձեռն մատանւոյ հայրն մեր երկնաւոր եցոյց զգութ իւր առ որդին . քանզի ասէ , տո՛ւք մատանի յաջն նորա , և զենէ՛ք զեզն պարարակ , կերիցուք և ուրախ լիցուք ։

Աջ քո տէ՛ր՝ որ բանիւ քով երկինք հաստատեցան և երկիրս հիմնաւորեցաւ , առաջնորդեաց մովսեսի անցանել ընդ ծովն կարմիր . և աջն ծառայից քոց օրհնեսցի կարօղ բանիւ և բարձր բազկաւն քով ։

Ինքնին և այժմ տէր օրհնեա՛ զմատանիքս և զդնօղս սոցին, և հրեշտակ տեառն երթիցէ առաջի նոցա զա՟մ աւուրս կենաց իւրեանց։

Զի դու ես որ օրհնես և սրբես զա՟մ, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա ծունր կալով ․ Խաղաղութեա՟ զտէր աղաչեսցուք, և զՕրհնեալն ․ և յետոյ արձակումն։

---

Կարգաւորութիւն պսակին։

Նշանեալքն երբ կամին՝ առ ժամայն պսակել ՚ի տաճարի անդ ․ ապա երբ ցայգուն ժամանակի կամիցին պսակել, գան միանգամ ընկերօքն, և կանգնին առաջի եկեղեցւոյն դրանց տաճարին։ Իսկ ՚ի լրանալ աղօթից պատարագին, քահանայն բուրվառաւ յառաջ երթալով և երգելով շարականս, մուծանէ զնոսա ՚ի ներքս ՚ի տաճարն լուցեալ մոմեղինօք, և կացուցանէ ՚ի մէջն տաճարին առաջի գրակալին։

Ապա քահանայն եղանակէ զսաղմոսն ․ և յիւրաքանչիւր տան ժողովուրդն ասէ ․ Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։

Սաղմոս։

Երանի ամենեցուն որք երկնչին ՚ի տեառնէ,
Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։
Եւ գնան ՚ի ճանապարհս նորա։
Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։
Զվաստակս ձեռաց քոց կերիցես։
Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։
Երանի է քեզ և բարի եղիցի։
Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։
Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո։
Փառք քեզ Ա՟Ծ մեր, փառք քեզ։

Որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով.

Փառք քեզ ա՟ծ մեր, փառք քեզ.

Այսպէս օրհնեսցի ա՟մ մարդ որ երկնչի ՚ի տեառնէ.

Փառք քեզ ա՟ծ մեր, փառք քեզ.

Օրհնեսցէ զքեզ տէր ՚ի սիոնէ, և տեսցես զբարութիւնն երուսաղէմի զամենայն աւուրս կենաց քոց.

Փառք քեզ ա՟ծ մեր, փառք քեզ.

Տեսցես դու զորդիս որդւոց քոց. խաղաղութիւն ՚ի վերայ իսրայելի.

Փառք քեզ ա՟ծ մեր, փառք քեզ.

Ապա սարկաւագն ասէ. Օրհնեա տէր.

Եւ քահանայն ասէ.

Օրհնեալ Թագաւորութիւն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Սարկաւագն. Խաղաղութ՟ զտէր աղաչեսցուք.
Դպիրն. Տէր ողորմեա.

Սարկաւագն.

Վասն ՚ի վերուստ խաղաղուե և փրկուե անձանց մերոց ՟ զտէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն սրբոյ տանս այսորիկ, և որք հաւատով, յարգութեամբ, և երկիւղիւն ա՟յ մտանեն ընդ սա, զտէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն Արհի եպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայուե, պաշտօնէից ք՟ի, ամենայն ժառանգաւորաց և ժողովրդեան, զտէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վ՟ն ծառայիս ա՟յ (այս անուն) և աղախնոյս (այս անուն), որք այժմ միաւորին ը՟ միմեանս ՚ի զուգաւորուի ամուսնուե, և փրկուե նոցին, զ՟տր աղաչեսցուք. Տ՟ր ողորմեա.

Վասն օրհնելոյ զհարսանիքս զայս որպէս ՚ի կանա գալիլեացւոց , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վ՟ն շնորհելոյ սոցա առողջ խորհուրդս , և պտուղ որովայնի առ օգտակարն , զՏ՟ր աղաչեսցուք ։ Տ՟ր ողոր՟ ։

Վասն ուրախ առնելոյ զսոսա տեսութ՟բ ուստերաց և դստերաց , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վ՟ն պարգևելոյ սոցա զաճումն բարի ծննդոց , և անպարտաւ կենցաղավարութ՟ն , զՏ՟ր աղաչեսցուք ։ Տ՟ր ողոր՟ ։

Վ՟ն պարգևելոյ սոցա և մեզ զա՟մ հայցուածս , որք օգտակարք են ՚ի փրկութ՟ն , զՏ՟ր աղաչեսցուք ։ Տ՟ր ողոր՟ ։

Վ՟ն փրկելոյ զսոսա և զմեզ յա՟մ նեղութ՟ե , ՚ի վտանգէ , և ՚ի բռնութ՟ե , զտէր աղաչեսցուք ։ Տ՟ր ողորմեա ։

Ընկալ , կեցո , ողորմեա , և պահեա զմեզ ա՟ծ քոյին ։

Զամենասրբուհի անարատն , զառաւել օրհ ։

Դպիր . Քեզ տեառնդ յանձն եղիցուք ։

Քահանայն ՚ի ձայն ։

Զի քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Դպիրն . Ամէն ։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ ցածաձայն աղօթս զայս ։

Տէր ա՟ծ մեր՝ և ա՟մ արարածոց արարչագործ , որ առեր ՚ի կողից նախահօրն մերոյ ադամայ , և մարդասիրութ՟բդ քո շինեցեր զնա ՚ի կին , և օրհնեցեր զնոսա և ասացեր , աճեցէք և տիրեցէք երկրի . և զերկոսին զն՟ս մի մարմին արարեր ՚ի ձեռն լծակցութե . վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ , և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի , և զորս ա՟ծ զուգեաց , մարդ մի՛ մեկնեսցէ ։

Որ զծառայ քո աբրահամ օրհնեցեր , և հայր բազմութ՟ե ազգաց արարեր , բանալով զարգանդն սառայի ։ Որ զիսահակ լծակից շնորհեցեր ռեբեկայ , և զզաւակ

նորա օրհնեցեր ։ Որ զյակոբ ընդ հաւաքելն զուգակից արարեր , և երկոտասան ազգաց հայր զնա կացուցեր ։

Որ զյովսէփ և զասանէթ ընծայեալ պտուղ որդեծնութեան զեփրեմ և զմանասէ նոցա շնորհեցեր ։ Որ զզաքարիա և զեղիսաբեթ հաճեալ ընկալար , և նախընթաց կարապետ ծնունդն նոցա արարեր ։

Որ յարմատոյն յեսսեայ բողբոջեցեր զմիշտ կոյսն , և 'ի նմանէ մարմնացար և ծնար ըստ մարմնոյ՝ 'ի փրկութիւն ազգի մարդկան ։

Որ ըստ անճառելի պարգևաց քոց և բազում բարութեանդ եկեալ 'ի կանա գալիլեացւոց , օրհնեցեր զհարսանիսն որ անդ . զի երևեցուսցես՝ եթէ կամիս զօրինաւոր ամուսնութիւն , և զորդեծնութիւն որ 'ի նմանէ ։

Նոյնին տէ՛ր ամենակալ՝ ընկա՛լ զաղաչանս ծառայից քոց որք կարդամք առ քեզ . և որպէս 'ի կանա գալիլեացւոց՝ նոյնպէս և աստ եկեալ անտեսանելի վերակացութեամբդ , օրհնեա՛ զամուսնութիւնս զայս . և շնորհեա՛ ծառայիս քո ( այս անուն ) , և աղախնոյս ( այս անուն ) խաղաղական կեանս , բազմօրեայ ժամանակ , առողջ խորհուրդ , սէր առ միմեանս յօդիւն խաղաղութեան , զաւակ երկայնակեաց , շնորհ պտղաբերութեան ։ Սուրբ պահեա՛ զանկողինս սոցա , և արժանացո՛ տեսանել զորդիս որդւոց իւրեանց ։

Տո՛ւր սոցա 'ի ցօղոյ երկնից 'ի վերուստ , և 'ի պարարտութենէ երկրի ։ Լի՛ց զտունս սոցա ցորենով գինւով և ձիթով և ամենայն բարութեամբ , զի ունիցին բաւականութիւն ջամբել կարօտելոց . և պարգևեա՛ միանգամայն որք աստ նոր գտանին զամենայն հայցուածս որ առ փրկութիւն ։

Զի դու ես աստուած ողորմութեան գթութեան և մարդասիրութեան . և քեզ փառս վերառաքեմք ընդ անըսկըզբան քում հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք .

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս.

Օրհնեալ ես տէ՛ր ա͞ծ մեր, որ սրբազնագործ կատարիչդ ես խորհրդական և անարատ հարսանեաց հարսին քո եկեղեցւոյ, և մարմնական ամուսնութեն օրէնսդիր . որ սրբութե վարուց ես պահապան, և կենցաղականաց բարի նախախնամօղ . Որ 'ի սկզբանէ կազմեցեր զմարդն, և կացուցեր ո͞պ Թագաւոր 'ի վերայ ստեղծուածոց քոց . և ասացեր ոչ է բարւոք մարդոյն միայն լինել 'ի վ͞ր երկրի, արասցուք դմա օգնական ըստ դմա .

Եւ առեալ զմի 'ի կողից նորա՝ շինեցեր զնա 'ի կին, զոր տեսեալ ադամ ասաց . Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ . սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ . Վասն այսորիկ Թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան 'ի մարմին մի . և զորս ա͞ծ զուգեաց, մարդ մի' մեկնեսցէ .

Ինքնին և այժմ տէ՛սբօդա տէր ա͞ծ մեր՝ առաքեա՛ զերկնային քո շնորհս 'ի ծառայս քո (այս անուն), և յաղախինս (այս անուն) . և տո՛ւր աղախնոյս այսմիկ յա͞մի հնազանդ լինել առն իւրում . և ծառայի քո այսմ՝ լինել գլուխ կնոջ իւրում, ո͞պ զի վարեսցեն զկեանս իւրեանց ըստ հաճոյից կամաց քոց .

Օրհնեա՛ զսոսա տէր ա͞ծ մեր, որպէս օրհնեցեր զաբրահամ և զսառա . Օրհնեա՛ զսոսա տէր ա͞ծ մեր, որպէս օրհնեցեր զիսահակ և զռեբեկա . Օրհնեա՛ զսոսա տ͞ր ա͞ծ մեր, ո͞պ օրհնեցեր զյովսէփ և զասանէթ . Օրհնեա՛ զսոսա տ͞ր ա͞ծ մեր, որպէս օրհնեցեր զմովսէս և զսեպփորա . Օրհնեա՛ զսոսա տէր ա͞ծ մեր, որպէս օրհնեցեր զզաքարիա և զեղիսաբէթ .

Պահեա՛ զսոսա տ͞ր ա͞ծ մեր, որպէս պահեցեր զնոյ 'ի տապանին . Պահեա՛ զսոսա տ͞ր ա͞ծ մեր, որպէս պահեցեր զյովնան 'ի փոր կիտին . Պահեա՛ զսոսա տ͞ր ա͞ծ մեր, որպէս պահեցեր զերիս տ͞ղ մանկունսն 'ի հրոյն,

ցօղելով առ նոսա զցօղ 'ի յերկնուստ ։ Նշկեսցէ 'ի վր̃ սոցա ուրախութի̃ն, որով ուրախ եղև երանուհին հեղինէ, յորժամ եգիտ զպատուական խաչն ։

Յիշեա՛ զսոսա տ̃ր ա̃ծ մեր, ո̃ք յիշեցեր զենովք, զսեմ, և զեղիա ։ Յիշեա՛ զսոսա տէր ա̃ծ մեր, որպէս յիշեցեր զքառասուն սուրբ վկայսն քո, առաքելով առ նոսա յերկնուստ զպսակսն ։

Յիշեա՛ տէր ա̃ծ մեր և պահեա՛ զսնուցանօղսն սոցին զծնօղսն՝ առնել աղօթս վասն զաւակաց իւրեանց. զի աղօթիւք ծնողաց հաստատին հիմունք տանց ։

Յիշեա՛ տէր ա̃ծ մեր զծառայս քո (այս անուն), և զաղախին քո (այս անուն), և օրհնեա՛ զսոսա ։ Տո՛ւր սոցա պտուղ որովայնի, աճումն ծննդոց, միաբանութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

Բարձրացո՛ զսոսա որպէս զմայրսն լիբանանու, և արա՛ որպէս այգի քաջուղէշ ։ Պարգևեա՛ սոցա զառատ բարութիւս երկրի, զի զա̃մ բաւականութի̃ ունելով, առաւելուցուն յա̃մ գործս բարիս ըստ հաճոյից քոց ։ Տեսցեն զորդիս որդւոց իւրեանց, որպէս նորատունկ ձիթենեաց շուրջ զսեղանով իւրեանց ։ Եւ հաճոյացեալ առաջի քո՝ փայլեսցին որպէս զլուսաւորս 'ի յերկինս՝ քև տերամբ մերով ։

Եւ քեզ փառք՝ կարողութի̃ պատիւ և երկրպագութի̃ ընդ անսկզբան քում հօր, և կենդանարար ս̃բ հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Դպան . Ամէն ։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն դարձեալ ասէ զաղօթս 'ի ձայն ։

Ո՛վ սուրբ, որ արարեր 'ի հողոյ զմարդն, և 'ի կողէ նորա շինեցեր կին, և զուգակցեցեր նմա օգնական ըստ նմա. զի ոչ հաճոյ եղև քում մեծութե̃՝ լինել մարդոյն միայն 'ի վերայ երկրի ։

Ինքնին և այժմ տէ՛ր՝ առաքեա՛ զձեռն քո 'ի բնակութե̃ սրբոյ քո. և պատշաճեա՛ զծառայ քո (այս անուն),

և զաղախին քո (այս անուն), զի ՚ի քէն պատշաճի կինաւն խուրում:

Զուգաւորեա զսոսա ՚ի մի միտս. պսակեա զսոսա ՚ի մի մարմին. շնորհեա սոցա պտղաբերութիւն որդեծնութեան և անձուկն բարի զաւակաց:

Զի քո է կարողութիւն, և քո է թագաւորութիւն և զօրութիւն և փառք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ

և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա առեալ քահանայն զպսակն, պսակէ նախ զփեսայն՝ ասելով:

Պսակի ծառայս այս (այս անուն), ընդ աղախնոյս այս (այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Եւ աստ ասա երիցս, առնելով պսակաւն զնշան խաչի ՚ի դէմս փեսային:

Ապա պսակէ և զհարսն՝ ասելով:

Պսակի աղախինս այս (այս անուն), ընդ ծառայիս այս (այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Եւ զայս ասէ երիցս, և առնէ զնշան խաչի ՚ի դէմս նորա:

Ապա օրհնէ զնոսա երիցս, ասելով երիցս անգամ:

Տէր Աստուած մեր՝ փառօք և պատուով պսակեա զսոսա:

Յետոյ Ձուէտէ, ձայն, Ը խոշ:

Եդեր ՚ի գլուխ սրբոց պսակս ՚ի քարանց պատուականաց. Կեանս խնդրեցին ՚ի քէն, և ետուր նոցա ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից:

Պօղոսի առաքելոյն յեփեսացւոց թղթոյն է ընթերցուածս:

Եղբարք՝ գոհացարուք յամենայն ժամ ՚ի վերայ ամենայնի, յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հօրն և Աստուծոյ: Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի: Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև տեառն. զի այր է գլուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի: Արք՝ սիրեցէք զկանայս ձեր. որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և

զանձն իւր մատնեաց վասն նորա • զի զնա սրբեսցէ սրբութբ̃ աւազանին բանիւ • զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ՝ կամ աղտեղութի̃, կամ այլ ինչ յայնպիսեաց • այլ զի իցէ սուրբ և անարատ։ Այնպէս պարտին այր սիրել զիւրեանց կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս։ որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։ Զի ոչ՛ք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա • որպէս և քս̃ զեկեղեցի • զի անդամք եմք մարմնոյ նր̃, ՚ի մարմնոյ նորա և յոսկերաց նր̃։ Վ̃ այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ՚ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ ՚ի քս̃ և յեկեղեցի։ Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ • զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն • և կին երկնչիցի յառնէ իւրմէ։

Ալէլուիա • Ձայն, ա̃ չող։

Դու տէր պահեսցես զմեզ և ապրեցուսցես յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան։

Սուրբ աւետարան որ ըստ Յովհաննու։

Յայնմ ժամանակի՝ և յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի կանա գալիլեացւոց • և անդ էր մայրն յի̃ի։ Կոչեցաւ և յս̃ և աշակերտքն նր̃ ՚ի հարսանիսն։ Եւ ՚ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցյս̃ • գինի ոչ ունին։ Եւ ասէ ցնա յս̃ • զի՛ կայ իմ և քո՝ կի՛ն դու, չե՛ է հասեալ ժամանակ իմ։ Ասէ մայրն նորա ցսպասաւորսն • որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջի՛ք։ Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութե̃ հրէից • տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս։ Ասէ ցնոսա յս̃ • լցէ՛ք զթակոյկդ ջրով • և լցին զն̃ս մինչև ՚ի վեր։ Եւ ասէ ցնոսա • արդ՝ առէ՛ք և բերէ՛ք տաճարապետին։ և նոքա բերին։ Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ • բայց սպասաւորքն

գիտէին՝ որք արկին զջուրն։ Խօսի ընդ փեսային տաճարապետն, և ասէ. ա՟մ մարդ զանոյշ գինին յառաջադոյն պաշտէ. և յորժամ արբենան, յայնժամ զյոււին. դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց յ՟ն 'ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. և հաւատացին 'ի նա աշակերտքն նորա։

## Սարկաւագն։

Ասասցուք ամենեքեան յա՟մ անձնէ և յա՟մ մտաց մերոց ասասցուք։

Տէր ամենակալ՝ ա՟ծ հարցն մերոց, աղաչեմք զքեզ լուր՝ և ողորմեա մեզ։

Ողորմեա մեզ աստուած ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ լուր՝ և ողորմեա։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան և քաւութեան մեղաց ծառայից ա՟յ (Յիշէ զորս կամի)։

## Քահանայն 'ի ձայն։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

## Եւ քահանայն ասէ զաղօթս։

Տէր ա՟ծ մեր, որ 'ի փրկական տնօրէնութեան քո հաճեցար պատուել զամուսնութիւնն, գնալով քո 'ի հարսանիսն 'ի Կանա Գալիլեացւոց։

Ինքնին և այժմ զծառայս քո (այս անուն), և զաղախինս քո (այս անուն), զորս հաճեցար միաւորել ընդ իրեարս, պահեա 'ի խաղաղութեան և 'ի միաբանութեան։

Պատուական արա սոցա զամուսնութիւնն. սուրբ պահեա զանկողինս սոցա. շնորհեա սոցա կեալ անբիծ

քաղաքավարութբ՟ . և արժանի՛ արա հասանիլ 'ի ծերութի՟ պարարտութե՟ , կատարելով զպատուիրանս քո ո՟բ սրտիւ .

Զի դու ես ա՟ծ մեր՝ ա՟ծ ողորմութե՟ և փրկութե՟ . և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ ,

այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .

Դպիր . Ամէն .

Սարկաւագն . Ընկալ , կեցո՛ , ողորմեա՛ , և պահեա՛ զմեզ աստուած քո՟յին շնորհիւն .

Զօրն ա՟մ , ամբծութբ՟՝ սրբութբ՟՝ խաղաղութբ՟ , և անմեղ անցուցանել , 'ի տեառնէ խնդրեսցուք . Շնորհեա՛ տէր .

Զհրեշտակ խաղաղութե՟ , հաւատարիմ առաջնորդ , պահապան հոգւոց և մարմնոց մերոց , 'ի տեառնէ խնդրեսցուք . Շնորհեա՛ տէր .

Զբարին և զօգտակարն անձանց մերոց , և զխաղաղութի՟ աշխարհի , 'ի տ՟նէ խնդրեսցուք . Շնորհեա՛ տ՟ր .

Զմնացեալ ժամանակս կենաց մերոց խաղաղութբ՟ և ապաշխարութբ՟ անցուցանել , 'ի տեառնէ խնդրեսցուք . Շնորհեա՛ տէր .

Զմիաբանութի՟ հաւատոյ , և զհաղորդութի՟ հոգւոյն ս՟բոյ խնդրելով , զմեզ և զմիմեանս և զա՟մ կեանս մեր ք՟րի ա՟յ յանձն արասցուք . Քեզ տեառնդ յանձն եղիցուք .

Քահանայն 'ի ձայն .

Եւ արժանի՛ արա զմեզ տէր անդատապարտ համարձակութբ՟ կոչել զքեզ Հայր՝ զերկնաւորդ ա՟ծ , և ասել .

Ժողովուրդն . Հայր մեր որ յերկինս , եւ՟ .

Քահանայն 'ի ձայն .

Զի քո՛ է արքայութի՟ և զօրութի՟ և փառք Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .

Դպիր . Ամէն .

Քահանայն . Խաղաղութիւն ամենեցուն ։

Սարկաւագն . Զգլուխս մեր տ̄ն խոնարհեցուսցուք ։

Ապա մատուցանեն հասարակ բաժակ . և օրհնէ քահանայն , և տայ ըմպել նոցա ։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ։

Տէ՛ր որ զա̄մ ինչ արարեր զօրութ̄ քով , և հաստատեցեր զտիեզերս , և զարդարեցեր զպսակ լրութ̄ արարածոց քոց . և զհասարակ բաժակս զայս՝ զոր շնորհեցեր միաւորելոցս ՚ի կցորդութ̄ ամուսնութ̄ , օրհնեա՛ հոգևորական օրհնութեամբ ։

՚Ի ձայն ։

Զի օրհնեալ է անուն քո , և փառաւորեալ թագաւորութի̄ քո՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Դպիրն . Ամէն ։

Ապա քահանայն առեալ ՚ի ձեռս զհասարակ բաժակն , տայ նոցա ըմպել երիցս , նախ փեսային , և դարձեալ հարսին ։ Եւ առնու նոյն քահանայն , կալեալ զձեռանէ փեսային , և փեսայն զձեռանէ հարսին . և կնքահայրն խաչաձև տարածեալ զձեռս իւր ՚ի շեղանս՝ դնէ ՚ի վերայ գլխոց փեսային և հարսին , և պսակն զփոխանակեալն շրջանակաւ ։ Եւ եղանակէ քահանայն կամ ժողովուրդն զառաջիկայ ժամամուտս . ձայն , ա̄ կողմ ։

Պարեա՛ Եսայիա . յղացաւ կոյսն յարգանդի , և ծնաւ որդի զԷմմանուէլն ա̄ծ և մարդ , ծագումն անուն նորա . զոր մեծացուցանելով զկոյսն երանեմք ։

Աշ ժամամուտ . ձայն , վառ ։

Ս̄բ մարտիրոսք՝ որք արիաբար նահատակեցայք և պսակեցայք , բարեխօսեցէ՛ք առ Տ̄ր ողորմել անձանց մերոց ։

փառք քեզ քն տծ, առաքելոց պարծանք, մարտիրոսաց ցնծութի, որք քարոզեցին զերրորդութին համագոյականս։

Յետոյ քահանայն ձայն Դ 'ի վեր երգարանացն շարականն. և 'ի երգարանացն շարականն ձեռացն, ասէ։

Մեծացիս տէր փեսայ որպէս զաբրահամ, և օրհնեցիս որպէս զիսահակ, և բազմացիս որպէս զյակոբ, երթալով խաղաղութբ, և առնելով արդարութբ զպատուիրանսն աստուծոյ։

Եւ 'ի երգարանացն շարակն հարսին, ասէ։

Եւ դու տէր հարսն՝ մեծացիս որպէս զսառա, և ուրախացիս որպէս ռեբեկա. և բազմացիս որպէս հռաքէլ, զուարճացեալ արամբ քով, պահելով զսահմանս օրինաց, զի այսպէս հաճեցաւ տծ։

Սղմ ասէ սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Տծ մեր, որ եկեալ 'ի կանա գալիլեացւոց օրհնեցեր զհարսանիսն, օրհնեա և զծառայս քո զայսոսիկ, որք քոյով նախախնամութեամբ միաւորեցան 'ի կցորդութիւն ամուսնութեան։

Օրհնեա զմուտս և զելս սոցա. բազմացո 'ի բարութն զկեանս սոցա. և անբիծ անարատ և անխարդախ պահելով զսոսա, արժանաւորեա պսակիլ յարքայութն քում յաւիտենանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր տն խոնարհեցուցէք։

Եւ քահանայն աղօթէ։

Օրհնեսցէ զձեզ հայր և որդի և սուրբ հոգին, ամենասուրբ և համագոյ և կենդանարար երրորդութին. և շնորհեսցէ զերկարութիւն կենաց, զպտղաբերութն

ծննդոց, և զաճումն հաւատոց, և լցուսցէ զձեզ յամ բարութենց երկրի, և արժանի արասցէ խոստացեալ բարեացն, բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին և ամենայն սրբոց, ամէն:

Ապա հարսանեւորք դէպ գնացեալ աղօթս առնեն դր̃ նոցա, և աղջկանն զմեծանս առ ՚ի արձակել. և քահանայն առնէ զհա տարեալ արձակումն, ասելով զաղօթս զայս:

Ո՜ ճշմարիտ ածն մեր, որ եկաւորութբն ՚ի հարսանիսն կանա գալիլեացւոց պատուեաց զամուսնութիւն, բարեխօսութբ անարատ մօր քո, ընդ փառաւոր և գերահրաշակ առաքելոցն, ընդ ածապատիւ առաքելագործ թագաւորացն կոստանդիանոսի և հեղինեայ, սրբոց և մեծի վկային պրոկոպիոսի, և ամ ընդ, ողորմեացի և փրկեսցէ զմեզ, որպ բարի և մարդասէր և ողորմած ած։ Ողորմութիւք սրբոց հարցն մերոց՝ տէր յս քս ած մեր ողորմեա մեզ, ամէն:

Աղօթք վասն պսակ վերացուցանելոյ, յութերորդի աւուրն:

Ասէ քահանայն:

Տէ՛ր ած մեր, որ զպսակն տարւոյն օրհնեցեր, և զառաջիկայ պսակս աւանդեցեր դնել ՚ի վր այնոցիկ, որք օրինօք ամուսնութե միաւորին ընդ միմեանս, իբրև վարձ ողջախոհութե նց հատուցանելով. զի պարկեշտութբ առ ամուսնութիւն որ ՚ի քէն օրինադրեալ՝ կցորդեցան: Նոյնին օրհնեա և ՚ի վերացուցման առաջիկայ պսակացս զմիաւորեալսն ընդ միմեանս. և անխզելի պահեա զկցորդութիւնն սոցա։ Որպէս զի գոհացող լինիցին հանապազ զամենասուրբ անուանդ քո հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն ։

Զգլուխս ձեր տ՟ն խոնարհեցուցէք ։

Նմանօղ քեզ եղեալ ծառայքս քո տէ՛ր, զկարգաւորութի՟ հարսանեացն կատարելով, և զնշանակս նոցին ամփոփելով, փառս վերառաքեմք քեզ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Եւ լինի արձակումն ։

---

Կարգաւորութիւն երկրորդ ամուսնութեան ։

Օրհնէ ըստ սովորութեանն ։ Երեքսրբեան ։ Սուրբ պատշաճի ։ Եւ Քարոզ ։

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք ։

Վասն ՚ի վերուստ խաղաղութե՟ և փրկութե՟ անձանց մերոց զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վասն ս՟բյ տանս այսորիկ, և որք հաւատով, յարգութե՟, և երկիւղիւն ա՟յ մտանեն ընդ սա, զտ՟ր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վասն ծառայիս ա՟յ (այս անուն) և աղախնոյս (այս անուն) ընդ հովանեաւ թևոցն ա՟յ ծածկելոյ, և ընդ միմեանս կենցաղավարելոյ, զտ՟ր աղաչեսցուք ։ Տ՟ր ողոր՟ ։

Վասն կենակից լինելոյ սոցա բարի միաբանութե՟, զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ ա՟ծ քոյին՟ ։

Զամենասուրբուհի անարատն, զասուել. օրհ՟ ։

Քահանայն ։

Զի քեզ վայելէ ամենայն փառք պատիւ և երկրպագութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Զտէր աղաչեսցուք .

Տէր յաւիտենական, որ զբաժանեալսն ժողովեցեր ՚ի միութիւն, և եդեր ՚ի նոսա զկապ բարեկարգութե անխզելի. և ժառանգս արարեր զնոսա խոստմանն քո, ինքնին օրհնեա զծառայս քո (այս անուն), և զաղախինս քո (այս անուն), առաջնորդելով սոցա յամենայն գործս բարիս.

Զի ողորմած և մարդասէր ես ած գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

## Խաղաղութիւն ամենեցուն.

## Զգլուխս ձեր տեառն խոնարհեցուցէք.

Տէր ած մեր, որ ՚ի հեթանոսաց խօսեցար քեզ զեկեղեցի կոյս անբիծ, օրհնեա զնշանս և զնշանեալքս, և միաւորեա և պահեա զծառայքս զայսոսիկ խաղաղութեամբ և միաբանութեամբ.

Զի քեզ վայելէ ամ փառք պատիւ և երկրպագութի հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Դպրն. Ամէն.

Ապա քահանայն առնու զմատանիսն որք կան ՚ի վերայ գրակալին, տայ նախ առն զոսկի մատանին, և ասէ ցայրն.

Նշանեալ լինի ծառայս այ (այս անուն), ընդ աղախնոյս այ (այս անուն), յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. Երիցս անգամ.

Ապա տայ առ կնոջն զարծաթի մատանին, ասէ ցկինն.

Նշանեալ լինի աղախինս այ (այս անուն), ընդ ծառայիս այ (այս անուն), յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. Երիցս անգամ.

Ապա հատանեալ առնէ զհերսն խաչէ 'ի գլխոյ նորա ընդ դէմն. և դնէ զպատանին 'ի յայլ ձեռսն. ապա փոփոխէ Ուխտահայրն զպատանին ։

Ապա քահանայն ասէ ։

*Տէ՛ր՝ տէր Աստուած մեր, որ խնայես ամենեցուն՝ և նախախնամես զամենեսեան. որ գիտես զգաղտնիս մարդկան՝ և Աստ ինչ յայտնի են քեզ, քաւեա զմեղս մեր, և թող զանօրէնութիւնս քոց աղաչողաց զկամայ և զակամայ, կոչելով զսոսա յապաշխարութիւն, շնորհելով սոցա զներումն յանցանաց, քաւութիւն մեղաց, թողութիւն անօրէնութեանց ։*

*Որ գիտես զտկարութիւն մարդկայինս բնութեան՝ ստեղծողդ և արարչագործ, որ ռախաբ պոռնկին ներեցեր, և զապաշխարութիւն մաքսաւորին ընկալար, մի՛ յիշեսցես զմեղս մանկութեան և զանգիտութեան մերոյ ։ Զի եթէ զանօրէնութիւնս մեր քննես տէ՛ր տէր, և ո՞վ կարէ կալ առաջի քո. զի դու միայն ես առանց մեղաց, արդար, տէր, բազմողորմ, քաղցրագութ, և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան ։*

*Դու տէր՝ 'ի խնամս քո ընկալեալ զծառայս քո (այս անուն), և զաղախինս քո (այս անուն), միացո՛ սիրովն որ առ միմեանս. պարգևեա սոցա զդարձումն մաքսաւորին, զարտասուս պոռնկին, զխոստովանութիւն աւազակին. զի 'ի ձեռն կատարեալ ապաշխարութեան իւրեանց՝ միաբանութեամբ և խաղաղութեամբ առնելով զպատուիրանս քո, արժանաւորեսցին և երկնային արքայութեանդ քում ։*

*Զի դու ես նախախնամող ամենեցուն, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։*

*Խաղաղութիւն ամենեցուն ։*

*Զգլուխս ձեր տեառն խոնարհեցուցէք ։*

*Տէր Յիսուս Քրիստոս բանն աստուծոյ, որ բարձրացեալ 'ի վերայ պատուական և կենարար խաչին՝ պատառեցեր զձեռագիր հակառակութեան մերոյ, և յիշխանութենէ բանսարկուին*

փրկեցեր զմեզ, քաւեա՛ զանօրէնութիւնս ծառայից քոց։ Քանզի ոչ կարելով հոգալ զկարեւոր պիտոյս, և տանիլ ջեռնլոյ մարմնոյն, 'ի կցորդութենէ երկրորդ ամուսնութեան գան 'ի միասին. որպէս օրինադրեցեր 'ի ձեռն անօթոյն ընտրութեան քո առաքելոյն պօղոսի՝ ասելով վ՟ մեր ակարաց. լա՛ւ է ամուսնանալ տերամբ քան զջեռնուլ։

Ինքնին որպէս բարի և մարդասէր տէր՝ ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛, և թո՛ղ զպարտիս մեր. զի դու ես որ զհիւանդութիւնս մեր բարձեր 'ի վերայ ուսոց քոց. և ոչ ոք է անմեղ և անարատ՝ թէ և միօրեայ լիցէ կեանք ն՟ր, բայց միայն դու՝ որ զգեցար զմարմին առանց մեղաց, և զյաւիտենականն մեզ պարգեւեցեր անախտութ՟ի։

Զի դու ես ա՟ծ՝ ա՟ծ ապաշխարողաց, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր ա՟ծ՝ որ արարեր 'ի հողոյ զմարդն, և 'ի կողէ նորա շինեցեր կին, և զուգակցեցեր նմա օգնական ըստ նմա. զի ոչ հաճոյ եղև քումդ մ՟ծութ՟ե՝ լինել մարդոյն միայն 'ի վերայ երկրի։

Ինքնին և այժմ տէր՝ առաքեա՛ զձեռն քո 'ի բնակութ՟է սրբոյ քո. և պատշաճեա՛ զծառայ քո (այս անուն), և զաղախին քո (այս անուն), զի 'ի քէն պատշաճի կին առն իւրում։

Զուգաւորեա՛ զսոսա 'ի մի միտս. պսակեա՛ զսոսա 'ի մի մարմին. շնորհեա՛ սոցա պտղաբերութ՟ի որդեծնութ՟ե և աճուամբ բարի զաւակաց։

Զի քո է կարողութ՟ի, և քո է թագաւորութ՟ի և զօրութիւն և փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ առեալ քահանայն զպսակն, պսակէ զփեսայն՝ ասելով երեքս անգամ։

Պսակի ծառայս ա՟յ (այս անուն), ընդ աղախնոյս ա՟յ (այս անուն), յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այսպէս պսակէ և շնորհաց ասելով, երիցս անգամ:
Պսակի աղախինս ա̃յ (այս անուն), ընդ ծառայիս ա̃յ
այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
Ապա օրհնէ զնոսա երիցս, ասելով երիցս անգամ:
Տէր ա̃ծ մեր՝ փառօք և պատուով պսակեա զսոսա.

Յետոյ Դաւթէ · ձայն, ա̃ կողմ:

Եդեր ’ի գլուխ ն̃ց պսակս ’ի քարանց պատուականաց. Կեանս խնդրեցին ’ի քէն և ետուր նոցա ընդեր- կայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից.

Պօղոսի առաքելոյն յեփեսացւոց թղթոյն է ընթերցուած:

Եղբարք՝ գոհացարո՛ւք յա̃մ ժամ ’ի վերայ ա̃մի, յանուն տեառն մերոյ յ̃ի ք̃ի՝ հօրն և ա̃յ: Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն ք̃ի: Կանայք իւրեանց ա- րանց հնազանդ լիցին իբրև տեառն. զի այր է գլուխ կնոջ՝ ո̃պ և ք̃ս գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ: Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի ք̃ի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յա̃մի. Արք՝ սիրե- ցէք զկանայս ձեր. որպէս և ք̃ս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբութե̃բ աւազանին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր յանդիմանն փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ ա- րատ՝ կամ աղտեղութի̃, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ: Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս: որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ: Զի ո՛չ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա. որպէս և ք̃ս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ ն̃ր, ’ի մարմնոյ նորա և յոսկերաց ն̃ր: Վ̃ն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ’ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ ’ի ք̃ս և յեկեղեցի. Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կին երկնչիցի յառնէ իւրմէ:

Ալէլուիա · Ձայն , ա՛ կող՛:

*Դու տէր պահեսցես զմեզ և ապրեցուսցես յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան:*

Աւետարան որ ըստ Յովհաննու:

Յայնմ ժամանակի՝ և յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Կանա Գալիլեացւոց · և անդ էր մայրն Յսի: Կոչեցաւ և Յս և աշակերտքն նր ՚ի հարսանիսն: Եւ ՚ի պակասել գինւոյն , ասէ մայրն ցՅս · գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յս · զի՛ կայ իմ և քո՝ կին դու , չև՛ է հասեալ ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցպաշտօնեայսն · որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջի՛ք: Անդ էին Թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութե հրէից · տանէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յս · լցէ՛ք զԹակոյկսդ ջրով · և լցին զնս մինչև ՚ի վեր: Եւ ասէ ցնոսա · արդ՝ տարէ՛ք և բերէ՛ք տաճարապետին: և նոքա բերին: Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ , և ոչ գիտէր ուստի իցէ · բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն: Խօսի ընդ փեսային տաճարապետն , և ասէ · ամ մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ · և յորժամ արբենան , յայնժամ զյոռին · դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց Յս ՚ի Կանա Գալիլեացւոց , և յայտնեաց զփառս իւր · և հաւատացին ՚ի նա աշակերտքն նորա:

Սարկաւագն:

Ասասցուք ամենեքեան յամ անձնէ , և յամ մտաց մերոց ասասցուք:

Տէ՛ր ամենակալ՝ ած հարցն մերոց , աղաչեմք զքեզ լո՛ւր՝ և ողորմեա՛ մեզ:

Ողորմեա՛ մեզ ա՛ստուած ըստ մեծի ողորմութե քում , աղաչեմք զքեզ լո՛ւր՝ և ողորմեա՛:

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե , կենաց , խաղաղութե , առողջութե , փրկութե , այցելութե և քաւութե մեղաց ծառայից այ ( [illegible] ):

ժա

Ապա քահանայն 'ի ձայն ։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Ապա սաղօթս ասէ ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր Աստուած մեր, որ 'ի փրկական տնօրէնութեան քո հաճեցար պատուել զամուսնութիւնն, գնալով քո 'ի հարսանիսն 'ի Կանա Գալիլեացւոց ։

Ինքնին և այժմ զծառայս քո (այս անուն), և զաղախին քո (այս անուն), զորս հաճեցար միաւորել ընդ իրեարս, 'ի խաղաղութեան և 'ի միաբանութեան պահեա՛ ։ Պատուական արա՛ սոցա զամուսնութիւն ․ անբիծ պահեա՛ զանկողինս սոցա ։

Շնորհեա՛ սոցա կեալ անբիծ վարուք ․ և արժանի արա՛ հասանել 'ի ծերութեան պարարտութեան, կատարելով զպատուիրանս քո սուրբ սրտիւ ։

Զի դու ես Աստուած մեր՝ Աստուած ողորմութեան և փրկութեան ․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

Դպիրն ․ Ամէն ։

Սարկաւագն ․ Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, և պահեա՛ զմեզ Աստուած քոյին շնորհիւն ։

Զամ աւուրս սրբութեամբ, խաղաղութեամբ, և առանց մեղաց անցուցանել 'ի Տեառնէ խնդրեսցուք ։ Շնորհեա՛ Տէր ։

Զհրեշտակ խաղաղութեան՝ հաւատարիմ առաջնորդ, 'ի պահպանութիւն անձանց մերոց 'ի Տեառնէ խնդրեսցուք ։ Շնորհեա՛ Տէր ։

Զքաւութիւն և զթողութիւն մեղաց և յանցանաց մերոց, 'ի Տեառնէ խնդրեսցուք ։ Շնորհեա՛ Տէր ։

Զբարին և զօգտակարն անձանց մերոց և զխաղաղութիւն աշխարհի, 'ի Տեառնէ խնդրեսցուք ։ Շնորհեա՛ Տէր ։

Զմնացուած ժամանակս կենաց մերոց խաղաղութ՟ և ապաշխարութ՟ անցուցանել, 'ի տեառնէ խնդրեսցուք։ Շնորհեա տէր։

Զքրիստոնէական կատարումն կենաց մերոց անվիշտս անամօթս և խաղաղականս, և բարի պատասխանատուութեամբ կալ առաջի ահաւոր բեմին ք՟ի, 'ի տեառնէ խնդրեսցուք։ Շնորհեա տէր։

Զմիութի՟ հաւատոյ և զհաղորդութի՟ հոգւոյն սրբոյ խնդրելով, զմեզ և զմիմեանս և զամ՟ կեանս մեր ք՟ի ա՟յ յանձն արասցուք։

Դպիրն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Քահանայն 'ի ձայն։

Եւ արժանի արա զմեզ տէր անդատապարտ համարձակութ՟ կոչել զքեզ հայր՝ զերկնաւորդ ա՟ծ, և ասել։

Դպիրն. Հայր մեր որ յերկինս, եւն։

Քահանայն 'ի ձայն։

Զի քո է արքայութի՟ և զօրութի՟ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դպիրն. Ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր տ՟ն խոնարհեցուցէք։

Ապա մատուցանէ հասարակ բաժակն, և օրհնէ զայն քահանայն, և ասէ զաղօթս զայս։

Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն։

Ա՟ծ՝ որ զամ՟ ինչ արարեր զօրութ՟ քով, և հաստատեցեր զտիեզերս, և զարդարեցեր զպսակ լրութ՟ արարածոց քոց, և զբաժակս զայս հասարակ՝ զոր շնորհեցեր միաւորելոցս 'ի կցորդութիւն ամուսնութեան, օրհնեա հոգևոր օրհնութեամբ։

'Ի ձայն ։

Զի օրհնեալ է անուն քո, և փառաւորեալ թագաւորութիւն քո Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դասն · Ամէն ։

Ապա առեալ քահանայն 'ի ձեռս զհասարակ բաժակն՝ տայ նոցա ըմպել երիցս, նախ առն և դարձեալ կնոջ · և վաղվաղակի առեալ զնոսա քահանայն, և շրջանակաձև պտուտեալ երգէ · ձայն, ա կողմ ։

Պարեա՛ Եսայիաս · յղացաւ կոյսն յարգանդի, և ծնաւ որդի զԷմմանուէլն Աստուած և մարդ, ծագումն անուն նորա · զոր մեծացուցանելով զկոյսն երանեմք ։

Այլ ժամամուտ · ձայն, վառ ։

Ո՛վ մարտիրոսք որք արիաբար նահատակեցայք և պսակեցայք, բարեխօսեցէ՛ք առ Տէր ողորմել անձանց մերոց ։

Յետոյ բարձեալ քահանայն զպսակն · և 'ի բառնալն զպսակն փեսայէն, ասէ ։

Մեծացի՛ր դու փեսայ որպէս զԱբրահամ, և օրհնեցի՛ր որպէս զԻսահակ, և բազմացի՛ր որպէս զՅակոբ, երթալով խաղաղութեամբ, և առնելով արդարութեամբ զպատուիրանս Աստուծոյ ։

Եւ բարձեալ զպսակն հարսին, ասէ ։

Եւ դու ով հարսն՝ մեծացի՛ր որպէս զՍառա, և ուրախացի՛ր որպէս զՌեբեկա, և բազմացի՛ր որպէս զՀռաքէլ, զուարճացեալ արեամբ քով, պահելով զսահմանս օրինաց, զի այսպէս հաճեցաւ Աստուած ։

Ապա ասէ զաղօթս ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր Աստուած մեր, որ եկեալ 'ի Կանա Գալիլեացւոց օրհնեցեր զհարսանիսն, օրհնեա՛ և զծառայս քո զայսոսիկ, որք քով նախախնամութեամբ միաւորեցան 'ի կցորդութիւն ամուսնութեան ։

Օրհնեա՛ զմուտս և զելս զայս, և պահելով զսոսա ամբիծս անարատս և անխարդախս, արժանաւորեա՛ պսակել յարքայութեան քում յաւիտենանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր տ՟ն խոնարհեցուցէք։

Եւ քահանայն ասէ։

Օրհնեսցէ զձեզ հայր և որդի և սուրբ հոգին, ամենասուրբ և համագոյ և կենդանարար երրորդութիւն միա՟ծութիւն և թագաւորութիւն, և շնորհեսցէ զերկարութիւն կենաց, զպտղաբերութիւն ծննդոց, և զաճումն հաւատոց. և լցուսցէ զձեզ յա՟մ բարութեանց երկրի, և արժանի արասցէ խոստացեալ բարեացն, բարեխօսութեամբ սրբուհւոյ ա՟ծածնին, և ա՟մ սրբոց, ամէն։

Ապա հարսնևորք մերձ առ նոսա գնացեալ՝ աղօթս առնեն վասն նոցա, և ողջունեն զփեսայն առ 'ի արձակել. և քահանայն առնէ հրաժարեալ արձակումն, ասելով զաղօթս զայս։

Քրիստոս ա՟ծն մեր, որ եկաւորութեամբն 'ի հարսանիսն կանայ գալիլեացւոց պատուեաց զամուսնութիւն, բարեխօսութեամբ անարատ մօր քո, սրբոց փառաւոր և գերահռչակ առաքելոցն, սրբոց ա՟ծապսակ առաքելագործ թագաւորացն կոստանդիանոսի և հեղինեայ, սրբոյ և մեծի վկային պրոկոպիոսի, և ա՟մ սրբոց, ողորմեսցի և փրկեսցէ զմեզ, որ բարի և մարդասէր և ողորմած ա՟ծ. Աղօթիւք սրբոց հարցն մերոց՝ տէր յ՟ս ք՟ս ա՟ծ մեր ողորմեա մեզ, ամէն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԻՒՂՈՅՆ ՀԻՒԱՆԴԱՑ.

Ժողովին եօթն քահանայք, և լցեալ ձէթ անօթով 'ի պղնձոյ ծառոյ 'ի կանթեղ, դնեն 'ի սուրբ ամանի 'ի մէջ ցորենոյ, և եօթն պատրոյգ առնեն ցցեն 'ի ցորենն. Զգեստաւորին քահանայքն, և առնուն 'ի ձեռս մոմեղէնս և լուցանեն. նոյնպէս և հիւանդն առնու 'ի ձեռս լուցեալ մոմեղէն.

Եւ ապա քահանայն ասէ.

*Օրհնեալ է Տր Ած մեր յամ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.*

Եւ սկսանին. *Երեքսրբեան. Ամենասուրբ երրորդութի. Հայր մեր, զի քո է արքայութի. Տր ողորմեա, ժբ. Եկայք երկրպագեսցուք, գ. Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց.* Չփոխն ըստ ձայն ասա.

Եւ ապա. *Ած մեր և Տր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ տեառն.*

Եւ ասէ. *Մեղաւորք և թշուառքս դիմեսցուք այժմ առ Աստուածածինն՝ և անկցուք առաջի նորա, զղջմամբ աղաղակելով 'ի խորոց սրտէ. տիրուհի՝ փութացիր օգնել մեզ գթութ, կորեաք 'ի բազմութէ յանցանաց մերոց, մի՛ ունայն դարձուցանէր զծառայս քո. զի դու միայն ես յոյս մեր.*

*Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.*

*Մեք անարժանքս ոչ երբէք լռեսցուք 'ի խօսելոյ զզօրութի քո. զի եթէ դու ոչ պաշտպան լինէիր մեզ*

բարեխօսութեամբ քով, ով փրկէր զմեզ և զերծուցանէր ՚ի բազմադիմի արկածից. ոչ ՚ի բաց հեռանամք ՚ի քէն, զի դու ես որ յամենայն ժամ փրկես զծառայս քո ՚ի զանազան վտանգից:

Ապա փոխ փառաց. Ողորմեա մեզ Ած ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ լուր և ողորմեա:

Եւ ես աղաչեսցուք վասն ողորմութեան կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան, քաւութեան և թողութեան մեղաց, ծառայիս Այ (այս անուն):

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք:

Քահանայն ՚ի յայն.

Ողորմած և մարդասէր ես Ած գթած, և քեզ փառս վերառաքեմք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Դպիրն. Ամէն:

Ալէլուիա. Ձայն, ըկ.

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմանէր զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատէր զիս:

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ:

Եւ ապա փառաւորեա. Ողորմեա ինձ Տր: Փառք Հօր: Տէր ողորմեա մեզ: Եւ այժմ և միշտ և: Որոց մեզ զդուռն բարեգթութեան: Ապա ասէ. Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմ. փոխն ըստ ձայն:

Եւ ապա կանոն շարականաց, զոր արարեալ է Ներսէսին:

Օրհնութիւն առաջին. Ձայն, Է. ըստ եղանակին որ երգի,

Կարմիր ծովուն անդունդ.

Որ ձիթով գթութեան քո տէր զուարթ առնես միշտ զհոգիս միանգամայն և զմարմինս մարդկան, և ձիթով պահես զհաւատացեալս. ինքնին և այժմ գթա ՚ի մատուցեալսն առ քեզ ձիթով:

Լի է տր ողորմութբ քով ամ երկիր . ուստի ամենայն ազնիւ ձիթով քո օծեալքս այսօր , զողորմութի քո որ 'ի վեր է քան զմիտս՝ հաւատով հայցեմք 'ի քէն տալ մեզ .

Ո՛վ մարդասէր՝ առաքելոց քոց կարեկցաբար պատուիրեցեր օծանել զհիւանդացեալ ծառայքս քո , ամ կնքելոցս օծմամբ ձիթոյ՝ միջնորդութբ նոցա ողորմեա .

## Աստուածածնէ .

Որ դու միայն հարստացար սրբուհի ստանալով զանսահման ծովն խաղաղութե , մշտնջենաւոր բարեխօսութբ քո առ ած , զերծո զծառայս քո 'ի հիւանդութեց և 'ի նեղութեց , որպէս զի անդադար մեծացուսցէ զքեզ .

## Օրհնութիւն , Գ . Ընծայցի 'ի քեզ .

Դու միայն գոլով սքանչելի և քաւիչ յանցանաց հաւատացելոց քո , հիւանդիս այս տուր զշնորհս բժշկութեան 'ի վերուստ .

Շիւղ ձիթենւոյ երբեմն առ հանդարտութի ջրհեղեղին ամենայն քո ակնարկութբ ցուցեր տէր , կեցո ողորմութեամբ քով զվշտակիրս զայս .

Անծայրին ղամպարաւ լուսոյ ողորմութբ քով քո , զուարթացո այժմ զփութացեալս յօծումն ձիթոյ քո հաւատով .

## Աստուածածնէ .

Հայեա՛ց քաղցրութբ 'ի վերուստ ով մայր արարչին ամի , և փարատեա զդառն վշտակրութի հիւանդիս՝ քոյին բարեխօսութբ .

## Կիւրեղի . Չորսն , ԺԷ . Հովուական սրնկաց .

Անծայրին ողորմութի քո է որպէս զգետ , և բազում կարեկցութի քո ոչ անդունդ գըթած , ցոյց զամենայն հոսանս ողորմութե քո , և բժշկեա զամենեսեան .

Բղխեա զաղբիւրս սքանչելեաց քոց աննախանձաբար , և լուա զամենեսեան . քանզի առ քեզ միշտ դիմելով ջերմագին սրտիւ խնդրեմք զշնորհս .

## Աղ․ հանգստ․, Է․ Որ բարձրացար 'ի խաչին կամաւորաբար ։

Բժիշկ և օգնական վշտացելոց, փրկիչ և ազատիչ ցաւագնելոց, Ինքնին տէ՛սբօդա և տէր բոլորից քո̃, պարգևեա բժշկութի̃ ցաւագնեալ ծառայի քո․ գթա́ և ողորմեա́ բազմամեղիս այս, և զերծո́ 'ի յանցանաց․ որպէս զի փառաւորեսցէ զա̃ծային քո զօրութի̃ն ։

## Սրէ․ Է․ Ամբարձեալ զքեզ տեսանելով ։

Որ անապական մնում ես փրկի́չ՝ թափեալ շնորհիւ սրբեցեր զաշխարհս, գթա́ ողորմեա́ օծանողիս զվէրս մարմնոյս ա̃ծային հաւատով ։

Զուարթութե̃ կնքոյ քո ողորմուե̃, այժմ զզգայութի̃ս քոյոց ծառայից կնքեալ տէ՛սբօդա, անմատչելի և անմուտ արա ամենից ներհական զօրութե̃ց ։

Որ հրամայեցեր հիւանդացելոց կոչել զա̃ծային քահանայս քո մա́րդասէր, և նոցին խնդրուածովք և օծմամբ ձիթոյ քո փրկիլ, փրկեա́ ողորմութեամբ քով զախտացեալն ։

## Աստուածածնի ։

Ծնածին միշտ կոյս ամենասրբուհի, ապաւէն հաստատուն և պահապան, նաւահանգիստ և պարիսպ, սանդուղք և աշտարակ, ողորմեա́, գթա́, որ առ քեզ միայն ապաւինեցաւ ։

## Սրէ․ Ե․ Դու տէր իմ լոյս ։

Անսահման ծով ողորմուե̃ գոլով բարերար և ողորմած, ողորմեա́ հիւանդիս այսմիկ ա̃ծային քո ողորմութեամբ որպէս բարեգութ ։

Զհոգիս մեր և զմարմինս 'ի վերուստ ա̃ծային տպաւորութե̃ կնքոյ քո սրբեալ անճառապէս, ձեռամբ քով զամենեսին բժշկեա́ ։

Անպատում գթութե̃ քում՝ ով գերագոյն բարերար տէր, որ ընկալար զօծումն իւղոյն 'ի ձեռաց պոռնկին, գթա՛ 'ի ծառայս քո :

Աստուածածնէ :

Ամենօրհնեալ անարատ տաճար բանի տիրուհի, ողորմեա՛ օծելոցն ա̃ծային ձիթով, և փրկեա՛ զծառայս քո :

## Տնէ . Զ̃ . Օրհնեցից քեզ ձայնիւ .

Բանիւ քո 'ի ձեռն ձիթոյ ցուցեր մարդասէր զօծումն 'ի թագաւորս, և 'ի քահանայապետս զնոյն կատարեցեր . և զախտացեալս զայս փրկեա՛ կնքով քո ո̃վ բարեգութ :

Որ մերձեցին դժնդակ դեղք սմա, որոց զգայութիւնք դրոշմին ա̃ծային օծմամբ ով փրկիչ . այլ 'ի ծածկոյթ փառաց քոց շուրջ փակեալ պարսպեա՛ զսա :

Կարկառեա՛ զձեռն քո 'ի բարձանց մարդասէր փրկիչ . և զձէթ քո սրբեալ տուր ծառայի քում յառողջութիւն, և 'ի փարատումն ա̃մ ցաւոց :

Աստուածածնէ :

Որ երևեցար 'ի տան ա̃յ քո պտղալից ձիթենի մայր ստեղծողին . և քև լի ցուցաւ աշխարհ ողորմութե̃ . զախտացեալս զայս առողջացո՛ քոյին բարեխօսութե̃ :

Կոնդակ . յունարէն Կոնտակիոն :

## Ձայն . Է̃ . Զվերինսն խնդրելով :

Որ աղբիւրդ ես ողորմութե̃ գերագոյն բարի, զանկեալս ջերմ հաւատով առաջի անպատում ողորմութե̃ քո՝ զերծո՛ յա̃մ վատթարուե̃ . և բառնալով զախտս ն̃ց, պարգևեա՛ բարեգութ զա̃ծային շնորհս 'ի վերուստ :

## Տնէ . Է . Ի ննջեցելն աբրահամեանք :

Դու միայն ա̃ծ փրկիչ, որ ողորմութե̃ և գթութե̃ քո բժշկես զախտս հոգւոց, և զխորտակումն մարմնոց ամենեցուն, ինքնին դարմանելով բժշկեա՛ զհիւանդացեալն :

Որ օծանես ձիթով պարարտութե՛ զգլուխս ա՟մցուն, տուր սմա տէր ք՟ս զցնծութի՛ ուրախութե՛ բազում ողոր-մութբ՟ քով, որ հայցէ զշնորհս ազատութե՛ քո :

Կնիք քո փրկիչ է սուսեր ընդդէմ դիւաց, և հուր ծախիչ ախտից հոգւոց աղօթիւք քահանայից · վ՟ս որոյ հաւատով օրհնեմք զքեզ մեք բժշկեալքս :

Աստուածածնէ :

Դու մայր ա՟յ, ա՟ծավայելուչ կերպիւ յարգանդի կրեցեր զկրօղն ա՟մի, որ անճառաբար մարմնացաւ 'ի քէն · բարեխօսութբ՟ քո քաղցրացո՛ զսիրտ նր՟ 'ի վերայ հիւանդիս՝ աղաչեմք :

## Ձյն · Է · Ձեռս տարածեալ :

Ամենեցուն ողորմեա՛ փրկիչ ըստ մեծի և ա՟ծային քո ողորմութե՛դ · վասն որոյ ժողովեցաք ամենեքեան նշանակելով զգթութիւնս քո, 'ի ձեռն օծման ձիթոյ հաւատով զծառայս քո · որում այց արա :

Հասանօք ողորմութե՛ քո ք՟ս, և օծմամբ քահանայից քոց մաքրեա՛ որպէս բարեգութ տէր · և բարձ զեր-կունս զախտս և զյարուցմունս ցաւոց տառապելոյս 'ի բնութե՛ վշտաց · որպէս զի զերծեալ փառաւորեսցէ զքեզ գոհութեամբ :

Ո՛վ տնօրէնօղդ զձէթս զայս արարեալ մեզ նշանակ 'ի վերուստ ա՟ծային քո ողորմութե՛ և ցնծութե՛, մի՛ հեռի առներ զողորմութիւնս քո, և մի՛ անտես առներ որ հաւա-տով միշտ գոչէ, օրհնեցէ՛ք ա՟մ գործք տեառն զտէր :

Աստուածածնէ :

Բնութիւնս մեր փառաւորեցաւ ո՟չ պսակաւ ա՟ծային ծննդեամբ քով սրբուհի, որ 'ի բաց վանէ զբանակս թշնամեաց, և յաղթէ նոցա իսպառ · վասն որոյ մեք պսակեալք մեծապայծառ ուրախութբ՟ շնորհաց քոց, զքեզ գովաբանեմք ամենօրհնեալ տիրուհի :

## ՆԴ · Թ · Վէմ հատեալ 'ի լեռնէ առանց ձեռին։

Ակնարկեալ յերկնից գլթած, ցո՛յց զողորմութի՛ւն քո ամենեցուն, տո՛ւր այժմ զօգնութի՛ւն քո և զզօրութիւն քո մատուցելոյս առ քեզ՝ 'ի ձեռն ա̃ծային օծման քահանայից քոց մա՛րդասէր։

Տեսցուք ամենաբարի փրկիչ զցնծութի՛ւն ա̃ծային ձիթոյս, զոր ա̃ծային կամօք քո ընկալար 'ի քեզ առաւել քան զընկերս քո, և ա̃ծային մկրտութե̃ կցորդելոցն տպաւորեալ պարգևեցեր։

Գթա՛ ողորմեա՛ փրկիչ, փրկեա՛ 'ի դժնդակ ցաւոց, ազատեա՛ 'ի նետից չարին զծառայս քո, զհոգիս և զմարմինս մե̃, ո̃վ ողորմած ա̃ր բժշկեալ ա̃ծային շնորհիւդ։

### Աստուածածնի։

Զգովութիւն և զպաղատանս քոյոց ծառայից ո՛վ կոյս ընկալեալ, աղաչանօք քո փրկեա՛ 'ի վտանգաւոր ախտից և ցաւոց զսա՝ որ 'ի ձեռն մեր դիմէ յա̃ծային խնամս քո սրբուհի։

Յետոյ ասէ · Արժան է ճշմարտապէս երանել զքեզ, եւ։

Գերագոյն քերովբէից, եւ · Առաքելական, որ կոչի յունարէն Էքսափօսթիլարիօն, ըստ եղանակին, Այց արար մեզ։

Ողորմութե̃ բարերար՝ հայեա՛ց աչօք քո յաղաչանս մեր ժողովելոցս այսօր 'ի տաճար ս̃բ քո, և օ̃ծ ա̃ծային ձիթով զհիւանդ ծառայ քո։

### Ձայն · Է̃ · Տուր նշան։

Տուր զշնորհս քո ո՛վ անոխակալ մարդասէր 'ի ձեռս առաքելոց քոց՝ բժշկել ձիթով սրբով քով զա̃մ հարուածս և զցաւս · վասն որոյ և այժմ զմատուցեալս առ քեզ հաւատով՝ սրբեա՛ ձիթով քո ա̃ր՝ ողորմեա՛ ապաքինեա՛ յա̃մ ցաւոց, և անապական փափկութե̃ քում արժանաւորեա՛։

Հայեա՛ց յերկնից անհասանելի որպէս բարեգութ, անտեսանելի ձեռամբ քո կնքելով զզգայութիւնս սորա ա̃ծային ձիթով քով՝ որ առ քեզ դիմէ հաւատով,

և խնդրէ զթողութիւն յանցանաց. և պարգևեա զբժշկութիւն հոգւոյ և մարմնոյ սորա. զի փափագանօք փառաւորես-ցէ զքեզ, մեծացուցանելով զկարողութիւն քո։

Օծմամբ ձիթոյ քո մարդասէր՝ և շօշափմամբ քահա-նայից սրբեա՛ 'ի վերուստ զծառայս քո, փրկեա՛ 'ի հիւանդութեանց, լուա՛ և մաքրեա՛ զաղտն հոգւոց փրկիչ. և ազատեա՛ յամենայն գայթակղութեանց, թեթևացո՛ զցաւս, հեռացո՛ զպատահարս, և սպառեա՛ զնեղութիւնս որպէս գթած և բարեգութ։ Փառք և միշտ։

Աստուածածնէ։

Զքեզ գերամաքուր տաճար արքային աղաչեմ ա-մենօրհնեալ, սրբեա՛ զմիտս իմ աղտեղեալ յամենայն մեղաց, և արա՛ հանգստական բնակարան ամենապետական երրորդու-թեան. որպէս զի զերծանելով անպիտան ծառայս, մեծացու-ցից զկարողութիւն և զանհամար շնորհս քո։

Սուրբ Աստուած. Ամենասուրբ Երրորդութիւն. Հայր մեր, զի քո է արքայութիւն։

Քահանայ։

Արագահաս օգնութիւն դու միայն գոլով Քրիստոս, ցո՛յց զարագահաս այցելութիւն քո 'ի վերուստ ախտացեալ ծա-ռայից քոց, 'ի հիւանդութեանց փրկեա, և 'ի դառն վշտաց յարո՛, բարեխօսութեամբ Աստուածածնին. զի անդադար օրհնես-ցեն և փառաւորեսցեն զքեզ միայն մարդասէր։

Եւ ապա [illegible], [illegible]։

Խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոց եկեղեցեացն ամենայն, և ամենեցուն միութեան, զՏէր աղա-չեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն սրբոյ տանս այսորիկ, և որ հաւատով, և յարգութեամբ, և երկիւղիւն Աստուծոյ մտանեն ընդ սա, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն օրհնելոյ իւղոյս այսորիկ զօրութ̅բ և ներգործութ̅բ և եկաւորութ̅բ Հոգւոյն սրբոյ 'ի վերայ սորա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն ծառայիս ա̅յ (այս անուն), և այցելութ̅ն սորա առ 'ի յա̅յ, և իջանելոյ 'ի վերայ սորա շնորհաց Հոգւոյն սրբոյ, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն փրկելոյ սորա և մեր յա̅մ նեղութ̅է, 'ի բարկութենէ, 'ի վտանգից, և 'ի բռնութ̅է, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ ա̅ծ քոյին"։

Զամենասրբուհի անարատն, զառաւել օրհ"։

Ապա ասէ աւագերէցն զաղօթս ձիթոյն առաջի կանթեղին։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր՝ որ ողորմութ̅բ և գթութ̅բ քով բժշկես զբեկութս հոգւոց և մարմնոց մերոց, դու տ̅ր սրբեա զիւղս զայս, զի օծելոցն 'ի սմանէ եղիցի բժշկութ̅ի և զերծութն յա̅մ ախտից և ապականութ̅եց մարմնոյ և հոգւոյ, և յա̅մ չարէ։ Զի և 'ի սմա փառաւորեսցի ամենասուրբ անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ մինչ իւրաքանչիւր քահանայք մի ըստ միոյ [illegible] [illegible]րոյն եկեալ ասեն զաղօթս 'ի վերայ իւղոյն, եղանակեն ձայնաւորս այսոքիկ. ձայն, դ։

Բարգաւաճաս օգնութ̅ի դու միայն գոլով ք̅ս, ցոյց զբարգաւաճաս այցելութ̅ի քո 'ի վերուստ ախտացեալ ծառայից քոց, 'ի հիւանդութ̅եց փրկեա, և 'ի դառն վշտաց յարո, բարեխօսութ̅բ ա̅ծածնին. զի անդադար օրհնեսցեն և փառաւորեսցեն զքեզ միայն մարդասէր։

Կուրացեալ գոլով աչք հոգւոյս՝ առ քեզ դիմեմ ք̅ս որպէս կոյրն 'ի ծնէ, զղջմամբ աղաղակելով. քաւեա միայն անոխակալ։

Զանձն իմ զնաւաւն մեղօք և վատթար գործովք
չարաչար անդամալոյծ եղեալ , Տէր յարո ածային վե-
րակացութեդ քո , որպէս երբեմն յարուցեր զանդամա-
լոյծն , զի փրկեալ աղաղակեցից ․ ով գթած Քս տուիչ
բժշկութեան ։

Որ զպաշտօն աւետարանին ընկալար որպէս աշակերտ
տեառն ով արդար , ոչ վկայ ունիս զանշարժութի ,
որպէս տեառնեղբայր զհամարձակութի , որպէս քահա-
նայապետ զաղօթանուէր հայցուածս , բարեխօսեա առ
Քս ած փրկել զանձինս մեր ։

Բանն ած միածինն հօր եկեալ առ մեզ 'ի վախճան
աւուրցս յանկոչ ածային , նախ զքեզ կացոյց հովիւ և
վարդապետ երուսաղէմի , և հաւատարիմ տնտես հո-
գևորական խորհրդոցն ․ վասն որոյ պատուեմք զքեզ
ամենեքեան որպէս առաքեալ ։

Ձայն ․ Է ։

'Ի մեռայ քահանայագործ ցուցար ով սուրբ Նիկո
ղայոս ․ քանզի զաւետարանն Քի կատարելով եդեր
զանձն քո 'ի վերայ ժողովրդեան քո , փրկեցեր զան-
պարտսն 'ի մահուանէ ․ վն այսորիկ ստացար զօրութի ,
որպէս խորհրդածու շնորհացն այ ։

Եգիտ զքեզ տիեզերս մեծ օգնական 'ի վտանգս ով
պսակաւորդ դեմետրիոս , որ յաղթեցեր հեթանոսաց ․
արդ՝ որ քաջալերելով զնեստոր մարտիրոս՝ կործանեցեր
զամբարտաւանն լիէոս , բարեխօսեա առ Քս ած պար-
գևել մեզ զմեծ ողորմութիւնն ։

Ձայն ․ Է ։

Ով սուրբ պսակաւոր և բժիշկ պանդալէոն՝ բարե-
խօսեա առ ողորմածն ած , զի շնորհեսցէ անձանց մե-
րոց զթողութի յանցանաց ։

Ձայն ․ Է , կողմ ։

Սուրբք անարծաթք և սքանչելագործք կոզմաս և
դամիանոս՝ այց արարէք հիւանդութեց մերոց ․ ձրի
առիք , ձրի տուք մեզ ։

Ձայն · Է ։

Օ մեծութիդ քո՝ ով կոյս յովհաննէս ո՛ պատմեսցէ. քանզի բղխես սքանչելիս, և աղբերացուցանես բժշկութիւնս, և բարեխօսես վասն անձանց մերոց, որպէս ծառան և սիրելի քրի ։

Ձայն · Է ։

Անդադար բարեխօս, և աղբիւր ողորմութե, պարիսպ անյաղթելի, և ապաւէն աշխարհի, ուժգին գոչեմք առ քեզ ածածին տիրուհի, հա՛ս առ մեզ և զերծ՛ ՚ի վտանգից. զի դու միայն ես արագահաս օգնական ։

Մեսեդի · Ձայն · Ա ։

Եղիցի ողորմութի քո տր ՚ի վր մեր, ոպ յուսացաք ՚ի քեզ ։ Ցնծացէք արդարք ՚ի տէր, ուղղոց վայելէ օրհնութի ։

Յակոբայ առաքելոյն ՚ի կաթուղիկեայց թղթոյն է ընթերցուածս ։

Եղբարք՝ օրինակ առէ՛ք չարչարանաց և երկայնմտութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն տեառն ։ Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութի յոբայ լուարուք՝ և զկատարումն տն տեսէք. զի բազմագութ է տր՝ և ողորմած ։ Յառաջ քան զամ ինչ եղբա՛րք իմ, մի՛ երդնուցուք՝ մի՛ յերկինս՝ մի՛ յերկիր՝ մի՛ յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն այո, և ոչն՝ ոչ. զի մի՛ ՚ի կեղծաւորութի ինչ անկանիցիք ։ Աչտանայցէ ոք ՚ի ձէնջ, յաղօ՛թս կացցէ. բերկրեսցի՛ ոք, սաղմո՛ս ասասցէ ։ Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցէ՛ զերիցունս եկեղեցւոյն՝ և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն տեառն. և աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, և յարուսցէ զնա տր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա ։ Խոստովա՛ն եղերուք միմեանց զմեղս, և աղօ՛թս արարէք ՚ի վերայ միմեանց՝ ոպ զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն ։

## Ընթերցա . Չորս , ԺԿ .

Զողորմութիւն և զիրաւունս օրհնեցից զքեզ տէր . սաղմոս ասացից , և՛ի միտ առից ։

### Սուրբ աւետարանն որ ըստ ղուկասու ։

Յայնմ ժամանակի , յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և ասէր . վարդապետ՝ զինչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից ։ Եւ նա ասէ ցնա . յօրէնս զինչ գրեալ է , որպէս ընթեռնուս ։ Նա պատասխանի ետ և ասէ . սիրեսցես զտէր ա͞ծ քո յ͞ամ սրտէ քումմէ , և յ͞ամ անձնէ քումմէ , և յ͞ամ զօրութէ քումմէ , և յ͞ամ՝ մտաց քոց . և զընկեր քո իբրև զանձն քո ։ Եւ ասէ ցնա . ուղիղ ետուր զպատասխանիդ , զայդ արա՝ և կեցցես ։ Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցյ͞ս . և ո՞վ է իմ ընկեր ։ Պատասխանի ետ յ͞ս և ասէ . այր մի իջանէր յերուսաղեմէ յերիքով , և անկաւ ՚ի ձեռս աւազակաց , որք մերկացուցին զնա՝ և վէրս ՚ի վերայ եդին , թողին կիսամահ և գնացին ։ Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ , և տեսեալ զնա՝ զանց արար ։ Նոյնպէս և ղևտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես և զանց արար ։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ , և տեսեալ զնա՝ գթացաւ ։ Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա , արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի . և եդեալ ՚ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ՚ի պանդոկի մի , և դարմանեաց զնա ։ Եւ ՚ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի , հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս՝ և ասէ . դարմա՛ն տար դմա , և զոր ինչ ծախեսցես ՚ի դա՝ ՚ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ ։ Արդ՝ ո՞ յերեցունց ՚ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ՚ի ձեռս աւազակաց ։ Եւ նա ասէ . որ արար զողորմութի՛ն ՚ի վերայ ն͞ր ։ ասէ ցնա յ͞ս . Երթ և դու արա՛ նոյնպէս ։

ժգ

Սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ , լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութ՟ե , կենաց , խաղաղութ՟ե , առողջութ՟ե , փրկութ՟ե , այցելութ՟ե , քաւութ՟ե և թողութ՟ե մեղաց , ծառայիս ա՟յ (ասա անուն) ։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ , զտէր աղաչեսցուք ։

Քահանայն ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ ասէ զաղօթս ։

Զտէր աղաչեսցուք ։

Ամենակալդ , անվախճան , ս՟բդ ս՟բց , որ զմիածին որդիդ քո առաքեցեր բժշկել զա՟մ ախտս հոգւոց և մարմնոց մերոց , առաքեա՛ զս՟բ հոգիդ քո , և սրբեա՛ զեւղս զայս · արա՛ զսա օծելոյ ծառայի քո (ասա անուն) 'ի կատարեալ ազատութ՟ի յա՟մ մեղաց , և 'ի ժառանգութ՟ի արքայութեան երկնից ։

Գիտելի է զի ոմանք զաղօթս զայս մինչև ցայս ամէն , և աւարտեն ասելով ։ Զի քո է ողորմել և կեցուցանել զմեզ ք՟ս ա՟ծ մեր , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ ։ Եւ ոմանք մինչև ցվախճան ամէն , յարելով ընդ նմին և զայս ։

Քանզի դու ես ա՟ծ մեծ և սքանչելի , որ պահես զուխտ և զողորմութ՟իս քո սիրելեաց քոց , և տաս զթողութ՟ի մեղաց 'ի ձեռն սրբոյ որդւոյ քո յ՟սի ք՟սի , որ վերստին ծնաւ զմեզ ազատելով 'ի մեղաց ։

Որ լուսաւորես զկոյրս , և յարուցանես զխորտակեալս · որ սիրես զարդարս , և ողորմիս մեղաւորաց ·

որ վերածեր զմեզ 'ի խաւարէ և'ի ստուերաց մահու , ասելով ցկապեալս ելէք , և որք 'ի խաւարի՝ յայտնեցարուք ։ Վասնզի ծագեաց 'ի սիրտս մեր լոյս գիտութեան առ 'ի ճանաչել զմիածին որդի քո , որ վասն մեր 'ի յերկրի երևեցաւ , և ընդ մարդկան շրջեցաւ ․ և որք ընկալան զնա , ետ նոցա իշխանութիւն որդիս այ լինել ։

Դու տր՝ փրկական աւազանին վերստին ծննդեամբն զորդեգրութիւն մեզ շնորհեցեր , և ազատեցեր զմեզ 'ի բռնութենէ բանսարկուին ։ Վասնզի ոչ հաճեցար արեամբ ուխտի զուարակացն սրբել զմեզ , այլ իւղով սրբով ետուր զնշան խաչի որդւոց քո , զի եղիցուք հօտ քոյ , թագաւորութիւն , քահանայութիւն , ազգ սուրբ , մաքրեալ ջրով , և սրբեալ հոգւովդ քով սրբով ։

Նոյնին տէր՝ տուր շնորհս պաշտօնէիս այսմիկ , որ ետուր մովսէսի ծառայի քո , և սամուէլի սիրելւոյ քո , և յովհաննու ընտրելոյ քո , և ամենեցուն որ հաճոյ եղեն քեզ ազգէ յազգ ։

Եւ որպէս ետուր նոցա , տուր և մեզ պաշտօնէիցս նորոյ ուխտի լինել սպասաւոր այսմ իւղոյ , զոր պատուեաց միածին որդի քո պատուական արեամբ իւրով ։ Զի 'ի բաց մերկացեալ զաշխարհական ցանկութիւն՝ մեռցուք մեղացն , և կեցցուք արդարութեան , զգեցեալք զտէրն մեր յս քս 'ի ձեռն օծման սուրբ իւղոյս ։

Եղիցի տէր իւղս այս՝ իւղ ցնծութեան ․ իւղ սրբութեան ․ զգեստ թագաւորական ․ զրահ զօրութեան ․ ամ սատանայական ներգործութեան հերքումն ․ կնիք աննենգելի ․ ցնծութիւն սրտի ․ ուրախութիւն յաւիտենական ։ Զի որք օծցին 'ի սմանէ՝ եղիցի նոցա որպէս դրոշմ օծութեան վերստին ծննդեան ․ եղիցին նոքա ահաւոր ներհակաց ․ և պայծառասցին 'ի պայծառութեան սրբոց քոց առանց աղտոյ և ադեղութեան ․ և ժամանեսցին 'ի յաւիտենական հանգիստն ․ և ընկալցին զբրաբիոնն վերին կոչման ։

Վասնզի քո է ողորմել և կեցուցանել զմեզ տէր ած մեր , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ զկնի աղօթիցն առնու քահանայն ՚ի ձեռն ձիթոյն և օծանէ զհիւանդն, ասելով զաղօթս զայս ։

Հայր սուրբ՝ բժիշկ հոգւոց և մարմնոց, որ առաքեցեր զմիածին որդի քո բժշկել զամենայն հիւանդութիւնս մեր, և ազատել ՚ի մահուանէ, բժշկեա և զծառայս քո (այս անուն) ՚ի մարմնական և ՚ի հոգեկան հիւանդութենէ, և կենդանագործեա զսա շնորհիւ Քրիստոսի քո, բարեխօսութեամբ տիրուհւոյն մերոյ Աստուածածնի և միշտ կուսին Մարիամու, զօրութեամբ պատուական և կենարար խաչին, վերակացութեամբ գերագոյն զօրութեանցն անմարմնոց, պատուական և փառաւոր մարգարէին՝ կարապետին և մկրտչին Յովհաննու, և սրբոց փառաւոր և գերահռչակ առաքելոցն, սրբոց փառաւոր և բարեյաղթ վկայիցն, սրբոց Աստուածազգեաց հարցն մերոց, սրբոց անարծաթ բժշկացն կոզմայի և դամիանոսի, կիւրոսի և յովհաննու, պանդալէոնի և երմողեայ, սամփսոնի և դիոմիտեայ, մոկիոսի և անտիգդոսի, թալալէոսի և տրիփոնեայ, սրբոյ և արդար Աստուածահօրն յովակիմայ և աննայի, և ամենայն սրբոց ։

Ո՜վ դու ես աղբիւր բժշկութեան, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Իւրաքանչիւր քահանայք յետ կարդալոյ զաւետարանն և զաղօթսն, յորժամ օծանեն զհիւանդն՝ ասեն զվերագրեալ աղօթսն ։ Եւ օծանումն հիւանդին լինի եօթն անգամ յեօթն քահանայից, և իւրաքանչիւրքն զնոյն տեղին օծանեն ։

Սաղմոս Դաւթի · Ձայն, է ։

Զօրութիւն իմ և օրհնութիւն իմ Տէր, և եղև ինձ ՚ի փրկութիւն ։ Խրատելով խրատեաց զիս Տէր, և ՚ի մահ ոչ մատնեաց ։

Պօղոսի առաքելոյն ՚ի հռոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս ։

Եղբա՛րք՝ պա՛րտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ . և մի՛ անձանց և եթ հաճոյ լինել ։ Իւրաքանչիւրոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ՚ի

բարիս՝ վասն շինութեան։ Քանզի և քս՟ ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպ՟ և գրեալ է․ Նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վերայ իմ։ Բայց որ ինչ գրեցաւ՝ ՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ․ զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց․ զյոյսն ընկալցուք։ Այլ ած՟ համբերութեան և ած՟ մխիթարութեան, տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յս՟ի քս՟ի․ զի միաբանութեամբ ՚ի մի բերան փառաւոր առնիցէք զած՟, և զհայր տն՟ մերոյ յս՟ի քս՟ի։ Վասն որոյ ընկալարուք զմիմեանս․ որպ՟ և քս՟ ընկալաւ զձեզ ՚ի փառս այ՟։

## Ալէլուիա․ Ձայն, ա՟ կողմ։

Օրհնութիւն քո տէր յաւիտեան օրհնեցից, ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով։

## Սուրբ Աւետարան որ ըստ Ղուկասու։

Յայնմ ժամանակի, մտեալ շրջէր յս՟ ընդ երիքով։ Եւ ահա այր մի անուն կոչեցեալ զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն․ և խնդրէր տեսանել՝ եթէ ով իցէ յս՟, և ոչ կարէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջս, ել ՚ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա․ քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրև եկն ՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր յս՟՝ և ասէ ցնա․ զաքէ՝ փութա՛ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ագանել։ Փութացաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն եկաց զաքէոս՝ և ասէ ցտէր․ տէր՝ ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց․ և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա յս՟․ այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ․ քանզի և սա որդի աբրահամու է։ Զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

### Սարկաւագն։

Ողորմեա՛ մեզ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան, քաւութեան և թողութեան մեղաց, ծառայիս Աստուծոյ (տես անուն)։

Վասն ներելոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։

### Քահանայն։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք.

### Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Ով մեծ և բարձրեալ, որ յամենայն արարածոց քոց երկրպագիս. իմաստութեան աղբիւր. բարերարութեան խորք. անսահման ծով գթութեան։ Ինքնին մարդասէր Տէր՝ յաւիտենական և սքանչելի Աստուած՝ անհասանելի յամենայն արարածոց, նայեա՛ և լո՛ւր մեզ անարժան ծառայիցս քոց, և առաքեա՛ ՚ի վերուստ զպարգև բժշկութեան և զթողութիւն մեղաց առ սոսա, զորս իւղովս այսու օծանեմք յանուն քո մեծ, և բժշկեա՛ զսոսա ըստ բազում ողորմութեան քում։

Այո՛ Տէ՛ր անոխակալ՝ միայն ողորմած և մարդասէր, որ զղջանաս ՚ի վերայ չարեաց մերոց. որ գիտես զի միտք մարդկան ՚ի խնամս չարին են արձանացեալ ՚ի մանկութենէ իւրմէ. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեալ։ Որ վասն փրկութեան մեղաւորաց մարմին զգեցար և մարդացար Աստուած գոլով։

Դու ես որ ասացեր, ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ Դու ես՝ որ զմոլորեալ ոչխարն խնդրեցեր։ Դու ես՝ որ զկորուսեալ դրամն հոգածութեամբ խնդրեցեր և գտեր։ Դու ես որ ասացեր,

զեկեալն առ իս ոչ հանից արտաքս: Դու ես՝ որ զպոռնիկն որ եթաց արտասուօք զպատուական ոտս քո, ոչ գարշելի համարեցար: Դու ես՝ որ զանկեալն 'ի մեղս յապաշաւելն խորում փրկես: Դու ես որ ասացեր, թէ ուրախութիւն եղիցի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ:

Ինքնին բարեգութ Տէր՝ հայեաց 'ի բարձրունս սրբոյ քո, և լեր հովանի մեզ մեղաւորաց և անարժան ծառայից քոց 'ի ժամուս յայսմիկ՝ շնորհիւ հոգւոյդ քո սրբոյ, և բնակեաց 'ի ծառայս քո (այս անուն), որ ծանեաւ զյանցանս իւր, և մատեաւ առ քեզ հաւատով. և ընկալ զսա քոյով մարդասիրութեամբդ: Եւ զոր ինչ յանցեաւ բանիւ կամ գործով կամ մտածութեամբ՝ քաւեա, ջնջեա, և մաքրեա զսա յամ մեղաց: Եւ միշտ լինելով ընդ սմա, պահեա զմնացուած ժամանակս կենաց սորա գնալ յարդարութեան ճանապարհն, զի մի՛ ևս լինիցի ծառայ բանսարկուին. զի և այսու փառաւորեսցի ամենասուրբ անուն քո:

'Ի ձայն:

Զի քո է ողորմիլ և կեցուցանել զմեզ Քրիստոս Աստուած մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում Հօր, և ամենասուրբ և բարերար և կենդանարար քո Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սղմ առէ աշխարհական Դաւթի. Ձայն, Է:

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեայց, Տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց:

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց Ա. Թղթոյն է ընթերցուածս:

Արդ դուք մարմին Քրիստոսի էք՝ և անդամք յանդամոց նորա: Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս, ապա զզօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս՝ վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս

լեզուաց։ Մի՞թէ ամենեքին առաքեալք իցեն. միթէ ամենեքին մարգարէք իցեն. միթէ ամենեքին վարդապետք իցեն. միթէ ամենեքին զօրութիւնք իցեն. միթէ ամենեքին շնորհս բժշկութեան ունիցին. միթէ ամենեքին ՚ի լեզուս խօսիցին. միթէ ամենեքին թարգմանիցեն։ Նախանձաւո՛ր լերուք շնորհացն, որ լաւն են։ Եւ ես առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ։ Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ, որ հնչէ. կամ իբրև զծնծղայս՝ որ ղօղանջեն։ Եւ եթէ ունիցիմ մարգարէութի, և գիտիցեմ զխորհուրդս ամ՝ և զամ գիտութի. և եթէ ունիցիմ զամ հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ ջամբիցեմ զամ ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարհաւաճէ, ո՛չ հպարտանայ. ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիւր, ո՛չ գրգռի, ո՛չ խորհի զչար. ո՛չ խնդայ ընդ անիրաւութի՝ այլ խնդայ ընդ ստուգութի. ամի տանէ. ամի հաւատայ. ամենևին յուսայ. ամի համբերէ։ Սէր ո՛չ երբէք անկանի։

## Ղուկաս. Գլուխ, Զ.

՚Ի տէր յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան, յարդարութեն քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս։

## Սուրբ աւետարանս որ ըստ Ղուկասու։

Յայնմ ժամանակի, կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխանութի այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամ ցաւս և զամ հիւանդութիս։ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ. առաջին սիմոն՝ անուանեալն պետրոս, և անդրէաս եղբայր նր։ Յակոբոս զեբեդեայ, և յովհաննէս եղբայր նորա. փիլիպպոս, և բարդուղիմէոս. թովմաս, և մատթէոս մաքսաւոր. յակոբոս ալբեայ,

և ղեբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։ Սիմովն կանանացի. և յուդայ իսկարիովտացի՝ որ և մատնեաց զնա։ Զնոսա երկոտասանեսին առաքեաց յս̃, պատուիրեաց նց̃՝ և ասէ, 'ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք, և 'ի քաղաք սամարացւոց մի՛ մտանիցէք։ Այլ երթա՛յք առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն իսրայելի։ Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէ՛ք և ասացէ՛ք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէ՛ք, զբորոտս սրբեցէ՛ք, զդևս հանէ՛ք, ձրի առէ՛ք՝ և ձրի՛ տուք։

Սարկաւագն։

Ողորմեա՛ մեզ ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե̃, կենաց, խաղաղութե̃, առողջութե̃, փրկութե̃, այցելութե̃, քաւութե̃ և թողութե̃ մեղաց, ծառայիս ա̃յ (այս անուն)։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

Քահանայն։

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Տէր ամենակալ՝ սուրբ թագաւոր, որ խրատես և ոչ սպանանես. որ կազդուրես զանկեալսն, և կանգնես զխորտակեալսն. որ զամենայն ախտս մարմնոյ մարդկան բժշկես։

Խնդրեմք 'ի քէն ա̃ծ մեր, զի առաքեսցես զողորմութիւն քո 'ի վերայ ծառայիս այսորիկ՝ և 'ի վերայ օծելոյս 'ի սմանէ յանուն քո, զի եղիցի նոցա 'ի բժշկութի̃ հոգւոյ և մարմնոյ, և 'ի մաքրութի̃ և 'ի զերծումն յամենայն

ախտից և յամենայն ցաւոց և յախտաժետութեց , և յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ ։

Այո տէր՝ առաքեա զբժշկարար զօրութի քո յերկնից , դիր զձեռն քո ’ի մարմինս , շիջո զջերմութին . մեղմացո զախտն . և ’ի բաց մերժեա զամ անդիտելի հիւանդութիւնս ։

Լեր բժիշկ ծառայի քո (այս անուն) , յարո զսա ’ի դառն մահճէ և յանկողնոյ վշտաց . շնորհեա զսա եկեղեցւոյ քո առողջ և ամբողջ , լինել քեզ ’ի հաճոյս , և կատարօղ կամաց քոց ։

’Ի ձայն ։

Զի քո է ողորմել և կեցուցանել զմեզ քս ած մեր , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Մեսեդի . Ձայն , գ ։

Յաւուր յորում կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ ։
Տէր լուր աղօթից իմոց , աղաղակ իմ առ քեզ եկեսցէ ։

Պօղոսէ առաքելոյն ’ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս ։

Եղբարք՝ դուք տաճար այ կենդանւոյ էք . որպէս և ասաց ած , թէ բնակեցայց ’ի նոսա , և գնացից ’ի նոսա . և եղէց նց ած , և նոքա եղիցին իմ ժողովուրդ ։ Վասն որոյ ելէք ’ի միջոյ նոցա և մեկնեցարուք , ասէ տր . և ’ի պիղծս մի՛ մերձենայք . և ես ընկալայց զձեզ . և ես եղէց ձեզ ’ի հայր , և դուք եղիջիք ինձ յուստերս և ’ի դստերս , ասէ տր ամենակալ ։ Իսկ որովհետև զայս աւետիս ունիմք սիրելիք՝ սրբեսցուք զանձինս մեր յամ պղծութէ մարմնոյ և հոգւոյ , կատարեսցուք զսրբութի ահիւն այ ։

Ալէլուիա . Ձայն , է ։

Համբերելով համբերի տեառն , և նայեցաւ առ իս , և լուաւ աղօթից իմոց ։

## Սուրբ աւետարան որ ըստ Մատթէոսի։

Յայնմ ժամանակի, եկեալ յս̅ ՚ի տուն պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ։ կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր զնոսա։ Իբրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսսն բանիւ. և զա̅մ հիւանդս բժշկեաց։ Զի լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն եսայեայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ։ Տեսեալ յս̅ի ժողովուրդս բազումս զիւրև, հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես։ Ասէ ցնա յս̅. աղուեսուց որջք գոն՝ և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։ Եւ մի ոմն յաշակերտացն նորա ասէ ցնա. տէր՝ տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ։ Ասէ ցնա յս̅. եկ զկնի իմ, և թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։ Եւ իբրև եմուտ ՚ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա։

## Սարկաւագն։

Ողորմեա մեզ տր̅ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե̅, կենաց, խաղաղութե̅, առողջութե̅, փրկութե̅, այցելութե̅, քաւութե̅ և թողութե̅ մեղաց, ծառայիս այյ̅ (այս անուն)։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

## Քահանայն ՚ի ձայն։

Զի ողորմած և մարդասէր ես տր̅ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք ։

Նոյն քահանայն ասէ զաղօթս ։

Բարերար և մարդասէր՝ քաղցրագութ և բազումողորմ տէր՝ որ մեծ ես յողորմութե̃, և հարուստ 'ի բարութե̃. հայր գթութե̃ց և ա̃ծ ա̃մ մխիթարութե̃, որ զօրացուցեր զմեզ 'ի ձեռն սրբոց քոց առաքելոց իւղով և աղօթիւք զհիւանդութիւնս ժողովրդեան բժշկել։

Ինքնին և զիւղս զայս արա 'ի բժշկութի̃ օծելոցն 'ի սմանէ, 'ի փարատումն ա̃մ ցաւոց և ա̃մ ախտից, յաղթութի̃ 'ի չարեաց որոց սպասեն փրկութե̃ քում։

Դու տէր ա̃ծ մեր ամենազօր՝ խնդրեմք 'ի քէն՝ պահեա յառողջութե̃ զամենեսին զմեզ։ Որ միայն բժիշկ ես հոգւոց և մարմնոց սրբեա զամենեսին զմեզ։ Որ բըժըշկես զա̃մ ցաւս, բժշկեա և զծառայ քո (այս անուն), յարո զսա 'ի դառն մահճաց բարերարութե̃դ քով. այց արա ողորմութբ̃ և գթութբ̃ քով. փարատեա 'ի սմանէ զա̃մ հիւանդութի̃ և զախտ. զի յարուցեալ կարող ձեռամբ քո, ծառայեսցէ քեզ ա̃մ գոհութբ̃։

Որպէս զի և մեք այժմ մասնակից եղեալ անճառ մարդասիրութե̃դ քո, օրհնեսցուք և փառաւորեսցուք զքեզ, որ առնես զմեծամեծս և զարմանալիս, փառաւորս և սքանչելիս ։

'Ի ձայն ։

Զի քո̃ է ողորմել և կեցուցանել զմեզ ա̃ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նոյն սարկաւագն Դուէտէ . Ձայն, ա̃ ճողի։

Դու տէր պահեսցես զմեզ և ապրեցուսցես զմեզ յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան։

Ապրեցո՛ զմեզ զի նուազեաց սուրբ, նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց 'ի մարդկանէ ։

## Պօղոսի առաքելոյն 'ի կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Եղբարք՝ ոչ կամիմ տգէտս լինել ձեզ՝ վասն նեղութեանն մերոյ եղելոյ յԱսիա․ զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք․ զի մի' յանձինս ապաստանիցիմք՝ այլ յա̃ծ՝ որ յարուցանէ զմեռեալս․ որ յայնպիսի մահուանէ փըրկեաց զմեզ՝ և փրկեսցէ․ քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութ̃բ աղօթից ձերոց վասն մեր։ Զի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ 'ի մեզ, բազմօք յաճախեսցեն գոհութ̃իքն վասն մեր։

## Ալէլուիա․ Ձայն, ա̃ կողմ։

Զողորմութ̃իս քո տէր յաւիտեան օրհնեցից, ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով։

## Սուրբ աւետարանս որ ըստ Մատթէոսի։

Ասաց տ̃ր զառակս զայս․ յայնժամ նմանեսցի արքայութ̃ի երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ Հինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ 'ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և 'ի քուն մտին։ Եւ 'ի մէջ գիշերի եղև բարբառ, ահա՛ փեսայ գայ՝ ելէ՛ք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ա̃մ կուսանքն՝ և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն, տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն՝ և ասեն․ գուցէ ո՛չ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթա՛յք 'ի վաճառականս՝ և գնեսջի՛ք ձեզ։ Իբրև նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն՝

և փակեցաւ դուռնն ։ Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն ․ տէ՛ր տէ՛ր՝ բա՛ց մեզ ։ Նա պատասխանի ետ և ասէ ․ ամէն ասեմ ձեզ՝ թէ ո՛չ գիտեմ զձեզ ։ Արթուն կացէք զի ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամն , յորում որդի մարդոյ եկեսցէ ։

Սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում ․ աղաչեմք զքեզ , լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան , կենաց , խաղաղութեան , առողջութեան , փրկութեան , այցելութեան , քաւութեան և թողութեան մեղաց , ծառայիս Աստուծոյ (այս անուն) ։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ , զտէր աղաչեսցուք ։

Քահանայն ։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով , և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Սարկաւագն ․ Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ։

Տէր Աստուած մեր , որ խրատես՝ և դարձեալ բժշկես ․ որ յարուցանես յերկրէ զաղքատս , և բարձր առնես զտառապեալս յաղբեաց ։ Որ հայր ես որբոց , և նաւահանգիստ ալէկոծելոց , և բժիշկ ախտացելոց ։ Որ զհիւանդութիւն և զցաւս մեր ողորմութեամբ քով բարձեր ․ որ զուարթութեամբ ողորմիս ․ որ զանց առնես զանօրէնութեամբ , և զանիրաւութիւնս բառնաս ․ որ արագ ես յօգնականութիւն , և յամր ՚ի բարկութիւն ։

Որ փչեցեր յաշակերտսն քո և ասացեր , առէք Հոգի սուրբ ․ եթէ ումեք թողուցուք զմեղս թողեալ լիցի նոցա ։ Որ ընդունիս զապաշխարութիւն մեղաւորաց , և ունիս իշխանութիւն ներել բազում և անհնարին մեղաց ․ և տաս

բժշկութիւն ամենեցուն, որք 'ի հիւանդութեան և յերկարատև ախտս տառապին։

Որև զիս զնուաստ և զմեղապարտ և զանարժան ծառայ քո կոչեցեր 'ի սուրբ և 'ի մեծագոյն աստիճան քահանայութեան, և մտանել 'ի ներքին կողմն վարագուրին 'ի սրբութիւն սրբոցն՝ 'ի ցանկալին սրբոց հրեշտակաց, և լսել զաւետարանական ձայնն տեառն մերոյ, և տեսանել դէմ յանդիման զերեսն սրբոյ պատարագին, և զմայլել աստուածային և սրբազան պաշտամանց։

Որ արժանաւորեցեր զիս կատարել զերկնային ասէ· հուրդս քո, և մատուցանել զընծայս և զպոհս վասն մեղաց՝ և վասն ժողովրդեանն անգիտութեան, և լինել միջնորդ վասն բանաւոր ոչխարաց քոց · զի 'ի ձեռն բազում և անճառելի մարդասիրութեան քո ջնջեսցես զյանցանս նոցա։

Նոյնին ամենաբարի Թագաւոր՝ ունկն դիր աղօթից իմոց 'ի ժամուս յայսմիկ և 'ի սուրբ աւուրս՝ և յամենայն ժամանակս և 'ի տեղիս, և նայեա՛ 'ի ձայն խնդրուածաց իմոց · և պարգևեա՛ զբժշկութիւն ծառայի քո (այս անուն), որ հիւանդացեալ դնի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, տալով սմա թողութիւն մեղաց և ներումն յանցանաց որ կամայ և ակամայ, բժշկելով զանբժշկելի հարուածս սորա և զամենայն ցաւ և զամենայն ախտաժետութիւն։ Պարգևեա՛ սմա զհոգևորական բժշկութիւն, որ մերձեցար 'ի զոքանչն սիմոնի, և եթող զնա ջերմն · և յոտն եկաց և պաշտէր զքեզ։

Նոյնին տէ՛սբօղա՝ և ծառայի քում (այս անուն) պարգևեա՛ բժշկութիւն և զերծումն յամենայն մահաբեր հիւանդութեանց · և յիշեա՛ զառատ գթութիւնս քո և զողորմութիւնս քո։

Յիշեա՛ զի միտք մարդկան 'ի խնամս չարին են արձանացեալ 'ի մանկութէ իւրմէ, և ոչ գտանի ոք անմեղ 'ի վերայ երկրի · զի դու միայն ես առանց մեղաց, որ եկիր և փրկեցեր զազգ մարդկան, և ազատեցեր զմեզ 'ի ծառայութենէ թշնամւոյն։

Զի եթէ 'ի դատաստան մտցես ընդ ծառայից քոց,

ոչ ոք գտցի մաքուր ՚ի յաղտոյ • այլ ա̃մ բերան խցցի , ոչ ունելով ինչ տալ պատասխանի • վասն որոյ զմեղս մանկութեան մերոյ մի՛ յիշեսցես տէ՛ր :

Քանզի դու ես յոյս անյուսից , և հանգիստ տառապելոց և բեռնաւորելոց անօրէնութե̃ • և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ Սարկաւագն ձայնէ • Ձայն , Է կող •

Ողորմեա՛ ինձ ա̃ծ ըստ մեծի ողորմութե̃ քում , ըստ բազում գթութե̃ քում քաւեա՛ զանօրէնութիս իմ : Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս ա̃ծ , և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում :

Պօղոսի առաքելոյն ՚ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուած :

Եղբա՛րք՝ պտուղ հոգւոյն այս է • սէր խնդութի̃ խաղաղութի̃ երկայնմտութի̃ , քաղցրութի̃ բարութի̃ , հաւատք , հեզութի̃ ժուժկալութի̃ • զայսպիսեաց սատի օրէնքն չե՛ն հակառակ : Իսկ որ ք̃եանքն են , զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն և ցանկութե̃ք հանդերձ : Եթէ կեամք հոգւով՝ ընդ հոգւոյն և միաբանեսցուք : Եւ մի՛ լինիցուք սնապարծք՝ միմեանց ձայն տալոյ , և ընդ միմեանս նախանձելոյ : Եղբա՛րք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ՚ի ձէնջ յի՛նչ և իցէ յանցանս , դուք որ հոգևորք էք՝ հաստատեսցէ՛ք զայնպիսին հոգւով հեզութե̃ • զգո՛յշ լինիցիք անձանց՝ զի մի՛ և դուք փորձիցիք : Զմիմեանց բեռն բարձէ՛ք , և այնպէս կատարեսցէ՛ք զօրէնսն ք̃ի :

Ալէլուիա • Ձայն , Ը կող :

Երանեալ է այր որ երկնչի ՚ի տեառնէ , զպատուիրանս նորա նա կամի յոյժ :

## Սուրբ Աւետարան որ ըստ Մատթէոսի։

Յայնմ ժամանակի, եկն Յս ՚ի կողմանս տիւրոսի և սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր և ասէր. ողորմեա՛ց ինձ տէր որդի դաւթի, դուստր իմ չարաչար դիւահարի։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. Տր՝ օգնեա՛ ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ. այո՛ տէր, քանզի և շունք կերակրին ՚ի փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ տն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յս և ասէ. ո՜վ կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ ոպ և կամիս։
և բժշկեցաւ դուստր նորա ՚ի նմին ժամու։

## Մաղթանք։

Ողորմեա՛ մեզ ա՛ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե, կենաց, խաղաղութե, առողջութե, փրկութե, այցելութե, քաւութե և թողութե մեղաց, ծառայիս այ (այս անուն)։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

## Քահանայն։

Զի ողորմած և մարդասէր ես ած դու, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Սարկաւագն. Զ Տէր աղաչեսցուք.

### Եւ քահանայն ասէ զաղօթս.

Գոհանամք զքէն տէ՛ր ա՟ծ մեր՝ բարերար և մարդասէր, և բժիշկ հոգւոց և մարմնոց մերոց. որ զցաւս մեր յօժարութ՟բ բարձեր. որ վիրօք քո ամ՟քին բժշկեցաք։ Որ հովիւ ես բարի՝ եկեալ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին. որ տաս մխիթարութ՟ի կարճամտաց, և կեանս մահացելոց։

Որ զաղբիւր երկոտասանամեայ տեռատեսին բժշկեցեր։ Որ զդուստր քանանուհւոյն ՚ի դժնդակ դիւէն ազատեցեր։ Որ զպարտս երկուց պարտապանացն շնորհեցեր. և մեղաւոր կնոջն զթողութ՟ի ետուր։

Որ զբժշկութ՟ի անդամալուծին պարգևեցեր համդերձ թողութ՟բ մեղաց նորա։ Որ զմաքսաւորն բանիւ արդարացուցեր. և զաւազակն ՚ի վերջին խոստովանութե նորա ընկալար։ Որ զմեղս աշխարհի բարձեր և ՚ի խաչին բևեռեցեր։

Զքեզ աղաչեմք և առ քեզ պաղատիմք, ինքնին բարերարութ՟բդ քո ա՟ծ՝ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զանօրէնութիս և զմեղս ծառայիս քո (այս անուն) զյանցանս սորա զկամայ և զակամայ, զգիտութե և զանգիտութե, զօրինազանցութե և զանլսողութե, զոր ՚ի գիշերի և զոր ՚ի տունջեան. կամ ընդ անիծիւք քահանայի, կամ հօր կամ մօր անկանելով, կամ հնգեակ զգայութ՟բ մեղանչելով, կամ զխարդ և իցէ շարժմամբ մարմնոյ և հոգւոյ ստորացաւ ՚ի կամաց քոց, և ՚ի սրբութե քումմէ։

Եւ ա՟մ մեղաց՝ զոր մեղաւ սա և մեք, ինքնին ող՟ բարի և անյիշաչար և մարդասէր ա՟ծ՝ ներեա՛, և մի՛ թողուր զսա և զմեզ անկանիլ ՚ի վարս վատթարս, և մի՛ դնալ ՚ի ճանապարհս կորստեան։

Լ.յ՛ տեսօղդ տէր՝ լո՛ւր ինձ մեղաւորիս ՚ի ժամուս յայսմիկ վասն ծառայիս քո (այս անուն), անտես արա ող՟ անյիշաչար ա՟ծ զյանցանս սորա զա՟մ. զերծ՛ զսա ՚ի յաւիտենական տանջանաց։

Զբերան սորա քոյին օրհնութ̃բ լցո՛ · զշրթունս սորա բա՛ց 'ի փառաբանութ̃ի անուան քո · զձեռս սորա տարածեա՛ 'ի գործս պատուիրանաց քոց · զոտս սորա յընթացս աւետարանի քո ուղղեա՛ · և զա̃մ անդամս սորա և զմիտս ամրացո՛ և պահեա՛ քոյին շնորհօք ։

Քանզի դու ես ա̃ծ մեր , որ 'ի ձեռն սրբոց քոց առաքելոց ծանուցեր մեզ ասելով · զոր միանգամ կապիցէք յերկրի , եղիցի կապեալ յերկինս , և զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ յերկինս ։ Եւ դարձեալ՝ եթէ ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի նոցա · և եթէ զուրուք ունիցէք , կալեալ լիցի ։

Եւ ո̃պ լուար եզեկիայի 'ի նեղութ̃ անձին իւրում 'ի ժամու մահուան նորա , և ոչ անտես արարեր զաղաչանս նորա , լո՛ւր և ինձ նուաստ մեղապարտ և անարժան ծառայի քո 'ի ժամուս յայսմիկ ։

Քանզի դու ես տէ՛ր յս̃ ք̃ս , որ անկելոցն 'ի մեղս եօթանասնեկի եօթն թողուլ հրամայեցեր քոյով բարերարութ̃բ և մարդասիրութ̃բ ։ Որ զզջանաս 'ի վերայ չարեաց մերոց , և խնդաս 'ի վերայ դարձի մոլորելոց · զի որպէս մեծութ̃ի քո , նոյնպէս և ողորմութ̃ի քո ։

Եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Մեղեդի · Ձայն , Դ̃ ·

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս , և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

Ողորմեա՛ ինձ տէր զի հիւանդ եմ ես , բժշկեա՛ զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ ։

## Պօղոսի առաքելոյն 'ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուած ։

Եղբա՛րք՝ աղաչեմք զձեզ , խրատեցէ՛ք զստահակս , մխիթարեցէ՛ք զկարճամիտս , պատսպարա՛ն լերուք տկարաց , երկայնամի՛տ լերուք առ ամենեսեան ։ Զգո՛յշ

երուք՝ գուցէ ոք չարի չար հատուցանիցէ · այլ յա՟մ ժամ զբարեաց զհետ երթայք առ միմեանս և առ ամենեսեան ։ Յամենայն ժամ ուրախ լերուք ։ Անդադար աղօթս արարէք ։ Յամենայնի գոհացարուք · զի այս են կամք Ա՟յ ք՟րի յ՟սի 'ի ձեզ ։ Զհոգին մի՛ շիջուցանէք ։ Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք ։ Զամենայն ինչ փորձեցէք , զբարին ընկալարուք ։ Յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք ։ Եւ ինքն Ա՟Ծ խաղաղութե՟ սուրբ արասցէ զձեզ համօրէնս · և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին՝ անարատ 'ի գալստեան Տ՟Ն մերոյ Յ՟Սի պահեսցի ։

## Ալէլուիա · Ձայն , Է ·

Լուիցէ քեզ տէր յաւուր անձկութե՟ , օգնական եղիցի քեզ անուն Ա՟յ յակոբայ ։

## Սուրբ աւետարանս որ ըստ Մատթէոսի ։

Յայնմ ժամանակի , անցեալ ընդ այն Յ՟սի՝ ետես զայր մի , զի նստէր 'ի մաքսաւորութե՟՝ մատթէոս անուն · և ասէ ցնա՝ եկ զկնի իմ ։ և յարուցեալ գնաց զկնի ն՟ր ։ Եւ եղև իբրև բազմեալ էր նա 'ի տան , և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յ՟սի՝ և ընդ աշակերտս նորա ։ Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա · ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր ։ Իսկ Յ՟ս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա · ոչ է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց ։ Երթայք՝ ուսարուք զինչ է · զողորմութի՟ կամիմ , և ոչ զզոհ · զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութիւն ։

## Աղաչանք ։

Ողորմեա մեզ Ա՟Ծ ըստ մեծի ողորմութեան քում · աղաչեմք զքեզ , լուր և ողորմեա ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե՟ , կենաց , խաղաղութե՟ , առողջութե՟ , փրկութե՟ , այցելութե՟ , քաւութե՟

և թողութեան մեղաց, ծառայիս ա̃յ (այս անուն)։

Եւ վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

Քահանայն։

Զի ողորմած և մարդասէր ես Ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք.

Եւ քահանայն ասէ զաղօթս։

Դէ՛սպօտա Տ̃ր Ա̃ծ մեր՝ բժիշկ հոգւոց և մարմնոց, որ զա̃մ ցաւս և զա̃մ ախտս, և զբազմաժամանակեայ հիւանդութի̃ս ՚ի ժողովրդեան քում բժշկես։ Որ կամիս զի ա̃մ մարդիկ կեցցեն, և ՚ի գիտութի̃ ճշմարտութե̃ եկեսցեն։ Որ ոչ կամիս զմահ մեղաւորին, ո̃պ զդառնալ նորա և զկեալ։

Քանզի դու տէ՛ր՝ ՚ի հնումն ուխտի եդեր ապաշխարութի̃ մեղուցելոց դաւթի և Նինուէացւոց, և յառաջ քան զսոսա և յետ սոցա եղելոց։ Եւ ՚ի մարմնաւորիլ տնօրէնութե̃ քում՝ ոչ կոչեցեր զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութի̃, որպէս զմաքսաւորն, որպէս զպոռնիկն, որպէս զաւազակն։

Եւ զմեծն պօղոս զհայհոյիչն և զհալածօղ ՚ի ձեռն ապաշխարութե̃ն ընկալար։ Զպետրոս գլխաւորն և զառաքեալն քո՝ որ ուրացաւ զքեզ երիցս, ՚ի ձեռն զղջմանն ընկալար և ՚ի քեզ յանկուցեր. որում խոստացեալ էիր ասելով, դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. և տաց քեզ զփականս արքայութե̃ երկնից։

Վասն որոյ և մեք բարերար և մարդասէր՝ ըստ անսուտ խոստման քո վստահացեալք՝ հայցեմք և պաղատիմք ՚ի ժամուս յայսմիկ, լո՛ւր աղաչանաց մերոց, և ընկա՛լ ո̃պ խունկ հաճոյական, և ա՛յց արա ծառայի քո

(այս անուն) , և զոր ինչ յանցեաւ բանիւ կամ գործով կամ մտածութե , զոր 'ի գիշերի և զոր 'ի տունջեան , կամ ընդ անխծիւք քահանայի՝ կամ ընդ անիծիւք իւրովք անկաւ , կամ երդմամբ դառնացոյց , աղաչեմք և խնդրեմք 'ի քէն՝ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ սմա մստուած , անտես առնելով զանօրէնութիս սորա և զմեղսն զգի_տութեան և զանգիտութեան ։

Եւ զոր ինչ զանց արար 'ի պատուիրանաց քոց , կամ յանցեաւ 'ի գրգռութէ մարմնոյ և աշխարհի , կամ 'ի թելադրութէ բանսարկուին , ինքնին որպէս բարի և մարդասէր ա՛ծ՝ ներեա՛ և թո՛ղ սմա , զի ոչ է մարդ որ կեցցէ , և ոչ մեղիցէ ։

Բանզի դու միայն ես առանց մեղաց , արդարութի քո արդարութի յաւիտենական , և բան քո ճշմարտութի ։ զի ոչ արարեր զմարդ 'ի կորուստ , այլ 'ի պահպանութի պատուիրանաց քոց , և 'ի ժառանգութի անապական կե_նաց ։ և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգ_ւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե_նից , ամէն ։

Ապա չորեքին քահանայքն առնուն երեքն յաջմէ և երեքն 'ի ձախմէ կողմանէն ։ և որ աւագագոյնն է 'ի նոսա , դնէ աւե_տարանն 'ի վերայ գլխոյ հիւանդին ։ և քահանայքն փոխ ձե_ռամբ զաւետարանն կալեալ , և զձեռս ձեռան դնեն 'ի վերայ գլխոյ նորա ։ և աւագագոյնն ասէ զաղօթս զայս ։

Տագաւո՛ր սուրբ՝ բարեգութ և բազումողորմ՝ տէր յս քս , որդի և բան այ , որ ոչ կամիս զմահ մեղաւո_րին , այլ զդառնալ նորա և զկեալ ։ չեմ արժանի դնել զբազմամեղ ձեռն իմ 'ի վերայ գլխոյ սորա , որ առ քեզ դիմէ մեղուցեալ անձամբ , և խնդրէ առ 'ի քէն 'ի ձեռն մեր զթողութի մեղաց ։ այլ դիր 'ի վերայ գլխոյ ծա_ռայիս քո (այս անուն) զձեռն քո կարող և զզօրաւոր , միջնորդութբ աւետարանիս՝ զոր պաշտօնակիցք իմ կալեալ ունին , ընդ որս հայցեմ և պաղատիմ առ կար կից և անյիշաչար մարդասիրութիւն քո ։

Ո՜վ փրկիչ մեր՝ որ 'ի ձեռն մարգարէին քո Նաթանայ զթողութ՟ի պարգևեցեր Դաւթի, որ զղջացաւ 'ի վերայ յանցանաց իւրոց, և զաղօթս ապաշխարութ՟ե Մանասէի ընկալար. դու ինքնին և զծառայ քո (այս անուն) որ զղջանայ 'ի վերայ յանցանաց իւրոց՝ ընկա՛լ սովորական քո մարդասիրութ՟բդ, անտես առնելով զամենայն յանցանս նորա։

Քանզի դու ես ա՟ծ մեր, որ եօթանասնեկին եօթն թողուլ հրամայեցեր որոց անկանին 'ի մեղս. զի որպէս մեծութ՟ի քո, նոյնպէս և ողորմութ՟ի քո. և քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութ՟ի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա քահանայն ասէ զփոքր քարոզ. յորժամ ոչէ շտապէ զնա։ Եւ երգեն, փառք հօր, և որդւոյ, և հոգւոյն ս՟րբոյ, ըստ իւրում եղանակի. ապա ժամամուտս այս։

Աղբիւր բժշկութ՟ե ունելով սուրբ անարծաթք, զբժշկութ՟ի շնորհեք ա՟մ կարօտելոց. զի արժանի եղէք ընդունիլ զմեծամեծ պարգևս 'ի մշտաբուղխ աղբերէն 'ի փրկչէն մերմէ. Քանզի ասէ առ ձեզ տ՟ր որպէս առ պաշտօնակիցս առաքելոց. ահա՛ ետու ձեզ իշխանութ՟ի 'ի վերայ այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զա՟մ հիւանդութիւս. վասն որոյ ըստ հրամանի նորա բարւոք քաղաքավարեալք, ձրի առիք և ձրի տայք, բժշկելով զախտս հոգւոց և մարմնոց մերոց։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նայեա՛ 'ի խնդրուածս քոց աղաչողաց ամենասրբուհի, հանդարտեցո՛ զխռովութ՟իս որք յառնեն 'ի վերայ մեր, զերծո՛ զմեզ յա՟մ նեղութ՟եց. Քանզի զքեզ միայն ունիմք անսխալ և հաստատուն խարիսխ յաշխարհիս ծովու և պաշտպան. մի՛ ամաչեցուցք տիրուհի յաղաղակել մերում առ քեզ. փութացի՛ր լսել զպաղատանս մեր, որ հաւատով առ քեզ գոչեմք. ուրա՛խ լեր

տիրուհի ամենեցուն օգնութ՟ն , խնդութ՟ն և հովանի և փրկութիւն անձանց մերոց ։

Եւ լինի արձակումն ։

Եւ որ զօծումն ընկալեալ խոնարհի ասելով · Օրհնեցէք զտ՟ր հարք · ներեցէք ինձ մեղաւորիս · Երեք անգամ ։ Եւ առեալ 'ի նոցանէ օրհնութ՟ի և ներումն , գոհանայ զա՟յ ։

Վասն հոգեւորի , որ յաւանդման հոգւոյն տանջի ։

Տէր՝ տէր ա՟ծ մեր ամենակալ , որ զա՟մ մարդիկ կամիս զի կեցցեն , և 'ի գիտութ՟ի ճշմարտութ՟ե եկեսցեն · որ ոչ կամիս զմահ մեղաւորին , ո՟պ զդառնալ նորա և զկեալ , աղաչեմք և խնդրեմք 'ի քէն , զհոգի ծառայիս քո ( այս անուն ) յա՟մ կապից արձակեա , յա՟մ անիծից ազատեա · զի դու ես արձակիչ կապելոց , և յարուցիչ խորտակելոց , և յոյս անյուսից ։

Արդ՝ հրամայեա տէր խաղաղութ՟բ արձակել հոգւոյ ծառայիս քո այսմիկ , և հանգչել 'ի յաւիտենական խորանս քո ընդ ա՟մ սուրբս քո , 'ի ձեռն միածնի որդւոյ քո · ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Այլ աղօթք հոգեւորի ։

Տէր ա՟ծ մեր , որ անճառելի իմաստութ՟բ քով արարեր զմարդն , և 'ի հողոյ կերպաւորեցեր զնա 'ի տեսիլ և 'ի գեղեցկութ՟ի · և զարդարեալ յօրինեցեր զնա պատուական և երկնային ստացուած , և արարեր զնա ըստ պատկերի քում և ըստ նմանութ՟ե 'ի փառաբանութ՟ի և 'ի մեծվայելչութ՟ի փառաց քոց և թագաւորութ՟ե ։

Եւ քանզի զպատկերն քո զոր էառ ոչ պահելով · էանց զպատուիրանաւ հրամանի քո և մեղաւ ։

Վասն այսորիկ զի մի՛ մեղքն 'ի նմա մնասցէ անմահ, ով ա՟ծ հոգւոց մարդասիրապէս հրամայեցեր զի լուծանիցի. և անխզելի կապս ա՟ծային կամօքդ հատանիցի. և մարմինն անդրէն դարձցի յայն յորմէ կազմեցաւ, և հոգին երթիցէ անդր վասն որոյ էառ զլինելութիւն, մինչև 'ի հասարակաց յարութիւնն.

Վասն որոյ աղաչեմք զքեզ զհայրդ անսկիզբն և անմահ և զմիածին քո որդիդ և զամենասուրբ հոգիդ քո. զի բաժանումն 'ի մարմնոյ ծառայի քո (այս անուն) հանգստեամբ արասցես. Եւ որով ինչ բարկացոյց զբարութի՟ քո՝ գիտութ՟բ, կամ անգիտութ՟բ, կամ ընդ անիծիւք քահանայի անկաւ, կամ զծնօղս իւր դառնացոյց, կամ երդմնազանց գտաւ, կամ երևակայութե՟ դիւաց՝ և պիղծ կախարդութե՟՝ կամ նախանձու չար դիւին հանդիպեցաւ, ներեա՛ վասն անպատում բարութե՟դ քո.

Այո՛ տէր ա՟ծ՝ լո՛ւր ինձ մեղաւոր և անարժան ծառայի քո 'ի ժամուս յայսմիկ, և արձակեա՛ զծառայ քո (այս անուն) յանըմբերելի ցաւոցս և 'ի դառն հիւանդութենէս որով կաշկանդեալ կայ. հանգո՛ զսա անդ, ուր են հոգիք արդարոց.

Զի դու ես հանգիստ հոգւոց և մարմնոց մերոց. և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ՎԱԽՃԱՆԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԻ.

Յորժամ ոք 'ի քահանայից փոխի առ տէր, երբեան երէց քահանայք, և եկեղեցականքն զնա 'ի մահճէն, և դնեն յերկիր 'ի վերայ փսիաթի. Եւ զնէ չէ պարտ լուանալ, 'ի վերջացուցանելն զնա քահանայից՝ սպունգ թացեալ 'ի մաքուր ջերմ՝ այնու սրբեն զնա. ապա զգեցուցանեն զհանդերձն իւր ըստ ամբողջութեան, յետոյ զքահանայական պատմուճանն ամ, և ծածկեն զերեսն նորա ծածկոցիւ սկեհի, և դնեն զսուրբ աւետարանն 'ի վերայ կրծոց նորա.

Ապա երեկեալ դաս քահանայիցն եկեղեցւոյն, զգեստաւորեալ քահանայական զգեստուք, և առաջագոյն ասէ. *Ողորմեա. Երեքսրբեան. Ամենասուրբ երրորդութիւն. Հայր մեր, զի քո է արքայութիւն. և Ժամամուտքս.*

*Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց, և զհոգի ծառայիս քո հանգո՛ փրկիչ, և պահեա՛ յերանաւէտ կեանս որ 'ի քէն՝ մարդասէր.*

Սաղմոս. իգ, տուն. *Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ և ամենայն բնակիչք նորա.*

*'Ի հանգիստ քո տէր ուր հանգչին ամ սուրբք քո, և զհոգի ծառայիս քո հանգո՛, որ միայն ես մարդասէր.*

*Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ.*

*Դու ես ած որ իջեր 'ի դժոխս, և լուծեր զդատակնիք կապելոց, ինքնին և զհոգի ծառայիս քո փրկիչ հանգո՛.*

*Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.*

Աստուածածնէ.

*Միայն մաքուր և անարատ կոյս՝ ծնող աստուծոյ անսերմնաբար, բարեխօսեա փրկել զհոգի ծառայի քո.*

Ապա սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ Ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում․ աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութ՟ե և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա՟յ (այս անուն), և վ՟ն թողլոյ սմա զա՟մ յանցանս զկամայ և զակամայ։

Որպէս զի տէր Ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք։

Զողորմութիւն ա՟յ և զարքայութիւն երկնից, և զթո- ղութիւն մեղաց սորա ՚ի ք՟սէ յանմահ թագաւորէն և յա՟յ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս։

Ք՟ս հոգւոց և ա՟մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխար- հի, ինքնին տէր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաւորեալ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանսն, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտա- ծութե՟՝ թո՛ղ սմա որպէս բարի և մարդասէր Ա՟ծ․ զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ․ քանզի դու միայն ես առանց մեղաց․ արդարութի՟ քո արդարութի՟ յաւիտենա- կան, և բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութի՟ և կեանք և հանգիստ ննջե- ցեալ ծառայի քո (այս անուն) ք՟ս Ա՟ծ մեր․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա բառնան քահանայք զննջեցեալն, և բերեն զնա ՚ի դուռն տաճարին, և դնեն զն՟ առ եդարանն ՚ի վերայ հրծոյն՝ որպէս սովոր, և զշարականսն խաչին․ և լու- ցանեն զմոմեղէնսն․ և երգեցօղն ասանէ զՄեղիծն։

Ապա ասէ սարկաւագն միւսանգամ աղերսագրեալ քարոզն. և իւրաքանչիւր քահանայք զնոյն աղօթեն Ս. Ծ. Հոգւոց, և բարձրաձայն աղերսաձայնութեանն:

Որ դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջե_ցելոյ ծառայի քո (այս անուն) քրիստոս ա̅ծ մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա ասեն շարականն օրհնութե. ա̅կ. որ է այս:

Օրհնեալ ես տէր, ուսո ինձ զարդարութի̅ս քո:

Ադամ որ̅դցն եդիր զաղբիւրն կենաց և զդուռն ար_քայութե̅. լեր և ինձ գտանել զճանապարհ նորա ՚ի ձեռն ապաշխարութե̅. ես եմ մոլորեալ ոչխարն, դար_ձեալ խնդրեա զիս փրկիչ, և փրկեա զիս:

Օրհնեալ ես տէր, ուսո ինձ զարդարութի̅ս քո:

Որ յոչնչէ ստեղծեր զիս ձեռօք քո, և պատուեցեր ա̅ծային պատկերօքդ. այլ ստունգանելով պատուիրա_նաց քոց՝ դարձայ յերկիր յորմէ առայ. վերածեա զիս անդրէն ՚ի նոյն նմանութիւն, ստանալ զգեղեց_կութիւնն առաջին:

Օրհնեալ ես տէր, ուսո ինձ զարդարութի̅ս քո:

Պատկեր եմ անպատում փառաց քոց, թէ և ունիմ սպիս հարուածոց յանցանաց. գթա ՚ի ստեղծուածս քո տէր, և սրբեա ողորմութ̅բ քով. և զերկիրն ցանկալի պարգևեա ինձ, արարեալ զիս անդրէն քաղաքացի արքայութեան:

Օրհնեալ ես տէր, ուսո ինձ զարդարութի̅ս քո:

Որ քարոզեցիք զգառն ա̅յ, և զենաք իբրև զգա_ռինս, և յանծերանալի և մշտնջենաւոր կեանսն փոխե_ցայք ով սբ̅ վկայք, հայցեցէք ՚ի նմանէ անդադար, զի շնորհեսցէ զքաւութիւն պարտեաց մերոց:

Օրհնեալ ես տէր, ուսո՛ ինձ առնել զարդարութիս քո։

Որ գնացէք ընդ անձուկ ճանապարհն ՚ի կեանս ձեր, և բարձէք զխաչն որպէս զլուծ, և եկէք զկնի իմ ա̃մ աշխատեալք, եկա՛յք վայելեցէք զբարութինան և զերկ-նային պսակն, զոր պատրաստեցի ձեզ։

Օրհնեալ ես տէր, ուսո՛ ինձ առնել զարդարութիս քո։

Հանգո՛ ա̃ծ զննջեցեալ ծառայ քո, և դասաւորեա՛ զսա յարքայութե՛ ուր են երամք սրբոց քոց, և արդարք փայլին որպէս զաստեղս․ անտես առնելով զամենայն յանցանս սորա։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Զեռալուսեան զմի ա̃ծութին օրհնեսցուք, աղաղակելով ո̃բ ես անսկիզբն հայր ընդ անսկզբնակից որդւոյդ և ա̃ծային քո հոգւոյդ, լուսաւորեա՛ զմեզ որ պաշտեմք զքեզ հաւատով, և զերծո՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Մ. փուածածնէ։

Ուրա՛խ լեր բերկրեալ, որ զա̃ծ մարմնով ծնար կ̃ո փրկութե ամենեցուն․ քանզի ՚ի ձեռն քո ազգ մարդկան եգիտ զփրկութի, լիցի և մեզ գտանել ՚ի ձեռն քո զար-քայութի, սրբուհի ա̃ծածին օրհնեալ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Փառք քեզ ա̃ծ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Փառք քեզ ա̃ծ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Փառք քեզ ա̃ծ։

Սարկաւագն.

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանուե և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս քո (այս անուն)։

Եւ վասն թողլոյ սմա զամենայն յանցանս գիտմանց և զանգիտմանց ։

Որպէս զի Տէր Աստուած մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութիւն Աստուծոյ և զարքայութիւն երկնից և զթողութիւն մեղաց սորա 'ի Քրիստոսէ յանմահ Թագաւորէն և յԱստուծոյ մերոյ խնդրեսցուք ։

Քահանայն ։

Զի դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջեցեալ ծառայիս քո (այս անուն) Քրիստոս Աստուած մեր ․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Ապա երգեն այսպէս ։

Հանգո՛ փրկիչ մեր ընդ արդարոցն զծառայս քո , և բնակեցո՛ 'ի գաւիթս քո , անտես առնելով որպէս բարերար զամենայն յանցանս սորա գիտմանց և զանգիտմանց , զգիտութեան և զանգիտութեան , մարդասէր ։

Փառք Հօր և Որդւոյ և″ ։ Եւ այժմ և միշտ և″ ։

Որ 'ի կուսէն ծագեցար յաշխարհ Քրիստոս Աստուած , և արարեր զմեզ որդիս լուսոյ , ողորմեա մեզ ։

Սրբ. աղաչանացն , ըստ աւուրն ձայն առ ձայն ․ ըկ ։

Առաջին ձայն ։

Համբառնամ զաչս 'ի յերկինս առ քեզ բան , ողորմեա ինձ զի կեցից 'ի քեզ ։

Ողորմեա մեզ անարգելոցս , առնելով քեզ անօթս պիտանիս ով բան ։

Փառք Հօր և Որդւոյ և″ ։ Եւ այժմ և միշտ և″ ։

Պատճառն փրկութեան ամենեցուն հոգին սուրբ՝ առ ամենեսին ըստ իւրաքանչիւր արժանեաց շնչեալ , վաղ վաղակի յարուցանէ յերկրէ , Թևաւորէ , աճեցուցանէ 'ի բարձունս կացուցանէ ։

Փոխ․ Է․

Եթէ ոչ Տէր էր ընդ մեզ, ոչ ոք ՚ի մէնջ զօրէր գօտեւմարտութե, Թշնամեացն ժուժկալել․ զի յաղթօղք նովաւ բարձրանամ։

Յաստամանց սոցա մի՛ յափշտակեսցի անձն իմ որպէս ձնձղուկ ո՛վ բան․ վա՜յ ինձ զիա՛րդ ապրեցայց ՚ի Թշնամեաց որ սիրօղս եմ մեղաց։

Փառք Հօր և Որդւոյ և"։ Եւ այժմ և միշտ և"։

Հոգին սուրբ է որ տայ ամենեցուն ծնայնութի, հաճութի, հանճար, խաղաղութի և օրհնութի․ զի գործակից է Հօր և Բանին։

Փոխ․ Ը․

Որք յուսան ՚ի Տէր՝ աչառկու են Թշնամեաց և սքանչելի ամենեցուն, զի հայլին ՚ի բարձունս, ոչ ձեռս կարկառեն յանօրէնութի արդարոցն հոյլք ո՛վ փրկիչ, զի գթեղ ունին օգնական։

Փառք Հօր և Որդւոյ և"։ Եւ այժմ և միշտ և"։

Զօրութի ամենեցուն տուեալ լինի հոգւով Տըվ, որում զօրքն վերին երկիր պագանեն ընդ մեր երկրաւոր հոգւոց։

Սաղ․ Դաւթի․ ԵԿ․

Երանելի է ճանապարհն յոր գնաս այսօր, զի պատրաստեալ է քեզ տեղի հանգստեան։

Դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Եղբարք՝ ոչ կամիմ եթէ տգէտ իցէք վասն ննջեցելոցն․ զի մի՛ տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ո՛չ գոյ յոյս։ Եթէ հաւատամք՝ եթէ յս մեռաւ և յարեաւ․ նոյնպէս և Ած զննջեցեալսն ՚ի ձեռն յսի ածցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք Տն բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս

եմք մնացեալք՝ ՚ի գալստեանն տ՟ն ոչ ժամանեմք ննջեցելոցն։ Զի ինքնին տէր հրամանաւ, ՚ի ձայն հրեշտակապետի և ՚ի փող ա՟յ իջանէ յերկնից. և մեռեալք ՚ի ք՟ս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս. և այնպէս յ՟ամ ժամ ընդ տեառն լինիցիմք։ Այսուհետև մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալէլուիա։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցին ՚ի գաւիթս քո։

Աւետարան որ ըստ Յովհաննու։

Ասաց տէրն առ հրեայսն որք եկեալ էին առ նա։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և ՚ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն ա՟յ. և որք լսիցենն՝ կեցցեն։ Զի որպէս հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում. և իշխանու՟թի ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարու՟ի կենաց. և որոց զչար արարեալ՝ ՚ի յարու՟ի դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

## Առաւօտին . Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս ։

Տէ՛ր՝ տէր Աստուած մեր, որ միայն ունիս զանմահութիւն բնակեալ ՚ի լոյս անմատոյց . որ սպանանես և կեցուցանես . որ իջուցանես ՚ի դժոխս և հանես . դու իմաստութեամբ ստեղծեր զմարդ, և միւսանգամ յերկիր զնա դարձուցանես ։

Առ քեզ պաղատիմք՝ ընկա՛լ զհոգի ծառայիս քո, և հանգո՛ զսա ՚ի գոգն աբրահամու և իսահակայ և յակոբայ . և տո՛ւր սմա զմասն փրկելոցն ՚ի փառսն ընտրելոց քոց ։ Եւ փոխանակ աշխատութեանն զոր աշխատեցաւ յաշխարհիս յայսմիկ վասն անուան քո, տացէ զառատ հատուցումն յօթեվանս սրբոց քոց, շնորհիւ և գթութեամբ և մարդասիրութեամբ միածնի որդւոյ քո . ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Կաթողիկէ, որ է հանգիստ . ԻԲ ։

Այսօր հրաժարիմ յաղգականաց իմոց, և առ քեզ ապաւինիմ որ միայնդ ես առանց մեղաց, հանգո՛ զիս ՚ի խորանս արդարոց ընդ ընտրելոց քոց ։

Փոխ ։

Տէր հովուեսցէ զիս . և ինձ ինչ ոչ պակասեսցի ։

Ալէլուիա . ալէլուիա ։

՚Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս . և առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։

Ալէլուիա . ալէլուիա ։

Դարձոյց զանձն իմ առ իս . և առաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ ։

Ալէլուիա . ալէլուիա ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ, զի դու տէր ընդ իս ես։

Ալէլուիա · ալէլուիա։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս։

Ալէլուիա · ալէլուիա։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

Ալէլուիա · ալէլուիա։

Օծեր իւղով զգլուխ իմ · բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Ալէլուիա · ալէլուիա։

Ողորմութի̃ քո տ̃ր զհետ իմ եկեսցէ զա̃մ աւուրս կենաց իմոց · բնակել ինձ 'ի տան տ̃ն ընդ երկայն աւուրս։

Ալէլուիա · ալէլուիա։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ալէլուիա · ալէլուիա։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ալէլուիա · ալէլուիա։

## Աղթ պոյ Երգ · ԺԸ·

Ահա կայ և մնայ մեզ ամենեցուն իջանել 'ի սոյն օթեվան, և յետ սակաւ ժամանակի դառնալ 'ի հող · ապա խնդրեսցուք 'ի քնէ վ̃ն վախճանելոյս զհանգիստ։ Քանզի կեանք մեր եղբարք՝ է խաղ ինչ 'ի վերայ երկրի, ոչ եղելոցն լինելոյ, և եղելոցն եղծանելոյ · երազ եմք անկայուն, և պղպջակ անըմբռնելի · թռչուն թռուցեալ որ անցանէ, և նաւ 'ի ծովու որ ոչ թողու հետս։ Վասն որոյ գոչեսցուք առ անմահ թագաւորն, տէր՝ արժանացո զսա անվախճան քո երանութե̃։

## Մեսեդի։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցին 'ի գաւիթս քո։

Պօղոսի առաքելոյն 'ի հառոմայեցւոց թղթոյն է ընթերցուածս ։

Եղբարք՝ 'ի միջոյ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և 'ի մեղաց անտի մահ · և այնպէս յա՟մ մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան ։ Քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի · բայց մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ իցեն ։ Այլ թագաւորեաց մահ յադամայ մինչև ցմովսէս՝ և 'ի վերայ չյանցուցելոցն , ըստ նմանութե՟ յանցուածոյն ադամայ · որ է օրինակ հանդերձելոյն ։ Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն · զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան , որչափ ևս առաւել շնորհքն ա՟յ և պարգևքն՝ շնորհօք միոյն մարդոյ յի՟ի ք՟ի 'ի բազումս առաւելան ։ Եւ ոչ որպէս 'ի միջոյ յանցուցելոյն պարգևքս · զի դատաստանն 'ի միջոյ յանցուածոյ անտի 'ի դատապարտութի՟ · այլ շնորհքն 'ի բազմաց յանցուածոցն յարդարութի՟ ։ Զի եթէ 'ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միո՟վն, ո՟րչափ ևս առաւել՝ որք զառաւելութի՟ շնորհաց և զպարգևաց արդարութե՟ն առնուցուն , կենօք թագաւորեսցեն 'ի ձեռն միոյն յի՟ի ք՟ի ։ Ապա ուրեմն՝ ո՟պ միոյն յանցանօք յա՟մ մարդիկ դատապարտութի՟ , նոյնպէս և միոյն արդարութե՟՝ յա՟մ մարդիկ արդարութի՟ կենաց ։ Զի ո՟պ անհնազանդութե՟ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն · նոյնպէս և հնազանդութե՟ միոյն , արդարք բազումք եղիցին ։ Բայց օրէնք 'ի ներքս անկան , զի յանցանքն բազմասցին · զի ուր առաւել եղեն մեղքն , առաւել ևս յաւելան շնորհքն ։ Զի ո՟պ թագաւորեցին մեղքն 'ի մահու անդ · նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութե՟ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն յի՟ի ք՟ի տեառն մերոյ ։

## Ալէլուիա ։

Ահա չափով եդեր զաւուրս իմ, և կայր զօրութե՟ իմ որպէս ոչինչ է առաջի իմ · սակայն ընդունայն է ա՟մ մարդ մնեղի ։

### Սուրբ Աւետարան որ ըստ Յովհաննու ։

Ասաց տէր առ հրեայսն , որք եկեալ էին առ նա․ Հայր իմ մինչև ցայժմ գործէ , և ես գործեմ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին հրեայքն սպանանել զնա․ զի ոչ միայն լուծանէր զշաբաթս , այլ և հայր իւր կոչէր զա̃ծ , և հաւասար առնէր զանձն ա̃յ։ Պատասխանի ետ յ̃ս և ասէ ցն̃ա․ ամէն ամէն ասեմ ձեզ․ ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ , եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ․ զի զոր նայն առնէ , զնոյն և որդին նմին նման գործէ։ Զի հայր սիրէ զորդի , և զա̃մ ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ․ և մեծամեծս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս , ընդ որ դուք զարմանայք։ Զի որպէս հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ , նոյնպէս և որդի՝ զորս կամի կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ հայր դատի զոք՝ այլ զա̃մ դատաստան ետ որդւոյ իւրոյ․ զի ամենեքեան պատուեսցեն զորդի՝ որպէս պատուեն զհայր։ Որ ոչ պատուէ զորդին , ոչ պատուէ զհայր զառաքիչն նորա։ Ամէն ամէն ասեմ ձեզ․ զի որ զբանն իմ լսէ , և հաւատայ այնմ որ առաքեացն զիս , ընդունի զկեանսն յաւիտենականս․ և ՚ի դատաստան ոչ մտանէ , այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։

### Սարկաւագն․ Զտէր աղաչեսցուք ։

#### Եւ քահանայն ասէ զաղօթս ։

Գոհանամք զքեզ տէր ա̃ծ մեր , որ միայնդ ես կեանք անմահ․ փառք քո անհասանելի , մարդասիրութիւնդ անճառելի , և թագաւորութիւնդ անվախճան , և չիք ակնառութի առ քեզ․ քանզի առ հասարակ ա̃մ մարդկան կարգեցեր սահման կենաց։

Վասն որոյ պաղատիմք առ քեզ տէր՝ զծառայ քո և զպաշտօնակից մեր ( այս անուն ) , զննջեցեալս յուսով յարութե յաւիտենից կենաց՝ հանգո՛ ՚ի գոգն աբրահամու և իսահակայ , և յակոբայ։

Եւ որպէս ՚ի վերայ երկրի յեկեղեցւոջ կացուցեր զսա պաշտօնեայ, նոյնպէս կացո՛ եւ յերկնային մատուցարանի քում տէր։ Որ առաջի մարդկան արժանաւոր պատուով վայելչացուցեր, ընկա՛լ եւ առաջի հրեշտակաց քոց արժանաւոր փառօք։ Դու զկեանս սորա ՚ի յերկրի փառաւորեցեր, դու փառաւորեա՛ եւ զելս կենաց սորա ՚ի մուտս սրբոց քոց արդարոց. եւ զուգաթուեա՛ զհոգի սորա ընդ նոսին, որք ՚ի յաւիտենից քեզ հաճոյացան։

՚Ի ձայն։

Զի դու ես յարութի՜ւն եւ կեանք եւ հանգիստ ննջեցեա՜լ ծառայի քո (այս անուն) Քրիստոս ա͞ծ մեր. եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, եւ ամենասուրբ եւ բարի եւ կենդանարար քո Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փոխ. Է͞։

Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա։

Ալէլուիա. ալէլուիա։

Նա ինքն ՚ի վերայ ծովու հիմունս էարկ նմա. ՚ի վերայ գետոց պատրաստեաց զնա։

Ալէլուիա. ալէլուիա։

Ո՞վ ելցէ ՚ի լեառն Տեառն. կամ ո՞վ կացցէ ՚ի տեղւոջ սրբութեան նորա։

Ալէլուիա. ալէլուիա։

Որ սուրբ է ձեռօք եւ ամբիծ սրտիւ, որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր, եւ ոչ երդուաւ ընդ ընկերի իւրում նենգութեամբ։

Ալէլուիա. ալէլուիա։

Սա առցէ զօրհնութի՜ւն ՚ի Տեառնէ, ողորմութի՜ւն յա͞յ փրկչէ իւրմէ։

Ալէլուիա. ալէլուիա։

Այս ազգ է որ խնդրէ զտէր · խնդրէ տեսանել զերեսս Ա̃յ յակոբայ ։

Ալէլուիա · ալէլուիա ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր · համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ Թագաւոր փառաց ։

Ալէլուիա · ալէլուիա ։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց · տէր հզօր զօրութ̃բ իւրով , տէր հզօր 'ի պատերազմի ։

Ալէլուիա · ալէլուիա ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր · համբարձցին դրունք յաւիտենից , և մտցէ Թագաւոր փառաց ։

Ալէլուիա · ալէլուիա ։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց · տէր զօրութ̃ց՝ սա ինքն է Թագաւոր փառաց ։

Ալէլուիա · ալէլուիա ։

## Նրէ · ե̃կ ։

Հաւատով և սիրով և յուսով և հեզութ̃բ և պարկեշտութ̃բ՝ և քահանայական պատուով և բարեպաշտութ̃բ վայելչացար , ով մշանջենաւոր յիշատակաց արժանի ։

Սան որոյ ինքնին Ա̃ծն յաւիտենական որում ծառայեցեր , դասեսցէ զհոգի քո 'ի լուսեղէն և 'ի զուարճալի օթևանս ուր հանգչին արդարք · և արժանի լինիցիս 'ի դատաստանի աւուրն 'ի ք̃նէ զթողութ̃ի և զմեծ-զողորմութիւն ։

## Կաթողիկէ , հանգիստ · ա̃կ ։

Ա̃Ծ մեր՝ գիտես զի 'ի մեղս ծնաք , վասն որոյ և առ քեզ պաղատիմք , զփոխեցեալս 'ի մէնջ հանգո՛ , անտես առնելով որպէս բարերար զմարդկօրէն յանցանս սորա , բարեխօսութ̃բ Ա̃ծածնին , միայն մարդասէր ։

## Մեղեդի ։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար , և բնակեսցին 'ի գաւիթս քո ։

Տէր յիշատակ քո ազգէ մինչև յազգ ։

### Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած։

Եղբարք՝ ցուցանեմ ձեզ զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր և ընկալարուք, յոր և հաստատեալ էք. որով ապրեցայքն. որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք. բայց եթէ 'ի զուր ինչ հաւատացէք։ Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և եսն ընկալայ. թէ և Քս̄ մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց, և զի թաղեցաւ, թէ և յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. և թէ երևեցաւ կեփայի, և ապա երկոտասանիցն. ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն. յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին։ Եւ ապա երևեցաւ յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն։ Յուսկ յետոյ քան զամենեսին իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ։ Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին ա̄յ։ Այլ շնորհօքն ա̄յ եմ՝ զինչ և իցեմ. և շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի. և ոչ եթէ ես՝ այլ շնորհքն ա̄յ՝ որ ընդ իս։ Արդ՝ եթէ ես և եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, և դուք այսպէս հաւատացիք։

### Ալէլուիա։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցեն 'ի դաւիթս քո։

### Աւետարան որ ըստ Յովհաննու։

Ասաց Տէր առ Հրէայսն որք հաւատացին 'ի նա։ Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի։ Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք զիս, և ոչ հաւատայք։ Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր, առ իս եկեսցէ. և որ գայ առ իս, ոչ հանից արտաքս։ Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս

իմ արարից , այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս ։ Այս են կամք Հօր իմոյ , որ առաքեացն զիս . զի զա̄մ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ , այլ յարուցից զնա յաւուրն յետնում ։

Սարկաւագն . Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ։

Տէր զօրութեանց՝ որ սփոփութիւն ես տրտմեցելոց , և մխիթարութիւն սգաւորաց , և ա̄մ կարձամնաց օգնականութիւն . զսգաւորսն ննջեցելոյս այսմիկ քոյով բարեգթութեամբդ մխիթարեա , և զա̄մ ցաւս սրտի նոցա բժշկեա . և զծառայս քո (այս անուն) , որ յուսով յարութեան յաւիտենական կենացն ննջեաց , հանգո ՚ի գոգն աբրահամու ։

՚Ի ձայն ։

Զի դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջեցելոց ծառայի քո (այս անուն) քրիստոս ա̄ծ մեր . և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

փոխ . գ̄ ։

Որպէս սիրելիք են յարկք քո տ̄ր զօրութեանց . ցանկայ
և փափագի անձն իմ ՚ի գաւիթս քո ։
Ալէլուիա . ալէլուիա ։
Սիրտ իմ և մարմին իմ ցնծացէ առ ա̄ծ կենդանի ։
Ալէլուիա . ալէլուիա ։
Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն , և տատրակ
զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր ։
Ալէլուիա . ալէլուիա ։
Սեղան քո տէր զօրութեանց , թագաւոր իմ և ա̄ծ իմ ։
Ալէլուիա . ալէլուիա ։

Երանի՛ ամենեցուն՝ որ բնակեալ են ՚ի տան տեառն․ յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Ալէլուիա · ալէլուիա։

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր ՚ի քէն է · ելս եդ ՚ի մտի իւրում ՚ի հովտես տրտմութեան ՚ի տեղւոջ յորում ուխտեաց։

Ալէլուիա · ալէլուիա։

Զօրհնութիւն տացէ՝ որ զօրէնս դնէ · գնասցէ նա ՚ի զօրութենէ ՚ի զօրութիւն · և երևեսցի ած հրեշտակաց ՚ի սիոն։

Ալէլուիա · ալէլուիա։

Տէր ած զօրութեանց՝ լուր աղօթից իմոց · ունկն դիր ած յակոբայ։

Ալէլուիա · ալէլուիա։

Ընդունող ես դու մեր · տես ած և նայեաց յերեսս օծելոյ քոյ։

Ալէլուիա · ալէլուիա։

Զի լաւ է ինձ՝ մի օր ՚ի գաւիթս քո, քան զհազարս։

Ալէլուիա · ալէլուիա։

Ընտրեցի ես ընդ աղբ գալ ՚ի տան այ առաւել, քան բնականալ ՚ի յարկս մեղաւորաց։

Ալէլուիա · ալէլուիա։

Զողորմութիւն և զճշմարտութիւն սիրէ տէր ած մեր · զշնորհս և զփառս տացէ։

Ալէլուիա · ալէլուիա։

Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն իւր յայնցանէ, որ գնան յանբծութեան։

Ալէլուիա · ալէլուիա։

Տէր ած զօրութեանց, երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ։

Ալէլուիա · ալէլուիա։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ալէլուիա · ալէլուիա։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ալէլուիա · ալէլուիա։

## Այլ ձայն երգ․ ծէ։

Եղբա՛րք իմ սիրելիք մի՛ մոռանայք զիս յորժամ օրհնէք զտէր․ այլ յիշեցէ՛ք զփափագ իմ և զսէր, յիշեցէք և զեղբայրութիւն իմ, և աղաչեցէ՛ք զտէր ած, զի հանգուսցէ զիս ընդ արդարոց։

Յանկարծակի եկաց ՚ի վերայ իմ օրհասս մահուն, և անջատեաց զիս այսօր ՚ի մերձաւորաց իմոց․ այլ փոխադրեալ հանգո՛ զիս քրիստոս՝ յօթեվանն ցնծութե։

## Քահանայն․

Ողորմեա՛ մեզ տէ՛ր ողորմեա՛ մեզ, զի մեք մեղաւորքս յամի անպատասխանի գտեալ՝ զաղաչանս զայս քեզ մատուցանեմք որպէս տեառն․ ողորմեա՛ մեզ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Տէ՛ր ողորմեա՛ մեզ․ զի ՚ի քեզ ապաւինեցաք, մի՛ խապառ բարկանար մեզ, և մի՛ յիշեր զանօրէնութիւնս մեր․ այլ հայեա՛ց ՚ի մեզ այժմ ըստ բարեգթութե քում, և փրկեա՛ զմեզ ՚ի թշնամեաց մերոց․ զի դու ես ած մեր․ և մեք ժողովուրդք քո, և գործք ձեռաց քոց ամենեքին․ և կարդամք զանուն քո։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Աստուածածնի․

Բա՛ց մեզ զդուռն բարեգթութե օրհնեալ ածածին․ առ քեզ ապաւինեցաք, որպէս զի միջնորդութբ քով ազատեսցուք ՚ի փորձանաց, մի՛ յամօթ առներ զմեզ․ զի դու ես փրկութի ազգին քրիստոնէից։

## Մեղեդի․

Անձն նորա ՚ի բարութե հանգիցէ, և զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր։

Առ քեզ տէր կարդացի ած իմ մի՛ լռեր յինէն, մի՛ երբեք լռիցես յինէն, նմանիցիմ այնոցիկ որք իջանեն ՚ի գուբ։

Պօղոսէ առաքելոյն ՚ի հռովմայեցւոց առաջին գլխոյն է ընթերցուած ։

Ե՛ղբարք՝ քն յարուցեալ է ՚ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց · քանզի մարդով եղեւ մահ · եւ մարդով յարութիւն մեռելոց ։ Որպէս ադամաւ ամենեքին մեռանին · նոյնպէս եւ քսիւ ամենեքեան կենդանասցին ։ Իւրաքանչիւր յիւրում կարգի · նախ քն , եւ ապա քրիստոսեանք ՚ի գալստեան նր ։ Եւ ապա կատարած · յորժամ տացէ ՚ի ձեռս զթագաւորութիւն այ՝ եւ հօր · յորժամ խափանեսցէ զամ իշխանութիւն եւ զամ պետութիւն եւ զզօրութիւն ։ Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչեւ դիցէ զամ թշնամիս ՚ի ներքոյ ոտից իւրոց ։ Յետին թշնամին խափանի՝ մահ · եւ զամ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա ։ Այլ յորժամ ասիցէ · թէ հնազանդեալ է նմա ամ , յայտ է՝ թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց նմա զամ ։ Այլ յորժամ հնազանդեսցի նմա ամ՝ յայնժամ եւ ինքն որդի հնազանդեսցի այնմ , որ հնազանդեցոյց նմա զամ · զի եղիցի ած ամ յամի ։

Ալէլուիա ։

Երանեալ է այր որ երկնչի ՚ի տեառնէ , զպատուիրանս նորա նա կամի յոյժ ։

Սուրբ աւետարանս որ ըստ յովհաննու ։

Ասաց տէր առ հրէայսն որք եկեալ էին առ նա ։ Այս են կամք հօր իմոյ , որ առաքեացն զիս · զի զամ զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ , այլ յարուցից զնա յաւուրն յետնում ։ Այս են կամք հօր իմոյ · զի ամ որ տեսանիցէ զորդի՝ եւ հաւատայցէ ՚ի նա , ընկալցի զկեանսն յաւիտենականս · եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում ։

Սղս երանեան · ճա ։

Յիշեա զիս տէր յարքայութեան քում , յորժամ գայցես արքայութեամբ քով ։

Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութի՟ն երկնից.

Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին.

Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր.

Երանի որք քաղցեալ և ծարաւի իցեն վասն արդարութեան, զի նոքա յագեսցին.

Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութի՟ գտցեն։

Յառաջագոյն ճաշակեալ ադամ 'ի փայտէն, արտաքսեցաւ 'ի դրախտէն. իսկ աւազակն կախեալ զխաչէն, զքեզ ա՟ծ խոստովանելով եմուտ 'ի դրախտն. և մեք փրկեալքս չարչարանօք քո տէ՛ր, ո՟պ զաւազակն հաւատով գոչեմք, յիշեա և զմեզ յորժամ գայցես արքայութեամբ քով։

Երանի այնոցիկ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զաստուած տեսցեն։

Արարիչն իմ առեալ հող յերկրէ՝ կերպաւորեաց զմարմին իմ ա՟ծային կամօք. իսկ զհոգիս կենդանարար փչմամբ շնչաւորեալ՝ ետ 'ի նմա ա՟ծ հրամանաւ. վասն որոյ զիս զչարաչար անկեալս ընդ ապականութ՟ մեղաց, որ կոչեցեր առ քեզ մարդասէր ա՟ծ ըստ բազում գթութեան քում, ընդ սուրբս քո հանգո՛։

Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք ա՟յ կոչեսցին։

Սոսկալի և ահարկու այս խորհուրդ, յորժամ անջատին հոգի և մարմին. հոգին երթայ թախծագին սգով, և մարմինն ծածկի ընդ երկրաւ. ուստի և մեք գիտելով զելս մեր յաստի կենցաղոյս, առ փրկիչն մեր կանխեսցուք արտասուօք աղաղակելով. յիշեա և զմեզ յորժամ գայցես արքայութեամբ քով։

Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութ՟, զի նոցա է արքայութիւնն երկնից.

Փոխադրե՟լս բարբառի առ ամենեսին, վ՟ն է՞ր ողբայք զիս ցաւագին ո՛վ մարդիկ, վասն է՞ր 'ի զուր խռովիք. մահն եղև հանգիստ ամենեցուն. լուիցուք ձայնին

յոբայ որ ասէ , մա՛հ առն հանգիստ իւր է · ողորմեա ա͞ծ հանգո՛ զսա ընդ սուրբս քո զոր ընկալար ։

Երանի է ձեզ , յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն , և ասիցեն զա͞մ բան չար զձէնջ սուտ վ͞ն իմ ։

Իմաստունն պօղոս յառաջագոյն յայտնի ծանոյց վ͞ն փոխելոց յաստեաց , ուսուցանելով ամենեցուն , թէ մեռեալք յարիցեն առանց ապականութե͞ , և փոխիցուք ա͞ծային հրամանաւ · փողն ահագին գոչեսցէ , և զարթուսցէ զննջեցեալսն 'ի յաւիտենից · ողորմեա ա͞ծ հանգո՛ զսա ընդ սուրբս քո զոր ընկալար ։

Ցնծացէ՛ք և ուրախ լերուք , զի վարձք ձեր բազում են յերկինս ։

Ննջեցեալս այս որ եդեալ կայ 'ի գերեզմանի , աննախանձաբար աղաղակէ առ ամենեսին · եկա՛յք առ իս ո՛վ երկրածինք , տեսէ՛ք զիա՞րդ սեւացեալ կայ գեղեցկութի͞ մարմնոյս · ուստի եղբարք՝ ծանուցեալ զելս մեր կանխեսցուք առ փրկիչն արտասուօք գոչելով · հանգո՛ զսա ա͞ծ ընդ սուրբս քո ։

Փառք հօր և որդւոյ և″ ։ Եւ այժմ և միշտ և″ ։

## Աստուածածնի ։

Անսերմնաբար և 'ի վեր քան զբնութիւն յորովայնի քում յղացար զա͞ծն նախայաւիտեան , և մարմնով ծնար զնա ա͞ծ և մարդ անշփոթ և անփոփոխելի · վասն որոյ և մեք ա͞ծածին զքեզ միշտ ճանաչելով , առ ծնեալն 'ի քէն ա͞ծ հաւատով գոչեմք · յիշեա՛ զմեզ ք͞ո յարքայութեան քում ։

## Մեսեդի ։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար , և բնակեսցէն 'ի գաւիթս քո ։

Անձն նորա 'ի բարութե͞ հանգիցէ , և զաւակ նորա ժառանգեսցէ զերկիր ։

Պօղոսի առաքելոյն 'ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուած։

Եղբարք՝ որ խորհի զօրն՝ տեառն խորհի. և որ ոչն խորհի զօրն, տեառն չխորհի. և որ ուտէ, տեառն ուտէ, և գոհանայ զա՛յ. և որ ոչն ուտէ, տ՛ն չուտէ, և գոհանայ զա՛յ։ Զի ոչ ոք 'ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի։ Եթէ կեամք՝ տեառն կեամք, և եթէ մեռանիմք՝ տեառն մեռանիմք. և արդ՝ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ տեառն եմք։ Քանզի 'ի նոյն իսկ և ք՛ս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեսցէ։

Ալէլուիա։

Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։

Աւետարան որ ըստ Յովհաննու։

Ասաց տէր առ հրեայսն որք եկեալ էին առ նա։ Ես եմ հացն կենաց։ Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին՝ և մեռան։ Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛ մեռանիցի. ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ 'ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ Մարտնչէին ընդ միմեանս հրեայքն՝ և ասէին. զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել։ Ասէ ցնոսա յ՛ս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ՝ և արբջիք զարիւն ն՛ր, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում։

Աղօ Ողորմեա ինձ ա՛ծ. Ծ սաղմոս։

Երգ. ա՛. Ժէկ. ըստ եղանակին որ երգի Ալերգք ծովու։

Դու բարերար և տէր ամենից ք՛ս՝ անկանիմք առաջի քո ջերմ արտասուօք, զգերեզմանական զերդա

զայս վերադարձելով · հանգո՛ զհաւատարիմ ծառայ քո որպէս բարեգութ ։

Մա՛րդասէր բան աղաչեմք զքեզ, զմեռեալս յուսով յարութեան՝ արժանաւորեա՛ կալ ընդ ընտրելոց քոց ՚ի յաջմէ քումմէ ։

Զընտրեալ ծառայ քո որ փոխեցաւ յերկրէ, այժմն՛ արա մա՛րդասէր՝ ուրախանալ յերկնային սուրբ արքայութեան, անտես առնելով զյանցանս հոգւոյն, որպէս բարեգութ ։

Նուա՛ղ՝ փառք կենցաղոյս որպէս խոտ ծաղկեցաւ, և առժամայն ցամաքեցաւ · պատիւն և յարգանք ամփոփեցան ՚ի գերեզմանի · չի՛ք անդ կերպարան կամ գեղեցկութիւն · վասն որոյ խնայեա՛ տէր ՚ի ծառայ քո որպէս բարեգութ ։

## Աստուածածնի ։

Պարտաւոր եմք ամենեքին փափագանօք օրհնել զքեզ՝ անարատ կոյս մարիամ մայր այ̃ · զի անդադար բարեխօս լինիս վասն մեր · այժմ փրկեա՛ զմեզ ՚ի յանցանաց և ՚ի դատաստանէ մահու ։

## Խաղ · Գ̃ · Ո՛չ գոյ սուրբ ·

Ո՛չ է մարդ ՚ի յերկրի որ ոչ մեղաւ ա̃ծ բան · վասն որոյ ընկա՛լ զաղաչանս նուաստութեանս մեր, և ներեա՛ քաւեա՛ փրկիչ՝ զա̃մ յանցանս ծառայի քո այսմիկ ։

Մա՛րդասէր՝ ո՛վ է որպէս զքեզ տէր բարեգութ, որ իշխանութ̃ թողուս զմեղս կենդանեաց և մեռելոց · այսու իշխանութ̃ կեցո՛ և զծառայ քո ։

Որ միայնդ ես առանց մեղաց փրկիչ, ընդունելով զվերջին արտասուալից պաղատանս, արա՛ ժառանգորդ վերին կոչման զփոխեալս հաւատով ։

## Օրհնութի̃ · որ յուղարկէն չօչէ Խաղն · ա̃կ ։

Ո՛չ գոյ սուրբ իբրև զքեզ տէր ա̃ծ մեր բարերար, որ բարձրացուցեր զեղջիւր հաւատացելոց քոց, և հաստատեցեր զմեզ ՚ի վերայ վիմի խոստովանութեան քո ։

Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք ։
Եւ ևս աղաչեսցուք վասն երանութ̄ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա̄յ (այս անուն), և վ̄ն թողլոյ սմա զա̄մ յանցանս զկամայ և զակամայ ։
Որպէս զի տէր ա̄ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։
Զողորմութի̄ւն ա̄յ և զարքայութի̄ւն երկնից, և զթո-ղութիւն մեղաց սորա 'ի ք̄նէ յանմահ Թագաւորէն և յա̄յ մերոյ խնդրեսցուք ։

Քահանայն ։

Աստուած հոգւոց և ա̄մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին տէր՝ հանգո զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), 'ի լուսաձեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանսն, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։
Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտա-ծութ̄բ՝ թող սմա որպէս բարի և մարդասէր ա̄ծ . զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ . քանզի դու միայն ես առանց մեղաց . արդարութի̄ քո արդարութի̄ յաւիտենա-կան, և բանք քո ճշմարտութիւն ։
Զի դու ես յարութի̄ և կեանք և հանգիստ ննջե-ցեալ ծառայի քո (այս անուն) քրիստոս ա̄ծ մեր . և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Ապա ասայ Երգ . բ̄կ ։

Յիրաւի ունայնութի̄ է ա̄մ ինչ, և կենցաղս այս ստուեր և երազ . ապա 'ի զուր խռովի ա̄մ երկրածին որպէս ասաց գիր . քանզի յորժամ շահիմք զաշխարհս, յայնժամ բնակիմք 'ի գերեզմանի, ուր 'ի միասին են

Թագաւորք և տղայք . վասն որոյ ք՛ս հանգո՛ զծառայ
քո յերկիրն կենդանեաց 'ի խորանս արդարոց .
փառք Հօր և որդւոյ և" . Եւ այժմ և միշտ և" .

Աստուածածնի .

Ամենասուրբ մայր այ մի՛ թողուր զիս 'ի ժամանակի կենաց իմոց , մի՛ յանձներ զիս մարդկային վերակացութեան . այլ դու լեր ինձ պաշտպան և ողորմեա՛ .

## Երգ . Դ . 'Ի խաչի զածային խոնարհութեն .

Ահաւոր դատաստան սոսկալի աւուրն կայ և մնայ ննջեցելոց . ապա յաւէտ խնդրեսցուք հաւատով 'ի ք՛նէ , զի յարուսցէ զաս 'ի կեանս .

Տե՛սբօդա ք՛ս բարերարութ փրկիչ զծառայ քո զայս որ ապաշխարութբ վառեաց զլապտերն նախ քան զմահն իւր . արժանացո՛ առագաստին քո ուրախութբ .

Յորժամ մերկացուցանես զիմ գաղտնիս ք՛ս , և յանդիմանես զմեզ . յայնժամ խնայեա՛ սմա տէր բարերար , յիշելով զսորա խոստովանութին .

Աստուածածնի .

Մի՛ մոռանար զմեզ որ լալագին պաղատ՟օք գոչեմք առ քեզ սրբուհի ածածին , զի գտցէ հաւատացեալ ծառայ քո 'ի փոխիլ իւրում զհանգիստ .

## Երգ . Ե . Ամենայնութեան քո .

'Ի պարս ընտրելոց և 'ի փափկութե դրախտին բնակեցո՛ զսա գթած , զոր փոխեցեր 'ի մէնջ հաւատով , և արժանաւորեա՛ զապաշխարօղս արքայութե քում . քանզի դու եղեր փրկիչ մեզ ամենեցուն մահկանացու մեղուցելոց զածային ապաշխարութբ որպէս տէր .

Իշխանաբար ողորմիս ստեղծուածոյ քում որպէս ած և տէր , որ նորին մարդկային օրինաց հպատակեցար միայն մարդասէր . վասն որոյ քաւեա՛ և թո՛ղ փրկիչ զմեզ փոխադրելոյս հաւատով , և արժանի արա զսա արքայութեան քում .

Ոչ ոք կարէ փախչել յահեղ ատենէ դատաստանի քո . Թագաւորք և իշխանք ամենեքեան կան 'ի միասին ընդ ծառայից . և ահագին ձայն դատաւորին կոչէ զմեղուցեալ ժողովուրդսն 'ի դատապարտութի գեհենին . յորմէ փրկեա՛ Քրիստոս զծառայս քո .

## Աստուածածնի .

Կոյս անհարսնացեալ՝ աղաչեմ անդադար զծնեալն 'ի քէն ըստ բնութե մարդկան , որ 'ի վեր է քան զբնութի , զի փրկեսցուք ամենեքեան 'ի գեհենոյն , և 'ի վշտաց , և յահագին տանջանացն դժոխոց . և կեցո՛ զսա՝ որ այժմ փոխադրեցաւ 'ի մէնջ հաւատով .

## Ձայն · Է · Անդունդ անհնարին .

Մահ և գերեզման և դատաստան մեզ սպասեն , յանդիմանելով զգործս մեր . յորմէ փրկեա՛ մարդասէր՝ զծառայս քո զոր փոխեցեր .

Քրիստոս փրկիչ մեր աղաչեմք զքեզ , ընդ փոխադրելոյս զդուռն ողորմութե քո , զի պարեսցէ 'ի փառս , մասնակից լինելով ուրախութե քոյին Թագաւորութե .

Ազատեա՛ 'ի յանցանաց ողորմութե քո մարդասէր փրկիչ զծառայս քո զայս , զոր փոխեցեր այժմ հաւատով . զի ոչ ոք արդարանայ մարդկային գործով .

## Աստուածածնի .

Արարիչն որ մահուամբ մեռոյց զմահ և եբարձ զանէծս , ծնաւ մարմնով 'ի քէն Աստուածածին . և կեցուցանէ զմեզ մեռեալս որպէս բարերար և մարդասէր .

## Օրհնութիւն .

Անդունդք անհնարինք մեղաց պաշարեցին զիս , և ոչ կարեմ հանդուրժել . որպէս Յովնան աղաղակեմ առ քեզ տէր , հան զիս յապականութե .

## Սարկաւագն .

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք .

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութե և մշտնջենաւոր

հանգստեան ննջեցեալ ծառայիս տյ (այս անուն) , և վն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի տէր ած մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութիւն այ և զարքայութին երկնից , և զթողութիւն մեղաց սորա ՚ի քէ յանմահ թագաւորէն և յայ մերոյ խնդրեսցուք ։

Զ տէր աղաչեսցուք ։

Եւ ասէ քահանայն զաղօթս ։

Ած հոգւոց և ամ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ , և խափանեցեր զսատանայ , և պարգևեցեր զկեանս աշխարհի , ինքնին տէ՛ր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն) , ՚ի լուսաձեմ և դալարաւէտ և հովեզուարճ կեանսն , յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութբ՝ թող սմա որպէս բարի և մարդասէր ած ․ զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ ․ քանզի դու միայն ես առանց մեղաց ․ արդարութի քո արդարութի յաւիտենական , և բանք քո ճշմարտութիւն ։

Զի դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջեցեալ ծառայի քո (այս անուն) քրիստոս ած մեր ․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Մաղթ ժողովածոյ ․ որ յաւերժն ասէ Գրիգորիս ։

Քրիստոս ած հանգո՛ զհոգի ծառայի քո ընդ սուրբս քո , ուր ո՛չ գոյ վիշտ և ցաւ և հառաչանք , այլ կեանք անվախճան ։

Դու ինքն միայն ես անմահ , որ արարեր և ստեղծեր զմարդ ․ իսկ մահկանացուքս յերկրէ առաք , և յերկիր դարձցուք ․ որպէս և հրամայեցեր , թէ հողեր

և 'ի հող դարձցիս • առ որ երթամք ամենեքին գերեզմանական ողբաձայն երգովս ալէլուիա ։

Աղաչեմ զձեզ լուարո՛ւք ինձ , քանզի ցաւօք բարբառիմ զայսոսիկ , յորժամ երգէք զողբս զայս և օգնէք , յիշեցէք և զիս , որ երբեմն 'ի միասին մտանէաք 'ի տունն ա̃յ , և սաղմոսէաք ալէլուիա ։

Ամենեքեան ժողովեալ նստարուք , և լուարո՛ւք զբանս զայսոսիկ • ահաւո՛ր է եղբարք ատեանն դատաստանին , ուր հանդերձեալ եմք կալ ամենեքին • ոչ գոյ անդ ծառայ և ոչ ազատ , ոչ մեծ և ոչ փոքր , այլ ամենեքին մերկ կացցուք առաջի ատենին • վասն այսորիկ բարի՛ է սակս սաղմոսել ալէլուիա ։

Տոչորիմք 'ի միասին ամենեքին արտասուօք , յորժամ տեսանեմք զմեռեալն առաջի մեր • և 'ի մօտիլ մեր առ 'ի ողջունել , թուի թէ ասեմք • ահա՛ թողեր զսիրելիս • այսուհետև ոչ խօսիս ընդ մեզ • և լռեալ ես 'ի բարբառելոյ ալէլուիա ։

Զիա՞րդ դառն են մեռելոցն բանք՝ զորս բարբառին յորժամ 'ի բա՛ց մեկնին • եղբարք՝ ահա հրաժարիմ յեղբարցդ , զա̃մ սիրելիս իմ թողում և գնամ • ո՛չ գիտեմ թէ ո՞ւր երթամ , և կամ զի՞նչ լինելոց իցեմ • բայց որ կոչեացն զիս ա̃ծ՝ նա միայն գիտէ • վասն որոյ արարէք զյիշատակն իմ երգովս ալէլուիա ։

Այժմ ո՞ւր երթան հոգիք , այժմ զիա՞րդ զկեանս վարեն , ցանկամ գիտել զայս խորհուրդ , այլ ոչ ոք բաւական է պատմել • արդեօք յիշեն նոքա և զմեզ , որպէս մեք յիշեմք զնոսա • կամ նոքա մոռացեալ իցեն զմեզ , որք ողբամք վասն նոցա , երգելով ալէլուիա ։

Ողբակի՛ց լերուք մեռելոցն սիրելիք , և փութո՛վ հասէք 'ի գերեզման • և անդ մտադրու̃թ հայեցարո՛ւք , և զգնացս ոտից ձերոց ուղղեցէք • անդ ա̃մ մանկութիւն ապականի , անդ ա̃մ հասակ թարշամի • անդ փոշի և մոխիր և որդունք • անդ ամենևին լռութի̃ • և ոչ ոք գոչեացէ ալէլուիա ։

Ահա այժմ տեսանեմք զայս որ անկեալ դնի առաջի

մեր · բայց այսուհետեւ ոչ եւս կարէ լինել ընդ մեզ · ահա լռեաց լեզուն · ահա եւ շրթունք փակեցան · այժմ անձայն բարբառի առ մեզ ասելով, բարեաւ կացէք սիրելիք, բարեաւ կացէք զաւակունք, ողջ կացէք եղբարք, ողջ կացէք ծանօթք · քանզի ես երթամ զճանապարհ իմ · բայց զյիշատակն իմ արարէք երգելով ալէլուիա ։

Ոչ ոք 'ի մեռելոց վերստին կենդանացաւ զի պատմեսցէ մեզ, թէ ո՛րպէս կեան եղբարք մեր եւ որդիք, որք յառաջ քան զմեզ գնացին առ տէր · ուստի բազում անգամ ասեմք ամենեքեան, իցէ՞ արդեօք տեսանել անդ զմիմեանս, իցէ՞ արդեօք տեսանել զեղբարս, իցէ՞ արդեօք 'ի միասին սաղմոսել ալէլուիա ։

Հանդերձեալ եմք երթալ ամենեքին զճանապարհն յաւիտենական · եւ կալ յատենի որպէս պարտաւորք, 'ի խոնարհ ունելով զդէմս մեր · ո՞ւր յայնժամ գեղեցկութի̃, ո՞ւր հարստութի̃, ո՞ւր յայնժամ փառք կենցաղոյս այսմիկ · ոչ ինչ յայսցանէ օգնեսցէ մեզ, բայց միայն ստէպ սաղմոսելն մեր ալէլուիա ։

Զի՛նչ տարժանիս 'ի նանիր ով մարդ, զա̃մ ինչ անցանէ 'ի միում ժամու · ոչ գոյ 'ի դժոխս ապաշխարութի̃, եւ ոչ հանգիստ · անդ գոյ որդն անքուն, անդ խաւար շօշափելի, ուր հանդերձեալ են դատապարտիլ մեղաւորք · արդ յանձնեցէք այժմ ասել ալէլուիա ։

Ոչ ինչ այնպէս շուտով լինի մոռացեալ, ո̃պ մարդ 'ի մարդոյ բաժանեալ · զի թէպէտ փոքր մի ժամանակ յիշեմք, այլ անդրէն մոռանամք · թէեւ ծնօղք մեր իցեն, եւ կամ զաւակք զորս ծնաք եւ սնուցաք, եւ յուղարկաւորեցաք արտասուելով եւ սաղմոսելով ալէլուիա ։

Յիշատակեմ զձեզ առ տէր, եղբարք իմ եւ որդիք եւ սիրելիք, եւ աղաչեմ զձեզ թախծագին պաղատանօք · թէ 'ի գիշերի եւ թէ 'ի տունջեան մի՛ մոռանայք զիս, յորժամ աղօթս առնէք, ասելով ալէլուիա ։

Ահա զա̃մ ինչ թողեալ երթամք, եւ մերկ եւ տխուր կալոց եմք յատենի · գեղեցկութի̃ որպէս դալարի թարշամի · 'ի զուր դեգերիմք անդադար · ով տառապեալ՝

մերկ ծնար և մերկ կալոց ես առաջի, մի՛ ինչ խորխտար յաշխարհի, այլ յա̃մ ժամ հառաչեա՛ դողելով ալէլուիա։

Ո՛վ մարդ՝ եթէ ողորմեցար մարդոյ, գտցես անդ ողորմութիւն. եթէ կարեկից եղեր որբոյ, ընկալցիս անդ կարեկցութիւն. եթէ զմերկն զգեցուցեր, ընկալցիս անդ ծածկոյթ երգելով ալէլուիա։

Դժուարին է ճանապարհս այս, ընդ որ ոչ երբէք գնացի. և գաւառն անծանօթ, ուր ոչ ոք ճանաչէ զիս. ահարկու են որք զիսն տանին, և ահաւոր է որ կոչեացն զիս. տէր է նա կենաց և մահու, յորժամ կամի կոչէ զամենեսին զմեզ՝ որք ասեմք ալէլուիա։

Յորժամ հասեմք ՚ի գաւառն յայն տեղի՝ կարօտիմք առաջնորդի. զինչ արասցուք յերթալ մերում ՚ի գաւառն յայն զոր ոչ ճանաչեմք. բազում առաջնորդք պիտոյ են քեզ յայնժամ, բազում աղօթից օգնականութիւնք առ ՚ի փրկել զանձն տառապեալ, մինչև ՚ի հասանել քո առ քն̃, և ասել առ նա ալէլուիա։

Որք զբաղեալք են ՚ի զբօսանս կենցաղոյս, անդ ոչ ընաւ ունին զհանգիստ. անդ զարհուրելի են ամբաստանօք, անդ բացեալ լինին դպրութիւնք. յայնժամ ո՛վ մարդ յո՞ւմէ յուսասցիս գտանել օգնականութիւն՝ յայնժամ ոչ ոք օգնեսցէ քեզ. բայց եթէ ՚ի կենդանութեան քում բարի ինչ արարեր, և աղքատաց ողորմեցար, և սաղմոսեցեր ալէլուիա։

Մանկունք և գեղեցկունք մարմնոյն ՚ի ժամու մահուան թառշամին. յայնժամ և լեզուն և կոկորդն ցամաքի. տեսութիւն աչացն շիջանի. գոյն երեսացն այլայլի. վայելչութիւն պարանոցին խորտակի. և այնուհետև դադարի ՚ի սաղմոսելոյ ալէլուիա։

Հանդարտեցարուք հանդարտեցարուք, թողէք սմա հանգչել որ անկեալ դնի աստանօր, և տեսէք զմեծ խորհուրդն. ահագին է ժամն, լուռ լերուք՝ զի խաղաղութեամբ երթիցէ հոգին. քանզի է ՚ի մեծի աշխատութեան, և երկիւղիւ բազմաւ աղաղակէ առ ած̃ ալէլուիա։

Ես տեսի մանուկ տղայ որ մեռանէր, և զկեանս

իմ աւաղեցի․ քանզի խռովեցաւ բոլորովին և դողայր․ և իբրև եհաս ժամն՝ աղաղակեաց , հայր իմ օգնեա ինձ , մայր իմ փրկեա զիս․ և ոչ ոք բաւական եղև օգնել նմա․ բայց միայն տեսանելով ցամաքէին , և 'ի գերեզմանին ողբային , երգելով ալէլուիա ։

Որանի՞ք արդեօք յանկարծակի յափշտակեցան յառագաստէ 'ի գերեզման․ 'ի միասին հարսանիք , 'ի միասին յուղարկաւորութի̃․ 'ի միասին խնդութի̃ , 'ի միասին ողբ , և 'ի միասին սաղմոսել ալէլուիա ։

Տենչամք լսելով՝ թէ անդ է լոյս յաւիտենական․ անդ է աղբիւրն կենաց մերոց․ անդ է մշտնջենաւոր փափկութի̃․ անդ է դրախտն , ուր ա̃մ հոգիք արդարոց ուրախանան․ և մեք ամենեքին 'ի միասին անդր մտցուք քն̃իւ , և գոչեսցուք ամենեքեան առ ա̃ծ ալէլուիա ։

## Աստուածածնէ ․

Ամենասրբուհի կոյս անհարսնացեալ , որ ծնար զլոյսն անմատոյց , պաղատիմ առ քեզ , անդադար բարեխօսեա առ տէր վասն ննջեցեալ ծառայիս քո , որպէս զի գտցէ զթողութի̃ յանցանաց իւրոց յաւուր ահեղ ատենին․ քանզի ունիս համարձակութիւն որպէս տիրուհի միշտ բարեխօսել առ որդի քո ։

## Ապա դարձեալ Քաղուածոյ ․

Քրիստոս ա̃ծ հանգո զհոգի ծառայի քո ընդ ս̃րբս քո , ուր ոչ գոյ վիշտ և ցաւ և հառաչանք , այլ կեանք անվախճան ։

## Ձայն ․ Է ․ Անճառելի սքանչելիք ։

'Ի սոսկալի վճռոյն և 'ի հրոյ գեհենոյն , տ̃ր գթած ազատեա ք̃ս զծառայս քո զոր ընկալար հաւատով․ և շնորհեա ծառայի քո քեզ երգել․ ա̃ծ փրկիչ օրհնեալ ես ։

Յերկիրն հեզոց և 'ի դրախտն փափկութե̃ , և 'ի յարկս սքանչելի փառաց քոց արժանաւորեա զննջեցեալ ծառայս քո հաւատով անդադար քեզ երգել․ ա̃ծ փրկիչ օրհնեալ ես ։

Աղուամ է պատիժն, և անպատմելի վիշտն գեհե-նոյն, ուր այրելոց են հոգիք ընդ մարմնոյն. բայց մեք փրկեալք առ 'ի քէն, գոչեսցուք առ քեզ. ա՛ծ փրկիչ օրհնեալ ես։

### Աստուածածնէ.

Աստուածածին անարատ՝ որք օրհնաբանեն զքեզ ճշմա-րիտ մայր ա՛յ՝ պահեա զնա՛ քոյին բարեխօսութ՛բ մինչ-դեռ 'ի կեանս են, և 'ի մահու փրկեա 'ի դառն տանջա-նաց, զի գոչեսցեն առ որդի քո և տէր մեր. ա՛ծ փրկիչ օրհնեալ ես։

## Ձոէ. Ը. Հիացի՛ր սոսկալով ո՛վ երկինք.

Ո՛վ, որպիսի ահագին ժամ մեղուցելոցն սպասէ եղբարք. որպիսի անհնարին երկիւղ. անշէջ հուրն այրէ, անքուն որդն խայթէ. վասն որոյ բարեգութ տէր Ք՛ս՝ զննջեցեալսն հաւատով՝ փրկեա 'ի սոսկալի ա-ւուրն այնմիկ։

Ո՛վ, քանի՞ սքանչելի է ուրախութի արդարոցն, որով զուարճանան 'ի գալստեան դատաւորին. քանզի անդ առագաստն պատրաստեալ է և դրախտն և արքայութի՛ն Ք՛ի. անդ ուրախացո զծառայս քո Ք՛ս՝ ընդ սուրբս քո յաւիտեան։

Ո՛վ, զիա՞րդ հանդուրժել ոք կարասցէ սարսափելի գալստեան քո Ք՛ս՝ յորժամ երկինք որպէս մագաղաթ գալարին, աստեղք անկանին, և երկիւղիւ սասանի ա՛մ արարած. յայնժամ խնայեա ա՛ծ բան՝ փոխադրելոյս 'ի կենաց։

### Աստուածածնէ.

Որ 'ի վեր քան զբնութի մարմնացաւ 'ի քէն որդին, նա է դատաւորն կենդանեաց և մեռելոց, և դատէ զա՛մ երկիր. և փրկէ 'ի տանջանաց՝ որք յա՛մ յաւիտեանս երկիրպագանեն նմա հաւատով, և զքեզ օրհնաբանեն։

## Տուն · Թ · Սիրելի մայր իմ ։

Սիրելիք զա՟մ մեռեալս հաւատով , զի ք՟ն վ՟ն մեր համբեր մարմնով խաչի և Թաղման , և արար զամենեսին որդի անմահութեան , որք գոչեն առ նա . մի՛ մոռանար 'ի դատաստան ընդ ծառայից քոց .

Որք մեռայք յուսով ա՟ծային յարութեան մեք հաւատացեալք , գտցուք 'ի ք՟ն զկեանս ամենեցուն , բայց բազում դատապարտութիւն է 'ի դժոխս . և ոչ ոք ազատեսցէ զինքն . այլ դուք եղբարք՝ վ՟ն ա՟մցուն աղաչեցէք զք՟ն ։

Ո՜վ փոխադրեալս այժմ 'ի մէնջ , դասաւորեա՛ բարերար յանվախճան փառս քո և 'ի փափկութեան դրախտին , զի դիմեաց առ քեզ ուղղափառ հաւատով և ապաշխարութեամբ . և կացո՛ զսա ընդ ընտրեալս քո յարքայութեան քում ։

### Պատասխանի ։

Ո՜ քեզ որ 'ի վեր քան զբնութիւն ա՟ծածին և կոյս , ո՟ղ մայր կենաց օրհնաբանեմք բարեպաշտութեամբ մեք հաւատացեալքս . զի յառաջադոյն մեռեալքս մեղօք՝ 'ի ձեռն քո անմահացեալ գտաք զկեանս ։

### Տուն ։

Սիրելի մայր իմ տեսանելով 'ի գերեզմանի զիս զորդի քո , զոր անսերմնապէս յղացար յարգանդի , զի յարեայց և փառաւորեցայց , և փառօք բարձրացուցից զն՟ն որպէս ա՟ծ , որք հաւատով և սիրով միշտ մեծացուցանեն զքեզ ։

### Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք ։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութեան և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա՟յ (այս անուն) , և վ՟ն թողլոյ սմա զա՟մ յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի տէր ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Ողորմութեան այ և զարքայութեան երկնից, և զթողութիւն մեղաց սորա ՚ի քսէ յանմահ Թագաւորէն և յայ մերոյ խնդրեսցուք։

Քահանայն։

Քս հոգւոց և ած մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին Տէր՝ հանգո զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաձեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանս, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութբ՝ Թող սմա որպէս բարի և մարդասէր ած. զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութի քո արդարութի յաւիտենական, և բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջեցեալ ծառայի քո (այս անուն) քրիստոս ած մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա շարական տաղաչափական, որ յանուրէն կոչի Անաբօս_տիկոն։

Այժմ հանգեայ և գտի դիւրութի բազում. զի փոխեցայ յապականուէ ՚ի կեանս. Տէր փառք քեզ։

Մեսեդի։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Այժմ հանգեայ և գտի դիւրութի բազում. զի փոխեցայ յապականութէ ՚ի կեանս. Տէր փառք քեզ։

Անցէ ՚ի նմա հողմ, ոչ է և ոչ ևս երևի տեղի նր։

Այժմ հանգեայ և գտի դիւրութի բազում. զի փոխեցայ յապականութէ ՚ի կեանս. Տէր փառք քեզ։

Այժմ ընտրեցի յօգնականութիւն ինձ զա՟ծամայր կոյսն · յորմէ ծնար ազատիչդ ամենեցուն Ք՟ս · Տ՟ր փառք քեզ ·

Ձա– ող– Երգ · Ը՟Կ · ըստ Եղանակին , Յոյսն 'ի կենաց ·

Որ ա՟ծային բնութեան հաղորդակից գոլով կենդանարար խորհրդով մարմնոյ քո և արեան՝ փոխեցաւ այժմ առ քեզ ա՟ծային պաշտօնէայն քո · ընկալ 'ի ձեռս քո զհոգի սորա , և դասաւորեա զնա 'ի գաւիթս քո 'ի պարս հրեշտակաց · վասն մեծի ողորմութեան քո տէ՛ր՝ հրամանաւ քով հանգո՛ զոր առեր ·

Օտար է 'ի մտաց խորհուրդն մահուան · քանզի գայ առ ամենեսին յեղակարծ ժամու , և յանկարծ բնութեան · բնութեան 'ի բաց տանի զծերս , զառաջնորդս , զդպիրս , և զվարդապետս · բառնայ 'ի կենաց զեպիսկոպոսունս և զհովիւս որք խորհին զունայնութի · այլ աղաղակեսցուք հանդերձ արտասուօք , տէ՛ր՝ հրամանաւ քով հանգո՛ զոր առեր ·

Քաղաքավարեալ բարեպաշտութեամբ և շնորհօք զարդարեալ քահանայն քո , ընծայամատոյց և պաշտօնէայն ա՟ծայնոց խորհրդոց , որ քով ա՟ծային հրամանաւ փոխեցաւ 'ի զբաղմանց կենցաղոյս , որպէս քահանայ ընկա՛լ և կեցո՛ փրկիչ · և վասն մեծի ողորմութեան քո՝

հրամանաւ քով հանգո՛ զոր առեր ·

Փառք հօր և որդւոյ և՛՛ : Եւ այժմ և միշտ և՛՛ ·

Աստուածածնի ·

Զա՟ծ 'ի քէն մարմնացեալ ծնեալ ա՟ծածին կոյս , առ նա բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր ·

Տէ՛ր ա՟ծ մեր քեզ վայելէ փառք , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ·

Փառք քեզ որ ցուցեր զլոյս ·

Փա՛ռք 'ի բարձունս ա՟յ · և յերկիր խաղաղութի՝ 'ի մարդիկ հաճութի · Եւ օրհնութի քեզ 'ի բարձունս ·

օրհնեալ ես տէր ա՟ծ մեր . օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ ։ Խոստովանիմք տ՟ր զքեզ և երկիրպագանեմք քեզ . փառաւորեմք զքեզ . գոհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոց ։ Տէր Թագաւոր ս՟բ երկնային ա՟ծ և հայր ամենակալ ։ Տէր և որդի հօր միածին յ՟ս ք՟ս և ս՟բ որդի ։ Տ՟ր ա՟ծ գառն ա՟յ և որդի հօր . որ առեր զմերս ՚ի կուսէն ։ Ողորմեցար , բարձեր զմեղս աշխարհի . և արդ ընկալ զաղաչանս մեր ։ Սուրբ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեաց մեզ ։ Զի դու միայն ս՟բ՝ դու միայն բարձրեալ ես՝ դու միայն տէր մեր յ՟ս ք՟ս ։ Տէր և հոգիդ սուրբ՝ որ ՚ի փառս ա՟ծ ընդ հօր . ամէ՟ն ։

Աւ յա՟մ ժամ օրհնեմք զքեզ . տ՟ր և գովեմք զանուն ս՟բ քո՝ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։ Արժանի արա տէր զօրս զայս խաղաղութ՟ . և առանց մեղաց պահեա զմեզ ։ Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ հարցն մերոց . գովեալ և փառաւորեալ է անուն ս՟բ քո յաւիտեանս . ամէն ։ Օրհնեալ տ՟ր՝ ուսո ինձ զարդարութ՟ի քո . (Երիցս կրկնել) ։ Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ ։ Ես ասացի տ՟ր ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ . ես մեղայ քեզ ։ Յոյց մեզ տ՟ր զողորմութ՟ի քո . և զփրկութ՟ի քո տուր մեզ ։ Տէր ողորմութ՟ի քո յաւիտեան . զգործս ձեռաց քոց մի անտես առներ ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի . ուսո ինձ առնել զկամս քո՝ զի դու ես ա՟ծ իմ ։ Ի քէն է տէր՝ աղբիւր կենդանութ՟ . և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս ։ Հասցեա զողորմութ՟ի քո՝ որք ճանաչեն զքեզ տէր ։

Մաղթ զայս երգ Դամասկացւոյն ըստ երրորդ եղանակի . ա՟ձ ։

Ո՞ր փափկութ՟ կենցաղոյս ոչ զհետ գայ տրտմութ՟ի . ո՞ր փառք եկաց ՚ի վերայ երկրի անփոփոխ . ամենեքեան տկարագոյն են քան զստուեր . ամենեքեան պատրողագոյն են քան զերազ . զամենեսին զսոսա ՚ի մի վայրկեան փոխանորդէ մահ . այլ ՚ի լոյս երեսաց քոց ք՟ս , և ՚ի քաղցրութ՟ի գեղեցկութ՟ քո , զսա զոր ընտրեցեր՝ հանգո՛ որպէս մարդասէր ։

Տէր հովուեսցէ զիս , և ինձ ինչ ոչ պակասեսցի ։
Փրկիչ իմ գործով ցուցանես՝ թէ դու ես ա̃մցուն յարութիւն · բանիւ քո ով բան՝ զղազարոս 'ի մեռելոց յարուցեր · յայնժամ Նիգք խորտակեցան , և դրունք դժոխոց սասանեցան · յայնժամ քուն ցուցաւ մահն մարդկան · այլ որ եկիր 'ի փրկել զարարածս քո և ոչ 'ի դատել · զսա զոր ընտրեցեր՝ հանգո' որ̃պ մարդասէր ։
Փառք հօր և որդւոյ և՞ ։ Եւ այժմ և միշտ և՞ ։

## Աստուածածնէ ։

Գովագութ խնամակալ ա̃մցուն ցուցար ծը́նօղդ ա̃յ · պահապան և զօրութի յո̃յ ապաւինելոց 'ի քեզ · օգնական տառապելոց , և արագահաս ազատու̃ն գերելոց · քանզի զքեզ եդ քո̃ զօրավիգ և ախոյեան ընդդէմ բարբարոսաց և անմատչելի պարիսպ · անյաղթելի զօրութի տկարաց , և տուիչ խաղաղութե̃ անձանց մերոց ։

## Սրբ · ը̃ձ ։

Աւա̃ղ ինձ , զիա̃րդ տառապի հոգին յանջատիլ իւրում 'ի մարմնոյ · որքան կողկողի , և ոչ ոք նմա ողորմի · առ հրեշտակս դարձուցեալ զաչս 'ի զուր պաղատի · առ մարդիկ ձեռս տարածեալ՝ ոչ գտանէ օգնականութի · վ̃ն որոյ եղբարք իմ սիրելիք՝ ածեա́լ 'ի միտ զնուաղու̃ն կենաց մերոց , 'ի քն̃է խնդրեսցուք փոխադրելոյս զհանգիստ , և հոգւոց մերոց զմեծ զողորմութի ։

'Ի նեղութե̃ իմում ես առ տ̃ր կարդացի և լուաւ ինձ ։
Եկա́յք տեսցուք զիրս՝ որ 'ի վեր է քան զմիտս · զի որ երէկ էր ընդ մեզ , այժմ անկեալ կայ մեռեալ · զի́նչ յետ սակաւ մի ժամանակի լինիցիմք սասանեալքս · զիա̃րդ որ անուշահոտ իւղովք օծանէին , անկեալ դնին բուրելով զհոտ զազիր · զիա̃րդ զարդարեալքն ոսկւով , անկեալ կան անզարդ և անշարժ · վ̃ն որոյ եղբարք իմ սիրելիք ածեալ 'ի միտ զնուաղութի կենաց մերոց , 'ի քն̃է խնդրեսցուք փոխադրելոյս զհանգիստ , և հոգւոց մերոց զմեծ զողորմութիւն ։

Տէր փրկեա՛ զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց և ՚ի լեզուէ չարէ ։

## Երգ · բ՟ճ ։

Բարեաւ մնասցես մի՛ ունայն կենցաղ · բարեաւ մնասջիք ա՟մ սիրելիք և ազգականք և որդիք · զի ահա երթամ ՚ի ճանապարհ՝ ընդ որ ոչ երբէք գնացի · այլ աղէ՛ յիշելով զսէրն որով սիրէիք զիս , եկա՛յք զհետ իմ , և տո՛ւք գերեզմանի զկաւս , և զքս՟ դատաւորին նուաստ հոգւոյս աղաչեցէք արտասուօք , զերծուցանել զիս ՚ի հրոյն անշիջանելի ։

Փառք հօր և որդւոյ և՛՛ ։ Եւ այժմ և միշտ և՛՛ ։

## Աստուածածնէ ։

Դուռն անանցանելի խորհրդաբար կնքեալ , բարեբանեալ ա՟ծածին կոյս · ընկալ զաղաչանս մեր , և մատո՛ որդւոյ քո և ա՟յ , զի միջնորդութեամբ քո կեցուսցէ զանձինս մեր ։

## Երգ · գ՟ճ ։

Եղբարք իմ սիրելիք՝ ահա անկեալ դնիմ ՚ի միջի ձեր լուռ և անբարբառ · բերան իմ դադարեցաւ · լեզու իմ լռեաց , և շրթունք իմ արգելան · ձեռք իմ կապեցան , և ոտք իմ ընդ միմեանս կցեցան · կերպարանք իմ փոփոխեցան · աչք իմ շիջան , և ոչ տեսանեն զողբացօղսն · լսելիք իմ ոչ լսեն զձիչ աղաղակի տրտմեցելոց · ունչք իմ ոչ զգան զանուշահոտութի՟ խնկոց ։ Եւ քանզի ճշմարիտ սէրն ոչ երբէք մեռանի , վասն որոյ աղաչեմ զա՟մ ծանօթս և զսիրելիսդ իմ յիշատակել զիս յաղօթս , զի գտից յաւուրն դատաստանի զողորմութիւն առաջի ահաւոր բեմի նորա ։

Ունայնութի՟ են մարդկայինքս ա՟մ , որք ոչ մնան յետ մահուան · բառնի հարստութի՟ , ոչ ուղեկցի փառք · քանզի ՚ի ժամանել մահուան՝ սոքա ա՟մքեան կորնչին · վասն որոյ առ անմահն քս՟ գոչեսցուք , զփոխադրեալս ՚ի մէնջ հանգո՛ յօթևանս ցնծութե՟ ։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս , ուստի եկեսցէ ինձ օգնութիւն ։

Վասէ՞ր 'ի զուր խռովիմք ով մարդիկ , ճանապարհն արագահաս է և համառօտ է որ գնամք ․ ծուխ է կեանք մեր , և յետ սակաւուց լինիցիմք գոլորշի և մոխիր և փոշի , և որպէս ծաղիկ թարշամեսցուք ․ Վասն որոյ առ անմահն քեզ գոչեսցուք ․ զփոխադրեալս 'ի մէնջ հանգո՛ յօթեվանս ցնծութեան ։

Փառք Հօր և Որդւոյ և՟։ Եւ այժմ և միշտ և՟։

## Աստուածածնի ։

Նաւահանգիստ փրկութեան զքեզ ունիմք Աստուածածին կոյս՝ ալէկոծեալքս 'ի ծով կենցաղոյս ․ վասն որոյ բարեխօսեա առ Աստուած , որ ծնաւ 'ի քէն անսերմնաբար , և մարդացաւ անճառապէս , զի կեցուսցէ զանձինս մեր ։

## Երգ ․ Գձ ։

Ո՞ւր է ջանք աշխարհիս ․ ո՞ւր ժամանակաւորաց երեւոյթ ․ ո՞ւր է ոսկի և արծաթ ․ ո՞ւր է ծառայից բազմութիւն և խուժան ․ ամենեքեան փոշի , ամենեքեան մոխիր , ամենեքեան ստուեր ․ այլ աղէ՞ գոչեսցուք առ անմահ Թագաւորն , Տէ՛ր՝ զփոխադրեալս 'ի մէնջ արժանաւորեա յաւիտենից բարեաց քոց , հանգուցանելով զսա յանվախճան քո երանութեան ։

Ուրախ եղէ ես որք ասէին ցիս 'ի տուն տեառն երթիցուք մեք ։

Եկն եհաս մահ որպէս յափշտակօղ ․ եկն ապականիչն և քակեաց զիս ․ եկն և արար զիս որպէս չեղեալ , և զհողս դարձոյց 'ի հող ․ յիրաւի երազ , յիրաւի երեւոյթ եմք մահկանացուքս ․ այլ աղէ՞ գոչեսցուք առ անմահ Թագաւորն ․ Տէ՛ր՝ զփոխադրեալս 'ի մէնջ արժանաւորեա յաւիտենից բարեաց քոց , հանգուցանելով զսա յանվախճան քո երանութեան ։

Փառք Հօր և Որդւոյ և՟։ Եւ այժմ և միշտ և՟։

Աստուածածնի ։

Միայն սրբուհի և անարատ կոյս , որ զա͞ծ անսերմնաբար ծնար , բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր ։

Ձյն · ա͞կ ·

Յիշեցի զմարգարէն որ գոչէ , ես եմ հող և մոխիր · և դարձեալ նայեցայ 'ի գերեզմանս , և տեսի զոսկերս մերկացեալ , և ասացի՝ արդեօք ո՛վ է թագաւոր՝ կամ զօրական , փարթամ՝ կամ աղքատ , արդար՝ կամ մեղաւոր · այլ ընկա՛լ և հանգո՛ տէ՛ր ա͞ծ զծառայ քո ։

Հաստատեալ էին ոտք մեր առ դրունս քո եղէմ․ Դու ասացեր տէ՛ր ք͞ս , որ հաւատայ յիս՝ զմահ մի տեսցէ · այլ որպէս ես 'ի լուսոյ լոյս 'ի լոյսն եմ, վասն զի եմ ա͞ծ ճշմարիտ , նոյնպէս և դուք լուսաւորեալ փայլեցարուք յիս փառօք իմովք · զի եկի կեցուցանել զայնոսիկ՝ որք ճշմարիտ և ուղղափառ հաւատով պաշտեն զիս , մի տէր ա͞ծ կրկնակի բնութ͞ե մարմնոյ և ա͞ծութ͞ե , վ͞ն որոյ զհաւատացեալ ծառայ քո քաւեա՛ ո͞վ մարդասէր ։

Փառք հօր և որդւոյ և՛՛ ։ Եւ այժմ և միշտ և՛՛ ։

Աստուածածնի ։

Զքեզ աղաչեմք ո͞վ մայր ա͞յ՝ օրհնաբանեալ , բարեխօսեա կեցուցանել զմեզ ։

Ձյն · ա͞կ ։

Արարչական հրամանն քո ստեղծ զիս · քանզի կամեցեալ յերևելի և յաներևոյթ բնութ͞ե արարչագործել զիս կենդանի , 'ի հողոյ կազմեցեր զմարմին իմ, և ա͞ծային և կենդանարար փչմամբ քո ետուր ինձ հոգի · վ͞ն որոյ հանգո՛ զծառայս քո յերկիրն կենդանեաց 'ի յարկս արդարոց ։

Պատկերաւ քով պատուեցեր զստեղծուած ձեռաց քոց բանդ ա͞ծ · քանզի նիւթական կերպարանաւ կենդանագրեցեր զնմանութի իմանալի գոյութ͞ե · որում

հաղորդակից արարեր զիս՝ եդեալ 'ի վ՟ր երկրի, իշխել ստեղծուածոց ինքնիշխանութ՟բ․ վ՟ն որոյ փրկիչ հանգո՛ զծառայ քո յերկիրն կենդանեաց 'ի խորանս արդարոց։

Փառք հօր և որդւոյ և՟։ Եւ այժմ և միշտ և՟։

Աստուածածնէ։

Ո՛վ ա՟ծ 'ի քէն մարմնացեալ ծանեաք ա՟ծածին կոյս, միայն ս՟րբուհի, միայն օրհնեալ․ վասն որոյ անդադար բարեբանել մեծացուցանեմք։

Երգ․ Գ՟կ․

Որ ըստ պատկերի քո և ըստ նմանութ՟ կազմեցեր 'ի սկզբանէ զմարդն, և եդեր 'ի դրախտին իշխել ստեղծուածոց քոց․ իսկ նա պատրեալ նախանձու բանսարկուին՝ ճաշակեաց 'ի կերակրոյն, և եղև յանցաւոր պատուիրանաց քոց․ վ՟ն որոյ ո՛ տ՟ր՝ դատակնիք 'ի վ՟ր եդեր, դառնալ յերկիր յորմէ առաւ, և գտանել զհանգիստ։

Որպէս սիրելի են յարկք քո տէ՛ր զօրու՟ց, ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո։

Մահն լուծանէ զա՟մ դառնութ՟ի՝ թափանցեալ յադամայ 'ի բնութ՟ մեր․ քանզի ճաշակմամբ պտղոյն ապականացու եղաք․ գիտասցուք թէ կազմելով 'ի հողոյ լինիցիմք դարձեալ փոշի և մոխիր․ վասն որոյ լալագին ձայնիւ պաղատեսցուք արարչին՝ պարգևել փոխադրելոյս զհանգիստ և զողորմութիւն։

Փառք հօր և որդւոյ և՟։ Եւ այժմ և միշտ և՟։

Աստուածածնէ։

Ո՛ քեզ ա՟ծածին պարիսպ անկործանելի և յոյս՝ ունիմք հաւատացեալքս․ քանզի ի՟նքնին գիտես զբնութ՟ի մեր ապականեալ ա՟մ մեղօք․ վասն որոյ մի՛ դադարեր տիրուհի բարեխօսել վասն հաւատով ննջեցեալ ծառայից քոց գտանել զհանգիստ 'ի դատաստանին, յորժամ նստիցի յաթոռ փառաց որդի քո և ա՟ծ․ զի ամենեքեան երանեսցուք զքեզ։

իա

## Ձյն · Գկ ·

Ողբամ և աշխարեմ յորժամ մտածեմ զմահ · և տեսանեմ զգեղեցիկ պատկերն Ածատիպ` եդեալ 'ի գերեզմանի անկերպ և անվայելուչ, որ ոչ ունի զտեսիլ մարդոյ · ո՜վ` սոսկամ սասանեալ, զի՞նչ է այս գաղտնիք որ 'ի մեզ · զիա՞րդ մատնեցաք ապականութե · զիա՞րդ լծակից եղաք մահուան · արդարև հրամանաւն այ եղև, որպէս և գրեալ է · վասն որոյ աղաչեսցուք զԱծ, զի շնորհեսցէ փոխադրելոյս զհանգիստ ։

Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Ած կենդանի ։

Զիա՞րդ եղաք ապականացու, որ զգեցաք զպատկեր անապական, և Ածային փչմամբ ընկալաք զհոգի անմահ · և եղաք խառնեալ յերկոցունց, ով և գրեալ է · և զիա՞րդ ստունգանեցաք պատուիրանացն այ · ո՜վ սոսկալի իրացս · զիա՞րդ զկերակուրն կենաց թողեալ` կերաք զկերակուրն դառնութե զպատճառն մահու · զիա՞րդ պատրելով զրկեցաք յԱծային կենաց · արդ` գոչեսցուք, Տր` զսա զոր փոխադրեցեր` բնակեցո 'ի դաւիթս քո ։

## Աստուածածնէ ։

Հովանին քո Ածածին կոյս` բժշկարան է հոգևոր · քանզի 'ի նա ապաւինեալ` ապաքինիմք 'ի հոգևոր հիւանդութեանց ։

## Ձյն · Գկ ·

Ահաւոր է մահ` որք չարաչար վարեն զկեանս · զի նոցա է կրծումն ատամանց` և լալումն անմխիթար, մառախուղ աննշոյլ` և խաւար արտաքին, և որդն անքուն · արտասուք անօգուտ` և դատաւոր անկարեկից · վասն այսորիկ գոչեսցուք ասելով, տէ՛սբօդա քո՛` զսա զոր ընտրեցեր, ընդ ընտրելոց քոց հանգո ։

Փողն հարկանի, և մեռեալք յառնեն ով 'ի քնոյ · փափագելով ընդունել զկեանս երկնային · և քանզի 'ի քեզ յուսացան 'ի ստեղծօղդ և 'ի Տր, մի' դատապարտեր

ծառայքս քո . քանզի անմահդ վն մեր մահկանացու-
եղեր . վն այսորիկ գոչեսցուք ասելով, տէ՛սըօղա քն՝
զսա զոր ընտրեցեր՝ ընդ ընտրելոց քոց հանգո։

Ահաւասիկ և տարերք՝ երկին և երկիր փոփոխին, և
ամ ստեղծուածք զգենուն զանապականութի . լուծանի
ապականութի, և անհետ լինի խաւար, յորժամ գաս
փառօք հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց .
վասն այսորիկ տէ՛սըօղա քն՝ զսա զոր ընտրեցեր՝ ընդ
ընտրելոց քոց հանգո։

Աստուածածնէ։

Պարք ընտրեալ կուսանաց լուցեալ զլապտերս հոգ-
ւոց իւրեանց, սաղմոսեն քեզ փափագելով փառաց քոց
ո՛վ կուսածին բան, մտանել ընդ քեզ 'ի հարսնարանն,
և պարել յերկնաւոր առագաստին . վն այսորիկ գոչես-
ցուք ասելով, զսա զոր ընտրեցեր՝ ընդ ընտրելոց քոց
հանգո։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Նէգ · ճկ ·

Աղէ՞ տեսէ՛ք ամքեան օտար և սոսկալի տեսարանս
այս, և մի՛ ևս խորհեսջիք զժամանակաւորս . այսօր հո-
գի անջատի 'ի մարմնոյ, փոխելով յաշխարհն յաւիտե-
նական, քանզի երթայ 'ի ճանապարհ ընդ որ ոչ երբէք
գնաց, և առ դատաւորն անաշառ, յորոյ առաջի կան
դասք հրեշտակաց . քանզի ահաւոր է եղբարք ատեանն .
ուր ամենեքին մերկ կացցուք, ոմանք ամաչեցեալք և
ոմանք պսակեալք . վն որոյ գոչեսցուք առ անմահ թա-
գաւորն . տէ՛ր մարդասէր՝ յորժամ քննես զգաղտնիս
մարդկան, խնայեա՛ 'ի ծառայս քո զոր առեր։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ։

Բարեխօսութ̄ ծնողի քո՝ և յովհաննու կարապետի,
առաքելոց, մարգարէից, հայրապետաց, ճգնաւորաց,
արդարոց, և ամ սրբոց, զննջեցեալս հանգո։

Բարի է խոստովան լինել տեառն, և սաղմոս ասել անուան նորա։

Պատմել յառաւօտու զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո ՚ի գիշերի։

Աղօ. Սրբեքսրբեան. և յետոյ զայս երգէ. տ̃կ։

Հանգո՛ փրկիչ մեր ընդ սուրբս քո զծառայս քո. և բնակեցո՛ զսա ՚ի գաւիթս քո. և զա̃մ յանցանս սորա զկամայ և զակամայ՝ զգիտութե և զանգիտութե՝ որպէս բարեգութ անտես արա, մարդասէր։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Որպէս բարեգութ անտես արա, մարդասէր։

Աստուածածնի։

Մա՛յր ո̃բ անճառելի լուսոյն հրեշտակական օրհնութ̃բ պատուեալ, զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։

Աղօ. աւրէնաւէն։

Ողորմեա՛ մեզ ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանուե և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա̃յ (այս անուն), և վ̃ն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ։

Որպէս զի տէր ա̃ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք։

Զողորմութիւն ա̃յ և զարքայութին երկնից, և զթողութիւն մեղաց սորա ՚ի քնէ յանմահ թագաւորէն և յա̃յ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Ա̃ծ հոգւոց և ա̃մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին տէ՛ր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո

(այս անուն) , 'ի լուսաձեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանսն , յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութբ՝ թող սմա որպէս բարի և մարդասէր ած ։ զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ ։ քանզի դու միայն ես առանց մեղաց ։ արդարութի քո արդարութի յաւիտենական , և բանք քո ճշմարտութիւն ։

Ո ի դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջեցելոյ ծառայի քո (այս անուն) քրիստոս ած մեր ։ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ ողջունեն զննջեցեալն ։ և ապա երգեն Ննջեցեալն ։ բձ ։

Եկայք եղբարք զվերջին ողջոյնն տացուք վախճանելոյս՝ գոհացող եղեալ զայ ։ որ հրաժարեալ յազգականաց՝ երթայ 'ի գերեզմանն , ոչ ինչ հոգալով զսնոտեաց և զբազմահոգ մարմնոյն ։ իսկ արդ՝ ամ ազգականք և բարեկամք որք այժմ անջատիմք 'ի սմանէ , աղաչեսցուք զտէր զի հանգուսցէ զսա ։

Ամենայն գործարանք մարմնոյն , որ փոքր մի յառաջ շարժէին , այժմ տեսանին դադարեալ , անշարժ , անշունչ , անզգայ ։ զի կափուցան աչք , կապեցան ոտք , դադարեցան ձեռք , խցան ականջք , լուռ եղև լեզուն , և ինքն մատնեցաւ հողոյ ։ արդարև ունայնութի են ամ մարմնականք ։ իսկ արդ՝ ամ ազգականք և բարեկամք որք այժմ անջատիմք 'ի սմանէ , աղաչեսցուք զտէր զի հանգուսցէ զսա ։

Ո ինչ է այս ողբ , զինչ է այս աղաղակ , որ լսելի լինի այժմ , ո՛ն արիք եղբարք ողջունեցէք զսա ։ զի որ փոքր մի յառաջ կենցաղակից էր ընդ մեզ , ահա մատնի գերեզմանի , ծածկի վիմաւ , դնի 'ի խաւարի , թաղի ընդ մեռեալս ։ իսկ արդ՝ ամ ազգականք և բարեկամք որք այժմ անջատիմք 'ի սմանէ , աղաչեսցուք զտր զի հանգուսցէ զսա ։

Որինչ են կեանք մեր · բայց եթէ ծաղիկ , և գոլորշի , և ցօղ առաւօտու · ո՛ն եկայք նկատեսցուք 'ի գերեզմանի · ո՞ւր է գեղեցկութի՟ն , ո՞ւր է առոյգութի՟ն , ո՞ւր է աչք և կերպարանք մարմնոյն · ա՟մքին չորացան ո՟պ խոտ · ամենեքին անհետ եղեն · եկա՛յք անկցուք առաջի ք՟սի հանդերձ արտասուօք , զի հանգուսցէ զսա ։

Այժմ ա՟մ բազմահոգ տօնավաճառ ունայնութե՟ կենցաղոյս արձակին · զի հոգին մեկնեցաւ 'ի բնակութե՟ իւրմէ · հողակերտ անօթն բեկաւ · մնաց անբարբառ , անզգայ , անշունչ , անշարժ · արդ՝ յուղարկաւորելով զսա 'ի գերեզման , անկցուք առաջի ք՟սի հանդերձ արտասուօք , աղաչեսցուք զտ՟ր զի տացէ սմա զհանգիստ 'ի յաւիտեան ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ։

## Աղս այս Երգ · ԺԶ ։

Տեսանելով զիս անձայն և անշունչ առաջի եդեալ , լացէք ամենեքին 'ի վ՟ր իմ եղբա՛րք և սիրելի՛ք , ազգակի՛ցք և ծանօ՛թք · զի յերեկեան աւուրն խօսակից լինէի ընդ ձեզ , և յանկարծակի եկն 'ի վ՟ր իմ սոսկալի ժա՟մ մահուան · ո՛ն եկա՛յք սիրելի՛ք իմ՝ ողջունեցէք զիս վերջին ողջունիւ , քանզի ոչ ևս ընդ ձեզ գնացից կամ խօսակից եղէց · այլ առ անաչառ դատաւորն երթամ , ուր ծառայ և տ՟ր են 'ի միասին , թագաւոր և զօրական , մեծատուն և տնանկ են համապատիւ · զի իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց կամ փառաւորեսցի կամ ամաչեսցէ · վ՟ն այսորիկ աղաչանօք հայցեմք յամենեցունց , անդադար պաղատեցէք վասն իմ առ ք՟ն ա՟ծ · զի մի՛ դիցէ զիս ըստ մեղաց իմոց 'ի տեղի տանջանաց , այլ բնակեցուսցէ զիս անդ , ուր է լոյսն կենաց ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։

## Աստուածածնէ ։

Բարեխօսութե՟ ծնողի ք՟ո , և յովհաննու կարապետի , առաքելոց , մարգարէից , հայրապետաց , ճգնաւորաց , արդարոց , և ա՟մ ս՟րբց , զննջեցեալս հանգո՛ ։

Յա- երթալով 'ի գերեզմանն՝ 'ի ճանապարհին ասասցեն զա_ հանդէս զօրհնութիւնն առաջ ձայնին : Օրհնութիւն . Ը :

Օգնական և ապաւէն եղև ինձ 'ի փրկութի . սա է իմ Ած և փառաւորեցից զսա . Ած հօր իմոյ , և բարձր արարից զսա . զի փառօք է փառաւորեալ :

Նայեցարուք երկինք և խօսեցայց և բարեբանեցից զՔս , որ եկն 'ի կուսէն մարմնով :

Ծաներուք և տեսէք զի ես եմ Ած , որ ժողովրդեան իմոյ յանապատին կանխաւ ետու զմանանայն , և բղխեցուցի զջուր 'ի վիմէն , միայն աջով իմով և զօրութբ իմով :

'Ի վր անշարժ վիմի քո Քս՝ հաստատեա զեկեղեցի քո :

Զսասանեալ սիրտ իմ՝ ամրացո՛ տէր՝ 'ի վերայ վիմի պատուիրանաց քոց , զի դու միայն ես սբ և տէր :

Լուաւ մարգարէն զգալուստ քո տէր և երկեաւ . եթէ գաս 'ի կուսէն և երևիս մարդկան . և ասէր , լուայ զլուր քո և երկեայ . փառք զօրութն քո տէր :

Աղաչեմ մարդասէր՝ լուսաւորեա՛ զիս , որ 'ի գիշե_ րաց կանխեմ առաւօտ առնել . և առաջնորդեա՛ ինձ 'ի պատուիրանս քո , և ուսո՛ զիս փրկիչ՝ առնել զկամս քո :

Բոլորով սրտիւ իմով կարդացի առ բարեգութն Ած . և լուաւ յանդնդոց դժոխոց աղաղակի իմում . և եհան զկեանս իմ յապականութենէ :

Մեղաք անօրինեցաք և անիրաւեցաք առաջի քո . ոչ պահեցաք և ոչ արարաք որպ պատուիրեցեր մեզ . այլ մի՛ մատներ զմեզ իսպառ Ած հարցն մերոց :

Զոր զինուորութիւնք երկնից փառաւորեն , յորմէ քե_ րոբէք և սերոբէք սարսին և դողան . Ամ հոգիք և Ամ արարածք օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան :

Աստուածածնէ :

Անսերմնաբար յղութին և ծնունդ անճառելի է անայր ծնողիդ . զի ծնար անապականաբար զծնունդն Այ , զնո_ րոգողն բնութս մերոյ . վն որոյ Ամ ազգ զքեզ զԱծա_ մայրդ որպ զհարսն Այ ուղղափառութբ մեծացուցանեմք :

Ապա Սրբեքսրբեան · Ուղերթս ասա շարական ։

Դու հանգիստ քո տէր ուր հանգչին ա՟մ ս՟րբք քո, և զհոգի ծառայիս քո հանգո, որ միայնդ ես մարդասէր ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Դու ես ա՟ծ որ իջեր 'ի դժոխս, և լուծեր զդա-տակնիք կապելոց, ինքնին և զհոգի ծառայիս քո փըր-կիչ հանգո ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աստուածածնէ ։

Միայն մաքուր և անարատ կոյս, ծնող ա՟յ անսերմ-նաբար, բարեխօսեա փրկել զհոգի ծառայիս քո ։

Ապա սարկաւագն ։

Ողորմեա մեզ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում ։ աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա ։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութ՟ե և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա՟յ (այս անուն), և վ՟ն թողլոյ սմա զա՟մ յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի տէր ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութիւն ա՟յ և զարքայութիւն երկնից, և զթո-ղութիւն մեղաց սորա 'ի ք՟նէ յանմահ թագաւորէն և յա՟յ մերոյ խնդրեսցուք ։

Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ։

Ա՟Ծ հոգւոց և ա՟մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխար-հի, ինքնին տէր՝ հանգո զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), 'ի լուսաճեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանս, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտա-ծութե՟՝ թող սմա որպէս բարի և մարդասէր ա՟ծ. զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութի՟ քո արդարութի՟ յաւիտենա-կան, և բանք քո ճշմարտութիւն։

Ո՛վ դու ես յարութի՟ և կեանք և հանգիստ ննջե-ցելոյ ծառայի քո (այս անուն) քրիստոս ա՟ծ մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ բուրէ ննջեցելոյն, և լինի կատարեալ արձակումն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ԹԱՂՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ.

՚Ի Բառնիլ ուղղափառ քրիստոնէի՝ եկեղեցւոյն ննջեցեալ ընդ քահանայս. եւ գալով ՚ի տուն ուր է մեռեալն, արկանէ զշուրջառն զփորուրարն, եւ խունկ ՚ի բուրվառն, եւ ասէ.

Օրհնեալ է Ա͞ծ մեր յամ ժամ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Ս͞ղ Ա͞Ե ա͞ծ. Ամենասուրբ երրորդութիւն. Հայր մեր, զի քո է արքայութիւն. եւ շարական. Դ͞Ձ:

Ընդ հոգւոյն արդարոց կատարելոց, եւ զհոգի ծառայի͞ս քո հանգո փրկիչ, եւ պահեա յերանաւէտ կեանս որ ՚ի քէն՝ մարդասէր:

՚Ի հանգիստ քո տէր ուր հանգչին ամ͞ սուրբք քո, եւ զհոգի ծառայիս քո հանգո, որ միայնդ ես մարդասէր:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Դու ես Ա͞ծ որ իջեր ՚ի դժոխս, եւ լուծեր զդատանիք կապելոց, ինքնին եւ զհոգի ծառայիս քո փրկիչ հանգո:

Եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աստուածածնի:

Միայն մաքուր եւ անարատ կոյս՝ ծնօղ Ա͞յ աներմնաբար, բարեխօսեա փրկել զհոգի ծառայիս քո:

Ս͞ղ առաջնագն:

Ողորմեա մեզ Ա͞ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լուր եւ ողորմեա:

Եւ եւս աղաչեսցուք վասն երանուէ եւ մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս Ա͞յ (այս անուն), եւ վ͞ս թողութ սմա զամ յանցանս զկամայ եւ զակամայ:

Որպէս զի տէր Աստուած մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք։

Զողորմութիւն Աստուծոյ եւ զարքայութիւն երկնից, եւ զթողութիւն մեղաց սորա ՚ի Քրիստոսէ յանմահ Թագաւորէն եւ յԱստուծոյ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Աստուած հոգւոց եւ ամենայն մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, եւ խափանեցեր զսատանայ, եւ պարգեւեցեր զկեանս աշխարհի, նոյնինքն տէր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաձեմ եւ դալարաւէտ եւ հոգեզուարճ կեանսն, յորմէ մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութեամբ՝ թո՛ղ սմա որպէս բարի եւ մարդասէր Աստուած. զի ոչ ոք է որ կեցցէ եւ ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութիւն քո արդարութիւն յաւիտենական, եւ բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութիւն եւ կեանք եւ հանգիստ ննջեցեալ ծառայի քո (այս անուն) Քրիստոս Աստուած մեր. եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, եւ ամենասուրբ եւ բարի եւ կենդանարար քո Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ լինի արձակումն։

Իսկ եթէ ունիցին զպատարագութիւն, քահանայն ասէ զՕրհնութիւն. եւ Սուրբ Աստուած երգելով, տանին եկեղեցւոյ դրանն եկեղեցւոյն, քահանայն յառաջոյ երթալով մտանեն ՚ի ներքսն, եւ առաջնորդն զպաշտօն սկսանէ. եւ յորժամ բերեն եկեղեցին, ասեն։

Որ բնակեալն է յօգնութ̃ի բարձրելոյն , ընդ հո-
վանեաւ ա̃յ յերկնից հանգիցէ ։

Ասասցէ տ̃ն ընդունօղ իմ ես , ապաւէն իմ ա̃ծ և
ես յուսամ 'ի նա ։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին , և 'ի բանից
'ի խռովութենէ ։

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ , 'ի հովանի թևոց
նորա յուսասցիս ։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութ̃ի նորա ։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի , և ոչ 'ի նետէ
որ թռչի 'ի տուէ ։

Յիրէ որ շրջի 'ի խաւարի , 'ի դայթակղուէ̃ դիւին
'ի հասարակ աւուր ։

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք , և բիւրք ընդ
աջմէ քումմէ ․ և առ քեզ ինչ ոչ մերձեսցին ։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու , և զհատու-
ցումն մեղաւորաց տեսցես ․ զի դու տէր յոյս իմ ես ։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն ․ զի ոչ հասցեն
առ քեզ չարք , և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո ։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո , 'ի
պահել զքեզ յամենայն ճանապարհս քո ։

'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ , զի մի՛ երբէք
հարցես զքարի զոտն քո ։

'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու , և առ
ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն ։

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա , հովանի
եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ ։

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա , և առ նմա
եղէց 'ի նեղութեան ։

Փրկեցից և փառաւոր արարից զնա , երկայն ա-
ւուրբք լցուցից , և ցուցից նմա զփրկութիւն իմ ։

Նա պա բարձրաձայն եղանակէն ․ ճծ ։

Անբիծք 'ի ճանապարհի ․ ալէլուիա ։

Օրհնեալ տէ՛ր ուսո՛ ինձ զարդարութի̃ս քո ․ ալէլուիա ։

Փափագեաց անձն իմ 'ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամենայն ժամ. ալէլուիա։

Մերձեցաւ անձն իմ 'ի հող, տէր կեցո զիս ըստ բանի քում. ալէլուիա։

Խոնարհեցո զսիրտ իմ 'ի վկայութիւնս, և մի' յագահութիւն. ալէլուիա։

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս. ալէլուիա։

Հաղորդ եմ ես ամ՟ երկիւղածաց քոց, որոց պահեալ են զպատուիրանս քո. ալէլուիա։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. ալէլուիա։

Սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանելոյ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա՟յ (այս անուն), և վ՟ն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ։

Որպէս զի տէր ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք։

Զողորմութիւն ա՟յ և զարքայութի՟ն երկնից, և զթողութիւն մեղաց սորա 'ի ք՟նէ յանմահ Թագաւորէն և յա՟յ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Եւ ասէ քահանայն զաղօթս զայս։

Տ՟ր հոգւոց և ամ՟ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին տէ՛ր՝ հանգո զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), 'ի լուսաճեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանս, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութ՟բ՝ թո՛ղ սմա որպէս բարի և մարդասէր ա՟ծ. զի

ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ ․ քանզի դու միայն ես առանց մեղաց ․ արդարութիւն քո արդարութիւն յաւիտենա-կան , և բանք քո ճշմարտութիւն ։

Որ դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջե-ցելոյ ծառայի քո ( այս անուն ) Քրիստոս Աստուած մեր ․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ յետ այսորիկ սկսանին զերգս երգոց հարցն եղանակաւ ․ Ալ ։

Ձեռք քո արարին և ստեղծին զիս , իմաստութիւն տուր զիս , և ուսայց զպատուիրանս քո ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Եղէ ես որպէս տիկ 'ի պաղի , զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Քո եմ ես և կեցո՛ զիս , զի զարդարութիւնս քո խնդրեցի ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ , զի դու օրէնս-դէտ արարեր զիս ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան վասն հատուցման ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Ժամ է պաշտել զՏէր , խափանեցին զօրէնս քո ․ ողորմեա՛ ինձ Տէր ։

Փառք Հօր և Որդւոյ և՛ ։ Եւ այժմ և միշտ և՛ ։

Ողորմեա՛ ինձ Տէր Տէր ։

Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք ։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանելի և մշտնջենաւոր հանգստեան ննջեցելոյ ծառայիս Աստուծոյ ( այս անուն ) , և վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի Տէր Աստուած մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութիւն Աստուծոյ և զարքայութիւն երկնից , և զթո-ղութիւն մեղաց սորա 'ի Քրիստոսէ յանմահ Թագաւորէն և յԱստուծոյ մերոյ խնդրեսցուք ։

## Օտէր աղաչեսցուք ։

Եւ ասէ քահանայն զաղօթս զայս ։

Ա՛Ծ հոգւոց և ամ՟ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ , և խափանեցեր զսատանայ , և պարգևեցեր զկեանս աշխարհի , ինքնին Տէ՛ր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն) , ՚ի լուսաձեմ և դալարաւէտ և հովեզուարճ կեանսն , յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտա֊ծութ՟բ՝ թո՛ղ սմա որպէս բարի և մարդասէր Ա՟Ծ․ զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ․ քանզի դու միայն ես առանց մեղաց․ արդարութիւն քո արդարութիւն յաւիտենա֊կան , և բանք քո ճշմարտութիւն ։

Զի դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջե֊ցեալ ծառայի քո (այս անուն) Քրիստոս Ա՟Ծ մեր․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Եւ ապա սկսանին զերրորդ չորքն եղանակէն․ Ճ̃Կ ։

Եւ ողորմեա ինձ․ ալէլուիա ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ , ըստ իրաւանց սի֊րողաց անուան քո․ ալէլուիա ։

Մանուկ եմ ես և արհամարհեալ , և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ․ ալէլուիա ։

Ձայնի իմում լո՛ւր Տէ՛ր ըստ ողորմութ՟ քում , և յիրաւունս քո կեցո՛ զիս․ ալէլուիա ։

Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր , և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ․ ալէլուիա ։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ , և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ , խնդրեա՛ զծառայս քո , զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

Նոյն Երգի օրհնութեան այս . ճկ :

Օրհնեալ ես տէր , ուսո ինձ առնել զարդարութիւնս քո :

Սրամ ը̃ցն եգիտ զաղբիւրն կենաց և զդուռն արքայութե̃ . լիցի և ինձ գտանել զճանապարհ նորա 'ի ձեռն ապաշխարութե̃ . ես եմ մոլորեալ ոչխարն , դարձեալ խնդրեա զիս փրկիչ , և փրկեա զիս :

Օրհնեալ ես տէր , ուսո ինձ առնել զարդարութիւնս քո :

Որ յոչնչէ ստեղծեր զիս ձեռօք քո , և պատուեցեր ա̃ծային պատկերօքդ . այլ ստունգանելով պատուիրանաց քոց՝ դարձայ յերկիր յորմէ առայ . վերածեա զիս անդրէն 'ի նոյն նմանութիւն , ստանալ զգեղեցկութիւնն առաջին :

Օրհնեալ ես տէր , ուսո ինձ առնել զարդարութիւնս քո :

Պատկեր եմ անպատում փառաց քոց , թէ և ունիմ սպիս հարուածոց յանցանաց . գթա 'ի ստեղծուածս քո տէր , և սրբեա ողորմութե̃ քով . և զերկիրն ցանկալի պարգևեա ինձ , արարեալ զիս անդրէն քաղաքացի արքայութեան :

Օրհնեալ ես տէր , ուսո ինձ առնել զարդարութիւնս քո :

Հանգո ա̃ծ զննջեցեալ ծառայ քո , և դասաւորեա զնա յարքայութե̃ ուր են երամք սրբոց քոց , և արդարք փայլեն որպէս զաստեղս , անտես առնելով զամենայն յանցանս նորա :

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ :

Զեռալուսեան զմի ա̃ծութի̃ն օրհնեսցուք , աղաղակելով ը̃դ ես անսկիզբն հայր ընդ անսկզբնակից որդւոյդ և ա̃ծային քո հոգւոյդ , լուսաւորեա զմեզ որ պաշտեմք զքեզ հաւատով , և զերծո զմեզ 'ի հրոյն յաւիտենից :

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Աստուածածնի։

Ուրա՛խ լեր բերկրեալ, որ զա՟ծ մարմնով ծնար վ՟ փրկութ՟ ամենեցուն . քանզի 'ի ձեռն քո ազգ մարդկան եգիտ զփրկութի, լցի՛ և մեզ գտանել 'ի ձեռն քո զար- քայութիւն, սրբուհի ա՟ծածին օրհնեալ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա։

Սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութ՟ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), և վ՟ թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ.

Որպէս զի տէր ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք.

Զողորմութիւն ա՟յ և զարքայութի՟ն երկնից և զթողութ՟ մեղաց սորա 'ի ք՟է յանմահ թագաւորէն և յա՟յ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Քահանայն։

Զի դու ես յարութ՟ և կեանք և հանգիստ ննջե- ցեա՟լ ծառայիս քո (այս անուն) քրիստոս ա՟ծ մեր . և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա եղանակին այս շարականս . ա՟կ։

Հանգո՛ փրկիչ մեր ընդ սուրբս քո զծառայ քո . և բնակեցո՛ զսա 'ի դաւիթս քո . և զա՟մ յանցանս սորա զկամայ և զակամայ՝ զգիտութ՟ և զանգիտութ՟՝ որպէս բարեգութ անոխա՛ս արա մարդասէր։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Որպէս բարեգութ անոխա՛ս արա մարդասէր։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Աստուածածնէ :

Մայր լուսոյ սուրբ կոյս, որ ծագեցեր յաշխարհ զքն՟ ա՟ծն մեր, առ նա միշտ բարեխօսեա, զի ողորմեսցի և արասցէ զմեզ որդիս լուսոյ:

## Եւ ապա ասէ սաղմոս :

Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութե՟ քում, ըստ բազում գթութե՟ քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութե՟ իմմէ, և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինքնին գիտեմ, և մեղք իմ առաջի՟ իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո, և յաղթօղ ՚ի դատել գաս:

Անօրէնութե՟ յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութե՟ քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա զիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի՛ արա ինձ զցնծութի՟ և զուրախութի՟, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զա՟մ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա յիս ա՟ծ, և հոգի ուղիղ նորոգեա ՚ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Տուր ինձ ցնծութիւն փրկութե՟ քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկութե՟ իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարուե̃, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

Կանոն։

Երգ, ա̃ · ը̃կ·

Յաղթող վկայք յերկնային օթեվանսն միշտ աղաչեն զքեզ ք̃ս, զհաւատացեալս զայս զոր փոխադրեցեր յերկրէ, արժանաւորել յաւիտենական բարեաց։

Որ զարդարեցեր զա̃մ փրկիչ, և զմարդն ստեղծեր կենդանի ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ · վ̃ս որոյ հանգո՛ զհոգիս ծառայի քո։

Որ յառաջագոյն եդեր ՚ի փափկութեան դրախտին քաղաքացի, այլ ստունգանելով հրամանի քո արտաքսեցեր անտի · վասն որոյ հանգո՛ փրկիչ զհոգի ծառայի քո։

Աստուածածնի։

Որ ստեղծ ՚ի կողէն ադամայ զնախամայրն մեր եւայ, զգեցաւ զմարմին ՚ի քո անարատ արգանդէ, և նովին մարմնով խորտակեաց զզօրութիւն մահու։

Երգ · գ̃·

Վկայք քո ըստ օրինի ճակատամարտեալ, և յաղթական պսակօք զարդարեալ, աղաչեն զքեզ կենարար, զի տացես հաւատով փոխադրելոյս զփրկութի̃ն յաւիտենական։

Որ յառաջագոյն խրատեցեր բազմապատիկ նշանօք և

արուեստիւք զպատրեալս 'ի բանսարկուէն , 'ի վախճանի զանձն ունայնացուցեր որպէս բարեգութ , և խնդրելովք գտեր և ազատեցեր :

Ներո՛ղ և արդար՝ զփոխադրեալս յապականացու և յանցաւոր կենցաղոյս՝ արդարացուցեալ հաւատով և շնորհօք , արժանաւորեա՛ բնակել ուրախութե՟ 'ի յարկս յաւիտենականս :

Աստուածածնէ :

Սրբուհի՛ մայր ա՟յ , ոչ գ՟ոյ անարատ իբրև զքեզ , զի դու միայն յղացար զճշմարիտն ա՟ծ , որ ելոյծ զբռնութիւն մահու :

Խաչին :

Ոչ գ՟ոյ սուրբ իբրև զքեզ տէ՛ր ա՟ծ իմ , որ բարձրացուցեր զեղջիւր հաւատացելոց քոց , և հաստատեցեր զնոսա 'ի վերայ վիմի խոստովանութեան քո :

Սարկաւագն :

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք :

Եւ ևս աղաչեսցուք վասն երանուե՟ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա՟յ ( այս անուն ) , և վ՟ն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ :

Որպէս զի տէր ա՟ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք :

Զողորմութիւնս ա՟յ և զարքայութի՟ն երկնից , և զթողութի՟ւն մեղաց սորա 'ի ք՟սէ յանմահ թագաւորէն և յա՟յ մերոյ խնդրեսցուք :

Զտէր աղաչեսցուք :

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս :

Տէ՛ր հոգւոց և ա՟մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ , և խափանեցեր զսատանայ , և պարգևեցեր զկեանս աշխարհի , ինքնին տէ՛ր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն) , 'ի լուսաձեմ և դալարաւէտ և հոգեզուարճ

կեանս, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութբ՝ Թող սմա որպէս բարի և մարդասէր ած. զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութիւն քո արդարութիւն յաւիտենական, և բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջեցելոց ծառայի քո (այս անուն) քրիստոս ած մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նշա ըշա ելք · ՃԿ։

Յիրաւի ունայնութիւն է ամ ինչ, և կենցաղս այս ստուեր և երազ. ապա ՚ի զուր խռովի ամ երկրածին որպէս ասաց գիր. քանզի յորժամ շահիմք զաշխարհս, յայնժամ բնակիմք ՚ի գերեզմանի, ուր ՚ի միասին են թագաւորք և աղքատք. վն որոյ քն ած զփոխադրեալ ծառայ քո հանգո որպէս մարդասէր։

Փառք Հօր և Որդւոյ և"։ Եւ այժմ և միշտ և"։

Աստուածածնի։

Ամենասուրբ մայր ած մի՛ թողուր զիս ՚ի ժամանակի կենաց իմոց, մի՛ յանձներ զիս մարդկային վերակացութեան. այլ դու լե՛ր ինձ պաշտպան և ողորմեա՛։

Աւէ · Գ ·

Տէր՝ որ զնշան մեծի իմաստութե, և բազմապատիկ շնորհեալ բարերարութե քո ցուցանելով, զերամս մարտիրոսաց խառնեցեր ընդ հրեշտակս։

Զփոխադրեալս առ քեզ արժանաւորեա՛ քն՝ յաւիտենական փառաց քոց, ուր է յարկ ցնծութե, և ձայն սուրբ երգոց օրհնութեան։

Ընկա՛լ բա՛րերար զօրհնաբանօղս ածային քո կարողութե՝ զոր առեր յերկրէ, և փարատեալ զմէգն մեղաց՝ արա՛ զսա որդի լուսոյ։

Աղաչանք ։

Տէր ընտրեաց զքեզ զգեղեցկութիւնդ յակոբայ, անօթ մաքուր, տաճար անարատ, նաւ ամենասուրբ, կոյս բնակարան սրբութեան ։

Տուն . Ե ։

Մարտիրոսք զանձինս իւրեանց առ փառաւորեալն ա͞ծ նուիրելով ո͞ղ պատարագ, և մարդկայինս բնութե՛ երեխայրի, պարգևեն մեզ զփրկութիւն ։

Արժանի արա տէ՛ր՝ զհաւատով ննջեցեալ ծառայ քո երկնային կենաց, և պարգևացն մանակցութե՛, շնորհելով սմա զազատութիւն ՚ի յանցանաց ։

Դու միայն անմահ տուիչ պարգևաց, որ միայն ես բնութ͞բ կենդանարար, անսահման անդունդ բարերարութե՛, զննջեցեալս արժանաւորեա՛ արքայութե՛ քում ։

Աղաչանք ։

Ծնեալն ՚ի քէն ո՛վ տիրուհի՝ եղև զօրութի՛ և փառք աշխարհի, և փրկութի՛ կորուսելոց, ազատելով ՚ի դրանց դժոխոց զամենեսին, որք հաւատով զքեզ երանեն ։

Տուն . Զ ։

Բևեռելով ՚ի խաչին բարերար՝ առ քեզ ժողովեցեր զերամս մարտիրոսաց՝ որք չարչարանաց քոց եղեն չարչարակիցք . վ͞ս որոյ աղաչեմք զքեզ հանգո՛ զփոխադրեալս առ քեզ ։

Յորժամ գաս փրկիչ մեր՝ ահաւոր և անճառ փառօք ՚ի դատել զամենայն աշխարհ, յարո՛ ընդ առաջ քո յամպս, զհաւատացեալ ծառայ քո զոր առեր յերկրէ ։ ՚Ի փափկութե՛ դրախտին բնակեցո՛ տէ՛ր՝ զծառայս քո, որ հաւատով առ քեզ փոխեցաւ ։

Աղաչանք ։

Մայրն պատուիրանին ստունգանելով դարձաք ՚ի յերկիր, բայց ՚ի ձեռն քո ո՛վ կոյս՝ յերկրէ յերկինս ամբարձաք, թօթափելով զապականութի՛ մահու ։

### Եիրմոս :

Զծով կենցաղոյս տեսանելով ալեկոծեալ բազմադիմի արկածիւք, ապաւինեալ 'ի նաւահանգիստ խաղաղութեան՝ աղաղակեմ առ քե՛զ բա՛զումողորմ, հա՛ն զկեանս իմ յապականութենէ :

### Սարկաւագն :

Եւ ևս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք :

Եւ ևս աղաչեսցուք վասն երանուէ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս Այ (այս անուն), և վն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ :

Որպէս զի տէր Աճ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք :

Զողորմութիւն Այ և զարքայութիւն երկնից, և զթողութիւն մեղաց սորա 'ի Քսէ յանմահ Թագաւորէն և յԱյ մերմէ խնդրեսցուք :

### Քահանայն :

Զի դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջեցելոյ ծառայի քո (այս անուն) Քրիստոս Աճ մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

### Կոնդակ . Դկ :

Քս Տէր հանգո՛ զհոգի ծառայի քո ընդ սրբս քո, ուր ո՛չ գոյ վիշտ և ցաւ և հառաչանք, այլ կեանք անվախճանս :

Դու ինքն միայն ես անմահ, որ արարեր և ստեղծեր զմարդ. իսկ մեք մահկանացուքս 'ի հողոյ առաք, և 'ի հող դարձցուք որպէս և հրամայեցեր, թէ հող ես և 'ի հող դարձցես. առ որ ամ մահկանացուքս երթիցուք գերեզմանական ողբովքս ալէլուիա :

### Երգ . Է :

Որք յառաջին յանցանացն փրկեցան արեամբ քո Տր վկայք. և ցօղեալք արեամբ իւրեանց՝ պատկերակից

եղեն մահու քո՝ հոգեշունչ ձայնիւ գոչելով առ քեզ.
օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց։

Աղբիւր կենաց բանդ ա՟ծ խորտակեցեր զզօրութի՟
մահու. վասն որոյ ընկա՛լ զննջեցեալս հաւատով, որ
օրհնէ զքեզ և ասէ. օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց։

Որ ա՟ծային փչմամբ քո կենդանացուցեր զմեզ. զփա-
խադրեալս արժանացո՛ արքայութե՟ քում ա՟ծ՝ քեզ եր-
գել. օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց։

Աստուածածնէ։

Որ գերագոյն եղեր ա՟մ ստեղծուածոց ամենասրբու-
հի՝ յղանալով զա՟ծ, որ խորտակեաց զդրունս մահու,
և փշրեաց զնիգս նորա. վասն որոյ մեք հաւատացեալքս
օրհնեմք զքեզ որպէս զմայր ա՟յ։

Նորք. Ը։

Պսակաւոր վկայք քո՝ ճակատամարտեալք քաջութ՟
զարդարեցայք յաղթութե՟ն պսակօք, և անդադար գոչէք
առ քս՟. առաւել բարձրացուցանեմք զքեզ յաւիտեան։

Ուրախութ՟ ընկա՛լ տէ՛ր զհաւատացեալսն, որք առա-
քինի վարուք հրաժարեալ ՚ի կենցաղոյս փոխեցան առ
քեզ. և հանգո՛ զնոսա ո՟պ բարեգութ, որ առաւել
բարձրացուցանեն զքեզ յամենայն յաւիտեան։

Յերկրին հեզոց բնակեցո՛ բարերար փրկիչ՝ զա՟մ նն-
ջեցեալսն մեր, արդարացուցեալ զնոսա հաւատովն որ
առ քեզ և շնորհիւ քո, որ առաւել բարձրացուցանեն
զքեզ յամենայն յաւիտեան։

Աստուածածնէ։

Ամենեքին զքեզ երանեմք երանուհի, որ ծնար զբանն
զմարմնացեալն վասն մեր, որ խնկապէս է երանութի՟.
զնա առաւել բարձրացուցանեմք յա՟մ յաւիտեան։

Նորք. Թ։

Յոյս քո բարերար՝ զօրացոյց զդասս մարտիրոսաց, և
թևաւորեաց բորբոքմամբ ՚ի սէր քո, տպաւորելով ՚ի

նոսա զճշմարիտ և զանսասանելի զհանգիստ հանդեր_ ձեալ բարեաց ։ աղաչեմք զքեզ տէր, զփոխադրեալս հաւատով առ արժանի նմին հանգստեան ։

Գերապայծառ և ա͞ծային փայլման քո ք͞ս արժանա- ւորեա զփոխադրեալս հաւատով, շնորհելով զհանգիստ 'ի գոգն աբրահամու, և զերանութին յաւիտենական ո͞ղ միայն բարերար ։

Ընու͞ք բարի և ողորմած տէ՛ր, անսահման անդունդ- բարերարութե͞ն, զփոխադրեալս յանցաւոր կենաց և 'ի ստուերաց մահու, 'ի լուսաձեմ օթեվանս քո հանգ͞ո ։

## Աստուածածնէ ։

Ա͞ծածին զքեզ խոստովանիմք խորան սրբու͞թ և նաւ կենաց, տախտակ օրինաց և շնորհաց, և 'ի ձեռն քո պար_ գևեցաւ քաւութի արդարացելոց արեամբ մարմնացելոյն յարգանդէ քումմէ ։ վ͞ս որոյ զքեզ մեծացուցանեմք ։

## Այս շարս երգ Գոհացողութեան բաց խորհրդ եղանակի ։ ՃԾ ։

Որ փափկութ կենցաղոյս ոչ զհետ գայ տրտմութ ։ Որ փառք եկաց 'ի վերայ երկրի անփոփոխ ։ ամենեքեան տկարագոյն են քան զստուեր ։ ամենեքեան պատրողա_ գոյն են քան զերազ ։ զամենեսին զոսա 'ի մի վայրկեան փոխանորդէ մահ ։ այլ 'ի լոյս երեսաց քոց ք͞ս, և 'ի քաղցրութ գեղեցկութ քո, զսա զոր ընտրեցեր՝ հանգ͞ո որպէս մարդասէր ։

## Սրբ ։ ՃԶ ։

Այ ինձ, զի մ͞րդ տառապի հոգին յանջատիլ իւ_ րում 'ի մարմնոյն ։ ո՛րքան կողկողի, և ոչ ոք նմա ողորմի ։ առ հրեշտակս դարձուցեալ զաչս՝ 'ի զուր պաղատի ։ առ մարդիկ ձեռս տարածեալ՝ ոչ գտանէ օգնականութի ։ վ͞ս որոյ եղբարք իմ սիրելիք՝ ածեալ 'ի միտ զնուաղութ կենաց մերոց, 'ի ք͞նէ խնդրեսցուք փոխադրելոյս զհան_ գիստ, և հոգւոց մերոց զմեծ ողորմութիւն ։

իդ

## Տուն · գձ ։

Ունայնու͞նի են մարդկայինքս ամ͞, որք ոչ միա͞ն յետ մահուան · բառնի հաստատութ͞ի, ոչ ուղեկցի փառք · քանզի 'ի ժամանել մահուան՝ սոքա ա͞մքեան կորնչին · վասն որոյ առ անմահն ք͞ո գոչեսցուք , զփոխադրեալս 'ի մեզ հանգո՛ յօթեվանս ցնծութեան ։

## Տուն · դձ ։

Ո՞ւր է ջանք աշխարհիս · ո՞ւր է ժամանակաւորաց երևոյթ · ո՞ւր է ոսկի և արծաթ · ո՞ւր է ծառայից բաղմութ͞ի և խուժան · ամենեքեան փոշի , ամենեքեան մոխիր , ամենեքեան ստուեր · այլ աղէ՞ գոչեսցուք առ անմահ Թագաւորն , տէ՛ր՝ զփոխադրեալս 'ի մեզ արժանաւորեա՛ յաւիտենից բարեաց քոց , հանգուցանելով զսա յանվախճան քո երանութեան ։

## Տուն · ակ ։

Յիշեցի զմարգարէն որ գոչէ , ես եմ հող և մոխիր · և դարձեալ հայեցայ 'ի գերեզմանս , և տեսի զոսկերս մերկացեալ , և ասացի՝ արդեօք ո՞վ է Թագաւոր՝ կամ զօրական , փարթամ՝ կամ աղքատ , արդար՝ կամ մեղաւոր · այլ ընկա՛լ և հանգո՛ տէ՛ր ա͞ծ զծառայ քո ։

## Տուն · բկ ։

Արարչական հրամանն քո ստեղծ զիս · քանզի կամեցեալ յերևելի և յաներևոյթ բնութ͞է արարչագործել զիս կենդանի , 'ի հողոյ կազմեցեր զմարմին իմ , և ա͞ծային և կենդանարար փչմամբ քո ետուր ինձ հոգի · վ͞ն որոյ հանգո՛ զծառայս քո յերկիրն կենդանեաց 'ի յարկս արդարոց ։

## Տուն · գկ ։

Որ ըստ պատկերի քո և ըստ նմանու͞թե կազմեցեր 'ի սկզբանէ զմարդն , և եդեր 'ի դրախտին իշխել ստեղծուածոց քոց · իսկ նա պատրեալ նախանձու բանսարկուին՝

ճաշակեաց 'ի կերակրոյն , և եղև յանցաւոր պատուիրանաց քոց ․ վ՟ որոյ ո՛ տէր՝ դատակնիք 'ի վերայ եդեր , դառնալ յերկիր յորմէ առաւ , և գտանել զհանգիստ ։

Խրէ ․ Ձ՟կ ։

Ողբամ և աշխարեմ յորժամ մտածեմ զմահ ․ և տեսանեմ զպատկերն գեղեցիկ կազմեալ ըստ պատկերի ա՟յ՝ 'ի գերեզմանի եդեալ անկերպ և անվայելուչ , որ ոչ ունի զտեսիլ մարդոյ ։

Եգա Երանէին ․ Ձ՟կ ։

Յարքայութե՟ քում յիշեա՛ զմեզ տէր , յորժամ գայցես արքայութեամբ քով ։

Երանի աղքատաց հոգւով , զի նո՟ց է արքայութիւնն երկնից ։

Երանի սգաւորաց , զի նոքա մխիթարեսցին ։

Երանի հեզոց , զի նոքա ժառանգեսցեն զերկիր ։

Երանի որք քաղցեալք և ծարաւիք իցեն վասն արդարութեան , զի նոքա յագեսցին ։

Երանի ողորմածաց , զի նոքա ողորմութի՟ գտցեն ։

Որ զաւազակն արարեր քաղաքացի դրախտին ք՟ս , յորժամ 'ի խաչին աղաղակեաց առ քեզ , յիշեա՛ զիս ․ արժանացո՛ և զիս զանարժանս սորին ապաշխարութե՟ ։

Երանի այնոցիկ որք սուրբ են սրտիւք , զի նոքա զա՟ծ տեսցեն ։

Տէր կենաց և մահու՝ 'ի գաւիթս ս՟րբ հանգո՛ զսա , զոր առեր յանցաւոր կենաց ․ և յիշեա՛ զսա յորժամ գայցես արքայութեամբ քով ։

Երանի խաղաղարարաց , զի նոքա որդիք ա՟յ կոչեսցին ։

Իշխօղ հոգւոց և մարմնոց , որ 'ի ձեռսն քո է շունչ կենդանութե՟ մերոյ , մխիթարիչդ նեղելոց , զսա զոր փոխադրեցեր , հանգո՛ յօթեվանս արդարոց ։

Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութե՟ , զի նոցա է արքայութիւնն երկնից ։

Տացէ ք՟ս թողութի՟ յանցանաց քոց ո՛վ մարդ , և բացցէ քեզ զդրունս արքայութե՟ , և յաջակողմեան դասուն

հանգուսցէ , և արասցէ զքեզ քաղաքացի արքայութեան :

Երանի՛ է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն , և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ :

Ելցուք 'ի գերեզմանս , և տեսցուք զի մերկ ոսկր է մարդ , կերակուր որդանց , և նեխումն գարշահոտ . և ծանիցուք զինչ են ինչք և ստացուածք , գեղեցկութիւն , զօրութիւն , և զարդարանք :

Ցնծացէ՛ք և ուրախ լերո՛ւք , զի վարձք ձեր բազում են յերկինս :

Զարհուրեալ դողամ յորժամ 'ի միտ ածեմ զօր ահաւոր դատաստանին , զի է օր խաւարի , և հրով փորձեսցի ամենայն ինչ :

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ :

Երկիր պագանեմ անսկիզբն հօր . և փառաւորեմ զծնեալ որդին . և օրհնեմ զյառաջագոյեալ սուրբ հոգին , որ փառակիցն է հօր և որդւոյ :

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Աստուածածնի :

Զխորհուրդ բղխեցեր զկաթն 'ի ստեանց քոց Տր կոյս , զխորհուրդ սնուցեր զսնուցիչն աշխարհի . ոչ ոք կարէ խելամուտ լինել , բայց նա միայն գիտէ , որ հոսեաց ըզջուրն 'ի վիմէն ծարաւեալ ժողովրդեան :

[illegible] :

Երանեալ է ճանապարհն ընդ որ գնաս այսօր , զի պատրաստեցաւ քեզ օթեվանն հանգստեան :

Մեսեդի :

Առ քեզ տէր ած իմ կարդացի , մի' լռեր յինէն :

Պօղոսի առաքելոյն 'ի թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուած :

Եղբարք՝ ոչ կամիմ եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն . զի մի' տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ոչ գոյ

յոյս։ Եթէ հաւատամք՝ եթէ յս՟ մեռաւ և յարեաւ. նոյնպս՟ և ած՟ զննջեցեալսն ՚ի ձեռն յսի՟ ածցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք տեառն բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս եմք մնացեալք՝ ՚ի գալստեանն տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն։ Զի ինքնին տր՟ հրամանաւ, ՚ի ձայն հրեշտակապետի և ՚ի փողս այ՟ իջանէ յերկնից. և մեռեալք ՚ի քս՟ յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որ կենդանաւոյն մնացեալ լիցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս. և այնպէս յամ՟ ժամ ընդ տեառն լինիցիմք։

## Ալէլուիա։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցեն ՚ի գաւիթս քո։

## Աւետարան որ ըստ Յովհաննու։

Ասէ տէր առ հրէայսն, որք եկեալ էին առ նա։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և ՚ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն այ՟. և որք լուիցենն՝ կեցցեն։ Զի որպէս հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում. և իշխանութի՟ ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութի՟ կենաց. և որոց զչար արարեալ՝ ՚ի յարութի՟ դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպս՟ լսեմ՝ դատեմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ Տ̅ծ ըստ մեծի ողորմութեան քում․ աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութեան և մշտնջենաւոր հանգստեան ննջեցելոյ ծառայիս ա̅յ (այս անուն), և վ̅ն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի տէր Տ̅ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութիւն ա̅յ և զարքայութիւն երկնից, և զթողութիւն մեղաց սորա ՚ի ք̅է յանմահ Թագաւորէն և

յա̅յ մերոյ խնդրեսցուք ։

Զ տէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ։

Աստուած հոգւոց և ա̅մ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին տէ՛ր՝ հանգո՛ զհոգի ննջեցելոյ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաւորեալ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանսն, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք ։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութ̅բ՝ թո՛ղ սմա որպէս բարի և մարդասէր Տ̅ծ․ զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ․ քանզի դու միայն ես առանց մեղաց․ արդարութի̅ւն քո արդարութի̅ւն յաւիտենական, և բանք քո ճշմարտութիւն ։

Զի դու ես յարութի̅ւն և կեանք և հանգիստ ննջեցելոյ ծառայի քո (այս անուն) քրիստոս Տ̅ծ մեր․ և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Ապա երգէ հրաժարական ողջոյնս զայս ․ Ը̅ձ ։

Եկա՛յք եղբարք զվերջին ողջոյնն տացուք վախճանելոյս՝ գոհացող եղեալ զա̅յ․ որ հրաժարեալ յազգականաց՝ երթայ ՚ի գերեզման, ոչ ինչ հոգալով զսնոտեաց

և զբազմահոգ մարմնոյն. իսկ արդ՝ ամենայն ազգականք և բարեկամք՝ որք այժմ անջատիմք 'ի սմանէ, աղաչեսցուք զտէր զի հանգուսցէ զսա:

Օ՜ինչ է այս ողբ, զի՞նչ է այս աղաղակ, որ լսելի լինի այժմ. ո՜վ արիք եղբարք ողջունեցէք զսա. զի որ փոքր մի յառաջ կենցաղակից ընդ մեզ, ահա մատնի գերեզմանի, ծածկի վիմաւ, դնի 'ի խաւարի, թաղի ընդ մեռեալս. իսկ արդ՝ ամ̃ ազգականք և բարեկամք՝ որք այժմ անջատիմք 'ի սմանէ, աղաչեսցուք զտէր զի հանգուսցէ զսա:

Այժմ ամ̃ բազմահոգ տօնավաճառ ունայնութե̃ կենցաղոյս արձակին. զի հոգին մեկնեցաւ 'ի բնակութե̃ իւրմէ. հողակերտ անօթն բեկաւ. մնաց անբարբառ, անզգայ, անշունչ, անշարժ. արդ՝ յուղարկաւորելով զսա 'ի գերեզման, անկցուք առաջի ք̃ի հանդերձ արտասուօք, աղաչեսցուք զտէր զի տացէ սմա զհանգիստ 'ի յաւիտեան:

Օ՜ինչ են կեանք մեր. բայց եթէ ծաղիկ, և գոլորշի, և ցօղ առաւօտու. ո՜վ եկայք նկատեսցուք 'ի գերեզմանի. ո՞ւր է գեղեցկութի̃ն, ո՞ւր է առոյգութի̃ն, ո՞ւր է աչք և կերպարանք մարմնոյն. ամ̃քին չորացան ոպ̃ խոտ. ամենեքին անհետ եղեն. եկա՛յք անկցուք առաջի ք̃ի հանդերձ արտասուօք, զի հանգուսցէ զսա:

Անջատումն հոգւոյն՝ մեծ ողբումն և սուգ, մեծ տառապանք և հեծութի̃ք. կեանք ժամանակաւորաց՝ ստուեր անըմբռնելի, քուն մոլորութե̃, անկայուն երևոյթ, վշտալից կենակցութիւն. հեռի փախիցուք յաշխարհէ և 'ի սիրոյ անցաւորաց, զի զերկնայինսն ժառանգեսցուք:

Տեսանելով զառաջիկայ մեռեալս, զվերջին ժամն ածցուք զմտաւ. զի կեանքն ոպ̃ ծուխ անցանէ յերկրէ. քանզի ահա սա որպէս ծաղիկ թարշամեցաւ. ոպ̃ խոտ կտրեցաւ. պատանաւ պատեցաւ. ընդ հողով ծածկեցաւ. վասն որոյ առ ք̃ս պաղատեսցուք տալ սմա զհանգիստ յաւիտենական:

Եկայք սերունդք ազանց , տեսցուք զպատկերակիցն մեր զրկեալ յա̃մ վայելչութէ̃ , եդեալ ընդ երկրաւ , բնակեալ 'ի խաւարի · որ հանդերձեալ է լուծանել ապականութե̃ , և լինել կերակուր որդանց · վ̃ն որոյ առ քն̃ պաղատեսցուք տալ սմա զհանգիստն յաւիտենական ։

Յորժամ հոգին 'ի մարմնոյն անջատի , մոռանայ զա̃մ ազգակիցս և զծանօթս , խորհի զհանդերձեալ դատաստանն անաչառ՝ ուր կալոց է , և զանվախճան պատուհասն · աղէ՛ պաղատեսցուք ամենեքեան առ դատաւորն կենդանեաց և մեռելոց քն̃ , զի ներեսցէ յանցանաց սո̃ր ։

Ամենայն գործարանք մարմնոյն որք փոքր մի յառաջ շարժէին , այժմ տեսանին դադարեալ , անշարժ , անշունչ , անզգայ · զի կափուցան աչք , կապեցան ոտք , դադարեցան ձեռք , և խցան ականջք · լուռ եղև լեզուն , և ինքն մատնեցաւ հողոյ · արդարև ունայնութի̃ են ա̃մ մարմնականք · իսկ արդ՝ ա̃մ ազգականք և բարեկամք՝ որք այժմ անջատիք 'ի սմանէ , աղաչեսցուք զտէր զի հանգուսցէ զսա ։

Կեցո՛ զապաւինեալն 'ի քեզ մայր անմուտ արեգական սրբուհի ա̃ծածին՝ բարեխօսութե̃ քո , և հայցեա՛ 'ի գերագոյն բարւոյն հանգուցանել զփոխադրեալս 'ի յօթեվանս արդարոց , լինել ժառանգորդ ա̃ծայնոցն բարեաց ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Տեսանելով զիս անձայն և անշունչ առաջի եդեալ , լացէք ա̃մքեան 'ի վերայ իմ եղբա՛րք և սիրելի՛ք , ազգակի՛ցք և ծանօ՛թք · զի յերեկեան աւուրն խօսակից լինէի ընդ ձեզ , և յանկարծակի եկն 'ի վ̃ր իմ սոսկալի ժամն մահուան · ո՛ն եկա՛յք սիրելիք իմ՝ ողջունեցէք զիս վերջին ողջունիւ , քանզի ոչ ևս ընդ ձեզ գնացից կամ խօսակից եղէց · այլ առ անաչառ դատաւորն երթամ , ուր ծառայ և տէր են 'ի միասին , թագաւոր և զօրական , մեծատուն և տնանկ են համապատիւ · զի իւրաքանչիւրոք ըստ գործոց իւրոց կամ փառաւորեսցի կամ ամաչեսցէ · վասն այսորիկ աղաչանօք հայցեմք յամենեցունց , անդադար պաղատեցէք վասն իմ առ քն̃ ա̃ծ ·

զի մի՛ դիցէ զիս ըստ մեղաց իմոց 'ի տեղի տանջանաց ,
այլ բնակեցուսցէ զիս անդ , ուր է լոյսն կենաց ։
Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աստուածածնի ։

Բարեխօսութ̃ ծնողի քո , և յովհաննու կարապետի , առաքելոց , մարգարէից , հայրապետաց , ճգնաւորաց , արդարոց , և ա̃մ սրբոց զննջեցեալս հանգո՛ ։

Եւ ապա Երեքսրբեան ։ Ամենասուրբ երրորդութ̃ի ։ Հայր մեր , զի քո՛ է արքայութ̃ի ։ և Ճամամուտքս ։

Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց , և զհոգի ծառայի̃ս քո հանգո՛ փրկիչ , և պահեա՛ յերանաւէտ կեանս որ 'ի քէն՝ մարդասէր ։

'Ի հանգիստ քո տէր՝ ուր հանգչին ա̃մ սուրբք քո , և զհոգի ծառայիս քո հանգո՛ , որ միայն ես մարդասէր ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Դու ես ա̃ծ որ իջեր 'ի դժոխս , և լուծեր զդատակնիքս կապելոց , ինքնին և զհոգի ծառայիս քո փրկիչ հանգո՛ ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աստուածածնի ։

Միայն մաքուր և անարատ կոյս՝ ծնող ա̃յ անսերմնաբար , բարեխօսեա՛ փրկել զհոգի ծառայիս քո ։

Մաղթանք ։

Ողորմեա՛ մեզ ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում . աղաչեմք զքեզ , լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն երանուէ և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս ա̃յ (այս անուն) , և վ̃ն թողլոյ սմա զա̃մ յանցանս զկամայ և զակամայ ։

Որպէս զի տէր ա̃ծ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք ։

Զողորմութ̃ին ա̃յ և զարքայութ̃ին երկնից , և զթողութ̃իւն մեղաց սորա 'ի ք̃նէ յանմահ թագաւորէն և յա̃յ մերոյ խնդրեսցուք ։

իե

Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Աստուած հոգւոց և ամենայն մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, նոյնին տէր՝ հանգո՛ զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաձեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանս, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութեամբ՝ թո՛ղ սմա որպէս բարի և մարդասէր Աստուած. զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութիւն քո արդարութիւն յաւիտենական, և բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութիւն և կեանք և հանգիստ ննջեցեալ ծառայի քո (այս անուն) Քրիստոս Աստուած մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ քահանայն ասէ զարձակմանս զայս։

Ճշմարիտ Աստուածն մեր Քրիստոս՝ որ յարեաւ ՚ի մեռելոց, բարեխօսութեամբ ամենասրբուհի մօր իւրոյ, սրբոց և փառաւորեալ և գերահռչակ առաքելոց, սուրբ և աստուածազգեաց հայրապետացն մերոց, և ամենայն սրբոց, դասաւորեսցէ զփոխադրեալս ՚ի մէնջ զծառայ իւր ՚ի խորանս արդարոց. և հանգուսցէ ՚ի գոգն աբրահամու. և զուգաթուեսցէ ընդ արդարս. և ողորմեսցի մեզ որպէս բարերար և մարդասէր։

Եւ ապա ասէ ցննջեցեալն։ Յիշատակ քո յաւիտենական լիցի ով եղբայր, արժանի լինիցիս երանութեան։

Զայս ասէ երիցս. և բառնան զննջեցեալն յեկեղեցւոյն, և տանին ՚ի գերեզմանն ասելով ՚ի ճանապարհին զերգս զայս. ՃԿ։

Ողբամ և աշխարեմ յորժամ մտածեմ զմահ, և տեսանեմ զգեղեցիկ պատկերն Աստուծոյ՝ եդեալ 'ի գերեզմանի անկերպ և անվայելուչ, որ ոչ ունի զտեսիլ մարդոյ. ո՜վ՝ սոսկամ սոսանեալ, զինչ է այս գաղտնիք որ 'ի մեզ. զիա՞րդ մատնեցաք ապականութեան. զիա՞րդ լծակից եղաք մահուան. արդարև հրամանաւն Այ եղև ոպ և գրեալ է. վասն որոյ աղաչեսցուք զԱծ զի շնորհեսցէ փոխադրելոյս զհանգիստ:

Ապա ասէ աւ. Սրբերբեան. Մռնաւը երրորդումն. Հայր մեր, զի քո է արքայութիւն: Ապա դնեն զնա 'ի գերեզմանի, և քահանայն բուռն առեալ հող՝ խաչանման արկանէ 'ի վերայ մեռելոյն՝ ասելով. Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ և ամ բնակիչք նորա: Ապա բածեն 'ի վն մեռելոյն զամ շիրմ զանդեղեն, և զամ զմնիր բուռվանին, և ծածկեն զգերեզմանն բռնահողով. և երգեն 'ի վերայ նորա զժամամուտս:

Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց, և զհոգի ծառայիդ քո հանգո փրկիչ, և պահեա յերանաւէտ կեանս որ 'ի քէն՝ մարդասէր:

'Ի հանգիստ քո տէր ուր հանգչին ամ սրբք քո, և զհոգի ծառայիս քո հանգո, որ միայնդ ես մարդասէր:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Դու ես Ած որ իջեր 'ի դժոխս, և լուծեր զկապանս կապելոց, ինքնին և զհոգի ծառայիս քո փրկիչ հանգո:

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Աստուածածնի:

Միայն մաքուր և անարատ կոյս՝ ծնող Այ անսերմնաբար, բարեխօսեա փրկել զհոգի ծառայի քո:

## Մաղթանք:

Ողորմեա մեզ Ած ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա:

Եւ ևս աղաչեսցուք վասն երանութեան և մշտնջենաւոր հանգստեան ննջեցեալ ծառայիս այ (այս անուն), և վն թողլոյ սմա զամ յանցանս զկամայ և զակամայ։

Որպէս զի տէր այ մեր հանգուսցէ զհոգի սորա ուր հանգչին արդարք։

Զողորմութիւն այ և զարքայութիւն երկնից, և զթողութիւն մեղաց սորա ՚ի քնէ յանմահ թագաւորէն և յայ մերոյ խնդրեսցուք։

Զտէր աղաչեսցուք։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Այ հոգւոց և ամ մարմնոց՝ որ կոխեցեր զմահ, և խափանեցեր զսատանայ, և պարգևեցեր զկեանս աշխարհի, ինքնին տէր՝ հանգո զհոգի ննջեցեալ ծառայիս քո (այս անուն), ՚ի լուսաճեմ և դալարաւէտ և հոգեզուարճ կեանսն, յորմէ մերժեալ են ցաւք և տրտմութիւնք և հառաչանք։

Եւ զոր ինչ մեղաւ բանիւ կամ գործով կամ մտածութբ՝ թող սմա որպէս բարի և մարդասէր այ. զի ոչ ոք է որ կեցցէ և ոչ մեղիցէ. քանզի դու միայն ես առանց մեղաց. արդարութի քո արդարութի յաւիտենական, և բանք քո ճշմարտութիւն։

Զի դու ես յարութի և կեանք և հանգիստ ննջեցեալ ծառայի քո (այս անուն) քրիստոս այ մեր. և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ քահանայն կրկնէ անդրէն զարձակման զայս։

Ճշմարիտ այն մեր քն, որ յարեաւ ՚ի մեռելոց, բարեխօսութբ ամենասրբուհի մօր իւրոյ, սբք և փառաւորեալ և գերահռչակ առաքելոց, սբք և այծազգեաց

հայրապետացն մերոց ,՛և ամ՛ սբց , դասաւորեսցէ զփո-
խադրեալս 'ի՛ մէնջ զծառայ իւր 'ի խորանս արդարոց ․
և հանգուսցէ 'ի գոգն աբրահամու ․ և ղուգաթուեսցէ
ընդ արդարս ․ և ողորմեսցի մեզ որպէս բարերար և
մարդասէր ․

Ժո․ ամէն ։

Փառք Այ որ՛ այսպէս սահմանեաց ․ կամք տեառն
օրհնեալ եղիցի ․

Ժո․ Լինի արձակումն ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՎԱՍՆ ՀԻՒԱՆԴԱՑ, ՈՐ ՏԱՆՋԻՆ ՑԱՑՍՈՑ ՊՂԾՈՑ։

Քահանայն ասէ · Օրհնեալ է ա̃ծ մեր յա̃մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դպս ասէ · Երեքսրբեան · Ամենասուրբ երրորդու̃թ · Հայր մեր, զի քո է արքայու̃թ · Տ̃ր ողորմեա, ժբ̃ · Փառք Հօր, և այժմ և միշտ · Եկայք երկիր պագցուք։

Եւ ասա զսաղմոսս զայսոսիկ։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։

'Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ զի դու տէր ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։

Ողորմու̃ն քո տ̃ր զհետ իմ եկեսցէ զա̃մ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան տ̃ն ընդ երկայն աւուրս։

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ՞ երկեայց, տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ՞ դողացայց։

'Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի 'ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ · և թէ յարիցէ 'ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ 'ի քեզ տէր յուսացայ։

Զմի խնդրեցի ՚ի տեառնէ և զնոյն աղաչեմ, բնակիլ ինձ ՚ի տան տեառն զա̃մ աւուրս կենաց իմոց.

Տեսանել ինձ զվայելչութի̃ տեառն, և հրամանս տալ ՚ի տաճարի նորա.

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի, ընդ յարկաւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում.

՚Ի վիմէ բարձր արարեր զիս, և այժմ բա՛րձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց.

Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութե̃, օրհնեցից և սաղմոս ասացից տեառն.

Լուր տէր ձայնի իմում զի կարդացի առ քեզ. ողորմեա՛ ինձ և լո՛ւր ինձ զի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր խնդրեցին.

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ խոտորեր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ.

Օգնական իմ լեր տ̃ր մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս ա̃ծ փրկիչ իմ.

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր իմ ընկալաւ զիս.

Օրէնսդիր արա զիս տէր ՚ի ճանապարհի քում, և առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս քո ուղիղս.

Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց.

Յարեան ՚ի վերայ իմ վկայք մեղաց, և ստեցին ինձ յանօրէնութեան իւրեանց.

Հաւատացի տեսանել զբարութի̃ տեառն յերկրին կենդանեաց, համբերեա՛ տեառն և քաջալերեա՛ց. զօրասցի սիրտ քո և համբերեա՛ տեառն.

Յարիցէ ա̃ծ և ցրուեսցին ամենայն թշնամիք ն̃ր, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա.

Որպէս պակասի ծուխ՝ պակասեսցին, ո̃պ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս կորիցեն մեղաւորք յերեսաց ա̃յ.

Արդարք ուրախ եղիցին և ցնծասցեն առաջի ն̃ր, և զուարճասցին յուրախութեան իւրեանց.

Օրհնեցէ՛ք զա̃ծ մեր և սաղմոս ասացէք անուան

նորա․ Ճանապարհ արարէք այնմիկ որ նստի ընդ արևմուտս, և տէր է անուն նորա։

Ցնծասցեն առաջի նր̄, և խռովեսցին յերեսաց նր̄։

Որ հայրն է որբոց և դատաւոր այրեաց, ա̄ծ ՚ի տեղւոջ սրբութեան իւրոյ։

Ա̄ծ բնակեցուցանէ զմիակրօնս ՚ի տան, և հանէ զկապեալս քաջութ̄բ իւրով․ սոյնպէս և զդառնացօղս որք բնակեալ են ՚ի գերեզմանս։

Ա̄ծ՝ ընդ ելանելն քո առաջի ժողովրդեան քո, ընդ անցանելն քո ընդ անապատ՝ երկիր շարժեցաւ։

Քանզի և երկինք ցօղեսցին յերեսաց ա̄յ ՚ի սինայէ՝ առաջի ա̄յ իսրայելի։

Անձրև կամաց պատրաստեցեր ա̄ծ ժառանգութեան քում․ թէպէտ և հիւանդացաւ, սակայն դու հաստատեցեր զնա, և գազանք քո բնակեսցին ՚ի նմա։

Պատրաստ արարեր քաղցրութ̄բ քով աղքատի ա̄ծ․ տէր տացէ զբան ոյք աւետարանեն զօրութ̄բ բազմաւ։

Թագաւոր զօրութ̄ց սիրելոյ, գեղեցկութ̄ տան քո բաժանել յաւարի, թէպէտ և ննջէսջիք ՚ի մէջ վիճակաց։

Թևք աղաւնւոյ արծաթապատ, և թիկնամէջ նորա ՚ի դոյն ոսկւոյ։

՚Ի գումարել երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նր̄, ձիւնասցին ՚ի սաղմոն։

Լեառն ա̄յ լեառն պարարտ, լեառն մածեալ լեառն պարարտ․ և զի՞նչ կարծէք լերինք հպարտացեալք։

Լեառն ընդ որ հաճեցաւ ա̄ծ բնակել ՚ի նմա․ քանզի և տէր իսկ բնակեսցի ՚ի նմա իսպառ։

Կառք ա̄յ բիւրապատիկք, հազարք ուղղիչք և տ̄ր ՚ի նոսա ՚ի սինէ սրբութեան իւրոյ։

Ել ՚ի բարձունս և գերեաց զգերութի̄, էառ աւար բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան․ քանզի թերահաւատից ևս բնակեալ եղիցին ՚ի նմա։

Տէր ա̄ծ օրհնեալ՝ օրհնեալ տէր զօրհանապազ, առաջնորդեսցէ մեզ ա̄ծ փրկիչ մեր։

Ա̄ծ մեր ա̄ծ կենարար, և ՚ի տեառնէ են ելք մահու։

Բայց սակայն ա՟ծ փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց, և զհերոն կործանօղին որք գնան յանօրէնութեան իւրեանց։

Ասաց տ՟ր՝ ’ի խորոց անդնդոց դարձուցից, և ’ի միջոյ ժանեաց զայն ’ի դուրս կորզեցից։

Որպէս թացցի ոտն քո յարեան, և լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց։

Տեսեցան գնացք քո ա՟ծ, գնացք ա՟յ թագաւորին մերոյ սրբոյ։

Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն, ’ի մէջ գուսանաց և գովչաց։

Յեկեղեցիս օրհնեցէ՛ք զա՟ծ, և զտ՟ր յաղբերացն իէլի։

Անդ բենիամին ’ի տղայութեան զարմանալի, իշխանք յուդայ առաջնորդք նորա՝ իշխանք զաբուղոնի և իշխանք նեփթաղիմայ։

Հրամայեա՛ ա՟ծ զօրութե՟ քով, զօրացո՛ զայս զոր հաստատեցեր ’ի մեզ։

’Ի տաճարէ քումմէ յերուսաղէմէ, քեզ մատուցեն թագաւորք զպատարագս։

Սաստեա՛ ’ի գազան եղեգան, ’ի ժողովս զուարակաց և ’ի գասս երինջոց։

Խոտեսցին այնոքիկ որք ընտրեալ են արծաթով, ցրուեա՛ զհեթանոսս որք կամին ընդ պատերազմ։

Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ, հնդիկք յառաջագոյն ձեռնտու լիցին առ ա՟ծ։

Թագաւորութիւնք երկրի օրհնեցէ՛ք զա՟ծ, և սաղմոս ասացէք տեառն։

Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ արևելս։

Ահա տացէ զձայն իւր ’ի ձայն զօրութե՟, և տու՛ք զփառս ա՟յ։

’Ի վերայ իսրայէլի մե՟ծ վայելչութի՟ նորա, և զօրութի՟ նորա մինչև յամպս երկնից։

Սքանչելի է ա՟ծ ’ի վերայ ս՟բց իւրոց, ա՟ծ իսրայէլի։

Նա տացէ զօրութի՟ հաստատութե՟ ժողովրդեան իւրոյ, օրհնեալ է ա՟ծ։

իղ

Ողորմեա ինձ ա̃ծ ըստ մեծի ողորմութե̃ քում, ըստ բազում գթութե̃ քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դատել գաս։

Անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութե̃ քոյ յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ զցնծութի̃ և զուրախութի̃, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս ա̃ծ, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութե̃ քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ ա̃ծ ա̃ծ փրկութե̃ իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի , և շինեսցին պարիսպքն երուսաղեմի ։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան , յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս ։

## Լ՟ա տուն ։

Ո՛վ հաւատար զիս մարդկային վերակացութեան ամենօրհնեալ տիրուհի · այլ ընկա՛լ զիս զծառայ քո ընդ պաշտպանութեամբ քով ։

Տանջիմ հանապազօր անհնարին վշտօք 'ի նեղանձնութե դիւաց , և ո՛չ ապաւինեցայց տառապեալս , զի բաց 'ի քէն ոչ ունիմ պաշտպան ։

Շուրջանակի յամ կողմանց նեղեն զիս պատերազմունք , և բաց 'ի քէն ոչ ունիմ մխիթարութիւն ։

Տիրուհի աշխարհի՝ յոյս և վերակացու հաւատացելոց , մի՛ մերժեր զաղաչանս իմ , օգնեա՛ ինձ ։

## Առաջնորդն կամ քահանայն ։

Կեցո՛ զժողովուրդ քո · և այցելու լեր աշխարհի ողորմութեամբ և գթութեամբ · և բարձրացո՛ զեղջիւր ուղղափառ քրիստոնէից · և առաքեա՛ 'ի վերայ մեր զառատ ողորմութիւնս քո , բարեխօսութեամբ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ Աստուածածնի՝ և միշտ կուսին մարիամու , զօրութեամբ պատուական և կենարար խաչի , վերակացութեամբ պատուական անմարմին զօրութեանց , պատուական և փառաւորեալ մարգարէին՝ կարապետին և մկրտչին յովհաննու , սրբոց և փառաւորեալ և գերահռչակ առաքելոց , սրբոց հարցն մերոց և տիեզերական վարդապետացն և քահանայապետաց՝ մեծին բարսղի՝ և գրիգոր Աստուածաբանին՝ և յովհաննու ոսկեբերանին , սրբոյ հօրն մերոյ նիկողայոսի սքանչելագործ հայրապետին զմիւռնոյ , սրբոց և փառաւորեալ և բարեյաղթ մարտիրոսաց , սրբոց և Աստուածազգեաց հայրապետացն մերոց , սուրբ և արդար Աստուածահօրն յովակիմայ և աննայի , և սրբոյն (այս անուն պաշտպանի օրհնէլոյն) , և

բարեխօսութ̅ եւ յիշատակաւ սրբոյն (այս անուն), եւ ամ̅ սրբոց քոց, լո՛ւր մեզ մեղաւորացս որք կարդամք առ քեզ բազումողորմ տէր, եւ ողորմեա՛ մեզ.

Եւ այլ, Տէր ողորմեա՛, ժբ̅.

Քահանայն.

Ողորմութ̅ եւ գթութ̅ եւ մարդասիրութ̅ միածնի որդւոյ քո, ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ եւ բարի եւ կենդանարար քո հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն.

## Կանոն պաղատանաց

Առ տէր մեր յս̅ քս̅, եւ յամենասրբուհի ած̅ածինն, եւ յանմարմին զօրութիւնս, 'ի սբ̅ առաքեալսն, եւ յամ̅ սբ̅սն.

Երգ, ա̅. ճձ̅. Եկա՛յք ժողովուրդք երգեսցուք.

Ո քեզ կոչէ ծառայ քո 'ի խորոց սրտէ աղաղակելով. արարիչ եւ ազատիչ եւ տէր իմ օգնութ̅ հաւատացելոց, վաղվաղեա՛ փրկել զիս յառաջիկայ վտանգէս, միա՛յն մարդասէր.

Որ դու միայն գիտես զտկարութ̅ մեր փրկիչ, ժամանեա՛ զերծուցանել զծառայ քո 'ի նեղութ̅ աստի, եւ'ի կորուսչէն որ ունի զսա.

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ.

Դասք հրեշտակաց աննիւթական զօրութ̅ց հանդերձ առաքելովք եւ մարտիրոսօք աղաչեցէ՛ք զտէրն բոլորից՝ փրկել զծառայ իւր 'ի դժնդակ վտանգէս.

Եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Աստուածածնի.

Ապաւէն հաւատացելոց տիրուհի միշտ կոյս՝ հզօր օգնականութ̅ մեր ծառայից քոց, բարեխօսութ̅ քո աղաչեա՛ զծառայ քո յառաջիկայ բռնութ̅էս.

## Նոյն · Գ · Համատարած զմեզ ·

Տէ՛ր՝ որ ազատեցեր զյակոբ ծառայ քո 'ի սպառնալեաց եսաւայ, փրկեա՛ և այժմ զծառայ քո յառաջիկայ բռնութենէս որպէս մարդասէր ։

Դու քեզ աղաղակէ տառապեալ ծառայ քո 'ի հոգեսպառ նեղութե՟ խորում, մարդասէր փրկիչ մի՛ անտես առներ զիս զծառայ քո · այլ փութա՛ փրկել ո՟ղ բարեգութ ։

փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Միա՛յն բարի, միայն բազմագութ, միայն գթած և ողորմած, բարեխօսութ՟ ս՟րբ քոց ազատեա՛ զծառայ քո ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

### Աստուածածնէ ։

Թագուհի մ՟ր հրեշտակաց, առաքելոց, մարգարէից, և մարտիրոսաց, աղաչեա՛ առ ծնեալն 'ի քէն ա՟ծ, ազատել զծառայ քո 'ի մահաբեր վտանգէ աստի ։

### Նոյն ։

Համատարած զմեզ տէր 'ի քեզ, որ փայտիւ սպաներ զմեղս · և զերկիւղ քո անկեա 'ի սիրտս մեր, որք օրհնեմք զքեզ ։

### Սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե՟, կենաց, խաղաղութե՟, առողջութե՟, փրկութե՟, այցելութե՟, քաւութե՟ և թողութե՟ մեղաց ծառայիս ա՟յ (այս անուն) ։

Ա՟ս թողլոյ սմա զա՟մ յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք ։

### Քահանայն ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աստուածածնի։

Անդադար բարեխօս և աղբիւր ողորմութեան, պարիսպ անյաղթելի, և ապաւէն աշխարհի, ուժգին գոչեմք առ քեզ Աստուածածին տիրուհի, հաս առ մեզ և զերծո՛ 'ի վտանգից, զի դու միայն ես արագահաս օգնական։

## Երգ · Է · Երկիր ·

Մրրկաւ վտանգաց տատանեալ, և 'ի ծովու տառապանաց ալեկոծեալ ծառայի քո, առաջնորդեա՛ տես-բօղա 'ի խաղաղ նաւահանգիստ։

Բազում եղեն նեղիչք ծառայի քո, և սրեցին զլեզուս իւրեանց որպէս զսուր երկսայրի, նայեա՛ մարդասէր Քրիստոս, և յանխրաւ մահուանէ զծառայ քո ազատեա՛։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Իշխանութիւնք, զօրութիւնք, հրեշտակապետք և հրեշտակք, առաքեալք, մարգարէք, մարտիրոսք, սուրբք և արդարք, ամենեքեան աղաչեցէք զտէր վասն առաջիկայ ամենաթշուառ վտանգեցելոյս։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնի։

Ամենօրհնեալ տիրուհի, պատրաստ օգնութիւն մարդկային ազգի, հանդարտեցո՛ բարեխօսութեամբ քո զամենի ալիս տառապանաց ծառայի քո, և բժշկեա՛ 'ի չարաչար ախտէն, որ ապաւինեալ է 'ի պաշտպանութիւն քո։

## Երգ · Ը · Որ լուսոյ առաջնորդ։

Տէր՝ որ լուար աղօթից եզեկիայի, լո՛ւր և այժմ աղաչանաց իմոց միայն բարերար, և զերծո՛ զծառայ քո յամենայն նեղութենէ։

Տէր՝ որ 'ի ձեռն հրեշտակի զգլխաւոր աշակերտն քո Աստուածային հրամանաւ ազատեցեր 'ի բանտէ, փրկեա՛ և այժմ զծառայ քո յառաջիկայ վտանգէս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Օ՛ բնութիւնք հրեշտակաց, և երամք առաքելոց, և մարգարէից, և փառաւոր մարտիրոսաց, և ամ՟ սրբոց, բարեխօսեցէք առ տէր փրկել զսա 'ի դժնդակ ախտէս։
Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ։

Մայր քնի՟ այ՟՝ բարեխօսութ՟ քո փրկեա զհաւատացեալ ծառայ քո 'ի վնասակար և յանտանելի վտանգէ աստի, զի սրտիւ և բերանով բարեբանեսցէ զքեզ։

Երգ · Է · 'Ի խորս յանցանաց։

Որ զմարգարէն քո յորձանս յորովայնէ կիտին ազատեցեր տէր, ազատեա և այժմ զծառայ քո 'ի տանջանաց աստի, զի հաւատով և սիրով փառաւորեսցէ զքեզ։
Որ զդանիէլ զերծուցեր 'ի դժնդակ առիւծուց ար՟ քն՟, զերծո՛ և այժմ զծառայ քո 'ի չարաչար սաստից, և վերածեա յապականութենէ և 'ի մահուանէ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Կեցո՛ փրկիչ զվտանգեալ ծառայ քո, աղաչանօք սրբոց հրեշտակաց՝ մարգարէից և մարտիրոսաց, և հայցուածովք ընտրեալ աշակերտաց քոց։
Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ։

Մի՛ անտես առներ անարժան կոյս զանօգնական ծառայ քո, որ ալեկոծի չարաչար․ այլ զերծո՛ զսա ըստ ողորմութե՟ քում, որ ապաւինեցաւ յօգնականութի՟ քո։

[illegible]

Որ պաշարեալ եմ յանդունդս յանցանաց, աղաղակեմ առ անդունդս անսահման գթութե՟ քո ած՟ իմ, հա՛ն զիս յապականութենէ։

Սարկաւագն։

Ողորմեա մեզ ած՟ ըստ մեծի ողորմութեան քում․ աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան, քաւութեան և թողութեան մեղաց ծառայիս Աստուծոյ (այս անուն)։

Վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

Քահանայն։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնի։

Մեղաւորքս և թշուառք դիմեսցուք այժմ առ Աստուածածինն և անկցուք առաջի նորա, զղջմամբ աղաղակելով ՚ի խորոց սրտէ, տիրուհի՝ փութացի՛ր օգնել մեզ գթութեամբ, կորեաք ՚ի բազմութենէ յանցանաց մերոց. մի՛ ունայն դարձուցաներ զծառայս քո, զի դու միայն ես յոյս մեր։

Երգ. Է. Պատկերի ոսկւոյ։

Որ փրկեցեր ՚ի հնոցէ հրոյն զերիս մանկունսն բազմագութ տէր, փրկեա՛ և այժմ զծառայ քո ՚ի տառապանաց առ նա հասելոց, և ՚ի բորբոքմանէ դժնդակ և անտանելի փորձութեանց. զի անդադար բարեբանեսցէ զքեզ, օրհնեալ ես Աստուած հարցն մերոց։

Որ դու միայն գիտես զտկարութիւն մարդկան մարդասէր Քրիստոս, և տաս զմխիթարութիւն ՚ի նեղութեան, փրկեա՛ զծառայ քո յառաջիկայ վտանգէս. զի գոհաբանական ձայնիւ երգեսցէ, օրհնեալ ես Աստուած հարցն մերոց։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Բազմութիւնք հրեշտակաց, և Աստուածային ժողով նախահարց, առաքելոց, մարգարէից և մարտիրոսաց, հայցեցէք ՚ի բարերարէն դարձուցանել զսուգ սորա յուրախութիւն. զի ցնծութեամբ աղաղակեսցէ, օրհնեալ ես Աստուած հարցն մերոց։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ։

Միայն յոյս և օգնութի̃ հաւատացելոց ա̃ծածին տիրուհի, փութացիր յօգնութի̃ ծառայի քում, որ յարկածից նեղու̃ց շուրջանակի ալեկոծեալ, և յելս հնարից անճարակ գտեալ, վստահու̃ հոգւոյ ապաւինեցաւ առ քեզ։

## Տուն. Ը. Ի բոցոյ սրբոյն։

Որ լուար աղօթիցն պօղոսի և շիղայի ողորմած, և փրկեցեր զնոսա ՚ի կապանաց բանտին, լուր և այժմ ձայնի անարժանութե̃ս մեր՝ որ առ քեզ աղաղակեմք, և փրկեա զծառայս քո յապականութե̃ և ՚ի մահուանէ։

Բերանով մերով առ քեզ գոչէ ծառայս քո բարեգութ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն ծառայէ, զի նեղեալ եմ ես վաղվաղակի լուր ինձ ք̃ս փրկիչ, և փրկեա յառաջիկայ տագնապէս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Պաղատանօք աննիւթական պաշտօնէից, և սրբոց առաքելոց, մարգարէից, և մարտիրոսաց, և աղաչանօք ա̃մ սրբոց և արդարոց՝ փրկեա զծառայս քո ՚ի դժնդակ վտանգէ սաստի։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ։

Ամենասրբուհի կոյս՝ ապաւէն քրիստոնէից, զօրեղ օգնական չարաչար ալեկոծելոց, մի՛ անտես առներ զծառայս քո բազմատագնապ տարակուսեալ, որ ապաւինեալ է ՚ի հզօր պաշտպանութիւն քո։

## Տուն. Թ. Յ̃յ զբանն ա̃ծ։

Օ՛ անհնարին տարակուսութիւն առաջիկայ դատն վտանգիս ծառայի քո փոխարկեա տ̃ր ՚ի հանդարտու̃. և դարձո զսուգ սորա յուրախու̃ յաւիտենական. զի հաւատով և սիրով անդադար մեծացուցէ զքեզ.

Բերանով մերով գոչէ առ քեզ ծառայ քո՝ ողորմած, մի՛ յաղթեսցէ բազմութիւն անհնարին չարեաց իմոց բազում գթութեան քո ք՛ս, այլ կեցո՛ եւ փրկեա՛ զիս 'ի մահաբեր սաստից ատի միայն բազմագութ.

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ.

Խնայեա՛ յիս տր՝ խնայեա՛, յորժամ գաս 'ի դատել զերկիր. մի՛ սրտմտութեամբ յանդիմաներ զիս, եւ մի՛ դատապարտեր զիս ք՛ս, բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի, եւ աղաչանօք հրեշտակացն դասուց, եւ մարտիրոսացն խմբից.

Եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Աստուածածնի.

Ամենասրբուհի կոյս՝ ընդ անմարմնոցն պաշտօնէից, եւ հրեշտակացն ս՛բց, առաքելոց, մարգարէից, մարտիրոսաց, եւ ամ՛ ս՛բց, աղաչեա՛ զբարեգութն ած փրկել զծառայ քո 'ի տառապանաց.

Ապա ասէ.

Արժան է ճշմարտապէս երանել զքեզ ածածին, զմիշտ օրհնեալ եւ առաւել անարատ մայր ա՛յ մերոյ, զգերագոյնդ քերոբէից, եւ անհամեմատ մեծարեալդ քան զսերոբէս, զծնօղդ բանին ա՛յ անապականաբար, զքեզ ճշմարիտ ածածին մեծացուցանեմք.

Ամենայն զինուորութիւնք հրեշտակաց, կարապետ տն, երկոտասան առաքեալք, եւ ամ՛ սուրբք, ընդ սրբուհւոյ ածածնին բարեխօսեցէ՛ք առ տէր փրկել զմեզ.

Տիրուհի եւ մայր փրկչին՝ ընկա՛լ զաղաչանս անարժան ծառայից քոց, եւ լե՛ր միջնորդ վասն մեր առ ծնեալն 'ի քէն. ո՛վ տիրուհի աշխարհի՝ լե՛ր միջնորդ.

Սարկաւագն.

Ողորմեա՛ մեզ ած ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լո՛ւր եւ ողորմեա՛.

Եւ եւս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խա

զողութ՟ն, առողջութ՟ն, փրկութ՟ն, այցելութ՟ն, քաւութ՟ն և թողութեան մեղաց ծառայիս ա՟յ (այս անուն)։

Եւ վասն թողլոյ սմա զամենայն յանցանս զկամայ և զակամայ, զտէր աղաչեսցուք։

Ապա քահանայն օրհնէ զձէթն որ կայ ՚ի կանթեղն, ասելով զաղօթս զայս։

Զտէր աղաչեսցուք։

Տէր՝ հայր գթութ՟ց և ա՟ծ ա՟մ մխիթարութ՟ն, որ առաքեցեր յաշխարհ զմիածին որդի քո զտէր մեր յ՟ս ք՟ս ՚ի փրկութ՟ի մարդկայինս ազգի, և զա՟մ ինչ վարես ՚ի պէտս մեր։

Ինքնին որպէս մարդասէր առաքեա առ մեզ ՚ի պատրաստ բնակութ՟է քումմէ և յաթոռոյ փառաց քոց՝ զշնորհս հոգւոյդ սրբոյ ՚ի վերայ ձիթոյս այսորիկ, և արա զսա նուէր սրբութ՟ե և դեղ բժշկութ՟ե հիւանդաց, քաւութ՟ի մեղաց և մաքրութ՟ի հոգւոց և մարմնոց, կորուստ դիւաց և ամենայն հակառակ զօրութեանց հերքումն։

Զի քո է ողորմութ՟ի և պահպանութ՟ի ա՟ծ, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա առեալ զպատրոյգ ն՟է ձիթոյն, օծանէ նշա-խաչանման՝ զճակատն, զերեսն, և զերկու ձեռսն. և ապա և զափն աջոյ թաթին և զերեսն ն՟ր, և զափն ձախոյ թաթին և զերեսն նորա, ասելով զաղօթս զայս։

Հայր սուրբ՝ բժիշկ հոգւոց և մարմնոց մերոց, որ առաքեցեր զմիածին որդին քո զտ՟րն մեր յ՟ս ք՟ս՝ բժշկել զա՟մ հիւանդութիւնս մեր և ազատել ՚ի մահուանէ, բժշկեա և զծառայ քո (այս անուն) ՚ի հոգեկան և ՚ի մարմնական հիւանդութ՟ե խուրմէ շնորհիւ ք՟ի քո, և կենդանարարեա զսա ըստ հաճութ՟ե քում՝՝ ՚ի հատուցանել զպարտս գոհութեան և երկրպագութեան գործովք բարութ՟ե։

Բարեխօսութ՟բ ամենօրհնեալ փառաւոր տիրուհւոյն մերոյ ա՟ծածնի և միշտ կուսին մարիամու, և ա՟մ ս՟բց։

Զի դու ես աղբիւր բժշկութե՟, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք վասն քնհատ հիւանդի։

Տէր մեծ, գովեալ, անհասանելի և անճառելի, որ առեալ հող յերկրէ՝ կազմեցեր զմարդն ձեռամբ քո, և ըստ պատկերի քո պատուեցեր զնա։

Դու Յ՟ս Ք՟ս՝ փափագելի անուն՝ յայտնեա՛ց 'ի վերայ ծառայիս քո (այս անուն), և այց արա հոգւոյ և մարմնոյ սորա, բարեխօսութ՟բ օգոստափառ տիրուհւոյն մերոյ Ա՟ծածնի և միշտ կուսին Մարիամու, և սրբոց երկնային զօրուե՟ցն անմարմնոց, պատուական փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին Յովհաննու, և ս՟րց փառաւոր և գերահռչակ առաքելոցն, և ս՟րց հարցն մերոց և տիեզերական վարդապետացն՝ մեծին Բարսղի, Գրիգորի Ա՟ծաբանին, Յովհաննու Ոսկեբերանին, Աթանասի և Կիւրղի, Նիկողայոսի զմիւռնացւոյ, Սպիրիդոնի սքանչելագործին, և ամ՟ ս՟ր քահանայապետացն, և ս՟րյ առաքելոյն Նախավկայի և արհի սարկաւագին Ստեփաննոսի, սրբոց փառաւոր և մեծ վկայիցն Գէորգայ քաջայաղթ զօրավարի, Դեմետրեայ Մեռոնահոս զօրականի, Թէոդորոսի ստրատելատի, և ամ՟ սրբոց վկայից, և սրբոց և Ա՟ծազգեաց հարցն մերոց՝ Անտոնի, Եւթիմէոսի, և ս՟րյն Սաբայի, Թէոդոսի անապատականի, Օնոփրիոսի, Արսէնի, Աթանասի Աթովլացւոյ, և ամ՟ ս՟րց, և ս՟րց անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի, Կիւրոսի և Յովհաննու, Պանդալէոնի և Երմողայոսի, Սամփսոնի և Դիոմիդեայ, Թալալէոսի և Տրիփոնեայ, և բարեխօսութ՟ և յիշատակաւ ս՟րյն (այս անուն), և աղաչանօք ամ՟ ս՟րց քոց, տուր սմա քուն հանգստեան, քուն մարմնական առողջութ՟, քուն կենդանութ՟, և զօրութ՟ հոգւոյ և մարմնոյ։

Դու նոյն Տ՟ր ես, որ 'ի նախնումն այց արարեր Աբիմելէքայ պաշտօնէին քում 'ի տաճարին Ագրիպպայ, և

ետուր նմա քուն սփոփանաց , զի մի՛ տեսցէ զկործանումն երուսաղէմի , և դարձեալ զնա յարուցեր 'ի մի վայրկեան ժամանակի՝ 'ի փառս բարերարութեան քո :

Արդ զուրբ և զփառաւորեալ եօթն մանկունսն՝ յաւուրս բռնաւոր արքային դեկոսի՝ խոստովանող և վկայ յայտնուե̄ քո արարեր . և ետուր նց̄ քուն ննջել յայրին ամս երեք հարիւր եօթանասուն և երկու . և ոչ̄ մանուկ յորդանդի մօր պահեցեր անխաս , և անդրէն յարուցեր , 'ի գովեստ և 'ի փառս մարդասիրութե̄ քո , և 'ի ցոյց հաստատութե̄ միւսանգամ նորոգութե̄ մերոյ և յարութեան ամենեցուն :

Նոյնպէս և այժմ մարդասէր Թագաւոր՝ յայտնեա՛ց սատ 'ի ձեռն եկաւորութե̄ հոգւոյդ քո սրբոյ , և ա՛յց արա ծառայի քում (այս անուն) , և պարգևեա՛ սմա առողջութի̄ զօրութի̄ և արիութի̄ բարերարութե̄ քով , զի 'ի քէն են ա̄մ տուրք բարիք , և ա̄մ պարգեք կատարեալք :

Զանզի դու ես բժիշկ հոգւոց և մարմնոց մերոց , և քեզ փառք և գոհութի̄ և երկրպագութի̄ մատուցանեմք՝ ընդ անսկզբան քո հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

---

Կարգաւորութիւն վասն հոգեվար հիւանդի :

Զահանայն ասէ . Օրհնեալ է տէր ա̄ծ մեր յա̄մ ժամ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Դպս ասէ Երեքսրբեան . Ամենասուրբ երրորդութի̄ . Հայր մեր , զի քո՛ է արքայութի̄ . Տէր ողորմեա՛ , ժ̄է .
Եկայք երկիր պագցուք . Եւ սաղմոսս այսոքիկ :

Ա̄ծ յօգնել ինձ նայեա՛ց , և տէր յընկերել ինձ փութա՛ :

Ամաչեսցեն և յամօթ լիցին ոյք խնդրեն զանձն իմ , դարձցին յետս և ամաչեսցեն ոյք խորհեին ինձ չար :

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք, որք ասէին ինձ վա՜շ վա՜շ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։

Ասասցեն յամենայն ժամ մեծ է ա̅ծ, և որք սիրեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ և տնանկ եմ ա̅՛ծ օգնեա՛ ինձ, օգնական և փրկիչ իմ ես, և դու տէր իմ մի՛ յամենար։

Տէր լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լո՛ւր ինձ արդարութ̅բ քով, և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ ո̅պ երկիր ծարաւի է առ քեզ, փաղփաղակի լո՛ւր ինձ տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ որք իջանեն 'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցո՛յց ինձ ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ա̅ծ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութ̅բ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ՟բ քով սատակեա զթշնամիս իմ, և կորո զա՟մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութ՟ե քում, ըստ բազում գթութ՟ե քում քաւեա զանօրէնութ՟իս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութ՟է իմմէ, և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութ՟իս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դատել դաս։

Անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութ՟բ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ զցնծութ՟ի և զուրախութ՟ի, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զա՟մ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս ա՟ծ, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութ՟ե քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկութ՟ե իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա̄յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա̄ծ ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̃, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

## Կանոն · ճ̄է։

### Երգ · ա̄ · Որպէս ՚ի ցամաքի գնացեալ խորշէլ։

Ամենայն ժամանակ կենաց իմոց եանց ո̄պ ծուխ, և մա՞հն անդուլթ հասեալ կալաւ զիս, հրեշտակք ահաւորք կարգեալք յա̄յ՝ ահաբեկ առնեն զթշուառ հոգիս։

Եկայք ա̄մ բարեպաշտք՝ կարեկից գթով ողորմեցաւորք հոգւոյս թշուառի, որ օտարացեալ յա̄յ ծառայեաց դիւաց, և սուրբ աղօթիւք լերուք օժանդակ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ահա եկն ամբոխ անագորուն դիւաց, ունելով զգիր դպրութե̃ մեղացս բազմութե̃, և զարհուրելի գոչմամբ և սպառնալեօք պահանջեն յինէն զթշուառ հոգիս։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնի։

Այժմ առ ո՛ գոչեցից օգնել ինձ, ո՛վ լուիցէ զցաւագին ողբումս և զհառաչանս սրտի իմոյ · բայց միայն դու ո՛վ անարատ սրբուհի, յոյս քրիստոնէից և ապաւէն մեղաւորաց։

### Երգ · գ̄ · Ոչ գոյ սուրբ որպէս զքեզ։

Ո՛վ բարեկամք և ծանօթք ողբացէ՛ք և լացէ՛ք զեղկելի անձն իմ, որ երբեմն սիրելի և բարեկամ և եղբայր էի, այժմ անդառնալի գնացիւք օտարանամ ՚ի ձէնջ։

Եղբա՛րք իմ սիրելիք՝ տեսանելով զգործս մեղաց իմոց ծանր քան զաւազ ծովու սոսկամ սասանեալ · վ̄ո որոյ

աղաչեցէք առ ք̃ս ա̃ծ , զի քաւեսցէ զիս զմեղաւորս ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ։

Յիշելով սիրելիք իմ զբարեկամութիւն իմ ընդ ձեզ , աղերսեցէք ք̃սի հայցել գթութի̃ւ յիս թշուառականս , զի փրկեսցէ զիս ՚ի սպառնալեաց գեհենոյն ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Աստուածածնի ։

Խոնարհեցո առ իս զունկն քո մայր ա̃յն իմոյ՝ ՚ի բարձրութե̃ բազում փառաց քոց , և լո՛ւր վերջին հառաչանաց իմոց , և ձե՛ռն կարկառեա առ իս յօգնականութի̃ ։

## Տուն · Գ̃ · Քրիստոս է իմ զօրութիւն ։

Ահաւասիկ կողկողագին պաղատանօք ձեռս տարածանեմ առ սիրելիսդ իմ , հեղլով զդառն արտասուս յաչաց իմոց , և խնդրեմ առնել աղօթս առ ա̃ծ վասն փրկութեան իմոյ ։

Մարտ սաստիկ յարոյց ՚ի վերայ իմ թշնամին հոգւոյ իմոյ կորուսանել զիս , և զաչս իմ դարձուցեալ առ Հրեշտակս ա̃յ պաղատիմ ողորմել անձին իմոյ բազմամեղի , բայց նոքա զայրագին դիմօք պակուցանեն զիս ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ։

Յանջատման հոգւոյս ՚ի մարմնոյս տագնապիմ չարաչար վշտօք · ողորմեցարո՛ւք ինձ Հրեշտակք ա̃յ և Քրիստոսասէր մարդիկ արժանահայց մաղթանօք առ Տ̃ր , զի մի՛ մատնեցայց աններելի տանջանաց ըստ անօրէնութե̃ իմում ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Աստուածածնի ։

Տիրուհի տիրուհի՝ մայր ողորմութե̃ , ողորմեա՛ տարակուսեալ հոգւոյս , որ ապաւինեալ է միայն ՚ի հզօր պաշտպանութի̃ քո , և մի՛ թոյլ տայցես դիւաց զրաւել զիս ՚ի մահ և յապականութիւն ։

## Տէր · Ե · Ա̅ծային ճառագայթիւք քո բարերար ։

Արեգակն արդարութե̅ քո ճառագայթեա զլոյս քո իմանալի, և փարատեա զմէգ խաւարի մեղաց գործութե̅, որ շուրջ պատեալ զիս՝ մատնէ կորստեան ։
Բարեկամք իմ և սիրելիք կարեկից լերո՛ւք ինձ տարաբաղդիս, և միաձայն գոչեցէք առ տէրն իմ բարերար՝ զլոյս փառաց իւր ծագել ՚ի հոգիս ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Ո՛վ մեծ իշխանդ ա̅յ միքայէլ, նուաղ հեծութե̅ յօգնութի̅ ինձ կոչեմ զս̅բ անուն քո . զի ահա կապին շրթունք իմ և լռէ լեզուս, հաս ինձ յօգնութի̅ ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Աստուածածնի ։

Ա՛ստղ լուսաւոր՝ սրբուհի անարատ՝ մայր ք̅ի ա̅յ իմոյ, ահա՛ շիջաւ լոյս աչաց իմոց, և ծածկեաց զիս խաւար մեղաց, լե՛ր ինձ այցելու և հա՛ն զիս ՚ի լոյս ։

## Տէր · Զ · Ծով կենցաղոյս ։

Խոնարհեցուցէք զունկն ձեր առ իս եղբարք իմ, և լուարո՛ւք հեզութե̅ ձայնի աղաչանաց իմոց . և ընկալջիք վարձս բարեաց ՚ի տ̅նէ վ̅ն մտերիմ եղբայրութե̅ ձերոյ ։
Նա այժմ անջատի հոգիս ՚ի մարմնոյ իմմէ ցաւօք և հեծութե̅, և մարմին իմ լինիցի կերակուր որդանց . աղաչեցէք զտէր զի փրկեսցէ զհոգիս յորդանցն անմահից, և արասցէ արժանի իւր ա̅ծային տեսլեան ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Հաճեալ եմ ընդ բնակութի̅ յանլոյս գերեզմանիս, և ընդ նեխութի̅ ապականութե̅ մարմնոյս . այլ խնդրեմ ՚ի ձէնջ աղաչել զա̅ծ, գթալ յիս ՚ի մեղաւորս, և հանգուցանել զհոգիս ՚ի լոյս երեսաց իւրոց ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

### Մաղթանք։

Առ քեզ աղաղակեմ 'ի խորոց սրտէ տիրուհի, կարեկից լեր թշուառացելոյս, բարեխօսեա աղաչեմ առ որդի քո և տ̃ն իմ, փրկել զհոգիս 'ի հրոյ գեհենոյն, և արժանի առնել կենացն յաւիտենից։

## Ժամ · Է · Յօղարկու ծնողին ։

Ահաւասիկ քակտի տաղաւար մարմնոյս շինուածոյ, և մատնի հոգիս ահեղ ատենի անաչառ դատաւորին. այլ դուք սիրելիք յիշելով զկենակցութիւն իմ ընդ ձեզ, մի՛ դադարիք աղաչել զտէր վասն իմ մեղաւորիս։

Ողորմեցարո՛ւք ինձ ո՜վ հրեշտակք, որ կայք առաջի աթոռոյ փառաց ամենակալին. և հաճոյական մաղթանօք ձերովք զերծուցէք զմեղապարտ հոգիս 'ի տանջանաց գեհենոյն, որ պատրաստեալ և մնայ ինձ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Չունիմ գործ ինչ բարի՝ զի ակն կալայց փրկութե̃. այլ դուք ո՜վ հրեշտակք ծունր կրկնելով վասն իմ առ դատաւորն երկնաւոր՝ գոչեցէք առ նա, ողորմեա բարերար դու ստեղծեր զսա, մի՛ կորուսաներ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Մաղթանք։

Երես 'ի գետնի եդեալ առաջի անարատ ծնողի տ̃ն իմոյ և ա̃յ, հառաչանօք սրտի իմոյ աղերսեմ, տիրուհի բարեխօսեա առ տ̃ր գթալ յիս 'ի մեղաւորս ոչ̃ բարերար։

## Ժամ · Ը̃ · 'Ի բոցս հրոյն ։

Արտասուալից պաղատանօք աղաչեցէք վ̃ն իմ զարարիչն երկնի և երկրի. զի մի՛ ածցէ 'ի վերայ թշուառացելոյս սոսկալի վճիռ կապանաց ձեռացս և ոտից, և մատնելոյ 'ի խաւարն կորստեան։

Առ քեզ հառաչանօք գոչեմ ո՜վ հրեշտակ՝ պահապան կենաց իմոց, լո՛ւր նուաղելոյս ձայնի հեծութե̃,

և մի՛ լռեր 'ի բարեխօսելոյ վասն իմ առ դատաւորն կենաց և մահու ։

փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Զինուորեալդ զինու ա̃ծային զօրութե̃ն ս̃բ հրեշտակդ ա̃յ ՛, ո՛ր մինչև ցարդ հոգացար 'ի պահպանութի̃ թշուառացելոյս , օգնեա՛ ինձ և յայս մի նուագ , և լե՛ր ախոյեան ընդդէմ բռնութե̃ զօրացն խաւարի ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աստուածածնի ։

Մայրդ Ք̃ի իմոյ՝ բարեխօսեա՛ առ որդի քո և ա̃ծն իմ , զոր ծնար և սնուցեր , գթալ յիս 'ի մեղուցեալս , և փրկել և կեցուցանել ։

ՆՇԷ · Թ · Զ ա̃ծ մարդկան տեսանել անկարելի ։

Ընկլայ ես 'ի խորս չարեաց մահու յանցանաց , և ծածկեաց զիս խաւար աննշոյլ · և ահա տարակուսիմ վարանական երկիւղիւ 'ի գուբ խաւարի , կարօտեալ օգնականութեան ։

Սատէք յայցելութի̃ ամենավտարան տառապեալ հոգւոյս հրեշտա՛կք և հրեշտակապետք , առաքեալք և մարգարէք , մարտիրոսք և արդարք , և մաքուր մաղթանօք հայցեցէ՛ք 'ի տեառնէ զներումն և զթողութի̃ վասն իմ մեղաւորիս ։

Ոչ եմ արժանի օտարացելոյս 'ի բարերարեդ պաղատիլ առ քեզ տէ՛ր յ̃ս ք̃ս · այլ դու անոխակալ՝ որ համբերեցեր խաչի և մահու վասն փրկութե̃ իմոյ , խնայեա՛ յիս 'ի մեղաւոր և յանօրինեալ քո ծառայ , և կեցո՛ որպէս մարդասէր ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աստուածածնի ։

Անարատ կոյս ա̃ծածին՝ դու ես միակ յոյս իմ և ապաւէն , առ քեզ աղաղակեմ վերջին հեծութե̃ս , բարեխօսեա՛ առ որդի քո և ա̃ծն իմ՝ փրկել զիս 'ի յաւիտենական մահուանէ , և արժանի առնել կենացն անվախճանից ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Օծութեան մաղզմանի եւ նոր բաժակի, այսինքն սկիհի։

Սարկաւագն ասէ. Օրհնեալ Թագաւորութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն։
Սարկաւագն. Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։
Դպիրն. Տէր ողորմեա։

Սարկաւագն։

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, եւ հաստատութեան եկեղեցեացն Աստուծոյ, եւ ամենեցուն միութեան, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն սրբոյ տանս այսորիկ, եւ որք հաւատով եւ յարգութեամբ, եւ երկիւղիւն Աստուծոյ մտանեն ընդ սա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն արհի եպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութեան, պաշտօնէից Քրիստոսի, ամենայն ժառանգաւորաց, եւ ժողովրդեան, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն բարեպաշտ եւ աստուածապահ թագաւորաց, եւ ամենայն պալատականաց, եւ բանակաց նոցա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն պատերազմակից լինելոյ Տեառն Աստուծոյ մերոյ, եւ զամենայն թշնամիս եւ զհակառակամարտս նոցա ընդ ոտիւք նոցա արկանելոյ, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն քաղաքիս այսորիկ, եւ ամենայն քաղաքաց եւ գիւղաքաղաքաց, եւ որք հաւատով բնակեն ՚ի նոսա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն բարեխառնութեան օդոց, եւ պտղաբերութեան երկրի, եւ խաղաղական ժամանակաց, զտէր աղաչեսցուք։ Տէր ողոր՟։

Ս՟ն նաւորդաց, ճանապարհորդաց, հիւանդաց, վշտացելոց, գերեաց, և փրկութե՟ նոցա, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Ս՟ն փրկելոյ զմեզ յա՟մ նեղութե՟, 'ի բարկութե՟, 'ի վտանգից, և 'ի բռնութենէ, զտէր աղաչեսցուք:

Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, և պահեա՛ զմեզ ա՟ծ քոյին շնորհիւն:

Զամենասրբուհի անարատ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա՟ծածին՝ զմիշտ կոյսն մարիամ՝ հանդերձ ա՟մ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա՟մ կեանս մեր ք՟ի ա՟յ յանձն արասցուք:

Դպան. Քեզ տէր յանձն եղիցուք:

Եւ եպիսկոպոսն ասէ 'ի ձայն:

Զի քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութի՟ հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Դպան. Ամէն:

Եւ եպ՟սն բոյթ մատամբն օծանէ զնա՟ ս՟բ միւռոնաւն խաչանշան, ասելով. Յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ ապա ասէ զաղօթս զայս:

Տէսբօղա ա՟ր ա՟ծ մեր՝ որդի և բան ա՟յ կենդանւոյ՝ տէր յ՟ս ք՟ս, որ զբաժակս նորոյ ուխտի քո սրբեցեր, և ետուր զնա յուրախութիւն ա՟մ հաւատացելոց:

Ինքնին և այժմ ա՟ր ք՟ս ա՟ծ մեր, առաքեա՛ զշնորհս հոգւոյդ սրբոյ 'ի վերայ բաժակիս այս նորոյ, և օրհնեա՛ և սրբեա՛ և կատարեա՛. և հաղորդելոցն 'ի սմանէ շնորհեա՛ զխաղաղութի՟ զսէր և զմիաբանութի՟՝ որ ոչ երբէք անկանի:

Զի դու ես սրբութի՟ մեր և լուսաւորութի՟ ք՟ս ա՟ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք ը՟ անսկզբան քո հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ խաչակնքէ զնոսա՝ ասելով։

Ահաւասիկ սրբեցաւ և կատարեցաւ բաժակս փրկութեան և մաղզմանս նորոյ ուխտի, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Եւ լինի արձակումն.

Այլ կարգաւորութիւն օծութեան մաղզմանի և բաժակի նորոյ։

Քահանայն ասէ. Օրհնեալ Թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն.

Սարկաւագն. Խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք.

Դասն. Տէր ողորմեա.

Սարկաւագն.

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան եկեղեցեացն Աստուծոյ, և ամենեցուն միութեան, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն սրբոյ տանս այսորիկ, և որք հաւատով և յարգութեամբ, և երկիւղիւն Աստուծոյ մտանեն ընդ սա, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա.

Վասն արհիեպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութեան, պաշտօնէից Քրիստոսի, ամենայն ժառանգաւորաց, և ժողովրդեան, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն բարեպաշտ և աստուածապահ թագաւորաց, և ամենայն պալատականաց, և բանակաց նոցա, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն պատերազմակից լինելոյ Տեառն Աստուծոյ մերոյ, և զամենայն թշնամիս և զհակառակամարտս նոցա ընդ ոտիւք նոցա արկանելոյ, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն քաղաքիս այսորիկ, և ամենայն քաղաքաց և գիւղաքաղաքաց, և որք հաւատով բնակեն 'ի նոսա, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն բարեխառնութեան օդոց, և պտղաբերութեան երկրի, և խաղաղական ժամանակաց, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն նաւորդաց, ճանապարհորդաց, հիւանդաց, վշտացելոց, գերեաց, և փրկութեան նոցա, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն փրկելոյ զմեզ յամենայն նեղութենէ, 'ի բարկութենէ, 'ի վտանգից, և 'ի բռնութենէ, զՏէր աղաչեսցուք։

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ Աստուած քոյին շնորհիւն։

Զամենասուրբ անարատն զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր Աստուածածինն՝ զմիշտ կոյսն Մարիամ համդերձ ամենայն սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զամենայն կեանս մեր Քրիստոսի Աստուծոյ յանձն արասցուք։

Դասն. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Եւ Քահանայն ասէ 'ի ձայն։

Զի քեզ վայել է ամենայն փառք պատիւ և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դասն. Ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

Քահանայն։

Առաքեա Տէր Աստուած մեր 'ի վերայ մաղթանաց այսորիկ զօրհնութիւն քո՝ սրբարար զօրութեամբ Ամենասուրբ Հոգւոյն. զի 'ի վերայ սորա զենցուք զգառն, և մատուսցուք զմարմինն Քրիստոսի քո, որ եբարձ զմեղս աշխարհի. որպէս զի որք հաղորդին 'ի սմանէ հաւատով, անցցեն 'ի մահուանէ 'ի կեանս բարեհաճութեամբ քով։

Զի դու ես որ օրհնես և սրբես և կեցուցանես զմեզ, և քեզ վայել է փառք և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զտէր աղաչեսցուք :

Առաքեա՛ տէ՛ր ՚ի վերայ բաժակիս այսորիկ զբարե-րար շնորհս կենդանարար և ամենասուրբ հոգւոյն , զի ճաշակեսցուք ՚ի սմա զպատուական արիւն քո , որով ե-տուր զթողութիւն մեղաց հաւատացելոց , և դաւանողաց զքեզ զճշմարիտ Աստուած՝ եղեալ մարդ ճշմարիտ , և հեղեալ զպատուական արիւն քո վասն փրկութեան մարդկան :

Զի դու ես քաւիչ մեղաց և տուիչ շնորհաց , և քեզ վայելէ փառք ընդ հօր քում , և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ օծանէ սուրբ միւռոնաւն , ասելով . Յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ ապա ասէ . Ահա կատարեցաւ սուրբ մաղզմայս սբ բաժակաւս սբյ սեղանոյս , ներգործութ հօր , և բարեհաճութ միածնի որդւոյ նորա , և հովանաւորութ ամենասուրբ հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Կանոն օրհնելոյ զպղծեալ ջրհոր :

Պարտ է նախ հանել ՚ի ջրհորոյն զայն պատահումն , և հեղուլ արտաքս . ապա լուացեալ զաւազանայն [illegible] , և առեալ զբուրվառն խնկարկէ շուրջանակի զջրհորովն . ապա արկանէ ջուր սուրբ Աստուածայայտնութենէն խաչանիշ , երիցս . և դարձուցեալ զդէմս իւր յարեւելս , ասէ :

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք :

Եւ ևս աղաչեսցուք զբարերարն Աստուած և խնդրեսցուք ՚ի նմանէ , զի մաքրեսցէ զջրհորս և զջուրս զայս , և տացէ ՚ի պէտս ծառայից իւրոց , շնորհօք ողորմութ իւ-րոյ . ամենակալ տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի :

## Նաեւ այլ աղօթս.

Տէր Աստուած զօրութեանց, որ զամենայն արարածս զոր արարեր, հայեցեալ տեսեր և ահա բարի են յոյժ. Որ մաքրես անուամբ քո զամենայն պղծութիւն և անմաքրութիւն, և փոխակերպեալ սրբես զամենայն ինչ.

Ինքնին տէրդ օգնեա՝ և յաւաջիկայ ժամուս ՚ի վերակոչել մեր զերկրպագելի և զամենասուրբ անուն քո, ցոյց զզօրութիւն քո նշանաւ սուրբ խաչի քո ✠ և մաքրեա զջրհորս և զջուրս զայս յամենայն կարծեցեալ պղծութենէ ՚ի մերմէ հիւանդամտութենէս. և զօրացո զտկար միտս մեր առնուլ զսա առանց խղճի ՚ի վայելս մարմնական պիտոյից մերոց. և սրբեա յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ.

Զի դու ես սրբութիւն մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

## Զտէր աղաչեսցուք.

Տէր Աստուած մեծ և սքանչելի, որ անպատում բարութեամբ և առատ նախախնամութեամբ լնուս զպէտս կենաց մարդկան, պարգևելով զաշխարհական բարիսն քո.

Որ զդառն ջուրն Մեռայի առ Մովսէսիւ՝ ՚ի քաղցրութիւն փոխարկեցեր ժողովրդեան քում. և զվնասակար ջուրսն առ Եղիսէիւ՝ աղիւ բժշկեցեր.

Որ առաքելոյն քում Պետրոսի ՚ի ձեռն տեսլեան օրինադրեցեր՝ մի ինչ համարիլ պիղծ կամ անմաքուր.

Ինքնին տէր մարդասէր՝ սրբեա զջուրս զայս շնորհիւ Հոգւոյդ քո սրբոյ, և նշանաւ պատուական խաչի քո ✠. որպէս զի մի ևս համարեսցի անմաքուր, որ վարեն զսա ՚ի վայելս պիտոյից իւրեանց.

Զի դու ես Աստուած մեր՝ որ օրհնես և սրբես զամենայն ինչ, և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Հայր մեր.

Կանոն օրհնութեան պղծեալ ամանի՝ գինւոյ, մեղր, ձիթոյ, կամ այլոյ իրի։

Պարտ է զանկեալ զաղէր եւ անմաքուր իրն արտաքս ընկենուլ, եւ ապա ինչ ամանն արկանել զգինին կամ զձէթն, եւ զապականեալ ամանն լուանալ արտաքուստ եւ ՚ի ներքուստ։

Եւ քահանայն առեալ զխաչն՝ խնկարկէ արտաքուստ զլուացեալ ամանն. եւ արկանէ ՚ի նմա ջուր սուրբ ածայայտնութեան, առնելով երիցս զնշան խաչի. ապա արկեալ ՚ի նմա զգինին կամ զձէթն, եւ խնկարկելով ասէ։

Խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք։

Եւս եւս աղաչեսցուք զբարերարն Ած, զի մաքրեսցէ զգինիս կամ զձէթ զայս յամ աղտեղութէ, եւ տացէ ՚ի պէտս ծառայից իւրոց շնորհօք ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Ած մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Եւ ասէ զաղօթս։

Սուրբ ես Տէր Ած մեր, որ քոյով բարեգութ գալստեամբդ զամ անմաքրութի խափանեցեր, եւ պատուիրեցեր՝ թէ ոչ որ ՚ի ներքս մտանէ պղծէ զմարդն. զի ամենայն ինչ սուրբ է սրբոց։

Եւ ՚ի ձեռն անօթոյն ընտրութե առաքելոյն քո ուսուցեր մեզ, զամ ստեղծեալսն առ ՚ի քէն բարի համարել, եւ ոչ մի ինչ համարիլ խոտան. զի ամ ինչ սրբի բանիւն Այ եւ աղօթիւք։

Նոյնին Տէր բարերար՝ օրհնեա զգինիս զայս (կամ զձէթս) շնորհիւ սուրբ հոգւոյդ, եւ նշանաւ պատուական խաչի քո ✠, եւ հեղմամբ սբ ջրոյս. եւ զամ կարծեցեալ պղծութի ՚ի սողնոյն անկելոյ ՚ի սմա, ՚ի բաց մերժեա ՚ի մտածութէ ծառայից քոց. եւ շնորհեա անխիղճ միօք վայելել զսոյն։

Զի դու ես որ օրհնես եւ սրբես զամ, եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, եւ ամենասուրբ

և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

Ապա քահանայն նախ ճաշակէ 'ի նմանէ, և տայ նաև տէրանցն տանն․ իսկ եթէ անմաքուր իցէ նեխեալ և ապականեալ իցէ, զգինին կամ զձէթն պարտ է հեղուլ, և ոչ առնուլ զնոսա 'ի գործ։

Օրհնութիւն պղծեալ անօթոյ։

Պարտ է լուանալ զպղծեալ անօթն, և արկանել 'ի նմա զորբաջուրն խաչանել, և ասել զաղօթս զայս։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ա̅ծ մեր միայն սուրբ՝ սրբեա՛ զանօթս զայս սրբարար զօրութ̅ քով, և մաքրեա՛ լինել 'ի վայելս պիտոյից ծառայից քոց․ և տո՛ւր մեզ հանապազ սրբութ̅ աղօթել 'ի սուրբ եկեղեցիս։

Զի ամենեքին մեք պահպանեալք առ 'ի քէն՝ փառս և երկրպագութիւն վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս̅բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

Օրհնութ̅ պղծեալ ցորենոյ կամ ալեր կամ այլ այսպիսի նմանեաց։

Առնու քահանայն զորբաջուրն, և ցանէ իւրում զաղօթսն, որպէս 'ի վերայ պղծեալ ցորենոյն կամ ալեր։

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք զմարդասէրն ա̅ծ, զի սրբեսցէ զսերմանիս և զարդիւնս ծառայից իւրոց․ ամենակալ տէր ա̅ծ մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եւ ասէ զաղօթս։

Տէր ա՟ծ մեր՝ որ ՚ի տնօրէնութեան քում ըստ մարմնոյ՝ պատուիրեցեր թէ ոչ որ ՚ի ներքս մտանէ՝ պղծէ զմարդ․ զի ամ՟ ինչ սբ՟ է սբ՟ց։ Եւ ՚ի ձեռն անօթոյն ընտրութ՟ե պօղոսի առաքելոյն ուսուցեր մեզ, զամենայն առ ՚ի քէն ստեղծեալսն բարի համարել․ զի սրբի բանիւն ա՟յ եւ աղօթիւք։

Նոյնին եւ այժմ տէ՛ր ողորմեա՝ կարեկցելով տկարամտութ՟ե մերում, օրհնեա՛ զցորեանս քոյով շնորհիւ եւ մարդասիրութ՟բ, ՚ի ձեռն քահանայական օրհնութեանս, եւ սրսկման ջրոյս այսորիկ սրբեցելոյ յանուն քո․ եւ զա՟մ երկբայութ՟ի եւ զկարծեցեալ պղծութ՟ի ՚ի բաց մերժեա՛ ՚ի մտածութ՟է ծառայից քոց․ եւ տո՛ւր նոցա ճաշակել ՚ի սմանէ առանց կասկածանաց եւ առանց խղճի, վստահացեալ ՚ի սրբարար զօրութ՟ի քո, գոհանալով զանուանէ քումմէ սրբոյ։

Զի դու ես որ օրհնես եւ սրբես զա՟մ․ եւ քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր, եւ ամենասուրբ եւ բարի եւ կենդանարար քո հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

### Օրհնութիւն հիմնարկութեան տան։

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք զբարերարն ա՟ծ, զի յաջողեսցէ զկատարումն յարկիս այսորիկ առատ ողորմութ՟բ իւրով․ ամենակալ տէր ա՟ծ մեր կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եւ ասէ զաղօթս։

Ա՟ծ ամենակալ, ստեղծօղ եւ արարչագործ ա՟մց, որ արարեր զերկինս հանճարով, եւ հիմնեցեր զերկիր ՚ի վերայ հաստատութ՟ե իւրոյ․ հայեա՛ց ՚ի ծառայս քո

(այս անուն) , որ կամեցար կարողութեամբ զօրութեան քո կառուցանել տուն 'ի բնակութիւն , և հաճեա՛ց բարերար՝ Աստուած յաջողութեամբ ածել զսա 'ի կատարումն :

Պահեա՛ զսա՛ հաստատուն և բարելից ազգէ յազգ , անվնասելի 'ի դժնդակ արկածից օդոյ , ջրոյ , հրոյ , և յայլ ամենայն վտանգից և 'ի պատահարաց ։ և որք հանդերձեալ են բնակել 'ի սմա , պահեա՛ զնոսա յամենայն վնասուց և 'ի նենգութենէ հակառակորդին :

Զի քո՛ է կարողութիւն , և քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Հայր մեր :

Օրհնութիւն մտանելոյ 'ի նոր տուն :

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք ։

Եւ ևս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած , զի շնորհեսցէ խաղաղութիւն և ամենայն մտադիւր զուարթութիւն բնակել 'ի սմա ։ ամենակալ տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի :

Առ տէր զաղօթս :

Տէ՛ր Աստուած մեր՝ որ մտեր ընդ յարկաւն Զակքէոսի , և եղև փրկութիւն նմա և ամենայն տան նորա : Ինքնին և այժմ զայնոսիկ՝ որք խորհին բնակել 'ի տանս յայսմիկ , և 'ի ձեռն մեր անարժանութեան մատուցանեն առ քեզ զաղաչանս և զպաղատանս , պահպանեա՛ յամենայն վնասուց :

Օրհնեա՛ ✠ բարերար և զտունս զայս 'ի բնակութիւն նոցա աննենգելի պահելով զկեանս նոցա :

Զի քեզ վայելէ ամենայն փառք պատիւ և երկրպագութիւն ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Հայր մեր :

Աղօթք 'ի վերայ տան որ բռնաբարեալ է յայսոց չարաց:

## Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք:

Եւ ևս աղաչեսցուք զմարդասէրն ած, հրեշտակական պահպանութե յանձն առնել զյարկս զայս, հալածելով 'ի սմանէ զամ ներգործութիս սատանայի. ամենակալ տէր ած մեր կեցուսցէ և ողորմեսցի:

## Եւ տէր ողորմեա:

Տէր ած փրկութե մերոյ՝ որդի այ կենդանւոյ, որ նստիս 'ի քերոբէս 'ի վերայ քան զամ պետութիւնս և իշխանութիս և զօրութիս և տէրութիս:

Դու ես մեծ և ահաւոր 'ի վերայ ամենեցուն, և ո՛վ կարէ կալ առաջի քում ահեղ զօրութե:

Դու ձգեցեր զերկինս որպէս զկամար, ասես արեգական, և ոչ ծագէ. և ընդդէմ աստեղաց կնքես, և ծածկես զնոսա ամպովք:

Որ արարեր զերկիր զօրութե քով, և զտիեզերս իմաստութե: Որ շարժես երկիր 'ի հիմանց, և սասանեցուցանես զսիւնս նորա: Սրտմտութի քո հալէ զլերինս, և սպառնալեք քո մաշեն զվէմս: Սաստես ծովու, և ցամաքեցուցանես զանդունդս նորա:

Դու՛ թագաւոր ամենազօր՝ զդրունս պղնձիս փշրեցեր. զնիգս երկաթիս խորտակեցեր. զհզօրն կապեցեր, և զկարասիս նորա աւար հարեր. զբռնաւորն կենաղէն խաչիւդ քով ըմբռնեցեր, և զզօրութի նորա կոխեցեր. զվիշապն մահաբեր՝ կարթիւ մարդեղութե քո որսացար, և զնա կապանօք խաւարի 'ի տարտարոսն արկեալ արգելեր:

Ինքնին տէ՛ր՝ ապաստան անսասան յուսացելոց 'ի քեզ և ամուր պարիսպ՝ 'ի բաց հեռացո, մերժեա՛, փախեա՛ զամ ներգործութի բանսարկուին, զամ յարձակումն սատանայական ընդդիմակաց և բռուն զօրութե 'ի յարկես յայսմանէ, և յամ բնակչաց սորա՝ որք կրեն զնշան ահաւոր խաչի քո զյաղթականն դիւաց, և վերակոչեն զանունդ քո բարի:

Դու տէր՝ որ զլեգէոնն դիւաց 'ի բաց հալածեցեր. և խուլ և համր դիւին և անմաքուր այսոյն հրամայեցեր ելանել 'ի մարդոյն և ոչ ևս մտանել.

Որ զա՟մ զօրութի՟ աներևոյթ թշնամեաց մերոց ընդ ոտիւք 'ի քեզ հաւատացելոց արկեր՝ ասելով. ահա՛ տամ ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զա՟մ զօրութիւնս թշնամւոյն.

Ինքնին տէր օգնա՝ յա՟մ վնասուէ և 'ի բռնութէ՟ պահ-պանեա՛ զամենեսին որք են 'ի տանս յայսմիկ, փրկելով յերկիւղէ գիշերի՝ և 'ի նետէ որ թռչի 'ի տուէ, յիրէ որ շրջի 'ի խաւարի՝ և 'ի դիւէ միջօրէի.

Զի ծառայք քո և աղախնայք և տղայ մանկունք վայելեալք յօգնականութե՟ քո, և հրեշտակական զօրօք պահպանեալք, հաւատով և միաբանութե՟ սաղմոսեսցեն. տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. և դարձեալ՝ ոչ երկեայց 'ի չարէ, զի դու տէր ընդ իս ես.

Զի դու ես հաստատութի՟ իմ ա՟ծ հզօր՝ իշխան խաղաղութե՟՝ հայր հանդերձելոյ յաւիտենին. և քո միայնոյ է թագաւորութի՟ և զօրութի՟ և փառք ք՟ս ա՟ծ մեր, ընդ անսկզբան քո հօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Հայր մեր.

Աղօթք օրհնելոյ զսերմանիս.

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք.

Եւ ևս աղաչեսցուք զմարդասէրն ա՟ծ, զի օրհնեսցէ զսերմանիս և զարդիւնս ծառայից իւրոց. ամենակալ տէր ա՟ծ մեր կեցուսցէ և ողորմեսցի.

Քհ. ասէ զաղօթսն.

Տէր ա՟ծ մեր՝ որ յառատաձիր և յամենահարուստ աջոյ քումմէ ընկալաք զառաջինկայ սերմանիս, ոչ հա-մարձակիմք արկանել յանշունչ ծոցս երկրի, բայց եթէ

ապաւինել 'ի կենդանի և 'ի կենդանարար հրաման մեծութե քո, որ հրամայեցեր երկրի բուսուցանել զխոտ դալարի, և տալ սերմն սերմանողի և հաց 'ի կերակուր մարդկան:

Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր զօրութեց, հայեաց 'ի սերմանիս մեր, որ կարօղ ես առանց սերման շնորհել զարդիւնս, և առանց կերակրոյ ընուլ զքաղցեալս:

Բաց մեզ զմեծ և զբարի և զերկնաւոր գանձս ողորմութե քո, և հեղ զօրհնութի քո առատապէս:

Տուր զողորմութի քո, և աճեցո զարդիւնս ծառայից քոց 'ի պէտս կարեաց կենցաղոյս մինչև բաւական լինել մեզ. զի աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու:

Վանեա 'ի մէնջ զամ ապականիչս արմտեաց երկրի մերում, և զամ ցասումն և զպատուհաս որ գայ 'ի վս մեր վս մեղաց մերոց, և զբազում գթութի քո առաքեա 'ի վերայ ամ ժողովրդեան քո, և արժանի արա զմեզ խաղաղութբ վայելել զպարգևս առատ ողորմութե քո:

Շնորհօք և մարդասիրութբ միածնի որդւոյ քո, ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ՝ հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Հայր մեր:

Օրհնութիւն կալոյ:

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք:

Եւ ևս աղաչեսցուք զբարերարն ած, զի աճեցուսցէ զարդիւնս ծառայից իւրոց. տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի:

Եւ ասէ զաղօթս:

Տէր ած մեր աղբիւր բարեաց, որ շարժեալ 'ի քումմէ բարեգթութենէ հրամայեցեր երկրի բերել զպտուղ 'ի պէտս կարեաց մարդկան:

Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն թագաւոր հզօր ած ած

մեր, որ խնամովք քո լնուս զդաշտս, և պարարտութբ զլերինս, օրհնեա՛ ✠ և բազմացո՛ զկալս զայս և զպտղաբերութի ծառայից քոց։ Լից զշտեմարանս սոցա ած բարի պտղով ցորենոյ, գինւոյ, և ձիթոյ։

Պահեա՛ զամենեսին զսոսա յամ փորձուէ, և լուսաւորեա՛ զսոսա ճանաչել և առնել զհաճոյս քո, և արժանի լինել յաւիտենական բարեացն քոց։

Եւ գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զսբ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

Աղօթք օրհնութեան աղի։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ած ամենակալ՝ որ յԵրիքով առ Եղիսէիւ մարգարէիւ զժանտակար ջուրսն աղիւ բժշկեցեր, ինքնին օրհնեա՛ ✠ զաղս զայս, և փոխարկեա՛ զսա ՚ի զոհ ցնծութե։

Քանզի դու ես ած մեր, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

Աղօթք ՚ի վերայ նուիրողաց զերախայրի պտղոյ։

Զտէր աղաչեսցուք։

Տէ՛ր ած մեր՝ որ լցեր և զարդարեցեր զամ տիեզերս պտղալից վայելչութբ․ և զքոյս քեզ մատուցանել հրամայեցեր։

Եւ արդ՝ բազմագո՛ւթ տէր՝ որ զնուէր այրւոյն բարեհաճութբ ընկալար, ընկա՛լ և այժմ զմատուցեալ ընծայս ծառայի քո (այս անուն) ՚ի յաւիտենական գանձս քո, շնորհեա՛ սմա զհոգևոր և զմարմնաւոր բարիս առատ մարդասիրութեամբ քով։

Զի օրհնեալ է անուն քո, և փառաւորեալ թագա

ւորութի քո՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Հայր մեր.

Աղօթք ՚ի վերայ կուլեփայից.

Զտէր աղաչեսցուք.

Քս փրկիչ մեր, որ զամ ինչ արարեր և կատարեցեր. և հրամայեցեր երկրի բուսուցանել զբազմազան պտուղս ՚ի զուարճութի մեր և ՚ի սնունդ. Եւ ընդեղէն սերմանցն կերակրովք զերիս մանկունսն և զդանիէլ ՚ի բաբիլոն քան զփափկասունսն զուարթագոյնս արարեր. Ինքնին ամենաբարի թագաւոր՝ զսերմունս զայսոսիկ հանդերձ զանազան պտղովքն օրհնեա ✠, և զհաղորդեալսն ՚ի նոցանէ սրբեա. զի ՚ի փառս քո և ՚ի պատիւ սրբոյն (այս անուն) մատուցին զսոսա ծառայքն քո, ՚ի յիշատակ հոգւոց բարեպաշտ հաւատով վախճանելոց. Շնորհեա բարերար և պատրաստողացն զայսոսիկ՝ և կատարողացն զյիշատակ սրբոյս՝ զամ խնդրուածս ՚ի փրկութի, և արժանաւորեա յաւիտենական բարեացն քոց, բարեխօսութբ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ ածածնին, և միշտ կուսին մարիամու, և յիշատակաւ և աղօթիւք սրբյս (այս անուն), և աղաչանօք ամ սրբց քոց.

Զի դու ես որ օրհնես և սրբես զամ քս ած մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Հայր մեր.

Աղօթք ՚ի անկումն այգւոյ.

Զտէր աղաչեսցուք.

Տէր յն քս, դու որպէս որթ ճշմարիտ՝ և հայր քո մշակ, և զառաքեալսն քո կոչեցեր ուռս. դու և վասն իսրայելի հաներ զհեթանոսս, և զնա անկեցեր.

Այժմ տեսքօղա՝ եկաւորեա՛ց յայդխ յայս ողոր֊մութեամբ քով , և տո՛ւր սմա պահապան զօգնութիւն քո . շուրջանակի պատսպարեա՛ զմուտս և զելս սորա նախախնամութեամբ քով ։

Զերծո՛ զսա յամենայն կարկտէ , 'ի բքոյ , 'ի սաստիկ սառանէ , 'ի սարսռելի ցրտոյ , 'ի հողմոյ խորշակէ , 'ի մրրկէ , և 'ի դիւական սաստից , և յամենայն արկածից երևելի և աներևոյթ թշնամեաց ։

Թագաւո՛ր զօրութեանց՝ հայեա՛ց և ա՛յց արա այգւոյս այսմիկ , զոր անկեցաք ապաւինեալ 'ի խնամս բարերարութեան քո , զի տացէ զպտուղ 'ի ժամանակի իւրում ։

Եւ զմեզ զամենեսին արժանի արա՛ կթել 'ի սմանէ և մատուցանել քեզ 'ի նուէր , և ուրախութեամբ վայելել զպտուղս առատ ողորմութեան քո . և գոհանալով փառաւորել զքեզ ընդ անսկզբան քում հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Հայր մեր ։

---

Աղօթք 'ի վերայ այգեկթոյ ։

Զտէր աղաչեսցուք ։

Աստուած մեր , որ զպտուղ ճշմարիտ որթոյ միածնի որդւոյ քո տեառն մերոյ յիսուսի քրիստոսի՝ ցուցեր անմահութեան պարգևատու 'ի ձեռն շնորհաց հոգւոյդ քո սրբոյ ։

Ինքնին և այժմ տէ՛ր բարերար՝ օրհնեա՛ ✠ և զայն պտուղ այգւոյս , և տո՛ւր ամենեցուն որ հաղորդին 'ի սմանէ զսրբութիւն և զյառաջադիմութիւն հոգւոյ ։

Եւ զկոչնատէրս ( այս անուն ) որ կոչեաց զմեզ 'ի մի, ճշմարիտ այգւոյ քում կցո՛րդ արա հանապազ , և անվնաս զկեանս նորա պահեա՛ , և յաւիտենական և անփոխադրելի պարգևօք քո զարդարեա՛ ։

Շնորհօք և մարդասիրութեամբ միածնի որդւոյ քո , ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ՝ հանդերձ ամե

նասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

---

Աղօթք 'ի վերայ օրհնութեան գինւոյ։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ա՟ծ մեր՝ բարերար և մարդասէր, հայեցեա՛ 'ի վ՟ր գինւոյս այսորիկ, և 'ի վ՟ր ճաշակողացն 'ի սմանէ. և օրհնեա՛ ✠ զսա որպէս օրհնեցեր զջրհորն յակոբայ, և զաւազանն սելովմայ. որ եկեալ 'ի կանա գալիլեացւոց օրհնեցեր զվեց թակոյկսն, և զջուրսն 'ի գինի փոխեցեր, և զփառս քո ցուցեր ս՟բց քոց աշակերտացն և առաքելոց։

Ինքնին և այժմ առաքեա՛ տ՟ր զշնորհս հոգւոյդ քո ս՟բյ 'ի գինիս յայս, և օրհնեա՛ ✠ զսա անուամբ քով սրբով։

Զի դու ես որ օրհնես և սրբես զա՟մ ք՛ս ա՟ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյդ ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

---

Աղօթք 'ի հաղորդութիւն խաղողոյ 'ի վեցն օգոստոսի։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ամենակալ՝ օրհնեա՛ զնոր պտուղս զայս որթոյ, որ 'ի ձեռն բարեխառնութե՟ օդոյ, և շահեկան անձրևոյ, և ժամանակաց անդորրութե՟ հաճեցար հասուցանել։

Եւ տուր լինել հաղորդելոցն 'ի սմանէ յուրախութի՟, և պարգև մատուցողացն՝ 'ի քաւութի՟ մեղաց, 'ի ձեռն սուրբ և սրբարար մարմնոյ ք՟ի քո։

Ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

# ԿԱՆՈՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

## Անդաստանի, կամ Այգւոյ, կամ Պարտիզի, յորժամ մտանեն 'ի դեռնոց, կամ յայլ պատահարաց:

Պարտ է լինել պատարագ, և լուցանել զկանթեղ սրբոյն Տրիփոնի, կամ սրբոյն Եւստաթէոսի, կամ սրբոյն Յուլիանոսի Լեւլիոսի, և կամ [illegible]:

Եւ զկնի աւարտին պատարագին, առեալ զձէթ 'ի կանթեղոյն, և զջուր սրբոյ Աստուածայայտնութեանն, երթան առ որ երթալոց էին:

Եւ քահանայն զօրհնեալ ջուրն սրսկելով խաչանիշ 'ի վերայ անդաստանին կամ այգւոյն կամ պարտիզին, ասէ զաղօթս զայս:

### Զտէր աղաչեսցուք:

Տէր Աստուած մեր՝ որ 'ի սկզբան արարչագործութեան քո արարեր զերկինս և զերկիր. և զերկինս զարդարեցեր մեծամեծ լուսաւորօքն լուսատու լինել երկրի. որովք զքանչելի լինիցիս դու միայն արարիչ և տէր ստեղծուածոց:

Իսկ զերկիր զարդարեցեր դալարով և խոտով և պէս պէս սերմամբ սերմանելեաց ըստ ազգի, և ամենայն ծաղկօք վայելչացուցեր 'ի բուրումն անուշահոտութեան, և օրհնեցեր զնա:

Ինքնին և այժմ տէր բարերար՝ հայեաց 'ի սուրբ բնակութենէ քումմէ 'ի ստացուածս յայս, և օրհնեա ✠ զսա:

Պահեա յամենայն կախարդութենէ, և 'ի դիւթութենէ, և յամենայն չարէ, և 'ի չարակնութենէ, և 'ի խորամանկութենէ վնասարարաց. և տուր սմա բերել պտուղս ըստ ժամանակի իւրում լցեալս օրհնութեամբ քով. և զամենայն գազան և սողուն և զամենայն ցասումն և զհակառակ պատահար 'ի բաց հալածեա 'ի սմանէ:

Զի օրհնեալ և փառաւորեալ է ամենապատիւ և մեծավայելուչ անուն քո՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք սրբոյ վկային տրիփոնի, զոր սովորու՟թ է ասել 'ի պարտէզս և յայգիս և յանդաստանս:

Ես Նուաստս տրիփոն մինչդեռ յերկիրն լամփսակին արածէի զսագս, յանկարծակի եկն ցասումն յա՟յ ամենակալէ 'ի վ՟ր ա՟մ գաւառին առ ա՟մ այգի և անդ և պարտէզ, և իսկոյն տերևքն և պտուղք ծանրացեալք թարշամեցան և խամրեցան.

Որդ՝ տեսանելով ես տրուպս այսպէս եղծեալ ըղ պտուղս երկրի, և անդաստանաց, այգեաց, պարտիզաց, բանջարոց, և ամենակերպ ծառոց, և վ՟ն այսր պատճառի վնասեալ զմարդիկ, մորմոքեալ յոյժ կացի յաղօթս առ տէր ա՟ծն իմ, զի բարձցէ ա՟մ ապականիչ և վնասակար կենդանիք և ուտիճք, որք գոյանան ապականել զպարտէզս, զանդաստանս, զայգիս, և զա՟մ ծառս և զբանջարս, և մանաւանդ բնակչաց գիւղաքաղաքին այնմիկ որ կայ առ լճին, որք եկին 'ի կոչել զիս:

Նա որդ՝ խոնարհեցուցեալ զծունր, և տարածեալ զձեռս կացի յաղօթս և ասեմ. Ո՟Տ՝ լսող աղօթից յուսացելոց 'ի քեզ, ինքնին առաքեա՛ 'ի պատրաստ բնակութ՟ քումմէ զհրեշտակ՝ առ 'ի հարկանել և վանել զա՟մ ցեղ թունաւոր ապականիչս այգւոյ և անդոյ և պարտիզի ծառայիս քո (այս անուն). և թունաւոր ուտիճքս են. Կիրթուր, որդն, որդնաթրթուր, բզեզ, դալուկն, ջորեակ, երևիլ, գուեղ, երկայնոտն, մրջիւն, օձիլ, մնինոյ, բոռ, բոտոտ, ժանկ, խխունջ, կոր, և եթէ իցէ այլ ինչ, որ յարի և թարշամեցուցանէ ըղ պտուղ որթոյ և այլոց տեսակաց և բանջարոց.

Եւ ոչ բաւական համարեցայ զհարկանելն հրեշտակին, այլև ես ինքն կապեցի զնոսա երդմամբ, զի մի՛ ևս յաւելուցուն ելանել և մնալ 'ի տեղիսն յայնոսիկ որք կոչեցին զիս, այլ հրամայեցի երթալ յանկոխ և յանապատ տեղիս. Իսկ երդումն զոր ետու նց, էր այսպէս.

Երդմնեցուցանեմ զձեզ 'ի բազմաչեայ ո՟բ քրովբէսն, և 'ի վեցթևեան սերովբէսն, որք թռչին շուրջ զաթոռովն

ա՟յ և աղաղակեն․ ս՟բ ս՟բ ս՟բ, տէր սաբաւովթ 'ի փառս ա՟յ հօր, ամէն։

Երդմնեցուցանեմ զձեզ 'ի ս՟բ հրեշտակն և յա՟մ զօրու՟ն՝ 'ի բիւրս բիւրոց և 'ի հազարս հազարաց, որք կան երկիւղիւ բազմաւ առաջի փառաց տեառն, մի՛ անխրատիք յայգին և մի՛ յանդն, և մի՛ 'ի պարտէզն ծառոց և բանջարոց ծառայիս ա՟յ (այս անուն)․ այլ մեկ նեցարուք յամայի լերինս յանպտուղ փայտս, յորս շնորհեաց ձեզ ա՟ծ կերակուր օր ըստ օրէ։

Երդմնեցուցանեմ զձեզ 'ի պատուական մարմին և արիւնն ք՟ի ճշմարտին ա՟յ և փրկչին մերոյ, որով տուաւ մեզ փրկու՟թ և ազատու՟թ․ և 'ի վերայ անուանս այսորիկ հանդերձեալ եմք մեռանիլ․ մի՛ անխրատիք մի՛ յանդն և մի՛ յայգին, և մի՛ յա՟մ ծառ պտղաբեր կամ յանպտուղ, և կամ 'ի բանջարս, որք են 'ի սահմանս և 'ի տեղիս ծառայիս ա՟յ (այս անուն)։

Իսկ եթէ ստունգանիցէք ինձ, և անցանիցէք ընդ երդումն զոր երդմնեցուցի զձեզ, ոչ ընդդիմանայք ա- նուաստ և տրուպս տրիփոն ; այլ առ ա՟ծն աբրահամու իսահակայ և յակոբայ, որ գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս․ վ՟ն որոյ որպէս նախ պատուիրեցի ձեզ, գնացէ՛ք յամայի լերինս յանպտուղ փայտս։

Ապա եթէ ոչ լուիցէք ինձ, պաղատեցայց առ մարդասէրն ա՟ծ, զի առաքեսցէ զհրեշտակն՝ զոր կարգեալ է 'ի վերայ վնասակար կերչաց, և երկաթով և կապարակապեսցէ զձեզ և սատակեսցէ․ փոխանակ զի զերդմունս և զաղօթս նուաստ տրիփոնիս ապախտ արարէք․ այլ և ճնճղուկքն առաքեալք 'ի ձեռն աղօթից իմոց կլանիցեն զձեզ։

Եւ ես երդմնեցուցանեմ զձեզ 'ի մեծ և յահաւոր անունն՝ որ 'ի վերայ վիմին գրեալ․ որ ոչ հանդուրժելով խորտակեցաւ, և որպէս մոմ 'ի հրոյ հալեալ սպառեցաւ․ ելէ՛ք աստի 'ի տեղիս անկոխս անջրդիս և անպտուղս, զորս նախ ասացի ձեզ։ Ելէ՛ք 'ի տեղւոյ և 'ի սահմանէ ծառայիցս ա՟յ, որք զիս կոչեցին յօգ-

նութիւն և 'ի նպաստ և յաղատութիւն իւրեանց ։
Զի և 'ի սմին փառաւորեսցի ամենասուրբ անուն հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բյ, և աղօթք և խնդրուածք նուաստ ծառայիս լցցին ողորմութ̃բ և գթութ̃բն ա̃յ · որում վայելէ փառք և կարողութի̃ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Քահանայն · Խաղաղութիւն ամենեցուն ։

Սարկաւագն · Զգլուխս ձեր տ̃ն խոնարհեցուցէք ։

Քահանայն ։

Տեարօղա տ̃ր ա̃ծ մեր, որ 'ի ներմարդկային տնօրէնութ̃ե քում օրհնեցեր զբեթղեհեմ և զգեթսեմանի, զտունն յակոբայ և զտունն դաւթի · Ինքնին օրհնեա́ ✠ և զստացուածս զայս, և տուր սմա զառատ պտղաբերութի̃, բարեխօսութ̃բ անարատ տիրուհւոյն մերոյ ա̃ծածնի և միշտ կուսին մարիամու, զօրութ̃բ պատուական և կենարար խաչին, մաքուր մաղթանօք պատուական փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, փառաւոր և ամենահռչակ առաքելոց, սրբոց բարեյաղթ վկայից, և սրբոց փառաւոր և մեծ վկայիցն տրիփոնի, եւստաթէոսի և յուլիանոսի, բարեխօսութ̃բ և յիշատակաւ ս̃բյս (այս անուն), և աղաչանօք ա̃մ ս̃բց ։
Զի դու ես որ օրհնես և սրբես զմեզ ք̃ս ա̃ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր, և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Հայր մեր ։

Աղօթք օրհնութեան հօտի ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա̃ծ մեր՝ որ ունիս իշխանութի̃ 'ի վերայ ա̃մ ստեղծուածոց, աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, որպէս

լա

օրհնեցեր և բազմացուցեր զհօտն Նահապետին յակո_ բայ , օրհնեա՛ ✠ և զհօտ անասնոցս ծառայի քո ( այս անուն ) , և աճեցո՛ և բազմացո՛ , և արա՛ զսա 'ի հազարս :

Այլ փրկեա՛ 'ի բռնութենէ բանսարկուին և այլազգեաց , և 'ի նենգութենէ ամենայն թշնամեաց , 'ի մահաբեր հողմոց , և 'ի ժանտ ցաւոց . և պարսպեալ պահեա՛ զսա 'ի ձեռն սրբոց հրեշտակաց քոց անվնասելի յամենայն արկածից չարեաց .

Զամենայն հիւանդութիւն , զամենայն նախանձ և զփորձութիւն կա_ խարդանաց և դիւթութեան 'ի ներգործութենէ բանսարկուին 'ի վերայ եկելոց , 'ի բաց հալածեա՛ 'ի սմանէ .

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք` Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Հայր մեր :

---

Օրհնութիւն մսեղէն կերակրոյն որ նախ դնի 'ի սեղան 'ի սուրբ և 'ի մեծ կիւրակէի զատկին :

Քահանայն ասէ . Օրհնեալ է տէր Աստուած մեր յամենայն ժամ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց , մահուամբ զմահ կոխեաց , և յարութեամբն իւրով մեզ կեանս պարգեւեաց : Երիցս անգամ :

Զտէր աղաչեսցուք :

Տէր Յիսուս Քրիստոս` օրհնեա՛ ✠ զմսեղէն կերակուրս և սրբեա՛ զսա , որպէս սրբեցեր զխոյն զոր մատոյց քեզ հաւա_ տացեալն աբրահամ , և որպէս զգառն` զոր աբէլ քեզ նուիրեաց յողջակէզ . և որպէս զեզն պարարակ` զոր զենուլ հրամայեցեր վասն որդւոյ քո մոլորելոյ , և վերստին առ քեզ դարձելոյ . զի որպէս նա արժանացաւ զուարճանալ շնորհիւն քո , նոյնպէս և մեք ամենեքին զուարճասցուք կերակրովս` որ առ 'ի քէն օրհնեալ և սրբեալ :

Քանզի դու ես ճշմարիտ կերակուր և պարգեւիչ բա_ րութեան , և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Օրհնութիւն պանրոյ և ձուոյ զատկին ։

## Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա՟ծ մեր՝ արարիչ և նախախնամօղ ամենեցուն, օրհնեա ✠ զպանիրս և զձուքս, և զմեզ պահեա՛ ՚ի խնամս քաղցրութեան քո ։ որպէս զի որք հաղորդիմք ՚ի սոցանէ՝ լցցուք յաննախանձ պարգևաց քոց, և յանձառելի բարութենէ քումմէ ։

Զի քո է կարողութիւն, և քո է արքայութիւն և զօրութիւն և փառք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աղօթք նորաշէն նաւու ։

## Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա՟ծ հարցն մերոց, որ պատուիրեցեր Նոյի ծառայի քում կազմել զխորհրդական տապան ՚ի փրկութիւն աշխարհի ։ և ամենակարօղ զօրութեամբ քով փրկեցեր զազգ մարդկան ՚ի ձեռն լաստափայտին ։

Նոյնին և այժմ տէրըօղա՝ պահեա՛ զնաւս զայս յամ արկածից չարեաց և՚ի փորձութեանց, և յանձն արա՛ զսա վերակացութեան հրեշտակի բարւոյ, և զորս հանդերձեալ են նաւել սովին՝ պահպանեա՛ ՚ի խաղաղութեան, և շնորհեա՛ նոցա յաջողութեամբ ժամանել յիւրաքանչիւր տեղիս, բարեխօսութեամբ անարատ տիրուհւոյն մերոյ ա՟ծածնին և միշտ կուսին մարիամու, զօրութեամբ պատուական և կենարար խաչին, մաքուր մաղթանօք երկնային իմանալի զօրութեանցն անմարմնոց, ս՟բյ փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, ս՟բց փառաւոր և ամենահռչակ առաքելոց, բարեխօսութեամբ և յիշատակաւ սրբոյս (որոյ անուն), և աղաչանօք ա՟մ սրբոց քոց ։

Զի դու ես որ խնամես և պահես զա՟մ ք՟ս՛ ա՟ծ մեր, և քեզ փառս և գոհութիւն և երկրպագութիւն վերառաքեմք ընդ անսկզբան քում Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Հայր մեր ։

Աղօթք օրհնութեան ուռկանի ։

Տէր ա͞ծ մեր, որ զհինգ հացսն և զերկուս ձկունս օրհնեցեր, և զհինգ հազարս յագեցուցեր, և բազմութ͞ն նշխարաց ժողովել պատուիրեցեր ։

Ինքնին տե՛սքօղա ամենազօր՝ և զառաջիկայ ուռկանս օրհնեա ✠, զի լիցի հանապազ պատուական և մեծամեծ ձկամբք ըստ օրինակի ուռկանին՝ զոր հրամանաւ քով արկին սուրբ առաքեալքն յաջակողմն նաւին յետ յարութ͞ե քո ՚ի մեռելոց, բարեխօսութեամբ ամենօրհնեալ փառաւոր տիրուհւոյն մերոյ ա͞ծածնին և միշտ կուսին Մարիամու, ս͞բ և փառաւոր և ամենահռչակ առաքելոյն, և գլխաւորին առաքելոց Պետրոսի. և խաղաղութեամբ և առողջութեամբ հոգւոյ և մարմնոյ պահեա զսոյնոսիկ, որք հաղորդին ՚ի ձկանցս յայսցանէ ։

Զի դու ես տուիչ ա͞մ բարեաց, և քեզ փառս վերառաքեմք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Հայր մեր ։

Աղօթք փորելոյ ջրհոր ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր ա͞ծ մեր՝ ամենակալ և ամենազօր, որ առնես զա͞մ միայն կամելովդ. և անսահման իմաստութեամբդ և անպատումդ գթութեամբդ միշտ զօգտակարն և զպիտանիսն տնօրինես ծառայից քոց. որ յանջրոյ վիմէ բղխեցուցեր վտակս ջուրց, և զծարաւի ժողովուրդն քո զովացուցեր ։

Ինքնին և այժմ տէ՛ր ամենեցուն՝ լո՛ւր աղաչանաց անարժան ծառայիցս քոց, և շնորհեա մեզ ջուր բարեհամ և յորդառատ ՚ի տեղւոջս յայսմիկ՝ ՚ի պէտս և ՚ի վայելումն ծառայից քոց ։

Որպէս զի և ՚ի սմին փառաւորեսցուք զամենասուրբ անունն քո՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Հայր մեր ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Աղաչանաց և հսկման վասն Երաշտութե՛, Գետնաշարժի, Ջերմախտի, Սովու, Որոտման և Կայծական, Ալեկոծութե՛, և Զանազան հայցուածոց։

Քահանայն ասէ․ Օրհնեալ է տր̃ ած̃ մեր յա̃մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա Երեքսրբեան․ Ամենասուրբ երրորդութի̃․ Հայր մեր, զի քո է արքայութի̃․ Տէր ողորմեա՛, ժ̃բ․

Եկայք երկիր պագցուք, գ̃․ և սաղմոս այս։

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութ̃բ քով, և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ա̃մ կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո․ յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ՚ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ Ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ.

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի.

Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Ա̄ծ իմ.

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ.

## Սարկաւագն. Խաղաղութ̄բ զՏէր աղաչեսցուք.

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն խաղաղութեան ա̄մ աշխարհի, և հաստատութեան ս̄րց եկեղեցեացն ա̄յ, և ամենեցուն միութեան, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն սրբոյ տանս այսորիկ, և որք հաւատով և յարգութ̄բ, և երկիւղիւն ա̄յ մտանեն ընդ սա, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն արհիեպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութեան, պաշտօնէից ք̄ի, ա̄մ ժառանգաւորաց, և ժողովրդեան, զՏ̄ր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վասն քաղաքիս այսորիկ, և ա̄մ քաղաքաց և գիւղաքաղաքաց, և որք հաւատով բնակեն 'ի նոսա, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վն̄ բարեխառնութեան օդոց, և պտղաբերութեան երկրի, և խաղաղաւէտ ժամանակաց, զՏ̄ր աղաչեսցուք. Տ̄ր ողոր״.

Վն̄ նաւորդաց, ճանապարհորդաց, հիւանդաց, վշտացելոց, գերեաց և փրկութ̄ նոցա, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա.

Վն̄ փրկելոյ զմեզ յա̄մ նեղութ̄է, 'ի բարկութ̄է, 'ի վտանգէ, և 'ի բռնութենէ, զՏէր աղաչեսցուք.

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ Ա̄ծ քոյին շնորհիւն.

Զամենասուրբ անարատ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր Ա̄ծածին՝ զմիշտ կոյսն Մարիամ

հանդերձ ամ̃ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զամ̃ կեանս մեր քն̃ի ա̃յ յանձն արասցուք։

Դպ̃ն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Քահանայն 'ի ձայն.

Զի քեզ վայելէ ամ̃ փառք պատիւ և երկրպագութի̃ Հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բյ, այժմ և միշտ և յաւի– տեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա երգէ. Քհ̃.

Ա̃ծ մեր և տէր մեր երևեցաւ մեզ. օրհնեալ ե– կեալ անուամբ տեառն։

Եւ ժամամուտս ասասցէ. Քհ̃.

Ողորմեա մեզ տէ՛ր՝ ողորմեա մեզ։

Զի մեք մեղաւորքս յամե անպատասխանի գտեալ՝ զաղաչանս զայս քեզ մատուցանեմք ո՛վ տ̃ն, ողորմեա մեզ։ փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Տէ՛ր ողորմեա մեզ, զի 'ի քեզ ապաւինեցաք, մի՛ խստաս բարկանար մեզ, և մի՛ յիշեր զանօրէնութի̃ս մեր. այլ հայեա՛ց 'ի մեզ այժմ ըստ բարեգթուե̃ քում. և փրկեա՛ զմեզ 'ի թշնամեաց մերոց, զի դու ես ա̃ծ մեր, և մեք ժողովուրդ քո՝ և գործք ձեռաց քոց ամենեքին, և կարդամք զանուն քո։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բա՛ց մեզ զդուռն բարեգթուե̃ օրհնեալ ա̃ծածին, առ քեզ ապաւինեցաք, ո̃վ զի միջնորդու̃ե քով ապա– տեսցուք 'ի փորձանաց. մի՛ յամօթ առներ զմեզ, զի դու ես փրկութիւն ազգին քրիստոնէից։

Զհետոյ ողջէն ոչասւածով երգեն զաղէմն տուն առ տուն։

Աչասած. Քհ̃.

Ո՛վ բարեգութ անոխակալ և ողորմած տէր, առա– քեա զողորմութիւնս քո 'ի վերայ ժողովրդեան քո։

## Սաղմոս։

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ ինձ տէ՛ր զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու տ̃ր մինչև յե՞րբ։

Դա՛րձ տէր և փրկեա՛ զանձն իմ, կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում։

Զի ոչ ո՛ք է որ ՚ի մահու յիշէ զքեզ, կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Աշխատեցայ ես ՚ի հեծութե̃ իմում, լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ՚ի սրտմտութե̃ ակն իմ, և մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

՚Ի բա՛ց կացէք յինէն ա̃մքեան որք գործէք զանօրէնութի̃։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց, և տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա̃մ թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ՝ վաղվաղակի և խռովեսցին։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Որպէս բարեգութ տէր գթա՛ ՚ի ժողովուրդ քո, որպէս անոխակալ հաշտեա՛ց, և ողորմեա՛ մեզ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Աստուածածնի։

Տիրուհի անարատ՝ ամենօրհնեալ և բարեբանեալ, որպէս բարեգութ աղաչեա՛ զտէր զի ողորմեսցի մեզ։

Ապա ասէ առաջնորդն ՚ի քահանայից մի յաղօթիցն, եթէ վասն երաշտի կամ գետնաշարժի, կամ ջերմախտի, կամ այլոյ, վասն որոյ աղօթէ յայնժամ։ Յետոյ ասէ փոքր քարոզ։

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, և պահեա՛ զմեզ ա̃ծ քոյին շնորհիւն։

Զամենասրբուհի անարատն, զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր Ա՟ծածին՝ զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա՟մ կեանս մեր Ք՟ի Ա՟յ յանձն արասցուք։
Դպրան · Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Քահանայն 'ի ձայն։

Զի քո է կարողութիւն, և քո է թագաւորութիւն և զօրութիւն և փառք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սղմ սկսանի Երկրորդ ժամուն · ՃԱ·

Ողորմած տէր՝ ողորմեա, ողորմեա, ողորմեա մեզ։

Նա֊ եղանակի ասղինս թու֊ն աա֊ թու֊ն։

Տէր լուր աղօթից իմոց աղաղակ իմ առ քեզ եկեսցէ · և մի դարձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ վաղվաղակի լուր ինձ։
Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խուիւ չորացան։
Հարայ ես որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ 'ի ձայնէ հեծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսան անապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ ինև երդնուին։
Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Եւ

Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ՚ի հողս նորա գթասցին։

Երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ, և ամ թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։

Շինէ Տր զՍիոն, և երևեսցի փառօք իւրովք ՚ի նմա։

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նոցա։

Գրեսցի այս յազգ այլ, ժողովուրդ որ ստացեալ է օրհնեսցէ զՏէր։

Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութենէ իւրմէ, Տէր յերկնից յերկիր հայեցաւ։

Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել զորդիս մահապարտաց։

Պատմել ՚ի Սիոն զանուն Տն, և զօրհնութիւն նր յԵղէմ։

Ժողովել ժողովրդոց ՚ի միասին, և թագաւորաց ծառայել Տեառն։

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի զօրութե իւրոյ, զնուազութի աւուրց իմոց ասա՛ ինձ, և մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց, զի ազգէ յազգ են ամք քո։

Ի սկզբանէ Տէր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են։

Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան։

Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին, և որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես և ամք քո ոչ անցանեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն ՚ի նմա, և զաւակ նոցա յաւիտեան յաջողեսցի։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Որպէս բարեգութ Տէր գթա՛ ՚ի ժողովուրդս քո, որպէս անոխակալ հաշտեա՛ց, և ողորմեա՛ մեզ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնէ.

Տիրուհի անարատ՝ ամենօրհնեալ և բարեբանեալ, որպէս բարեգութ աղաչեա՛ զտէր, զի ողորմեսցի մեզ։

Այս երգեն ՚ի քահանայից առէ զայլ աղօթս ՚ի նոյն կարգէ.
Յետոյ ծունր քարոզ.

Եւ ևս խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք.
Ընկալ, կեցո՛, ողորմեա՛, և պահեա՛ զմեզ Աստուած քոյին շնորհիւն.
Զամենասրբուհի անարատն, զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր Աստուածածին՝ զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զամենայն կեանս մեր Քրիստոսի Աստուծոյ յանձն արասցուք.
Դասն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Քահանայն ՚ի ձայն.

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յետոյ ասեն աշխատածով երգեն զսաղմոսն դասն առ դասն.
Սկսուած. ՃԿ.

Որպէս բարեգութ տէր գթա՛ ՚ի ժողովուրդ քո, որպէս անոխակալ հաշտեա՛ց, և ողորմեա՛ մեզ.

Սաղմս.

Աստուած մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո.
Արարին զերուսաղէմ որպէս զհիւղս մրգապահաց, արկին զդիակունս ծառայից քոց գէշ թռչնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի.
Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շուրջ զերուսա-ղէմաւ, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա.
Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց, ծաղր և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ էին զմեօք։

Մինչև յե՞րբ տէր բարկանաս դու իսպառ, բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։

Հեղ զբարկութիւն քո ՚ի վերայ ազգաց որք զքեզ ոչ ճանաչեցին, ՚ի վերայ թագաւորաց որք զանուն քո ոչ կարդացին. զի կերին զՅակոբ և զտեղի նորա աւերեցին։

Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս, վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր զի աղքատացաք յոյժ։

Օգնեա՛ մեզ ա՛ծ փրկիչ մեր, վ՜ փառաց անուան քոյ։

Տ՜ր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեղս մեր վ՜ անուան քոյ։

Մի՛ երբէք ասասցեն ՚ի հեթանոսս, թէ ո՞ւր է ա՛ծ նոցա։

Այլ յայտնի ինչ լիցի ՚ի վ՜ր հեթանոսաց առաջի աչաց մերոց, առ ՚ի խնդրել զվրէժ արեա՜ն ծառայից քոց որ և հեղաւ։

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց, ըստ մեծութեան բազկի քո շահեա՛ դու զորդիս սպանելոց

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպատիկ ՚ի ծոց նոցա, զնախատինս իւրեանց զոր նախատեցին զքեզ տէր։

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Որպէս բարեգութ տէր գթա՛ ՚ի ժողովուրդ քո, որպէս անոխակալ հաշտեա՛ց, և ողորմեա՛ մեզ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աստուածածնի։

Տիրուհի անարատ՝ ամենօրհնեալ և բարեբանեալ, որպէս բարեգութ աղաչեա՛ զտէր, զի ողորմեսցի մեզ։

Ըստ սաղմոսին, ա. փոխասայն. դզ։

՚Ի մանկութենէ իմմէ բազում անգամ մարտեան ընդ իս ախտք. այլ դու փրկիչ իմ ընկա՛լ զիս և կեցո՛. նշինէ։

Ամօթ առէք զինին ամաչեցէք ՚ի տեառնէ. քանզի որպէս խոտ եղիջիք չորացեալք։ նշինէ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Հոգւով սրբով ամ̃ հոգի կենդանանայ, և սրբութ̃ նորա բարձրանայ և պայծառանայ, և երրորդական միութե̃ն խորհրդաբար լինի սուրբ բնակարան։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հոգւով սրբով բղխին հոսանք շնորհաց, և ոռոգեալ զամ̃ ստեղծուածս կենդանացուցանեն։

Ապա ասէ երէցն. Ամենայն հոգիք օրհնեցէք զտէր։
Եւ ընթերցեալ լինի աւետարանն ըստ առաջիկայ հայցուածոյն. նոյնպէս և ճաշունն ըստ հայցուածոյն։

Եւ լինի արձակումն։

Կարգաւորութիւն վասն երաշտութեան։

Մեսեդի.

Զակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա։

Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նր̃, օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո։

Յակոբայ առաքելոյն 'ի կաթողիկեայց թղթոյն է ընթերցուած։

Եղբա՛րք՝ երկայնամիտ լերուք մինչև 'ի գալուստ Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զանագան։ Երկայնամտեցէք և դուք, և հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստ Տեառն մերձեալ է։ Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս եղբարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ։ Եղիա մարդ էր իբրև զմեզ չարչարելի. և յաղօթս եկաց, և ոչ տեղաց յերկիր զերիս ամս և զվեց ամիս։ Եւ դարձեալ եկաց յաղօթս, և երկինք ետուն զանձրև, և բուսոյց երկիր զպտուղ իւր։

Ալէլուիա։

Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո։

## Սուրբ աւետարանս որ ըստ Մատթէոսի ։

Յայնմ ժամանակի՝ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք փորձելով խնդրէին ՚ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա ։ Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. յորժամ երեկոյ լինի՝ ասէք պարզ լինիցի, զի կարմրացեալ է երկին ։ Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շառագունի տրտմութ̃ երկին ։ Արդ՝ զերեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ո̃չ կարէք գիտել ։ Ամէն ասեմ ձեզ, չէ մարգարէ ընդունելի ՚ի քաղաքի իւրում ։ Արդարև ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ՚ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ ա̃մ երկիր ։ Եւ ոչ առ մի ՚ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ՚ի Սարեփթայ Սիդոնացւոց առ կին մի այրի ։ Ասեն ցնա զինչ նշան առնիցես՝ զի տեսցուք և հաւատասցուք, զինչ գործիցես ։ Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ, ո̃պ և գրեալ է. հաց յերկնից ետ նոցա ուտել ։ Ասէ ցնոսա յ̃ս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տացէ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ ։ Զի հաց այ̃ է որ իջանէ յերկնից, և կեանս տայ աշխարհի ։

Կարգաւորութիւն վասն անանձրև երաշտութեան ։

### Սարկաւագն ։

Ողորմեա մեզ ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում. աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա ։

Որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ սպասես դարձի նորա և ապաշխարութեան, լուր մեզ՝ աղաչեմք ։

Որ վերածես զամպս ՚ի ծագաց երկրէ, պատուիրեա ամպոց տալ երկրի զանձրև խաղաղական, աղաչեմք ։

Որ կոչես զջուրս ծովու, և հեղուս ՚ի վերայ երեսաց երկրի, առաքեա զօրհնութի̃ քո ՚ի վերայ մեր, աղաչեմք ։

Որ բուսուցանես խոտ անասնոց, և դալարի ՚ի ծառայութի̃ մարդկան, կեցո զմարդիկ և զանասուն, աղաչեմք։
Անձրև կամաց և խաղաղական պարգևեա երկրի, և կեցո զամենեսեան մարդասէր, աղաչեմք։
Առաքեա զանձրև քո բարերար ՚ի վերայ տեղեաց մերոց որք կարօտ են նմին, աղաչեմք։
Գթած և ողորմած մարդասէր՝ գթա և ուրախ արա զմեզ, աղաչեմք։
Տուր մեզ ա̃ծ, զի քաղցր է ողորմութի̃ քո, և ողորմեա մեզ բարեգթութե̃դ քո, աղաչեմք։

Քահանայն ՚ի ձայն։

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն։

Եւ ևս աղաչեմք վասն պահպանելոյ զքաղաքս զայս, և զամ̃ քաղաք և զգաւառ ՚ի սովէ, ՚ի ժանտամահէ, ՚ի գետնաշարժէ, ՚ի յընկղմանէ, ՚ի հրդեհէ, ՚ի սրոյ, ՚ի մարախոյ, ՚ի կարկտէ, յարշաւանաց այլազգեաց, յազգային պատերազմէ, և յանկարծակի մահուանէ։
Եւ վասն քաղցր և ներող և անյիշաչար լինելոյ բարերարին և մարդասիրին Ա̃յ ՚ի վերայ մեղաց մերոց, և դարձուցանելոյ ՚ի մէնջ զամ̃ ցասումն իւր, և փրկելոյ զմեզ յարժանահաս սպառնալեաց իւրոց, և վասն տալոյ մեզ անձրև խաղաղական, և ցօղելոյ յերկիր զցօղ բարութ̃, և ողորմելոյ ՚ի վերայ մեր, աղաչեմք։

Քահանայն։

Տուր մեզ ա̃ծ փրկիչ մեր, յոյս ամ̃ ծագաց երկրի, և որ ՚ի ծով հեռի. և քաւեա տ̃ր զմեղս մեր, և ողորմեա մեզ։
Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Կանոն աղաչանաց առ մարդասէրն Ա՟ծ վասն երաշտութեան։

### Արգ․ Ը՟կ․ Ակն՛ք ժողովուրդք երգեսցուք․

Ընկալ փրկիչ զաղաչանս յանարժան բերանոց մերոց, և առաքեա յերկնից 'ի յերկիր անձրևս պտղաբերս, որ մարդասէրդ ես և բազումողորմ։

Քաւեա տէր զյանցանս մեր, և անցո 'ի մէնջ զարդար ցասումն քո, և տուր երկրի զանձրևս յերկնից։

Ակն՛ք մանկանցուք լալագին զղջմամբ գոչեսցուք առ Ա՟ծն բոլորից, ներեա մարդասէր յանցանաց մերոց, և առաքեա յերկնից զջուր յերկիր ծարաւի։

### Աստուածածնէ։

Զաղբերն կենաց քեզ ծանեաք Ա՟ծածին․ վ՟ո որոյ պաղատանօք հայցեմք 'ի քէն, անդադար աղերսեա արարչին քո և որդւոյ՝ առաքել զանձրև 'ի յերկիր։

### Արգ․ Գ՟․ Հաստատեա զմեզ տէր 'ի քեզ։

Որ զա՟մ ստեղծուած 'ի ձեռին ունիս տէր, լո՛ւր որպէս գթած աղաչանաց ծառայից քոց, և առաքեա զջուր 'ի վերայ ամենայն երկրի։

Որ բարի ես և անոխակալ, մի՛ անտես առներ զաղաչանս մեր, այլ առաքեա 'ի մեզ անձրև խաղաղական որպէս բարեգութ։

### Աստուածածնէ։

Որ ունիս առ մարդասէր որդին քո հաճոյական համարձակութին սրբուհի, աղերսեա նմա տալ երկրի անձրևս պտղաբերս միջնորդութեամբ քո։

## Եւէ · Գ · Երգեմ քեզ զլուր ։

Հայեաց 'ի բարձանց 'ի մեղուցեալքս 'ի մեզ բարերար տէր, և պարգևեա զողորմութի քո ամ երկրի, և տուր առատապէս զանձրև գթութե քո մարդասէր։

Եկն 'ի վերայ մեր ըստ մեղաց մերոց բարկութի քո մարդասէր, և փակեաց զերկինս ոչ տալ անձրև երկրի քում․ վս որոյ աղաչեմք զքեզ ծառայքս քո՝ մի՛ բարկութեամբ խրատեր զմեզ։

Զփարթամութին զոր ետուր մեզ՝ վատնեցաք անառակութե․ այլ դու տէ՛ր բարերար՝ որպէս հայր գթած մխիթարեա զմեզ, և շնորհեա՛ անձրևս տարեկանս երկրի մերում։

Որ փոխարկես զխառնուածս օդոց հրամանաւ քով տէ՛ր, պարգևեա մեզ յատկապէս անձրև կամաց, և զառատ պտղաբերութի բուսոց՝ յագեցուցանել զամ կենդանիս քաղցրութեամբ կամաց քոց․

Տէ՛ր՝ որ վերածես զամպս 'ի ծագաց երկրէ որպէս և կամիս, և երևեցուցանես փայլատակունս անձրևել 'ի վերայ ամ ստեղծուածոց, ինքնին որպէս մարդասէր հաճեաց առաքել 'ի վերուստ անձրև 'ի յերկիր։

### Աստուածածնէ ։

Որ մայր եղեր այն մերոյ ա՛ծածին՝ և ունիս համարձակութի առնա, հաւատով հայցեմք 'ի քէն՝ աղերսեա՛ նմա վս մեր ամնցուն, առաքել ջուր 'ի վր ամ երկրի։

## Եւէ · Է · Որ լուսոյն պարագլուխ ։

Պաղատանօք անմարմնոցն զօրութեց լո՛ւր մեզ քաղցրութե բարերա՛ր փրկիչ՝ որ միշտ աղերսեմք առ քեզ, և շնորհեա՛ անձրև ծարաւի երկրի մերում որպէս միայն մարդասէր։

Աղաչանօք երկոտասան աշակերտաց և նահատակաց ընտրելոց, զերծո՛ զմեզ ողորմած ած՝ յամ կարեաց 'ի ցասմանէ և 'ի նեղութենէ։

Անյիշաչա՛ր լեր առ մեզ տէր ՚ի ժամանակի փորձութեանց, և ապրեցո՛ զմեզ ՚ի սպառնալեաց որք հասին ՚ի վր մեր, և առաքեա՛ յերկիր քո զանձրև կամաց քոց.

Աստուածածնի.

Երկրածինքս ամ ճշմարտապէս ունիմք զքեզ սրբուհի միջնորդ առ ած, վասն որոյ պաշտպանութբ քո ապրեցո՛ զքաղաքն քո յամ չարեաց.

Երգ. Զ. ՚Ի խորս յանցանաց.

Բազմութիք մարտիրոսաց՝ որք բազում համբերութի ունիք առ տէր, բարեխօս լերուք առ նա՝ այժմ պարգևել անձրև և պտղաբերութի ամ երկրի:

Բարեխօսութբ աշակերտաց քոց աղերսեմք, ներեա՛ քաւեա՛ տէր զմեղս մեր, և դարձո՛ զցասումն քո ՚ի մէնջ, և շնորհեա՛ անձրև երկրի մերում:

Տեսօղդ ամ՝ պաղատիմք առ քեզ փափագմամբ հոգւոյ, խնայեա՛ ՚ի մեզ ով բարերար, և պարգևեա՛ անձրևս պտղաբերս ծարաւի երկրի մերում ով մարդասէր:

Աստուածածնի.

Աղաչեմք զքեզ սրբուհի ածածին, մի՛ դադարիր բարեխօսել առ որդին քո վասն մեր ծառայից քոց՝ շնորհել մեզ զխաղաղութի, և փրկել յամ փորձութե:

Երգ. Է. Պատկերի ոսկւոյ.

Ամենայն հոգւոց տր զքեզ խոստովանեալ՝ աղաչեմք գթած, խնայեա՛ ներեա՛ ով բարերար և մարդասէր, և զերծո՛ զմեզ յառաջիկայ իրաւացի սպառնալեացս, և պարգևեա՛ անձրև ծարաւի երկրիս որպէս բարեգութ:

Որ զապաշխարողն մանասէ կենդանւոյն փրկեցեր յերկաթապինդ կապանաց, և ապրեցուցեր ՚ի մահաբեր արկածէ բարեգութ և ողորմած փրկիչ, շնորհեա՛ մեզ զողորմութիւնս քո, և պահեա՛ զմեզ ՚ի սովէ և ՚ի գետնաշարժէ:

Մեղաք անօրինեցաք և անիրաւեցաք ամենեքեան, վասն որոյ աղերսեմք քեզ երկիւղիւ, մի՛ բարկութբ

քով խրատեր զժառանգուն եւ զժողովուրդ քո մարդասէր, այլ գթա՛ այժմ ՚ի մեզ որպէս բարերար եւ ողորմած, եւ առաքեա՛ զջուր ՚ի յերկիր։

## Աստուածածնի։

Ունեալք զքեզ ա՛ծածին՝ ապաւէն հաստատուն եւ զէն անյաղթելի, եւ աղերսեմք ծառայքս քո, փրկեա՛ զժողովուրդ եւ զքաղաք քո ՚ի սպառնալեաց բարբարոսաց, ՚ի ժանտախտէ ՚ի գետնաշարժէ եւ յա՛մ ապականութէ։

## Երգ․ Է․ Օ՜ր ՚ի հնոցի հրոյն։

Եղիա որ աղօթիւք արգել զանձրեւ զի մ՛ տեղասցէ ՚ի վերայ երկրի․ եւ դարձեալ աղօթիւք իջոյց զանձրեւ ՚ի յերկնից․ նորին բարեխօսութբ հայցեմք ՚ի քէն բարեգութ, առաքեա՛ յերկնից զանձրեւ ՚ի յերկիր։

Ընդ պարուց զօրացն անմարմնոց՝ առաքելոց մարգարէից եւ մարտիրոսաց, ուխտ քահանայից եւ ժողով ոգց, զքեզ աղաչեն որպէս ստեղծօղ բոլորից եւ տէր, կեցուցանել զայնոսիկ որք օրհնեն զքեզ։

Որ լուար յովնանու բարերար, եւ ՚ի կիտէն եւ ՚ի ծովէն զերծուցեր որպէս ա՛ծ, եւ զդանիէլ ազատեցեր ՚ի գբոյն եւ ՚ի գազանաց, լո՛ւր եւ այժմ ծառայի քում, եւ փրկեա՛ զժողովուրդ քո յա՛մ կարեաց։

## Աստուածածնի։

Այժմ բարեխօս կացուցանեմք առ քեզ ո՛վ յս՝ զա՛ծածինն որ զքեզ ծնաւ, գթալ եւ կեցուցանել զմեղուցեալ ժողովուրդ քո, որ փափագանօք առ քեզ ապաւինի, եւ բարձրացուցանէ զքեզ յա՛մ յաւիտեանս։

## Երգ․ Թ․ Օ՜ բանն յօր ա՛ծ։

Աղաչեմք զքեզ տէ՛ր ողորմութ, քաւի՛չ լեր մեզ որպէս ա՛ծ ամենակալ՝ որ խնդրեմք զմարդասիրութիդ յերկնից ծարաւի, եւ պարգեւեա՛ անձրեւս պտղաբերս ողմ բարերար, եւ կեցո՛ զանձինս մեր։

Ողորմեա՛ ողորմած գործոց ձեռաց քոց, և ներեա՛ մեզ ոպ̃ բարերար. մի՛ սրտմտութ̃ յանդիմաներ զժողովուրդ քո, այլ խոնարհեցո՛ տէր զունկն քո, և նայեա՛ այժմ յաղաչանս մեր, և շնորհեա՛ անձրև երկրի քում։

Աստուածածնէ.

Փրկեա՛ բա՛րեգութ 'ի հեթանոսաց և 'ի բարբարոսաց և յամ̃ թշնամեաց զքաղաքն քո և զամ̃ ժողովուրդն. և պարգևեա՛ մեզ անձրևս արդասաւորս 'ի բեղմնաւորութի̃ ամ̃ պտղոց, և 'ի փրկութի̃ ամ̃ցուն ոպ̃ մարդասէր։

## Գալիստոսի պտ̃րիարգին կոստանդնուպօլսոյ

Աղօթք վասն երաշտութեան։

Աղօթք, ա̃։

Զտէր աղաչեսցուք։

Տէ՛ր՝ տէր ած̃ մեր՝ որ վասն առ քեզ նախանձուն լուար եղիայի թեզբացւոյն, և հրամայեցեր երկնի արգելուլ զանձրև իւր՝ զի մի՛ տացէ ըստ ժամանակին. և դարձեալ 'ի ձեռն պաղատանաց նորա անձրև պտղաբեր շնորհեցեր երկրի։

Ինքնին տէ՛ր ամենեցուն՝ շարժեալ 'ի բարեգթութ̃ քումմէ անձրև կամաց առատացո՛ ժառանգութ̃ քում. և զյանցանս մեր անտես առնելով, առաքեա՛ զանձրևս քո 'ի վերայ տեղեաց որք կարօտ են նմին։

Ուրախացո՛ զերեսս երկրի վ̃ն աղքատաց ժողովրդեան քո և տղայոց և անասնոց և այլ ամ̃ կենդանեաց, զի քեզ սպասեն տալ նոցա զկերակուր 'ի ժամու։

Քանզի դու ես ած̃ մեր՝ ած̃ ողորմութ̃ և գթութ̃, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս̃բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին աղօթք , Է · 'Ի վերայ երաշտութեան ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր Ա՟ծ ամենակալ՝ որ վերածես զամպս 'ի ծագաց երկրէ , որ փայլատակունս յանձրևս առնես , որ հանես հողմն 'ի շտեմարանաց քոց , որ կոչես զջուրս ծովուն՝ և հեղուս 'ի վերայ երեսաց երկրի · զքեզ աղաչեմք , և առ քեզ պաղատիմք , խոստովանելով զմեղս մեր , և խնդրելով առ 'ի քէն զառատ ողորմութի՟ քո ։

Պատուիրեա ամպոցն տալ զանձրև · ողորմեա ամենեցուն որք են յերկրի քում · գթա 'ի ծերս և 'ի մանուկս և 'ի տղայս ստնդիեցիկս , 'ի ծառայս քո և յաղախնայս , յուստերս և 'ի դստերս , և յա՟մ անասունս երկրի , և տուր մեզ հաց 'ի կերակուր և զդալարի անասնոց ։

Ընկալ զաղաչանս ա՟մ ժողովրդեան քո , և մի՛ մերժեր զհեծութի՟ անանկաց · մի՛ սրտմտութ՟ե քով յանդիմաներ զմեզ , և մի՛ բարկութ՟ե քով խրատեր , և մի՛ եղծաներ սովով և ծարաւով զժողովուրդ քո · քանզի աչք ա՟մցուն 'ի քեզ յուսան , և դու տաս զկերակուր ն՟ց 'ի ժամու · 'ի քեզ տէր յուսացաք , բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք , և առ 'ի քէն առատ ողորմութ՟եցդ ակն ունիմք ։

Զի բարերար և մարդասէր ես Ա՟ծ դու , և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աղօթք , Ը · Վասն երաշտութեան ։

Տէր Ա՟ծ մեր՝ գիտեմք զի անարժան եմք ողորմութ՟եց քոց · և ոչ եմք արժանի համբառնալ զաչս մեր և հայիլ յերկինս , և կալ առաջի քո , և խնդրուածս մատուցանել քեզ · քանզի զի՞նչ բարի արարաք , զի ընկալցուք 'ի քէն զխնդրուածս մեր ։

Իսկ արդ՝ վ՟ն անսահման բարութ՟ե քո 'ի չգոյէ զմեզ 'ի գոյ ածեր , և պատկերաւդ քով պատուեցեր , և զա՟մ ստեղծուածս հնազանդ արարեր մեզ · իսկ մեք՝ որք զայս չափ բարիս ընկալաք , ո՟պ թշնամի ցուցաք , և զպատուի

րանս բարերարիդ ապախտ արարաք , և կեանս պարսա-ւելիս և միտս վատթարս և անմաքուրս ստացաք ։

Եւ ոչ միայն զսէրն քո ՚ի բաց ընկեցաք , այլ որպէս գազանս ընդդէմ իրերաց բերաք , և զմարմինս միմեանց կլանեմք վասն ագահուե՟ և անիրաւ բաղձանաց մերոց . և զիա՞րդ արժանի լինիցիմք վայելել ՚ի բարերարուի՟ս քո ։

Քանզի դու արդար , մեք անիրաւ . դու սիրող , մեք թշնամանօղ . դու բարեգութ , մեք անգութ . դու բարերար , մեք յափշտակօղ . ապաքէն ի՞ւ իւիք ունիմք զհաղորդուի՟ ընդ քեզ , զի և քոյոցդ բարեաց գտցուք հաղորդակից ։

Խոստովանիմք զարդարուի՟ն քո , ճանաչեմք զդատապարտուի՟ն մեր . քարոզեմք զբարերարուի՟ն քո , գիտեմք զի մեք բիւր մահու պարտաւոր եմք , բայց սակայն հզօր և ամենակալ ձեռամբ քով մնամք կենդանի ։

Դիւրին է ամենազօր ձեռին քո միանգամայն ՚ի մի-ում վայրկենի չքացուցանել զմեզ . և ըստ յօժարուե՟մաց և ըստ գնացից մերոց իրաւացի է սատակման մատ-նել զմեզ ով արդարադատ տէր . այլ քում անսահման բարուե՟ և անճառ քաղցրուե՟դ ոչ է արժանի մարդասէր ։

Վասն այսորիկ յանպատում կարեկցուի՟ քո և յանոխակալ գթուի՟ քո վստահացեալ՝ մատչիմք աղերսել առ քեզ բարերարդ մեք ապիրատքս և ապաշնորհք ։

Մի՛ վասն մեղաց մերոց մատներ զմեզ կորստեան ՚ի ձեռն երաշտուե՟ , և մի՛ վասն անօրէնուե՟ց մերոց տան-ջեր զմեզ սովու . այլ վ՟ն բարուե՟ քո շնորհեա՛ երկրի մերում անձրև կամաց՝ զոր պատրաստեցեր ժառանգուե՟ քում , և լի՛ց զընդերս երկրի կենդանի ջրով քո ։

Քանզի աւասիկ երկիրս այս կայ առաջի մեր ո՞չ մայր , որոյ ցամաքեալ իցեն ստինք . զի զոր օրինակ ստինք մօր զրկեալ գոլով ՚ի կաթանէ՝ մահ ՚ի վերայ ածէ մանկանն . նոյնպէս երկիր ցամաքեալ ունելով զակոսս իւր , թարշամեցուցանէ զդալարիս , և ապականուի՟ բերէ արդեանց նորա , և մեզ սպառնայ սով և մահ ։

Քանզի խորշակն որպէս տապ տոչորիչ զբոյս թա-

ւամեցուցեալ՝ գուշակէ եղծումն արմատոց երկրի։

Այլ դու խնամակալ՝ ողորմութ̅բ քով այց արա-ամս , և ջրածին ամպովք զօդն բարեխառնեա՛ . և յոր-դառատ անձրևով քո զերկիրն ոռոգեա՛ , և զբոյսս նո՛ր զուարթացո՛ . և շնչմամբ քաղցր օդոց զպտուղսն ամբողջս և պատարունս արա . և լի՛ց զնոսա բարեգթութ̅բ քով , որովք սահմանեցեր կենաց մարմնոյն պահպանել։

Քանզի եթէ ոչ դու անձրևօք կամաց քոց տացես զշահեկանութի՛ , երկիր մեր ոչ տացէ զպտուղ իւր . այլ վասն բազում գթութեան քո լո՛ւր աղաչանաց մերոց՝ անարժան ծառայից քոց։

Քանզի դու ես աղբիւր ողորմութ̅ և տուիչ բա-րեաց , և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում՝ Հօր , և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգ-ւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն։

Աղօթք , Ժ՟ . Վասն երաշտութեան։

## Զ տէր աղաչեսցուք։

Տէր տէր՝ որ աղօթիւք մարգարէին եղիայի լուծեր զերաշտութի՛ն , և հրամանաւ անձրևաց զերեսս երկրի թա-ցեր , և բեղմնաւորութ̅ պտղոց սնուցեր զժողովուրդ-քո առատապէս։

Նորին և այժմ ՚ի բնաւոր քաղցրութենէ քումմէ-շարժեալ՝ պարգևեա՛ երկրի անձրևս խաղաղականս՝ յար-գասաւորութիւն տարեկան պտղոցն։

Քանզի դու ես , որ զջուրսն ՚ի տեղիս իւրեանց ժողովեցեր , և զերկիրն որ ծածկեալ էր ՚ի ջուրց , տեսանելի արարեր։

Դու ես՝ որ հրամայեցեր երկրի զազգի ազգի պտուղս բերել ՚ի վայելս պիտոյից մերոց։

Դու ես՝ որ ՚ի ջուրս յարկար զվերնայարկս քո . դու ես՝ որ ՚ի վեր ամբառնաս զամպս , և հրամայես ցօղել զանձրևս կամաց . դու ես՝ որ վերածես զջուրս ծովու , և հեղուս ՚ի վերայ երեսաց երկրի։

Դու ես՝ որ անձրեւս սահմանեցեր, և Թաթաւս կամաց պատրաստեցեր. դու ես՝ որ զգետս ջուրց յորդես, ոռոգանես զերկիր, և արբեցուցանես զակօսս նորա՝ 'ի բազմացուցանել զգեղեցիկ պտուղս նորա։

Դու ես՝ որ 'ի ծովու ճանապարհ գործեցեր, և զգետն անշարժ կացուցեր. զջուր 'ի վիմէ աղբերացուցեր, և զդառնութի ջուրց 'ի քաղցրութի փոխարկեցեր։

Գիտաց բնութիւն ջուրց զարարիչն իւր, ճանաչէ զտէրն իւր, ոչ զլանայ զպարտական սպասաւորութին։

Եթէ զտեսանիցէ զքեզ տէրդ ցասուցեալ 'ի վերայ մեր, կամ անդր քան զչափն յորդեալ՝ մնաս 'ի վերայ ածէ, կամ պակասելով ամփոփի. որով չորութին տիրէ գաւառին, տօթագին լինի օդն, բողբոջք երկրի թարշամին, և մեք անկանիմք 'ի վտանգս։

Իսկ եթէ դարձեալ տեսանիցէ զքեզ մարդասէր ա̃ծդ բարեգութ և անյիշաչար, զանձրեւս պատրաստէ, և Թաթաւս 'ի վերայ երկրի առաքէ. օդն քաղցրասիւնչէ, և երկիր հպատակելով հրամանի քո՝ առատ պտուղս յընդերաց իւրոց յառաջ ածէ։

Եւ ահա բեկեալ սրտիւ պաղատիմք առ քեզ արարիչդ և ամենակալ, և աղաղակեմք ասելով. Ողորմեա մեզ տէ՛ր՝ ողորմեա՛ մեզ, յիշեա՛ զի գործ ձեռաց քո եմք. նայեա՛ 'ի տկարութի բնութեանս մերոյ, զի դու արարեր զմեզ։

Տե՛ս զտագնապ Թռչնոց, զպուռչիւն անասնոց, զլալիւն մանկանց տղայոց, զաղաղակ երիտասարդաց, զտառապանս ծերոց, զզրկութի որբոց, զմիայնութի այրեաց, զկարօտութի տնանկաց, և զձայն պաղատանաց ա̃մ ժողովրդեան քո, և ա՛յց արա երկրի, և արբեցո՛ զսա պարարտացուցիչ անձրեւօք. քանզի անջրդի մնացեալ՝ իւրոց բուսոցն Թառամութի, իսկ մարդկան և անասնոց ապականութիւն սպառնայ։

Դու տ̃ր՝ որ 'ի ջնջել քո զտիեզերս ջրհեղեղաւ՝ յիշեցեր զնոյ, որ 'ի բազմութէ ջուրց տատանէր 'ի տապանին։ Յիշեցեր զնա և զԹռչունս և զանասունս և զգազանս և զսողունս, և յարուցեր հողմն 'ի վերայ երկրի, և

ցածուցեր զջուրն․ և զնոյ և զկենդանիսն որք ընդ նմա՝ որպէս սերմն պահեցեր 'ի ծնունդ նորոյ աշխարհի․ և այժմ զօրութ̃ օդոյ սպառնաս մեզ սով և մահ։

Յիշեա́ զժողովուրդն որք 'ի քեզ են ապաստանեալ․ յիշեա́ և զթշուառս․ յիշեա́ և զանասունս․ ցօղագին տուր զօդն և բարձ զչորութին․ և զսերմանիս երկրի արգասաւորեա́ 'ի սնունդ մարդկան և կենդանեաց․ և զամենայն դարձեալ առ 'ի քէն խնամոցն արժանաւորեա́։

Քանզի դու ես՝ որ բուսուցանես խոտ անասնոց, և դալարի 'ի ծառայութ̃ մարդկան։ Եւ դու ես՝ որ հանես հաց յերկրէ, և ըղխեցուցանես զգինի, և պարգևես զձէթ 'ի զուարթութիւն մարդկան։

Եւ այժմ բարերար՝ անճառ մարդասիրութ̃ քո շնորհեա́ անձրև 'ի վերուստ, և զուարթացո́ զերեսս երկրի բազմաբեղուն բուսովք և պտղովք։

Որպէս զի տուեցելոցն առ 'ի քէն բարեաց աննախանձ առատութ̃ հաղորդեալք, ուրախութ̃ սրտի փառաւորեսցուք զբարութի̃ քո՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբ̃յ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք, Ե․ Վասն երաշտութեան։

Զտէր աղաչեսցուք։

Տէ́րբօդա տ̃ր յ̃ս ք̃ս ա̃ծ մեր, որ բանիւ հրամանի քո զա̃մ ինչ յոչէից 'ի գոյ ածեր։ Որ առեալ հող յերկրէ, կազմեցեր զմարդն, և հոգւով բանականաւ և պատկերաւ քով պատուեցեր զնա, և ասացեր․ Աճեցէք և բազմացարո́ւք և լցէք զերկիր։ Որ տաս անասնոց կերակուր, ձագուց ագռաւուց որք կարդան առ քեզ։ Որ և 'ի մեծ և փրկական մարմնաւոր գալստեան քում, երբեմն եօթն և երբեմն հինգ հացիւ զբազում հազարս յագեցուցեր։

Ինքնին ամենաբարի տէր, և զժողովուրդ քո զայս՝ որ կարդայ զամենասուրբ անուն քո, ամենաբաւական և մեծապարգև աջովդ քո կերակրեա́ առատապէս,

Հայեաց Տէր յաղքատս ժողովրդեան քո, որ բանաս զձեռն քո, և լնուս զա՟մ կենդանի քաղցրութ՟ կամաց քոց, ողորմեա մեզ ամ՟ցուն կարեկցաբար մարդասէր Տ՟ր։

Քանզի դու միայն ես գորովագութ խնամակալ մեր ամենեցուն. և առ քեզ միայն զաչս համբառնամք, որպէս մանուկ սարսուցեալ 'ի սաստէ առ մայր իւր։

Դու ասացեր ամենաբարի Տէր, խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք. տուր արդ խնդրողացն այժմ Տէր՝ ըստ հոգևորական կերակրոյն և զհարկաւորսն մարմնոյն, և կերակրեա զքաղցեալ ժողովուրդն քո։

Շնորհեա երկրի զանձրևս 'ի ժամու, զբարեխառնութիւն օդոց, և զքաջաբերութիւն ամենայն պտղոց։ Այց արա այնոցիկ, որք 'ի հիւանդութեան, 'ի ջերմախտութեան, 'ի տենդս, և յայլ ազգի ազգի ցաւս տառապին։

Փրկեա զքաղաքս (այս անուն), և զա՟մ քաղաք և գաւառ 'ի սովէ, 'ի ժանտախտէ, 'ի գետնաշարժէ, յընկղմանէ, 'ի հրդեհէ, 'ի սրոյ, և 'ի կոտորածէ, պարգևելով մեզ զողորմութիւն քո։ Շնորհօք և մարդասիրութ՟ անսկիզբն և համագոյ հօր քո, և ամենասուրբ և համապատիւ քո հոգւոյն, աղօթիւք և բարեխօսութ՟ բարեբանեալ Ա՟ծածնին, և Ա՟ծախօս առաքելոց քոց, և ա՟մ ս՟բց, ամէն։

Աղօթք, Ղ. Վասն երաշտութեան։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր յս՟ քս՟ Ա՟ծ մեր, որ վս՟ մերոյ փրկութեան յանձն առեր մարմին զգենուլ, զի փառաւորեսցես զքանչելապէս զբանական բնութիւն անպատում գթութ՟ և բարութ՟ քով. և խոստացար կարեկից լինել նոցա, որք ուղիղ մտօք դառնան 'ի մեղաց։ Զի յորժամ առ քեզ հայեսցեն ճշմարիտ ծառայութ՟՝ 'ի ձեռն լման Ա՟ծայնն քոց պատուիրանաց, յայնժամ և ինքեանք համարձակութ՟ կարասցեն գտանել զքեզ քաւիչ և ներող Ա՟ծ։

Ահա այժմ արտասուագին պաղատանօք հայցեմք 'ի քէն, թող զա՟մ անօրէնութիւն մեր. խոնարհեցո առ մեզ զունկն քո, և լուր մեզ նուաստիցս և մեղաւորաց։

Եւ որպէս լուար Եղիայի Թեզբացւոյն , և բանիւ նորա կապեցեր զերկինս՝ առ 'ի զգաստութի̃ անհաւան ժողովրդեանն . և ապա 'ի ձեռն աղօթից նորա՝ սովորական մարդասիրութե̃դ վարեցեալ , հրամայեցեր ամպոց ոռոգանել զա̃մ երկիր շահեկան և բարի ջրով.

Այնպէս և այժմ ջերմագին պաղատանօք նորա՝ ծառային քո , անտես արա զանօրէնութիւնս և զմեղս մեր , և ընկալ զաղաչանս մեր.

Տուր մեզ 'ի ժամուս յայսմիկ , որք յա̃մ սրտէ աղաչեմք զքեզ , և լո՛յծ զչորութիւնս երկրի 'ի ձեռն խոստովանութե̃ և աղաղակի ժողովրդեան քո , և առաքեա՛ 'ի մեզ անձրև բարի , որպէս զի լիացուք ջրով . և երկիր մեր տացէ զպտուղս 'ի ժամանակի իւրում 'ի սնունդ մեր և ամենայն կենդանեաց.

Այո՛ տէր ա̃ծ մեր՝ լո՛ւր մեզ մեղաւորաց և անարժան ծառայից քոց , և մի՛ անտես առներ զաղաչանս մեր . և մի՛ յաղթեսցէ անօրէնութիւն մեր ողորմութե̃ քում . այլ խոնարհեցո՛ տէր զունկն քո , և լո՛ւր մեզ.

Հայեա՛ց 'ի ս̃բ բնակութե̃ քումմէ . և տե՛ս զբեկումն մեր և գթա՛ 'ի մեզ. Տե՛ս զհեծութիւնս անանկաց . տե՛ս զմատաղ մանկունս սաստիկ ծարաւով տանջեալ . տե՛ս զլկանս անմեղ տղայոց . տե՛ս զցամաքեալ ստինս գորովաղէտ մարց. Հայեա՛ց և տե՛ս զլքումն ծերոց և երիտասարդաց և ա̃մ հասակի , որք իբրև զշղթայակապ գերիս մատնեալ կամք 'ի ձեռս անօրինաց.

Եւ արդ՝ անյիշաչար տէր՝ անտե՛ս արա զյանցանս մեր զգիտութե̃ և զանգիտութե̃ , զմտաց և զխորհրդոց , և մի՛ մերժեր զմեզ իսպառ. Բանզի ոչ միայն ծարաւով ջրոյ հալեցաք , այլ նաև այլովք բիւրաւոր զանազան չարեօք վասն մեղաց մերոց. Եւ ահա՛ քեզ ակնկալեալ սպասեմք , զի հեղցես առ մեզ առատապէս զանձրև շահեկան , և զարդար ցասումն քո բարձցես 'ի մէնջ յայսմ դժնդակ գերութեան.

Արդ՝ թախծագին պաղատանօք զերկու ինչ խնդրեմք 'ի քէն մարդասէր , զի զջրհորս և զանդս մեր լցցես

ջրով. և զարտորայս հոգւոց մերոց արբուսցես քաղցրութե՛ կամաց քոց. և զջերմոր սրտից մերոց լի արասցես անպատում ուրախութե՛ և ցնծութե՛. և դադարեցուսցես զաննուաճելի յարձակումն անաստուած աստուածապաշտից, որք յարուցեալ են 'ի վերայ մեր:

Քանզի դու ես աղատարար հոգւոց և մարմնոց մերոց, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Գաղիստոսի պատրիարգին կոստանդնուպօլսոյ

Աղօթք վասն երաշտութեան և փոփոխութեան հողմոց:

### Զտէր աղաչեսցուք:

Բարերար և մարդասէր տէր՝ որ բանիւ միայն արարչագործեցեր զամենայն ստեղծուածս, և յայնմանէ զմարդն կազմեցեր: Իսկ յետոյ քոյով անպատում մարդասիրութե՛դ՝ զանկեալն զայն 'ի ծառայութե՛ մեղաց՝ 'ի վեր առեր և սրբեցեր. զի գործ ձեռաց քոց մի՛ կորիցէ իսպառ. որում յառաջագոյն ազդ արարեր 'ի ձեռն պատուիրանաց քոց զկենդանարար գալուստ քո և զաստուածային մարդեղութիւնդ:

Վասն այսորիկ վաստակեցաք, աշխատեցաք, քաղցեաք, ծարաւեցաք, և լցեր զամենայն վն մեր զմարդավայելուչսն. գնացեր 'ի վերայ ծովու, ելեր 'ի նաւ, և զամեհի ալիս և զբռնութի ծովու սանձեցեր. և զամենայն կիրս կրեցեր, մինչև խաչի և մահու համբերեցեր. ոչ զի զփորձ առեալ տկարութե՛ս մերում, օգնական լինիցիս մեզ տկարացս:

Ինքնին և այժմ սուրբ Թագաւոր՝ որ զհիւանդութիւնս մեր մարդասիրապէս բարձեր, գթա՛ 'ի մեզ որք խռովեալք եմք յոյժ, և կարօտութե՛ հարկաւորացն վշտացեալք: Տուր մեզ զբարութի՛ն քո. արբո՛ զերկիրս մեր մաքուր ջրով 'ի պտղաբերութի՛ սոր, և զօգտակար օդս շնորհեա՛ մեզ:

Այլ ոչ երբեմն զաշակերտսն քո փրկեցեր յընկղմելոյ 'ի խորս ծովուն և'ի հողմոցն բռնութէ ․ նոյնպէս այժմ փրկեա զմեզ 'ի վշտաց , որք հասեալ կալեալ են զմեզ ․ խաղաղացո՛ զխռովութի ծովուն , հանդարտեցո՛ ածային հրամանաւ քով զներհական շնչմունս հողմոց , տուր մեզ զանդորրութի և զհանգիստ 'ի տրտմական խռովութեց ․

Այո՛ տէր յս քս ած մեր , հայեաց և տես 'ի մբ բնակութէ քումմէ յայդիս յայս , և դարման տար սմա զոր տնկեաց աջ քո ․ և տուր մեզ հոգի ուղիղ զերծանել յեկեալ հասեալ վնասուց աստի , բարեխօսութբ անարատ ծնողի մոր քո , և ամ սրբոց , ամէն ․

Նորին այլ աղօթք վասն երաշտութեան ․

## Օ տէր աղաչեսցուք ․

Տէր ած մեր՝ որ 'ի հողոյ արարեր զմարդն , և զակերպաւորեցեր , և գեղազարդեցեր անպատում մեծութբ և մարդասիրութբ քո ․ և միանգամայն ասել , 'ի ձեռն գեղեցկութե արտաքին պատկերին՝ զնկարագիրսն բանական հոգւոյն սքանչելապէս ցուցեր ․

Այլ թէպէտ զփառսն և զպայծառութիւն զոր յառաջագոյն ետուր նմա սքանչելի արարչագործութբ քով , կորոյս վայրապար վասն ճաշակման դառն հեշտութեն ․ սակայն յետոյ ընկալաւ 'ի ձեռն միածնի որդւոյ քո և տեառն և այ , և փրկչին մերոյ յսի քսի ․

Այլ քանզի յերկուց զնա հաստեցեր 'ի հոգւոյ և'ի մարմնոյ ․ զիմանալի և զաննիւթ հոգին՝ ածային և հոգևոր բանիւք սնուցեր , և արժանի արարեր զնա փառաց և մեծութեան քո ․

Իսկ զմարմինն՝ զգալի արեգակամբս , և օդոյն բարեխառնութբ , և'ի սոցունց յառաջացեալ կերակրովք սնուցեր , և հետզհետէ աճեցուցեր և պահպանեցեր ․

Որ բանաս զձեռն քո ըստ մարգարէական բանին , և լցուցանես զամ բանական և անբան բնութի քաղցր բարեհաճութբ ․ զքեզ աղաչեմք և'ի քեն հայցեմք 'ի հօրեդ

տեառն մերոյ յի՟ի քի՟ի , զմաքրութիւն հոգւոց մերոց առնուլ կատարմամբ պատուիրանաց քոց . արա՛ առաւել ս՟բ քան զձիւն ներգործութ՟բ և շնորհիւ ս՟բ հոգւոյն . որպէս և միածին որդին քո ասաց , թէ փայլեսցին նոքա իբրև զարեգակն ։

Իսկ մարմնոյ մերոց՝ որ ապականեալ եղեն անօրէնութ՟բ , և աղտեղացան անառակութ՟բ , պարգևեա՛ առողջութիւն , և զերծումն յայսոցիկ վատթարութե՟ց ։

Օ՛ բարեխառն և զօգտակար օդս շնորհեա՛ մեզ . զանձրևս խաղաղական առաքեա՛ յերկիր 'ի պտղաբերութի՟ . արբեցո՛ զակօսս սորա մաքուր ջրով 'ի մնունդ մեր և անասնոց . դադարեցո՛ զսուրն յարուցեալ 'ի վ՟ր մեր . և մի՛ անտես առներ զաղաչանս մեր նուաստ և անարժան ծառայից քոց 'ի ժամուս յայսմիկ ։

Լուեա՛ քաղցր ականջ 'ի ս՟բ բնակութե՟ քումմէ , և լո՛ւր մեզ անարժան աղաչողացս , շարժեալ 'ի գութ բարեխօսութ՟բ ա՟մ սրբոց քոց ։

Որպէս զի այսու ամի՟ բարեգթութ՟բ փառաւորեսցի ամենապատիւ և մեծավայելուչ անուն քո հօր՝ ընդ միածնի որդւոյդ և ընդ սրբոյ հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

## Կանոն

Վասն երկրաշարժի արարեալ 'ի Յովսեփայ ։

### Նրէ , ա՟ . ձէկ . Որպէս 'ի ցամաքի գնացեր ։

Ահաւոր է յոյժ բարկութի՟ քո , յորմէ զերծուցեր զմեզ տէր , և ոչ խորասոյզ արարեր յանդունդս երկրի զամենեսին զմեզ գլխովին . վասն որոյ գոհութ՟բ զքեզ փառաւորեմք ։

Յա՟մ ժամ կամիս ուղղել զմեզ տէր , վասն այսորիկ որպէս չնչին տերև շարժես զա՟մ երկիր , յերկիւղ ք՟ո հաստատելով զհաւատացեալս ։

փրկեա՛ տէ՛ր յահաւոր գետնաշարժէ զամենին զմեզ · և մի՛ թողուր կորնչել խաշն ժառանգութեան քում · որ բարկացուցանէ զերկայնամիտ տէրդ զանազան չարեօք ։

### Աստուածածնէ ։

Պաղատանօք գոչեմք առ քեզ մա՛յր այ , զանվրական գթութիւն քո կարեկցութե՛ ցուցանելով քաղաքի քում և ժողովրդեան , զերծո՛ զամենեսին յահագին գետնաշարժէ և յապականութենէ ։

### Կցրդ · Է · Տեսէ՛ք տեսէք ։

Շարժելով զբովանդակ երկիր հայեցուածով քո թագաւո՛ր ամենեցուն , ահաբեկ արարեր զմիտս մեր · այլ անցո՛ գը՛թած տր զցասումն քո ՚ի մէնջ , և մի՛ տար յեղծումն զբովանդակ ժողովուրդ քո ։

Ո՛վ հաճեցուցէ զքեզ վասն ժողովրդեան քո , որ միշտ ծածկի զանազան պարտեօք անօթոյ · և կասկածի կորնչել ՚ի բարկութէ քումմէ , յորմէ զմեզ քո ողորմութե՛ քով ապրեցո՛ ։

Ցուցեր այժմ զերկիւղ քո ք՛ս , և ահաւոր հայեցուածով զհիմունս երկրի սասանեցուցեր · այլ ցոյց դարձեալ զանվրական ողորմութիւն քո ողորմած , զի մի՛ կորիցուք չարաչար ։

### Աստուածածնէ ։

Ո՛վ կարէ առանց քեզ սրբուհի անարատ հաշտեցուցանել զած ընդ մեզ , որ ցասուցեալ է ընդդէմ մեր · վն որոյ աղաչեմ զած դադարեցուցանել վաղվաղակի զսասանումն երկրի , որ սպառնայ սատակել զմեզ ։

### Կցրդ · Ը · Ոչ գոյ սուրբ որպէս զքեզ ։

Երկիր տանջի վն չարաչար վարուց մերոց , որ միշտ շարժէ զբարկութի քո ՚ի վերայ մեր · այլ դու բարեգութ տէր թագաւոր ամի խնայեա՛ ՚ի ծառայս քո ։

Շարժելով քո զերկիր, և դարձեալ հաստատելով, կամեցար խրատել զմեզ և դարձուցանել ո՛վ բարեգութ տէր, և յա՟ծային երկիւղ քո հաստատել։

Փախիցուք ՚ի մեղաց եղբարք, որ ծնանի զմահ դառնագոյն, վէրս անբժշկելիս, և շարժմունս երկրի, և զապաշխարութիւն ցուցցուք առ ա՟ծ։

## Աստուածածնի։

Ա՟ծածին անարատ՝ անդադար բարեխօսեա՛ առ միայն բարի բանն ա՟ծ փրկել զամենեսին ՚ի բարկութ՟է սաստի գետնաշարժես, զքեզ աղաչեմք։

## Ձյն · Գ · Ք՟է իմ զօրութիւն։

Շարժես տէր զերկիր, զի կամիս հաստատել զամենեսին զմեզ ՚ի հաստատուն ճշմարտութ՟ե, որք սասանեալ եմք ՚ի բաղխմանէ նենգաւոր պատերազմողին։

Ա՟ծային ակնարկութ՟բ քո շարժես զամենեսեան, և խռովես զսիրտս բնակչաց երկրի. արդ՝ հանդարտեցո՛ զկոհակս իրաւացի բարկութեան քո տէ՛ր։

Շարժմամբ ա՟մ երկրի երկեցուցանես զերկրաւորս, որք ոչ ունին զերկիւղ քո ՚ի սիրտս իւրեանց. այլ ըստ սովորութ՟ե քում սքանչելի՛ արա զողորմութի՟ւ քո ՚ի մեզ ո՛վ միայն բարի կարեկից։

## Աստուածածնի։

Բնակարան ա՟ծութ՟ե ճանաչելով զքեզ տիրուհի, ՚ի տաճարի քում սրբութ՟ե զձեռս մեր համբառնալով աղաչեմք. տե՛ս զտառապանս մեր, և օգնեա՛ մեզ։

## Ձյն · Ե · Ա՟ծային ճառագայթիւք քո։

Տեսանելով այժմ զարժանահաս սպառնալիս ա՟յ, սարսեա՛ց սիրտ իմ և աղաղակեա՛. տէ՛ր բարեգութ՝ խնայեա՛ ՚ի ժողովուրդ քո, և դադարեցո՛ զիրաւացի ցասումն քո ՚ի մէնջ։

Օ՜ քաղցր և զժողովուրդ քո՝ զոր քոյով արեամբ ստացար Յս , աղաչանօք առաքելոցն դասուց՝ մի՛ մատնեսցես 'ի կորուստ , 'ի խռովեցուցանել քո զերկիր ահագին շարժմամբ ։

Մոլար մտօք խոտորելով յուղիղ ճանապարհաց քոց , 'ի սրտմտութին դարձուցաք զքեզ զկարեկիցդ և զանյիշաչար · այլ դու բարեգութ՝ քաւիչ լեր ծառայից քոց և ողորմեա՛ ։

Աստուածածնի ։

Այժմ է ժամանակ օգնութեան · այժմ է ժամանակ հաշտեցուցանելոյ զմեզ ընդ որդին քո և տէր · որպէս զի ողորմեսցի մեզ որք բարկացուցաք զած , և զերծուսցէ յարժանահաս բարկութենէս ։

Կցրդ · Զ · Ծով կենցաղոյս ։

Տէր , ոչ ունելով համարձակութի մեք նուաստքս աղերսել առ բարձրեալդ , զընտրեալ հրեշտակս քո բարեխօս առնեմք , աղօթիւք նոցա ապրեցո զմեզ 'ի բարկութենէ քումմէ ։

Այժմ ծանեաք տր զողորմութի քո , զի 'ի շարժել քո զերկիր՝ ոչ խորասոյզ կորուսեր զմեզ զչարաչար յանցաւորքս · վասն որոյ գոհութի քեզ Ք՛ս երկիր պագանեմք ։

Հրամայես շարժիլ հիմանց երկրի տէ՛ր , որպէս զի մեք նուաստքս անշարժ կացցուք 'ի բարի վարուց առաքինութեանց , և երկիւղիւ քով հաստատեսցուք 'ի նմա ։

Աստուածածնի ։

Մայրն այ սրբուհի՝ տարակուսեալ ժողովրդեան քում ողորմեա՛ · և մայրական բարեխօսութբդ զցասումն այ որ կայ 'ի վր մեր՝ փոխարկեա՛ այժմ 'ի քաղցրութի , զքեզ աղաչեմք ։

Կցրդ · Է · Յօղաբուղխ զշնոցն ։

Առաւել գովեալ ես երկայնամիտ տէր , զի ոչ 'ի մահ մատնեցեր զծառայքս քո ահագին պատուհասամբ և

լե

շարժմամբ երկրի · այլ միայն ահաբեկ առնելով զմեզ, կամեցար զդառնալն մեր 'ի չարեաց և զկեալ:

Օ հեծութեան սրտի մերոյ վերառաքեսցուք արտասուօք · ողջ զի քաւիչ ունիցիմք զտէր քն, որ սպառնայ շարժմամբ չարաչար կորուսանել զմեզ վասն բազմութեան մեղաց մերոց:

Վայ կարդասցուք անձանց մերոց, և համբարձցուք զձեռս առ բարձրեալն Աստուած, և դադարեսցուք 'ի գործելոյ զչարիս · քանզի փրկիչն մեր ցասուցեալ սասանեցուցանէ զամենայն երկիր, կամելով հաստատել զմեզ յերկիւղ իւր:

Աստուածածնէ:

Ականարկեա՛ անարատ` փրկել զմեզ բարեխօսութեամբ քո 'ի սպառնալեաց սաստի 'ի վերայ հասելոց, որք հանդերձեալ եմք եղծանիլ բարկութեամբն Աստուծոյ, և մեծ և սոսկալի սրտմտութեամբ նորա, վասն բազմութեան մեղաց մերոց:

Ն,չէ · Ը · Ի բոցոյ սրբոցն:

Յիրաւացի բարկութիւն քումդ` որ յանկարծակի եկն 'ի վերայ մեր, խռովեցաք մարդասէր · և խրատու յուսահատեցաք, տեսանելով զքեզ ցասուցեալ 'ի վերայ մեր:

Մեք հաւատացեալքս 'ի վեր համբառնամք զձեռս և զաչս առ տէր` որ միայն կարող է փրկել, աղաղակելով · մարդասէր Քրիստոս` դարձո՛ 'ի մեզ զողորմութիւն քո:

Բանակք հրեշտակաց, և ժողով մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, սրբադասուար հայրապետաց և ամենայն սրբոց` առ քեզ պաղատին, խնայեա՛ տէր 'ի սասանեալ ժողովուրդ քո:

Որ գիտես զտկարութիւն մեր, զի դիւրամեղ եմք և անուղղելի · դարձի՛ր 'ի բարկութենէ քումմէ, և հանդարտեցո՛ զխռովութիւն · և ողորմեա՛ մեզ ողորմած ողորմութեամբ քով:

Աստուածածնէ:

Ո՛վ կարեկից Աստուածածին, որ ծնար զփրկիչն մեր զկարեկիցն բարի, տես զչարչարանս և զհեծութիւն ժողովրդեան քո, և փութացի՛ր աղաչել զի ողորմեսցի մեզ:

## Աղօթ․ Ժ․ Զա͞ծ տեսանել մարդկան անկարելի։

Ահա մեք ամենեքին յանցեաք, և երկիրն ոչ ինչ մեղուցեալ պատուհասի․ քանզի ՚ի խրատել զմեզ մարդասէրն, զերկիրն ա͞ծ սասանեցուցանէ․ ապա զգաստասցուք, և զփրկութենէ մերմէ հոգասցուք։

Որ ժամուց և ժամանակաց ես տէր, ՚ի մեում վայրկենի կամեցար կործանել զծառայքս քո, բայց արգելար ՚ի բազում գթութենէ քումմէ․ վասն որոյ գոհանամք զքէն միայն մարդասէր։

՚Ի գետնաշարժէ, ՚ի սրոյ, ՚ի գերութենէ, և յորշաւանաց հեթանոսաց, և ՚ի չարաչար արկածից, և ՚ի սովէ, և յայլ ա͞մ վշտաց, ողորմած տէր ք͞ս փրկեա զքաղաքն քո և զա͞մ գաւառն, որք հաւատով օրհնեն զքեզ։

Երկիրն անբարբառ լեզուաւ գոչէ հեծեծանօք, ո՛վ մարդիկ՝ ընդէ՞ր դուք չարեօք ձերովք զիս պղծէք, և տէր ՚ի ձեզ խնայելով զիս պատուհասէ․ զգաստացարո՛ւք և ապաշխարեցէ՛ք, զի դարձցի ա͞ծ յարդար ցասմանէն։

### Աստուածածնի։

Կոյս անապական՝ ա͞ծային շնորհաց ընդունարան, մայրական գթութ͞ք բարեխօսեա առ տէր՝ դարձուցանել զցասումն իւր ՚ի մէնջ, և ապրեցուցանել զմեզ յապականութենէ ՚ի գետնաշարժէ և յա͞մ նեղութենէ։

---

Տաղք վասն գետնաշարժի։

## Աղօթ․ ԺԱ․ Երկնայնոյն դասուց։

Որ զա͞մ հիմունս երկրի սասանեցուցանես ա͞ծ․ որ միայն խաղաղեցուցանես զծով լռիւ իւրով․ ո՛վ ստեղծող բոլորից փրկեա զմեզ յահագին սպառնալեաց գետնաշարժիս, վասն բազում գթութեն քո մարդասէր։

Որ միայն ես բազումողորմ և ամենազօր ք͞ս փրկիչ,

բարեխօսութ՟բ ած՟ածնին և ամ՟ սրբ՟ց , 'ի սովէ , 'ի ժանտախ
տէ , 'ի գետնաշարժէ , 'ի սրոյ հեթանոսաց , 'ի յընկղմանէ
զերծ ո՛ միշտ զքաղաքն , որ զքեզ հաւատով փառաւորէ .

Արժանահաս բարկութ՟բ քով՝ որ յանկարծակի եկն
'ի վերայ մեր , մի՛ խորասոյզ առներ զմեզ ողորմած , և
մի՛ ցրուեր զուխտ քո , և մի՛ սրտմտութ՟բ բարկութեան քո
խրատեր զմեզ · այլ զխռովութ՟ի գետնաշարժիս հան_
դարտեցո՛ , և ողորմեա՛ ժողովրդեան քո .

Այլ տաղ գետնաշարժի .

## Սղմ · ճձ՟ .

Սասանելով երկրի յահէ բարկութեան քո տէ՛ր , լերինք
և բլուրք խռովին · այլ աչօք քաղցրութեան հայեցեալ 'ի
մեզ , մի՛ սրտմտութ՟բ քով բարկանայցես մեզ · այլ գթացեալ
'ի գործս ձեռաց քոց , ազատեա՛ զմեզ յահագին սպառ_
նալեաց շարժմանս , որպէս բարերար և մարդասէր .

## Սղմ · ճկ՟ .

Նինուէացիք լսէին զկործանումն իւրեանց 'ի խորո
երկրի սպառնալեօք շարժման · իսկ օրինակաւն յովնա_
նու՝ որ յետ երից աւուրց յարեաւ 'ի թաղմանէ 'ի փո_
րոյ կիտին , յորդորեցան եռօրեայ ապաշխարութ՟բ յառ_
նել 'ի խորոց մեղաց · այլ որպէս եռօրեայ գոչման ն՟ց
ընդ տղայոց և ընդ անասնոց գթացար , եռօրեայ յարութ՟բ
քով խնայեա՛ 'ի մեզ 'ի պատուհասեալքս , և ողորմեա՛ .

## Սղմ · ճկ՟ .

Ահաւոր ես տէր , և ո՛վ հանդուրժեսցէ իրաւացի
բարկութեան քում · կամ ո՛վ ցածուսցէ զցասումն քո · և
կամ ո՛վ աղաչեսցէ զքեզ բա՛րերար՝ վ՟ն ժողովրդեան մե_
ղուցելոյ և անյոյս եղելոյ . Երկնային դասք՝ հրեշտակք ,
պետութ՟իք և իշխանութ՟իք , աթոռք , տէրութ՟իք , քերովբէք
և սերովբէք վասն մեր առ քեզ գոչեն · սբ՟՝ սբ՟՝ սբ՟ ես
տէր , զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ · վասն

գթութ̃ց ողորմութ̃ քո բարերար՝ պահեա՛ զքաղաքս վտանգաւորեալ։

Փառք Հօր և Որդւոյ և"։ Եւ այժմ և միշտ և"։

Ի- Երգէ առաջնոյ ժամամուտս չորս հայցուածս · ԺԷ ·

Արքունական Թագաւոր՝ մարդասէր երկայնամիտ և բազումողորմ Տ̃ր, հայեա՛ց 'ի ս̃բ բնակութենէ քումմէ, տե՛ս զտառապանս մեր, տե՛ս զչարչարանս մեր, մի՛ սրտմտութ̃ քով յանդիմաներ զմեզ, և մի՛ բարկութ̃ քով խրատեր։

Մի՛ մատնեսցես յարշաւանս վայրենի ազանց, կամ 'ի ձեռս բարբարոսաց, կամ 'ի վիհս անդնդոց. մի՛ գուցէ ասասցեն հեթանոսք, թէ ո՞ւր է ա̃ծ նոցա։

Այլ մեք ժողովուրդք քո և խաշն արօտի քո, և զանուն քո կարդամք որ բնութ̃ ես բարի, հովանի և պաշտպան լեր քաղաքիս այսորիկ։

Բարեխօս ունիմք զա̃ծածինն, զպարս առաքելոց, և զբազմութի̃ մարտիրոսաց, ընկա՛լ զաղաչանս մեր վասն ժողովրդեան մեղուցելոյ և անյոյս եղելոյ, և կեցո՛ անոխակալ զժառանգութիւն քո։

Աղօթք վասն սպառնալեաց գետնաշարժի։

Զտէր աղաչեսցուք·

Ա̃ծ մեծ և ահաւոր և սքանչելի, հզօր և ճշմարիտ, որ զա̃մ ինչ հաստատես և փոփոխես. որ հայիս յերկիր և տաս դողալ սմա, մերձիս 'ի լերինս և ծխին. որ զհիմունս երկրի սասանեցուցանես ակնարկութ̃ քով։

Որ զա̃մ ինչ սարսի և դողայ յերեսաց ահի զօրութ̃ քո. և որչափ սաստիկ է բարկութի̃ սպառնալեաց քոց 'ի վերայ մեղաւորաց, անչափ և անքննելի են ողորմութի̃ք աւետեաց քոց։

Ինքնին տէր՝ յիշեա՛ զգթութի̃ս քո, և զողորմութի̃ս քո շնորհեա՛ մեզ, զի յաւիտենից են, Հաստատեա՛ զատեղծ-

ուածս . ամրացո՛ զերկիր . հանդարտեցո՛ զշարժումն սորա . դադարեցո՛ զտատանեալ տիեզերս . և մի՛ կորուսաներ զմեզ ըստ անօրէնութ՟ե մերում . և մի՛ դատապարտեր զմեզ 'ի խորս երկրի վասն մեղաց մերոց ։

Զի դու ես Ա՟ծ ողորմութ՟ե և փրկութ՟ե, և քեզ փառս երառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Այլ աղօթք վասն սպառնալեաց գետնաշարժի ։

Զտէր աղաչեսցուք ։

Սուրբ Թագաւոր՝ մարդասէր և երկայնամիտ տէր, ա՟մ զգալի և իմանալի ստեղծուածոց արարչագործ . որ զա՟մ ինչ կրես բանիւ անպատում զօրութ՟ե քո ։

Որ միայն ունիս իշխանութիւն կենաց և մահու . որ խրատես արդարութ՟ը , և մարդասիրապէս դարձեալ բժշկես . որ զառժամանակեայ կեանս մեր՝ ամենիմաստ տեսչութ՟ը քով կառավարես , և յամենուստ զփրկութ՟ի մեր անօրինես ։

Դիտեմք երկայնամիտ տէր՝ զի վասն մեղաց մերոց շարժեցեր զերկիր , և խռովեցուցեր զսա . և ահ և դողումն եկն 'ի վերայ մեր յերեսաց բարկութ՟ե քո ։

Սիրտ մեր խռովեալ է պատուհասօքն երկրի , և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ մեր շարժմամբ սորա . մի՛ գուցէ յափշտակիցէ որպէս զաւիւծ զանձինս մեր , և ոչոք իցէ որ փրկիցէ , և ոչ որ կեցուցանիցէ ։

Վասն այսորիկ աղաչեմք և խնդրեմք 'ի քէն՝ միայն անոխակալ տ՟ր , մի՛ յիշեր զանօրէնութ՟ս մեր զառաջինս և զայժմուս . և մի՛ զուգակշիռ ծանրութ՟ե մեղաց մերոց հատուցաներ զարժանաւոր հատուցումն , և մի՛ ըստ անօրէնութ՟ե մերում հատուցաներ զմեզ ։ Զի եթէ մտանիցես 'ի դատաստան ընդ ազգիս մերում ընդ այսմիկ , ոչոք արդարասցի առաջի քո . այլ կորիցէ յերկրէ յիշատակ մեր ամենեցուն ։

Յիշեա՛ երկայնամիտ տ՟ր՝ զգթութ՟ս քո և զողորմութ՟

քո որք են յաւիտենից , և զճշմարիտ ուխտն քո առ հարսն մեր · և մի՛ կլցէ զմեզ անդունդ երկրի , և մի՛ կափուսցէ զբերան իւր 'ի վերայ մեր :

Այլ գթա՛ 'ի մեզ 'ի խորտակեալքս · և ողորմեա՛ տառապելոցս և վրդովելոց յաճախ սպառնալեաց շարժմանս · և ա՛յց արա մեզ , որ ըմբռնեալ եմք բազում դողմամբ և երկիւղիւ :

Իսկ եթէ գտանիցին սակաւ ոմանք 'ի մեզ , որք երկնչին յանուանէ քումմէ , և պահեն զպատուիրանս քո , որք են սերմն օրհնեալ , և գանձ թագուցեալ , զորս դու միայն գիտես և պահես · լո՛ւր և նոցա որպէս բարերար՝ որք աղաչեն վասն մեր անարժանից զբարերարութիւն և զկարեկցութիւն քո :

Եւ ո՛չ երբեմն ընկալար զաղաչանս աբրահամու վ՟ն սոդոմացւոց , և դանիէլի և երեմիայի ա՟ծային մարգարէից քոց՝ վ՟ն փրկելոյ զիսրայէլ 'ի գերու՟ե · ընկա՛լ և այժմ զաղաչանս երկիւղածաց անուան քո մա՛րդասէր ա՟ծ՝ զոր մատուցանեն առ քեզ վասն ժողովրդեանս մեղուցելոյ · որպէս զի ազգէ յազգ փառաւորեսցի անսահման խորք մարդասիրութե՟ն և երկայնմտութե՟ն քո :

Եւ մեք կարող աջով քո զօրացեալք՝ մատուցուք քեզ պատարագ գոհու՟ե զդարձ և զապաշխարութի՟ն մեր , աղօթիւք և բարեխօսութե՟ն անարատ մօր քո և ամ՟ն ս՟րց՝ որք 'ի յաւիտենից հաճոյ եղեն քեզ , ամէն :

Այլ աղօթք վասն սպառնալեաց գետնաշարժի :

Օ տէր աղաչեսցուք :

Տեսչօղա տէր յ՟ս ք՟ս ա՟ծ մեր , անսպառ աղբիւր գթու՟ե , անհետազօտելի խորք մարդասիրու՟ե , անսահման անդունդ երկայնմտութե՟ն և քաղցրութե՟ն :

Որ և ըստ առատ մարդասիրութե՟ն քում տաս ազգի մարդկան առ իւրաքանչիւր օգուտ զվէրս և զհարուածս ազգէ յազգ · զի զանզղուսպն և զդիւրաշարժն 'ի մեղս՝ որպէս երասանաւ ա՟ծային երկիւղիւ քով զսպեսցես ·

զի մի՛ անկարգաբար շարժեսցի ընդդէմ ածային պատ_ կերին զոր ունի յինքեան , և մի՛ զազնուունի հոգւոյն չարաչար անարգեսցէ ։

Կացո՛ աղաչեմք զահաւոր շարժումն երկրի , և զան_ սովոր տատանումն սորա , որում այժմ արդարութ̃ հրա_ մայեցեր շարժիլ ՚ի կորուսանել զմեզ ․ որպէս զի սովին ծանուսցես մեզ զշարժիլն մեր և զյարձակիլն առ ած մեղս ընդդէմ բնութեն զոր սահմանեցեր ՚ի մեզ , և վասն այնորիկ իրաւամբք թողուլն քո զմեզ ։

Քանզի եթէ մեք զպատուիրանս քո պահեալ էաք , և ՚ի մէջ սահմանի մերոյ կացեալ , ոչ այժմ ամենազօր հրա_ մանաւդ շարժէիր զերկիր ՚ի ջնջել զմեզ ․ և ոչ նա փոխ_ եալ զանշարժական բնութի իւր , խնդրէր կլանել զմեզ ։

Եւ յիրաւի մեզ արդարադատ տէր , քանզի ոչ առնեմք զհրամանս թագաւորութեն քո , և ոչ երկնչիմք յարդար բարկութե քումմէ որ գայ ՚ի վր մեր , ոչ առնելոյն զնս ․ այլ առնեմք զչարիս առջի աչաց քոց , ատելով զմիմեանս , նախանձելով միմեանց , և բարկանալով ՚ի վր իրերաց ։

Զսէրն մերժեցաք ․ զեղբայրսիրութին ՚ի բաց ընկե_ ցաք ․ զողորմութին հերքեցաք ․ զարծաթսիրութին սիրե_ ցաք ․ ագահութե հետևեցաք , և զանստացութին անգոսնե_ ցաք ․ զորկորամոլութին և զհեշտասիրութին սիրեցաք ։ Իսկ պահոց և ժուժկալութե ոչ փափագեցաք ․ և միան_ գամայն ասացից , զամ պատուիրանս քո ապախտ արա_ րաք ․ և զամ մեղս գործեցաք ․ վասն այսորիկ ասէ , գայ բարկութին այ ՚ի վերայ որդւոյն անհաւանութե ։

Այսոքիկ չարութե մերոյ վարձք , այսոքիկ չար և պիղծ գործոց մերոց պատկանաւոր հատուցումն ․ այսոքիկ ատելութե և հպարտութե , և ծածուկ և յայտնի անօրէ_ նութեց մերոց դժնդակ փոխարինութիք ․ որք ածէն ՚ի վերայ մեր մահաբեր պատիժս ․ երկրաշարժութի , սով , ժանտախտ , և արշաւանս այլազնեայ թշնամեաց ․ և հուսկ ապա զանտանելի և զանվախճան տանջանս ։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վս անուան քո սբյ ․ և մի՛ կենդանւոյն կլցէ զմեզ երկիր վս մեղաց մերոց ․

զի մի՛ զժամանակ դարձի մերոյ և ապաշխարութեան կորուսանիցեմք Թշուառականքս ։

Զի որովհետև բազմիցս զապաշխարութիւն խոստացաք, և բազմիցս քեզ Այ̄դ մերոյ ստեցաք. վ՞ն որոյ ըստ անպտուղ Թզենւոյն դատեցեր հատանել զմեզ. և հրամայեցեր երկրի ծածկել զմեզ որպ̄ զդադան և զաբիրոն ։

Դու այժմ ես երկայնամիտ լեր մարդասէր Տ̄ծ, որ ոչ կամիս զմահ մեղաւորին, որպ̄ զդառնալն նր̄ և զկեալ. որ եօթանասնեկին եօթն ներել մեղաց եղբաւրցն հրամայեցեր ։

Մի՛ կորուսաներ զփոքրիկ հօտ քո զայս, որ բեկեալ է երկիւղիւ, և հեծեծանօք նուաստացեալ, և սաստմամբ երկրի վրդովեալ, և յամենուստ տարակուսեալ ։

Դու յիշեա՛ երկայնամիտ զգթութիս քո և զողորմութիւնս քո. յիշեա՛ զի միտք մարդոյ ի խնամս չարին են արձանացեալ ի մանկութենէ իւրմէ. և չիք որ մաքուր ի մեղաց առաջի քո ։

Դու՛ այժմ մարդասէր զգթութի քո, զի և մեք յանձնառու քաղցրութիս քո վայելեալք, գոհացուք յա̄մե զահաւոր և զփառաւորեալ գործոց քոց, զորս արարեր և առնես ընդ մեզ ընդ անարժանքս՝ ըստ անսահման և անհաս մարդասիրութեան քում ։

Եւ քեզ վայելէ փառք ընդ հօր և ընդ ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Մեղեդի · Ձ̄կ ·

Տէր մի՛ սրտմտութ̄բ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

Մի՛ դարձուցաներ զերեսս ի ծառայէ քումմէ, զի նեղեալ եմ ես վաղվաղակի լո՛ւր ինձ ։

Պօղոսի առաքելոյն յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուած ։

Եղբարք՝ զոր սիրէ Տ̄ր խրատէ, տանջէ զա̄մ որդի՝ զոր ընդունի ։ Ի խրատու համբերութե կայք, իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Տ̄ծ. ո՞ր որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր ։ Զի եթէ առանց խրատու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն. ապա խորդք իցէք՝

և ոչ որդիք ։ Զի եթէ ՚ի մարմնաւոր հարցն մերոց՝ զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք , ո՞րչափ ևս առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոց՝ և կեցցուք ։ Զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն . իսկ նա վասն օգտի , առ ՚ի ընդունելոյ զսրբութի՟ նորա ։ Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութե՟ թուի՝ այլ տրտմութե՟ . բայց յետոյ պտուղ խաղաղութե՟ նովաւ կրթելոցն հատուցանէ յարդարութե՟ ։ Վասն որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս հաստատեցէք . և զշաւիղս ուղի՛ղս արարէք ոտից ձերոց , զի մի՛ որ կաղն իցէ՝ գլորիցի , այլ մանաւանդ բժշկեսցի ։

Ալէլուիա ։

Ած՟ մերժեցեր և աւերեցեր զմեզ , բարկացար և գթացիր ՚ի մեզ ։

Սուրբ աւետարանս որ ըստ Մատթէոսի ։

Յայնմ ժամանակի՝ իբրև եմուտ Յս՟ ՚ի նաւ , գնացին զկնի նորա աշակերտքն նորա ։ Եւ ահա շարժումն մեծ եղև ՚ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի , և ինքն ննջէր ։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն . տէ՛ր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք ։ Եւ ասէ ցնոսա . ընդէ՞ր վատասիրտք էք սա՛կաւահաւատք . յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն , և եղև խաղաղութի՟ մեծ ։ Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին . ո՞րպիսի ոք իցէ սա՝ զի և հողմք և ծով հնազանդին սմա ։

Այս հատուածն ճաշայէն պատարագին . և յորժամ քահանայն հաղորդի սուրբ խորհրդոյ և արեան չէնարարին , էջմիածէն դպիրքն ասեն ։

Ո՛ հայի յերկիր , և տայ դողալ սմա , ալէլուիա ։

## Կանոն 'ի սուրբ և համագոյ և կենդանարար և անբաժանելի երրորդութեն, և յամ սբս, վասն ապաշխարողաց ժամանակին։

### Ձյն, ա. դկ. Օ կուսածորն փարաւոն.

Ամենագործ և նոյնագոյ, աթոռակից և համազօր, եռանձնեան աստուածութիւն, հայր և որդի և սուրբ հոգի, զերծո՛ զմեզ զծառայքս քո 'ի դժնդակ հիւանդութենէս. որպէս զի գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ։

Փոթորիկ մեղաց ալեկոծէ զմեզ, և անընդհատ հիւանդութիւնք ըստ օրինակի երեքպատեան մրրկաց խռովեցուցանեն. ամենասուրբ երրորդութիւն միայն մարդասէր՝ գթա՛ և կեցո՛ զմեզ, որ կորնչիմք չարաչար։

Երրորդութիւն անբաժանելի ազատեա՛ զմեզ զծառայքս քո 'ի բազում մեղաց մերոց, և ցօղով ողորմութեան քո շիջո՛ զտապ տոչորման մերոյ, և շնորհեա՛ մեզ առողջութիւն 'ի դժնդակ հիւանդութենէ աստի. որպէս զի ողջամիտ հաւատով օրհնեսցուք զքեզ։

### Աստուածածնի.

Ամենասրբուհի՛ որ ծնար զաղատիչն և զամենագործն և զտէր, զբարձօղն մեղաց մերոց, բարեխօսեա՛ առ նա ազատել զծառայքս քո 'ի դժնդակ հիւանդութենէ աստի. զի դու ես օգնական ազգի մարդկան։

### Ձյն. գ. Երկնային կամարին.

Բարերար փրկիչ՝ աղաչանօք երկնային հոգւոց հրեշտակացն դասուց, աթոռոց և պետութեանց, զօրութեանց և տէրութեանց, զերծո՛ զծառայքս քո 'ի ժամանակական հիւանդութենէս։

Զանսահման խորս մարդասիրութե՟ քո ցուցանելով ամենազօր տեսչութեա, զերծ ո՛ զծառայս քո ՚ի մահաբեր ցաւոյ աստի և ՚ի դժնդակ ախտից, միայն մարդասէր։

Որպէս պատրաստական պաշտօնեայք ա՟յ ա՟մ հոգիք, հրեշտակք և հրեշտակապետք՝ պաղատեցէք առ տ՟ր բառնալ զհիւանդութի՟ն, հալածել զժանտախտն, և ազատել զմեզ ՚ի մահաբեր վնասէս։

## Աստուածածնի։

Անսահման անդունդն բարեաց տ՟ր յ՟ն ք՟ս, որ մարմնացաւ առ ՚ի քէն ո՛վ գերամբիծ կոյս, արար զքեզ աղբիւր բժշկութե՟. աղաչեմք զքեզ, փրկեա՛ զծառայս քո որ տառապիմք ՚ի հիւանդութե՟։

## Նրգ · Է · Դու իմ ք՟ս տէր։

Այժմ ստուերք մահու պատեցին զմեզ, և մերձեցաք ՚ի դրունս գերեզմանին. այլ դու փրկիչ՝ պահեա զմեզ որպէս կարող, սքանչացո՛ զողորմութի՟ս քո. որ կեցուցանես զայնոսիկ, որք աներկբայ հաւատով գոչեն, փառք զօրութեան քում մա՛րդասէր։

Խորհրդածուք ականատեսք և քարոզք ք՟սի, որք առիք պարգև զբժշկութի՟ս, և եղէք բժիշկք հոգևորք, ազատեցէ՛ք զմեզ ՚ի տառապանաց հիւանդութե՟ս, աղաչելով զյ՟ն զփրկիչ մեր և տէր։

Մ՟րրիկ մեղաց եհաս այժմ առ մեզ, և ալիք հիւանդութե՟ փոթորկեն. անընդհատ ցաւք խորասոյզ առնեն, նեղութի՟ք և տխրութի՟ք գտին զմեզ. ո՟վ առաքեալք ք՟սի՝ պաղատանօք ձերովք ձեռնտու և օգնական լերո՛ւք մեզ։

## Աստուածածնի։

Դժնդակ և անդադար ցաւօք հարուածեալք, անկանիմք առաջի քո սուրբ կոյս. հզօր պաշտպանութ՟բ քով կեցո՛ զմեզ զամենեսին։

Գթա՛ ով տիրուհի հարսն ա՟յ, և լե՛ր բարեխօս առ տ՟ր՝ ազատել զմեզ ՚ի ժանտախտէ և ՚ի դժնդակ հիւանդութենէ, և բժշկել զցաւս մեր։

## Աղօթք · Ե · Ընդէ՞ր մերժեցեր զմեզ ·

Ծայրին քաղցրաշունչ հողմով գթութեան քո մարդասէր՝ ցամաքեցո զհեղեղ դառնութեան այժմու ժամանակական հիւանդութեանս, հաճոյական մաղթանօք սրբազան մարգարէից քոց ։

Մխեցան 'ի մեզ նետք հիւանդութեան հրամանաւ քով տէր, և հաստատեցաւ 'ի վ̃ր մեր ձեռն քո ամենազօր · որպէս ա̃ծ գթած գթա՛ յամենսեան աղօթիւք սրբոց մաքառողաց, և բժշկեա՛ ։

Որ զմեռեալ որդի այրւոյն հրամանաւ քով յարուցեր բանիւ ա̃ծ, զերծո՛ զծառայս քո 'ի դժնդակ հիւանդութենէս ո՞չ կարեկից, և կենագործեա՛ միայն մարդասէր ։

### Աստուածածնի ։

'Ի գիշերի կենցաղոյս եհաս մրրիկ ա̃մ վշտաց, և ծածկեաց զմեզ մուայլ հիւանդութեանս · այլ դու առաւօտ խաղաղութեան որ կոյս՝ ծագեա՛ առ մեզ զճառագայթ գթութեան քո և առողջացո՛, և հա՛ն զմեզ 'ի լոյս հանդստեան ։

## Աղօթք · Զ · Բուժեա՛ զիս փրկիչ ·

'Ի խորս անդնդոց համատարած հիւանդութեանց ծըփիմք, և ալիք ժանտախտին խորասոյզ առնեն · այժմ ձեռն տարածեալ օգնականութեան բարեխնամ տ̃ր՝ փրկեա՛ զմեզ և կեցո՛ ։

Որպէս անդամալուծին կաշկանդելոյ գթացեալ, 'ի ցաւագին ախտէն և 'ի տանջանաց ա̃ծային հրամանաւ բժշկեցեր · բժշկեա՛ և զմեզ 'ի ծանրագոյն ցաւոցս բազումողորմ, և առողջացո՛ ։

Մարգարէիցն կաճառ, առաքելոցն ժողով, նահատակացն գումար, այժմ աղաչեն զքեզ վ̃ն ժողովրդեան քո՝ միայն բարերար և բազումողորմ, գթա՛ 'ի սա և ողորմեա՛ ։

### Աստուածածնի ։

Պսակ մաքուր կուսութեան մարիամ, բարեխօսեա՛ առ ք̃ս փրկել զմեզ 'ի ցաւոց և 'ի նեղութեանց և յանդադար հիւանդութենէ աստի, որ հաւատով զքեզ փառաւորեմք ։

Քաղուածոյ , ըստ եղանակին՝ Երևեցար այսօր ։

Անյաղթելի պաշտպան նեղելոց , և պատրաստ բարեխօս 'ի քեզ ապաւինելոց , զերծո զմեզ 'ի վտանգից՝ և մի' անտես առներ , որ օգնական ես ամենեցուն ։

## Տօնք · Է · Աստուածոյ խոնարհելն ·

Որոց տապոյ սաստիկ ժանտախտին բորբոքեալ՝ ոչ զհուր բաբելոնեան հնոցին , այրէ տոչորէ զմեզ անդադար · այլ ցօղով ողորմութ՟ե քո փրկիչ՝ շիջո 'ի մէնջ որք երգեմք առ քեզ , օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց ։

Բարեխօսութ՟բ մարգարէից՝ առաքելոց՝ մարտիրոսաց՝ և ա՟ծային վարդապետաց խմբից՝ զցաւ հիւանդացս բժշկեա տէր , և պարգևեա զառողջութ՟ի որք երգեն առ քեզ , օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց ։

Որ բանիւ զՂազարոս յարուցեր , այժմ որպէս 'ի գերեզմանէ 'ի դժնդակ հիւանդութ՟է աստի յարուցեալ կենդանացո զմեզ տէր · զի երգեսցուք գոհութ՟բ , օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց ։

### Աստուածածնի ։

Մայր գթած ամենողորմ մարդասիրին սուրբ կոյս , գթացեալ փրկեա զժողովուրդ քո , որ հայցէ զողորմութ՟ի քո , և երգէ առ որդի քո , օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց ։

## Տօնք · Ը · Եօթնպատիկ հնոցն ·

'Ի մահաձէ ցաւոց մերոց , և 'ի ժանտախտական հիւանդութ՟ես հեծեծանօք աղաղակեմք առ քեզ մարդասէր · և զաչս սրտի մերոյ 'ի վեր համբառնալով՝ այժմ զառողջութ՟ի հայցեմք · այց արա մեզ փրկիչ , և յար երգաբանել , ժողովուրդք բարձր արարէք յամենայն յաւիտեանս ։

Որ զտկարութ՟ին մեր կարեկցաբար զգեցար , և հաճեցար նմանիլ մարդկան · աղօթիւք մօր քոյ կեցո զմեզ որ անյոյս եմք 'ի կենաց , և կանգնեա ոչ 'ի գերեզմանէ ·

զի գոչեսցուք՝ մանկունք օրհնեցէք, քահանայք երգե-ցէք, ժողովուրդ բարձր արարէք յաւիտեանս։

Արարիչ բնութեան, պարգեւիչ բժշկութեան, խորք բարե-գթութեան երկայնամիտ տէր, այցելութեամբ այց արա ժողո-վրդեան քում և ապրեցո 'ի ժանտախտական հիւան-դութենէս. զի գոչեսցուք, քահանայք օրհնեցէք, ժո-ղովուրդք բարձր արարէք յաւիտեանս։

## Աստուածածնէ։

Հզօր օգնական և ամուր ապաստան և յոյս տարակու-սելոց անարատ կոյս Աստուածածին, այց արա ցաւագին վշտօք տառապեալ ծառայից քոց, թեթեւացո զծանրութիւն դառն հիւանդութեանս, ապաքինեա 'ի ժանտախտէս և կեցո։

## Ձայն. Թ. Հրացոյ ընդ այս։

Որ արարեր մեծամեծս և սքանչելիս՝ որոց ոչ գոյ թիւ անման Աստուած, ցոյց զողորմութիւն քո 'ի վերայ ծառայից քոց ողորմ կարեկից. և յախտէս յայսմանէ որ պաշարեալ է զմեզ ազատեա, մաղթանօք մօր քո և ամենայն սրբոց։

Աղօթիւք հրեշտակաց և հրեշտակապետաց, մարգա-րէից և առաքելոց, ընդ հայրապետաց և սրբազան վկայից քոց ով ամենազօր, զսուգ ծառայից քոց դարձո յուրա-խութիւն, բժշկեա զցաւսն, և պարգեւեա մեզ զառողջութիւն։

Զքեզ աղաչեմք որ բժիշկդ ես հոգւոց և մարմնոց, և տէր առատ ողորմութեամբ, բժշկեա զհիւանդութիւնս մեր, և զերծո 'ի ցաւոց և 'ի վշտաց որպէս միայն բարեգործ, և կեցո զամենեսին որք ուղիղ հաւատով զքեզ մեծացուցանեն։

## Աստուածածնէ։

Որ մայրդ ես գթութեան, և կարեկից ցաւագնելոց Աստուածածին կոյս, այժմ ցոյց 'ի վերայ մեր զառաւելական գթութիւն քո. և աղաչեա զմիածին որդիդ քո զարարիչն մեր և զտէր, զերծուցանել զմեզ 'ի դժնդակ ցաւոցս որք քաղեն զոգիս մեր, և շնորհել մեզ զառողջութիւն, որք անդադար զքեզ մեծացուցանեմք։

## Ո՜ տէր աղաչեսցուք։

Ամենակալ, երկայնամիտ, բազումողորմ, անոխակալ, մարդասէր, ամենաբարի, ամենազօր տէ՛սբօղա՝ քո՛ Աստուած մեր, դու ՚ի չգոյէ ՚ի գոյութիւն ածեր զբնութիւն մեր միայն վասն առատ բարութեան քո։

Դու զիմացական հոգի և զբան շնորհեցեր մեզ Աստուածային փչմամբ, և պատկերաւ քով պատուեցեր զմեզ. և փափկութեան դրախտին, և Աստուածատեսակ կենաց, և Աստուածային կենդանաւորութեան գեր ՚ի վերոյ քան զբնութիւն արժանացուցեր։

Դու զայնոսիկ՝ որք ապախտ արարին զպատուիրանս քո, և դիւական պատրանօք մոլորեցան, և անկան ՚ի փառաց քոց, և փոխանակեցին զմահ ընդ կենաց, և զթագաւորութիւն ընդ անարգ ծառայութեան, ոչ անտես արարեր վասն անսահման երկայնմտութեան և անճառելի բարերարութեան քո. այլ այց արարեր նոցա բազմօք ՚ի ձեռն նահապետաց և մարգարէից։

Դու օրէնս ետուր մեզ գրովք ՚ի դարձումն և յուղղութիւն. զհրեշտակս կացուցեր ուղեցոյց և պահապան, ուսուցօղ և առաջնորդ ՚ի բարին։

Եւ քանզի զայս ամենայն ցուցաք սնոտի և ընդունայն սաստիկ բաղձանօք մեր ՚ի չարիս, ինքնին դու զերկրորդ արարչութիւն և վերստեղծումն բնութեան մերոյ ՚ի կատարած յաւիտեանցն անճառաբար գործեցեր. և զբոլոր մարդկութիւն սքանչելապէս միաւորեցեր ընդ բոլոր Աստուածութեանդ քում. և մարմնով զմարմին և հոգւով զհոգին սրբեցեր. և մահուամբ և կրիւք փրկեցեր զմեզ յանբնական կրից և ՚ի մահուանէ. և ՚ի ձեռն պահպանութեան Աստուածային պատուիրանաց քոց՝ անմահական կենաց արժանաւորեցեր։

Բայց մեք վերստին յԱստուածային պատուիրանս քո յայսոսիկ յանցուցեալք, և ախորժակաց մերոց և կամաց զհետ երթեալք, զամենայն մեղս խնամով գործեմք համա-

պաղօր · չարախօսութիւն , հայհոյութիւն , չարայուշութիւն , երդումն , ստախօսութիւն , զազրաբանութիւն , նենգութիւն , հեռ , նախանձ , և զամենայն՝ անպատկան զազրագործութիւն բնական և անբնական · և զոր ո՛չ յանբան կենդանիս է տեսանել , զնոյն ամբարշտութիւնս նորոգ հնարեմք ։

Պակասեցան յունայնութե՛ն աւուրք մեր · զրկեցաք յօգնականութենէ քումմէ · այպն կատականաց եղաք այնոցիկ՝ որք շուրջ զմեօք են · ամենասուրբ և երկրպագելի անուն քո վասն մեր հայհոյի 'ի մէջ հեթանոսաց ։

Չարութեամբ հնացեալք , և 'ի շաւիղս անմաքրաբար կաղացեալք , ամենեքեան խոտորեցաք 'ի միասին և անպիտանացաք · ոչ ոք է որ իմանայ , և չէ ոք մինչև 'ի մի · քահանայք և ժողովուրդք յիմարացաք 'ի միասին ։

Աստ այսօրիկ արդար դատաստանաւ հերքեցաք 'ի քէն , և 'ի բաց ընկեցաք 'ի մեծէ օգնականութենէ քումմէ , և զբազում մարդասիրութիւնս քո 'ի ցասումն շրջեցաք թշուառականքս · ժանտախտք , և գերութիւն , և անձկութիւն , և տարակուսանք , և պէսպէս և անդադար մահք զմեզ զերեքթշուառեանքս բաժին արարին · զի 'ի ձեռն այսպիսի տանջանաց ակամայ առ քեզ դարձցուք մարդասէր ։

Եւ քանզի այսու ամենիւ ոչ զգաստացաք , մատնեցեր զմեզ 'ի ծառայութիւն հեթանոսաց , և 'ի գերութիւն , և 'ի սպանումն , և 'ի յափշտակութիւն անօրինաց · և ոչ 'ի չարեաց մերոց և յանօրէնութեանց 'ի բաց կացաք ։

Ապա գթացեալ փոքր ինչ 'ի ծառայութենէ հաներ զմեզ՝ որում ակն ոչ ունէաք , և յամբարշտացն ազատեցեր՝ զոր ոչն կարծէին · բայց և՛ս առաւել անօրինեցաք յանօրէնութեան մերում , և բարերարութեամբդ փքացաք , և զազատութիւն և զանդորրութիւն չարաչար 'ի գործ արկաք ։

Աստ այսօրիկ ամենաբարի տէր՝ տեսանելով զմեզ զի ո՛չ ևս 'ի ձեռն դժնդակ պատժոց զգաստացաք , և ոչ 'ի ձեռն բարերարութեանց քոց և շնորհաց 'ի լաւ անդր փոխեցաք , արդար դատաստանաւ դատապարտեցեր զմեզ , և կորստեան և եղծման բոլորովին մատնեցեր ։

Եւ այս յայտնի է՝ եթէ դատապարտեալ եղաք խապա-

լէ

խորտակել և եղծանել․ զի այսպէս առանց խնայելոյ զսերունդ ազգին անժամանակ հնձեցեր բովանդակ, մինչև ոչ արմատ և ոչ սերմն մնացէ խորայէլի ըստ գրեցելոյն․ այլ որպէս զսոդոմ և զգոմոր արմատովք և ոստովք՝ ծերովք և տղայիւք ապականեցաք և եղծաք։

Վասնզի ոչ եկն ՚ի վ՜ն մեր այնպիսի ցաւ, որ սակաւ առ սակաւ ՚ի մահ ածէ զհիւանդն․ այլ որպէս սպանող ոք որ սուր ՚ի ձեռին կացեալ սպանանէ զամենեսին։ Այնպէս բազումք միանգամայն ընկալեալ զհարուածս, միանգամայն ծածկին յանկարծահաս խաւարաւ, մինչ զի յասելն խոցեցաք, իսկոյն ՚ի վերայ հասանի մահ․ մինչև երկուց և երից մեռելոց հանել ՚ի միոյ տանէ, և ՚ի մի դագաղ կուտեալ՝ տանել զնոսա ՚ի գերեզման։

Եւ որք կարծին՝ թէ մնացին կենդանի, ոչ ձեռնհաս լինին զմերձաւորս իւրեանց արժանաւոր պատրաստութ՜ թաղել․ և ոչ գտանեն, թէ նախ առ ո՛ յազգականացն երթիցեն․ քանզի ամենեքին ՚ի միասին դառնաղէտ ցաւօք ապականեալք, յուղարկին ՚ի գերեզման։

Ահա ամենայնիւ տարակուսեալք՝ ո՛չ գիտեմք թէ զո՛ առաւել ողբասցուք․ արդեօք զտարաժամ մեռեալսն, թէ յանկարծակի յափշտակեալսն ՚ի կենաց․ զմեռեալսն յառաջագոյն, թէ որ այժմ հասեալ են ՚ի շունչ յետին, կամ որք մերձ են ՚ի հասանել, կամ որք կարծեն զերծ լինել յախտէն։

Զամենեսին զնոսա արժան է ողբալ, բայց առաւել քան զամենեսին ողբասցուք և կոծեսցուք զմեզ․ զի այնպէս հատաւ յոյս մեր, ո՞չ թէ յետ սակաւուց հանդերձեալ եմք թուակից լինել մեռելոց․ և այսպէս յուսահատեալք յամենուստ՝ սպասեալ մնամք սպանման որպէս զանասուն։

Այսօր հարք և մարք ունին շուրջ զիւրեամբք զպար մանկանց, զպար թոռանց, և զպար այլոց ազգականաց և բարեկամաց․ և ՚ի վաղիւն լինիցին անձեռք, ամայք, ողորմելիք, և մնացեալք, և իբրև կոճղ ծայրակտուր ՚ի պատուական մասանց, և գլխովին կորուսեալք զա՜մ

յոյս և՛ կենացն և՛ ծերութե՟ , և՛ ապագայ սերնդոց , և զրկեալք յամ՟ ախորժականաց բնութե՟ , և ՚ի յոյժ սիրելեաց և մերձաւորաց ։

Ապշեցաք մարդասէր տէր՝ ընդ մեծութի անըմբերելեացս պատուհասից և ձաղկանաց , և փոքր մի ևս ցնորեաք ։ և տարակուսանք և անհնարին վարանումն կալաւ զմեզ ։ և ահ և դողումն եկն ՚ի վ՟ր մեր ։ և ծածկեաց զմեզ խաւար մահու ։ Թալկացաք լքաք և խափառ հատաւ յոյս մեր ։

Քանզի ոչ ՚ի կենդանիս զմեզ համարիմք , և ոչ կամք հաստատուն մնօք ։ այլ իւրաքանչիւրոք զհարուածն և զնշանն մահաբեր կարծելով ունել յանձին , յամ՟ ժամ՟ կայ յերկիւղ և ՚ի կասկածանս , և ստէպ ստէպ զանդամն շօշափէ և զննէ ։

Եթէ մժղուկ ՚ի վերայ իւր եկեսցէ , եթէ ճճի շէթեսցէ , առ ժամայն շիւարեալ՝ զաստակումն հուպ համեալ վարկանելով ինքեան , ՚ի զարհուրանաց անտի նախքան զմահն կարծեմք մեռանիլ ։

Ուստի և շրջիմք տմ՟քին իբրև կիսամեռ և լուծեալ , և ամենևին տարակուսեալ , և ոչ մի ինչ ապաւէն գտեալ ։ և որ առաւել ևս է դառն և չար , զի ոչ իշխեմք թշուառականքս ՚ի վեր յերկինս համբառնալ զաչս , և բանալ զբերանս մեր , և աղօթել առաջի քո , հարեալք ՚ի խայթէ խղճի մտաց ։

Բայց զգործս մեր ամ՟ չարութ՟ և անմաքրութ՟ լցեալ առաջի աչաց մերոց ունելով , ծածկեալ զդէմս մեր յամօթոյ , անարժան դատիմք զմեզ օգնականութե՟ քում և նպաստից ։

Իսկ արդ՝ բեկեալք և խոնարհեալք և ամաչեցեալք՝ գոչեմք առ քեզ առ բարերարդ ա՟ծ ։ արդար ես տէ՛ր , և ուղիղ են դատաստանք քո ըստ ամ՟ի՝ զոր ածեր ՚ի վ՟ր մեր ։ Մանաւանդ զի ոչ ըստ անօրէնութե՟ց մերոց արարեր մեզ , և ոչ ըստ մեղաց մերոց հատուցեր մեզ ։

Այլ զայս հարուածս առաւել մարդասիրութ՟ քան արդարութ՟ խոստովանիմք լինել ։ Քանզի ամ՟ հարուածք և ամ՟ սատակումն , որք եկին հասին ՚ի վերայ մեր , սա-

կաւք են և նուաղունք առ բազում անօրէնութեանս մեր ։

Եւ վասն բազմութեան մեղաց մերոց ոչ ունիմք համարձակութիւն պաղատիլ առ բարութիւն քո ով արդարադատ տէր՝ դադարեցուցանել զայս ահագին սպառնալիս , Բայց առաւելութիւն քաղցրութեան քո , և խորք բարեգթութեան քո բազմողորմ տէր՝ քաջալերէ զմեզ հայցել և զոր 'ի վեր են քան զարժանաւորութիւնն մեր ։

Վասն որոյ աղաչեմք զքեզ Աստուած բարեգութ և տէր ողորմութեան , կացո զսուրն հատու տարաժամ մահու , որ անխնայ հարկանէ զմեզ ։

Մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զմեզ , և մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո . և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւն քո 'ի մէնջ մարդասէր , և մի՛ ցրեր զուխտն քո զոր եդեր ընդ հարսն մեր . և մի՛ սակաւաւոր առներ զմեզ քան զամենայն ազգս . ընդդէ՛մ կացո զխորս ողորմութեանց քոց՝ բազմութեան չարեաց մերոց ։

Քեզ միայնոյ մեղաք տէ՛ր , և զքեզ միայն պաշտեմք , բաց 'ի քէն զայլ Աստուած ոչ գիտեմք . և քեզ միայնոյ բեկեալ և խոնարհեալ սրտիւ առաջի կամք , և արտասուելով գոչեմք , Տէ՛ր ողորմեա՛ ։

Ընկա՛լ մարդասէր՝ զհասարակ զայս բեկումն մեր , և զցաւս սրտի մերոյ , որպէս ընկալար զարտասուսն եզեկիայի 'ի նեղութեան սրտի նորա , և 'ի մահուանէ զնա փրկեցեր , և ժամանակ կենաց պարգևեցեր աւելի քան զոր սահմանեալ էիր նմա ։ Քանզի դարձոյց եզեկիաս զերեսս իւր յորմն և ելաց , և իսկոյն որպէս մարդասէր տէր զմարգարէն առաքեցեր՝ որ ասաց նմա . լուայ աղօթից քոց , և տեսի զարտասուս քո , և յաւելից 'ի տարիս քո ամս հնգետասան ։

Ինքնին անխաբական տէր , որ ասացեր՝ ոչ կամիմ զմահ մեղաւորին , որպէս զդառնալն նորա և զկեալ , գթա՛ և 'ի վերայ մեր անարժանիցս , և դարձո՛ զարդար ցասումն քո 'ի մէնջ , և մի՛ յաւիտեան բարկանար մեզ ։

Տեսանես տէ՛ր՝ զիա՛րդ փոքրկացաք և նուաղեցաք մեք ժառանգութիւն քո , և սուրբ ազգն քո , և լրումն բնակ-

չաց բոլոր երկրիս, որոյ ստուերն ծածկէր զլերինս։

Յիշեա՛ մարդասէր՝ զխաչն և զմահն և զկամաւոր չարչարանսն քո, որոց համբերեցեր վասն մեր դատապարտելոցս. և մի՛ թողցես յափշտակել որպէս զառիւծ զանձինս մեր. ուր չիք ոք որ փրկեսցէ, և ոչ այն որ ապրեցուցանիցէ.

Գիտես երկայնամիտ, զի և ոչ մի հարուած անըղդայնոց այնպէս տագնապեցոյց զեգիպտացիսն, որպէս անդրանկացն ապականութի̃ և կորուստ. Իսկ ՚ի վ̃ր մեր անմխիթար է պատուհասն, և անպատմելի արտմութի̃ն. զի զա̃մքին միանգամայն անդրանիկքն և միջինքն և կրտսերքն՝ այսպէս տարաժամ յափշտակին յանկարծակի.

Գթա՛ անոխակալ տէր՝ յարտասուս և ՚ի լալիւն մանկանց և ողբոց և նորածնելոց, և ա̃մ հասակի, և դարձ զարդար ցասումն քո ՚ի մէնջ, և դադարեսցի կոտորածս բազումողորմ տէր.

Բանզի զհարուածն և զնշանակն մահուան ընկալեալ տղայքն, և զմահ և զապականութի̃ն զգացեալք, բերանաբաց հային առ մեզ, և բոլոր աչօք պշնուն, և ձեռս տարածանեն, և արտասուօք և թոթովութ̃բ և աննշան բարբառով և այլովք շարժմամբ զպանուամն իւրեանց ցուցանեն, և զատակումն կոծեն, և առ օգնութիւն ինքեանց ա̃մ կերպիւ զմեզ ձգել ստիպեն.

Իսկ մեք ամենեքին ոչ կարելով ձեռն օգնութ̃ կարկառել ՚ի նս̃, առ քեզ առ ամենակարօղդ ապաւինիմք, և առ ՚ի քէն միայնոյ զօգնականութի̃ և զերծումն ՚ի տառապանացս հայցեմք. Բանզի անհնարինքն ՚ի մարդկանէ՝ քեզ միայնոյ են հնարաւորք. որ ես օրհնեալ յամենայն յաւիտեանս, ամէն.

Աղօթք վասն հարուածոց ժանտախտին.

Զտէր աղաչեսցուք.

Տեսբօղա տ̃ր ա̃ծ մեր, անսպառ աղբիւր գթութ̃, անքննելի ծով մարդասիրութ̃, անսահման խորք երկայնմտութեան և քաղցրութեան։

Դու ես որ ազգէ յազգ ածեր 'ի վերայ մարդկային ազգի հարուածս և ձաղկանս վ̄ն օգտի ն̄ր , ըստ առատ մարդասիրութե̄ քո • զի զանզգուսպն և զդիւրասահն 'ի մեղս՝ ոչ̄ սանձիւ իմն ա̄ծային երկիւղիւ քով զսպես ցես , զի մի՛ անկարգաբար շարժեսցի ընդդէմ ա̄ծային պատկերին , և մի՛ զյարգ և զպատուականութի̄ հոգւոյն արասցէ անարգ և խոտան ։

Կացո՛ աղաչեմք զայս հատու և յանկարծահաս սուսեր մահուան , որ եկն 'ի վ̄ր բնութե̄ մերոյ • զի մի՛ նուաղեցուսցէ զմեզ քան զա̄մ ազգս • և մի՛ յարհամարհանս երևելի և աներևոյթ թշնամեաց մերոց մատնեսցէ զմեզ ։

Անապատացան քաղաքք , ամայացան հրապարակք , սրբազան տօնավաճառք և արարողութիւնք , և ա̄ծային օրհնաբանութե̄ցն հանդէսք 'ի բազում տեղիս լռեցին • տունք գեղեցիկք և մեծամեծք լքեալ կան • և չիք ոք որ բնակի 'ի նոսա ։

Ահ և դողումն եկն 'ի վ̄ր մեր , և խաւար աղջամղջին ահաւոր այսր մահուան ծածկեաց զա̄մենին ։ Ո՛չ ժամանեմք տէ՛ր՝ զի զվախճանեալսն ոչ̄ սովորութի̄ է՝ ողբասցուք մերձաւորքս • քանզի և վախճանն մեր հասանէ , և զայլս խնդրեմք ողբալ զմեզ , և 'ի հասարակ գերեզմանի դնիմք 'ի միասին ։

Եւ ոչ կենդանիքս կեալ արդէն համարիմք յերկիւղէ ահաւոր այսր հարուածոյ • քանզի իւրաքանչիւրոք 'ի մեզ յինքեանս երևակայեալ զնշանակն մահուան և զհարուածն ունել , նախքան զմահն արհաւրօք մահու չարաչար մեռանիմք ։

Այսօրիկ չարութե̄ մերոյ վարձք • այսօրիկ չար և անմաքուր գործոցն մերոց պատկանաւոր հատուցումն ։ Այսօրիկ զեղխութե̄ և անխրատութե̄ և երդմնահարութե̄ մերոյ դժնդակ վճարումն • սոյն եռագլխի օձս զթունաւոր ժանիս 'ի մեզ մխեալ , զապականութի̄ և զմահս զայս վերածեաց • քանզի ասէ գիր , վասն այսորիկ գայ բարկութի̄ն ա̄յ 'ի վերայ որդւոցն անհաւանութե̄ ։

Յաղագս որոյ ոչ զիմանալի աչս մեր համբառնալ , և

ոչ սուրբ սրտիւ աղօթել, և զողորմութիւն քո գտանել կարեմք, ծանր խղճիւ մտաց իբր երկաթի կապանօք կորացեալ իւրաքանչիւրոք 'ի մէնջ.

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վ՟ն անուան քո ս՟բյ, և մի՛ ցրեր զուխտ քո. զի մի՛ զժամանակ ապաշխարութե՟ն և դարձի կորուսանիցեմք եղկելիքս.

Գիտեմք զի բազում անգամ խոստացաք զապաշխարութիւն, և բազում ստեցաք. վ՟ն այսորիկ և ըստ օրինակի անպտուղ թզենւոյն դատապարտեցաք հատանիլ.

Այլ և ես երկայնամիտ լեր ո՟վ մարդասէր երկրագործ, որ ոչ կամիս զմահ մեղաւորին, ո՟չ զդառնալ նորա և զկեալ. որ եօթանասնեկի եօթն ներել եղբարցն հրամայեցեր. Որ կարես 'ի խիստ և յանբեր քարանց յարուցանել որդիս աբրահամու. քանզի անհնարինքն առ 'ի մարդկանէ՝ քեզ միայնոյ հնարաւորք են.

Արա և այժմ առ մեզ ըստ մարդասիրութե՟ն քում ք՟ս ա՟ծ մեր. զի և 'ի վերայ մեր ազգէ յազգ փառաւորեսցի ամենասուրբ անուն քո ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն.

Այլ աղօթք վասն հարուածոյ ժանտախտին.

## Օ՟տէր աղաչեսցուք.

Ամենաբարի տէր՝ մեղաք, անօրինեցաք, անիրաւեցաք առաջի քո, յանցեաք 'ի փրկական պատուիրանս քո, և 'ի սրբազան դաշինս մեր, զորս յա՟ծային մկրտութե՟ն հանդէպ մեծի սեղանոյ քոյ՝ առաջի հրեշտակաց և մարդկան արարաք.

Անդոսնեցաք զսոսկալի արիւն ուխտին որով սրբեցաք, խառնակ զնա համարեալ. և զհոգին շնորհաց թշնամանեցաք. և զահաւոր և 'ի վեր քան զբնութիւն որդեգրութիւնն արհամարհեցաք.

Ամենայն գիրք և ա՟ծային օրէնք և ա՟ծաշունչ վարդապետութիւն՝ ունայն բանբիւն և բանք սնոտիք և անգործադրելիք առ 'ի մէնջ համարեցան. Օ՟պաշտելի

աւետարանն և զճշմարիտ քրիստոնէութիւնն՝ անուամբ միայն և բանիւք կրեմք եղկելիքս ։

Ձեռք մեր առ ա՟ծ յափշտակուն և ագահուն եղեն գործունեայ և ճարտար ։

Ոտք մեր երագունք 'ի գործս անօրէնութե՟ն , և առ ա՟մ անիրաւութիւն և չարագործութիւն պատրաստականք . որպէս զի 'ի վեր ելանել 'ի բաժին եղբարց , և կոխան առնել զաղքատն ։

Զբերանն՝ զգործի աղօթից և սրբազան բանից , ա՟մ զաղրութե՟ն և լիմարաբանութե՟ն և երդմնազանցութե՟ն և բանսարկութեան արարաք գործի ։

Զաչս մեր և զա՟մ զգայարանս՝ անառակութե՟ և ա՟մ զեղխութեամբ անպակաս լցաք ։

Զիշխանական միտս մեր՝ թագաւոր և կառավար հաստատեալ 'ի մեզ յա՟յ՝ անարգեցաք ։

Զանդամս քո ք՟ի՝ անդամ պոռնկի արարաք . և փոխանակ տաճարի ա՟յ՝ ապականութե՟ն և անմաքրութե՟ն շտեմարան եղաք ։

Վասն այսորիկ ամենաբարի տէր՝ զբազում մարդասիրութի՟ քո 'ի ցասումն շրջեցաք թշուառականքս . և զբազմութիւն բարերարութեանցն քոց 'ի պատիժ մեզ անմտաբար փոխարկեցաք ։

Եւ քանզի ոչ բարերարութե՟ն զոր արարեր մեզ , և ոչ դառնակսկիծ աղետիւ մերձաւորին 'ի լաւ անդր փոխեցաք , արդար իրաւամբք շարժեցաք 'ի վերայ մեր զխրատն քո և զհարուած ։

Բայց մի՛ սրտմտութե՟ քով յանդիմաներ զմեզ , և մի՛ բարկութե՟ քով խրատեր ։ Քեզ միայնոյ մեղաք տէր , և քեզ միայնոյ երկիր պագանեմք . և բեկեալ սրտիւ ո՟պ պատարագ սուրբ զխոստովանութի՟ն մատուցանեմք ։

Ներեա՛ թո՛ղ մա՛րդասէր տէր . կացո՛ զհարուածս և զձաղկանս , զոր արդարութեամբ ածեր 'ի վերայ մեր ։

Յաղթեսցէ բազում գթութի՟ քո՝ բազմութե՟ մեղաց մերոց . անսահման ծով քաղցրութե՟ քո՝ ծածկեսցէ զդառն ծով չարութեան մերոյ ։

Ունիմք մարդասիրութե՟ քո օրինակս մեծամեծս · զաւազակն , զպոռնիկն , զմաքսաւորն , և զանառակ որդին · որք քան զմեզ եղկելիքս հաճոյ եղեն առաջի քո , և յերկնից արքայութիւնն յառաջեն ։

Ընդ սոցին ընկա՛լ և զմեզ տէ՛ր , որք զքեզ խոստովանիմք , և առաջի անկանիմք · և եթէ 'ի դարձէ և 'ի ճշմարիտ ապաշխարութե՟ պակասեալ գտանիմք , զպակասորդն լցուսցէ անսահման բարութի՟ն քո , նա մանաւանդ զա՟մն · քանզի յա՟մէն պակասեալ գտանիմք գլխովին ։

Ունիս քեզ շարժօղ զգթութի՟ և զներողութի՟ քո · զխաչն , զկամաւոր մահն՝ զոր վասն մեր ապաշնորհացս ընկալար , զհանդէս նահատակութե՟ առաքելոց , զքրտունս ճգնաւորաց , և զարիւնս մարտիրոսաց · և զապաւէնն ա՟մցուն զսբ ա՟ծածինն , որ անսերմնաբար ծնաւ զքեզ անճառապէս · զպաղատանս սոցա մարդասիրապէս ընկալեալ բարեգութ՝ 'ի վշտացս յայսցանէ և 'ի յաւիտենական տանջանաց ազատեա՛ զմեզ ։

Շնորհեա և մարդասիրութե՟ անսկզբեան քո հօր , ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ա՟մէն ։

---

## Գալիստոսի պ՟տրիրքին կոստանդնուպօլսոյ

Այլ աղօթք պաղատանաց վասն ժանտախտի և սովու ։

### Զ տէր աղաչեսցուք ։

Տէր ա՟ծ մեր , որ զերևելի զայս ստեղծուած արարչագործ հրամանաւ քով յոչէից 'ի գոյ ածեր · և ապա զմարդն յատուկ ձեռամբ քով կազմեցեր ըստ բազում բարութե՟ քում · և յառաջագոյն զա՟մ պէտս նորա պատրաստեցեր 'ի կերակուր և յարբումն՝ վայելել 'ի նոսին անեղծ և անաշխատ կենօք ։

Իսկ յանցանել նորա զպատուիրանաւն՝ զրկեցեր զնա յանեղծական փափկութենէ անտի, և զտաժանաւոր կենցաղս ետուր նմա ըստ արժանւոյն ։

Նաև հրամայեցեր երկրի բուսուցանել զբազմազան պտուղս 'ի սնունդ մեր, և անբանից կենդանեաց, ըստ իւրաքանչիւր պիտոյից պարգևելով զնոսա ըստ նախախնամութ՟ քով ։ Որով և զձկունս ծովու առատ ողորմութ՟ քով խնամես որպէս բարեգութ • բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսին քաղցրութ՟ կամաց քոց ։

Որ մեծամեծս և զարմանալիս հրաշագործեցեր 'ի հնումն և 'ի նորումս • և ոպ՟ երբեմն 'ի ձեռն յովսեփայ որ էր օրինակ միածնի որդւոյ քո, զբովանդակ իսրայելեան ժողովուրդն կերակրեցեր առատապէս • նոյնպէս և այժմ 'ի ձեռն միածնի որդւոյ քո Ճշմարտի և տ՟ն մերոյ՝ պարգևեա՛ զամենայն որ ինչ է 'ի պէտս սննդեան և հանգստեան մերոյ ։

Լուր ինձ մեղաւորիս և անարժան ծառայիս քում հզօր՝ և յամ՟ դառն կրից և տառապանաց զերծ՛ զմեզ • և 'ի ժանտախտէ 'ի սովէ և 'ի բռնութ՟՝ որք եկին հասին 'ի վերայ մեր, ազատեա՛ զմեզ ։

Որպէս զի փառաւորեսցի ամենապ՟ անուն քո անսկզբան հօր, և միածնի որդւոյ քո, և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Նորին այլ աղօթք ։

Տէր աղաչեսցուք ։

Ո՜վ սքանչելի, որ առնես մեծամեծս և սքանչելիս • որ զազգն իսրայէլի 'ի ձեռն մովսէսի ազատեցեր 'ի դառն ծառայութենէն փարաւոնի ։

Որ աջով քով առաջնորդեցեր նմա, և անվնաս հասուցեր յերկիրն աւետեաց ։ Որ առաքեցեր զլորամարգի, և յագեցուցեր զանթիւ ժողովուրդն քո 'ի յանապատն անջրդի ։ Որ տեղացեր յերկնից զմանանայն ոպ՟ զանձրև 'ի քաղցրացող ամպոց ։ Որ զապառաժ վէմն

աղբիւրս ջուրց արարեր , և զամ̃ պասքեալսն 'ի ծարա_ւոյ հոսմամբ ջրոյն զովացուցեր ։

Եւ այժմ աղաչեմք զքեզ բարերար , կերակրեա զմեզ ըստ սովորական մարդասիրութե̃ն և բարութե̃ն քո ։ Պարգևեա մեզ զպէտս կարեաց պիտոյից մերոց ։ Ցո՛յց և 'ի մեզ զմեծամեծ սքանչելիս քո , և կերակրեա զմեզ առատապէս օրհնութ̃բ քաղցրութե̃ն քո ։ քանզի ամ̃ ինչ կարելի է քեզ ։ և չիք ինչ անկարելի ։

Այո՛ տր̃ ած̃ մեր , որ կերակրեցեր զբիւրս ժողովըր դեան սակաւ հացիւք յանապատին , կերակրեա և այժմ զմեզ անճառելի բարեգթութ̃բ քո ։ և մի՛ անտես առներ զաղաչանս մեր մեղաւորաց և անարժան ծառայից քոց ։

Զի փառաւորեսցի ամենապատուելի անունն քո հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աղօթք վասն սպառնալեաց որոտման և կայծականց ։

## Զտէր աղաչեսցուք ։

Տէր ած̃ մեր , որ հաստատես զորոտումն , և փոփո_խես զկայծակն ։ և հանես զհողմն 'ի շտեմարանաց քոց ։ և զամ̃ ինչ առնես 'ի փրկութի̃ գործոց ձեռաց քոց ։

Հայեա՛ց մարդասիրութ̃բ քով , և փրկեա զմեզ յամ̃ նեղութե̃ , 'ի բարկութե̃ , 'ի տառապանաց , և 'ի սպառնա_լեացս 'ի վերայ հասելոց ։ քանզի որոտացեր յերկնից տէ՛ր , և կայծակունս լցեր , և խռովեցուցեր զմեզ ։

Հաշտեա՛ց ընդ մեզ բարեգութ , առ քեզ ապաւի_նիմք , և զառատ գթութիս քո առաքեա 'ի մեզ ։ և ողոր_մեա ծառայից քոց որպէս բարերար և մարդասէր ։

Մի՛ այրեսցէ զմեզ հուր բարկութե̃ քո , և մի՛ կերիցէ զմեզ սրտմտութի̃ կայծականց և որոտմանց քոց ։ այլ սո_վորական բարեգթութ̃բ քով վարեցեալ , դարձո՛ զբարկութի̃ քո 'ի մէնջ , և զմրրկեալ օդն 'ի պարզութի̃ փոխեա՛ , և արե_գական ճառագայթիւք զմառախուղն 'ի բաց փարատեա՛ ։

Զի դու ես ա՟ծ ողորմութե՟ և գթութե՟ և մարդասիրութե՟. և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք վասն անբարեխառնութե՟ հողմոյ և ալէկոծութե՟ ծովու։

## ԶՏէր աղաչեսցուք։

Տէր ա՟ծ ամենակալ, որ անձնաւոր և անսկզբնական բանիւ քով, և կենդանարար և համապատիւ քո Հոգւովն յոչէից 'ի գոյ ածեր զամենայն։

Որ ծովու եդեր սահման զաւազ. և կշռեցեր զլերինս կշռով, և զդաշտս կշռորդաւ. որ չափեցեր զերկինս թզաւ, և 'ի ձեռին ունիս զերկիր։

Որ հրամանաւ քով հաստատեցեր չափս և կանոնս և սահմանս և համեմատութի՟ս և կարգս երևելի և զգալի այսմ ստեղծուածոյ, և ժամանակաց փոփոխութի՟ս, և դարձուածս արեգական, և զուգախառնութի՟ս տարերաց. և նախախնամես հանապազ, և կառավարես զամենեսին 'ի վերքան զմիտս և զբան։

Ինքնին ամենաբարի թագաւոր՝ զբնաւոր և սովորական մարդասիրութի՟ քո և զբարութի՟ դարձեալ ցուցանելով առ մեզ, այց արա գործոց ձեռաց քոց, և մի' 'ի բացեայ առներ զողորմութի՟ս քո և զգթութի՟ս քո 'ի մէնջ, որ ըստ պատկերի քում արարչագործեցեր զմեզ անճառապէս։

Որ զմիածին որդին քո ետուր փրկանս վ՟ն մեր. և հաղորդութե՟ Հոգւոյ որդւոյն քո՝ ա՟ծեղէն բնութե՟ն արարեր զմեզ հաղորդակից. աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, թող զբազմութի՟ մեղաց մերոց անսահման բազմութե՟ գթութե՟ց քոց, և մի' մերժեր զմեզ յողորմութե՟ քումմէ։

Որ խաչիւ որդւոյ քո և արեամբն ջնջեցեր զմեղս մեր, դարձո՛ անդրէն զստեղծուածն քո 'ի բնական զուգախառնութի՟ և բարեկարգութի՟, որ թիւրեալ էր առաքոյ բնութե՟ և կարգի, վասն կենցաղավարելոյ մեր ընդդէմ բնութե՟ անկարգութե՟ և վատթարութե՟։

Ցոյց մեզ զսովորական հանդարտութիւն այսր անդընդախոր ծովու, և զյարուցեալ ալէկոծութիւնս, և զամբոխութիւն օդոյս դադարեցո՛. պատուիրեա՛ հողմոցն շնչել յարմարապէս։

Կացո զմրրիկ հողմոյն, և զփոթորիկն փոխադրեա՛ 'ի պարզութիւն. զի զսքանչելիս քո դարձեալ տեսցեն, որք իջանեն 'ի ծով նաւուք, և առնեն զգործս 'ի ջուրս բազումս։

Հանդարտեցո՛ մարդասէր Տէր՝ քոյով անհամեմատ գթութեամբ զալէկոծութիւնս զայս. որ զմիածին որդին քո զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ կամօք քո և գործակցութեամբ հոգւոյդ սրբոյ առաքեցեր լինել մարդ, և նաւարկել ընդ սրբոց աշակերտաց իւրոց և առաքելոց, և սաստել մրրկին հողմոցն և ալեաց ծովուն, և խաղաղել։

Ինքնին և այժմ զամենայն ընդդիմակ հողմս լռեցո՛, և զալիսն մեղմացո՛, և զալէկոծութիւն դադարեցո՛, և յարո՛ զքաղցրաշունչ եղանակս և զյարմարաւոր հողմս, ամենայն ուրեք ղեկավար և օգնական եղեալ ծառայից քոց, առաջնորդելով նոցա 'ի նաւահանգիստն փրկութեան. քանզի զանուն քո միայն գիտեն, և ոչ ճանաչեն զայլ Աստուած բաց 'ի քէն, և օգնականութեան քո հանապազ ակնկալեալ սպասեն։

Տուր մեզ զխնդրուածս մեր մարդասէր՝ աղօթիւք և բարեխօսութեամբ ամենօրհնեալ Աստուածածնին, և Աստուածատեսակ հրեշտակացն, և ամենայն սրբոց, 'ի փառս միածնի որդւոյ քո և Տեառն մերոյ. ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք պաղատանաց վասն ամենայն խնդրուածոց։

### Զտէր աղաչեսցուք։

Տէր՝ որ միայն առատ ես ողորմութեամբ, և հայիս քաղցրութեամբ յաղաչանս մեր մեղաւոր և անարժան ծառայից քոց։ Որ զամենայն ինչ զմեր յօգուտ անձանց մերոց տնօրինես և

ուղղես ։ Որ ամենիմաստ նախատեսութ՟բ քով զկեանս մեր կառավարես ։ Որ ամենարուեստ հնարաւորութ՟բ փրկութեան մերում ըղձանաս ։

Որ բնութ՟բ երկայնամիտ և բազումողորմ գոլով, խրատես և դարձեալ բժշկես քաղցրութ՟բ և մարդասիրութեամբ զի ապաշխարեսցուք ։

Մի՛ եւս զպատիժ, ոչ 'ի կորուսանել զստեղծուածս ձեռաց քոց, այլ մանաւանդ կամիս վերածել զմեզ նովին 'ի սկզբնական գեղեցկու՟ին և յառաջին վայելչու՟ին, զոր թելադրութ՟բ չարին կորուսաք անմտաբար ։

Նոյնին տէր ամենակալ՝ հայեա՛ց 'ի մեզ, և կատարեա՛ զխնդրուածս մեր մեղաւորաց ․ որք վ՟ բազմութ՟ անօրէնութեց մերոց ոչ ունիմք համարձակութ՟ առաջի քո, և ոչ եւս վստահանամք հայցել զներումն ա՟մ յանցանաց մերոց ։

Այլ վստահացեալ յառատութ՟ քաղցրութ՟ քո և մարդասիրութ՟, գթութ՟ և ողորմութ՟, երկայնմտութ՟ և անոխակալութ՟ և անսահման բարութ՟, համբառնամք առ քեզ զձեռս և անդադար գոչեմք ․ մեղաք, անօրինեցաք, ամպարշտեցաք, զի մոռացաք զպատուիրանս քո, և գնացաք զհետ մոլորութ՟ մտաց մերոց ։

Սո՛կ վարեցաք զկեանս անարժան քրիստոնեայ անուան մերոյ, և աւետարանին ք՟ի, և ս՟բ կրից և չարչարանաց ն՟ ․ և զփրկելի որդին քո շարժեցաք 'ի բարկութ՟ ։

Քահանայք և ժողովուրդ քո ամենեքին խոտորեցաք յուղիղ ճանապարհէ, և 'ի միասին անպիտանացաք ․ ոչ ոք է որ առնէ դատաստան և արդարութ՟, և չէ ոք մինչև 'ի մի ։ Փակեցաք զգութ և զմարդասիրութին քո և զողորմութիւ քո ա՟ծ՝ վ՟ չարութ՟ մերոյ և անօրէնութ՟ գնացից մերոց ։

Դու քաղցր ես, իսկ մեք դժնդակք ․ դու երկայնամիտ, և մեք հարուածոց արժանիք ։ Ճանաչեմք զբարութին քո ․ գիտեմք զանօրէնութիւ մեր, և խոստովանիմք՝ թէ սակաւ եղեն պատիժքն որովք տանջեցաք ։

Դու ահաւոր ես, և ո՞վ կարէ կալ առաջի քո ․ դողումն կալնուն 'ի քէն լերինք, և զօրութ՟ բազկի քո ո՞վ ընդդիմասցի ։ Եթէ փակեսցես զերկին, ո՞վ բանայցէ ․

եթէ խցանես զասահանս ամպոց , ո՛վ գտցէ զարդիւնս երկրի և ժողովեսցէ ։ Խեթև է յաջս քո աղքատացուցանել և մեծացուցանել , սպանանել և կեցուցանել , հարկանել և բժշկել ․ և կամին քո գործ է կատարեալ ։

Դու բարկացար , և մեք մեղաք , ասէ ոմն 'ի նախնի գոհաբանողաց ․ իսկ մեզ ընդդէմ սորին 'ի դէպ գայ ասել ․ մեք մեղաք , և դու բարկացար ․ վասն այսորիկ եղաք նախատինք դրացեաց մերոց ․ դարձուցեր զերեսս քո , և մեք եղաք խռովեալք ։

Այլ դադարեա՛ց տէ՛ր , թո՛ղ տէ՛ր , քաւեա՛ տէ՛ր , մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անօրէնութեց մերոց , և մի՛ պատժելով զմեզ խրատեր զայս ․ այլ զպատիժ քո հեղ 'ի վերայ հեթանոսաց՝ որք զքեզ ոչ ճանաչեն , և թագաւորաց՝ որ քումդ զօրութե ոչ հնազանդին ։

Իսկ մեք ժողովուրդք քո , և գաւազան ժառանգութե քո ․ վն այսորիկ խրատեա՛ զմեզ՝ բայց քաղցրութե ․ զի մի՛ տրտմեցես զմեզ սակաւաւորս և նուաղունս , և քան զամ ազգս բնակեալս յերկրի արհամարհեալս ։ Քանզի ողորմութի քո անճառելի ․ և մարդասիրութի քո անբաւ ․ և առատութի քաղցրութե քո անչափելի ։

Առ որս վստահացեալ աղաչեմք և պաղատիմք , և խոնարհեցուցանելով զծունր սրտի մերոյ խնդրեմք 'ի քէն ․ դադարեցո՛ զսրտմտութի բարկութե քո 'ի ժողովրդենէ քումմէ որպէս երբեմն առ դաւթիւ , թէպէտ և ոչ նման նորին զապաշխարութիւնն ցուցաք ։

Այլ դու որպէս ամենաբարի կացո՛ զբարկութի քո և դարձո՛ զարդար ցասումն քո 'ի մէնջ ։ Տո՛ւր հիւանդաց առողջութի , տկարաց զօրութի ․ և զառողջացելոցն պահեա՛ անփորձ յամի ։

Զամ ցաւ և զամ ախտաժետութի բարձ 'ի ժողովրդենէ քումմէ ․ և զամենին ազատեա՛ 'ի կասկածանաց հիւանդութեա այսմիկ ․ և ամենակալ ձեռամբ քո պահեա՛ անվնասելի 'ի չարաչարանաց այսմ ախտէ , և անհոգելի 'ի դժնդակ այսմ վշտակրութե և յանհնարին բեկմանէ ։ Քանզի ողորմութի արդար բարկութե քո խռովեցոյց

զտ̃մնին զմեզ. և եղաք մեք ոչ տերև շարժեալ 'ի սաստիկ հողմոյ. թէպէտ ոչ դարձաք բոլորովին 'ի չարեաց մերոց։

Այլ զերծո զմեզ 'ի չար կասկածանաց, և 'ի չար խղճէ մտաց, և շնորհեա բարեգործութե̃ հաճոյանալ քեզ, բարեխօսութ̃ սուրբ և ա̃ծատեսակ հրեշտակաց և ա̃մ սրբոց, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ։

Զի դու ես ողորմութե̃ աղբիւր, և բարեգթութե̃ խորք. և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# Սրբազան Պատրիարգին Գալիստոսի

Աղօթք վասն տագնապի ժողովրդեան։

[illegible]

Զտէր աղաչեսցուք։

Տէր ա̃ծ ողորմութեան, պարգևատու բարեաց, ա̃ծ սքանչելագործ. գթութե̃ց հայր, կարեկցութե̃ խորք, մարդասիրութեան անսպառ աղբիւր։

Որ իմաստութե̃ անօրինես զա̃մ. որ իջուցանես ՚ի դժոխս և դարձեալ հանես. որ խոնարհեցուցանես, և իսկոյն բարձրացուցանես. որ ամբարտաւանից հակառակ կաս, և տաս շնորհս խոնարհաց. և զօրութե̃ն քո միայ հաստատուն ա̃մ ստեղծուած։ Պատաստանք քո խորք բազումք, և ճանապարհք քո անքննելիք. և հոգ֊ւոյն քո ա̃մ ինչ կառավարի. և ՚ի ձեռին քո է շունչ ամենայն կենդանեաց։

Քեզ հնազանդին աստեղք. քեզ հպատակի ա̃մ ինչ. քեզ ծառայէ ա̃մ ստեղծուած. ՚ի քէն դողան ա̃մ իմանալի զօրութի̃ք. և անլռելի փառաբանութ̃ բարձրացուցանեն զքեզ ա̃մքեան, և անդադար օրհնաբանեն։

Դու իմանալի արեգակն արդարութ̃ ա̃ծ ճշմարիտ, որ զամենայն ինչ առնես և փոփոխես յորժամ կամիս, քա՛ղցր և զուարթ ակամբ հայեաց ՚ի ժողովուրդ քո մեղուցեալ և յուսակտուր եղեալ, և առաքեա՛ ՚ի նոսա զառատ ողորմութիւնս քո։

Խնայեա՛ ՚ի ժառանգութի̃ քո. խնայեա՛ ՚ի ժողովուրդ քո. խնայեա՛ յայգին զոր տնկեաց աջ քո, շարժեալ ՚ի բնաւորական բարութենէ քումմէ։

Յիշեա՛ զարիւն ծառայից քոց որք հեղան. յիշեա՛ զս̃բ սեղանս որք զազիր ոտիւք կոխեցան, և ՚ի հուր մաշեցան։

Յիշեա՛ զողորմելի հասակն ՚ի գերութի̃ ամբարշտաց

լթ

մատնեալ, և զհայրենի բարեպաշտութիւն անմոռութեամբ ժըխտեալ, և ՚ի ծառայութիւն բանսարկուին գրեալ. և մի՛ թողուր զգաւազան մեղաւորաց ՚ի վիճակն արդարոց.

Մի՛ մատներ զմեզ խոպառ վասն անուան քո սրբոյ, և վասն անճառելի ողորմութեան քո, որ զեղու առատապէս ՚ի բարութենէ քումմէ, և խնամէ զամենեսին քաղցրութեամբ.

Եւ արդ՝ տուր ածասէր արքային մերում հանդիստ ՚ի վշտացն կրից սատի ՚ի վերայ հասելոց, և զերծումն յազգային խռովութեանց և վրդովմանց.

Զօրացո զբազուկ նր ՚ի վր թշնամեաց իւրոց, և զյարուցեալսն ՚ի վր՝ հնազանդ արա ՚ի ներքոյ ոտից նր.

Շնորհեա միաբանութիւն և խաղաղութիւն զօրաց նորա, և յամ երևելի և աներևոյթ թշնամեաց պահեա զնա.

Հրեշտակ պահապան առաքեա նմա ՚ի սբ բնակութենէ քումմէ, յայտնապէս պատերազմիլ փոխանակ թագաւորին քո ընդ թշնամիս նորա.

Պարգևեա նմա վարել զթագաւորութիւն իւր անվրդով ՚ի խոր խաղաղութենէ ամ յաջողութեամբ և բարեբաստութեամբ. ոպս զի ազգ քո սուրբ յապահովի և յանդորրու վարեսցէ զկեանս իւր, ցնծութեամբ փառաւորելով զանուն քո սբ.

Ցրուեա ամենայաղթ աջով քով զամ խռովութիւն և զնենգութիւն որք յառնեն ընդդէմ նորա. և շնորհեա նմա կեանս երկարս և խաղաղականս.

Բարեխօսութեամբ օգնատուի և ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ ածածնին, և աննիւթ պաշտօնէից, և ամ սրբոց որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ, ամէն.

Նոյն այլ աղօթք վասն տագնապի ժողովրդեան.

## Զտէր աղաչեսցուք.

Անսկիզբն Թագաւոր, անտեսանելի, անքննելի, անհասանելի և անճառելի, որ ՚ի ձեռին ունիս զամ ստեղծուածս և պահես, և քաղցրութեամբ խնամես և կառավարես ՚ի վերքան զմիտս և զբան.

Որ անօրէնութեցն Նինուէացւոց յառաջագոյն համ-
բերեցեր, վն̃ անսահման բարութե̃ քո և երկայնմտութե̃.
և յետոյ զապաշխարութի̃ նոցա և զդարձն ընկալեալ՝
շնորհեցեր նոցա զթ̃ղ անօրէնութիս և զյանցանս՝ առ-
վրական անձառ մարդասիրութե̃դ վարեցեալ.

Ընկալ և այժմ զաղօթս և զպաղատանս մեր որպէս
զդարձ և զապաշխարութիւնն Նինուէացւոց.

Ընկալ զարտասուս և զհեծութիս և զհառաչանս մեր,
զոր ՚ի խորոց սրտէ իբրև խունկ վերառաքեմք առ քեզ.

Ընկալ զաղաչանս տառապեալ ժողովրդեանս, և
փրկեա զնոսա ՚ի փորձութեց և ՚ի դատն մահուանէ աստի.
յաղթեսցէ ծով անսահման գթութե̃ քո՝ բազմութե̃
յանցանաց մերոց.

Այո տէր ա̃ծ մեր՝ լուր ՚ի ժամուս յայսմիկ ժողո-
վրդեան քում՝ և ինձ մեղաւորիս, և կացո զդաւաղան
մեղաւորաց, որ զօրթացեալ է ՚ի վ̃ր վիճակին արդարոց.

Ո̃պ զի և մեք անպիտան ծառայքս քո՝ ձայնիւ ցըն-
ծութե̃ փառաւորեսցուք զամենասուրբ անուն քո հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից, ամէն:

Նորին այլ աղօթք վասն տագնապի ժողովրդեան:

## Զտէր աղաչեսցուք.

Բարեգութ տ̃ր՝ արարչագործ ա̃մի, որոյ ողորմութիդ
անչափ է, և մարդասիրութիդ անբաւ. որ զթ̃ղ անօրէ-
նութիւնս մեր բարձեր, և ՚ի խաչին բևեռեցեր.

Եւ ահա վստահացեալ յառատութի̃ քաղցրութե̃ քո
անոխակալ տէր, անկանիմք առաջի քո, և աղաղակեմք
որպէս զմաքսաւորն, քաւեա զմեղս մեր. և որպէս
զաւազակն գոչեմք, յիշեա զմեզ.

Վասն այսորիկ յաղթեսցէ առատ ողորմութիւն քո՝
անօրէնութեանց մերոց, որովք տառապիմք չարաչար.
Ցոյց մեզ զմեծութի̃ մարդասիրութե̃ քո. հաշտեաց
որպէս երկայնամիտ ընդ ժողովրդեան քում.

Կացո՛ զգերանդին մահուան, զի մի՛ տարաժամ հընձեսցէ զմեզ. Կացո՛ զհարուած ժանտախտական հիւանդութ̃ս, որով ապականիմք. Կացո՛ զմահաբեր սուրն որ զարթուցեալ է ընդդէմ մեր, զի մի՛ կորիցուք իսպառ. քեզ միայնոյ մեղաք, և քեզ միայնոյ պաղատիմք.

Այո՛ տէ՛ր՝ լո՛ւր մեզ մեղաւորաց և անպիտան ծառայից քոց 'ի ժամուս յայսմիկ, և փրկեա՛ զմեզ յա̃մ վշտաց մերոց. զի գինք արեան քո եմք.

Որպէս զի փառաւորեսցի 'ի մեզ ամենասուրբ անուն քո ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ, ամէն.

Նորին այլ աղօթք վասն տագնապի ժողովրդեան.

## Օ տէր աղաչեսցուք.

Ամենակա՛լ տէր, երկայնամիտ և բազումողորմ, նախախնամօղ ա̃մ ստեղծուածոց բանականի և իմանալեաց. որ զգոլն յոչէից՝ ամենեցուն պարգևեցեր, և զբարիոք գոլն՝ միայն մեզ շնորհեցեր.

Վասն որոյ փառաբանութ̃ և գոհացողական երգովք առաջի անկեալ քում անհամեմատ բարութեդ աղաղակեմք. մի՛ անտես առներ զմեզ, և մի՛ զաղօթս և զպաղատանս մեր 'ի բաց մերժեր. այլ հայեա՛ց 'ի սուրբ բնակութէ̃ քումմէ և տե՛ս, և ա՛յց արա այգւոյս այսմիկ, և դարմա՛ն տար սմա զոր տնկեաց աջ քո. և ապրեցո՛ զմեզ յայսմ դժուարին հարուածոյ ժանտախտիս, և 'ի մահաբեր սրոյ ամբարշտաց.

Քանզի այս ահաւոր և անակնկալ պատահար՝ ոչ միայն զմարմինս մեր մեռուցանէ և ապականէ, այլև զհոգիս մեր բոլորովին կորուսանէ, անապաշխար ելանելովն մեր յաստի կենցաղոյս.

Վասն այսորիկ զքեզ աղաչեմք, և 'ի քէն հայցեմք, լո՛ւր աղաչանաց ժողովրդեան քում, և դարձո՛ զսրտմտութ̃ բարկութ̃ քո 'ի մէնջ, զի անոխակալ ես և բազումողորմ.

Այո՛ տէ՛ր՝ մի՛ յաւիտեան բարկանար մեզ, և մի՛ ձգեր զերաւացի ցասումն քո 'ի վերայ մեր. զի ոչ ար_

դարձասցի առաջի քո Տէր կենդանի. քանզի Տէր արդարութիւն մարդոյ իբրև զհանդերձ ապականի՝ ըստ աղաղակելոյն Եսայեայ:

Գթա՛ 'ի մեղուցեալքս ըստ սովորական մարդասիրութեա քում, և դադարեցո՛ զբարկութիւն քո 'ի մէնջ. դարձո՛ զգերութիւն մեր 'ի ծառայութենէ ամբարշտաց, այլև զգերութիւն հոգւոց մերոց երեքաղեան մրրկաւ փորձութեանց յիմանալի փարաւոնէն. քանզի ոչ կարեմք գերեալքս հոգւով և մարմնով՝ երգել քեզ երգ գոհացողական յերկիր օտար:

Յիշեա՛ զմեզ Տէ՛ր՝ ողորմութե՛ամբ և գթութե՛ամբ, և առաքեա՛ 'ի մեզ հրեշտակ հաւատարիմ պահապան, և յանձն արա նմա զկեանս մեր, որ ապրեցուսցէ զմեզ 'ի սոսկալի բարկութենէ տարաժամ մահուան, և յանկարծահաս սրոյ ամբարշտաց:

Որպէս զի գտեալ մեր զերծումն և զանդորրութիւն 'ի դառն և յանըմբեր կրից յայսցանէ, գոհութե՛ամբ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին, զմի Աստուածն և զԹագաւորութիւն: Եւ քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Նորին սրբոյն Պատրիարգին Պօլսոյ

Աղօթք վասն տագնապի ժողովրդեան:

Զտէր աղաչեսցուք:

Ած և Հայր տեառն մերոյ Յի՛ի Քի՛ի, աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, զի քաղցր ակամբ հայեսցիս 'ի ժողովուրդ քո և 'ի ժառանգութիւն քո. և գթացեալ 'ի վերայ մեր և երկրին մերոյ ամայացելոյ վասն անօրէնութեանց մերոց, և գերի և ծառայ եղելոյ անագորոյն թշնամեաց, հաճեսցիս անդրէն դարձուցանել 'ի նախկին ազատութիւն:

Եւ որպէս 'ի նախնումն թողեր զանօրէնութիւնս Յակոբայ, և դադարեցուցեր զամ բարկութիւն քո, և դարձուցեր զնա յերկիրն աւետեաց առ ժառանգութիւն խոստացելոցն բարեաց:

Այնպէս և այժմ սովորական մարդասիրութեամբդ վարեցեալ, թո՛ղ մեզ զյանցանս մեր. և դարձո՛ զսրտմտութիւն քո ՚ի մէնջ, և փրկեա՛ զմեզ ՚ի նեղչաց մերոց, և արժանի՛ արա խորհիլ ՚ի պատուիրանս քո հանապազ:

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, և մի՛ ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ: Աստուած դու դարձեալ կեցո՛ զմեզ, և ժողովուրդ քո ուրախ եղիցի: Ցո՛յց և մեզ զողորմութիւն քո, և լուիցուք քև զխաղաղութիւն և զցնծութիւն:

Այ՛ տէ՛ր՝ լո՛ւր մեզ մեղաւորացս և անպիտան ծառայիցս քոց ՚ի ժամուս յայսմիկ, և արա՛ առ մեզ ողորմութիւն, բնակիլ փառաց և խաղաղութեան յերկրի մերում: Քանզի քոյով նպաստիւ և օգնութեամբ համարձակեալ մեք անարժանքս, յուսամք ողորմութեան և ճշմարտութեան առաջի մեր գնալ:

Մի՛ գիտեմք զայլ ոք բաց ՚ի քէն, և զանուն քո անուանեմք զօրհանապազ: Մի՛ մերժեր զմեզ իսպառ. այլ արի՛ յօգնութիւն մեր մեղաւորացս և նուաստից՝ որպէս անյիշաչար և զղջացող ՚ի վերայ չարեաց մերոց: Դարձի՛ր ՚ի բարկութենէ քումմէ, և դարձո՛ զգերութիւն մեր հզօր:

Որպէս զի զերծեալք յանհնարին տարակուսանաց աստի և ՚ի վշտաց, փառաւորեսցուք զքեզ հայր ամենակալ ընդ միածնի որդւոյ քո և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Վասն բարձրացուցման պատկերի սրբուհւոյ ածածնին:

Յորժամ հանդերձեալ է ոք ճանապարհորդել, սովորաբար երգէ քահանայն զկանոնն աղաչանաց ածածնին: Իսկ եթէ ճանապարհորդն ոչ կամիցի, այսու կանոնիւս վերի:

Ասէ քահանայն. Օրհնութիւն. Երեքսրբեան. Ամենասուրբ երրորդութիւն. Հայր մեր, զի քո՛ է արքայութիւն:

Եւ ապա ասէ զժամամուտս զայսոսիկ:

Ողորմեա՛ մեզ Տէ՛ր ողորմեա՛ մեզ, զի մեք մեղաւորքս յամի անպատասխանի գտեալ՝ զաղաչանս զայս քեզ մատուցանեմք որպէս տեառն. ողորմեա՛ մեզ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Տէ՛ր ողորմեա՛ մեզ, զի ՚ի քեզ ապաւինեցաք, մի՛ խստաբար բարկանար մեզ, և մի՛ յիշեր զանօրէնութիւնս մեր. այլ հայեա՛ց ՚ի մեզ այժմ ըստ բարեգթութե՟ քում, և փրկեա՛ զմեզ ՚ի թշնամեաց մերոց. զի դու ես ա՟ծ մեր, և մեք ժողովուրդք քո, և գործք ձեռաց քոց ամենեքին, և կարդամք զանուն քո։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Բա՛ց մեզ զդուռն բարեգթութե՟ օրհնեա՛լ ա՟ծածին, առ քեզ ապաւինեցաք, որպէս զի միջնորդութբ՟ քով ազատեսցուք ՚ի փորձանաց, մի՛ յամօթ առներ զմեզ. զի դու ես փրկութիւն ազգին քրիստոնէից։

Ապա, Տէր ողորմեա՛, ժբ. Եկա՛յք երկիր պագցուք, գ.

Եւ ասէ սաղմոս.

Ողորմեա՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութե՟ քում, ըստ բազում գթութե՟ քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութե՟ իմմէ, և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո, և յաղթող ՚ի դատել գաս։

Անօրէնութբ՟ յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեանն քո յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութի՟ և զուրախութի՟, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զա̃մ անօրէ-նութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Ա̃Ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութե̃ քոյ, և հոգւով պետութեան քոյ հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբա-րիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ Ա̃Ծ Ա̃Ծ փրկութե̃ իմոյ, ցըն-ծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ եր-գեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։

Պատարագ Ա̃Յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհո-գի խոնարհ Ա̃Ծ ո՛չ արհամարհէ։

Բարի՛ արա Տէր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̃, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

Ապա, Հաւատամք ՚ի մի Ա̃Ծ, Եւ̃։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Ա̃Ծ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զյանցանս մեր զկամայ և զակամայ, զբանից և զգործոց, զմտաց և զխորհրդոց, զգիտութ̃ և զանգիտութ̃, զոր ՚ի գիշերի և զոր ՚ի տուըն-ջեան, զա̃մն թո՛ղ մեզ որպէս բարերար և մարդասէր։

Ապա, Հայր մեր, զի քո՛ է արքայութի̃։ Եւ յետոյ ժամամուտքս ասասցէ։

## Աստուածածնէ։

### Տրէ · ՃԿ·

Ամենասուրբ մայր Ա՟յ մի՛ թողուր զիս 'ի ժամանակի կենաց իմոց, մի՛ յանձներ զիս մարդկային վերակացութեան, այլ դու լեր ինձ պաշտպան և ողորմեա։
'Ի պաշտպանութի՟ քո դիմեմ Ա՟ծածին որ կոյս, զի հասից փրկութե՟· քանզի գիտեմ եթէ կարող ես օգնել ինձ։
Անարատ կոյս Ա՟ծածին, ոչ ոք առ քեզ դիմեալ ամօթով դառնայ յետս· այլ խնդրէ զշնորհս, և առնու զպարգև բարի ըստ խնդրուածոց իւրոց։
Ամենայն ոք ուր գտցէ զփրկութի՟, առ այն դիմէ իրաւամբք· իսկ մ՟ք այլ ոք ապաւէն որպէս զքեզ Ա՟ծածին, որ պահպանես զանձինս մեր։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

### Տրէ · ՃՁ·

Նայեա՛ 'ի խնդրուածս քոց աղաչողաց ամենասրբուհի, հանդերձեա՛ զխնամութի՟ս որք յառնեն 'ի վերայ մեր, զերծո՛ զմեզ յա՟մ նեղութե՟ց· քանզի զքեզ միայն ունիմք անսխալ և հաստատուն խարիսխ յաշխարհիս ծովու և պաշտպան· մի՛ ամաչեսցուք տիրուհի յաղաղակել մերում առ քեզ· փութացիր լսել զպաղատանս մեր, որ հաւատով առ քեզ գոչեմք· ուրախ լեր տիրուհի՝ ա՟մցուն օգնութի՟, խնդութի՟ և հովանի և փրկութի՟ անձանց մերոց։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Տրէ · ՃԾ·

Որ վերակոչու լինիս ա՟մ նեղելոց մայր Ա՟յ բարձրելոյ, որք հաւատով ապաւինին 'ի կարող ձեռն քո· վ՟ այսորիկ և մեք մեղաւորքս՝ որք տառապիմք յա՟մ ժամ 'ի վտանգս 'ի բազում մեղաց մերոց, առ քեզ ապաւինեցաք· լեր բարեխօս առ Ա՟ծ փրկել զծառայս քո յա՟մ վշտագին կրից։

Եւ ապա բարձրացուցանէ քահանայն զպատկեր Տէառնօրն, ասելով · Մ՛եծ է անուն սուրբ երրորդութեան ։

Եւ ապա ասէ · Ա՛մենասուրբ տիրուհի Ածածին, օգնեա՛ ծառայի քո ( այս անուն ) ։

Ողորմեա՛ և կեցո՛ զմեզ Ա՛ծ՝ աղաչանօք Ածածնին ։

Եւ ապա ասէ զժամանակին շարականն · Դ՛Կ ։

Ա՛րգանդ քո եղև սեղան սրբութե՛ն կո՛յս անարատ, ունելով 'ի քեզ զհացն երկնային, յորմէ ուտողքն ոչ մեռանիցին, որպէս ասաց կերակրողն ամենեցուն ։

Այլ · Դ՛Ձ ։

Ա՛րժանի՛ արա զմեզ պարգևաց քոց և ողորմութե՛ն Ածածին կոյս՝ բարեխօսութե՛ քով, անտես առնել զյանցանս մեր, և շնորհել զթողութիւն՝ որք հաւատով խնդրեն զօրհնութիւնս քո ։

Եւ ապա երգի · Է՛Կ ։

Ա՛րժա՛ն է ճշմարտապէս երանել զքեզ Ա՛ծածին, զմիշտ օրհնեալ և առաւել անարատ մայրդ Ա՛յ մերոյ, զգերագոյնդ քերովբէից, և անհամեմատ մեծարեալդ քան զսերովբէս, զծնօղդ Ա՛յ բանին անապականաբար, զքեզ ճշմարիտ Ածածին մեծացուցանեմք ։

Ա՛մենայն զինուորութիւնք հրեշտակաց, կարապետ Տն, երկոտասան առաքեալք, և ա՛մ ս՛բք, ընդ սրբուհւոյ Ածածնին բարեխօսեցէ՛ք առ տէր փրկել զմեզ ։

Տիրուհի՛ և մայր փրկչին՝ ընկա՛լ զաղաչանս անարժան ծառայից քոց, և լե՛ր միջնորդ վասն մեր առ ծնեալն 'ի քէն · ով տիրուհի աշխարհի լե՛ր միջնորդ ։

Փառք հօր և որդւոյ և՛ ։ Եւ այժմ և միշտ և՛ ։

Այլ · Դ՛Կ ։

'Ի քեզ ուրախանան ով բերկրեալ ա՛մ արարածք, բանակք հրեշտակաց և ազգ մարդկան · որ եղեր տաճար սրբութե՛ն, դրախտ բանական, պարծանք կուսութե՛ն · զի նախայաւիտեան Ա՛ծն մեր, որ մարմնացաւ առ 'ի քէն և

տղայոցաւ , արար զարգանդ քո աթոռ , և զորովայն երկլին · 'ի քեզ ուրախանան ով բերկրեալ ամ արարածք · քեզ փառք ։

Ժողովածոյ · Դկ ·

Որ ազատեցեր զիս զքաղաքն քո 'ի դառնաղէտ տարակուսանաց ածածին , երես 'ի գետնի եդեալ՝ մատուցանեմ զյաղթական գոհաբանութի քեզ օգնական զօրապետիդ · որպէս զի անպարտելի զօրութբ քով փրկեցես զիս 'ի պէս պէս վտանգից և պատահարաց , զի գոչեցից առ քեզ · ուրախ լեր անհարսնացեալ հարսն ։

Սրբ · Ժծ ·

Դու ես յոյս իմ և ապաւէն մայր ամ , պահեա զիս ընդ հովանեաւ քով ։ Օ քեզ ունիմ ինձ յոյս և օգնական , 'ի նեղութեանց թշնամեաց ոչ երկեայց , զի փրկես զանձն իմ ։

Փառք հօր և որդւոյ և՛ ։ Եւ այժմ և միշտ և՛ ։

Սրբ · Դկ ·

Տիրուհի ընկալ զաղաչանս ծառայից քոց և փրկեա զմեզ յամ վշտաց ։

Եւ ասէ արքեպիսկոպոսն ։

Փառք քեզ ած՝ փառք քեզ ։ Քս ճշմարիտ ածն մեր բարեխօսութբ սրբուհի անարատ մօր իւրոյ , որ և փառաւոր և գերահռչակ առաքելոց , և ամ սրբոց , ողորմեսցի և կեցուսցէ զմեզ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ած ։

Աղօթիւք որ հարցն մերոց տէր յս քս ած մեր , ողորմեա և կեցո զմեզ ։

Իսկ եթէ ճանապարհորդն առաջինքս էցէ , ոչ ասէ արքեպիսկոպոսն · այլ նախ ասէ զաղօթս զայս , և ապա զարքեպիսկոպոսն ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր ած մեր , ճանապարհ և ճշմարտութի և կեանք , որ ճանապարհորդակից եղեր յովսեփայ ծառայի քո ,

ճանապարհորդակից լեր և ծառայիս քո (այս անուն), փրկեա՛ զսա ՚ի փորձութեանց և ՚ի բքոյ, և ՚ի նենգութենէ։

Շնորհեա՛ սմա յաջողութիւն և առողջութիւն, խաղաղութեամբ և ցնծութեամբ դառնալ անդրէն, լի կենցաղական և երկնային բարեօք։

Զի քո է գթութիւն և ողորմութիւն, և քեզ փառք և զօրութիւն Քրիստոս Աստուած մեր, ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք վասն նաւարկողաց։

## Զտէր աղաչեսցուք։

Տեսբօղա տէր, որ հաճեցար ՚ի միասին նաւել ընդ սրբոց աշակերտաց և առաքելոցն քոց. և սաստեցեր մրրկին հողմոց և ալեաց ծովուն, և արարեր խաղաղութիւն։

Հաճեա՛ց և այժմ բա՛րեգութ՝ նաւել ընդ նաւարկողացս այսոցիկ. և զամենայն ներհական հողմս խաղաղացո՛։ Հանդարտեցո՛ զխռովութիւն ալեաց, և շնորհեա՛ հողմս յարմարաւոր և յաջողակ։ Ղեկավա՛ր լեր նոցա ամենուրեք, և զամենայն նենգութիւն նաւարտակաց դարձո՛ ՚ի սոցանէ։ Լեր նաւարկելոցն և նաւին փրկական և անքոյթ նաւահանգիստ, և զերծո՛ յամենայն արկածից։

Եւ տո՛ւր յամենայն ժամանակս բարելից յաջողուածս գործոց սոցա. բարեբաստութեամբ և ցնծութեամբ դառնալ անդրէն, և տեսութեամբ ընտանեաց և բարեկամաց ուրախանալ։

Զի դու ես յոյս և փրկութիւն մեր, և քեզ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Մեթոտոսի Արքազան Պատրիարգին կոստանդնուպոլսոյ:

*Վասն դարձելոցն յուրացութենէ յառաջին և 'ի ճշմարիտ հաւատն քրիստոնէութեան։*

Եթէ մանուկ ոք յափշտակեալ յանբարշտաց, կամ երկեւղէ, կամ անհմտութ(եամբ) քրիստոնէական հաւատոյն, ուրացաւ զճշմարիտ հաւատն իւր. 'ի վերայ այնպիսւոյն ընթերցցի քահանայն զաղօթս զայսոսիկ առաւուրս եօթն յառաւօտուն յետ աւարտման եկեղեցւոյն: Եւ յաւուրն ութերորդի լուասցէ զնա, և օծցէ սրբ իւղով, և զգեցուսցէ հանդերձս նորս ըստ օրինակի մկրտելոյն:

Իսկ եթէ երկոտասանից իցէ կամ ծեր և կատարեալ հասակաւ, և 'ի տանջանաց ուրացաւ, ծոմապահեսցէ երկուս քառասնեկս աւուրս, պարապելով յաղօթս և 'ի ծնրադրութս:

Իսկ 'ի մերձենալ լրման երկուց քառասնեկացն, ընթեռցին զաղօթս զայսոսիկ. և ասասցեն զերեքտասաներորդ սաղմոս, *Տէր ողորմեա*, Ծ: Ապա յետ այսորիկ լուասցեն և օծցեն սրբ իւղով. և 'ի ժամու սրբ պատարագին հաղորդեսցեն սրբ մարմնոյ և արեան կենարարին. և զաւուրս ութ կացցեն յեկեղեցւոջ պարապեալ յաղօթս: Իսկ եթէ յօժարութ(եամբ) և կամաւ իցեն ուրացեալ, ընդունեսցին զդարձ նոցա և զապաշխարութ(իւ)ն. բայց սրբոյն խորհրդոյն միայն 'ի վախճանի կենաց իւրեանց հաղորդեսցեն, ըստ եօթնանասներորդի երրորդի կանոնին [illegible] որ ասէ: *Եթէ ոք ուրանայ զՔս, և յանցանէ 'ի փրկական խորհրդն, պարտի յամ ժամանակս կենաց իւրոց լալ և խոստովանիլ. և 'ի ժամանակի մահուան սուրբ հաղորդութեանն արժանաւորեսցի հաւատով մարդասիրին Այ:*

Աղօթք վասն դարձելոց 'ի ճշմարիտ հաւատն.

## Զտէր աղաչեսցուք.

Քաղցր ես դու տէր, և գթած առ ամենեան. զի ոչ ըստ մեղաց մերոց արարեր մեզ, և ոչ ըստ անօրէնութեց մերոց հատուցեր մեզ. որք ստունգանելով պատուիրանաց քոց, զանձինս մեր մատնեցաք մահու.

Նաև տեսեալ զի կործանումն մեր չար էր, և զօրացեալ մահու եկուլ զմեզ, գթացար 'ի վերայ մեր. և վասն փրկութ ստեղծուածոց քո՝ զկերպարան ծառայի առեր, և մահուամբ քով ազատեցեր յիշխանութէ մահու. և առաջնորդեցեր մեզ 'ի ճանապարհն փրկութե վերստին ծննդեամբ 'ի հոգւոյն սրբոյ.

Եւ այժմ փրկեալքս շնորհիւ քով, օրհնեմք զտնօրէնութիւնն քո և աղաչեմք և պաղատիմք, յիշեա՛ զողորմութիս քո զի յաւիտենից է, և յաղթէ ամ սխալանաց և յանցանաց մարդկան.

Շնորհեա՛ զքաւութի խնդրողացս 'ի քէն. և թող մեզ զամ յանցանս մեր զկամայ և զակամայ, զգիտութ և զանգիտութ. Քանզի ո՛չ է մարդ որ կեցցէ, և ո՛չ մեղիցէ. զի եթէ միօրեայ իցէ կեանք նորա 'ի վերայ երկրի, տակաւին մեղս ունի. Ապա ո՛վ պարծեսցի սիրտ սբ ունել. և կամ ո՛վ վստահասցի մաքուր լինել 'ի մեղաց.

Եւ քանզի ամքին մեղաք բանիւք և գործովք առաջի քո, և զրկեցաք 'ի շնորհաց քոց և 'ի փառաց, բայց յուսամք արդարանալ, և հաճոյ լինել առաջի քո, ոչ 'ի գործոց արդարութ՝ զոր ոչ արարաք, այլ 'ի ճշմարիտ հաւատոյ և յառ քեզ դաւանութէ. քանզի ճանաչելն զքեզ բովանդակ արդարութի է, և գիտելն զզօրութի քո՝ արմատ անմահութեան.

Եւ արդ՝ գիտեմք և հաւատամք և դաւանիմք, զի դու ես որ յոչէից 'ի գոյ ածեր զմեզ, և զարդարութի քո մեզ շնորհեցեր. և անկելոցն ողորմիս, և մեղուցելոցն համբերես, և 'ի մահուանէ կենագործես.

Եւ այժմ աղաչեմք զքեզ տ՟ր ա՟ծ մեր, զոր ինչ մեղաք առաջի քո՝ ո՟չ մարմնաւորք և յաշխարհի բնակեալք և տկարութ՟ զգածեալ, եթէ գործովք, եթէ բանիւք, և եթէ մտածութ՟ք. ինքնին ո՟չ բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ մեզ որք դաւանիմք զքեզ. և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայից քոց, զի ոչ արդարասցի առաջի քո ա՟մ կենդանի։

Քանզի դու միայն ես առանց մեղաց ք՟ս ա՟ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ հոգւոյն ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այլ աղօթք։

Զտէր աղաչեսցուք։

Տե՛սբօղա տէր ա՟ծ մեր, որ զփականս արքայութ՟ քո ս՟բ աշակերտաց և ս՟բ առաքելոց քոց հաւատացեր, և ՚ի վերայ ն՟ց շինեցեր զեկեղեցի քո ս՟բ. և ետուր ն՟ց իշխանութ՟ շնորհիւ քով թողուլ զմեղս ՚ի վերայ երկրի։

Լո՛ւր այժմ մեզ անարժանիցս, որ կոչեմք զքեզ ՚ի քաւութ՟ յանցանաց առաջիկայ ծառայիս քո. և սքանչացո՛ զողորմութ՟ս քո ՚ի վ՟ր սորա, որ յուսացեալ է ՚ի քեզ։

Քանզի դու ասացեր ա՟ծախօս շրթամբք մարգարէիցն քոց, դարձարո՛ւք առ իս, և ես դարձայց առ ձեզ. քանզի ոչ կամիմ զմահ մեղաւորին ո՟չ զդառնալ նորա և զկեալ։

Ինքնին մա՛րդասէր և զառաջիկայ ծառայս քո՝ որ ՚ի մոլորութ՟ ճանապարհէ խուժէ առ քեզ դարձեալ՝ խնդրէ զքաւութիւն, մի՛ ՚ի բաց մերժեր. այլ ողորմութ՟ քով ա՛յց արա, և գթութեամբ քով ընկա՛լ։

Զի դու ա՛ծ՝ ա՟ծ ապաշխարողաց ես, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Այլ աղօթք։

Զտէր աղաչեսցուք։

Տէ՛ր ա՟ծ՝ արարիչ և նախախնամօղ ա՟մցուն, պարգևատու բարեաց, հայր գթած ա՟մ մարդկան. որ ոչ

անտեսեցեր զմարդն՝ զանկեալն պատրանօք բանսարկուին 'ի խորս կորստեան և մոլորութե՟ . այլ 'ի ձեռն փրկական մարդեղութե՟ միածնի որդւոյ քո և ա՟յ մերոյ , խնդրեցեր զնա և փրկեցեր , և առ քեզ վերածեր .

Նոյնին մարդասէր տէր՝ հայեաց և այժմ 'ի ծառայ քո յայս , զոր ազատեցեր 'ի գերութէ բանսարկուին , 'ի բաց կորզելով 'ի մոլար ժողովոյն ամբարշտաց .

Լուսաւորեա զմիտս սորա զօրութե՟ և ներգործութե՟ հոգւոյդ քո ս՟բյ . որպէս զի շնորհ փրկական մկրտութե՟ն որ 'ի հոգւոջ սորա , անդրէն նորոգեսցի . և կնիք երկնաւոր և անապական պարգևացն ամենասուրբ քո հոգւոյն՝ լուսափայլեսցի 'ի սիրտ և'ի խորհուրդս սորա նշանաւ խաչի ք՟ի քո .

Միացո զսա ընդ սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ քո . մերժեա 'ի մտաց սորա զա՟մ սովորութե՟ մոլորութե՟ և ամբարշտութե՟ . և ուղղեա զսա 'ի հրամանս պատուիրանաց քոց գնալ հանապազ .

Արժանաւորեա զսա անդատապարտ հաղորդիլ փրկական խորհրդոց եկեղեցւոյ քո սրբոյ . և 'ի հանդերձեալ կեանս արա հաղորդ երկնային թագաւորութե՟ քում .

Զի դու ես ա՟ծ մեր՝ ա՟ծ ողորմութե՟ և փրկութե՟ , և քեզ փառս վերառաքեմք ընդ միածնի որդւոյ քո և ամենասուրբ հոգւոյն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն .

Այլ աղօթք .

Զտէր աղաչեսցուք .

Տէր ա՟ծ ամենակալ՝ հայր տեառն մերոյ յ՟ի ք՟ի , որ կամիս զի ա՟մ մարդիկ կեցցեն , և 'ի գիտութ՟ի ճշմարտութե՟ եկեսցեն . Որ վասն մոլորեալ ոչխարին զմիածին որդին քո առաքեցեր յաշխարհ փրկիչ և կեցուցիչ , զի խնդրեսցէ զնա և գտցէ , և առ քեզ մատուսցէ .

Զքեզ աղաչեմք և 'ի քէն խնդրեմք , ընկալ զծառայ քո (այս անուն) որ դիմէ 'ի գթութիս քո . հե՛ղ 'ի վերայ սորա զբարեգթութ՟ի մարդասիրութե՟ քո .

Ընկալ որպէս զանուանեալն առ քեզ առ Ած. և Հայր ապաշխարութեամբ դարձեալ, և պատկառեալ դիմօք յերկիր կորացեալ։

Հեռացո ՚ի սմանէ զամ մոլորութի և զամ աղտեղի խորհուրդս բանսարկուին, և խառնեա զսա ընդ հօտ քո ոչ։

Զարդարեա զսա փառօք ամենասուրբ անուան Քի քո, և հաղորդս արա սրբութեանց քոց ընդ ամ հաւատացեալս։

Տուր սմա յամ ժամանակի և յամ տեղւոջ առ քեզ ապաւինել, և զհաճոյս քո առնել. զի մի՛ ևս լինիցի որդի մարմնոյ և ա̃ի, այլ ժառանգ երկնային արքայութե քո։

Շնորհիւ և գթութեամբ Քի քո. ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Խաղաղութիւն ամենեցուն։

Զգլուխս մեր տեառն խոնարհեցուսցուք։

Տէր Ած մեր, որ խոնարհեցուցեր զերկինս և իջեր ՚ի փրկութի ազգի մարդկան. և ՚ի ձեռն խաչի քո ՚ի նախահօրն անիծից ազատեցեր զմեզ, և յերանելի կեանս վերածեր։

Որ եղեր ՚ի խնդիր կորուսելոյ ոչխարի քո, և գտեալ բարձեր ՚ի վր ուսոց քոց խնդալով, և ասացեր՝ այսպէս է ուրախութի յերկինս վն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ։

Ընկալ և այժմ զկորուսեալ ոչխարն քո բանական, և խառնեա ՚ի հօտ քո ոչ. Զօրացո զսա կոխել զօձս և զկարիճս, և զամ զօրութի թշնամւոյն։

Պարսպեալ պահեա կենարարն խաչիւդ քով սրբով, և երկրպագելի անուամբդ քով, որ կոչեցեալ է ՚ի վերայ մեր ծառայից քոց։

Քանզի դու ես Ած մեր՝ Ած ողորմութե և փրկութե. և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա [illegible] առեալ [illegible] օծանէ զնա, առնելով զնշան խաչին ՚ի վերայ ճակատուն, և աչացն, և ընչացն,

խա

և բերանոյն, և երկուց ականջացն, և ձեռացն և կրծոյն, և թիկնամէջոյն, և ծնկացն՝ ասելով. Օծանի ծառայս ա̃յ (այս անուն), յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա ասէ զաղօթս զայս ’ի վերայ գլխոյ նորա։

Զտէր աղաչեսցուք։

Տէր Ա̃ծ ամենակալ, որ մահուամբ խաչի քո փրկեցեր զա̃մ հաւատացեալս ’ի քեզ. և այժմ արժանաւորեցեր զծառայ քո զայս դառնալ ’ի մոլորութենէ ճանապարհէն, և ’ի ճշմարիտ հաւատն քո առաջնորդեցեր, կրելով յանձին զնշան սուրբ իւղոյս։ Պահեա զսա ’ի սրբութեան քում. տուր սմա գնալ ըստ կամաց քոց բարեսիրաց, և կատարել զա̃ծային հրամանս քո։

Եւ արժանի արա զսա մեօք հանդերձ հաղորդել ահաւոր խորհրդոց քոց. և պահել զուղիղ հաւատն որ առ քեզ, արժանաւորել երկնային արքայութեան քում։

Զի ողորմած և մարդասէր ես Ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում Հօր, հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ լինի արձակումն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Վասն երաշխաւորձ քահանայի, որ հան-գերձեալ է պատարագել:

Զինչ երաշխաւորչացն պարտի խնչոչն յաւնել, և ասել·
Օրհնութի· Երեքսրբեան· Տէր ողորմեա, ժբ·
Ակնածք երկիր պագցուք, է· Սաղս ասողս·

Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութէ իմմէ, և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո, և յաղթող ՚ի դատել գաս։

Անօրէնութը յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութի և զուրախութի, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զամ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս ա՛ծ, և հոգի ուղիղ նորոգեա ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութե քո, և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ ա՟ծ փրկութ՟ե իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա՟յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա՟ծ ոչ արհամարհէ։

Բարի՛ արա Տէր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութ՟ե, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութ՟բ քով, և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ ո՟պ երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ո՟յք իջանեն 'ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ Տէր յուսացայ։

Ցո՛յց ինձ ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ա-պաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ա̃ծ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութ̃ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ̃ քով սատակեա՛ զթշնամիս իմ, և կորո՛ զա̃մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ա̃ծ յօգնել ինձ նայեա՛ց, և տէր յընկերել ինձ փութա՛։

Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդրեն զանձն իմ, դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք, որք ասէին ինձ վա՛շ վա՛շ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։

Ասասցեն յամենայն ժամ մեծ է ա̃ծ, և որք սի-րեն զփրկութիւնս քո։

Ես աղքատ և տնանկ եմ ա̃ծ օգնեա՛ ինձ, օգնա-կան և փրկիչ իմ ես, և դու տէր իմ մի՛ յամենար։

Ապա Փառք 'ի բարձունս ա̃յ, եւ̃։

Հաւատամք 'ի մի ա̃ծ, եւ̃։

Ես տէր ողորմեան։

Ա̃ծ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զյանցանս զկամայ և զակամայ, զբանից և զգործոց, զիտաց և զխորհրդոց, զգիտութե̃ և զանգիտութե̃, զոր 'ի գիշերի և զոր 'ի տուընջեան. զա̃մ թող մեզ որ̃պ բարերար և մարդասէր։

Ապա երգեն արշալուսն, և քաղուածոյ ասասցեն, որք յա-ւուրէն ըստ հողէն Ռեսուրէկտիօն և Գլօրիափատրի. և յետոյ զժա-մակարգս ղօղանեն։

Երգ · ճծ̃։

Մեղայ քեզ փրկիչ ո̃չ զանազան որդին. ընկա՛լ զիս զապաշխարեալս հա՛յր, և ողորմեա՛ ինձ ա̃ծ։

Աղաղակեմ առ քեզ Ք՛ս փրկիչ մաքսաւորին զձայն․ քաւեա զիս որպէս զմաքսաւորն, և ողորմեա ինձ Տ՛ծ։

## Աստուածածնէ։

### Երգ․ Ա՛կ։

Ո արագահաս պաշտպանութի և օգնութի քո և զողորմութի ցոյց ծառայի քո սրբուհի Տ՛ածածին․ և զամեհի ալիս անոտի մտածութեց բարեխօսութբ քո հանդարտեցո, և զանկեալ հոգի իմ յարո․ քանզի քեզ գիտեմ ո՛վ կոյս, թէ կարես՝ որչափ և կամիս։

Փ՛ռ, Երեքսրբեան․ Միանաստուրբ երրորդութի․ Հայր մեր, զի քո է արքայութի։

### Երգ․ Վառ։

Որպէս զանկեալն 'ի ձեռս աւազակաց, որ վիրաւորեալ թողաւ կիսամահ, անկեալ կամ և ես 'ի ձեռս անգութ թշնամեաց, և վիրաւորեալ է հոգիս բազմազան մեղօք առ 'ի մահ․ ահա առ քեզ ապաւինիմ առ բարեգութ բժիշկդ հոգւոց, ո՛յց արա ինձ պարտաւորիս, և հեղ 'ի վերայ իմ Տ՛ծ՝ զմեծ քո զողորմութի։

Ո՛պ զանառակ որդին դիմեալ առ հայրդ գթած, աղաղակեմ 'ի խորոց սրտէ․ մեղայ յերկինս և առաջի քո, արա և զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց Տ՛ծ՝ և ողորմեա ինձ։

### Երգ․ Դ՛կ։

Անկեալ 'ի ձեռս աւազակաց իմոց խորհրդոց, կողոպտեցայ 'ի բարեաց, և չարաչար խոցուածովք մեղաց բոլոր հոգին իմ վիրաւորեցաւ․ և կիսամահ անկեալ դնիմ 'ի ճանապարհի կենցաղոյս մերկ յառաքինութեց․ քահանայն և ղևտացին տեսեալ զեղկելիս՝ զանց արարին զինև․ այլ դու որ հաճեցար ոչ 'ի սամարիայէ, այլ 'ի մարիամայ գալ մարմնով Ք՛ս Տծ, մարդասիրութբ քո շնորհեա ինձ զբժշկութի, հեղլով 'ի վերայ իմ զմեծ քո զողորմութիւն։

## Սրէ · ճկ ։

Ի միտ ածեմ զօրն ահագին, և տեսեալ զչար գործս իմ՝ ողբամ դառնագին, թէ զինչ տաց պատասխանի անմահ Թագաւորին. և որպէս համարձակեցայց հայել առ տէրդ ես անառակս. ով բարեգութ ա՜ծ՝ յայնմ աւուր ահեղին ողորմեա ինձ։

'Ի ձորն լալեաց, յորժամ նստիս յաթոռ փառաց դատել զմեղերս իմ, մի՛ դատեր զիս արդարութ֊ բարեգութ, այլ խնայեա՛ յիս ա՜ծ՝ և ողորմեա՛։

Փառք Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Ես եմ թզենին անպտուղ, որ ոչ բերեմ բնաւ զպտուղ ապաշխարութե՜, և 'ի հատանմանէն երկնչիմ, և յանշէջ հրոյն զարհուրիմ. վասն որոյ առ քեզ պաղատիմ տէ՛ր, յառաջ քան զհատանիլն իմ մահուն տապարաւ՝ դարձո՛ զիս առ քեզ ապաշխարութ֊, և կեցո՛։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Զաստուածածնէ։

Յոյս բարի ա՜մ աշխարհի ա՜ծածին կոյս, զանյաղթելի օգնականութի՜ քո հայցեմ. գթա՛ 'ի յիս 'ի մեղաւորս, և աղաչեա՛ զա՜ծ փրկել զհոգի իմ յա՜մ սպառնալեաց՝ բարեբանեալդ սրբուհի։

Տէր ողորմեա · Խ ։

Եւ ապա ասէ զաղօթս, զոր արարեալ է Մ՝աշտոց Գառնակերցի։

### Զտէր աղաչեսցուք։

Բազմագութ տէր ա՜ծդ ա՜ծց, որ մարդանալովդ քո զընութիւնս մեր յապականութենէ զերծուցեր, և յա՜մ պղծութենէ սրբեցեր։

Ինքնին ո՛ղ բարերար տէր՝ և զիս զախտաւորս և զմեղսասէրս և անըրջական աղտեղութ֊ զաղարտեալս, մաքրեա՛ յա՜մ պղծութե՜ մարմնոյ և հոգւոյ, և զա՜մ ախտաւոր մտածութիւնս ամենազօր շնորհիւ քով 'ի բաց արա յինէն. և զճրագն ողջախոհութե՜ իմոյ պայծառացո՛ 'ի սրտի իմում։

Որպէս զի 'ի պիղծ մարմանջմանց գիշերային երևա-կայութ՟եց , և յա՟մ խաւարային ախտաւոր խորհրդոց օգնականութ՟բ քով զերծեալ , խորհեցայց 'ի լուսաւոր պատուիրանս քո յա՟մ ժամ . և ս՟բ մտօք կենդանարար և անմահական խորհրդոց քոց հաղորդիլ արժանի եղէց , բարեխօսութ՟բ տիրուհւոյն մերոյ ա՟ածնին , և միշտ կուսին մարիամու , և ա՟մ սրբոց , ամէն .

Այլ աղօթք սրբոյն բարսղի հայրապետին .

Զ տէր աղաչեսցուք .

Սուրբ տէր` որ միայն ես առանց մեղաց , մաքրեա́ զանպիտան ծառայս քո յա՟մ պղծութ՟ե հոգւոյ և մարմնոյ , և յանմաքրութենէ աստի , որով զաղտացեալ գտայ յանզգաստութ՟ե իմմէ . Ցո՛յց զիս անարատ 'ի ձեռն շնորհի ք՟ի քո , և սրբեա́ զիս սրբութ՟բ հոգւոյն քո սրբոյ .

Որպէս զի մաքուր հոգւով և անբիծ մարմնով արժանի եղէց բանալ զբերան իմ յօրհնաբանութ՟ի ամենասուրբ անուան քո , և անդատապարտ հաղորդիլ կենարար խորհրդոց միածնի որդւոյ քո` տեառն և ա՟յ մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի .

Ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն .

Այլ աղօթք սրբոյ հօրն մերոյ մարգինիանոսի .

Զ տէր աղաչեսցուք .

Իշխանն խաւարի դարձեալ պատրեաց զեղկելիս միտօք , և չար սովորութ՟ե մեղացն ծառայեցոյց . ախտաւոր հեշտութ՟են գրգռիչ դարձեալ գերեաց զիս , և խոնարհեցուցեալ կամաց իւրոց` բռնադատեաց ցանկութ՟եց մարմնոյ սպաս հարկանել .

Իսկ զի՞նչ արարից տէր տէր` ազատիչ և ապաւէն 'ի քեզ յուսացելոց , դարձեալ առ քեզ դարձայց և հեծեծեցից և խնդրեցից զթողութ՟ի յանցանաց իմոց .

Եւ քանզի յիւրաքանչիւր աւուր խոստանամ դառնալ առ քեզ, և ուխտեմ հեռի կալ ՚ի չարեաց. բայց անդրէն ուխտազանց եղեալ՝ յիւրաքանչիւր ժամու մեղանչեմ: Վասն որոյ երկնչիմ և դողամ, զի մի՛ գուցէ զերկայնմտութիւն ա̃յդ իմոյ շարժեցից ՚ի ցասումն. և ո՛ հանդուրժեսցէ սրտմտութեան քո. զի ահաւոր ես տէ՛ր, և ո՛վ կարէ կալ առաջի քո:

Այլ գիտելով զառատութի գթութեց քոց, և զանհասման մարդասիրութի քո, դարձեալ ապաստան եղեալ յողորմութիւնս քո, աղաղակեմ առ քեզ և ասեմ. Մեղայ ա̃ծ, ողորմեա՛ ինձ անկելոյս. տո՛ւր ինձ ձեռն օգնականութե, որ ընկղմեալ կամ ՚ի տիղմն հեշտութեց. և մի՛ թողուր տէ՛ր՝ զիս զստեղծուած քո ապականիլ անօրէնութեամբք և մեղօք իմովք:

Այլ սովորական քաղցրութ̃եդ վարեցեալ, մաքրեա՛ զիս յաղտեղութէ մարմնոյ իմոյ, և փրկեա՛ յախտաւոր մտածութեց իմոց, որք զօր ա̃մ զաղրացուցանեն զթշուառական հոգի իմ, որով բոլորովին ախտացեալ դառնիմ մերձ յեղծումն և յապականութիւն:

Իսկ արդ՝ տէր ա̃ծ իմ աղբիւր ողորմութե, որպէս բժիշկ հոգւոց հե՛ղ յիս զմարդասիրութի քո, և տո՛ւր ինձ զբժշկութի և զմաքրութի, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:

Շնորհեա՛ ինձ բարեգութ՝ զարտասուս ապաշխարութե ո̃պ պոռնկին, լուանալ զաղտ հոգւոյ և մարմնոյ իմոյ. քանզի դու ասացեր անսուտ ա̃ծ, թէ մեծ ուրախութի լինի յերկինս վ̃ն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ:

Խոնարհեցո՛ զունկն քո անոխակալ՝ և լո՛ւր ինձ մեղապարտ և անարժան ծառայի քո, և ընկա՛լ զաղօթս և զպաղատանս իմ ո̃պ խունկ հաճոյական առաջի քո. և մի՛ վ̃ն բազում մեղաց իմոց մերժեր յերեսաց քոց. քանզի գիտես զտկարութի բնութես մերոյ արարիչդ բնութե, եթէ միտք մեր ՚ի չարիս են արձանացեալ ՚ի մանկութէ մերմէ:

Զի դու միայն ես առանց մեղաց, որ ընդունիս զապաշխարութի, և շնորհես զքաւութի բազում ողորմութ̃ե

խբ

քով . և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սբյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Սրկ . ասէ ծնրադրութիւն , Ծ . Եւ յետ ծնրադրութեան ասէ .

Ա.Ծ քաւեա զիս զմեղաւորս , և ողորմեա ինձ վն անուան քո : Չա , Մեղայ քեզ Տէր , ներեա ինձ անառակիս :

Սրկ աղօ ասէ :

Որ ժամանակի և յամ ժամու յերկինս և յերկրի երկրպագիս և փառաւորիս Քս Ած , երկայնամիտ , բազումողորմ , և բարեգութ :

Որ սիրես զարդարս , և ողորմիս մեղաւորաց , և զամենեսին կոչես 'ի փրկութն' 'ի ժառանգութն խոստացեալ բարեացն հանդերձելոց :

Ինքնին Տէր' ընկալ զաղաչանս մեր 'ի ժամուս յայսմիկ , և ուղղեա զկեանս մեր 'ի պատուիրանս քո :

Սրբեա զհոգի մեր , մաքրեա զմարմին մեր , լուսաւորեա զմիտս մեր , բարեկարգեա զխորհուրդս մեր . և փրկեա զմեզ յամ նեղութե , 'ի վշտաց , և 'ի ցաւոց :

Պատսպարեա զմեզ սբ հրեշտակօք . յորոց պահպանեալ և առաջնորդեալ' հասցուք 'ի միութի հաւատոյ և գիտութե անմատոյց փառաց քոց . զի օրհնեալ ես յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա :

Փառք Հօր և որդւոյ և" : Այժմ և միշտ և" :

Օ գերագոյնդ քերոբէից , և անհամեմատ մեծարեալդ քան զսերոբէս , զծնօղդ այ բանին անապականաբար , զքեզ Ածածին մեծացուցանեմք :

Օրհնեա հայր յանուն Տեառն :

Տէր Ած հայր ամենակալ , Տէր միածին որդի յս քս , և սբ հոգի , մի Ածութի , մի զօրութի , ողորմեա ինձ մեղաւորիս , և ըստ իրաւանց քոց կեցո զանարժան ծառայ քո . զի օրհնեալ ես 'ի յաւիտեան :

Ամս , Սրբեքսրբեան . Ամենասուրբ երրորդութի . Հայր մեր , զի քո է արքայութի . Տէր ողորմեա , ժբ :

Փառք Հօր և որդւոյ և" : Այժմ և միշտ և" :

Օ գերագոյնդ քերոբէից , և անհամեմատ մեծար-եալդ քան զսերոբէս , զծնօղդ ա̅յ բանին անապականաբար , զքեզ ճշմարիտ ա̅ծածին մեծացուցանեմք ։

Բազուածոյ . Գ̅կ ։

Որ ազատեցեր զիս զքաղաքն քո 'ի դառնագէտ տարակուսանաց ա̅ծածին , մատուցանեմ զյաղթական գոհաբանութի̅ քեզ օգնական զօրապետիդ . այլ որ անպարտելի ես զօրու̅թ՝ փրկեսցես զիս 'ի պէսպէս վտանգից , զի գոչեցից առ քեզ , ուրախ լեր անհարսնացեալ հարսն ։

Եւ լինի արձակումն ։

Բայց գիտելի է , զի եթէ երազագործութի̅ն իցէ 'ի դիւական արկածէ , քահանայն կատարէ զվերագրեալ կարգաւորութիւնն և քահանայագործէ , և ժողովուրդն հաղորդի ։

Իսկ եթէ յարբեցու̅թէ իցէ , մի՛ մերձեսցի 'ի քահանայագործութի̅ն ըստ երր̅դ կանոնին Դիոնէսիոսի , և ըստ մեծին Աթանասի 'ի թուղթն որ առ Ամմուն , և ըստ մեծին Բարսղի որ առ միայնակեացն ։ Խնդրեա՛ զայսոսիկ 'ի կանոնն . Գլ, Ժ̅Ը . համար 20 ։

Վասն հաշտութեան խռովեալ բարեկամաց ։

Սարկաւագն ։

Ողորմեա՛ մեզ ա̅ծ ըստ մեծի ողորմութեան քում , աղաչեմք զքեզ լուր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան , կենաց , խաղաղութե̅ , առողջութե̅ , փրկութե̅ , այցելութե̅ , քաւութե̅ և թողութեան մեղաց ծառայից ա̅յ ( այս անուն ) ։

Եւ վասն հաստատուն մնալոյ սոցա 'ի սէր և 'ի բարեկամութե̅ միմեանց մինչև ցվախճան կենաց իւրեանց , զտէր աղաչեսցուք ։

Վասն լսելի լինելոյ տեառն ա̅յ մերոյ ձայնի աղաչանաց մերոց , զտէր աղաչեսցուք ։

Ս՝ զի տ̅ր ա̅ծ մեր օրհնեսցէ զսոսա ա̅մ հոգևոր օրհնութե̅ , և լցուսցէ ա̅մ կենցաղական բարեօք , զտ̅ր աղա̅ ։

Նա ասէ քահանայն զաղօթս զայս ։

Գոհանամք զքէն տէր մարդասէր, Թագաւոր յաւիտենական, և պարգևատու բարեաց. որ քակեցեր զմիջնորմն թշնամութե, և արարեր խաղաղութի ազգի մարդկան։

Դու բարերար՝ որ պարգևեցեր այժմ խաղաղութի ծառայից քոց, արմատացո 'ի նոսա և զերկիւղն քո, և զսէրն առ միմեանս հաստատեա պահեա. շիջո զամ հեռ և զնախանձ, և բարձ զամ գայթակղութիս հակառակութե.

Զի դու ես խաղաղութի մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

Աղօթք 'ի վերայ ոստոց արմաւենեաց, զորս օրհնեն յեկեղեցւոջ 'ի կիրակէի ծաղկազարդին, և բաշխեն ժողովրդեան.

Զ տէր աղաչեսցուք .

Տէր մեր յս քս, որ առաքեցար 'ի հօրէ փրկել զաշխարհս 'ի ծառայութե մահու. և յեկաւորիլն քո յերուսաղէմ 'ի կամաւոր չարչարանս, օրհնեցեր զժողովուրդն՝ որ զձիւղս ծառոց և զոստս արմաւենեաց 'ի նշանակ յաղթութե քո բերեալ մատուցանէին, զփառաւոր յարութին քո և զանմահ թագաւորութին յառաջագոյն ցուցանելով։

Ինքնին տէրդ՝ և այժմ զբերօղքս զոստս և զձիւղս ծառոց 'ի նախատօնակ աւուրս յայսմիկ օրհնեա, և պահպանեա զոսսա որպէս զմանկունսն, որք զովսաննայն քեզ մատուցանէին։

Որպէս զի օրհնութե և երգօք հոգևորօք արժանացուք փառաւորել զկենդանարար յարութին քո, որ փառաւորեալդ ես ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Կարգաւորութիւն վասն որդեգրութեան։

Այն որ հանդերձեալ է որդեգրել արու կամ էգ, կանգնի 'ի ներքսուստ դրանցն սրբոյ սեղանոյն, և մանկաբարձն արտաքուստ, երկաքանչիւրն լուցեալ մոմեղէնս ունելով 'ի ձեռին։
Իսկ քահանայն զգեցեալ զքահանայական պատմուճանն, ասէ. Օրհնութի՟ն, Երեքսրբեան, Ամենասուրբ Երրորդութի՟ն, Հայր մեր, զի քո է արքայութի՟ն. և Աւուր պատշաճին, և Քաղուածոյ սրբոյն Աւետարանին. Ապա զաղօթս զայս։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ա՟ծ մեր, որ 'ի ձեռն սիրելի որդւոյ քո տեառն մերոյ յի՟ի քի՟ի՝ որդիս կոչեցեր զմեզ ա՟յ, որդեգրութ՟բ և շնորհիւ ամենազօր հոգւոյն քո սրբոյ որ տացեր, ես եղէց նմա 'ի հայր, և նա եղիցի ինձ յորդի։
Ինքնին մարդասէր թագաւոր՝ հայեա՛ց 'ի սր՟բ բնակութենէ քումմէ 'ի ծառայքս քո յայսոսիկ, և զորս բնութեամբ՝ ըստ մարմնոյ օտարս յիրերաց և բաժանեալս ծնաւ, դու ինքնին 'ի հայր և յորդի միացո՛ զսոսա հոգւովդ քով սրբով։
Հաստատեա՛ զսոսա սիրով քով. կապակցեա՛ զսոսա օրհնութ՟բ քով. շնորհազարդեա՛ զսոսա փառօք քո. ամրացո՛ զսոսա հաւատով քով. ընկա՛լ և մի՛ արհամարհեր զբանս շրթանց սոցա։
Եւ լե՛ր միջնորդ խոստմանն սոցա, զի մինչև 'ի վախճան կենաց իւրեանց անխզելի պահելով զկապակցութի՟ն, և անսատելի զխոստումն՝ զոր առաջի քո խոստացան և ուխտեցին, կեցցեն 'ի քեզ 'ի միայն կենդանի և 'ի ճշմարիտ ա՟ծդ մեր։
Այո՛ տէր ա՟ծ մեր, հաստատուն պահեա՛ զխոստումն սոցա, և արժանացո՛ զսոսա լինել ժառանգորդ արքայութեան քում։
Եւ քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութի՟ ընդ միածնի որդւոյ քո և ընդ ս՟բյ քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր ա̃ն խոնարհեցուցէք։

Տէր տէր՝ արարիչ ա̃մ արարածոց՝ որ առաջին ադամաւ զմեզ ըստ բնութե̃ մարմնոյ ազգակիցս միմեանց ցուցեր. իսկ երկրորդ ադամաւ քսիւ յսիւ սիրելի որդւովն քով և աստուածով մերով, որդեգրութե̃ն շնորհիւ ազգակիցս քո արարեր։

Եւ այժմ ծառայքս քո այսոքիկ, քեզ միայն գիտողի զա̃մ և նախ քան զլինել նոցա՝ զգլուխս խոնարհեցուցանեն, և զօրհնութի̃ն քո հայցեն. զի միջնորդութե̃ քսի քո՝ որ արար խաղաղութի̃ յերկինս և յերկրի, եղիցին հայր և որդի, և հանդիպեսցին ակնկալութե̃ իւրեանց երկնաւոր բարութե̃ց, կատարելով երկաքանչիւր զպարտաւորութի̃ իւրեանց, որպէս արժան է և վայելուչ որդեգրութեանն որ ՚ի քեզ։

Որպէս զի յամենեսին և ՚ի սոսին փառաւորեսցի անուն քո հօր ընդ որդւոյ և ամենասուրբ հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ առնու հայրն զորդին ՚ի սեղանոյն, և որդին անկանի յոտս հօրն, և հայր դնէ զձեռն իւր զաջ ՚ի վերայ պարանոցի նորա՝ ասելով. Ահա որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ։ Եւ յարուցանէ զնա, և համբուրեն զմիմեանս։

Իսկ քահանայն ասէ Արձակումն։ Եւ ապա օրհնէ զնսա, և ուսուցանէ երկաքանչիւրոց զպարտաւորութիս իւրեանց, թէ որպէս պարտին քաղաքավարել ընդ միմեանս։

Կարգաւորութիւն վասն օրհնութեան նորաշէն փռան։

Քահանայն ասէ. Օրհնութի̃, և ասէ Զօրհնէք, որ յունարէն ասի Եւլօգիտօս։ Եւ ապա ասէ զաղօթս զայսոսիկ։

Զտէր աղաչեսցուք։

Տէր յաւիտենական՝ բարերար և խնամակալ, որ ամենիմաստ տեսչութե̃ ստեղծեր զհրեշտակս քո յոգիս, և զպաշտօնեայս քո ՚ի բոց հրոյ։

Որ բարեգութ կամօք քաղցրութբ քո արարեր զգունան արեգական՝ ամենասփիւռ ճառագայթիւք լուսատու լինել երկրի, և տածօղ ջերմութբ իւրով կենդանածնել 'ի պէտս կարեաց մարդկային ազգի զբոյս և զզեռունս, զշնչաւորս և զկենդանիս, զի մի՛ տարրական խոնաւութբ իւրեանց լուծանիցին և ապականեսցին. և օրհնեցեր զամենեսին ածային օրհնութբ քով, 'ի յիշատակ փառաց մեծվայելչութեան ածութեան քո:

Ինքնին օրհնեա՛ և զայս փուռն ողորմութբ քով մեծաւ, և յաջողեա՛ զգործս ձեռաց ծառայից քոց 'ի բարին՝ որք աշխատին 'ի սմա. բարեխօսութբ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ ածածնին, զօրութբ պատուական և կենարար խաչին, օժանդակութբ մեծ դասապետացն միքայելի և գաբրիելի և ամ երկնային զօրութցն անմարմնոց, պատուական փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, սբց փառաւոր և ամենահռչակ առաքելոցն, սրբազան վկային կիպրիանոսի, սրբոյ հօրն մերոյ նիկողայոսի սքանչելագործ հայրապետին զմիւռնիոյ լիկիացւոց, և ամ սրբոց:

Զի դու ես որ օրհնես զամենին քս ած մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ սբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Այլ աղօթք:

Զտէր աղաչեսցուք:

Տէր ած մեր՝ որ 'ի բարձունս բնակիս և զամ ինչ տեսանես, որ օրհնեցեր զտունն լաբանու 'ի մուտս յակոբայ, և զտունն ամինադաբայ 'ի մուտս տապանակին:

Ինքնին օրհնեա՛ զայս փուռն, և զգործօղս 'ի սմա անվնաս յամ արկածից պահեա՛: Զողորմութի քո 'ի բարձրութէ բնակութն քո առաքեա՛ 'ի նոսա, և օրհնեա՛ և բազմացո՛ և արդիւնաւորս արա՛ զգործս ձեռաց սոցա:

Որպէս զի գոհութբ փառաւորեսցուք զամենասուրբ անուն քո՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա ասէ ։

Ողորմեա՛ մեզ Ա̅Ծ ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ, լո՛ւր և ողորմեա՛ ։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան, թողութեան մեղաց ծառայից քոց ( այս անուն ) ։

Եւ վասն օրհնելոյ և բազմանալոյ գործոց ձեռաց աշխատելոցն ՚ի փառս յայսմիկ, աղաչեմք զքեզ տէ՛ր, լո՛ւր և ողորմեա՛ ։

Լո՛ւր մեզ Ա̅Ծ փրկիչ մեր, յոյս ա̅մ ծագաց երկրի, և որ ՚ի ծով հեռի, և քաւի՛չ լեր ՚ի վերայ մեղաց մերոց, և ողորմեա՛ մեզ ։

՚Ի ճաշն ։

Զի ողորմած և մարդասէր ես Ա̅Ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Եւ սրբաջրով սրսկէ զհարսն և զտուն նոցա ։

Ապա առնէ արձակումն ։

---

Կարգաւորութիւն վասն բժժելոյ մանկան ։

Ասէ քահանայն ․ Օրհնութի, Երեքսրբեան, Ամենասուրբ երրորդութի, Հայր մեր, զի քո է արքայութի ։

Եւ ապա ընթանանուտս զսպասն ։

Որ գնացեալ առ աշակերտսն քո փրկիչ, զխաղաղութի քո ետուր նոցա, եկ և առ մեզ մարդասէր, և շնորհեա՛ զխաղաղութիւն քո ։

Զոգէտ աշակերտան քո ք՛ս Ա̅Ծ՝ հոգւովդ քո ս̅բ ուսուցիչս կարգեցեր, որք բազմաբարբառ լեզուօք զերրորդութի̅ն ս̅բ և զմի Ա̅Ծութի̅ն յընդհանուրս քարոզեցին ։

Նորոգեցեր զաշակերտսն քո Ք̅ս Ա̅ծ՝ լեզուօք այլ և այլ ազգաց · զի քարոզեսցեն զքեզ զանմահ Բանդ և Ա̅ծ, որ շնորհես հոգւոց մերոց զմեծ ողորմութիւնդ ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ։

Թագաւոր երկնաւոր մխիթարիչ Հոգի ճշմարտութեան՝ որ յա̅մ տեղիս ես, և զա̅մ լնուս · որ գանձ ես բարութեանց և պարգևիչ կենաց, եկ և բնակեա՛ց 'ի մեզ, և մաքրեա՛ զմեզ յա̅մ աղտեղութենէ, և կեցո՛ բարերար զանձինս մեր ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աստուածածնի ։

Բա՛ց մեզ զդուռն բարեգթութեան օրհնեալ Ա̅ծա̅ծին, առ քեզ ապաւինեցաք, որպէս զի միջնորդութեամբ քով ազատեսցուք 'ի փորձանաց, մի՛ յամօթ առներ զմեզ · զի դու ես փրկութիւն ազգին քրիստոնէից ։

Ապա առէ քահանայն 'ի վերայ գլխոյ մանկան զաղօթս զայս ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէ՛ր Յ̅ս Ք̅ս Ա̅ծ մեր, որ առաքելոց քոց Ա̅ծային փչմամբ պարգևեցեր զՀոգի քո Ս̅բ, և բացեր զմիտս ն̅ց իմանալ զգիրս · որ բնակեցար 'ի սիրտս և 'ի հոգիս նոցա՝ 'ի ձեռն շնորհի ամենասուրբ քո Հոգւոյն, որ էջ առ նոսա տեսլեամբ լեզուաց հրեղինաց · և ետուր նոցա խօսել յայլ և այլ լեզուս 'ի փառս Ա̅ծութեան քո ։

Ինքնին մարդասէր՝ առաքեա՛ զնոյն Հոգի քո սուրբ յառաջիկայ մանուկս (այս անուն) · և բա՛ց զմիտս սորա ուսանել զգիրս ։

Որպէս զի խորհելով միշտ 'ի լուսաւոր պատուիրանս քո, քաղաքավարեսցի ըստ հաճոյից բարեսէր կամաց քոց · և արժանաւորեսցի անդադար փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

խգ

Այլ աղօթք։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր Յ՟ս Ք՟ս, որ շնորհօք հոգւոյն քո ս՟բյ լուսաւորեցեր զսիրտս ս՟բց մարգարէից և առաքելոց և աշակերտաց, և աւետարանչաց քոց յովհաննու՝ մատթէի՝ մարկոսի և ղուկասու, և ս՟բ նախավկային քո ստեփաննոսի։

Ինքնին և այժմ տէ՛ր լուսաւորեա՛ զսիրտ ծառայիս քո (այս անուն), բարեխօսութ՟բ առաւել օրհնեալ տիրուհւոյն մերոյ ս՟ծածնին և միշտ կուսին մարիամու, զօրութ՟բ պատուական և կենարար խաչին, աղաչանօք պատուական և փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, սրբոց փառաւոր և ամենահռչակ առաքելոցն, և ս՟բյ առաքելոյն մատթէոսի, ս՟բց մարտիրոսացն աղաբիղոսի, պրոկոպիոսի, փիլեմոնի, և ա՟մ ս՟բց։

Զի դու ես լուսաւորութի՟ հոգւոց և մարմնոց մերոց, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քո հօր, և ամենաս՟բ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

---

Աղօթք վասն մանկան որ երթայ ուսանել զգիրս սուրբս։

## Զտէր աղաչեսցուք։

Տէր ա՟ծ մեր՝ որ քոյին պատկերաւ պատուեցեր զմարդ, և ետուր նմա զմիտս և զհանճար, ուսանել և իմանալ զգիրս, և խորհել 'ի պատուիրանս քո յա՟մ ժամ։

Որ չոգար 'ի տաճարն յընդմիջել տօնին, և ուսուցեր զժողովուրդն ա՟ծեղէն վարդապետութ՟բ, մինչև զարմանալ ժողովրդոց։

Ինքնին Թագաւոր ա՟մցուն ա՟ծ բան, բաց զհոգի զսիրտ զբերան ծառայիս քո (այս անուն), ընթեռնուլ և իմանալ զլուսաւոր պատուիրանս քո, և առնել զկամս քո յամենայն ժամ։

փրկեա՛ զսա յա՟մ արկածից երևելեաց և աներևութից․ և պահեա՛ զսա զարգացեալ ՚ի պատուիրանս քո զա՟մ աւուրս կենաց իւրոց, բարեխօսութ՟բ անարատ մօր քո և ամենայն սրբոց։

Զի դու ես տեսուչ հոգւոց և մարմնոց մերոց Ք՟ս Ա՟ծ, և քեզ փառս վերառաքեմք ընդ հօր և ընդ հոգւոյդ ս՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր։

---

Աղօթք վասն դժուարածնին յղի կնոջ։

Զտէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛․ տէր ողորմեա՛․ տէր ողորմեա՛։

Տէր Ա՟ծ մեր յո՟ ք՟ս՝ մեծ և բարձրեալ, անպատմելի, անփոփոխելի, և մշտնջենաւոր․ որ իջեր ՚ի յերկնից և մարմնացար ՚ի սրբոյ կուսէն մարիամայ հոգւովն ս՟բվ․ և զապականեալն մեղօք զբնութիւն մեր ՚ի նախահօրն յանցանաց՝ որով Ա՟մ կանացի բնութի ընկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւօք և տրտմութ՟բ ծնանիլ զզաւակ, սրբեցեր Ա՟ծութեամբ քով։

Նա արդ՝ աղաչեմք զքեզ մարդասէր Թագաւոր՝ ըստեղծօղ և նորոգօղ մեր՝ և բժիշկ հիւանդութեանս մերում, բժշկեա՛ և առողջացո՛ (զսա անուն) աղախին քո ՚ի հոգեկան և ՚ի մարմնական յախտէս յայսմանէ։

Տարածեա՛ զօգնութի քո ՚ի սրբութէ քումմէ, և տո՛ւր սմա զօրութի ծնանիլ զզաւակ․ որպէս զի զպտուղ որովայնի իւրոյ մաքրեալ յա՟մ արատոյ ծննդեամբ սուրբ աւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում սրբոյ։

Շնորհեա՛ ծննդականիս այսորիկ հանդարտութ՟բ և առանց վտանգի հասանիլ ՚ի խնդութի․ և Ա՟մ ամաց հաւատացելոց աճիլ և բազմանալ ՚ի փառս տէրութե քո, և ՚ի լրումն Ա՟ծային քո բանին, եթէ աճեցէք և բազմացարուք։

Այո՛ տէր Ա՟ծ մեր, լո՛ւր և այժմ խնդրուածոց

անարժան ծառայիս՝ և ամենեցուն որ շուրջ կան աստ , բարեխօսութեամբ անարատ ծնողի քո սուրբ Աստուածածնի , և ամենայն սրբոց քոց ։

Զի քեզ միածնի որդւոյդ , և անսկզբն և համագոյ հօր քո , և կենդանարար և ամենասուրբ հոգւոյդ՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Այլ աղօթք ։

Զտէր աղաչեսցուք ։

Տէր ամենակալ և ամենազօր , դու գոյացուցեր զերկինս և զերկիր , և զարդարեցեր զնոսա ամենայն վայելչութեամբ ։ Արարեր զդասս հրեշտակաց և զամենայն անմարմին զօրութիւնս , և ետուր նոցա 'ի բնակութիւն զերկինս ։

Ստեղծեր և զմարդն , և բնակեցուցեր յերկրի , և զանազան շնորհօք հոգւոյն քո սրբոյ . և ազգի ազգի պարգևօք բարութեան քո և քաղցրութեան զարդարեցեր զնա , և հոգևոր և մարմնաւոր բարեաց արժանաւորեցեր ։

Շինեցեր և 'ի կողէ նորա զկինն օգնական նմա . և ետուր նոցա հրամանաւ քով զօրութիւն աճելոյ և բազմանալոյ . և աստուածային պատուիրանաւ քով պատսպարեցեր զնա , զի յանցաւ և յանաշխատ կեանսն վայելեսցեն , և անվրիպելի մնասցեն 'ի փառացն զոր ընկալան ։

Իսկ քանզի յանցեան զպատուիրանաւ քով անհնազանդութեամբ . և յետ ճանաչելոյ զյանցանս իւրեանց , ոչ զղջացան 'ի սրտէ , և ոչ խոստովանութեամբ յանցանաց իւրեանց ցուցին զխոնարհութիւն առաջի աստուածութեանդ քո , վասն որոյ և ընկալան զպատիժ պատուհասի . որպէս զի Ադամ քրտամբք երեսաց կերիցէ զհաց , և Եւայ ցաւօք և հեծութեամբ ծնցի զորդի . և յանցանք և պատիժք նախածնողացս այսոցիկ փոխադրեցան առ ազգս մարդկան ։

Այլ առաքելով զմիածին որդի քո յաշխարհ , որ մարմնացաւ և ծնաւ 'ի սուրբ կուսէն , թեթևացուցեր զայս պատիժ մարդկային ազգի , և փոխեցեր յարդիւնս

առաքինութեան և բարեգործութեան առ ստացումն փրկութեան։

Ոչ զի այրն քրիստոնեայ աշխատութեամբ վաստակելով արժանապէս 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր օգտակար գործս, և կինն ծնանելով զզաւակ, և աշխատելով 'ի սնունդ և 'ի զարգացումն նոցին, և ուսուցանելով զբարին, երկոքին ևս զառաջին կատարելութիւն զոր կորուսին՝ գտանիցեն, և յաւիտենական բարութեանցն արժանաւորեսցին։

Ո[illegible]ան որոյ բազումողորմ և անոխակալ տէր՝ լուր այժմ աղաչանաց նուաստ և անարժան ծառայից քոց․ և զարտասուս և զհեծութիւն սրտի մերոյ և զհառաչանս հոգւոյ զոր առաքեմք 'ի բարձունս, ոչ խունկ հաճոյս կամ ընծայ․ և ըստ անսահման ողորմութեան քում յիշեա զբարերարութիւն՝ զոր ցուցեր առ ազգ մարդկան, և զթեթևութիւն պատժոյն՝ զոր արարեր 'ի ձեռն սիրելի որդւոյ քո տեառն մերոյ։

Եւ յաթոռոյ փառաց քոց առաքեա զանծայրն զօրութիւն քո և զօգնականութիւն 'ի տառապեալ աղախին քո (այս անուն)․ և փարատեա 'ի սմանէ զցաւս և զվիշտս․ և յաջողեա դիւրութեամբ և առանց վնասու ծնանել զզաւակ իւր․ և պահեա կենդանի հանդերձ ծնեալ զաւակաւն։

Որպէս զի ուրախութեամբ և գոհութեամբ և 'ի սմա փառաւորեսցուք զբարձրեալ և զմեծ անուն քո հօր ընդ որդւոյ և ընդ հոգւոյն քո սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# Սրբոյ և մեծին Բարսղի Հայրապետի

Աղօթք վասն դիւահարաց։

## Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք։

Եւ ևս վասն խորտակելոյ վաղվաղակի տեառն այ մերոյ զբանսարկուն սատանայ, և զամ զօրութիւն նորա ընդ ոտիւք մերովք, զտէր աղաչեսցուք։

Վասն հալածական առնելոյ զամ ներգործութիւն ստնյի և չար պաշտօնէից նր ՚ի ծառայէս այ, զտր աղաչեսցուք։

Վասն հրեշտակի խաղաղութե յանձն առնելոյ զսա զամ աւուրս կենաց իւրոց, զտէր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զսա և զմեզ յամ նենգութէ, և ՚ի չարութէ, և ՚ի տառապանաց հոգւոյ և մարմնոյ, զտր աղաչես"։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա։

Ած ածոց և տր տերանց՝ արարիչ աննիւթական զօրաց հրեղինաց, և ամ երկնայնոց և երկրայնոց արուեստագործ։

Դու ես՝ որ զապստամբն առաջին զվտարանջեալն ՚ի քումմէ սպասաւորութենէ՝ յերկնից կործանեցեր. և զհրեշտակս յանցուցեալս՝ զհաղորդակիցս ապստամբութե նորա, յանդունդս խաւարի առաքեցեր։

Դու ահաւոր ես, և ո՞վ կարէ կալ առաջի քո. ՚ի քէն դողան ամ արարածք երկնայինք և երկրաւորք, և յահէ փառաց զօրութեան քո սասանին։

Սաստեա իշխանին չարութե և ամ բանակի նր, որք անկան ընդ նմա ՚ի լուսեղէն յարկացն վերին. որպէս զի զարհուրեսցի յերդմանէս յայսմանէ՝ զոր երդմնե-ցուցանեմ յանուն քո, և փախիցէ յանհուն հեռաստան անդառնալի գնացիւք։

Հրամայեա սմա և զօրաց սորին ՚ի բաց մեկնիլ ՚ի ծա-ռայէս յայսմանէ. և իսպառ հալածեա զնոսա, զի մի

մխտեսցեն կնքեալ պատկերի քո․ այլ կնքեալքս այսօրիկ զօրացեալ աջաւոր անուամբ քով սրբով, կոխեսցեն զօձս և զկարիճս և զամ զօրութիւնս թշնամւոյն։

Որպէս զի յամ բերանոյ օրհնեսցի և գովեսցի և փառաւորեսցի ամենապատիւ անուն քո Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Զ Տէր աղաչեսցուք։

Արդ մեծացուցանեմ զքեզ զառաջին հայհոյիչդ, և զնախկին ապստամբդ, և հնարիչդ չարեաց։

Արդ մեծացուցանեմ զքեզ զհերքեալդ ՚ի վերին լուսոյն և զանկեալդ ՚ի խորս խաւարի վս ամբարտաւանութե քո։

Արդ մեծացուցանեմ յամ սաբաւօթ, յամ ադոնայի, յամ էլոյի, յամ ամենակալ, զքեզ պիղծ ոգի և զամ համախոհ զօրութիւնս քո, ել, փախիր և ՚ի բաց գնա ՚ի ծառայէս այ (այս անուն)։

Արդ մեծացուցանեմ զքեզ յամ, որ բանիւ իւրով արար զամ, և ՚ի տր մեր յս քս միածին որդի նր, որ նախ քան զյաւիտեանս անճառապէս և անախտաբար ծնաւ ՚ի նմանէ․ որ զերևելի և զաներևոյթ արարածս գոյացոյց, և ըստ պատկերի իւրում արարչագործեաց զմարդն։

Որ ՚ի բազմանալ ամբարշտութե մարդկան, զսահանս երկնից եբաց, և զխորս անդնդոց պատառեաց, և զամբարիշտսն ջրհեղեղաւ ապականեալ կորոյս, և ընդ մեղսն ընկղմեաց։

Որ զբարձրաբերձ աշտարակն հսկայից ամբարտաւանից հողմով ցասման իւրոյ սասանեցոյց․ որ զսոդոմ և զգոմոր երկնատեղաց հրով և ծծմբով յաճիւն դարձոյց, և զպղծութիւնն յերկրէ սրբեաց։

Որ ՚ի ձեռն գաւազանին զծովն կարմիր եհերձ, և զժողովուրդս իւր անթաց ոտիւք անցոյց․ և զգունդն փարաւոնի և զածամարտ զօրս նորա յանդունդս ծովուն ընկղմեաց։

Որ ՚ի վերջին ժամանակս յանարատ կուսէն մարմնացաւ անճառապէս, և զկնիքն կուսութե ամբողջ պահեաց։

Երդմնեցուցանեմ զքեզ յայն, որ խոնարհեցաւ 'ի յորդանան, և մկրտութեամբն իւրով լուաց զհնութիւն աղտոյ մեղաց, զոր անհնազանդութեամբ 'ի մեզ ձգեցաք. և շնորհեաց մեզ ջրով զնշանակ անապականութեան։

Երդմնեցուցանեմ զքեզ յայն, որ սաստեաց հողմոցն, և զմրրիկ ծովուն հանդարտեցոյց. որ զգունդս դիւաց հալածեաց, զաչս կուրաց եբաց, զբորոտս սրբեաց, համերց ետ խօսել, զմեռեալս կենդանացոյց։

Որ մահուամբ իւրով զդժոխս յաւարի էառ, և զհոգիսն որք էին 'ի բանտին ազատեաց, և յարութեամբն իւրով զմարդկայինս բնութիւն անտիրելի 'ի մահուանէ ներգործեաց, և երկնաւորացն զօրաց արար դասակից։

Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած ամենակալ, որ Աստուածաշունչ ձայնիւ զառաքեալսն հոգևորեաց, և գործակից եղև նոցա 'ի քարոզութեան աւետարանին, և զամենայն աշխարհ ելից բարեպաշտութեամբ. երկիր, փախիր և 'ի բաց գնա պիղծ և անմաքուր դև անդնդային, խաբօղ, շողոքորթ, անկերպարան. որ կերպարանիս 'ի կորուսանել, և աներևոյթ լինիս առ 'ի նենգել. եթէ դու իցես բեհեղզեբուղ, կամ վիշապաձև, կամ գազանադէմ, կամ որպէս գոլորշի, կամ որպէս ծուխ, կամ որպէս արու, կամ որպէս էգ, կամ որպէս զեռուն, կամ որպէս թռչուն, կամ գիշերախօս, կամ խուլ, կամ համր, կամ յանկարծ երկեցուցիչ, կամ սարսիչ, կամ թաւալեցուցիչ, կամ լկիչ 'ի ննջման քնոյ կամ 'ի հիւանդութենէ, կամ ուրախացուցիչ, կամ արտասուօղ, կամ հեշտասէր, կամ ախտաշարժ, կամ կախարդասէր, կամ ախտարմոլ, կամ անամօթ, կամ հակառակօղ, կամ փոփոխական, կամ լուսնոտեցուցիչ, կամ առաւօտեան, կամ տունջենական, կամ հասարակ գիշերի, կամ հասարակ աւուր, կամ տարաժամու. եթէ քեզէն պատահեցար, կամ յայլմէ առաքեցար. կամ 'ի ծովէ, կամ 'ի գետոյ, կամ 'ի հողոյ, կամ 'ի ջրհորոյ, կամ 'ի վախից լերանց, կամ 'ի խորխորատէ, կամ 'ի լճէ, կամ 'ի շամբից, կամ յաղտեղութենէ, կամ 'ի ծառաստանէ, կամ 'ի քաղաքէ, կամ յանտառէ, կամ 'ի

պատառօղ թռչնոյ , կամ յորոտմանէ , կամ 'ի բաղանեաց , կամ յաւազանէ ջուրց , կամ 'ի գերեզմանէ ամբարշտաց , կամ յայլ կողմանէ , յայտնի կամ ծածուկ , 'ի կասկածելի կամ յանկասկած տեղւոջէ մտեր 'ի սա , Ել և 'ի բաց գնա յա͞ծակերտ պատկերէ աստի , 'ի քոյին խորխորատն , ուր գաւազան երկաթի , և հնոց հրոյ , և տարտարոս , և կրճումն ատամանց սպասեն քեզ 'ի պատիժ պատուհասի ապստամբութեան քո :

Երկի՛ր , պապանձեա՛ց , փախի՛ր ընդ այլոց պիղծ հոգւոց չարաց 'ի ծառայէս ա͞յ (այս անուն) , և ե՛րթ 'ի մշտագիշեր տարտարոսն քո մինչև 'ի պատրաստեալ տանջանսն քեզ մեծի աւուրն դատաստանին :

Զի մեծ և ահեղ է զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Նորին այլ աղօթք :

## Զտէր աղաչեսցուք :

Ա͞ծ երկնաւորաց և ա͞ծ երկրաւորաց , հայր տեառն մերոյ յ͞ի ք͞ի . որ լուսաւոր արարեր զընակեալսն 'ի խաւարի , և արձակեցեր զկապեալ հոգիսն 'ի մահուանէ :

Որ զցաւս մեր լուծեր , և զա͞մ վիշտս մեր բարձեր . զհարուածս թշնամւոյն ապաքինեցեր , և ա͞մ բարուք զմեզ արժանաւորեցեր , շնորհօք և մարդասիրութ͞բ միածնի որդւոյ քո . որ զկապանս մեղաց մերոց կենարարէն խաչիւն իւրով խզեաց , և եբաց մեզ զճանապարհն երկնից . մահուամբն իւրով զմեզ անմահացոյց , և յարութ͞բն իւրով զմեզ ա͞ծացոյց , և սքանչելի փառօքն իւրովք փառաւորեաց :

Աղաչեմք զքեզ մարդասէր տ͞ր , ընկա՛լ ընդ ծածկութիւ քով զպաշտպանեալ ծառայն քո (այս անուն) , և հերքեա՛ 'ի սմանէ զա͞մ ձանձրութի , և զթերահաւատութի , և զա͞մ դևս գրգռիչս մեղաց և սատանայական գործոց . և տո՛ւր սմա զաղատութի և զհանգիստ և զշնորհս հոգւոյն քո ս͞բյ . որով լուսաւորեալ և 'ի ս͞բ հաւատս պահպանեալ , եղիցի գործունեայ ա͞մ գործոց բարութեց , ամէն :

# Սրբոյն Յովհաննու ոսկեբերանի

Աղօթք վ̅ս դիւահարաց։

## Զտէր աղաչեսցուք։

Անսկիզբն ա̅ծ, որ շնորհօք միածնի որդւոյ քո զազգս մարդկան 'ի ծառայութենէ սատանայի ազատեցեր, և բարձրացուցեր և յառաջին փառսն ժամանեցուցեր։

Դու մարդասէր տ̅ր՝ ազատեա՛ զծառայս քո (այս անուն) յամ̅ ներգործութենէ պղծ դիւաց. հրամայեա՛ նոցա զի 'ի բա՛ց փախիցեն 'ի ծառայէ քումմէ յայսմանէ, և մի՛ մնասցեն և մի՛ թաքիցեն 'ի սմա։ Այլ կոչմամբ ամենա̅բ անուան քո, և միածնի որդւոյ քո, և կենդանարար սուրբ հոգւոյն՝ փախիցեն 'ի ստեղծուածոյ ձեռին քո։

Որպէս զի ազատեալ 'ի տանջանաց սատանայի, ա̅մ առաքինութ̅բ անցուսցէ զմնացուածս կենաց իւրոց, և արժանի եղիցի սրբարար խորհրդոց միածնի որդւոյ քո և ա̅յ մերոյ. ընդ որում օրհնեալ և փառաւորեալ ես հանդերձ կենդանարար սուրբ հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին այլ աղօթք։

## Զտէր աղաչեսցուք։

Մ՝արդասէր յ̅ս ք̅ս, որ սաստեցեր այսոց պղծոց, և բանիւ զօրութե̅ քո զլէգէոնն դիւաց մերժեցեր և հալածեցեր 'ի տառապեալ մարդոյ յերամակս խոզից։

Առաքեա՛ այժմ 'ի ս̅բ բնակութենէ քումմէ զա̅ծային զօրութի̅ քո 'ի ստեղծուածս քո յայս, որ պատուեալ է պատկերաւ քով. և զերծո՛ զսա 'ի բռնութենէ հակառակորդին. և շնորհօք քո մաքրեա՛ յամ̅ աղտեղութենէ մեղաց. սրբեա՛ զհոգի սորա, լուսաւորեա՛ և զարթո՛ զմիտս սորա խորհել 'ի սուրբ պատուիրանս և յարդարութիս քո. և զմարմինն սորա բժշկեա՛ և առողջացո՛. ո̅պ զի եղիցի սա հոգւոյն ս̅բյ, և ա̅ծային և ս̅բ խորհրդոց հոգևոր տաճար։

Զի քո է ողորմել և կեցուցանել. Քս̃ Ա̃ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին այլ աղօթք։

Զտէր աղաչեսցուք։

Գոչեմք առ քեզ տէր Ա̃ծ մեր ամենակալ և ամենազօր. գոչեմք առ քեզ արարիչդ երկնի և երկրի, և ա̃մ երևելեաց և աներևութից։

Տուր և ընկալ զաղաչանս մեր տկարաց և նուաստից, և առաքեա՛ 'ի ծառայ քո (այս անուն) զողորմութի̃ քո և զօգնականութի̃, և փրկեա՛ զսա յա̃մ չարեաց, և 'ի բռնութենէ սատանայի և զօրութեանց նորին։

Եւ տո՛ւր սմա հրեշտակ խաղաղութե̃, հրեշտակ հզօր պահապան հոգւոյ և մարմնոյ և առաջնորդ բարեաց։

Զի դու մա՛րդասէր՝ օրհնեալ ես յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին այլ աղօթք։

Զտէր աղաչեսցուք։

Գոչեմք զա̃ծային, ս̃բ, մեծ, ահաւոր և անտանելի անունն 'ի հալածել զքեզ ո՛վ ապստամբ. սոյնպէս և զսաստ նորա՝ 'ի կործանումն և 'ի կորուստ քո։

'Նոյն ինքն անսկիզբն, ահեղ, անտեսանելի ըստ գոյութե̃, անսահման ըստ զօրութե̃, և անիմանալի ըստ ա̃ծութե̃, Թագաւորն փառաց և ամենակալ տէրն սաստէ քեզ ո՛վ բանսարկու՝ բանիւ որով զա̃մ ինչ յոչնչէ 'ի գոյ էած վայելչապէս։

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ յերկնային յանհամար հրեղինացն դասուց երկիւղիւ պաշտի և գովի, և 'ի բազմաթիւ հրեշտակաց և հրեշտակապետացն դասուց դողութ̃ երկրպագի և փառաւորի։

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ պատուի 'ի շրջակաց զօրութե̃ց, և յահեղակերպ վեցթևեան սերո-

բէից և բազմաչեայ քերոբէից ・ որք երկոքումբք թևօքն ծածկեն զդեմս իւրեանց, ոչ կարելով հայել յանտանելի լոյսն ա̃ծուն ・ և երկոքումբք թևօքն ծածկեն զոտս իւրեանց, յայտ առնելով զպատկառանս իւրեանց և զհպատակութի̃ ・ և երկոքումբք թևօքն թռչին, և լնուն զերկինս աղաղակաւ ・ սուրբ սուրբ սուրբ՝ տէր սաբաւօթ, լի են երկինք և երկիր փառօք քո:

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ զքեզ իշխանութե̃ իւրով յերկնից յերկիր կործանեաց ・ և յայտնի արար ա̃մ̃ցուն զկործանումն քո: Նա 'ի ծոցոյ հօր խոնարհեալ, անճառելի և ա̃ծ և երկրպագելի մարդեղութե̃ն իւրով 'ի կուսէն՝ երևեցաւ յաշխարհի առ 'ի փրկել զմարդն:

Սաստէ քեզ տ̃ր ո՛վ բանսարկու, որ սաստեաց հողմոցն և ծովու դադարեա՛ կարկեա՛ց, և բանիւ հրամանի նորա առժամայն լռեաց հողմն ・ և եղև խաղաղութի̃:

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ սուրբ թքո̃վ արար կաւ ・ և նովին կաւովն ստեղծ զաչս 'ի ծնէ կուրին, և շնորհեաց նմա զլոյս:

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ զդուստր ժողովրդապետին բանիւ կենդանացոյց, և զորդի այրւոյն կորզեաց 'ի մահուանէ, և ետ մօր իւրոյ ողջանդամ ・ և զղազարոս զչորեքօրեայ մեռեալն եհան 'ի գերեզմանէ կապեալ ոտիւք և ձեռօք, մինչև զարմանալ ամենեցուն:

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ 'ի ձեռն ապտակին զանէծսն եղծ ・ որ թքով երեսաց իւրոց ջնջեաց զարտօսր յա̃մ երեսաց ・ որ խոցմամբ կողին իւրոյ 'ի սլաքէ զեղարդեանն, զհրեղէն սուրն որ պահէր զդրախտն՝ բթացոյց ・ որ խաչիւ իւրով զտիեզերս ապրեցոյց, և զքեզ ո՛վ սա̃նյ ա̃մ զօրութե̃ քով հալածական արար, յորժամ վարագոյր տաճարին ցելաւ ・ վէմք պատառեցան ・ գերեզմանք բացան ・ և բազում մարմինք ս̃բց կենդանացան:

Սաստէ քեզ տէր ո՛վ բանսարկու, որ մահուամբ իւրով սպան զմահ ・ և իջանելով 'ի դժոխս, զսեպհական բնակութի̃ քո եհար աւար ・ և յարութե̃ն իւրով զյաւիտենական կեանս պարգևեաց մարդկան, և ետ նոցա

իշխանութիւն կոխել զքեզ և զզօրութիւնս քո ։

Սաստէ քեզ տէր ով բանսարկու , որ եւ փառօք յերկինս առ հայր իւր , և նստաւ ընդ աջմէ մեծութե̃ փառաց աթոռոյ նորա ․ և դարձեալ եկեսցէ փառօք՝ հանդերձ ա̃մ սուրբ հրեշտակօք իւրովք առնել դատաստան կենդանեաց և մեռելոց ։

Սաստէ քեզ տ̃ր ով բանսարկու , որ 'ի սկզբանէ պատրաստեաց քեզ և զօրութե̃ց քոց զանշէջ հուրն , զանքուն որդն , զարտաքին խաւարն 'ի յաւիտենին տանջանս քո ։

Սա՛ ինքն տէրն սաստէ քեզ ահաւոր անուամբ իւրով ․ սոսկացի՛ր , դողացի՛ր , երկի՛ր , ահաբեկ լեր , մեկնեա՛ց , փախի՛ր , և 'ի բա՛ց գնա ա̃մ հոգի չարութե̃ , և զեղխութե̃ , հոգի գիշերոյ և տունջեան , հոգի խօլական , հոգի շրջական՝ կամ 'ի ցամաքի , կամ 'ի ծովու , կամ 'ի ջրաւէտս , կամ 'ի ծառատունկս , կամ 'ի շամբս , կամ 'ի ձորս , կամ երկափողոց կամ յեռափողոց ճանապարհս , 'ի լիճս և 'ի գետս , 'ի տունս և 'ի սրահս , և 'ի բաղանիս ․ և ա̃մ հոգի վնասակար և ցնորեցուցիչ մտաց փախերուք , 'ի բա՛ց գնացէք 'ի ստեղծուածոյս ք̃ի ա̃յ մերոյ , 'ի ծառայէս ա̃յ (այս անուն) ․ 'ի մտաց սր̃ , 'ի հոգւոյ , 'ի սրտէ , յերիկամանց , 'ի զգայարանաց , և յա̃մ անդամոց ։

Որպէս զի եղիցի ողջ , առողջ , և ազատ 'ի ճանաչել զտէրն և զամենեցուն արարիչն ա̃ծ ․ որ դարձուցանէ 'ի ճանապարհէ զմոլորեալն , և տայ նոցա զկնիքն փրկութե̃ վերստին ծննդեամբ սուրբ աւազանին , և նորոգութե̃ հոգւոյն ս̃բյ , զի արժանի եղիցին կենացն յաւիտենից ։

Արդ՝ պաղատիմ առ քեզ մարդասէր , փրկեա՛ զսա 'ի տանջանաց ըստ անսահման ողորմութե̃ քում , և ծածկեա՛ զսա ընդ հովանեաւ թևոց քոց ։

Զի քո՛ է ողորմել և կեցուցանել զմեզ ք̃ս ա̃ծ մեր , և քեզ փառք ընդ հօր և ընդ հոգւոյն քո սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Աղաչանաց առ Սուրբ Աստուածածինն:

Քահանայն ասէ. Օրհնեալ է Տէր Աստուած մեր յամենայն ժամ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սաղմոս.

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, եւ նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ, եւ սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրս զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ որք իջանեն ՚ի գուբ:

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ Տէր յուսացայ:

Ցո՛յց ինձ ճանապարհ յոր եւ գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ:

Վ՛ասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութ՟ քով հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ՟ քով սատակեա՛ զթշնամիս իմ, և կորո՛ զա՟մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Այս եղանակէն · դձ։

Ա̣ծ մեր և տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ տեառն։

Նոյն ըստ ժամանակին։

Մ՟եք մեղաւորք և թշուառքս դիմեսցուք այժմ առ Աստուածածինն՝ և անկցուք առաջի նր՟, զղջմամբ աղաղակելով ՚ի խորոց սրտէ · տիրուհի փութացիր օգնել մեզ գթութ՟, կորեաք ՚ի բազմութ՟ յանցանաց մերոց, մի՛ ունայն դարձուցաներ զծառայքս քո · զի դու միայն ես յոյս մեր։

Փառք հօր և որդւոյ և՛՛։ Եւ այժմ և միշտ և՛՛։

Մ՟եք անարժանքս ոչ երբէք լռեսցուք ՚ի խօսելոյ զզօրութիս քո · զի եթէ դու ոչ պաշտպան լինէիր մեզ բարեխօսութ՟ քով, ո՞վ փրկէր զմեզ և զերծուցանէր ՚ի բազմադիմի արկածից · ոչ ՚ի բաց հեռանամք ՚ի քէն, զի դու ես որ յամենայն ժամ փրկես զծառայքս քո ՚ի զանազան վտանգից։

Սաղմոս։

Ողորմեա ինձ Ած՟ ըստ մեծի ողորմութ՟ քում, ըստ բազում գթութ՟ քում քաւեա զանօրէնութիս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութ՟ իմմէ, և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո, և յաղթօղ ՚ի դատել դաս։

Անօրէնութ՟ յղացայ, և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութի̃ և զուրախութի̃, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս ա̃ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութե̃ քո, և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ ա̃ծ ա̃ծ փրկութե̃ իմոյ, ցընծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա̃ծ ո՛չ արհամարհէ։

Բարի՛ արա տէր կամօք քովք սիօնի, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̃, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

## Կանոն ա̃ծածնի։

### Ձյն. ա̃. գ̃կ. Ընցեալ ընդ ծով.

՚Ի բազում վշտաց ըմբռնեալ՝ առ քեզ ապաւինիմ, և զփրկութիւնն իմ հայցեմ մայր ա̃յ, զերծո՛ զիս ՚ի տառապանաց և ՚ի տարակուսութեանց։

Հարուածք ախտից խռովեցուցանեն զիս, և ընուն

տրտմութեամբ զհոգի իմ․ հանդարտեցո՛ ով կոյս՝ խաղաղութեամբ որդւոյ քո և այ։

Աղաչեմ զքեզ զկուսածին մայր փրկչին և այ, փրկեա՛ զիս ՚ի տարակուսանաց, զի զհոգի և զմիտս իմ ուղղելով՝ այժմ դիմեմ առ քեզ։

Արժանի արա զիս որպէս մայր բարի այ բարւոյ՝ քո խնամոց և այցելութե, զի հիւանդ եմ հոգւով և մարմնով։

## Աղօթ․ Է․ Առ երկնային կամարին։

Պատճառ բարերարութե և հաստատութի հաւատացելոց ածածին կոյս, զքեզ ունիմ վերակացու և պաշտպան կենաց իմոց, առաջնորդեա՛ ինձ ՚ի խաղաղութի։

Առ քեզ պաղատիմ ով կոյս, ցրուեա՛ և խաղաղեցո՛ զխռովութի հոգւոյ իմոյ, և զամբոխումն տարակուսութեն․ զի դու հարսն այ՝ ծնար զիշխանն խաղաղութե զքս։

Որ ծնար զպարգևատուն բարեաց կո՛յս անարատ, տուր ինձ առատապէս զպարգև բարի․ զի կարող ես ամենայնի, ծնանելով զամենակարօղն զքս։

Օգնեա՛ ինձ ով կոյս, որ տառապիմ զանազան անտանելի հիւանդութբ և ցաւօք․ քանզի գիտեմ զքեզ անպակասելի գանձ բժշկութեան։

Փրկեա՛ ածածին զծառայս քո ՚ի վտանգից․ զի յետ այ առ քեզ ապաւինիմք ամքին, որպէս առ անյաղթելի պարիսպ և պաշտպան։

Հայեա՛ց քաղցրութբ ամենօրհնեա՛լ ածածին յանհնարին հիւանդութի մարմնոյս, և բժշկեա՛ զցաւս հոգւոյս։

### Սարկաւագն։

Ողորմեա՛ մեզ այ ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա՛։

Տէր ողորմեա՛․ տր ողորմեա՛․ տր ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վս արհիեպսին մերոյ (այս անուն)։

Տէր ողորմեա՛․ տէր ողորմեա՛․ տէր ողորմեա՛։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց,

խն

խաղաղութ՟ն , այցելութ՟ն , քաւութ՟ն և թողութ՟ն մեղաց ծառայիս ա՟յ (ասա անուն) ։

Տէր ողորմեա՛ ․ տէր ողորմեա՛ ․ տէր ողորմեա՛ ։

Քահանայն ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Նոր ժամամուտիս աղօթք · ԷԿ ·

Անդադար բարեխօս և աղբիւր ողորմութ՟ն , պարիսպ անյաղթելի և ապաւէն աշխարհի , ուժգին գոչեմք առ քեզ ա՟ծածին տիրուհի , հա՛ս առ մեզ և զերծո՛ 'ի վտանգից , զի դու միայն ես արագահաս օգնական ։

Նոյն · Դ · ԴԿ · Լուսոյ տէր ։

Որ ծնար զբեկաւոր տէրն՝ ո՛վ հարսն ա՟յ , հան_ դարտեցո՛ զխռովութի ախտից՝ և զմրրիկ յանցանաց իմոց ։
Որ զողորմածն և զփրկիչն ա՟մ օրհնաբանողացն քոց ծնար ո՛վ մաքուր , պարգևեա՛ ինձ կոչողիս զառատութի ողորմութեան քո ։
Որ խոստովանիմ զքեզ մայր ա՟յ ո՛վ ամենամաքուր , ընծայեմ առ քեզ զողջոյն բերկրութ՟ն , արժանի արա զիս քոյին պարգևաց ։
Զքեզ ունիմ մեզ յոյս և հաստատութի , և պարիսպ անսասանելի փրկութ՟ն , փրկեա՛ զիս յա՟մ տարակուսութ՟ց ։

Նոյն · Ե · Լուսաւորեա՛ զմեզ ։

Որ ծնար զպատճառն ուրախութ՟ն , լի՛ց զկեանս իմ ուրախութ՟բ , տալով ինձ զուրախութիւն անվախճան ։
Ծածին անարատ՝ որ ծնար զյաւիտենական փըր_ կութիւնն և զխաղաղութի որ 'ի վեր է քան զա՟մ միտս , փրկեա՛ զիս 'ի վտանգից ։
Հա՛րսն ա՟յ՝ որ ծնար զանսկիզբն լոյսն ա՟ծային , փարատեա՛ զմէգ յանցանաց իմոց լուսափայլութ՟բ շնորհաց քոց ։
Ա՛յր մաքուր բժշկեա՛ զհիւանդութի հոգւոյ իմոյ ,

արժանաւորելով այցելութեան քում. և պարգևեա ինձ առողջութիւն բարեխօսութեամբ քո.

## Սղմ. Է. Հեղից զխնդրուածս իմ առաջի տեառն։

Ողորմեա ով կոյս՝ որդւոյ քո և Աստուծոյ մերոյ, զի փրկեսցէ զիս 'ի չարագործութենէ թշնամւոյն. որպէս մատնելով զանձն 'ի մահ՝ փրկեաց զբնութիւնն իմ յապականութենէ և 'ի մահուանէ։

Զքեզ ճանաչեմ պաշտպան կենաց իմոց, և հաւատարիմ պահապան ով կոյս, որ ցրուես զհոյլս փորձութեանց և հալածես զչարութիւն դիւաց, և աղաչեմ փրկեա զիս յապականութենէ ախտից։

Դու ես պարիսպ ապաւինութեան և փրկութիւն անձին իմոյ. քեւ անդորրանամ 'ի նեղութեան իմում, և ուրախանամ լուսով քո. ապրեցո զիս այժմ 'ի վշտաց և 'ի վտանգից։

Ընկեալ կամ այժմ 'ի մահճի հիւանդութեան, և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ. այլ առ քեզ բարեխ-պաղատիմ, որ ծնար զԱստուած և զփրկիչն աշխարհի, յարո զիս յապականութենէ հիւանդութեան։

Փրկեա Աստուածածին զծառայս քո 'ի վտանգից, զի յետ Աստուծոյ առ քեզ ապաւինիմք ամենեքին, որպէս առ անյաղթելի պարիսպ և պաշտպան.

Հայեաց քաղցրութեամբ ամենօրհնեալ Աստուածածին յանհնարին հիւանդութիւն մարմնոյս, և բժշկեա զցաւս հոգւոյս.

### Մաղթանք։

Ողորմեա մեզ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ, լուր և ողորմեա։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Եւ ևս աղաչեսցուք վասն արհիեպիսկոպոսին մերոյ (այս անուն)։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, այցելութեան, քաւութեան և թողութեան մեղաց ծառայիս Աստուծոյ (այս անուն)։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Քահանայն.

Զի ողորմած և մարդասէր ես Ա՟ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քաղուածոյ. ԺԱ՟։

Որ հզօր պաշտպանդ ես քրիստոնէից, և անսասան միջնորդ արարչին, մի՛ մերժեր զձայն պաղատանաց մեր մեղաւորաց. այլ հա՛ս ո՟պ բարի յօգնականութ՟ի մեր, որք հաւատով գոչեմք առ քեզ. փութացի՛ր բարեխօսել, վաղվաղեա՛ աղաչել, որ միշտ պաշտպանես նոցա, որք յարգեն զքեզ Ա՟ծածին։

Մեսեդի.

Յիշեսցի անուն քո ընդ ա՟մ ազգս ազգաց։

Սարկաւագն.

Վասն արժանի լինելոյ մեզ լսել զսուրբ աւետարանն, զտէր աղաչեսցուք։

Դպիրն. Տէր ողորմեա՛։
Սարկաւագն. Սօփիա օրթի, լուիցուք ս՟բյ աւետարանին։
Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։
Դպիրն. Եւ ընդ հոգւոյդ քում։
Քահանայն. Սուրբ աւետարանս որ ըստ Ղուկասու։
Սարկաւագն. Պռօսխօմէն։

Յաւուրսն յայնոսիկ՝ յարուցեալ Մարիամ, գնաց ՚ի լեռնակողմն փութապէս ՚ի քաղաքն Յուդայ։ Եւ եմուտ ՚ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի ն՟ր. և լցաւ Եղիսաբէթ Հոգւով Սրբով. և ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր տ՟ն իմոյ առ իս։ Զի ահաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում։ Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացե-

լոցս նմա 'ի տ՟նէ ։ Եւ ասէ մարիամ ․ Մ՝եծացուսցէ անձն իմ զտէր ․ և ցնծասցէ հոգի իմ յա՟ծ փրկիչ իմ ։ Զի հայեցաւ 'ի խոնարհութի՟ աղախնոյ իւրոյ ․ զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ա՟մ ազգք ։ Զի արար ինձ մեծամեծս հզօրն , և ս՟բ է անուն ն՟ր ։ Եկաց մարիամ՝ առ նմա իբրև ամիսս երիս , և դարձաւ 'ի տուն իւր ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Ամենասուրբ երրորդութի՟ , հայր և որդի և սուրբ հոգի , ջնջեա՛ զբազմութի՟ յանցանաց իմոց ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Ողորմած տէր՝ բարեխօսութ՟բ ս՟բ ա՟ծածնին ջնջեա՛ զբազմութիւն յանցանաց իմոց ։

Աստ եղանակի · Բ՟կ ։

Մ՝ի հաւատար զիս մարդկային վերակացութե՟ ամենօրհնեալ տիրուհի , այլ ընկա՛լ զիս զծառայ քո ընդ պաշտպանութ՟բ քով ․ տանջիմ հանապազօր անհնարին վշտօք 'ի նեղաձգութե՟ դիւաց , և ո՞ւր ապաւինեցայց տառապեալս , զի բաց 'ի քէն ոչ ունիմ պատսպարան ․ շուրջանակի յա՟մ կողմանց նեղեն զիս պատերազմունք , և բաց 'ի քէն ոչ ունիմ մխիթարութիւն ․ տիրուհի աշխարհի՝ յոյս և վերակացու հաւատացելոց , մի՛ մերժեր զաղաչանս իմ , օգնեա՛ ինձ ։

Ա՟ծածին կոյս՝ ո՛չ ոք է որ դիմէ առ քեզ և դառնայ ամօթով , այլ խնդրէ զշնորհ , և առնու զպարգև յօգուտ անձին իւրոյ ։

Անդորրութի՟ նեղելոց , աղաւութի՟ հիւանդաց , խաղաղութի՟ ընդդիմամարտից , հանդարտութի՟ ալէկոծելոց , պաշտպան հաւատացելոց , փրկեա՛ զքաղաքն քո և զժողովուրդ ։

Քահանայն ։

Կեցո՛ ա՟ծ զժողովուրդ քո , և օրհնեա՛ զժառանգութի՟ քո և այցելո՛ւ լեր աշխարհի ողորմութ՟բ և գթութ՟բ ․ և բարձրացո՛ զեղջիւր ուղղափառ քրիստոնէից ․ և

առաքեա՛ 'ի վերայ մեր զառատ ողորմութիւս քո , բարեխօսութբ՟ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ Ածածնի՝ և միշտ կուսին մարիամու , զօրութբ՟ պատուական և կենարար խաչի , վերակացութբ՟ պատուական անմարմին զօրութեանց , աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին՝ կարապետին և մկրտչին յովհաննու , սբ՟ և փառաւորեալ և գերահռչակ առաքելոց , սրբոց հարցն մերոց և տիեզերական վարդապետացն և քահանայապետաց՝ մեծին բարսղի՝ և գրիգորի Ածաբանին՝ և յովհաննու ոսկեբերանին , սբյ՟ հօրն մերոյ Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին զմիւռնոյ , սբ՟ և Ածազգեաց հայրապետացն մերոց , սբ՟ և արդար Ածահօրն յովակիմայ և աննայի , և սրբոյն ( այս անուն օրէկանին ) , և յիշատակաւ և աղօթիւք սրբոյն (այս անուն) , և բարեխօսութբ՟ ամ՟ սբց , լո՛ւր մեզ մեղաւորացս որք կարդամք առ քեզ բազումողորմ տէր , և ողորմեա՛ մեզ ։

Եւ ասա , Տէր ողորմեա , ժբ ։

Քահանայն 'ի ձայն ։

Ողորմութբ՟ և գթութբ՟ և մարդասիրութբ՟ միածնի որդւոյ քո , ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Շրք , Է . գկ . 'Ի հրեշտականէ ։

Առ 'ի կատարել զփրկութի՟ մարդկային ազգի հաճեցար բնակել յարգանդի կուսին , զոր արարեր պաշտպան աշխարհի ով փրկիչ , օրհնեալ ես Ած հարցն մերոց ։

Աղերսեա՛ ով մաքուր՝ առ ողորմածն զոր ծնար , զի փրկեսցէ 'ի յանցանաց և յարատոց հոգւոյ զայնոսիկ , որք հաւատով՝ գոչեն , օրհնեալ ես Ած հարցն մերոց ։

Աղաչեա՛ զփրկիչն մեր քո՟ զոր ծնար մարմնով , զի բժշկեսցէ զհիւանդութի՟ հոգւոց և մարմնոց նոցա , որք փափագմամբ դիմեն 'ի պաշտպանութի՟ քո . և գոչեն առ որդին քո , օրհնեալ ես Ած հարցն մերոց ։

Դու քն՟ ցուցեր զմայր քո գանձ փրկութե՟ , աղբիւր անսպականութե՟ , աշտարակ վստահութե՟ , դուռն ապաշխարութե՟ այնոցիկ՝ որք աղաղակեն , օրհնեալ ես ա՟ծ հարցն մերոց ։

### Տրէ · Է · Թագաւոր երկնից ·

Սուրբ կոյս՝ մի՛ անտես առներ զայնոսիկ , որք կարօտ են օգնականութե՟ քո , և գովեն և բարձրացուցանեն զքեզ յաւիտեան ։

Որ հեղուս զպարգևս բժշկութե՟ սուրբ կոյս , որք գովեն զքեզ հաւատով , և բարձրացուցանեն զանճառելի ծնողութիւն քո ·

Որ բժշկես զհիւանդութի՟ հոգւոյ իմոյ սբ՟ կոյս , և զցաւս մարմնոյ · վն՟ որոյ փառաւորեմ զքեզ զլցեալդ շնորհօք ·

Որ հերքես զհարուածս փորձութեց՟ և զյարձակումն ախտից · վն՟ ա՟ծածին՝ գովեմ զքեզ յա՟մ յաւիտեանս ։

### Տրէ · Է · Ճշմարտապէս զքեզ ա՟ծածին ։

### Տրէ · Թ ·

Զարտասուս աչաց իմոց մի՛ անարգեր ով կոյս , զի ծնար զայն , որ ջնջեաց զա՟մ արտասուս յա՟մ աչաց ։

Որ ընկալար զլրումն ուրախութե՟ , և զդառնութի՟ մեղաց բարձեր , լի՛ց զսիրտ իմ ուրախութեամբ ·

Թշուառացայ 'ի մահիճս հիւանդութե՟՝ բժշկեա ով կոյս , դարձուցանելով զիս 'ի յառողջութիւն ·

Լուսաւորեա՛ ճաճանչիւք լուսոյ քո ով կոյս , փարատելով զխաւարն տրտմութե՟ , որք ա՟ծածին զքեզ խոստովանին բարեպաշտութեամբ ։

### Տրէ · Թկ ·

Արժան է ճշմարտապէս երանել զքեզ ա՟ծածին , զմիշտ օրհնեալ և առաւել անարատ մայրդ ա՟յ մերոյ՝ զպատուականագոյնդ քերովբէից , և անհամեմատ մեծարեալդ քան զսերովբէս , զծնօղդ բանին ա՟յ անապականաբար · զքեզ ճշմարիտ ա՟ծածին մեծացուցանեմք ։

Զբարձրագոյնն քան զերկինս , և զպայծառագոյնն քան զարեգակն , զտիրուհին աշխարհի , որ ազատեաց

զմեզ յանիծից , գովութեամբ վերապատուեսցուք ։

Տկարացաւ հոգի իմ և մարմին իմ 'ի բազմութե̃ յանցանաց իմոց , վասն որոյ առ քեզ ապաւինիմ առ լցեալդ շնորհօք՝ անյուսիցն յոյս , օգնեա ինձ ։

Տիրուհի և մայր փրկչին ընկա՛լ զաղաչանս անարժան ծառայի քում, և լեր միջնորդ առ ծնեալն 'ի քէն ։

Եղանակեմք այժմ երգս օրհնութե̃ քեզ առաւել գովեալ Ա̃ծածնիդ · աղաչեա զԱ̃ծ ընդ կարապետին յովհաննու , և ընդ ա̃մ սրբոց զի ողորմեսցի մեզ ։

Զինուորութի̃ք հրեշտակաց , և կարապետ տեառն և երկոտասան առաքեալք և ա̃մ սուրբք ընդ սրբուհւոյ Ա̃ծածնին բարեխօսեսջիք առ Ա̃ծ , զի կեցուսցէ զմեզ ։

Ապա , Երեքսրբեան , Ամենասուրբ երրորդութի̃ ,
Հայր մեր · Քահանայն , Զի քո է արքայութի̃ ։

Ապա ժամամուտ · Ծ̃Է ։

Ողորմեա մեզ տէր՝ ողորմեա մեզ · զի մեք մեղաւորքս յա̃մի անպատասխանի գտեալ՝ զաղաչանս զայս քեզ մատուցանեմք որպէս տեառն , ողորմեա մեզ ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։

Տէր ողորմեա մեզ , զի 'ի քեզ ապաւինեցաք , մի՛ իսպառ բարկանար մեզ , և մի՛ յիշեր զանօրէնութի̃ս մեր · այլ հայեա՛ց 'ի մեզ այժմ ըստ բարեգթութեան քում, և փրկեա զմեզ 'ի թշնամեաց մերոց · զի դու ես Ա̃ծ մեր , և մեք ժողովուրդք քո , և գործք ձեռաց քոց ամենեքին , և կարդամք զանուն քո ։

Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Բա՛ց մեզ զդուռն բարեգթութե̃ օրհնեալ Ա̃ծածին , առ քեզ ապաւինեցաք , որպէս զի միջնորդութ̃բ քով ազատեսցուք 'ի փորձանաց · մի՛ յամօթ առներ զմեզ , զի դու ես փրկութի̃ ազգին քրիստոնէից ։

Սարկաւագն ։

Ողորմեա մեզ Ա̃ծ ըստ մեծի ողորմութեան քում , աղաչեմք զքեզ , լուր և ողորմեա ։

Եւ ևս աղաչեսցուք վասն արքեպիսկոպոսին մերոյ (ասա անուն)։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութեան, կենաց, խաղաղութեան, առողջութեան, փրկութեան, այցելութեան, յաջողութեան, քաւութեան ծառայիս այ (ասա անուն)։

Եւ ևս աղաչեմք վասն պահպանելոյ զքաղաքս զայս և զամ քաղաք և զգաւառ 'ի սովէ, 'ի ժանտախտէ, 'ի գեանաշարժէ, 'ի յընկղմանէ, 'ի հրդեհէ, 'ի սրոյ, յարշաւանաց այլազգեաց, յազգային պատերազմէ, և յանկարծակի մահուանէ։

Եւ վն քաւիչ և ներօղ և անյիշաչար լինելոյ բարերարին և մարդասիրին այ 'ի վր մեղաց մերոց, և դարձուցանելոյ 'ի մէնջ զամ ցասումն իւր, և փրկելոյ զմեզ յարժանահաս սպառնալեաց իւրոց, և ողորմելոյ 'ի վր մեր։

Ասա, Տէր ողորմեա, խ։

Քահանայն։

Տէր մեր ած փրկիչ մեր, յոյս ամ ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի. և քաւեա տր զմեղս մեր և ողորմեա մեզ։

Զի ողորմած և մարդասէր ես ած գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ասէ զշարականս զայս։

Փառք քեզ ած՝ փառք քեզ։ Քս ճշմարիտ ածն մեր բարեխօսութեամբ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի, վերակացութեամբ պատուական երկնային զօրութեանց անմարմնոց, աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին՝ կարապետին և մկրտչին յովհաննու, և սրբոյն (ասա անուն օրէ-ջանէն), և յիշատակաւ և աղօթիւք սրբոյն (ասա անուն), և բարեխօսութեամբ սուրբ և արդար ածահօրն յովակիմայ և աննայի, և ամ սրբոց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ած։

Աղաչանօք սրբոց հարցն մերոց տէր յն քս ած մեր՝ ողորմեա մեզ, ամէն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Փոքր Ջրօրհնէքի, որ յունարէն կոչի Միքրոս Ագիազմոս:

Քահանայն ասէ. Օրհնեալ է Տէր ած՟ մեր յա՟մ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սաղմոս:

Տէր լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութ՟բ քով, և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարասցի առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ ո՟պ երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ տէր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ո՟ք իջանեն 'ի գուբ:

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յուսացայ:

Ցո՛յց ինձ ճանապարհ յոր և գնացից, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ած՟ իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութ̃ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութ̃ քով սատակեա զթշնամիս իմ, և կորո զա̃մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ապա եղանակէն . Գ̃Ձ։

Տէր մեր և տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ է եկեալ անուամբ տեառն։ չորիցս անգամ։

Կանոնաւոր։

Մեք մեղաւորք և թշուառքս դիմեսցուք այժմ առ ամենակալինն՝ և անկցուք առաջի նր̃, զղջմամբ աղաղակելով 'ի խորոց սրտէ . տիրուհի փութացիր օգնել մեզ գթութ̃, կորեաք 'ի բազմութէ̃ յանցանաց մերոց, մի՛ ունայն դարձուցաներ զծառայքս քո . զի դու միայն ես յոյս մեր։

Փառք հօր և որդւոյ և"։ Այժմ և միշտ և"։

Մեք անարժանքս ոչ երբէք լռեսցուք 'ի խօսելոյ զզօրութիս քո . զի եթէ դու ոչ պաշտպան լինէիր մեզ բարեխօսութ̃ քով, ո՞վ փրկէր զմեզ և զերծուցանէր 'ի բազմադիմի արկածից . ոչ 'ի բաց հեռանամք 'ի քէն, զի դու ես որ յամենայն ժամ փրկես զծառայքս քո 'ի զանազան վտանգից։

Սաղմոս։

Ողորմեա ինձ ա̃ծ ըստ մեծի ողորմութե̃ քում, ըստ բազում գթութե̃ քում քաւեա զանօրէնութիս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութէ̃ իմմէ, և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթօղ 'ի դատել դաս։

Անօրէնութ̃ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ զիս մշտկաւ եւ սուրբ եղէց, լուա՛ եւ քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ զցնծութի՛ եւ զուրախութի՛, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց, եւ զա͞մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս ա͞'ծ, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս առ յերեսաց քոց, եւ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութե՛ քո, եւ հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, եւ ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ ա͞ծ ա͞ծ փրկութե՛ իմոյ, ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա͞յ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ ա͞ծ ոչ արհամարհէ։

Բարի՛ արա տէր կամօք քովք սիօնի, եւ շինեսցին պարիսպքն երուսաղեմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե՛, յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս։

Նուագ. Ե͞կ.

Որ զողջոյնն ՚ի հրեշտակէն ընկալար, եւ զնոյն ինքն զարարիչն ծնար սուրբ կոյս, կեցո՛ զմեզ որ մեծացուցանեմք զքեզ. Ճչշնէ։

Մաղթանք.

Օրհնաբանեմ զորդի քո ա͞'ծածին եւ աղաղակեմ. տիրուհի անարատ՝ փրկեա՛ յա͞մ վտանգէ զծառայս քո։

Դու ես պաշտպան աշխարհի, և պարծանք Թագաւորաց և մարգարէից, առաքելոց և մարտիրոսաց ամենի կոյս.

Ամենայն լեզու ուղղափառաց բարեբանէ և երանէ և փառաւորէ զանարատ ծնունդ քո Մարիամ հարսն ա՟յ.

Աղաչեմ զքեզ ք՟ռ իմ` տուր և ինձ անարժանիս զթողութիւն պարտեաց իմոց` բարեխօսութ՟բ ծնողին քո որպէս բարեգութ.

Ի քեզ ապաւինեցայ Ա՟ծածին, բարեխօսեա առ որդին քո ապրեցուցանել զիս, և շնորհել զթողութ՟ի յանցանաց իմոց.

Որ ծնար զկենսատուն և զփրկիչն մեր օրհնեալ, կեցո զիս բարեխօսութ՟բ քո` կոյս անձին իմոյ.

Որ զարարիչն ՚ի յարգանդի քում յղացար կոյս ամբիծ, բարեխօսութեամբ քո կեցո զիս.

Ա՟ծածին ամենօրհնեալ, որ ծնար զբանն ՚ի վերքան զբան, զնա աղաչեա կեցուցանել զանձն իմ.

Բարեխօսեա տիրուհի առ դատաւորն և որդին քո ներող լինել ինձ, որ առաւել յանցաւոր եմ քան զա՟մ մարդ.

Ի նեղութ՟ե իմում յուշ առնելով քեզ զողջոյնն Ա՟ծածին անարատ միշտ կոյս` պաղատիմ, կենագործեա զիս բարեխօսութեամբ քո.

Ի յաւիտենական հրոյն և ՚ի տանջանաց որք սպասեն ինձ` ազատեա զիս Ա՟ծածին, զի երանեցից զքեզ.

Մի անտես առներ զաղաչանս ծառայի քո, աղաչեմ զքեզ բարեբանեալ տիրուհի, զի փրկեցայց յամենահաս փորձութեանց.

Ի հիւանդութ՟եց և յա՟մ ցաւոց և ՚ի վտանգից ազատեա զիս, որ ապաւինեալ եմ ՚ի ն՟ք պաշտպանութ՟ի քո.

Աքանչելի տեսիլ ՚ի քեզ երևի Ա՟ծածին. քանզի ա՟մ ցուն արարիչն և Ա՟ծն մեր` ՚ի քէն ծնաւ վ՟ն մեր ը՟ մեզ.

Հանճարն քո Ա՟ծածին` ձրի բժշկարան հիւանդաց ցուցաւ, և անձանց նեղելոց մխիթարութիւն.

Ամենասրբուհի Ա՟ծածին որ ծնար զփրկիչն մեր, զերծո ՚ի վտանգէ և յա՟մ նեղութ՟է զիս զծառայս քո.

Ամենամաքուր տիրուհի փրկեա զծառայս քո յամե-

նայն ապաւինելեաց 'ի վերայ հասելոց, և յ՟մ վնասուց հոգւոյ և մարմնոյ։

Ա՟ծածին կոյս կեցո զիս բարեխօսութ՟բ քո որ առ քեզ դիմեմ, և ապրեցո յ՟մ տառապանաց և 'ի տագնապէ։

Ո՛վ դիմեցէ 'ի տաճար քո Ա՟ծածին անարատ, և ոչ առնուցու փութապէս զբժշկութ՟ի հոգւոյ և մարմնոյ։

Աղաչանօք ամենայն սրբոց և երկնաւորացն դասուց քաւեա զիս բարեգութ վասն ծնողին քո։

Խնայեա փրկիչ 'ի հոգիս եղբարց մեր ննջեցելոց յուսով կենացն յաւիտենից, և ներեա յանցանաց նոցա։

Ուրախ լեր կոյս տապանակ և քաւութ՟ի աշխարհի. ուրախ լեր սափոր ոսկի Ա՟ծային մանանային, և աշտանակ լուսոյ, հարսն Ա՟յ։

Օրհնաբանեմ զերրորդական միութ՟ի Ա՟ծութեդ, երեքսրբեան ձայնիւ գոչելով, և աղաչեմ՝ փրկեա զիս 'ի փորձութենէ։

Որ ծնար զփրկիչն և զՏ՟ր և զտեսբօղին աշխարհի ով կոյս, առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր։

Ուրախ լեր սանդուղք երկնային. ուրախ լեր մորենի անկէզ. ուրախ լեր դուռն կնքեալ. ուրախ լեր լեառն վիմածին. ուրախ լեր սեղան սրբութ՟ե. ուրախ լեր տիրուհի օգնութիւնդ ամենեցուն։

Բարեխօսութ՟բ անարատ ծնողի քո և ա՟մ ս՟բց՝ ողորմած Տ՟ր զողորմութիս քո պարգևեա ժողովրդեան քում։

Բարեխօսութ՟բ փառաւոր հրեշտակապետացն և հրեշտակաց և վերին դասուց՝ խնայեա 'ի ստեղծուածս քո։

Բարեխօսութեամբ պատուական և փառաւոր մարգարէին և կարապետին և մկրտչին քո Ք՟ն փրկիչ՝ փրկեա զծառայս քո։

Բարեխօսութ՟բ փառաւորեալ առաքելոցն և մարտիրոսաց և ա՟մ սրբոց քոց ողորմեա մարդասէր՝ ժառանգութեան քում։

Բարեխօսութ՟բ փառաւորեալ անարծաթ բժշկացն պահպանեա զծառայս քո փրկիչ աշխարհի և այցելու մեր։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Զհայր և զորդին և զսուրբ հոգին փառաւորեմք ասելով, երրորդութիւն սբ. կեցո՛ զանձինս մեր:
Եւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Աստուածածնի:

Որ 'ի վախճան ժամանակի անճառաբար յղացար և ծնար զարարիչն սուրբ կոյս, փրկեա զմեզ որ մեծացուցանեմք զքեզ:

Բաց մեզ զդուռն բարեգթութե օրհնեալ Ածածին, առ քեզ ապաւինեցաք. որպէս զի միջնորդութբ քով ազատեսցուք 'ի փորձանաց, մի՛ յամօթ առներ զմեզ, զի դու ես փրկութիւն ազգին քրիստոնէից:

Սարկաւագն. Զտէր աղաչեսցուք:

Քահանայն. Զի սուրբ ես տէր Ած մեր, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Ժամամուտ. Դկ:

Այժմ եհաս ժամանակ, յորում սրբեսցին ամենեքեան, և արդար դատաւորն մեր սպասէ մեզ. վասն որոյ դարձ անձն իմ և ապաշխարեա որպէս զպոռնիկն, աղաղակելով արտասուօք, ողորմեա ինձ տէ՛ր:

Այսօր զանձրեւն բժշկութե առ ամենեսին անձրեւս 'ի պաշտելի տաճար կուսին, և ցօղով օրհնութեան քո փարատես զհիւանդութիս վշտացելոց՝ բժիշկ հոգւոց և մարմնոց մերոց քս:

Որ կուսութբ ծնար անփորձ յառնէ զքս Ածն մեր, և կոյս մնացեր մայր անհարսնացեալ Ածածին մարիամ, բարեխօսեա առ նա կեցուցանել զմեզ:

Ամենասրբուհի Ածածին կոյս, զգործս ձեռաց մերոց ուղիղ արա, և զթողութի մեղաց մերոց հայցեա 'ի սաղմոսել մերում զերգն հրեշտակաց:

Սուրբ Ած, սուրբ հզօր, սուրբ անմահ, ողորմեա մեզ. սուրբ Ած, սուրբ հզօր, սուրբ անմահ, ողորմեա մեզ. սբ Ած, սբ հզօր, սբ անմահ, ողորմեա մեզ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. Սբ անմահ, ողորմեա՛ մեզ:

Օրհնութիւն:

Սուրբ Ած, սուրբ հզօր, սուրբ անմահ, ողորմեա՛ մեզ:

### Սաղմոս. ԻԶ:

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեայց, տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց:

### Պօղոսի առաքելոյն յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուած:

Եղբարք՝ զի որ սրբէն և որ սրբին՝ 'ի միոջէ են ամենեքին, վն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա, և ասել. Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ: Եւ դարձեալ՝ թէ ես եղէց յուսացեալ 'ի նա. և դարձեալ. ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Ած: Արդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութբ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութի մահուն ունէր, այսինքն է՝ զսատանայ. և ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծառայութի: Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակէն աբրահամու բուռն հարկանէ: Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ յԱծ-ակոյս կողմանէ անտի, առ 'ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն: Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կարօղ է և փորձանաւորացն օգնական լինել:

### Ալէլուիա:

Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարի, և ասացից զգործս իմ թագաւորի:

### Սուրբ աւետարան որ ըստ Յովհաննու:

'Ի ժամանակին յայնմիկ, ել յս յերուսաղէմ: Եւ էր յերուսաղէմ 'ի պրոպատիկէ աւազանին. որ կոչէր

երրայեցերէն բեթհեզդա, հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոցն յուզելոյ։ Եւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ 'ի շարժումն ջրոցն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան։

Սարկաւագն։

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամ՟ աշխ՟, հաստատութեան ս՟րբ եկեղեցեացն ամ՟յ, և ամ՟միութեան միութեան զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն ս՟րբ տանս այսորիկ, և որք հաւատով և յարգութ՟ և երկիւղիւն ա՟յ մտանեն ընդ սա, զտ՟ր աղա՟։ Տ՟ր ողոր՟։

Վասն արհիեպիսկոպոսին մերոյ (այս անուն), պատուական ուխտի քահանայութե՟, պաշտօնէից ք՟ի, ամ՟ ժառանգաւորաց և ժողովրդեան, զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն բարեպաշտ և ա՟ծասէր թագաւորաց, և ամ՟ պալատականաց, և բանակաց ն՟ց, զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն քաղաքիս այսորիկ, և ամ՟ քաղաքաց և գիւղաքաղաքաց, և որք հաւատով բնակին 'ի նոսա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն բարեխառնութեան օդոց, և պտղաբերութեան երկրի, և խաղաղաւէտ ժամանակաց, զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն նաւորդաց, ճանապարհորդաց, վշտացելոց, գերեաց և փրկութեան ն՟ց, զտ՟ր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն սրբելոյ ջրոյս այսորիկ զօրութ՟բ և ներգործութ՟բ և եկաւորութ՟բ հոգւոյն ս՟րյ, զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Եւ մինչ սարկաւագն ասէ զայս վերագրեալ բան քարոզին, քահանայն խաչանշանէ զջուրն՝ մուծանելով զխաչն 'ի ջուր։

Վասն իջանելոյ 'ի ջուրս յայս սրբարար ներգործութեան գերագոյն երրորդութեան, զտ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողորմեա։

Վասն լինելոյ ջրոյս այսորիկ բժշկութիւն հոգւոց և

խե

մարմնոց , և ա՟մ ընդդիմակաց զօրութեան հերքումն , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա՛ ։

Վասն գալոյ 'ի սա շնորհի ազատութե՟ն՝ և օրհնութե՟ն յորդանանու , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա՛ ։

Վասն ա՟մ կարօտելոց առ յա՟յ օգնականութեան և ձեռնկալութեան , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա՛ ։

Վասն լուսաւորութե՟ն մերոյ լուսով գիտութե՟ն և բարեպաշտութեան եկաւորութեամբ սրբոյ հոգւոյն , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա՛ ։

Որպէս զի տէր ա՟ծ մեր արասցէ զմեզ որդիս և ժառանգս արքայութե՟ն իւրոյ 'ի ձեռն հաղորդութե՟ն և ցօղման ջրոյս այսորիկ , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա՛ ։

Վասն փրկելոյ զմեզ յա՟մ նեղութե՟ , 'ի բարկութե՟ , 'ի վտանգից , և'ի բռնութե՟ , զտ՟ր աղաչեսցուք ։ Տ՟ր ողոր՟ ։

Ընկալ , կեցո՛ , ողորմեա՛ , և պահեա՛ զմեզ ա՟ծ քոյին շնորհիւն ։

Զամենասրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա՟ծածին՝ զմիշտ կոյսն մարիամ համդերձ ա՟մ սրբովք յիշելով , զմեզ և զմիմեանս և զամենայն կեանս մեր ք՟ի ա՟յ յանձն արասցուք ։

Դպ՟ն ․ Քեզ տեառնդ յանձն եղիցուք ։

Քահանայն 'ի ձայն ։

Զի քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութիւն՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Սարկաւագն ․ Զտէր աղաչեսցուք ։

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ։

Տէ՛ր ա՟ծ մեր , որ մեծդ ես խորհրդով և սքանչելի գործովք , և ա՟մ արարածոց արարչագործ ։ Որ պահես զուխտ և զողորմութիւս քո սիրողաց քոց ․ և որք պահեն զպատուիրանս քո ․ և ընդունիս զարտասուս ա՟մ վշտացելոց ։

Վասն այսորիկ եկիր 'ի կերպարանս ծառայի առ

բժշկութ՟ի հոգւոց և մարմնոց մերոց , ոչ առաջօք ինչ երևմամբ՝ այլ իրօք և ճշմարտութեամբ ։

Որպէս և 'ի բժշկելն քո զանդամալոյծն՝ ասացեր ․ ահաւասիկ ողջացար , մի՛ ևս մեղանչեր ։

Որ 'ի կաւոյ զաչս կուրին ստեղծեր , և լուացմամբ ջրոյ աւազանին սելովմայ լուսաւորեցեր զնա ։

Որ զստահակութ՟ի ալեաց ծովուն բանիւ հրամանի քո ածելով 'ի հանդարտութ՟ի , զմրրկեալ խռովութ՟ի կենցաղոյս ծովու խաղաղացուցեր ։

Որ զդառնութ՟ի ջուրց մեռային , օրինակաւ կենացդ փայտի 'ի ձեռն մովսէսի 'ի քաղցրութ՟ի փոխարկեցեր ։

Որ զնմանակար ջուրն երիքովի՝ աղիւ շնորհաց քոց համեմեալ 'ի ձեռն աղօթից եղիսէի , պիտանի արարեր ։

Նոյնին մարդասէր թագաւոր՝ որ զձիւնապայծառ մաքրութ՟ի հոգւոց մերոց ջրով և հոգւով սահմանեցեր 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեան , այժմ 'ի ձեռն հաղորդութ՟ե և սրսկման ջրոյս այսորիկ՝ առաքեա՛ առ մեզ զա՟ծային օրհնութ՟ի քո , մաքրել զաղտեղութիս հոգւոց և մարմնոց մերոց ։

Դա՛յ աղաչեմք՝ ա՛յց արա բարերար մեզ տկարացս , և բժշկեա՛ զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց մերոց , շնորհելով զքաւութիւն յանցանաց մերոց ․ բարեխօսութ՟բ ամենօրհնեալ տիրուհւոյն մերոյ ա՟ծածնի և միշտ կուսին մարիամու , զօրութ՟բ պատուական և կենարար խաչին , վերակացութ՟բ պատուական և երկնաւոր զօրացն անմարմնոց , աղաչանօք պատուական և փառաւոր մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու , ս՟րց փառաւոր և ամենահռչակ առաքելոցն , սուրբ և ա՟ծազգեաց հարցն մերոց , ս՟բ և մեծ քահանայապետաց և տիեզերական վարդապետաց՝ մեծին բարսղի՝ գրիգորի ա՟ծաբանին՝ և յովհաննու ոսկեբերանին , սրբոց հարցն մերոց աթանասի և կիւրղի հայրապետացն աղեքսանդրիոյ , և յովհաննու ողորմածին , ս՟բյ հօրն մերոյ նիկողայոսի սքանչելագործ հայրապետին զմիւռնոյ լիկիացւոց , սրբոյ հօրն մերոյ սպիրիդոնի սքանչելագործին ,

որ և փառաւոր մեծ մարտիրոսին Գէորգայ քաջայաղթ զօրավարին, որ և փառաւոր մեծ մարտիրոսին Դեմետրեայ մեռոնահոսի, սրբազան վկային Ղարալամպոսի, որոց բարեյաղթ մարտիրոսացն, որ և փառաւոր և սքանչելագործ անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի, Կիւրոսի և Յովհաննու, Պանդալէոնի և Երմողայոսի, Սամփսոնի և Դիոմիդեայ, Մոկիոսի և Անիկիտոսի, Թալալէոսի և Տրոփիմեայ, և սրբոյն (այս անուն օր է տօնին), յիշատակն և աղօթիւք սրբոյն (այս անուն) և բարեխօսութեամբ սուրբ և արդար Աստուածահօրն Յովակիմայ և Աննայի, և աղաչանօք ամենայն սրբոց։

Պահեա՛ տէր զծառայքս քո զհաւատացեալ թագաւորս. Երէց ասէ։

Շնորհեա՛ զառողջութիւն հոգւոց և մարմնոց սոցա, և տուր զնոսա քաղցրահայեաց ՚ի վերայ ծառայից քոց հասարակութեանն քրիստոնէից։

Յիշեա՛ տէր զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, ողջմտութեամբ քարոզել զբանն ճշմարտութեան, և զամենայն ուխտ քահանայութեան և զկարգս միանձանց։

Յիշեա՛ զերախտաւորս մեր և զսիրելիս՝ և զպատաւոր եղբարս մեր որք առաջիկայ են աստ, և որք վասն կարեւոր պատճառի գնացեալ են այլուր, և որք խնդրեցին յանարժանիցս աղօթս առնել. և թշնամեաց մերոց և հալածչաց տուր զղջումն և թողութիւն։

Յիշեա՛ տէր զեղբարս մեր որք ՚ի գերութեան են և ՚ի չար ծառայութեան, և ողորմեա՛ նոցա ըստ մեծի ողորմութեան քում, և յամենայն նեղութենէ փրկեա՛ զնոսա։

Զի դու ես աղբիւր ողորմութեան Քրիստոս Աստուած մեր, և քեզ փառս վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր Տեառն խոնարհեցուցէք։

Ապա քահանայն ասէ զաղօթս զայս։

Խոնարհեցո՛ տէր զունկն քո և լուր մեզ, որ խոնարհեցար մկրտիլ 'ի յորդանան, և զջուրսն սրբեցեր։ Օրհնեա և զամենեսին զմեզ, որ զպարանոցս խոնարհեցուցեալ՝ ցուցանեմք զծառայութի մեր, և արժանաւորեա զմեզ սրբիլ 'ի ձեռն հաղորդութե ջրոյս այսորիկ, որպ՟ զի եղիցի մեզ յառողջութի հոգւոյ և մարմնոյ։

'Ի ձայն։

Զի դու ես սրբութի մեր, և քեզ վերառաքեմք փառս և գոհութի և երկրպագութի ընդ անսկզբան քում Հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ապա քահանայն առեալ 'ի ձեռն զպատուական խաչն՝ օրհնէ զջուրն, ուղղաձիգ իջուցանելով 'ի ջուրն, և առնելով 'ի նմա զնշան խաչի և վերացուցանելով երիցս անգամ․ Բայց յորժամ առնէ 'ի ջուրն զնշան խաչին, յառաջին նուագին ընդ երգէ զժամամուտս զայս․ Դձ։

Իսկ յերկրորդ և յերրորդ նուագին դառն երգեն զայն։

Կեցո՛ տր զժողովուրդ քո, և օրհնեա զժառանգութի քո․ և պարգևեա թագաւորաց մերոց յաղթութի ընդդէմ բարբարոսաց․ և պահեա զհաստատութին 'ի ձեռն խաչի քո։

Ապա յետ աւարտին քահանայն խաչաւն սրսկէ զսրբաջուրն ընդ չորեսին կողմանս, երգելով զայս ժամամուտ․ Դձ։

Արժանի արա զմեզ պարգևաց քոց և ողորմութե ա՟ծածին կուսի՝ բարեխօսութբ քով, անտես առնել զյանցանս մեր, և շնորհել զբժշկութի, որք հաւատով խնդրեն զօրհնութիւնս քո։

Յետոյ քահանայն համբուրէ զպատուական խաչն․ նոյնպէս և այլ ժողովուրդն գան համբուրել․ և քահանայն [illegible] սրսկէ զսրբաջուրն ընդ երեսս նոցա։

Եւ յորժամ համբուրէ ծաղկազարդն, տան երգեն զժամանակս զայս . ՃԽ:

Մեծաւ բժշկութե ունելով սուրբ անարծաթք, զբժշկութի շնորհէք ամ կարօտելոց . զի արժանի եղէք ընդունել զմեծամեծ պարգեւս ՚ի մշտաբուղխ աղբերէն ՚ի փրկչէն մերմէ: Վասնզի ասէ առ ձեզ տէր՝ որպ առ պաշտօնակիցս առաքելոց . ահա ետու ձեզ իշխանութի ՚ի վերայ այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամ հիւանդութիս . վասն որոյ ըստ հրամանի նորա բարուք քաղաքավարեալք, ձրի առէք եւ ձրի տայք, բժշկելով զախտս հոգւոց եւ մարմնոց մերոց:

Փառք հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:

Այսօր ՚ի խնդրուածս քոց աղաչողաց ամենասրբուհի, հանդարտեցո զխռովութիս որք յառնեն ՚ի վր մեր, զերծո զմեզ յամ նեղութեց: Վասնզի զքեզ միայն ունիմք անսխալ եւ հաստատուն խարիսխ յաշխարհիս ծովու եւ պաշտպան . մի՛ ամաչեսցուք տիրուհի յաղաղակել մերում առ քեզ . փութացի՛ր լսել զպաղատանս մեր, որ հաւատով առ քեզ գոչեմք, ուրա՛խ լեր տիրուհի ամենեցուն օգնութի, խնդութի եւ հովանի եւ փրկութի անձանց մերոց:

Եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Տիրուհի ընկա՛լ զաղաչանս մեր, եւ փրկեա՛ զմեզ յամենայն վշտաց եւ ՚ի նեղութեանց:

Մաղթանք:

Ողորմեա՛ մեզ ած ըստ մեծի ողորմութեան քում, աղաչեմք զքեզ՝ լո՛ւր եւ ողորմեա՛:

Եւս եւս աղաչեմք վս արհի եպսին մերոյ (տայ անունն):

Եւս եւս աղաչեսցուք վս ողորմութե, կենաց, խաղաղութե, առողջութե, փրկութե, այցելութե, յաջողութե, քաւութե ծառայից այ բարեպաշտ եւ ուղղափառ քրիստոնէից:

Եւս եւս աղաչեմք վասն պահպանելոյ զքաղաքս զայս, եւ զամ քաղաքս եւ զգաւառս ՚ի սովէ, ՚ի ժանտախտէ, ՚ի գետնաշարժէ, ՚ի յընկղմանէ, ՚ի հրդեհէ, ՚ի սրոյ,

յարշաւանաց այլազգեաց , յազգային պատերազմէ , և յանկարծակի մահուանէ ։

Նա վասն քաւիչ և ներող և անյիշաչար լինելոյ բարերարին և մարդասիրին այ 'ի վր մեղաց մերոց , և դարձուցանելոյ 'ի մէնջ զա՟մ ցասումն իւր , և փրկելոյ զմեզ յարժանահաս պատուհասից իւրոց , և ողորմելոյ 'ի վր մեր ։

Ըստ , Տէր ողորմեա , ե ։

Քահանայն ։

Լուր մեզ ած փրկիչ մեր , յոյս ամ ծագաց երկրի , և որ 'ի ծով հեռի ․ և քաւեա տէր զմեղս մեր և ողորմեա մեզ ։

Քահանայն ․ Խաղաղութի ամենեցուն ․

Սարկաւագն ․ Զգլուխս ձեր այ խոնարհեցուցէք ։

Քահանայն ։

Տէրօգա բազումողորմ տէր յս քս ած մեր , բարեխօսութբ անարատ տիրուհւոյն մերոյ ածածնի՝ և միշտ կուսին մարիամու , զօրութբ պատուական և կենարար խաչին , վերակացութբ պատուական երկնային զօրութեցն անմարմնոց , աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին՝ կարապետին և մկրտչին յովհաննու , որբ և փառաւորեալ և գերահռչակ առաքելոցն , սուրբ և առաջին մարտիրոսի ստեփաննոսի նախասարկաւագին , որբ և փառաւորեալ և բարեյաղթ վկայիցն , որբ և ածազգեաց հարցն մերոց՝ որբ հարցն մերոց և տիեզերական վարդապետացն և հայրապետացն մեծին բարսղի՝ գրիգորի ածաբանին՝ և յովհաննու ոսկեբերանին , սրբոյ հօրն մերոյ նիկողայոսի սքանչելագործ հայրապետին զմիւռնիոյ լիկիացւոց , որբ և փառաւորեալ մեծ մարտիրոսին դէորգայ քաջայաղթ զօրավարի , բարեխօսութբ սրբոյն (այս անուն օրէ-վանին) , յիշատակաւ և աղօթիւք սրբոյն (այս անուն) , աղաչանօք որբ և արդար ածահօրն

յօվակիմայ և աննայի, և ամ՟ սբ՟ց, ընկա՛լ զպաղատանս մեր, շնորհեա՛ զթողութի՟ յանցանաց մերոց, ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ թևոց քոց, հալածեա՛ 'ի մէնջ զամ՟ թշնամիս և զհակառակամարտս, խաղաղացո՛ զկեանս մեր. տէ՛ր ողորմեա՛ մեզ և ամ՟ աշխարհի, և կեցո՛ զանձինս մեր որպէս բարերար և մարդասէր.

Եւ ասէ զարձակմանն զայս.

Փառք քեզ ա՟ծ՝ փառք քեզ. Ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսու՟թբ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի, վերակացութ՟բ երկնային զօրութեցն անմարմնոց, աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, և սբ՟յ (այս անուն օրէ- ջանէն), և յիշատակաւ և աղօթիւք սբ՟յն (այս անուն), և բարեխօսու՟թբ սուրբ և արդար ա՟ծահօրն յօվակիմայ և աննայի, և ամ՟ սրբոց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ.

Աղաչանօք սրբոց հարցն մերոց տէ՛ր յ՟ս ք՟ս ա՟ծ մեր՝ ողորմեա՛ մեզ, ամէն.

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Մեծ ջրօրհնէքի Աստուածայայտնութեան, որ կոչի յունարէն Մեղաս Այազմօս:

Յետ աւարտման մեծ պատարագին, սարկաւագն ձայնէ.

Զտէր աղաչեսցուք:

Իսկ քահանայն կացեալ արտաքոյ աւագ դրան սրբոյ սեղանոյն, և դարձուցեալ զդէմս իւր հողմնակի 'ի պատուհերն ջրին, որ կայ եդեալ 'ի ձախմէ աւագ դրանն, ասէ զաղօթս զայս:

Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն զքեզ Տէր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ. կեցո՛ զժողովուրդ քո և օրհնեա՛ զժառանգութիւն քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա՛, սրբեա՛ զնոսա որք սիրեցին զվայելչութիւն տան քո:

Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով, և մի՛ թողուր զյուսացեալքս 'ի քեզ.

Զխաղաղութիւն պարգևեա՛ աշխարհի քո, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց մերոց և զինուորաց, և ամենայն ժողովրդեան.

Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի քէն 'ի Հօրէդ լուսոյ, և քեզ փառս և գոհութիւն և երկրպագութիւն վերառաքեմք Հօր և Որդւոյ քո և Հոգւոյդ քո սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա յետ աղօթիցս երթեալ 'ի տեղին՝ ուր լինելոց է ջրօրհնէքն, քահանայքն յառաջոյ երթալով լուցեալ մոմեղինօք և սարկաւագն բուրվառաւ, և ժողովուրդն ամենայն զկնի նոցա. Իսկ դպիրքն յառաջոյ քահանայիցն երթան ամենքեան լուցեալ մոմեղինօք, երգելով 'ի ճանապարհին զշարականս զայսոսիկ. Ձ̃կ.

Ձայն տեառն 'ի վերայ ջուրց գոչէ ասելով. Եկայք առէք ամենեքեան զհոգի իմաստութեան, զհոգի

խը

հանճարոյ , զհոգի երկիւղի ա՟յ որ յայտնեցաւ ք՟ս ։

Այսօր բնութի՟ ջրոց սրբի , և յորդանան բաժանի , և զհոսանս ջրոց իւրոց յետս դարձուցանէ , տեսանելով զտէրն եկեալ ՚ի մկրտութիւն ։

Որպէս զմարդ ՚ի գետն եկիր , և փութաս մկրտիլ ՚ի ձեռաց ծառային քո կարապետին վասն մեղաց մերոց բարերար և մարդասէր ք՟ս թագաւոր ։

Փառք հօր և որդւոյ և՛ ։ Եւ այժմ և միշտ և՛ ։

Առ ձայն բարբառոյն յանապատի որ գոչէր , պատրաստ արարէք զճանապարհ տեառն , եկիր տ՟ր ծառայական կերպիւ , և խնդրեցեր զմկրտութի՟ , որ ոչ գիտէիր զմեղս ։ տեսին զքեզ ջուրք և երկեան ։ զարհուրի կարապետն և գոչէ ասելով , զիա՞րդ լուսաւորեսցէ աշտանակ զլոյս ։ զիա՞րդ ձեռնադրեսցէ ծառայ զտէր իւր ։ սրբեա՛ զիս և զջուրսն փրկիչ՝ բարձող մեղաց աշխարհի ։

Սարկաւագն ։ Սոփիա՛ պռօսխօմէն ։

Ընթերցուած եսայեայ մարգարէէ ։

Այսպէս ասէ տ՟ր ։ Ուրա՛խ լեր անապատ ծարաւի ։ ցնծասցէ անապատն և ծաղկեսցէ իբրև զշուշան ։ Եւ ծաղկեսցէ և ցնծասցէ անապատն յորդանանու ։ և փառքն լիբանանու տացի նմա , և պատիւն կարմելայ ։ և ժողովուրդ իմ տեսցէ զփա՛ռս տեառն , և զբարձրութ՟ի ա՟յ մերոյ ։ Զօրացարո՛ւք ձեռք լքեալք՝ և ծունկք կթուցեալք ։ Մխիթարեցարո՛ւք կարճամիտք սրտիւք ։ զօրացարո՛ւք և մի՛ երկնչիք ։ Ահաւասիկ ա՟ծ մեր հատուցանէ դատաստան՝ և հատուսցէ ։ ինքնին եկեսցէ՝ և փրկեսցէ զմեզ ։ Յայնժամ աչք կուրաց բացցին՝ և ականջք խլից լուիցեն ։ յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերու , և պա՛րզ լիցի լեզու ծանրախօսաց ։ Զի ջուր բղխեաց յանապատի , և գե՛տ ՚ի ծարաւուտ երկրի ։ և եղիցի անջրդին յեղտիւրս և աղբիւր ջուրց ՚ի ծարաւո՛ւտ երկրի ։ Անդ եղիցի ուրախութ՟ի հաւուց , և մակաղատեղք խաշանց ։ անդ մարգագետինք և խաղք ։

Ընդ եղիցին ճանապարհ մաքրեալ, և ճանապարհ սուրբ կոչեսցի · մի՛ անցցէ ընդ նա պիղծ, և մի՛ եղիցի անդ ճանապարհ պղծոյ · այլ ցրուեալքն գնասցեն ընդ նա՝ և մի՛ մոլորեսցին ։ Մի՛ եղիցի անդ առիւծ, և մի՛ ՚ի գազանաց չարաց ընդ այն մի՛ անցանիցէ · և մի՛ ամենևին գտցի ՚ի նմա · այլ ընդ նա գնասցեն փրկեալքն և ժողովեալքն վասն տեառն ։ Դարձցին՝ և եկեսցեն ՚ի սիովն ցնծութ̃՝ և ուրախութի̃ յաւիտենից ՚ի վերայ գլխոց նց̃ · զի ՚ի վերայ գլխոց նց̃ օրհնութի̃ և ցնծութի̃, և ուրախութի̃ հասցէ նց̃ · մերժեցան ցաւք՝ և տրտմութի̃ք և հեծութի̃ք ։

Սարկաւագն · Սօփիա՛ պռօսխօմէն ։

Ընթերցուածս Եսայեայ մարգարէէ ·

Այսպէս ասէ տէր · Որ ծարաւիդ էք՝ երթա՛յք ՚ի ջուր · և որ միանգամ ոչ ունիք արծաթ, երթա՛յք գնեցէ՛ք · և կերիջի՛ք առանց արծաթոյ՝ և գնոց գինւոյ ։ և զճարպ ընաւ ընդէ՞ր խակ գնէք արծաթոյ՝ և ոչ հացի · և զվաստակս ձեր ոչ ՚ի յագուրդ ։ Լուարո՛ւք ինձ՝ և կերիջի՛ք զբարութիս · և փափկասցեն ՚ի բարութ̃ անձինք ձեր ։ Ունկնդիր լերո՛ւք լսելեօք ձերովք՝ զհե՛տ եկա՛յք ճանապարհաց իմոց ։ Լուարո՛ւք ինձ, և կեցցեն ՚ի բարութ̃ անձինք ձեր ։ Եւ եդից ընդ ձեզ ուխտ յաւիտենական զսրբութի̃ն դաւթի զհաւատարիմս ։ Ահաւասիկ ՚ի վկայութի̃ հեթանոսաց ետու զնա · իշխա՛ն և հրամանատար ազգաց ։ ազգք որ ոչ գիտիցեն, կարդասցեն առ քեզ · և ժողովուրդք որ զքեզ ոչ ճանաչէին՝ ապաստա՛ն արասցեն զքեզ · վս̃ տեառն այ̃ քո ս̃րբոյն իսրայէլի · զի փառաւո՛ր արար զքեզ ։ Խնդրեցէ՛ք զտէր · և յորժամ գտանիցէք զնա, կարդացէ՛ք առ նա ։ և իբրև մերձեսցի առ ձեզ, թողցէ՛ ամպարիշտն զճանապա՛րհս իւր, և այր անօրէն զխորհուրդս իւր ։ և դարձցի առ տէր և գտցէ զողորմութի̃ · և առ այ̃ մեր՝ զի բազմապատիկ թողցէ զանօրէնութի̃ս ձեր ։ Զի ոչ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ոչ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր՝ ասէ տ̃ր ։ Այլ ո̃չ հեռի են երկինք յերկ

րէ · այնպէս հեռի են ճանապարհք իմ 'ի ճանապարհաց ձերոց , և խորհուրդք իմ 'ի խորհրդոց ձերոց ։ Զի որ օրինակ եթէ իջանիցէ անձրև կամ ձիւն յերկնից , և անդրէն ոչ դառնայ մինչև արբուսցէ զերկիր , ծնցի և բղխեսցէ · և տացէ սերմն սերմանողի՝ և հաց 'ի կերակուր ։ Այնպէս եղիցի բանն իմ , որ ելանէ 'ի բերանոյ իմմէ · մի՛ դարձցի դատարկ՝ մինչև կատարեսցէ զոր ինչ կամեցիմ · և դիւրեցից զճանապարհս քո , և զճանապարհս իմ պահեսցես ։ Զի ուրախութ՟բ ելջիք , և ցնծութ՟բ ուսանիջիք ։ զի լերինք և բլուրք կայտառեսցեն ընդունելուրախութ՟բ · և ամ՟ ծառք անտառի ծափս հարցեն ոստօք իւրեանց ։ Եւ փոխանակ ցրդւոյն նոճ բուսցի , և փոխանակ դժնկին՝ մուրտ ելցէ · և եղիցի տեառն յանուն և 'ի նշան յաւիտենից , և մի՛ պակասեսցէ ։

Սարկաւագն · Սոփիա պռօսխօմէն ։

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ ։

Այսպէս ասէ տէր · Առէք ջուր ուրախութ՟ե յաղբիւրացն փրկութ՟ե ։ Եւ ասասցես յաւուր յայնմիկ · օրհնեցէք զտէր · հնչեցէք զանուն նորա · պատմեցէք 'ի հեթանոսս զփառս նորա · յիշեցէք զի բարձրացաւ անուն նորա ։ Օրհնեցէք զանուն տեառն զի մեծամեծս արար · պատմեցէք զայս ամ՟ երկիր ։ Ցնծացէք և ուրախ լերուք բնակիչք սիոնի , զի բարձրացաւ սուրբն իսրայէլի 'ի մէջ նորա ։

Սաղմոս · ԻԶ ։

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեայց , տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ դողացայց ։

Պօղոսի առաքելոյն 'ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած ։

Եղբարք՝ ոչ կամիմ, եթէ տգէտ իցէք , զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին · և ամ՟քին ընդ ծովն անցին · և ամենեքին 'ի մովսէս մկրտեցան յամպն և 'ի

ծովու . և ամենեքին զնոյն հոգևոր կերակուրն կերան . և ամ̅քին զնոյն հոգևոր ըմպելին արբին , զի ըմպէին ՚ի հոգևոր վիմէն՝ որ երթայր զհետ նց̅ . և վէմն էր ինքն քս̅ ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա . դձ̅ ։

Ձայն տեառն ՚ի վր̅ ջուրց և ա̅ծ փառաց որոտաց , և նա ինքն ՚ի վերայ ջուրց բազմաց ։

**Աւետարան որ ըստ Մարկոսի ։**

Յաւուրսն յայնոսիկ եկն յս̅ ՚ի Նազարեթէ գալիլեացւոց , և մկրտեցաւ ՚ի յովհաննէ ՚ի յորդանան ։ Եւ նոյնժամայն ընդ վերանալ ՚ի ջրոյն , ետես ցելեալ զերկինս , և զհոգին ա̅յ իբրև զաղաւնի՝ զի իջանէր ՚ի վր̅ նորա ։ Ձայն եղև յերկնից՝ և ասէ . դու ես որդի իմ սիրելի , ընդ քեզ հաճեցայ ։

**Սարկաւագն ։**

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք ։

Դպիրն . Տէր ողորմեա ։

Վասն ՚ի վերուստ խաղաղութե̅ և փրկութե̅ անձանց մերոց , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վն̅ խաղաղութե̅ ամ̅ աշ̅ի , և հաստատութե̅ ս̅րց եկեղեց եաց ա̅յ , և ա̅մցուն միութե̅ , զտ̅ր աղաչեսցուք ։ Տ̅ր ողոր՛՛ ։

Վն̅ ս̅ր̅յ տաճարիս այսորիկ , և որք հաւատով և յարգութե̅ և երկիւղիւն ա̅յ մտանեն ՚ի սա , զտ̅ր աղաչեսցուք ։ Տ̅ր ո՛՛ ։

Վասն արհիեպ̅սին մերոյ (այս անուն) , պատուական ուխտի քահանայութե̅ , պաշտօնէից քս̅ի , ա̅մ ժառանգաւորաց և ժողովրդեան , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողոր՛՛ ։

Վն̅ բարեպաշտ և ա̅ծապահ թագաւորաց , և ա̅մ պալատականաց , և բանակաց նց̅ , զտ̅ր աղաչեսցուք ։ Տ̅ր ողոր՛՛ ։

Վասն քաղաքիս այսորիկ , և ա̅մ քաղաքաց և գիւղաքաղաքաց , և որք հաւատով բնակեն ՚ի նոսա , զտէր աղաչեսցուք ։ Տէր ողորմեա ։

Վն̅ բարեխառնութե̅ օդոց , և պտղաբերութե̅ երկրի , և խաղաղաւէտ ժամանակաց , զտ̅ր աղաչեսցուք ։ Տ̅ր ողոր՛՛ ։

Վասն նաւորդաց , ճանապարհորդաց , վշտացելոց ,

գերեաց և փրկութե՟ նց՟, զտէր աղաչեսցուք։ Տէր ողոր՟։

Վ՟ս օրհնելոյ ջրոյս այսորիկ զօրութե՟բ և ներգործութե՟բ և եկաւորութե՟բ հոգւոյն ս՟բյ, զտ՟ր աղաչեսցուք։ Տէր ողոր՟։

Եւ մինչ սարկաւագն ասէ զայս տուն քարոզիս, քահանայն երիցս խաչակնքէ մուծանելով զխաչն 'ի ջուրն։

Վ՟ս իջանելոյ 'ի ջուրս յայս սրբարար ներգործութե՟ գերագոյ երրորդութե՟ն, զտէր աղաչեսցուք։ Տէր ողոր՟։

Վասն գալոյ 'ի սա շնորհի ազատութե՟ և օրհնութե՟ն յորդանանու, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն լուսաւորութե՟ մերոյ լուսով գիտութե՟ և բարեպաշտութե՟ եկաւորութե՟բ սրբոյ հոգւոյն, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վ՟ս լինելոյ ջրոյս այսորիկ սրբութե՟ պարգև, մեղաց լուծումն, բժշկութի՟ հոգւոյ և մարմնոյ, և ամ՟ օգտակարաց յաջողութի՟, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն լինելոյ ջրոյս այսորիկ բղխեալ 'ի կեանս յաւիտենականս, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն մերժելոյ զամ՟ նենգութի՟ երևելի և աներևոյթ թշնամեաց, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն լինելոյ սմա 'ի սրբութի՟ տանց, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վ՟ս սրբելոյ զհոգի և զմարմին ամ՟ցուն որք հաւատով մասնակցին սմա, զտէր աղաչեսցուք։ Տէր ողոր՟։

Վասն արժանի լինելոյ կատարելապէս սրբութե՟ 'ի ձեռն մասնակցութե՟ ջրոյս այսորիկ՝ անտեսանելի եկաւորութե՟բ հոգւոյն ս՟բյ, զտ՟ր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վ՟ս լսելի լինելոյ տեառն ա՟յ ձայնի աղաչանաց մեր մեղաւորաց, և ողորմելոյ 'ի վերայ մեր, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վ՟ս փրկելոյ զմեզ յամ՟ նեղութե՟, 'ի բարկութե՟, 'ի վտանգից և 'ի բռնութե՟, զտէր աղաչեսցուք։

Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ ա՟ծ քոյին շնորհիւն։

Զամենասրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփա

ռաւորեալ տիրուհին մեր ա՟ծածին՝ զմիշտ կոյսն Մա-րիամ հանդերձ ա՟մ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա՟մ կեանս մեր ք՟ի ա՟յ յանձն արասցուք ։

Դպրն ․ Քեզ տեառնդ յանձն եղիցուք ։

Յորժամ սարկաւագն ասէ զքարոզն, քահանայն ասէ խոր-հրդաբար զաղօթս զայս ։

Տէր յ՟ս ք՟ս ա՟ծ՝ միածին որդի, որ ՚ի ծոցոյ հօրէ եկիր լուսաւորել զաշխարհս ճշմարիտ ա՟ծ, աղբիւր կենաց և անմահութե՟, լոյս ՚ի լուսոյ, լուսաւորեա՛ զմիտս մեր հոգւովդ քով սրբով ։ Եւ ընկալ զմեզ որ մատուցանեմք քեզ զմեծութի՟ և զգոհութի՟ վասն սքանչելի մեծագործութե՟ քո զոր արարեր ՚ի սկզբանն, և վ՟ փրկարար տնօրէնութե՟ քո ՚ի յետին ժամանակս ․ յորս զտկար և զնուաստ մարմին մեր զգեցար, և ծառայական չափով նուաստացար Թագաւորդ ամենեցուն ․ և ՚ի ծառայէ քումմէ ՚ի յովհաննէ մկրտիլ ՚ի յորդանան յանձն առեր անմեղդ, զի սրբելով զբնութի՟ ջուրց՝ բացցես մեզ ճանապարհ վերստին ծննդեան ՚ի ձեռն ջրոյ և հոգւոյ, և յառաջին համարձակութիւնն ածցես ։

Եւ մեք տօնելով այժմ զյիշատակ ա՟ծային խորհրդ-դոյս այսօրիկ՝ աղաչեմք զքեզ տէր մարդասէր, ցօղեա՛ ՚ի վերայ անարժան ծառայիցս ըստ ա՟ծային ուխտի քո՝ զջուր սրբարար զպարգև գթութե՟ քո ․ ո՟ր զի ընդունելի լինիցի բարերարութե՟ քո խնդրուածք մեր մեղաւորացս վ՟ ջրոյս այսօրիկ ․ և օրհնութի՟ քո շնորհեսցի ՚ի ձեռն սորա և մեզ և ա՟մ հաւատացեալ ժողովրդեան քում՝ որք կան առաջի քո, և հայցեն զառատ ողորմութիս քո ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ, և քեզ վայելէ ա՟մ փառք պատիւ և երկրպագութի՟ ընդ հօր և ս՟բ հոգւոյն ո՟բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Յորժամ սարկաւագն աւարտէ զքարոզն, և քահանայն ըղ խորհրդաբար աղօթեն, երկոյն բ՟ծաձայն սկսանի զաղօթս զայս ։

Ա՟ծ որ ՚ի վեր ես քան զբնութի՟, գերագոյն բարութի՟, ճշմարիտ ա՟ծ, ամենազօր, ամենախնամ, անտեսանելի,

անխափանալի , արարիչ հոգեղէն գոյացութ̃ց և բանական բնութ̃ե , 'ի բնէ բարի , անմերձենալի լոյս , որ լուսաւոր առնես զա̃մ մարդ որ գալոց է յաշխարհ :

Լուսաւորեա՛ զաչս մտաց մերոց առ 'ի ճանաչել և համարձակութեամբ օրհնել զանսահման բարերարութի̃ և զզօրութիւն քո :

Ընկա՛լ զաղաչանս մեր , և առաքեա՛ զհոգի քո ս̃բ 'ի վերայ մեր , և 'ի վերայ ա̃մ ժողովրդեան քում որք կան առաջի քո , և ակն ունին առ 'ի քէն առատ ողորմութ̃ե :

Զի ողորմած և մարդասէր ես ա̃ծ , և քեզ վայելէ փառք և երկրպագութի̃ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Նո- ցարէ ընդ նմին ձայն :

Այսօր եղբարք՝ փառաւորեմք զանսկիզբն Թագաւոր՝ զարարիչն ա̃մցուն՝ զմարդասէր տէրն ամենակալ :

Փառաւորեմք զմիածին որդին ա̃յ , որ անմայր ծնաւ 'ի հօրէ , և անհայր 'ի մօրէ :

Փառաւորեմք զհոգին երկնաւորաց և երկրաւորաց , որ մեծաւ զօրութ̃բն իւրով զջուրսն գարշապարացն կոխան արարեալ՝ զմեծ գազանն Թշուառացոյց՝ ըստ կանխասաց մարգարէին , թէ դու ջախջախեցեր զգլուխ վիշապին 'ի վերայ ջուրց :

Ընդ յայտնեաց զա̃ծութի̃ իւր վկայութ̃բն հօր , թէ դա՛ է որդի իմ սիրելի ընդ որ ես հաճեցայ , և լուսափայլ հոգւոյն աղաւնակերպ իջմամբն :

Աստի և կարապետն և մկրտիչն յովհաննէս մատամբն ցուցանէ , ահա՛ գառն ա̃յ որ բառնայ զմեղս աշխարհի :

Յանցեալ տօնի տեսաք զնա տղայ , յառաջիկայ տօնիս տեսանեմք կատարեալ հասակաւ զյայտնեալ ա̃ծն մեր , որ էր կատարեալ 'ի կատարելոյ նախքան զա̃մ յաւիտե̃նս :

Այսօր ա̃ծային և երկնային սուրբ և պատուական է տօնս . և ծագումն ա̃ծային ճառագայթից լուսոյ ս̃բ հոգւոյն պայծառացմամբ յաշխարհս ծագեաց :

Այսօր երկիրս՝ նոր երկին եղև պատուով քանզի

որդին ա̃յ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ , և եկեալ 'ի յորդանան գետ սրբէ զջուրս , և լուսաւորէ զմարդիկ 'ի սրբութի̃ ջրոյ և հոգւոյ կենդանութե̃ ։

Այսօր տօնէ ա̃ծայայտնութե̃ , և ժողովք ե̃րցն եկեղեցանայ ընդ մեզ , և հրեշտակք տօնեն ընդ մարդկան ։

Այսօր անմուտ արեգակն ծագէ , և աշխարհս ա̃մ լուսով ճառագայթի ։

Այսօր լուսինն մեծ լուսով փայլի , և զտիեզերս պայծառացուցանէ ։

Այսօր լուսաւորդ աստեղք բոցանշոյլ ճաճանչիւք զարարածս վայելչացուցանեն ։

Այսօր ամպք ա̃ծայինք ցնծութե̃ ցօղեն յերկնից զարդարութեան ցօղն 'ի մարդիկ ։

Այսօր անստեղծն 'ի ստեղծուածոյ խնդրէ յօժարութեամբ ձեռնադրի ։

Այսօր տէրն ծառային խոնարհեցուցանէ զգլուխ , զի զմեզ 'ի ծառայութենէ ազատեսցէ ։

Այսօր մարգարէն և կարապետ մերձենայ առ տէր դողութե̃ , տեսանելով զխոնարհիլն ա̃յ առ մարդիկ ։

Այսօր ջուրքն յորդանանու փոխին 'ի բժշկութի̃ եկաւորութեամբ տեառն ։

Այսօր յանցանք ադամայ ջնջին ջրովքն յորդանանու , և նորոգին երեսք երկրի յերևելն ա̃յ մերոյ ։

Այսօր դրախտն բացեալ լինի մարդկութեանս , և արդարութե̃ ցնծան մարդիկ 'ի յաւիտենական կեանս ։

Այսօր 'ի հին տրտմուե̃ն փոխեցաք , և որպէս նոր խորայել ապրեցաք ։

Այսօր բարձան պատրանքն , և գալուստ տեառն բանայ մեզ ճանապարհ փրկութեան ։

Այսօր ծով և ցամաք ուրախակից եղեն աշխարհի , և ամենայն աշխարհ լցաւ ցնծութեամբ . և ժողովք ուղղափառացն զուարճանան ուրախութեամբ մեծաւ ։

Այսօր և մեք հաւատացելքս քո̃ի գոչեմք և ասեմք ։

Մեծ ես տէր և սքանչելի են գործք քո , և ոչ ինչ բան բաւական է օրհնել զսքանչելիս քո ։

Դասն · փառք քեզ տէր՝ փառք քեզ։

Մե՛ծ ես տէր և սքանչելի են գործք քո, և ոչ ինչ բան բաւական է օրհնել զսքանչելիս քո։

Դասն · փառք քեզ տէր՝ փառք քեզ։

Մե՛ծ ես տէր և սքանչելի են գործք քո, և ոչ ինչ բան բաւական է պատմել զսքանչելիս քո։

Դասն · փառք քեզ տէր՝ փառք քեզ։

Դու ՚ի չորից տարերաց զարարածս յօրինեցեր և չորիւք եղանակօք զշրջան տարւոյն պսակեցեր։ ՚Ի քէն դողան ա̃մ իմանալի զօրութիւնք, զքեզ օրհնէ արեգակն, զքեզ փառաւորէ լուսին, զքեզ բարեբանեն աստեղք, քեզ հնազանդի լոյս, ՚ի քէն սարսին խորք, քեզ ծառայեն աղբիւրք։

Դու ձգեցեր զերկինս որպէս զխորան, դու պատրաստեցեր զերկիր ՚ի վերայ ջուրց, դու պարսպեցեր զծով աւազով, դու առ ՚ի շունչ զօդն սփռեցեր։

Հրեշտակական զօրութիւնքն քեզ սպասաւորեն · հրեշտակացն դասք քեզ երկրպագանեն, բազմաչեայ քերովբէքն և վեցթեւեան սերովբէքն պարունակեալք, և շրջանակի թռուցեալք, յահէ անմատոյց փառաց քոց ծածկին։

Վասն զի դու ա̃ծ գոլով անպարագրելի անսկիզբն և անճառ՝ եկիր յերկիր, զկերպարանս ծառայի առեալ, ՚ի նմանութի̃ մարդոյ եղեալ։ Քանզի ոչ հանդուրժէիր տէր՝ վ̃ն գթոյ ողորմութե̃ քո, տեսանել զազգ մարդկան անկեալ ընդ բռնութե̃ սատ̃նյի · այլ եկիր և փրկեցեր զմեզ։

Խոստովանիմք զշնորհն, քարոզեմք զողորմութի̃ն, ոչ թագուցանեմք զբարերարութի̃ն։ Զծնունդս բնութե̃ մերոյ ազատեցեր, զկուսական արգանդն սրբեցեր ծննդեամբ քով, ա̃մ արարածք օրհնեցին զքեզ ՚ի յայտնիլն քո։

Քանզի դու ա̃ծ մեր ՚ի յերկրի երևեցար և ը̃ մարդկան շրջեցար, դու և զհոսանս յորդանանու սրբեցեր առաքելով յերկնից զհոգի քո ս̃բ · և փշրեցեր զգլուխ վիշապացն, որք անդանօր որջացեալ կային։

Անքնին մարդասէր Թագաւոր՝ եկ և այժմ առ մեզ եկաւորութ̃բ սուրբ հոգւոյդ, և սրբեա զջուրս զայս։ (զայս տուն ասէ երիցս)։

Եւ տուր սմա շնորհս ազատութե̃, և զօրհնութի̃ն յորդանանու։

Արա զսա անապականութե̃ աղբիւր, սրբութե̃ պարգև, մեղաց լուծումն, հիւանդութե̃ց բժշկութի̃, դիւաց խորտակումն, հակառակ զօրութե̃ցն անմերձենալի, հրեշտակական զօրութեամբ լցեալ։

Եւ արա զսա որոց առնուն և ընդունին 'ի սմանէ՝ օրհնութե̃ աղբիւր, սրբութի̃ տանց, բժշկութի̃ հոգւոց և մարմնոց, և օգտակար առ ա̃մ պէտս։

Զանզի դու ես ա̃ծ մեր՝ որ ձեռամբ մովսէսի 'ի մէջ կարմիր ծովուն ազատեցեր 'ի ծառայութե̃ փարաւոնի զազգն իսրայէլի։

Դու ես ա̃ծ մեր, որ հերձեր զվէմն յանապատին, և բղխեցուցեր զջուր, և զպապակեալ ժողովուրդն քո արբուցեր։

Դու ես ա̃ծ մեր, որ առ մովսէսիւ զդառն ջուրսն մեռային՝ փայտիւն քաղցրացուցեր։

Դու ես ա̃ծ մեր, որ առ եղիայիւ 'ի ձեռն ջրոյ և հրոյ ազատեցեր զազգն եբրայեցւոց 'ի ծառայութե̃ բահաղու։

Դու ես՝ որ զդառն և զանզաւակ ջուրսն առ եղիսէիւ, աղիւն առողջացուցեր, և զանծնունդ ժողովուրդն քո բժշկեցեր։

Դու ես՝ որ 'ի ձեռն ջրոյ և հոգւոյ նորոգեցեր զապականեալ բնութիւնս մեր 'ի մեղաց։

Անքնին և այժմ տէր՝ եկ առ մեզ եկաւորութ̃բ ո̃բ հոգւոյդ, և սրբեա զջուրս զայս։ (զայս տուն ասէ երիցս)։

Տուր ա̃մ մերձեցելոց և հաղորդելոց և լուացելոց ջրովս այսու, զսրբութի̃, զառողջութի̃, զմաքրութի̃, և զօրհնութիւն քո։

Օրհնեա սովաւ զժողովուրդս քո, շնորհեա սովաւ զխաղաղութի̃ աշխարհի, և շինութի̃ եկեղեցեաց, հաստատութիւն հաւատացելոց, և կանգնումն քրիստոնէից։

Կեցո՛ տէր և զծառայսն քո զհաւատարիմ թագաւորսն մեր ընդ հովանեաւ քով. (զայս բան ասէ երիցս)։

Հնազանդեցո՛ նոցա զա͞մ թշնամիս և զպատերազմունս, շնորհեա՛ նոցա զա͞մ հայցուածս փրկութե՛ և զկեանսն յաւիտենից։

Զի ՚ի տարերաց և ՚ի մարդկանէ և ՚ի հրեշտակաց, և յերևելեաց և յաներևութից փառաւորեսցի ամենասուրբ անունն քո ընդ հօր և ընդ հոգւոյն ս͞բյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս ձեր ա͞յ խոնարհեցուցէք։

Եւ քահանայն խոնարհեալ ասէ խորհրդաբար զաղօթս զայս։

Խոնարհեցո՛ տէր զունկն քո և լո՛ւր մեզ, որ խոնարհեցար մկրտիլ ՚ի յորդանան և սրբեցեր զջուրսն. օրհնեա՛ զմեզ զամենեսեան, որ խոնարհեցուցանելով զպարանոցս մեր յայտ առնեմք զծառայութիւնս մեր։

Եւ արժանաւորեա՛ զմեզ լնուլ սրբութե՛ քով ՚ի ձեռն հաղորդութե՛ և սրսկման ջրոյս այսորիկ. և եղիցի մեզ ՚ի սրբութի, և յօրհնութի, և ՚ի բժշկութի հոգւոյ և մարմնոյ։

՚Ի ձայն։

Զի դու ես սրբութի մեր, և քեզ փառս և գոհութի և երկրպագութի վերառաքեմք ընդ անսկզբան քում հօր, և ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ խոծանէ զպատուական խաչն ՚ի ջուրն երիցս, և հանէ, եղանակելով երիցս զծաճաճուառ զայս. Ա͞ծ։

Որ ՚ի յորդանան մկրտելով քո տէ՛ր՝ երկրպագութի երրորդութե՛ն յայտնեցաւ. զի և ձայնն հօր քեզ վկայէր, որդի սիրելի զքեզ անուանելով. և հոգին ս͞բ ՚ի նմանութի աղաւնոյ իջեալ, հաստատէր զբանին հաստատութի՛ն. որ յայտնեցար ք͞ս ա͞ծ մեր, և լուսաւորեցեր զաշխարհս, փառք քեզ։

Եւ քահանայն սրսկէ զջուրն զտաճարաւն և զժողովրդեամբն, և լինի նուագ 'ի տաճարն ծղանակելով զայս ժամանում․ Ե̃կ․

Օրհնեսցուք հաւատացեալքս զմեծութի̃ բարերարութե̃ն զոր արար մեզ․ զի մարդ եղեալ մկրտի 'ի յորդանան, և լուանայ զմեղս մեր միայն մաքուրն և անաղտն, որ սրբեաց զմեզ և զջուրն, և զգլուխ վիշապին խորտակեաց 'ի նմա․ արդ եղբարք առցուք զջուր ուրախութե̃, զի որք հաւատով առնուն՝ շնորհք ս̃բ հոգւոյն աներևութապէս տուեալ լինի նոցա 'ի ք̃նէ ա̃յ և 'ի փրկչէն հոգւոց մերոց․

Եւ ապա ասեն 'ի դասէն․

Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև 'ի յաւիտեան․

Սարկաւագն․ Զտէր աղաչեսցուք․

Քահանայն․ Օրհնութի̃ տեառն և ողորմութի̃ նորա ա̃ծային շնորհիւ և մարդասիրութ̃բ իւրով 'ի վերայ ձեր եղիցի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն․

Եւ ասէ շարջախոսն․

Փառք քեզ ա̃ծ մեր՝ փառք քեզ․ Որ խոնարհեցար մկրտիլ 'ի յովհաննէ 'ի յորդանան վասն փրկութեան մերոյ ք̃ս ա̃ծ մեր, բարեխօսութեամբ ամենասրբուհի մօր քո անարատի, զօրութ̃բ պատուական և կենարար խաչին, վերակացութ̃բ պատուական երկնային զօրութե̃ց անմարմնոց, աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, և ս̃բյն (այս անուն օրէ-վանին), և սրբոյ հօրն մերոյ յովհաննու ոսկեբերանի կոստանդնուպօլսոյ հայրապետին, և ա̃ծահօրն յովակիմայ և աննայի, և ա̃մ ս̃բց քոց, ողորմեա և կեցո զմեզ ո̃պ բարերար և մարդասէր և ողորմած ա̃ծ․

Աղաչանօք ս̃բց հարցն մերոց տէր յ̃ս ք̃ս ա̃ծ մեր ողորմեա մեզ, ամէն․

Աղօթք վասն որդեծնութեան ամլոց։

## Սարկաւագն.

Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։

Եւ ևս աղաչեսցուք վասն ողորմութե՟, կենաց, խաղաղութե՟, առողջութե՟, փրկութե՟, այցելութե՟, և քաւութե՟ մեղաց ծառայիս ա՟յ (այս անուն), և աղախնոյս ա՟յ (այս անուն)։

Վն՟ պարգևելոյ սոցա զպտղաբերութի՟ որդեծնութե՟, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա՛։

Վասն զուարճացուցանելոյ զսոսա տեսութե՟ բարի զաւակաց, զտէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա՛։

Վասն փրկելոյ զսոսա և զմեզ յա՟մ նեղութէ՟, 'ի վտանգէ և 'ի բռնութե՟, զտէր աղաչեսցուք։ Տէ՟ ող՟։

## Քահանայն.

Ո՛վ ամենազօր, որ արարեր զերկինս և զերկիր. զերկինս լցուցեր բազմութե՟ զօրաց անմարմնոց վ՟ մեծի փառաց քոց. և զերկիր զարդարեցեր պէսպէս բուսովք և տնկովք, ունելով իւրաքանչիւր սերմն ը՟ ազգի իւրենց։

Եւ զա՟մ ընդերս երկրի բեղմնաւորեցեր պէսպէս անհամար և անպակասելի սերմամբ, տալով նոցա զօրութի՟ պտղաբերութե՟. և զզանազան կենդանիս 'ի դ՟ոյ ածեր, պարգևելով ա՟մնցուն զծնունդ և զաճումն։ Ստեղծեր և զմարդն ըստ պատկերի և ըստ նմանութե՟ քո, և զարդարեցեր ազգի ազգի շնորհօք հոգւոյն քո ս՟բյ, և ճոխացուցեր զնա հոգևոր և մարմնաւոր բարութե՟. արու և էգ արարեր զնա, և ա՟ծային օրհնութե՟ քով ետուր նմա զօրութիւն աճելոյ և բազմանալոյ։

Եւ քանզի ոչ եկաց 'ի հրամանս քո զոր պատուիրեցեր նմա, ա՟մ երևելի արարածք անկան ընդ պատժովք. վ՟յ զօրութի՟ բնութե՟ նց՟ տկարացան, մինչև երբեմն 'ի բնաւորական ներգործութիւնս իւրեանց պակասիլ։

Իսկ դու ա՛մենազօր Թագաւոր, որ զարարածս ա՟մ ունիս ընդ քոյով իշխանութե՟, և վարես զամենեսին

քաղցրութ̅ կամաց քոց , զօրացուցանես զտկարսն , և
զամուլսն առնես բազմածին . բղխեցուցանես զմեղր ’ի
վիմէ , և իւղ յապառաժէ , և կարող ես ’ի քարանց
յարուցանել որդիս աբրահամու :

Դու զամուլ արգանդ սառայի ըստ անսահման ողոր-
մութե̅ քո պտղաբեր արարեր , և բազմացուցեր զզա-
ւակ նորա որպէս զաստեղս երկնից բազմութբ̅ :

Դու բացեր զփակեալ արգանդ աննայի մօրն սամու-
ելի , և եօթնեակ զաւակօք բարգաւաճեցեր :

Դու զպառաւեալ ամուլն եղիսաբէթ որդեծին ա-
րարեր , շնորհելով նոցա զմարգարէն և զառաքեալն
զկարապետն յովհաննէս :

Դու և յովակիմայ և աննայի ’ի ծերութե̅ իւրեանց
պարգևեցեր զաւակ օրհնութե̅ զսուրբ կոյսն մարիամ
ա̅ծածին . յորում օրհնեցան ա̅մ ազգք երկրի :

Վասն որոյ և մեք նուաստ և տառապեալ ծառայք
քո գիտելով զանսահման զօրութի̅ քո զմեծ և զհզօր , և
զանձառ մարդասիրութի̅ քաղցրութե̅ քո , անկանիմք առա
ջի անոխակալ տէրութեդ քո , և պաղատիմք և աղաչեմք
և հայցեմք ’ի քէն բա́զումողորմ, տուր տառապեալ ծա-
ռայի քո և աղախնոյ քո այսոցիկ պտուղ որովայնի ’ի
փառաբանութի̅ և ’ի գովեստ անուանդ քում սրբոյ :

Այո տէր ա̅ծ մեր՝ խոնարհեցո՛ զունկն քո , և լո՛ւր
աղաչանաց ծառայից քոց , և զուարձացո՛ զսոսա ծնըն-
դեամբ զաւակաց , սնուցանել զնոսա ’ի պաշտօն բարի
երկիւղի քո , և առնուլ վարձս բարեաց ’ի մարդասի-
րէդ ըստ առատ ողորմութեան քո :

Զի դու ես միայն ամենազօր թագաւոր , և չիք ինչ
քեզ անհնարաւոր , և քեզ մատուցանեմք փառս պա-
տիւ և երկրպագութի̅ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Հայր մեր :

Օրհնութիւն նորանկար պատկերի։

Ասէ եպիսկոպոսն կամ քահանայն. Օրհնեալ է ած մեր յամ ժամ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն. Խաղաղութեամբ զտէր աղաչեսցուք։ Եւ ևս աղաչեսցուք զմարդասէրն ած, զի սրբեսցէ զպատկերս զայս 'ի փառս միածնի որդւոյ իւրոյ, ամենակալ տէր ած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

Եպիսկոպոսն կամ քահանայն. Խաղաղութի ամենեցուն։

Սարկաւագն. Զգլուխս մեր տն խոնարհեցուսցուք։

Եպիսկոպոսն կամ քահանայն։

Տէր Թագաւոր ամենակալ՝ հայր տեառն մերոյ և փրկչին յսի քսի, որ հրամայեցեր մովսէսի ծառայի քո կազմել զպատկերս քերովբէից 'ի քաւութէ տապանակին 'ի մջ խորանին։ Եւ մեք ըստ այսմ հրամանատրութէ կազմեցաք զպատկերս զայս, և աղաչեմք զքեզ Թագաւոր մեր, առաքեա՛ զշնորհս հոգւոյն քո սրբոյ 'ի պատկերս յայս։

Օրհնեա՛ ✠ և սրբեա՛ զսա ամենասուրբ անուամբ քով. և տո՛ւր սմա զօրութի սքանչելեաց 'ի բժշկութի հոգւոց և մարմնոց ծառայից քոց։

Եւ որ ոք հաւատով աղաչեսցէ առաջի սորա, ընկա՛լ զպաղատանս նորա որպէս խունկ հաճոյական 'ի ձեռն մջ հրեշտակի քո, և կատարեա՛ զխնդրուածս նորա։

Եւ որ ետ նկարել զսա՝ պահեա՛ հզօր աջով քով անփորձ 'ի չարէ 'ի խնամս գթութէ քո. և տո՛ւր նմա զառատ ողորմութիս քո, շնորհօք և բարեհաճութբ միածնի որդւոյ քո՝ և մարդասէր տեառն և այ մերոյ՝ և փրկչին յսի քսի։

'Ի ձայն։

Զի քեզ վայելէ փառք՝ պատիւ՝ և երկրպագութի ընդ որդւոյ և ամենասուրբ հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հայր մեր,

# Սրբոյն Յոհաննու ոսկեբերանի

Ճառ ս̃րյ և հրաշափառ կիւրակէի փառաւորեալ և փրկագործ յարութեն ք̃ի ա̃յ մերոյ, զոր ընթեռնու աւագագոյնն յաւարտման ս̃րյ պատարագին նախ քան զարձակումն, կացեալ կանգուն 'ի տեղւոջ իւրում, դարձուցանելով զերեսս իւր առ ժողովուրդն։

Որ ոք իցէ բարեպաշտ և ա̃ծասէր՝ հաղորդեսցի այսմ բարի և լուսապայծառ տօնիս։

Որ վաստակեցաւ պահօք, արժանասցի այժմ դահեկանի։

Որ յառաջին ժամէ աշխատեցաւ, ընկալցի այսօր զարդար վարձս իւր։

Որ զերրորդ ժամու եկն, ցնծութեամբ տօնեսցէ։

Որ զվեցերորդ ժամու եհաս, մի՛ բնաւ երկմտեսցէ. զի ոչ ելանէ անվարձ։

Որ ոք յապաղեաց մինչև ցիններորդ ժամն, եկեսցէ և մի՛ ինչ կասկածեսցի։

Որ ոք 'ի մետասան ժամու հազիւ եհաս, մի՛ երկիցէ վասն յամելոյն, զի առատ է տէրն, ընդունի զվերջինն որպէս զառաջինն, զմետասան ժամուն հանգուցանէ որպէս զաշխատօղսն յառաջին ժամէ, ողորմի և վերջնոյն՝ և զառաջինն ողջագուրէ. Նմա հատուցանէ, և սմա պարգևէ. զաշխատութիւն ընդունի, զյօժարութիւն սիրէ, զվաստակսն յարգէ, և զբաղձանսն գովէ։

Իսկ արդ՝ մտէ՛ք ա̃մքին յուրախութի̃ տեառն ձերոյ և առաջինքդ և երկրորդք, և ընկալջիք զվարձս ձեր. մեծատունքդ և աղքատք պարեցէք 'ի միասին. ջանացօղքդ և ծոյլք պատուեցէք զօրս. պահեցօղքդ և չպահօղք ուրախացէք այսօր։

Բարելից է սեղանն, յագեցարուք ա̃մքեան. առատ է զենլին, մի՛ ոք ելանիցէ քաղցեալ. ամենեքեան մասնաւորեցէք խրախճանիս հաւատոյ. ամենեքեան բաժանորդք լերուք քաղցրագոյն մեծութե̃ս,

Մի՛ ոք սգասցի վասն աղքատութեան, զի յայտնեցաւ հասարակաց Թագաւորութի. մի՛ ոք կոծեսցի վասն յանցանաց, զի շնորհ Թողութեան ծագեաց ՚ի գերեզմանէ. մի՛ ոք երկիցէ ՚ի մահուանէ, զի մահն փրկչին ազատեաց զմեզ. շիջոյց զմահն, ըմբռնելով ՚ի մահուանէ։

Նա աւար զդժոխս, որ էջն ՚ի դժոխս, դառնացոյց զնա առաջակայութբ իւրով, զոր և եսայիաս նախաձայնեաց ասելով, Դժոխք ՚ի ներքուստ դառնացաւ ՚ի պատահելն քեզ։ Դառնացաւ, զի ունայնացաւ զօրութի նորա. դառնացաւ, զի խայտառակեցաւ. դառնացաւ, զի ընդարմացաւ. դառնացաւ, զի յաղթահարեցաւ. դառնացաւ, զի կողոպտեցաւ։

Նա զմարդ, և պատահեցաւ այ̃. էառ զերկիր, և հանդիպեցաւ երկնի. էառ զայն զոր տեսանէր, և ըմբռնեցաւ յայնմանէ զոր ոչն տեսանէր։

Ո՛վ մահ՝ ո՞ւր է խայթոց քո, ո՛վ մահ՝ ո՞ւր է յաղթութի քո։

Յարեաւ քս̃, և անկան դևք. յարեաւ քս̃, և ուրախանան հրեշտակք. յարեաւ քս̃, և կեանքն զօրացաւ. յարեաւ քս̃, և մեռեալ ոք ոչ մնաց ՚ի գերեզմանի։

Զի քս̃ յարեաւ ՚ի մեռելոց առաջին պտուղ ննջեցելոց. նմա փառք և զօրութի յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ
## ՍՐԲՈՅ ՊԵ՛ՆՏԷԿՈՍՏԷԻ՛Ն

'Ի կիւրակէ երեկոյի սրբոյ պենտէկոստէին կանխագոյն հարկանի կոչնակ, և սկսանի ժամերգութիւն, և ասի նախերգական սաղմոսս այս։

*Օրհնեա՛ անձն իմ զՏ̄ր, Տ̄ր Ա̄ծ իմ մեծ եղեր յոյժ. Խոստովանութիւն և մեծ վայելչութիւն զգեցար. արկեալ զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս զխորան, և արկեր 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։*

*Ո դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա 'ի վերայ թևոց հողմոց։*

*Ո արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ։*

*Հաստատեաց զերկիր 'ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան։*

*Խորք որպէս զգեստ վերարկու է նորա, 'ի վերայ լերանց կացցեն ջուրք։*

*'Ի սաստէ քումմէ փախիցեն, և 'ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն։*

*Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան, 'ի տեղի յոր հաստատեցեր զնոսա։*

*Սահման եդեր և ո՛չ անցանեն, և ո՛չ ևս դառնան 'ի ծածկել զերկիր։*

*Առաքեցեր զաղբիւրս ընդ ծործորս, 'ի մէջ լերանց գնասցեն ջուրք։*

*Արբուցանել զա̄մ գազանս վայրի, յագեսցին ցիռք 'ի ծարաւ իւրեանց։*

*Ընդ թռչունք երկնից բոյնս դիցեն, և 'ի մէջ վիմաց տացեն զձայնս իւրեանց։*

*Արբուցանէ զլերինս 'ի շտեմարանաց իւրոց, 'ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր։*

Բուսուցեր զխոտ ՚ի լերինս , զդալարի ՚ի ծառայութ՟ մարդկան ։

Հաներ զհաց յերկրէ , գինի ուրախ առնէ՝ իւղ զուարթ , և հաց հաստատէ զսիրտ մարդոյ ։

Յագեսցին ծառքն անտառի , և մայրքն լիբանանու՝ զորս դու տնկեցեր ։

Անդ Թռչունք երկնից ձագս հանցեն , և բոյն արագլի ապաւէն է նոցա ։

Լերինք բարձունք են եղջերուաց , և վէմք ապաւէնք նապաստակաց ։

Արարեր զլուսին վասն ժամանակի , արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ ։

Արարեր զխաւար և եղև գիշեր , ՚ի նմա գնան ա՟մ գազանք անտառի ։

Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն , և խնդրեն յա՟յ զկերակուրս իւրեանց ։

՚Ի ծագել արևու ժողովին , և ՚ի մորիս իւրեանց դադարին ։

Ելանէ մարդ ՚ի գործս իւր , և ՚ի վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ ։

Որպէս զի մեծ են գործք քո տէր , զա՟մ ինչ իմաստութ՟բ արարեր , և լցաւ երկիր ստեղծուածովք քովք ։

Այս ծով մեծ և անդորր , ՚ի սմա են սողունք որոց ո՟չ գոյ Թիւ . գազանք մեծամեծք և մանունք , ՚ի սմա և նաւք գնան , վիշապն զոր ստեղծեր խաղալ նմա ։

Ամենեքեան քեզ սպասեն , և դու տաս զկերակուր նոցա ՚ի ժամու ։

Տաս դու նոցա և կերակրին , բանաս զձեռն քո և կերակրես զամենեսեան կամօք քովք ։

Դարձուցանես զերեսս քո ՚ի նոցանէ և խռովին , հանես զոգի ՚ի նոցանէ՝ պակասին և ՚ի հող դառնան ։

Առաքես զոգի քո և ստանան զնոսա , և նորոգես զերեսս երկրի ։

Ելցեն փառք տեառն յաւիտեան , և տէր ուրախ եղիցի յարարածս իւր ։

Ահայի յերկիր և տայ դողալ նմա, մերձեցի 'ի լերինս և ծխեցին։

Օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ, սաղմոս ասացից այ՟ իմոյ մինչև եմ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղէց 'ի Տէր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ, և ամբարիշտք մի՛ ևս գտցին 'ի նմա. օրհնեա՛ անձն իմ զՏէր։

Սարկաւագն. Խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք։

Դպիրն. Տէր ողորմեա՛։

Վասն 'ի վերուստ խաղաղութ՟ և փրկութ՟ անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա՛։

Վասն խաղաղութ՟ ամ՟ հի, և հաստատութ՟ ս՟բց եկեղեցեացն այ՟, և ամ՟միութ՟, զՏ՟ր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն առաջիկայ ժողովրդեանս որք սպասեն շնորհաց հոգւոյն սրբոյ, զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն խոնարհեցուցանելոյ զծունր սրտի մերոյ առաջի տեառն, զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն զօրացուցանելոյ զմեզ կատարելապէս հաճոյ լինել ինքեան, զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն առաքելոյ առ մեզ զառատ ողորմութ՟ իւր, զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն ընդունելոյ զծնրադրութ՟ս մեր և զաղօթս ոպ՟ խունկ առաջի իւր, զՏէր աղաչեսցուք։ Տ՟ր ողոր՟։

Վասն փրկելոյ զմեզ յամ՟ նեղութ՟է, 'ի բարկութ՟է, 'ի վտանգից, և 'ի բռնութ՟է, զՏէր աղաչեսցուք։

Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, և պահեա՛ զմեզ ա՟ծ քոյին շնորհիւն։

Զամենասուրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա՟ծածին՝ զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամ՟ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զամենայն կեանս մեր ք՟ի այ՟ յանձն արասցուք։

Դպիրն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

### Բաշխանոյն 'ի ձայն։

Ո ի քեզ վայելէ ա̅մ փառք՝ պատիւ՝ և երկրպագութիւն՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

### Փոխաձայն սաղմոս. ՃԼ։

Տէր կարդացի առ քեզ, լուր ինձ. լուր ինձ տէր. տէր կարդացի առ քեզ լուր ինձ. նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ քեզ. լուր ինձ տէր։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի. լուր ինձ տէր.

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր տէր, իսկ ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութի։

### Ժամամուտ.

Հրաշափառ տեսարան այսօր տեսին աչք իմ 'ի քաղաքի դաւթի. յորժամ հոգին սուրբ էջ 'ի վերնատունն հրեղինօք լեզուօք, որպէս ածախօսն ղուկաս հրաշալեանէ. քանզի ասէ 'ի ժողովել աշակերտացն քնի եղև հնչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զտունն յորում նստէին. և սկսան ամենեքեան խօսիլ սքանչելի բանիւք, սքանչելի նշանակութբ, և սքանչելի քարոզութբ ամենասուրբ երրորդութեն։

Վասն անուան քո համբերի տէր. համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի տէր։

Հրաշափառ տեսարան այսօր տեսին աչ. (կրկնէ)։

'Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պահէ առաւօտու յուսացաւ իսրայէլ 'ի տէր։

Հոգին սուրբ էր միշտ և է և եղիցի. ոչ սկսեալ և ոչ դադարեալ, այլ միշտ ընդ հօր և ընդ որդւոյ կարգեալ և թուեալ. կեանք և կենդանարար, լոյս 'ի լուսոյ յառաջագայեալ. ինքնաբուն բարի և աղբիւր բարութե. որով հայր ճանաչի, և որդի փառաւորի, և յա-

մնեցունց ծանուցեալ լինի , մի զօրութի , մի կարգ ,
մի երկրպագութիւն սրբոյ երրորդութեանն ։

'Ի տեառնէ է ողորմութիւն բազում , և 'ի նմանէ է փրկութի , և նա փրկեաց զիսրայէլ յամ նեղութեց նորա ։

Հոգին սուրբ էր միշտ և է և եղիցի ամ . ( ձըձնէ ) ։

Օրհնեցէք զտէր ամ ազինք , գովեցէք զնա ամ ժողովուրդք ։

Հոգին սուրբ լոյս և կեանք և կենարար , աղբիւր իմանալի , հոգի իմաստութե , հոգի հանճարոյ , բարի , ուղիղ , մտաւոր , առաջնորդական , մաքրիչ յանցանաց , ած և ածարար , հուր 'ի հրոյ յառաջագայեալ , խօսեցուցանող , ներգործող , բաժանող շնորհաց , որով ամ մարգարէք և առաքեալք ամ հանդերձ վկայիւք պսակեցան . սքանչելի լուր , սքանչելի տեսիլ , հուր բաժանեալ 'ի բաշխմունս շնորհաց ։

Զօրացաւ ողորմութի նորա 'ի վերայ մեր , և ճշմարտութիւն տեառն մնասցէ յաւիտեան ։

Հոգին սբ լոյս և կեանք և կենարար ամ . ( ձըձնէ ) ։
Փառք հօր և որդւոյ և" ։ Եւ այժմ և միշտ և" ։

## Երգ . Ըկ ։

Թագաւոր երկնաւոր , մխիթարիչ , հոգի ճշմարտութե , որ ամ ուրեք ես , և զամ լնուս . որ գանձ ես բարութեց և պարգևիչ կենաց , եկ և բնակեա 'ի մեզ , և մաքրեա յամ աղտեղութե , և կեցո զանձինս մեր ։

Յայս սարկաւագն բուրվառ 'ի ձեռին և յառաջոյ նորին դպիրք լուցեալ մոմեղինօք , և զկնի սարկաւագին քահանայն զգեստաւորեալ , 'ի հիւսիսային դրանէն ելեալ բոլորաշրջին զատճարաւն , և գան 'ի մէջն տաճարին ։

Սարկաւագն . Սոփիա օւթի ։

Եւ ապա ասէն . Լոյս զուարթ ամ ։

Եւ յորժամ ասեն , Օրհնեմք զհայր ամ , 'ի ներքս մտանեն ընդ աւագ դուռն , և անդ աւարտեն զերգն ։

Սարկաւագն · Երկեյեա՛ն մեսեդի ։

Դպիրն արտաքուստ ՚ի բեմ · Յուցեր ժողովրդեան քում զզօրութիւն քո ։

Եւ քահանայն ՚ի ներքուստ կայեալ առաջի սբյ սեղանոյն զդէմն ՚ի սեղան ունելով , եղանակէ · Զկ ։

Ո՛վ է ա̃ծ մեծ որպէս զա̃ծ մեր , դու ես ա̃ծ որ առնես զսքանչելիս ։

Դպիրն ՚ի բեմ · Ասացի , և այժմ սկսայ , այս է փոփոխումն աջոյ բարձրելոյն ։

Դասն եղանակէ · Ո՛վ է ա̃ծ ևն ։

Դպիրն ՚ի բեմ · Յիշեցի զգործս տեառն , յի֊շեցից ՚ի սկզբանէ զսքանչելիս նորա ։

Դասն եղանակէ · Ո՛վ է ա̃ծ ևն ։

Սարկաւագն · Ծունր կրկնելով զտէր աղաչեսցուք ։

Եւ ապա ամենեքին ՚ի ծունր իջանեն ՚ի վերայ երկրէ ծնկե բոյ , և ընթեռնու քահանայն ՚ի վերայ բեմին զաղօթս զայս մեծաձայն ՚ի լուր ամենեցուն ։

Ամենակալ , անարատ , անսկիզբն Հայր , անտեսա֊նելի , անհասանելի , անքննելի , անփոփոխելի , անչա֊փելի , անխմանալի՛ ա̃ծ , որ միայն ունիս զանմահութի̃ բնակեալ ՚ի լոյս անմատոյց ։

Որ բանիւ քով արարեր զերկինս և զերկիր , զծով և զցամաք և զա̃մ որ ՚ի նոսա , և Հոգւովդ քով սրբով գոյացան եղեալքս ամենայն ։

Որ վ̃ն մեր մարդկան և վ̃ն մերոյ փրկութե̃ առաքեցեր զմիածին որդիդ քո փրկել զմեզ յանիծիցն ադամայ ։

Որ իջեալ յերկնից մարմնացաւ Հոգւովդ քով սրբով ՚ի փառաւորեալ և ՚ի միշտ կուսէն մարիամայ ա̃ծածնէն . և խաչի և մահու համբերեալ յաղագս մեր , փրկեաց զմեզ ՚ի ծառայութե̃ սատանայի և յերկրպագութե̃ կռոց ։

Եւ ուստի մեզ մեղաւոր և անարժան ծառայիցս քոց՝ ամենասուրբ երրորդութե̃դ զծունր և զպաղատանս խոնարհեցուցանել , և խնդրել զթողութի̃ մեղաց ։

Դու տէր պարգեւեցեր ազգի մարդկան զանբաւ ողորմութեանդ շնորհս։

Առաքեցեր զէակից քո զՀոգիդ սբ՟, ՚ի դաս առաքելոց, ՚ի մեծի միաշաբաթիս ՚ի կատարման յիսներորդի աւուր յարութեան փրկչին։

Որ ՚ի հրեղէն լեզուս երեւեալ նստաւ ՚ի վերայ նց՟, և լցոյց զամենեսեան շնորհօք՝ խօսել յայլ՟ լեզուս զմեծամեծս այ՟ և մարգարէանալ։

Որ և առաջին ծնունդ ծնեալ երեք հազարքն յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, առաջին երկրպագեցին սրբոյ երրորդութեանդ։

Ընդ որս և մեք այսօր զծունր և զպարանոցս խոնարհեցուցանեմք, և քո առաքելովքն աղաչեմք. ընկալ զմեր երկրպագութիս ընդ նոսին, և որք նովին արժանաւորութեամբ երկրպագեալ քեզ մինչև ցայժմ։

Ինքնին բազումողորմ և մարդասէր՝ լուր մեզ յորում աւուր կարդամք առ քեզ, և մանաւանդ յայսմ աւուր մեծի պենտէկոստէիս, յորում զՀոգիդ սուրբ յերկնից ՚ի սորինս առաքեցեր յետ համբառնալոյ որդւոյ քո տեառն մերոյ յսի՟ քսի՟ յերկինս, որով կարդամք առ քեզ հաւատովք։

Հայեաց ՚ի բարձանց ՚ի սրբութենէ քումմէ ՚ի ժողովուրդս քո, որք առաջի կան, և ակն ունին մեծի ողորմութե՟ քո։

Առաքեա զբարերար հոգիդ քո այսօր ՚ի տաճարս քո և ՚ի ժողովեալքս ՚ի սմա, որպէս յայնժամ ՚ի վերնատունն ՚ի յառաքեալսն։

Նայեաց ՚ի մեզ քաղցրութբ՟, և յիշեա գթութբ՟ և ողորմութբ՟ քո զտառապեալքս և զդատապարտեալքս, և դարձո զգերութի՟ հոգւոց մերոց՝ զընտանի կարեկցութիւնդ ունելով վասն մեր բարեխօս, և կանգնեա զանկեալքս և զկործանեալքս։

Աղաչեմք զքեզ բոլորով սրտիւ մարդասէր տէր, զի թէպէտ և մեղաք, այլ ՚ի քեզ անկաք յարգանդէ աւազանին, և դու ես ած՟ մեր։

Մի թողուր զմեզ, զի պակասեցան յունայնութե՟

ծա

տուրք մեր, և եղաք նախատինք թշնամեաց, և ծաղր և այպն ատելեաց մերոց։

Այլ յուսալով յողորմութի՟ քո որ յաւուրս յայսմիկ եղև, հայցեմք 'ի քէն. բա՛ց մեզ զդուռն ողորմութե՟ քո, և սրբեա՛ զմեզ 'ի գաղտնեաց մերոց։

Տես զխոնարհութի՟ ծառայից քոց, և թո՛ղ մեզ զա՟մ յանցանս մեր, զկամայ և զակամայ, զգիտու՟ և զան֊գիտութե՟. յաղթեսցէ խորք բարեգթու՟ քո՝ բազ֊մութեան մեղաց մերոց։

Շնորհեա՛ զքաւութի՟ ժողովրդեան քո, որ շուրջ կայ և սպասէ առ 'ի քէն տուաս ողորմութե՟դ, և մաքրեա՛ զամենեսին զօրութեամբ հոգւոյդ սրբոյ։

Այց արա մեզ քաղցրութե՟ քով, և փրկեա՛ զմեզ 'ի բռնութե՟ բանսարկուին, և ամրացո՛ զկեանս մեր 'ի չա֊րահնար խաբէութենէ նորին։

Հրեշտակի խաղաղութե՟ յանձն արա զմեզ, որ յա֊ռաջ քան զհայցելն զպէտս մեր պատրաստես։

Արժանացո՛ զամենեսեան զմեզ յընդունելութի՟ հոգ֊ւոյդ սրբոյ ընդ սրբոց առաքելոցն, և ընդ նոսին գրեա՛ զանուանս մեր 'ի դպրութե՟ կենաց, և ժողովեա՛ յարքայու֊թի՟դ քո 'ի վերինդ երուսաղէմ՝ յերկնային բարձրա֊գոյն վերնատունդ, որպէս մարդասէր և ողորմած ա՟ծ։

Ի~ ատէ զատօնս զայս։

Օրհնեալ ես տէ՛ր ամենակալ, որ արարեր զարե֊գակն 'ի լուսաւորութի՟ տունջեան, և զլուսին և զաստեղս և զլոյս ճրագի 'ի լուսաւորութի՟ գիշերոյ, և արժանի արարեր զմեզ խաղաղութե՟ անցուցանել զերկարութի՟ տունջեանս, և հասանիլ 'ի ժամ երեկոյիս։

Լո՛ւր աղաչանաց մերոց և ա՟մ ժողովրդեան քում, և թո՛ղ մեզ զյանցանս մեր զկամայ և զակամայ։

Ընկա՛լ զերեկոյեան աղօթս մեր, և առաքեա՛ զբա֊զում ողորմութիս քո և զգթութի՟ 'ի վ՟ր ժառանգութե՟ քո։

Պարսպեա՛ զմեզ ս՟բ հրեշտակօք քո, սպառազինեա՛ զմեզ զէնու արդարութե՟ քո, շուրջ փակեա զմեզ ճշմար

ութ՟բ քով , պահպանեա զմեզ զօրութ՟բ քով , փրկեա զմեզ յա՟մ վշտաց և յա՟մ նենգութ՟ե հակառակորդին ։

Շնորհեա մեզ և զառաջիկայ գիշերս՝ առանց մեղաց և առանց գայթակղութ՟ե , և զա՟մ աւուրս կենաց մերոց խաղաղութ՟բ անցուցանել , բարեխօսութ՟բ ա՟մ սրբոց որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ ։

Սարկաւագն ։

Ընկալ , կեցո , ողորմեա , յարո , և պահեա զմեզ ա՟ծ քո՟յին շնորհիւն ։

Զամենասրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա՟ծա՟ծին՝ զմիշտ կոյսն մարիամ հանդերձ ա՟մ սրբովք յիշելով , զմեզ և զմիմեանս և զա՟մ կեանս մեր քո՟ի ա՟յ յանձն արասցուք ։

Դպիրն ․ Քեզ տեառնդ յանձն եղիցուք ։

Քահանայն ՚ի ձայն ։

Զի քո է ողորմել և կեցուցանել զմեզ ք՟ս ա՟ծ մեր , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟րբ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Սարկաւագն ։

Խնդրեսցուք ամենեքեան յա՟մ անձնէ և յա՟մ մտաց մերոց ասասցուք ․ Տէր ամենակալ՝ ա՟ծ հարցն մերոց , աղաչեմք զքեզ լուր և ողորմեա մեզ ։

Ողորմեա մեզ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում , աղաչեմք զքեզ լուր և ողորմեա ։

Եւս աղաչեսցուք վ՟ս փրկութ՟ե , կենաց , խաղաղութ՟ե , առողջութ՟ե , փրկութ՟ե , այցելութ՟ե և քաւութ՟ե մեղաց ծառայիցս ա՟յ ա՟մ բարեպաշտօն և ուղղափառ քրիստոնէից ։

Քահանայն ՚ի ձայն ։

Զի ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով , և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Սարկաւագն.

Դարձեալ ծունր կրկնելով զտէր աղաչեսցուք.

Քահանայն ասէ զաղօթս զայս.

Տէր Յս՟ Քս՟ Ած՟ մեր, որ զքո խաղաղութի՟ն ետուր մարդկան, և զպարգևս հոգւոյն սրբոյ 'ի մշտնջենաւոր ժառանգութիւն հաւատացելոցն բաշխեցեր.

Այսօր զհոգիդ յայտնապէս պարգևեցեր աշակերտաց և առաքելոցն քոց, որ հրեղէն լեզուօք 'ի լեզուս նց՟ հանգուցեալ՝ եբաց զբերանս նց՟ խօսիլ յամ՟ լեզուս.

Եւ զամ՟ մարդիկ 'ի բազմատեսակ մոլորութե՟ն միաւորեաց 'ի մի ածգիտութի՟ ճշմարիտ երեքանձնական զօրութե՟դ, յամ՟ լեզուս զմի ած՟ փառաւորել ուսոյց աւետարանին քարոզութ՟ ընդ ամ՟ աշխարհս, և նմին միայնոյ զծունր խոնարհեցուցանել, որպէս երեք հազարքն նորածնեալք յայսմ աւուր մկրտութեամբ.

Ընդ որս և մեք նովին հոգւով լուսաւորեալք՝ հաւատով զծունր խոնարհեցուցանեմք սրբոյ երրորդութե՟, և աղաչեմք միաբան ժողովեալքս.

Նայեա՛ յիս անարժանս, որ զաղօթս ժողովրդեանս քո քեզ մատուցանեմ առաջի սրբոյ սեղանոյ քո.

Բա՛ց տէր և զիմ մեղաւորիս շրթունս, ոպ՟ զերանելի առաքելոցն, և լցո՛ հոգւովդ հաղորդիլ ամ՟ շնորհաց 'ի քէն տուելոց ընտրելոց քոց.

Եւ մի՛ վասն բազում մեղաց իմոց արգելցես զողորմութիւն քո յինէն, որ յուսով կամ առաջի քո, և հայցեմ յանբաւելի գթութենէդ.

Արժանի՛ արա զծառայս քո ածային պարգևացդ. իմաստութե՟ և հանճարոյ, խորհրդոյ և զօրութե՟, գիտութե՟ և ածպաշտութե՟, և հոգւով երկիւղի քո լցո՛ զմիտս իմ. և սիրտ սուրբ և հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում, և հոգւով պետութե՟ քո հաստատեա՛ զդայթակղութի՟ խորհրդոց իմոց.

Ապ՟ զի յամ՟ աւուրս հոգւովդ քով առ օգտակարն առաջնորդեալ, արժանի եղէց խորհել միշտ յօրէնս քո,

պահել զպատուիրանս քո, առնել զհրամանս քո, և միշտ յիշել զահաւոր գալուստ քո 'ի հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց։

Եւ քանզի դու ասացեր տէ՛ր, Թէ զոր ինչ խնդրիցէք 'ի հօրէ իմմէ յանուն իմ՝ տացի ձեզ։ Որ խոստումն ես մեղաւորս աներկբայ յուսով վստահացեալ, աղաչեմ զառուօղդ բարեաց և ողորմութեանց յաւուրս յայսմիկ 'ի գալստեան հոգւոյն քո սրբոյ, կատարել զխնդրուածս իմ 'ի փրկութիւն. զի դու ես որ տաս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք։

Տէր մեր Աստուած փրկիչ մեր, խոնարհեցո զունկն քո յերկրպագութիւն ժողովելոցս 'ի սուրբ եկեղեցի քո՝ ըստ նմանութեան ընտրելոցն քոց 'ի սուրբ վերնատունն։

Սրբեա՛ զսոսա յամենայն պղծութենէ մեղաց, որ առանց մեղաց կցորդ եղեր կարեաց մերում, և զախտս մեր բժշկեցեր։

Նորոգեա՛ զհոգիդ ուղիղ 'ի միաբան հաւատացեալքս, զի բնակեսցի 'ի մեզ, առաջնորդեսցէ մեզ ամենայն ճշմարտութիւն 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց։

Աղաչեմ զքեզ տէ՛ր՝ մի՛ վասն բազում մեղաց իմոց անտես առնիցես զհայցուածս սոցա, զի քո են փրկեալքս, և առ քեզ զձեռս համբառնան և խնդրեն զողորմութիւնս քո։

Ընկա՛լ զծնրադրութիւն մաղթանաց սոցա որպէս զնոր լուսաւորելոցն, և զհամբարձումն ձեռաց սոցա որպէս զպատարագ երեկոյի, և զաղօթս սոցա որպէս զխունկ անոյշ առաջի բարերար Թագաւորիդ։

Կարկառեա՛ յամենեսին 'ի մեզ ձեռն օգնականութեան, և ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեա՛ զմեզ, պահելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց։

Տէր տէր՝ որ նաւելոց ես անքոյթ նաւահանգիստ, ուղղեա՛ զգնացս մեր 'ի ճանապարհս անբիծս. զօրացո՛ զմեզ բարեգութ՝ աղօթել հոգւով և մտօք, և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս մեր։

Փրկեա՛ զմեզ յիրէ որ շրջի 'ի խաւարի, և 'ի նետէ որ թռչի 'ի տուէ, պահելով զմեզ անփորձ 'ի չարեաց, և յարհաւիրաց բանսարկուին, և յամենայն խռովութենէ։

Շնորհեա՛ հոգւոց մերոց զեղջ և ապաշաւ, դառնալ 'ի մեղաց, և գործել զարդարութիւն։

Բևեռեա՛ յերկիւղ քո զմարմին մեր, խորհիլ զահաւոր և զարդար դատաստանն քո։

Սպա՛ն զանդամս մեր երկրաւորս, հեռացո՛ 'ի մէնջ զանարժան խորհուրդս, և զա̃մ վնասակար ցանկութի̃։

Յարո՛ զմեզ 'ի ժամու աղօթից յերկրպագութի̃ ահաւոր և փառաւորեալ անուան քո սրբոյ. և արա՛ զմեզ հաստատուն 'ի հաւատս, և յառաջադէմ 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց։

Սարկաւագն։

Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, յարո՛, և պահեա՛ զմեզ ա̃ծ քոյին շնորհիւն։

Զամենասուրբ անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա̃ծածին՝ զմիշտ կոյսն մարիամ հանդերձ ա̃մ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա̃մ կեանս մեր քա̃ի ա̃յ յանձն արասցուք։

Դասն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Քահանայն 'ի ձայն։

Բարեհաճութե̃ և շնորհիւ միածնի որդւոյ քո, ընդ որում օրհնեալ ես հանդերձ ամենասուրբ և բարի և կենդանարար քո հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Սարկաւագն։

Դարձեալ և դարձեալ ծունր կրկնելով զտ̃ր աղաչեսցուք։

Քահանայն։

Որ եսդ տէր՝ տէր զօրուե̃ց և ա̃ծ ճշմարիտ՝ աղբիւր լուսոյ և կենաց՝ հրաշագործ սուրբ հոգի։ Զոր խոստացաւ սուրբ առաքելոցն քս̃ ա̃ծ մեր, որ մահուամբ զկապանս մահու ելոյծ, և զնիգս դժոխոց խորտակեաց. և զպիղծ վիշապն ապստամբ զօրութե̃ն նորին՝ յանշէջ հուրն և 'ի խաւարն արտաքին անլոյծ կապանօք փակեաց 'ի տարտարոսն։ Եւ զարգելեալ հոգիսն որ յադամայ՝

վերածեաց խուռով յարութ՟ն , և վերացաւ առ Հայր , և զքեզ նորոգօղ և կենդանարար ս՟բ Հոգիդ առաքեաց մխիթարիչ որբացելոցս ։

Որ եկիր 'ի վերնատունն անտանելիդ երկնից , և լցուցեր անճառելի խնդութ՟բ և շնորհօք զքո ընտրեալսն , զորս առաքեցեր քարոզս բանին կենաց ընդ ա՟մ երկիր ։

Որք լցին զտիեզերս ա՟մ գիտութ՟ քո , և ծանուցին զմի ա՟ծութ՟ն քո աշխարհի . ծնան սուրբ աւազանաւն զհեթանոսս , և արարին զա՟մնին երկրպագուս ամենասուրբ երրորդութ՟ն ։ Զերկիրս երկին արարեալ , երկնայնոցն զերկրայինս դասակցեցին ։

Նոյն արդ՝ տէր ա՟ծ մեր ողորմած և մարդասէր՝ ընկա́լ զպաղատանս մեր զոր հայցեմք 'ի քէն , և հանգո́ զհոգիս ծառայից քոց ննջեցելոց մերոց՝ հարց և եղբարց և այլոց ազգականաց ըստ մարմնոյ , և ա՟մ ընտանեաց հաւատոյ . զորոց և զյիշատակն կատարեցաք այսօր յուսով փրկական պատարագիս յաւուր երևման քո ։

Տէր ամենակալ՝ ա՟ծ մահկանացուաց և անմահից՝ արարիչ ա՟մի , և 'ի հանդերձելումն յոյս ա՟մ ծագաց երկրի ։ Որ 'ի վերջին աւուր մեծի տօնի պենտեկոստէիս զուարճացուցեր փառաւոր գալստեամբն քո 'ի վերնատունն զժողովեալսն յանուն քո ։

Լո́ւր և այժմ ձայնի աղաչանաց մերոց , և զհոգիս ծառայիցն քոց յառաջագոյն ննջեցելոց հանգո́ 'ի տեղւոջ լուսոյ 'ի խորանս սրբոց քոց , յորմէ փախուցեալ են ա՟մ ցաւք և տրտմութիւնք ։

Եւ մեզ ժողովելոցս 'ի տաճար քո՝ երկրպագուացս և տօնողացս զօր ամենակեցոյց գալստեան քո , շնորհեա́ զերկնային զխաղաղութիւն , և զնորոգումն հոգւոց և մարմնոց 'ի հնութենէ մեղաց ։

Եւ այլ տաղ ։

Ա՟Ծ մեծ և յաւիտենական՝ ս՟բ և մարդասէր , որ արժանի արարեր զմեզ 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի քո 'ի գովեստ սքանչելեաց քոց ։

Սրբեա՛ զշրթունս ծառայից քոց և զլեզուս լեզուօքն հրեղինօք . և պարգևեա՛ շնորհ արժանապէս մատուցանել քեզ զփառաբանութի՟ , և զգոհութի՟ վասն մեծամեծ բարերարութե՟ցն զոր արարեր և առնես միշտ 'ի մեզ .

Յիշեա՛ տէր զտկարութի՟ բնութեա՟ մերոյ , և մի՛ կորուսաներ զմեզ ըստ անօրէնութե՟ մերում , այլ արա՛ առ մեզ զողորմութի՟ քո զմեծ . զգեցո՛ մեզ զզէնն լուսոյ , կալ ընդդէմ փորձութե՟ խաւարասէր իշխանին .

Եւ ահա անկեալ առաջի աղաչեմք զմարդասէր ս՟բ հոգիդ , զի և զհոգւոց մերոց գնացս 'ի մարմնական կենացս պահեսցես աննենգելի , և առաջնորդեսցես յերկիր ուղիղ և 'ի կեանս արդարոց , ուր հոգիք սրբոցն ուրախութեամբ օրհնեն զքեզ .

Յիշեա՛ ողորմութ՟բ քով և զհարս և զմարս և զեղբարս և զքորս և զորդիս և զազգականս և զհամատոհմս մեր , և զամենեսին որք յառաջագոյն ննջեցին յուսով յարութենական յարութեան .

Դասաւորեա՛ զհոգիս նոցա 'ի գոգն աբրահամու իսահակայ և յակոբայ , յերկիրն կենդանեաց , 'ի դրախտն փափկութե՟ , յարքայութի՟ն երկնից .

Եւ զմեզ արժանի արա՛ քաւութե՟ և թողութե՟ մեղաց , ներեա՛ և թո՛ղ զյանցանս մեր զկամայ և զակամայ , զգիտութե՟ և զանգիտութե՟ , զյայտնիսն և զգաղտնիս , զոր բանիւ , զոր գործով , և զոր մտածութ՟բ .

Եւ օրհնեա՛ զամենեսին զմեզ , վախճան բարի և խաղաղական պարգևելով մեզ և ա՟մ ժողովրդեան քում ,

որպէս բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ .

Եւ ասէ զաղօթս զայս .

Տէր մեծ և բարձրեալ և ամենազօր , որ միայն ունիս զանմահութի՟ բնակեալ 'ի լոյս անմատոյց . որ զա՟մ արարածս կարող զօրութ՟բ և անսահման իմաստութ՟բ արարչագործեցեր 'ի փառս մեծվայելչութե՟ արքայութե՟ քո . Որ անջրպետեցեր 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին , զարեգակն եդեր յիշխանութի՟ տուընջեան , զլուսին և զաստեղս յիշխանութիւն գիշերոյ .

Որ արժանի արարեր զմեզ զմեղաւորքս յառաջիկայ օրս հասանել, և զերեկոյեան աղօթս քեզ մատուցանել։

Ինքնին մաքրասէր տէր, ուղի՛ղ արա զաղօթս մեր որպէս խունկ առաջի քո, և ընկա՛լ զայս 'ի հոտ անուշից։

Այ՛ց արա մեզ ողորմութեամբ և գթութեամբ՝ որպէս բարերար և մարդասէր Աստուած. և շնորհեա՛ մեզ զառաջիկայ գիշերս խաղաղութեամբ անցուցանել. և պարգևեա՛ մեզ զքունն, զոր 'ի հանգիստ տկար բնութեանս մերոյ պարգևեցեր։

Որպէս զի յանկողինս մեր զղջացեալք, յիշեսցուք և 'ի գիշերի զամենասուրբ անուն քո, և ցնծութեամբ հոգւոյ զարթիցուք 'ի փառաբանութիւն բարութեան քո։

Ընդ հոգևորսն հոգևոր օրհնութեամբ օրհնել և սաղմոսասել, և նոր սրտիւ և հաստատուն հաւատով և խոնարհ հոգւով զբանաւոր պատարագս քեզ մատուցանել. և 'ի խորոց սրտէ արտասուալից պաղատանօք խնդրել 'ի քէն զքաւութիւն յաղագս մեղաց մերոց և ամենայն ժողովրդեան քո. և արժանաւորիլ առատ ողորմութեան քո, և լինել ժառանգաւոր երկնից արքայութեանդ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուանդ քում ամէն։

## Մաղթանքն։

Ընկա՛լ, կեցո՛, ողորմեա՛, յարո՛, և պահեա՛ զմեզ Աստուած քոյին շնորհիւն։

Զամենասրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր Աստուածածին՝ զմիշտ կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զամենայն կեանս մեր Քրիստոսի Աստուծոյ յանձն արասցուք։

Դասն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

### Քահանայն 'ի ձայն։

Զի դու ես հանգիստ հոգւոց և մարմնոց մերոց, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## Սարկաւագն.

Մատուցեսցուք զերեկոյեան աղաչանս մեր տեառն։ Ընկալ, կեցո, ողորմեա, և պահեա զմեզ ա̃ծ քոյին շնորհիւն։

Զերեկոյս ա̃մ՝ ամբծութ̃՝ սրբութ̃՝ խաղաղութ̃, և առանց մեղաց անցուցանել, 'ի տեառնէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զհրեշտակ խաղաղութ̃, հաւատարիմ առաջնորդ, պահապան հոգւոց և մարմնոց մերոց, 'ի տ̃նէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զքաւութիւն և զթողութիւն մեղաց և յանցանաց մերոց, 'ի տեառնէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զբարին և զօգտակարն անձանց մերոց և զխաղաղութիւն աշխարհի, 'ի տեառնէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զմնացուած ժամանակս կենաց մերոց խաղաղութ̃ և ապաշխարութ̃ անցուցանել, 'ի տեառնէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զքրիստոնէական կատարումն կենաց մերոց անվիշտս անամօթս և խաղաղականս, և բարի պատասխանատուութ̃ կալ առաջի ահաւոր բեմին ք̃ի, 'ի տ̃նէ խնդրեսցուք։

Դպիրն. Շնորհեա տէր։

Զամենասրբուհի անարատն՝ զամենօրհնեալ և զփառաւորեալ տիրուհին մեր ա̃ծածին՝ զմիշտ կոյսն մարիամ հանդերձ ա̃մ սրբովք յիշելով, զմեզ և զմիմեանս և զա̃մ կեանս մեր ք̃ի ա̃յ յանձն արասցուք։

Դպիրն. Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

### Քահանայն 'ի ձայն։

Զի բարերար և մարդասէր ես ա̃ծ գոլով, և քեզ փառս վերառաքեմք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրն. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն. Զգլուխս ձեր տն խոնարհեցուցէք:
Դպիրն. Քեզ տն զգլուխս մեր խոնարհեցուցանեմք:

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս խորհրդաբար:

Տէր տծ մեր՝ հայեաց 'ի ծառայս քո և 'ի ժառանգութիւն քո. զի քեզ բարեգութ և մարդասէր տեառնդ ծառայք քո խոնարհեցուցանեն զգլուխս և զպարանոցս իւրեանց, ակն ունելով ողորմութեան քո և փրկութեան:
Պարսպեալ պահեա յերկիւղ քո սուրբ զամ կեանս մեր 'ի չարին խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց:
Արժանաւորեա զմեզ զհաւատացեալքս 'ի քեզ՝ օրհնել զամենասուրբ երրորդութիւնդ, և ժառանգել զարքայութիւն և զկեանս յաւիտենից:

'Ի ձայն:

Եղիցի կարողութիւն թագաւորութեան քո օրհնեալ և փառաւորեալ՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Ապա երգեն ընծայաձայն տաղն. ՃԱ.

Այժմ բարբառքն այլ և այլ ազգաց եղեն յայտնի նշան կոչման հեթանոսաց 'ի հաւատս քնի. քանզի հրեայք՝ յորոց և քն ըստ մարմնոյ, անհաւատութբ խաւարեալք՝ յածային շնորհաց անկան. և մեք 'ի հեթանոսաց տծային լուսոյն արժանացաք՝ հաստատեալք բանիւք աշակերտացն, որք զտիեզերս ամ երկրպագուս արարին ամենասուրբ երրորդութե. ընդ որս և մեք զսիրտս և զծունկս խոնարհեցուցեալ հաւատով երկիր պագցուք հաստատեալք հոգւով սրբով, և աղաչեսցուք զնա փրկել զանձինս մեր:

Սիրտ սուրբ հաստատեա յիս տծ, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում:

Այժմ մխիթարիչ սբ հոգին 'ի վերայ ամ մարմնոյ հեղաւ. քանզի զշնորհս իւր նախ յառաքեալսն, և 'ի

նոցանէ 'ի մեզ 'ի հաւատացելոց սփռեաց . և հաւատա
րիմաբար զմեծահրաշ գալուստ իւր , բաժանելով զլե-
զուս հրեղէն տեսլեամբ 'ի հաչակել զմեծամեծս ա̄յ .
վասն որոյ զխրատս մեր հաստատեալ 'ի հաւատս հոգւով
սրբով , աղաչեսցուք զնա փրկել զանձինս մեր .

Մ՛ի ընկենուր զիս տէր յերեսաց քոց , և զհոգի ս̄բ
քո մի՛ հաներ յինէն .

Այժմ զգենուն զօրութի 'ի բարձանց առաքեալքն
ք̄ի . քանզի նորոգէ զնոսա մխիթարիչն՝ խորհրդական
նորոգութ̄ գիտուն . զոր քարոզեցին սքանչելի և վսեմա
կան բարբառով , պաշտել զպարզ և մշտնջենաւոր բնու
թ̄ին երեքանձնեայ ա̄յն բոլորեցունց . վասն որոյ լուսա
ւորեալք վարդապետութ̄ նոցին , երկիր պագցուք հօր
և որդւոյ և հոգւոյն սրբոյ , և աղաչեսցուք փրկել
զանձինս մեր .

Փառք հօր և որդւոյ և՛։ Եւ այժմ և միշտ և՛։

Երգ . Դ̄կ .

Եկայք ժողովուրդք եռանձնեայ ա̄ծութ̄ն երկիր
պագեսցուք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ . քանզի
հայր անժամանակաբար ծնաւ զորդի՝ մշտնջենակից և
աթոռակից . և սուրբ հոգին էր 'ի հայր ընդ որդւոյ
փառաւորեալ , մի զօրութ̄ի , մի գոյութ̄ի , մի ա̄ծութ̄ի .
որում երկրպագելով ամենեքեան ասեմք . սուրբ ա̄ծ ,
որ զա̄մ ինչ արարչագործեցեր 'ի ձեռն որդւոյ՝ գոր-
ծակցութ̄ սրբոյ հոգւոյն . սուրբ հզօր , որով հայրն
ծանուցաւ մեզ , և հոգին սուրբ եկն յաշխարհ . ս̄բ
անմահ , մխիթարիչ հոգին որ 'ի հօրէ բղխի , և յոր-
դին հանգչի . երրորդութիւն սուրբ փառք քեզ .

Ապա . Արդ արձակես . Երեքսրբեան . Ամենասուրբ
երրորդութ̄ի . Հայր մեր , զի քո է արքայութ̄ի .

Ապա Եղանակի Ժամամուտ արձակման տօնին . Դ̄կ .

Օրհնեալ ես ք̄ս ա̄ծ մեր , որ զձկնորսսն արարեր
իմաստուն՝ առաքելով առ ն̄ս զհոգին ս̄բ . և 'ի ձեռն ն̄ց
զտիեզերս որսացեր . մարդասէր փառք քեզ . (Երիցս) .

Ապա քահանայն առնէ արձակումն այսպէս.

Որ ՚ի հայրական ծոցոյ խոնարհեցար, և զբոլոր մարդկայինս մեր բնութ̃ իւր ինքեան արարեալ, և ած̃ացուցեալ զնոյն. և նովաւ յերկինս համբարձեալ, և նստեալ ընդ աջմէ այ̃ և հօր. և զած̃ային, և սուրբ, և համագոյ, և համազօր, և համափառ, և մշտնջենակից հոգին առաքեալ ՚ի սուրբ առաքեալսն և յաշակերտսն իւր և լուսաւորեալ զնոսա, և ՚ի ձեռն նոցա զամ̃ տիեզերս. քս̃ ճշմարիտ ած̃ն մեր՝ բարեխօսութ̃բ անարատ և ամբիծ սրբուհւոյ մօր իւրոյ, սրբոց փառաւոր ամենահռչակ ած̃աքարոզ և հոգիազգեաց առաքելոցն և ամ̃ սրբոց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ած̃.

## ՎԱԽՃԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ.

# ՀԱՒԱՔՈՒՄՆ

## Աղօթից եւ օրհնութեան եւ փառաբանութեան եւ համդամանակեան հաւատոյ եւ արձակմանց, որք ասեն քրիստոնեայքն ՚ի մաշտոցին:

Օրհնութիւն · յունարէն, Էվլօյիդի·

Օրհնեալ է տէր ած մեր յամ ժամ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Երեքսրբեան · յունարէն, Դրիսայիօն:

Սուրբ ած, սբ հզօր, սբ անմահ, ողորմեա մեզ:
Սուրբ ած, սբ հզօր, սբ անմահ, ողորմեա մեզ:
Սուրբ ած, սբ հզօր, սբ անմահ, ողորմեա մեզ:
Փառք հօր եւ որդւոյ ե″: Եւ այժմ եւ միշտ ե″:

Ամենասուրբ երրորդութի · յունարէն, Բանայիա դրիաս:

Ամենասուրբ երրորդութիւն՝ ողորմեա մեզ · տէ՛ր՝ քաւեա՛ զմեղս մեր · տէ՛րօղա՛՝ ներեա՛ մեզ զանօրէնութիւնս մեր · սո՛ւրբ՝ այց արա եւ բժշկեա զտկարութիւնս մեր վասն անուան քո:

Տէ՛ր ողորմեա, տէ՛ր ողորմեա, տէ՛ր ողորմեա:

Հայր մեր · յունարէն, փա՛դեր իմօն:

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո · եկեսցէ արքայութի քո · եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի · զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր, եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց · եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութի, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ: Զի քո՛ է արքայութի եւ զօրութի եւ փառք՝ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եկայք երկիր պագցուք · յունարէն, Տէֆդէ փռօսքինիսօմէն ։

Եկայք երկիր պագցուք Թագաւորին մերոյ ա՟յ ։
Եկայք երկիր պագցուք և անկցուք առաջի ք՟նի Թագաւորին մերոյ ա՟յ ։
Եկայք երկիր պագցուք ք՟նի Թագաւորին մերոյ և ա՟յ ։

Փառաբանութ՟ի · յունարէն, Տօքսօլօղիա · կիւրակէ աւուր ։

Փառք քեզ որ ցուցեր զլոյս ։

Փառք ՚ի բարձունս ա՟յ և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն ։
Օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, երկրպագեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք զքէն վ՟ն մեծի փ՟ռց քոց ։
Տէր Թագաւոր երկնաւոր՝ ա՟ծ և հայր ամենակալ, տէր միածին որդի յ՟ս ք՟ս, և սուրբ հոգի ։
Տէր ա՟ծ գառն ա՟յ՝ որդի հօր՝ բարձող մեղաց աշխ՟ի՝ ողորմեա՛ մեզ, բարձող մեղաց աշխ՟ի՝ ընկա՛լ զաղաչանս մեր ։
Որ նստիս ընդ աջմէ հօր ողորմեա՛ մեզ ։
Զի դու միայն սուրբ, դու միայն տէր՝ յ՟ս ք՟ս ՚ի փառս ա՟յ հօր, ամէն ։
Յա՟մ ժամ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։
Արժանի արա զմեզ տէր զօրս զայս առանց մեղաց անցուցանել ։
Օրհնեալ ես տէր ա՟ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս, ամէն ։
Եղիցի ողորմութիւն քո տէր ՚ի վերայ մեր, որպէս յուսացաք ՚ի քեզ ։
Օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութ՟ս քո · (Երիցս) ։
Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ · ես ասացի տէր ողորմեա՛ ինձ, բժշկեա՛ զանձն իմ զի մեղայ քեզ ։
Տէր առ քեզ ապաւինեցայ, ուսո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես ա՟ծ իմ ։
՚Ի քէն է տ՟ր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս ։

Ձգեա զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ։

Սուրբ ա͞ծ, սուրբ հզօր, ս͞բ անմահ, ողորմեա մեզ։
Սուրբ ա͞ծ, սուրբ հզօր, ս͞բ անմահ, ողորմեա մեզ։
Սուրբ ա͞ծ, սուրբ հզօր, ս͞բ անմահ, ողորմեա մեզ։

Փառք Հօր և Որդւոյ և՛։ Եւ այժմ և միշտ և՛։

Սուրբ անմահ ողորմեա մեզ։
Սուրբ ա͞ծ, սուրբ հզօր, ս͞բ անմահ, ողորմեա մեզ։

Փառաբանութիւն լուր աւուր։

․ Քեզ վայելէ փառք Տէր ա͞ծ մեր, և քեզ փառս վերառաքեմք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Փառք քեզ որ ցուցեր զլոյս, և լուսաւորեցեր զաշխարհս։

Փառք ՚ի բարձունս ա͞յ և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն։

Օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, երկրպագեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք զքէն վ͞ս մեծի փ͞ռց քոց։

Տէր Թագաւոր երկնաւոր՝ ա͞ծ և Հայր ամենակալ, Տէր միածին Որդի յ͞ս ք͞ս, և Սուրբ Հոգի։

Տէր ա͞ծ գառն ա͞յ՝ Որդի Հօր՝ բարձող մեղաց ա͞շի՝ ողորմեա մեզ․ բարձող մեղաց ա͞շի՝ ընկալ զաղաչանս մեր։

Որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեա մեզ։

Զի դու միայն սուրբ, դու միայն Տէր՝ յ͞ս ք͞ս ՚ի փառս ա͞յ Հօր, ամէն։

Յա͞մ ժամ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ․ ես ասացի Տէր ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ զի մեղայ քեզ։

Տէր առ քեզ ապաւինեցայ, ուսո́ ինձ առնել զկամս քո զի դու ես ա͞ծ իմ։

Ի քէն է Տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ձգեա զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ։

Արժանի արա տէ՛ր՝ զօրս զայս առանց մեղաց անցուցանել մեզ·

Օրհնեալ տէր ա՟ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս, ամէն։

Եղիցի ողորմութիւն քո տէր ՚ի վերայ մեր, որպէս յուսացաք ՚ի քեզ·

Օրհնեալ տէ՛ր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։

Օրհնեալ տէր՝ իմաստուն արա զիս յարդարութի՟ս քո·

Օրհնեալ սուրբ՝ լուսաւորեա՛ զիս արդարութ՟ քով·

Տէ՛ր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ·

Քեզ վայելէ օրհնութի՟, քեզ վայելէ գովութի՟, քեզ վայելէ փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Հանգանակ հաւատոյ · յունարէն, Սիմլօլօն։

Հաւատամք ՚ի մի ա՟ծ՝ հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի, երևելեաց ա՟մի և աներևութից·

Եւ ՚ի մի տէր յ՟ս ք՟ս միածին որդին ա՟յ, ծնեալ ՚ի հօրէ յառաջ քան զա՟մ յաւիտեանս · լոյս ՚ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ յա՟յ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած · նոյն ինքն համագոյակից հօր, որով ա՟մ ինչ եղև·

Որ յաղագս մեր մարդկան և վ՟ն մերոյ փրկութ՟ իջեալ յերկնից, մարմնացաւ ՚ի հոգւոյն սրբոյ և ՚ի մարիամայ կուսէն և մարդացաւ · խաչեալ վասն մեր առ պոնտացի պիղատոսիւ և չարչարեալ և թաղեալ, և յարուցեալ յերրորդ աւուր ըստ գրոց · և ելեալ յերկինս՝ նստաւ ընդ աջմէ հօրն · և միւսանգամ գալոց է փառօք դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութ՟ ոչ եղիցի վախճան·

Եւ ՚ի հոգին ս՟բ տէրն կենդանարարն, որ ՚ի հօրէ ելանէ, և ընդ հօր և ընդ որդւոյ ՚ի միասին երկրպագի և փառաւորի, որ խօսեցաւ մարգարէիւք·

՚Ի մի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի·

Խոստովանիմք մի մկրտութիւն ՚ի թողութի՟ մեղաց·

ակն ունիմք յարութ̃ե մեռելոց, և կենացն հանդերձեալ յաւիտենին, ամէն։

Լոյս զուարթ․ յունարէն, Փօս իլառօն։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի հօրն երկնաւորի սրբոյ կենարարի յս̃ի քս̃ի։

Եկեալքս ՚ի մտանել արեգական տեսաք զլոյս երեկոյիս, օրհնեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին ա̃յ։

Արժանի ես յա̃մ ժամ ձայնիւ երգոլ օրհնութ̃ե կենդանարար որդի ա̃յ, վ̃յ և աշխարհս զքեզ փառաւորէ։

Արժանի՛ արա տէր․ յունարէն, Գաթագսիօսօն քիրիէ։

Արժանի՛ արա տէր՝ զերեկոյս զայս առանց մեղաց անցուցանել մեզ։

Օրհնեալ ես տէր ա̃ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս, ամէն։

Եղիցի ողորմութիւն քո տէր ՚ի վերայ մեր, որպէս յուսացաք ՚ի քեզ։

Օրհնեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիւնս քո։

Օրհնեալ տէր՝ իմաստուն արա զիս յարդարութ̃ս քո։

Օրհնեալ սուրբ՝ լուսաւորեա́ զիս արդարութ̃բ քով։

Տէ՛ր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Քեզ վայելէ օրհնութ̃ի, քեզ վայելէ գովութ̃ի, քեզ վայելէ փառք՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ արձակես․ յունարէն, Նին աբօլիյիս։

Արդ՝ արձակե՛ս զծառայս քո տէր ըստ բանի քում ՚ի խաղաղութիւն․ զի տեսին աչք իմ զփրկութ̃ի քո, զոր պատրաստեցեր առաջի ա̃մ ժողովրդեան։

Լոյս ՚ի յայտնութ̃ի հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում իսրայելի։

Արձակումն • յունարէն , Աբօլիմիս որ ասի յամ՟ աւուրս նախքան զպատարագն ։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ։ Ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսու՟թ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի, սուրբ՝ և արդար ա՟ծահօրն յովակիմայ և աննայի և ա՟մ սրբոց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ։

Աղաչանօք սրբոց հարցն մերոց տէ՛ր յ՟ս ք՟ս ա՟ծ մեր՝ ողորմեա՛ մեզ, ամէն։

Արձակումն լուր աւուր, որ ասի յաւարտման սրբոյ պատարագին, և երեկոյեան ժամուն։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ, Ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսու՟թ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի, զօրու՟թ պատուական և կենարար խաչին, վերակացու՟թ պատուական երկնային զօրու՟թեցն անմարմնոց, աղաչանօք պատուական և փառաւորեալ մարգարէին կարապետին և մկրտչին յովհաննու, սուրբ և փառաւորեալ և ամենագովելի առաքելոց, սրբոյն (այս անուն ընթերցանէն), յիշատակաւ և աղօթիւք (այս անուն), և աղաչանօք ս՟րբ հօրն մերոյ յովհաննու ոսկեբերանին կոստանդնուպօլսոյ հայրապետին, սուրբ և բարեյաղթ մարտիրոսաց, ս՟բ և արդար ա՟ծահօրն յովակիմայ և աննայի, և ա՟մ ս՟րբց, ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ որպէս բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ։

Աղաչանօք սրբոց հարցն մերոց, տէր յ՟ս ք՟ս ա՟ծ մեր՝ ողորմեա՛ մեզ, ամէն։

Եթէ պատարագամատոյցն յովհաննու ոսկեբերանին իցէ, նորին անուն ասելի. բայց եթէ Ս՟ծին բարսղի իցէ, յանձնաժամ, Եւ աղաչանօք ս՟րբ հօրն մերոյ ս՟րբ և մեծին բարսղի ա՟ծախօս հայրապետին կեսարիայ կապադովկացւոց։

Արձակումն կիրակէ աւուր։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ, Յարուցեալն ՚ի մեռելոց ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսու՟թ, եւ՟։

Արձակումն Ծննդեան ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Ծնեալն յայրին և եդեալն ՚ի մսուր վասն փրկութե մերոյ՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն Թլփատութեան ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Որ յանձն էառ թլփատիլ մարմնով յաւուր ութերորդի՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն ածայայտնութեան , և սրբարար խորհրդոյ մկրտութեան և ջրօրհնէքի ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Որ խոնարհեցաւ մկրտիլ ՚ի ծառայէն իւրմէ ՚ի յովհաննէ ՚ի յորդանան վն փրկութե մերոյ՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն քառասնօրեայ գալստեանն ՚ի տաճարն ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Որ ՚ի գիրկս արդարոյն սիմէոնի բառնիլ հաճեցաւ՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն ծաղկազարդի ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Որ յաւանակի նստիլ հաճեցաւ վասն փրկութե մերոյ , քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն ծաղկազարդի երեկոյին ։

Որ եկն ՚ի կամաւոր չարչարանս վասն փրկութե մերոյ՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն մեծի հինգշաբաթի աւուր ։

Փառք քեզ ա՛ծ՝ փառք քեզ ։ Որ վասն անսահման բարութե իւրոյ եցոյց մեզ ճանապարհ բարի զխոնարհութեն , լուանալով զոտս աշակերտաց իւրոց , և մինչև ՚ի խաչ և ՚ի թաղումն խոնարհեցաւ վասն փրկութե մերոյ՝ քս ճշմարիտ ածն մեր՝ բարեխօսութբ , ևն ։

Արձակումն մեծի հինգշաբաթի գիշերոյ։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ թքոյ և ձաղկանաց և տանջանաց և խաչի և մահու համբերեաց վասն փրկութե̃ մի̃՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն սրբոյ և մեծի ուրբաթու։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ վասն մեր մարդկան և վ̃ն մերոյ փրկութե̃ զսոսկալի չարչարանս և զխաչ և զմահ և զթաղումն կամաւորաբար յանձն էառ՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն սուրբ և մեծ կիւրակէի զատկին, և ա̃մ կիւրակէից տարւոյն։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Յարուցեալդ ՚ի մեռելոց քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն համբարձման։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ համբարձաւ փառօք ՚ի յերկինս, և նստաւ ընդ աջմէ ա̃յ և հօր՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն պենտեկոստէի։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ առաքեաց յերկնից զամենասուրբ հոգին իւր, և տեսլեամբ հրեղէն լեզուաց բաժանեաց ՚ի սուրբ աշակերտս և յառաքեալս իւր՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն վարդավառի։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ ՚ի թաբօրական լերինն այլակերպեցաւ փառօք առաջի ե̃ր աշակերտաց և առաքելոց իւրոց՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսու̃բ, եւն̃։

Արձակումն վերջին օծման։

Փառք քեզ տ՛ծ՝ փառք քեզ. Որ օծումն իւղոյ ոտիցն և գլխոյ ՚ի պոռնիկ կանանցն ընկալաւ՝ քս̃ ճշմարիտ ա̃ծն մեր՝ բարեխօսութ̃բ ամենասրբուհի մօր իւրոյ

անարատի , և սրբոյն յակոբայ տեառնեղբօր՝ առաջին քահանայապետին սրբոյն երուսաղէմի , և ո՟ք և արդար ա՟ծահօրն յովակիմայ և աննայի , և ա՟մ սրբց , ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ ո՟չ բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ ։

Աղաչանօք սրբոց հարցն , և ։

Արձակումն ա՟մ խնդրուածոց որ լինի 'ի տան , 'ի պանդոկի , յանդի , 'ի նաւի , 'ի փուան , և յայլ տեղիս յետ աւարտման աղօթից ։

Որ շնորհիւ կենարար մարդեղութ՟ե իւրոյ զտկարութիս հոգւոց և մարմնոց մերոց բժշկեաց , և զկարօտութիս մեր ելից՝ ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսութ՟բ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի , և ս՟րյն (այս անուն օրհնելին) , և յիշատակաւ և աղօթիւք սրբոյն (այս անուն) , և ո՟ք և արդար ա՟ծահօրն յովակիմայ և աննայի , և ա՟մ սրբոց , ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ ո՟չ բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ ։

Աղաչանօք սրբոց հարցն , և ։

Արձակումն ննջեցելոց ։

Փառք քեզ ա՟ծ՝ փառք քեզ ։ Որ ունի իշխանութ՟ի 'ի վերայ մեռելոց և կենդանեաց որպէս թագաւոր անմահ , յարուցեալն 'ի մեռելոց ք՟ս ճշմարիտ ա՟ծն մեր՝ բարեխօսութ՟բ ամենասրբուհի մօր իւրոյ անարատի , և 'ի չորեքօրեայ մեռելութ՟ե յարուցեալ սուրբ և արդար ղազարու , զհոգի յիշատակելոյս 'ի մէնջ դասաւորեսցէ 'ի գոգն աբրահամու , և ողորմեսցի և կեցուսցէ զմեզ՝ ո՟չ բարերար և մարդասէր և ողորմած ա՟ծ ։

# ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ընկալարո՛ւք՝ հարք սրբա զան,
մեծաւ սիրով՝ զայս սուրբ մատ եան.
զի կան 'ի սմա՝ դեղք զանա զան,
հոգւոց մարմնոց՝ բժշկա րան:

Խորհուրդքն սբք՝ կարգք ընտրական,
ծէսք արարմունք՝ աստ գրեալ կան.
որով վարի՝ քրիս հոգե կան,
եկեղեցի սուրբ յունա կան:

Սա սբ խորհուրդ՝ մկրտու թեան,
չէ լուացումն՝ օրինա կան.
նա մաքրութիւն՝ տայր մարմնա կան,
սա սրբութիւն՝ հոգւոց մարդ կան:

Չէ սելովմայ՝ ջուր հրաշա կան,
բուժիչ մարմնոյ՝ հիւանդու թեան.
այլ զախտ հոգւոյն՝ զսկզբնա կան,
մերժէ և տայ՝ զկեանս անվախ ճան:

Սա սբ միւռոն՝ դրոշմին օծ ման,
չէ ըստ իւղոյն՝ ահարոն եան.
նա որոշման՝ էր սոսկ նը շան,
սա և շնորհաց՝ ընդունա րան:

Ապաշխարանք՝ խորհրդա կան,
չէ աստ ձնոյն՝ համանը ման.
նա էր անշահ՝ առ շահէ կան,
առնէ ժառանգ՝ արքայու թեան:

Զէթն որ աստ՝ վերջին օծ ման,
չէ միայն դեղ՝ առողջու թեան.
այլև մեղաց՝ է քաւա րան,
ազդմամբ բանից՝ աղօթա կան:

Կնիք խաչին՝ տէրունա կան,
կոչմամբ սրբոյ՝ երրորդու թեան.
չէ ըստ ձնոյ՝ գառին ար եան,
ուր անդրանիկք՝ հրէից զեր ծան:

Այլ յոյս՝ զէն յաղթա կան,
արեամբ նորին՝ սրեալ նը րան.
որով զինեալք՝ կան ախոյ եան,
ընդդէմ չարին՝ մարտադրու թեան:

Զէ պղնձի՝ օձ մովսիս եան,
օձահարաց՝ դեղթափ միայն.
այլ ծառ կենաց՝ անմահու թեան,
զոր մեզ շնորհեաց՝ երկնից ար քայն:

Բարձր սանդուղք՝ է յակոբ եան,
յերկրէ յերկինս՝ վերելու թեան.

որով մարդիկ՝ առ տէր փու   թան ,
խառնիլ 'ի զօրս՝ անմարմնա   կան :

Ապա այս գիրք՝ հոգեմատ   եան ,
բազում բարեաց՝ պարունա   կան .
ա̃ծատուրնկ՝ է դարա   տան ,
լցեալ պտղովք՝ հրաշանը   շան :

Աղբիւր շնորհաց՝ մշտահո   սան ,
բղխող ջրոց՝ կենդանու   թեան .
որք հաւատով՝ առ սա փու   թան ,
ոչ ծարաւի՝ յետս դառ   նան :

Անգին գանձուց՝ է գանձա   րան ,
հոգեպարգեւ՝ հարստու   թեան .
ոչ երկրաւոր՝ դիւրեղծա   կան ,
այլ երկնային՝ անապա   կան :

Իսկ որդ պատճառ՝ բարեաց համայն ,
է Անաստաս՝ ազնիւ ա   զայն .
որ ետ տպել՝ զայս ծիսա   րան ,
և պարգևեաց՝ ձրի ձեզ   զայն :

Ապա արժա՛ն՝ է և պատ   կան ,
յիշել յաղօթս՝ ընդունա   կան .
զայս բարեպաշտ՝ ազնիւ իշ   խան ,
և զնախնիս՝ իւր առհմա   կան :

Որպէս զի տէր՝ ա՟ծին բան,
վարձատրեսցէ՝ ամէն մի խան.
և ըստ բազում՝ իւր գթու թեան,
տացէ զփառս՝ երանա կան:

Որում ընդ հօր՝ անսկըզ բան,
և ընդ հոգւոյն՝ իւր սրբու թեան.
փառք և պատիւ՝ վայելչա կան,
վերառաքեմք՝ այժմ և յա պայն:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР

# ՅԱՆԿ

## ՄԱՏԱԳՐՈՒԹԵԱՆՑ։

Կարգադրութիւն սարկաւագութեան . . . 1։
Կարգադրութիւն հսկման . . . . . . . . 2։
Աղօթք վասն տղայածին կնոջ . . . . . . 15։
Աղօթք ՚ի կնքել մանկանն . . . . . . . 17։
Աղօթք վ̅ն տղայածին կնոջ յետ քառասուն աւուրց . 18։
Աղօթք վասն կնոջ յորժամ վիժեսցէ . . . 22։
Աղօթք վասն երեխայ առնելոյ . . . . . . 23։
Կարգաւորութիւն սրբոյ մկրտութեան . . . 29։
Աղօթք ՚ի հարթել զհերս մանկանն . . . . 40։
Կարգաւորութիւն խոստովանողաց . . . . . 41։
Աղօթք վասն նոցա որք անիծիւք և երդմամբ կապեն զինքեանս . . . . . . . . . 45։
Աղօթք ՚ի վ̅ր արձակելոց յանիծից և յերդմանց . 46։
Աղօթք ՚ի վերայ ապաշխարողաց . . . . . 46։
Աղօթք ներողութեան զկնի մահուան . . . 48։
Աղօթք ՚ի վերայ յանդգնաբար երդուողաց . . 48։
Աղօթք ՚ի վերայ զազրակերաց . . . . . . 49։
Աղօթք վասն պիղծ խորհրդոց . . . . . . 49։
Աղօթք վասն պոռնկական պատերազմի . . . 50։
Աղօթք վասն երազափորձի . . . . . . . 51։
Աղօթք վասն ամենայն հիւանդութեանց . . 52։
Կանոն աղաչանաց յամենասրբուհի ա̅ծածինն ՚ի խոստովանութեան մեղաւորի . . . . . 53։
Կարգաւորութիւն վասն նշան տալոյ . . . . 59։
Կարգաւորութիւն պսակին . . . . . . . . 63։
Աղօթք վ̅ պսակ վերացուցանելոյ յութերորդ աւուրն . . . . . . . . . . . . 75։

Կարգաւորութիւն երկրորդ ամուսնութեան . 76։
Կարգաւորութ̃ օրհնութ̃ սբ̃ իւղոյն հիւանդաց . 86։
Մխ̃ հոգեւորի որ յաւանդման հոգւոյն տանջի . 120։
Կարգաւորութ̃ վասն վախճանեալ քահանայի . 122։
Կարգաւորութիւն Թաղման աշխարհականաց . 170։
Կարգաւորութիւն վասն հիւանդաց, որ տանջին
յայսոց պղծոց . . . . . . . . . . . 198։
Կանոն պաղատանաց առ տէրն մեր յս̃ քս̃, և յա-
մենասրբուհի ած̃ածինն, և յանմարմին զօրու-
թ̃եան, 'ի սբ̃ առաքելոյն, և յամ̃ սբ̃ոցն . 204։
Աղօթք վասն քնհատ հիւանդի . . . . . . 212։
Կարգաւորութիւն վասն հոգեվար հիւանդի . 213։
Կարգաւորութիւն օծութեան մաղզմանի և նոր
բաժակի, այսինքն սկիհի . . . . . . 221։
Կանոն օրհնելոյ զպղծեալ ջրհոր . . . . . 225։
Կանոն օրհնութեան պղծեալ ամանի՝ գինւոյ,
մեղեր, ձիթոյ, կամ այլոյ իրի . . . . 227։
Օրհնութիւն պղծեալ անօթոյ . . . . . 228։
Օրհնութիւն պղծեալ ցորենոյ կամ ալեր կամ
այլ սոցին նմանեաց . . . . . . . . 228։
Օրհնութիւն հիմնարկութեան տան . . . . 229։
Օրհնութիւն մտանելոյ 'ի նոր տուն . . . 230։
Աղօթք 'ի վր̃ տան որ բռնաբարել է յայսոց չարաց . 231։
Աղօթք օրհնելոյ զսերմանիս . . . . . . . 232։
Օրհնութիւն կալոյ . . . . . . . . . 233։
Աղօթք օրհնութեան աղի . . . . . . . 234։
Աղօթք 'ի վր̃ նուիրողաց զերեխայրի պտղոյ . 234։
Աղօթք 'ի վերայ կուլխայից . . . . . . 235։
Աղօթք 'ի տնկուածս այգւոյ . . . . . . 235։
Աղօթք 'ի վերայ այգեկթոյ . . . . . . . 236։

Աղօթք 'ի վերայ օրհնութեան գինւոյ . . . 237
Աղօթք 'ի հաղորդութ՟ խաղողոյ 'ի վեցն օգոստոսի . 237
Կանոն օրհնութ՟ե անդաստանի կամ այգւոյ կամ պարտիզի , յորժամ վնասին 'ի զեռնոց կամ յայլ պատահարաց . . . . . . . . . . 238
Աղօթք օրհնութեան հօտի . . . . . . . . 241
Օրհնութ՟ի մեղէն կերակրոյն որ նախ դնի 'ի սեղան 'ի սուրբ և 'ի մեծ կիւրակէի զատկին . 242
Օրհնութիւն պանրոյ և ձուոյ զատկին . . 243
Աղօթք նորաշէն նաւու . . . . . . . . 243
Աղօթք օրհնութեան ուռկանի . . . . . 244
Աղօթք փորելոյ ջրհոր . . . . . . . . 244
Կարգաւորութիւն աղաչանաց և հսկման վասն երաշտութեան , գետնաշարժի , ջերմախտի , սովու , որոտման և կայծական , ալեկոծութ՟ե , և զանազան հայցուածոց . . . . . . . 245
Կարգաւորութիւն վասն երաշտութեան . . . 253
Կարգաւորութ՟ի վ՟ն անանձրև երաշտութեան . 254
Կանոն աղաչանաց առ մարդ՟սէրն ա՟ծ վ՟ն երաշտութ՟ե . 256
Աղօթք վասն երաշտութեան . . . . . . 260
Աղօթք վ՟ն երաշտութեան և փոփոխութ՟ե հողմոց . 268
Կանոն վասն երկրաշարժի . . . . . . . 270
Տաղք վասն գետնաշարժի . . . . . . . 275
Աղօթք վասն սպառնալեաց գետնաշարժի . . 277
Կանոն 'ի սուրբ և համագոյ և կենդանարար և անբաժանելի երրորդութիւնն , և յա՟մ ս՟բս , վասն սպառնալեաց ժանտախտի . . . . . 283
Աղօթք վասն ժանտախտի . . . . . . . 288
Աղօթք վասն հարուածոց ժանտախտին . . . 293
Մաղթաղօթք պաղատանաց վ՟ն ժանտախտի և սովու . 297

Աղօթք վն ապաւանալեաց որոտման և կայծականց . 299 .
Աղօթք վասն անբարեխառնութեան հողմոց և ալէկոծութեան ծովու . . . . . . . 300 .
Աղօթք պաղատանաց վասն ամ խնդրուածոց . . 301 .
Աղօթք վասն տագնապի ժողովրդեան . . . 305 .
Վասն բարձրացուցման պատկերի սրբուհւոյ ածածնին վասն Ճանապարհորդաց . . . . 310 .
Աղօթք վասն նաւարկողաց . . . . . . . 316 .
Կարգաւորութի վն դարձելոցն յուրացուէ յառաջին և'ի Ճշմարիտ հաւատն քրիստոնէութեան . 317 .
Աղօթք վասն դարձելոց 'ի Ճշմարիտ հաւատն . 318 .
Կարգաւորութի վասն երաղափորձ քահանայի, որ հանդերձեալ է պատարագել . . . . 323 .
Վասն հաշտութեան խռովեալ բարեկամաց . . 331 .
Աղօթք 'ի վերայ ոստոց արմաւենեաց . . . 332 .
Կարգաւորութիւն վասն որդեգրութեան . . 333 .
Կարգաւորութի վն օրհնութե նորաշէն փռան . 334 .
Կարգաւորութիւն վասն բթամիտ մարդկան . 336 .
Աղօթք վն մանկան որ երթայ ուսանիլ դպիրս ըքս 338 .
Աղօթք վասն դժուարածին կնոջ . . . 339 .
Աղօթք վասն դիւահարաց . . . . . . . 342 .
Կարգաւորութի աղաչանաց առ սբ ածածինն . 350 .
Կարգաւորութիւն փոքր ջրօրհնէքի . . . . 362 .
Կարգաւորութի մեծ ջրօրհնէքի ածայայտնութե . 377 .
Աղօթք վասն որդեծնութեան ամլոց . . . . 390 .
Օրհնութիւն նորանկար պատկերի . . . . 392 .
Ճառ ըբյ և հրաշափառ կիւրակէի փառաւորեալ և փրկագործ յարութեանն քի այ մերոյ . 393 .
Կարգաւորութիւն սրբոյ պէնտէկոստէին . . 395 .
Հաւաքումն աղօթից և օրհնութեան և այլոց . 414 .